Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

АЛЕКСЕЙ ВАРЛАМОВ

МЫСЛЕННЫЙ ВОЛК

С русского перевел на армянский язык
Нерсес Атабекян

ИНСТИТУТ ПЕРЕВОДА

Հրատարակվել է «Թարգմանության ինստիտուտ»
ինքնավար ոչառեւտրային կազմակերպության
աջակցությամբ, Ռուսաստան:

ALEXEY VARLAMOV

THOUGHT WOLF

Translated from Russian into Armenian
by Nerses Atabekyan

Vogi-Nairi

Ալեքսեյ ՎԱՌԼԱՄՈՎ

ՄՏԱԳԱՅԼԸ

վեպ

Թարգմանությունը ռուսերենից՝
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Ստեփանակերտ 2021

ՀՏԴ 821.161.1-31 Վառլամով
ԳՄԴ 84(2=411.2)-44
Վ 253

«Գեղarm» հանդեսի մատենաշար

Վառլամով Ա.
Վ 253 **Մտագայլը:** Վեպ:
Թարգմ. ռուսերենից՝ Ներսես Աքաբեկյան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2021, 384 էջ:

Ռուսական ժամանակակից արձակի վառ դեմքերից մեկի՝ Ալեքսեյ Վառլամովի «Մտագայլը» վեպի իրադարձությունները ծավալվում են Ռուսաստանի պատմության ամենասուր ժամանակահատվածներից մեկում՝ 1914 թվականի ամռանից մինչև 1918 թվականի ձմեռ: Վեպում ապրում ու մեռնում են հերոսներ, հանձին որոնց կարելի է ճանաչել նշանավոր անձանց՝ Գրիգորի Ռասպուտին, Վասիլի Ռոզանով, Միխայիլ Պրիշվին, սկանդալային կարգալույծ քահանա Իլիոդոր և աղանդավոր Շչետինկին, խառնվում են կատարված ու հորինված իրադարձություններ: Վեպի հերոսները սիրում են, իրոք, ռուսաբար, ճակատագրական կրքով, վիճում ու փիլիսոփայում են ռուս մարդու բնության, ամենաթողության, Նիցշեի, երկրի ապագայի և... *մտագայլի*՝ ահարկու ու սքանչելի գազանի մասին, որ խուժել է Ռուսաստան ու դարձել նրա աղետների պատճառը:

Վառլամովն իր վեպը համարում է «Արծաթե դարի մասին արտահայտվելու անձնական փորձ»:

ISBN 978-9939-1-1347-0

ՀՏԴ 821.161.1-31 Վառլամով
ԳՄԴ 84(2=411.2)-44

© А. Варламов
© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2021

Մաս I

ՈՐՍՈՐԴԸ

1

Ուլյան աշխարհում ամենաշատը գիշերային երկինքն էր սիրում եւ այդ երկնքի քամին: Երազում վազում էր քամահալած սեւ տարածության մեջ՝ ոտքերով հեշտությամբ հրվելով կանաչ խոտից, անհոգնել ու թեթեւաշունչ, բայց ոչ այն պատճառով, որ մի ակնթարթում մեծացել եւ ուժովացել էր,- մանրամարմին էր ու փխրուն,- այլ որ վազել էր սովորել. ինչ-որ բան էր կատարվել աղջկական բարալիկ մարմնի հետ, որը թեթեւ կտրվում էր գետնից, եւ Ուլյան մարմնով զգում էր այդ կիսավազք-կիսաթռիչքը, մաշկով հիշում դրան անցնելը, երբ ոչ թե արթնությունից գայթում էր քնի մեջ, այլ թափ էր առնում, ճախրում վեր, եւ օդը մի քանի վայրկյան նրան պահում էր ինչպես ջրի վրա: Եվ վազում էր, մինչեւ քունը կմաշվեր, ու կպատեր սարսափը, որ կսայթաքի, կընկնի եւ այլեւս չի կարողանա վազել: Ոտնաձուրկ լինելու թաքուն վախը տանջում էր աղջկան՝ խուժելով գիշերային երազների մեջ, եւ հանգիստ էր թողնում միայն ամռանը, երբ Ուլյան մեկնում էր Ճելոմ գետի ափին փռված Վըսոկիե Գորբունկի գյուղը եւ շրջում անտառի ու դաշտի կածաններով՝ սեւանալու աստիճան արեւահարվելով եւ խարկող օդում այրելով երազների ընծաներն ու մղձավանջները: Եվ այլեւս ոչնչից չէր վախենում՝ ո՛չ մութից, ո՛չ կայծակներից, ո՛չ գիշերային խորհրդավոր ճաճանչներից, ո՛չ կրետներից, ո՛չ օձերից, ո՛չ մկներից, ո՛չ անտառային սուր ձայներից, որ պայթող աղեղնալարի ճայթյուն էին հիշեցնում: Քաղաքաբնակ աղջիկն անտարբեր էր մոծակների ու մլակների խայթոցների հանդեպ, երբեք չէր մրսում, որքան էլ սառը լիներ գետակի ջուրը, որտեղ լողանում էր, ու որքան էլ թրջվեր օգոստոսի անձրեւի տակ: Ճահճուտների արանքում փռված՝ անտառակղզյակներով,- ինչպես ասում էին՝ բաշերով,- բլրաշատ տեղանքը՝ իր լճերով, գետակներով ու ջրողող մարգագետիններով, միաժամանակ հանգստացնում ու խռովում էր նրան, եւ եթե Ուլյայի որոշելիքը լիներ, կապրեր ու կապրեր այդտեղ՝ երբեք չվերադառնալով կարճահոս լայնահուն գետով հատվող ու նեղլիկ ծուռումուռ ջրանցքներով կտրտված, կեղտակուր տներով, կառապաններով, ձիա-

քարշներով, կրպակներով խրկված ու մարդկային մարմիններ գարշահոտող Պետերբուրգ: Բայց հայրը՝ Վասիլի Խրիստոֆորովիչ Կոմիսարովը, միայն ամռանն էր տեղափոխվում Գորբունկի, քանզի մնացած ժամանակը մեխանիկ էր աշխատում Օբուխովի գործարանում եւ գյուղում այնպես էր կարոտում իր մեքենաներին, որ համարյա ամբողջ ժամանակը տալիս էր գեղջկական պարզունակ մեխանիզմներ նորոգելուն: Աշխատանքի համար փող չէր վերցնում, փոխարենը նախաճաշին միշտ թարմ ձու, կաթ, կարագ, թթվասեր ու բանջարեղեն ուներ, ինչից հիվանդոտ, հողագույն դեմքը ջահելանում էր, յուղոտ փայլում, դառնում վարդագույն եւ ավելի մսոտ, դեղին փառը սրբվում էր ամուր ատամներից եւ ասիական աչքերը սեղմվում ու գոհունակ նայում էին ուռած կոպերի տակից: Այդ խորամանկ, փքված հայացքն այնպիսի խորհրդավոր ազդեցություն ուներ գորբունկովյան գեղջուկների վրա, որ հերթով գալիս էին մեխանիկի մոտ՝ հողի ու խուտորների վերաբերյալ խորհրդակցելու: Վասիլի Խրիստոֆորովիչը վատ խոսող էր ու շատ բան ասել չէր կարողանում, բայց, մեկ է, գեղջուկներին շարունակում էր թվալ, որ պետերբուրգցի պարոնը ինչ-որ բան գիտի, բայց թաքցնում է, ու մտածում էին՝ ինչով սիրտն առնեն ու քաշեն գաղտնիքը:

Երբեմն, կնոջ դժգոհությունը հարուցելով, Կոմիսարովը որսի էր գնում Պավել Մատվեեւիչ Լեգկոբընտովի՝ մի ամբարտավան, նյարդային պարոնի հետ, որը գզուզ թուխ մազածածկույթով գնչուի, թե հրեայի էր նման: Լեգկոբընտովը մասնագիտությամբ գյուղատնտես էր, բայց այդ անդաստանում ոչինչ չէր աճեցրել, եթե չհաշվենք սխտորի մշակման մասին փոքրիկ գիրքը, հետո նախ լրագրող, ապա եւ աննշան գրող էր դարձել. կլոր տարին ապրում էր գյուղում, որսահանդեր վարձակալում տեղացի կալվածատեր իշխան Լյուպայից՝ մի խորհրդավոր ծերուկից, որին տեսած չկար, քանի որ Լյուպան ալերգիա ուներ ցերեկային լույսից ու մարդկանց դեմքերից եւ միայն մի հոգու՝ իր կառավարչի դեմքից չէր հիվանդանում: Այդ զույգի մասին վատ բաներ էին խոսում, բայց Լեգկոբընտովն ուշադրություն չէր դարձնում բամբասանքներին. սրտաբաց ու մարմնով առողջ մարդ էր, հաճույքով որս էր անում թափանցիկ սոճուտներում ու եղեւնու մթին անտառներում, շուն վարժեցնում, պատմվածքներ գրում ու քաղաք էր գնում միայն ձեռագրերը խմբագրություններում տեղավորելու, մեկ էլ տողը քսան կոպեկ հոնորարներ ստանալու համար: Ամսագրերը հաճույքով էին վերցնում նրա ստեղծագործությունները, քննադատությունը մեկ ծույլ-ծույլ հայհոյում, մեկ ներողամտորեն գովում էր դրանք, իսկ մեխանիկ Կոմիսա-

րովը սիրում էր լսել ընկերոջը եւ Պավել Մատվեեւիչի առաջին ընթերցողն ու երկրպագուն էր: Նույնիսկ մի անգամ ստեղծագործողին Գերմանիայից հեծանիվ նվեր բերեց, որը Լեգկոբըտովը վարպետորեն քշում էր տեղի ճամփաներով՝ տղեկների նախանձն ու գյուղական շների կատաղությունը հարուցելով: Առաջինների վրա ուշադրություն չէր դարձնում, իսկ երկրորդներից պաշտպանվում էր մշակված հնարքով. երբ շունը փորձում էր բռնել շալվարի փողքը, հեծանվորդը կտրուկ արգելակում էր, ու կենդանին կրունկի հարված էր ստանում ստորին ծնոտին: Սակայն Պավել Մատվեեւիչն այդպես դաժան էր միայն օտար շների հետ, իսկ իր որսաշների համար հոգի էր տալիս, գնահատում էր նրանց խելքը, դիմացկունությունն ու ամուր ծնոտները եւ զարմանալի անուններ էր շնորհում՝ Յարիկ, Կարայ, Ֆլեյտա, Սոլովեյ, Պալմա, Նեռլ, շներից մի քանիսը նույնիսկ երկու անուն ունեին՝ մեկը որսի համար, մյուսը՝ տան: Մի անգամ Գոնչար անունով մի քերծե գնեց ու վերանվանեց Անչար: Ընդհանրապես բանաստեղծական մարդ էր, չնայած կոշտ ու կոպիտ էր թվում:

Գյուղական անկիրթ շների հետ բախումներում Լեկգոբըտովի շալվարները պատռվածքներ էին ստանում, որոնք նորոգում էր ամենուր Պավել Մատվեեւիչին հետեւող գեղեցիկ, հաղթամարմին ու խստավար գեղջկուհի Պելագեյան: Բացի որսաշներից, նրանք նաեւ երեք երեխա ունեին. փոքրերը՝ ընդհանուր, գնչուանման ու ամրակազմ, ինչպես իրենց հայրը, իսկ մեծը՝ սպիտակամորթ, նիհարիկ, կապտաչյա, աղջկական երկար թարթիչներով ու փքուն շրթունքներով Այլոշան, Պելագեյայի որդին էր ուրիշ մարդուց: Պավել Մատվեեւիչն այնքան էլ երես չէր տալիս տղայացուին, ու ոչ այն պատճառով, որ Այլոշան իր արյունը չէր, պարզապես անտարբեր էր երեխաների հանդեպ եւ կյանքում զբաղվում էր միայն նրանով, ինչն իրեն դուր էր գալիս: Իսկ ինչը դուր չէր գալիս, դեն էր նետում ու մոռանում:

Իսկ Ուլյան հաճախ էր խաղում Այլոշայի հետ ու խղճում էր նրան: Քանի որ ինքն էլ խորթ մոր ձեռքի տակ էր մեծանում, շարունակ թվում էր՝ Ալյոշային ընտանիքում նեղացնում են, եւ նույնիսկ՝ տնտեսության հոգսերով զբաղված մայրը նրան ավելի վատ է վերաբերվում, քան փոքր որդիներին: Ուլյան տնից քաղցրեղեն էր թռցնում ընկերոջ համար ու գեղջկական տխրություն նմանակելով՝ աչքերը չռած նայում էր՝ Այլոշան ինչպես է հուպ տալիս նվերը, չնայած թխվածքն ու կոնֆետները ոչ մի օգուտ չէին տալիս. Այլոշայի ոսկորները շարունակում էին դուրս ցցվել տղայական արեւառ մարմնից, իսկ նուրբ դեմքը միշտ ողբերգականորեն պատրաստ էր նեղացկոտության: Մի անգամ Ուլյան փող հավաքեց ու տոնական վերնաշապիկ

առավ նրա համար, բայց Այլոշան շփոթվեց-մնաց. նորոնքը հագնելու տեղ չուներ, նաեւ չգիտեր՝ մորն ինչպես է բացատրելու որտեղի՞ց վերնաշապիկը:

- Դուրը դ չի՞ գալիս,- նրա շփոթմունքը յուրովի մեկնաբանեց Ուլյան:

- Մեծ է,- չստեց տղան, որովհետեւ չափի հարցում Ուլյան իսկապես վրիպել էր, ու վերնաշապիկը թաքցրեց խրծանոցում՝ օտար աչքից հեռու, բայց սրատես Պելագեյան գտավ:

Ականջ դրեց Այլոշայի խճճված բացատրություններին, բայց չբարկացավ որդու վրա, այլ մի տեսակ «հըմ» արեց, եւ սովորաբար խիստ աչքերը մթնեցին ու նեղացան՝ թույլ չտալով դուրս հորդի ջղածիգ մայրական սերը, որ Պելագեյան կրում էր ներսում, բայց որի մասին ո՛չ Պավել Մատվեեւիչը գիտեր, ո՛չ Ուլյան: Պավել Մատվեեւիչը՝ ինքնահավանության պատճառով, իսկ Ուլյան եթե հավատաց որեւէ բանի, այլեւս անհնար էր հակառակը համոզել: Եվ Այլոշան չէր վիճում աղջկա հետ, ամեն ինչ անում էր նրա պահանջածով՝ գլխապտույտի աստիճան ճոճվում էր մեխանիկի սարքած «հսկա քայլերի» վրա, լողում հարթահատակ նավակով, ընկերուհուն ձուկ ու խեցգետին բռնել էր սովորեցնում, որ հետո եփում էին խարույկին, եւ աչքերը չռած,- շատ էր ուզում քնել, որովհետեւ առավոտյան լուսումութին ոտքի պիտի լիներ,- լսում էր Ուլյայի պատմությունները երեք աչքանի մարդկանց մասին, որոնց երրորդ աչքը տրված է, որ չտեսնեն առօրեականն ու տեսանեն ծածուկը, եւ Ուլյան հավատում էր, որ ունի այդ երրորդ աչքը, բայց դեռ չի բացվել:

- Ու որպեսզի աչքը բացվի,- ասում էր օտար ձայնով,- պետք է հատուկ վարժություններ անել: Ուզո՞ւմ ես սովորեցնեմ:

- Ուզում եմ,- պատասխանում էր Այլոշան, եւ Ուլյան զգում էր, թե ինչպես է թեթեւ դող անցնում պարանոցից մինչեւ գոտկատեղ:

Պատահմամբ դիպչում էր Այլոշային եւ անմիջապես հետ քաշում ձեռքը:

- Իսկ ինչո՞ւ դպրոց չես գնում:

- Ինչի՞ս է պետք: Առանց էդ էլ ինչ պետք է՝ գիտեմ ու կարողանում եմ: Կարդալ գիտեմ, գրել, հաշվել: Դրանից ավելն ինչի՞ս է հարկավոր:

- Ավել չի,- առարկում էր Ուլյան՝ հետեւելով, թե Այլոշան ինչ վարպետությամբ է խեցգետնի ուռկան սարքում՝ ցանցը փաթաթում էր ուռենու ճյուղին, մեջտեղը հոտած ձկով քար հարմարեցնում, ու մտածում էր. «Իսկապես, ի՞նչ օգուտ լիքը անկապ բաներ սովորելուց, որ ես գիտեմ»: Նա հիշում էր բարեկիրթ պետերբուրգյան տղաներին, որոնց հետ մանկական

ցերեկույթների ու տոնածառի հանդեսների էր գնում. «Եթե հիմա այստեղ լինեին, կկորցնեին իրենց, չէին իմանա ինձ ինչպես պաշտպանեն, իսկ Ալյոշայի հետ ոչինչ սարսափելի չէ»:

Միայն մի անգամ վախեցավ. մի երեկո ուռկանը դուրս քաշեցին գետից եւ բրամներից, ծածաններից, շերեփաձկներից հետո, նախավերջին կեռից կախ մարդու քիթ տեսան, որից սուր հոտ էր գալիս: Ուլյան ճչաց, ցնցվեց, Ալյոշան գունատվեց, բարձրացրեց գլուխն ու անխոս ցույց տվեց գետը, որի մեջտեղը, դանդաղ պտտվելով, մեջքի վրա մի մարդ էր լողում. մուշտակով էր, տաբատով ու կաճյակներով: Ջրահեղձի դեմքը ճերմակ էր, այլանդակված, մազերը՝ խճճված:

- Մեր ուռկանն է դուրս քաշել:

- Մեծերին ասենք:

- Պետք չի: Թող լողա՝ ուր լողում էր: Մենք ոչինչ չենք տեսել: Ձմռանը իշխան Լյուպայի կառավարիչն էր կորել: Առավոտից գնացել էր կայարան, իսկ իրիկունը ձին տուն էր բերել դատարկ սահնակը: Գյուղացիք ասում էին՝ սպանել են:

- Ինչի՞ համար:

- Գերմանացի էր: Նիտշչ: Իշխանն էլ վշտից իրեն խմելու տվեց ու նրանից հետո մեռավ: Բայց կարգադրել էր հոգեհացին երեք դույլ տնական արաղ դնեն, հարբեցնեն բոլորին, ու որ հոգեհանգստին մինչեւ ոտից ընկնելը պար գան ու չհամարձակվեն լաց լինել:

Ուլյան կծկվեց ու նայեց շուրջը: Ոչինչ չէր փոխվել. հեռվում երեւում էին սեւացած պատերով գյուղական խրճիթները՝ ճաքճքած գերաններով ու գեղեցիկ պատուհաններով, ծաղկում էին մարգագետինները, դայլայլում էին թռչուններն ու դաշտում ցրվել էին զարդանախշ գլխաշորերով արեւառ, ինքնավստահ կանայք: Ոչինչ չէր կարող խախտել այդ խաղաղ պատկերը, միայն հայրը թերթ կարդալիս տարօրինակ, տագնապալի բաներ էր ասում, երբեմն հեռագրեր էր ստանում, կարդալով՝ մռայլվում էր, բայց Ուլյան նրա կյանքի այդ կողմի մեջ չէր խորանում: Երբ խորթ մայրը կողքին չէր լինում, ուզում էր հպվել հորը, առնել հարազատ հոտը եւ անուշ լալ, բայց այդպիսի պահերին, երբ փարվում էր նրան, անօգնական էր դառնում, փայտանում, վախենում, եւ դա հետ էր պահում աղջկան, պղտոր, ծանր մտքեր արթնացնում. «Իսկ գուցե հարազատ հայրս չի: Գուցե ես ընդհանրապես ընկեցիկ եմ, որբ: Եվ ուրիշ ծնողներ եմ ունեցել»:

Հյուսիսի համար անսովոր չոր, անհողմ, շոգ օրեր էին: Ճարպոտ, դոնդողանման արեւը բարձրանում էր հորիզոնի վրա ու ծույլ լողում ճերմակ

երկնքով՝ խարկելով հողի մաշկը: Ուլյան սպասում էր երեկոյի այն ժամերին, երբ ծառերը սկսում էին երկար ստվերներ գցել, որոնք կամաց-կամաց աղոտանում ու խառնվում էին մթնշաղին, եւ ողջ բլրաշատ տարածքը արծաթվում էր պաղ լուսնալույսով: Որքան մոտենում էր լիալուսնի ժամանակը, արյունն այդքան ուժգին էր տրոփում: Գիտեր, որ գիշերը նորից վազելու է: Խռովվում էր, քաշքշում էր նիհար, մեծագլուխ Ալյոշային, բայց նրան իր հետ վերցնել չէր կարող, իսկ տղան նայում էր կկոցած տխուր աչքերով եւ խելացի շան պես կռահում նրա համառոտ ճակատագիրը:

Իրիկնադեմին որսորդները վերադառնում էին: Չարչարված, քրտինքի մեջ կորած ծանրամարմին մեխանիկը մի կերպ էր քարշ տալիս հարված ոտքերը ու դժվար էր շնչում, իսկ ջղուտ, անխոնջ Պավել Մատվեեւիչը կայտառ էր, ասես ինքը չէր Ծելոմի երկայնքով փռված անտառներն ու ճահիճները ոտքի տակ տվողը, այլ ողջ օրը նստել էր ստվերում, պարուսիկնե բազկաթոռի մեջ ու մոդայիկ արտասահմանյան գրող Համսունի հետ մեջընդմեջ կարդացել «Նիվա» պատկերազարդ ամսագիրը, ինչպես անում էր Վերա Կոնստանտինովնա Կոմիսարովան՝ մեխանիկի տիկինը, բարձրահասակ, թանձրամարմին, պղնձագույն ծանր վարսերով մի կին, որը Լեգկոբըտովին վերաբերում էր այնպիսի քմծիծաղով ու ընդգծված քամահրամքով, որ նույնիսկ Ուլյան էր անհարմար զգում: Բայց որսորդը չէր նկատում անքաղաքավարությունը կամ կանացի խայթոցներին ավելի նշանակություն չէր տալիս, քան գեղջկական խառնածին շան հաչոցին: Նրա ներողամտությունից ու անտարբերությունից Վերա Կոնստանտինովնան ավելի էր բորբոքվում ու գեղեցկանում: Թե խորթ մայրն ինչու էր արհամարհում գյուղի հարեւանին՝ սրատես Ուլյան հասկանալ չէր կարողանում. կա՞մ նրա ռամիկ կնոջ պատճառով, ում աշխարհը հավերն ու այծերն էին, կա՞մ որ Պավել Մատվեեւիչը ոչնչով չէր օգնում կնոջը եւ միայն օգտվում էր նրա աշխատանքից ու ծառայություններից, կինը նույնիսկ նրա փաթաթաներն էր ծգում ոտքերին, ինչն ինքը այդպես էլ չսովորեց, փոխարենը՝ չափազանց մեծամիտ էր, իրեն նշանավոր դեմք էր երեւակայում ու Պետերբուրգում լինելիս երեկոները կրոնական հավաքույթների էր գնում ինտելիգենտների փիլիսոփայական ակումբում, իսկ գիշերները ընկերություն էր անում մութ ու սարսափելի մարդկանց՝ աղանդավոր չեվրեկների հետ: Այդ աղանդավորների մասին շշուկով պատմում էր, որ նրանց գլխավորը՝ Իսիդոր Ճչետինկինը, նախկին գիտուն ավագերեց է, հռետոր ու քարոզիչ, որին չեվրեկները պաշտում են ինչպես աստծուն, իսկ նա կանանց ստիպում է իր հետ սեռական այլանդակություններով զբաղվել:

- Դրանք բոլորն այնտեղ նախկին են:

- Ինչպե՞ս,- տարակուսում էր մեխանիկ Կոմիսարովը:

- Երբ երեխաները չափահաս են դառնում, ծնողները հրաժարվում են նրանցից եւ ասում՝ նախկին որդիս կամ նախկին դուստրս: Իսկ երեխաները՝ նախկին հայրս կամ նախկին մայրս:

Այդ ամենը սարսափելի եւ անհասկանալի էր. արտակարգ ուժեղ, ամրակազմ, թեթեւակի արծաթված սեւ մորուքով ու կեռ քթով Լեգկոբընտովը մեկ վախեցնում, մեկ հմայում էր Ուլյային, եւ աղջիկը ջանում էր հաճախ ընկնել նրա աչքին, չնայած վախենում էր գեղեցիկ Պելագեյայից:

Իսկ Պավել Մատվեեւիչը փաղաքուշ-անտարբեր, բայց միեւնույն ժամանակ ուշադիր էր աղջկա հանդեպ: Մի անգամ իր վայրի անտառային կերպարին անհամապատասխան զնգուն, տղայական ձայնով ձեռի հետ հետաքրքրվեց.

- Այդ ի՞նչ եք կարդում, անուշի՛կ օրիորդ:

- «Անտոնովյան խնձորները», ակադեմիկոս պարոն Բունինի ստեղծագործությունը,- օրինակելի համեստությամբ ասաց Ուլյան ու խոր ծնկանիստ արեց:

- Հա՛, տես, է՛,- փափուկ շրթունքները քամահրանքով թրթռացին ու բացեցին դարչնագույն ատամները:- Դասակի՛ցս:

- Դուք նրա հե՞տ եք սովորել,- երկյուղածությամբ հարցրեց Ուլյան:

- Չէ՛, փառք Աստծո, չվիճակվեց: Նրան ինձնից առաջ դուրս արին գիմնազիայից:

- Ինչի՞ համար:

- Պետք է ենթադրել՝ գիտությունների հանդեպ անընդունակ լինելու: Բայց ի՞նչ պահանջես սակավարյուն ազնվականական որդյակից:

- Այդ դեպքում դո՞ւք ով եք,- վիրավորանքից սփրթեց Ուլյան:

- Խանութպանի զավակ ու կենսախինդ պարոն:

Պելագեյա Իվանովնան որսի թռչունն էր կտրատում՝ փորոտիքը շներին նետելով, ու թվում էր ծաղրական մի բան կա աշխատանքից չդադարող նրա ձեռքերի անկիրք շարժումներում: Կամացուկ երգում էին ծղրիդները, տղամարդիկ օղի էին խմում, բայց՝ քիչ. Ուլյայի հայրը խմել չէր սիրում, իսկ կասկածամիտ Պավել Մատվեեւիչը շատ էր սիրում, բայց ավելի շատ վախենում էր, որ հարբեցող հոր պես կուլ կգնա խմիչքին, եւ պատշգամբի խորքում նստած Ուլյան լսում էր՝ Լեգկոբընտովն ինչպես է իր առաջին սիրո պատմությունն անում:

2

...արտասահմանում: Ես՝ անբարեհույսի «գայլի անձնագրով» գիմնազիայից վռնդված ու մի տարի մենախուց նստած թերուս եւ Լայպցիգի համալսարանի՝ հեղափոխության հանդեպ ատելությամբ լցված ուսանող: Նա՝ պետական խորհրդականի դուստր՝ Պետերբուրգից: Մենք ծանոթացաք Բեռլինում, Պերգամոնի թանգարանում, մի շատ տարօրինակ քանդակի մոտ: Կարճ տունիկա հագած, ուսը մերկ աղջնակի մարմարյա արձան էր: Մազերը մեծավարի էին հարդարված, ոտքերը տակը՝ նստել ու անտարբեր խաղում էր ինչ-որ քարերով: Ամենազարմանալին այն էր, որ տարբեր կողմերից նայելիս հակադիր զգացումներ էիր ունենում՝ խանդաղատանք, թախիծ, քնքշություն, անելանելություն:

- Ձառ խաղացող աղջիկը,- մեծալուրջ տեսքով ասաց Կոմիսարովը:- Հանրահայտ հունական քանդակ է: Մեր թվարկությունից առաջ երկրորդ դար:

- Նա այնքան լարված էր կանգնել քանդակի առաջ, ասես դուստրը լիներ, փոքր քույրը կամ գուցե եւ հենց ինքն էր, որ առեղծվածային կերպով իր երկրորդ կյանքն էր ապրում, ու ես հանկարծ հասկացա, որ միշտ սիրել եմ այդ փոքրամարմին, թխահեր կնոջը, որը հեռվից կարող էր երեխա թվալ: Այո՛, այո՛, միայն նրան եւ ուրիշ ոչ մեկին: Կանգնել ու երկար նայում էր, հետո շրջվեց իմ կողմը, ու ես զարմացա՝ նրա աչքերում արցունքներ տեսնելով, ուզում էի որեւէ բան ասել, բայց գերմաներեն հնչյունները կարկամեցին կոկորդիս մեջ, ու դուրս պրծավ մեր լեզուն:

- Հա՛, ռուս եք,- անուրախ մրմնջաց նա ու թեւանցուկ արեց ինձ:- Դե, իհարկե, ուրիշ ով կկանգնի այստեղ: Ի՞նչ եք կարծում՝ քանի՞ տարեկան է եղել:

- Չգիտեմ, տասնմեկ, գուցե տասներկու:

- Չէ, ավելի մեծ,- առարկեց նա:- Արդեն աղջիկ է: Նայեք կրծքին: Ու դեմքին էլ պեպեններ են եղել:

- Ինչի՞ց իմացաք:

- Չգիտեմ: Այդպես է թվում: Իսկ ինչո՞ւ կարմրեցիք,- ցրված հարցրեց նա ու ավելացրեց:- Տե՛ր Աստված, ինչ սարսափելի պատմություն: Այդպես էլ ոչինչ չհասկացա՞ք:

- Ո՛չ: Ի՞նչ պիտի հասկանայի:

- Սա մահարձան է: Աղջիկը մահացել է, ու ծնողները հուշաքանդակ են դրել գերեզմանին: Հիմա էլ ահա երկրորդ անգամ են բաժանել մարմնից եւ ի ցույց դրել բոլորին:

Անկեղծ ասած՝ շատ վատ զգացի. տանել չեմ կարողանում տապանաքարերը, գերեզմանոցները, հուշարձաններն ու դրանց հետ կապված ամեն ինչ, եւ նա կարծես զգաց դա:

- Դե ինչ, գնա՞նք: Սրանից հետո արդեն անհնար է այստեղ որեւէ բան նայել:

Մի ողջ երեկո շրջեցինք Բեռլինում, շեղվեցինք թանգարանում տեսածից, ես քնքուշ խոսքեր էի ասում նրան, կյանքում առաջին անգամ, առանց որեւէ շփոթմունքի, նա լսում ու համարյա չէր պատասխանում, բայց լռությունից կռահում էի, որ հաճելի է: Ծուտով հասկացա, որ ընդհանրապես չգիտի կյանքը. նախ՝ ֆրանսուհի դաստիարակ, հետո Սմոլնի ինստիտուտ եւ արտասահման՝ հեռու Ռուսաստանից, որ չտեսնի մեր ամբողջ կեղտը... Այդպես էր կարգադրել բարձրաստիճան հայրիկը: Սկզբում լաց էր լինում, ուզում էր փախչել տնից ու քիչ էր մնացել վանք մտնի, հետո հնազանդվեց ու շատ գոհ էր հոր որոշումից: Եվ ինչո՞ւ գոհ չլիներ: Իր գլխի տերն էր, բավական մեծ գումարներ էր ստանում ծախսերի համար ու ոչ մեկին հաշվետու չէր: Ռուսաստան վերադառնալն արդեն ամենասարսափելի պատիժն էր թվում նրան: Բայց նույնիսկ բեռլինյան տրամվայում քիթը շրջում էր բանվորներից. վատ հոտ է գալիս՝ ասում էր: Ես ամոթանք տվեցի, եւ նա հետո ասաց, որ սկզբում ընդհանրապես դուր չեմ եկել իրեն եւ նույնիսկ չէր սպասում, որ այդքան խոր, տառապող մարդ կլինեմ: Մենք հանդիպում էինք ամեն օր, զբոսնում էինք, անվերջ խոսում: Չգիտես ինչու նրան հատկապես հետաքրքրում էր ինչպե՞ս էի զգում բանտում, ինչի՞ մասին էի մտածում, ի՞նչ երազներ էի տեսնում, որեւէ մեկը այցի գալի՞ս էր, չնայած այդ հիշողությունները տհաճ էին ինձ: Բայց, մեկ է, հարցնում էր: Երբեմն մտնում էինք Պերգամոնի թանգարան, այն նույն աղջկա մոտ, ուզում էինք ամուսնանալ, բայց այդպես էլ չամուսնացանք:

- Ինչո՞ւ,- հետաքրքրվեց Վասիլի Խրիստոֆորովիչը:

- Մարդիկ ինչո՞ւ չեն ամուսնանում: Նա հարուստ էր, ազնվատոհմ, ես՝ թերուս. տկլոր, մութ անցյալով ու բացարձակ անապագա մեկը: Նրա համար սարսափելի էր նույնիսկ ասել ծնողներին, թե ում հետ է կապվել: Եվ ի՞նչ պիտի անեինք ամուսնանալուց հետո: Վերադառնալ այն երկիրը, որն արհամարհո՞ւմ էր: Ե՞ս մնայի արտասահմանում: Բայց այնտեղ մեր որսի պես որս չկա: Ինձ երեւակայող էր համարում, անհուսալի, անկայուն մարդ: Բայց գլխավորը, համենայնդեպս, դա չէր,- շշուկով, որ Պելագեյա Իվանովնան չլսի, ասաց Պավել Մատվեեւիչը, եւ աչքերն արտասվոր առկայծեցին կիսաթափանցիկ մեգի մեջ:- Ես քսանյոթ տարեկան էի ու դեռ կույս:

- Ախ, ահա՛ թե ինչ,- գոչեց Վերա Կոնստանտինովնան ու զնգուն ծիծաղեց:- Դրա համա՞ր էիք այդպես կարմրել թանգարանում: Առաջին անգամ ջահել աղջկա կուրծք էիք տեսում, եւ այն էլ մարմարից էր:

- Չեմ հասկանում այստեղ ի՞նչն է ծիծաղելի:

- Կներեք, չէի ուզում ձեզ նեղացնել: Պարզապես հիմա հասկացա, թե ձեր ձայնն ինչու է այդքան բարակ: Ուշ տղամարդ դառած տղաները միշտ էլ ծվծվան են:

- Նեղացնե՞լ,- զարմացավ Պավել Մատվեեւիչը:- Կարծում եք դրանով կարելի է նեղացնե՞լ: Ես գրող էլ չէի դառնա, եթե ջահել տարիներիս վատնեի իմ թանկ կենսանյութը: Չէ՛, լավ է, որ այդպես եղավ, չեմ ափսոսում: Բայց դա իր պատճառն ուներ, խոր, մանկական... Ես շատ ավելի վաղ էի կնոջ կուրծք տեսել, եթե դա ձեզ հետաքրքրում է: Տղեկ էի, գիմնազիստ, երբ առաջին անգամ տարան հասարակաց տուն: Այնտեղ մեծ դաշնամուր կար, ինչ-որ հարբած խելագար նվագում էր, մի հսկա մերկ կին՝ մանուշակագույն, հաստաբեստ, ինձ կանչեց ետեւից... վախեցա, ճչացի... Չէ՛, չեմ ուզում հիշել: Ու նա էլ լրիվ անփորձ էր իր քսաներեք, թե քսանչորս տարեկանում: Դա մեզ ահավոր կաշկանդում էր: Վախենում էինք նույնիսկ համբուրվել եւ ասես սպասում էինք, որ ինչ-որ մեկը մեզ կսովորեցնի:

- Ճիշտ ու ճիշտ Քլոե ու Դափնիս,- նորից չդիմացավ մայրացուն, եւ նավթի լամպով լուսավորված՝ փայլփլուն աչքերով ու զգայական շուրթերով նրա երկարուկ դեմքը, հակառակ սովորության, ոչ թե հեգնանք, այլ կարեկցություն էր արտահայտում, չնայած, ինչպես թվաց աղջկան, կարեկցում էր բոլորին անհայտ այդ կնոջը:

- Այդ երկուսը լրիվ երեխա էին, իսկ մենք՝ ոչ,- արագ Վերա Կոնստանտինովնային նայելով՝ առարկեց Լեգկոբըտովը:- Ես սիրում էի նրան, բայց չէի կարողանում այդ սիրո մեջ միավորել մարմինն ու հոգին: Մտածում էր՝ կվիրավորի: Իսկ նրան ուրիշ բան էր վիրավորում: Մի խոսքով, անասելի տանջեցինք իրար եւ, ի վերջո, բաժանվեցինք: Ես վերադարձա Պետերբուրգ եւ ինքնասպանության եզրին էի: Կամ աղանդավոր դառնալու, ինչը, ի դեպ, նույն բանն է: Գնում էի չեվրեկների ժողովներին, լսում՝ ինչպես են երգում իրենց ծորուն ու տխուր երգերը եւ ուշադիր հետեւում նրանց քարոզներին: Կյանքը եռացող կաթսա է՝ ասում էին: Գլխիվար նետվեք այդ կաթսայի մեջ, մահացեք, իսկ մենք ձեզ հարություն կտանք: Եզրով էի քայլում, գլուխս պտտվում էր: Ճչետինկինն ասում էր, որ ինձ վաղուց է յուրային համարում, ու զարմանում էր, թե ինչու չեմ տեղափոխվում իրենց մոտ: Իսկ ինձ թվում էր՝ էլի մի քիչ, ու կպայթեմ: Պոռնիկների մոտ գնալ չէի կա-

որդ. զգվում էի, վախենում, որ գեշ հիվանդությամբ կվարակվեմ կամ կխայտառակվեմ... Չգիտեմ ինչը փրկեց: Երեւի մայրս աղոթում էր ինձ համար: Կամ գուցե որսորդությունն օգնեց: Իմ առաջին թռչունը սպանել էի կին ճանաչելուց շատ առաջ, եւ արդեն այդ ժամանակ ինձ ազատ ու անկախ զգացի: Հասկացա, որ պիտի տարալուծվեմ ռուսական հեռաստաններում եւ ուժերս տամ միայն գոյության միջոցներ հայթայթելուն, իսկ մնացածը պահեմ ինչ-որ բանի համար: Տեղափոխվեցի գյուղ, գնում էի որսի, համարյա չէի քնում եւ մի անգամ մի ջահել, գեղեցիկ ու շատ հասարակ կնոջ հանդիպեցի: Ամուսին ուներ, որի հետ ուժով էին պսակել տասնհինգ տարեկանում: Ամուսինը ծեծում էր նրան, վիրավորում... Վերջապես թողել-գնացել էր ծնողների տուն, բայց ամուսինը մի անգամ բռնացրել էր գետափին, երբ նա գնացել էր ջրի, հյուսքերը փաթաթել ձեռքին ու սկսել էր ջրահեղձ անել: Պոլյան կարողացել էր դուրս պրծնել ու անկտիով հասցրել էր նրան: Ամուսինն ուշագնաց էր եղել, սկսել էր ջրի տակն անցնել, ու Պոլյան մի կերպ էր դուրս քաշել:

- Սարսափելի՛ է:

«Իսկ ինչո՞ւ էր փրկում»,- քիչ էր մնում իր անկյունից դուրս գար Ուլյան:

- Դե հո հրեշ չի՞, ախր,- ասես աղջկա հարցը լսելով՝ Վերա Կոնստանտինովնային դարձավ Լեգկոբիտովը:- Ի՞նչ եք ուզում. այդպես են ապրում այստեղ: Դրանից հետո արդեն գյուղում մնալ չէր կարող: Մի քանի տարի դեգերում էր, տեղից տեղ անցնում, լվացարարուհի էր եղել, խոհարարուհի, ինչ-որ մեկից երեխա էր ունեցել եւ մի օր էլ եկավ ինձ մոտ՝ աշխատանք խնդրելու: Կանգնել էր առմուտքին՝ ճապուկ, ուժեղ, հասարակ չթի շորով, իսկ դեմքը տարօրինակ, շատ հպարտ արտահայտություն ուներ, ասես ոչ թե եկել էր գործի վարձվելու, այլ մե՛ծ զիջում էր արել ինձ: Ա՛խ, ափսոս այն ժամանակ լուսանկարչական սարք չունեի: Ես երջանիկ էի նրա հետ. ճիշտ ժամանակին հանեց իմ օրհնյալ անեծքը: Չե՛ք պատկերացնի ինչ է զգում տղամարդը, ում հետ դա առաջին անգամ կատարվում է համարյա երեսուն տարեկանում: Այդպես ճահիճներում խտանում են արեւի ճառագայթները, հետո բռնկվում, եւ արդեն ոչինչ չի կարող մարել հրդեհը: Ահա ես էլ էի բռնկվել անշիջելի կրակով: Այդ ժամանակից որտեղ ասես սեր չենք արել Պոլյայի հետ՝ խոտհարքներում, դաշտերում, անտառում: Իսկ դրանից հետո միշտ երգում էր ինձ համար, բայց հիշում էի, որ նրա առաջին ու նույնիսկ երկրորդ տղամարդը չեմ: Ինձնից մի քանի տարով փոքր էր, բայց՝ շատ փորձված, ու չէի կարողանում հասկանալ՝ վիրավորո՞ւմ է դա ինձ, թե ոչ: Բայց նրա հոգին շարունակում էր կույս մնալ: Ինձ

դուր էր գալիս նրա խոսելը. կարելի էր գրի առնել: Սրտառուչ էր ամեն ինչ, որ անում էր՝ եփել-թափելը, լվացքը, փայտ ջարդելը, կիթ անելը. կովը առել էինք, հենց սկսեցինք միասին ապրել: Բայց ամենից շատ հիանում էի, որ անգրագետ է, փչացած չէ նրանով, ինչով փչացել են շուրջը հազարավոր մարդիկ: Նույնիսկ խոսք առա, որ երբեք չի խնդրի իրեն գրել-կարդալ սովորեցնեմ եւ ինքնուրույն էլ չի սովորի: Առավել եւս՝ չի կարդա իմ գրածները: Բայց ժամանակն անցնում էր, ու սկսեցի ծանձրանալ: Պոլյան սովորական էր թվում, ինչպես բոլոր գեղջկուհիները՝ մանրախնդիր, կռվարար, չկամ: Իսկ գրագետ էր, թե ոչ՝ ի՞նչ տարբերություն: Գեղջկուհու հետ կյանքի հմայքն անցել էր: Հետո հղիացավ, գեշացավ, ու ես մեկնեցի Պետերբուրգ: Նրան հասցե չթողեցի: Տեղավորվեցի Օխտայում, որտեղ բանջարանոցներն են: Եվ պատկերացնո՞ւմ եք՝ ինձ այնտեղ էլ գտավ: Կովը ծախել էր ու մի օր հայտնվեց՝ երկու երեխաների հետ: Ուզում էի վռնդել, բայց համարձակությունս չհերիքեց: Փաստորեն այդպես էլ ամուսնացա, չնայած պսակադրվել չէինք կարող. Պոլյան մինչ օրս բաժանված չի:

Նա լռեց: Գիշերը կարճ էր, դողդոջուն, մինչեւ վերջ չխտացած, մի տեսակ նոսր սեւությամբ, հյուսիսում՝ աղոտ լուսակետով, որ անդրադարձնում էր հեռավոր լճի ջուրը եւ պատշգամբ հասցնում նրա թարմությունն ու խոնավությունը: Հյուսիսային լույսի ֆոնին հստակ երեւում էին հասուն մարդկանց ուրվագծերը՝ ասես «Քարացի՛ր» խաղում անշարժացած վայելչակազմ կնոջ ու երկու տղամարդկանց, որոնցից մեկը տարեց, հույլ էր թվում, իսկ մյուսը թարմ էր, ոգեւորված, ուժեղ: Սուր ծղրտում էին բվերը: Անանուն խոտերի ու ծաղիկների հոտ էր գալիս: Երբեմնակի թույլ քամի էր բարձրանում, հետո նորից ամեն ինչ խաղաղվում էր:

- Եվ վե՞րջ,- ասաց Վերա Կոնստանտինովնան ու սրսփաց սառնությունից:

- Գարնանը ծանոթացա մի մարդու հետ. ազգագրագետ էր, զբաղվում էր տափաստանով ու տափաստանաբնակներով: Նրա հետ մեկնեցի Կիրգիզիա. այնտեղ որսը լրիվ ուրիշ է, շատ հետաքրքիր՝ վայրի խոյերի որս, որոնց հատուկ եղանակով ձեռնասուն են դարձնում, ու մտածում էի ընդմիշտ մնալ տափաստանում: Բայց հետո հասկացա, որ տափաստանն իմը չէ, ես անտառի մարդ եմ ու մինչեւ հորիզոն ձգվող մերկ տարածությունը, ուր աչքդ ոչնչից չի կարողանում կառչել, ճնշում է ինձ: Վերադարձա Պետերբուրգ ու երկու շաբաթում գիրք գրեցի արաբների ու սեւ թռչունների մասին: Գիրքը հրատարակեց իմ բարեկամ գնդապետ Դեվրիենը ու խորհուրդ տվեց նոր գիրք գրել: Հետո ծնվեց երկրորդ որդիս, ու ես հանձնվե-

ցի. ընտանիքն ինձ համար գումակի պես բան դարձավ, որի հետ տեղից տեղ եմ քոչում, բայց այս բոլոր տարիներին չէի մոռանում այն մյուս՝ աներկրային, անմարմնավոր կնոջը: Ասես իմ հայելին լիներ, եւ այդ հայելու մեջ տեսնում էի իմ գոյի լավագույն, չանարգված մասը: Երկար նամակներ էի գրում նրան, պատասխանում էր կարճ, ասում էր, որ շատ է աշխատում ու խիստ զբաղված է: Գժտվել էր հոր հետ, պիտի ապրելու փող վաստակեր, իսկ լավ ապրելուն սովորել էր... Ինչպե՞ս էր ապրում. ամուսնացե՞լ էր, հովանավո՞ր էր գտել, ծառայությա՞ն էր մտել ու որտե՞ղ՝ չգիտեի, բայց դա ինձ այնպես էր տանջում, որ նույնիսկ վախենում էի հարցնել: Միայն մի անգամ հպանցիկ մի ապշեցուցիչ արտահայտություն արեց՝ ցանկացած ռուս մարդու պարտքը արտասահմանում իր երկրի լրտեսը լինելն է: Ի՞նչ էր նշանակում: Չգիտեմ... Ես ապրում էի մի նամակից մինչեւ մյուսը: Իսկ նա անկանոն էր գրում, ասենք, փոստային առաքումներն էլ մեր երկրների միջեւ դանդաղընթաց էին: Մի անգամ հավաքեցի ողջ համարձակությունս ու նրան ուղարկեցի գրքերս: «Ինձ անհասկանալի ու ծանծրալի են ձեր գրվածքները: Ձեր գործերում ընդհանրապես մարդ չկա, միայն՝ բնություն»,- պատասխանեց նա կես տարի անց, եւ այն պահին, երբ կարդում էի նրա դատավճիռը, պատրաստ էի ոչնչացնել, պատառոտել ամենը, որ գրել էի: Թքած ունեի, թե ինչ էր ասում իմ մասին Ռազումնիկ Վասիլեւիչը, թքած ունեի, որ ստեղծագործություններիս համար ինձ ընդունել էին Աշխարհագրական ընկերություն, ու մի անգամ գրություն էի ստացել Վալերի Յակովլեւիչից, հետո մտերմացել Ալեքսեյ Միխայլովիչի հետ: Ոչինչ չարժեր նրա հավանության մեկ բառին: Բայց այդ բառը չկար: Եվ ահա մի քանի տարի առաջ հանկարծ ժամադրեց Պոլցիի կայարանում: Արտասահմանից վերադառնալիս մեր կողմերով էր անցնելու: Չեք պատկերացնի դա ի՞նչ էր ինձ համար: Մի քանի օր քնել չէի կարողանում, թողեցի որսը, ոչինչ չէի գրում, Պոլյան էլ սկսեց ինչ-որ բան կասկածել ու հետեւում էր ամեն քայլիս: Նամակները չէր կարող կարդալ, բայց դրանք չանհանգստացնել չէին կարող. ես ամեն օր կանոնավոր նամակագրություն ունեմ, բայց անընդհատ թվում էր հենց նրա մասին ամեն ինչ գիտի: Անտանելի՛ էր: Ուր գնայի, լսում էի Պոլյայի քայլերը, տեսնում չոր, թախծոտ աչքերը: Այնպես տանջահար արեցի ինձ, որ շփոթեցի օրը: Մի օր ուշ գնացի կայարան:

Ձայնը անասելի տխրել ու խռպոտել էր գիշերվա խոնավությունից, այնպես, որ տղայական զնգոցն էլ ջնջվել, անհետացել էր:

- Այդպես կողքով անցա ու չհանդիպեցի միակ կնոջը, որ կարող էր իմ երջանկությունը լինել: Դրանից հետո ընդմիշտ չքացավ: Ու ես այլեւս չտե-

սա նրան: Ու երեւի արդեն երբեք չեմ տեսնի: Չգիտեմ ինչ կլիներ, եթե մենք այնուամենայնիվ ամուսնանայինք: Գուցե երջանիկ լինեի, գուցե նա էլ ճիշտ այսպես ծանծրացներ, ու մտածեի փախչելու մասին: Ի՞նչ իմանաս՝ ինչ կլիներ: Հաստատ գիտեմ միայն, որ առանց նրա երբեք երջանիկ չեմ լինի: Ամենաապշեցուցիչն այն է, որ նրան ընդհանրապես չեմ հիշում, չնայած երկար ժամանակ հույս ունեի, որ կգտնեմ պետերբուրգյան ամբոխի մեջ: Հիշում եմ ինչպես էր հագնվում, նրա բոլոր զգեստները, վանդակավոր կոֆտան, դարչնագույն կոշիկները, ամենը, որ սիրելի էր ինձ, բայց ահա դեմքը ոչ մի կերպ հիշել չեմ կարողանում: Եվ լուսանկարն էլ չունեմ, ու եթե տեսնեի էլ, երեւի չճանաչեի: Եվ նա կանցներ իմ կողքով: Քանի՛ տարի է անցել. երկուսս էլ շատ ենք փոխվել: Բայց եթե միայն մատո՛վ աներ... Կթողնեի Պոլյային, եւ նա գիտի դա: Բաց չի հեռանում ինձնից: Պատկերացրեք ինչքան դժվար է՝ ապրել մի կնոջ հետ, որ ճնշում է ձեր ազատությունը, ձեր ամեն քայլը, եւ անվերջ մտածել մյուսի մասին...

Նա էլի ինչ-որ բան էր խոսում, խորթ մայրն ու հայրը պատասխանում էին, բայց Ուլյան արդեն չէր լսում: Մտածում էր այդ կնոջ մասին, որի հետ ինչ-որ տարօրինակ բան էր կատարվել, երեւի այդպես էլ չէր ամուսնացել, իսկ եթե նույնիսկ ամուսնացել էր, շարունակում էր սիրել Պավել Մատվեեւիչին, իսկ ամուսինը ոչինչ չգիտի, բայց կռահում է, որ կինը սիրում է ուրիշին, ու տառապում է: Ուրիշի ճակատագիրն աղջկան ավելի էր հուզում, քան սեփականը, ասես կանխավ հաշտվել էր այն մտքի հետ, որ իրենից ոչինչ դուրս չի գա, որովհետեւ ինքը Ուլյան է, Ուլյանա Կոմիսարովան՝ պատահմամբ ծնված գեղեցիկ արվեստների գիտակ ու հովանավոր մեծ իշխան Պյոտր Նիկոլաեւիչի պալատում, լքված՝ մորից ու հորն անհարկավոր, քերծոտած ոտքերով, սառը բաղաքթով, մանր պեպեններով ու ջրահարսի երկար մազերով տասնհինգամյա մի երազող, որին մի անգամ Շելոմի կեսգիշերային երկնքի ֆոնին, բարձր բլրի վրա տեսավ գրող Լեգկոբըտովը ու քիչ էր մնում սովոր շարժումով նշան բռներ իր նրբագեղ գերմանական հրացանով:

3

Քսանչորս տրամաչափի այդ հազվագյուտ կանացի հրացանը Պավել Մատվեեւիչը Պետերբուրգում ապրելու երկրորդ տարում գնել էր Վասիլեւյան կղզու՝ Յարոսլավյան իջեւանատան հարեւանությամբ գտնվող Հանս Կրոնհաուզի խանութից: Հրացանն անասելի թանկ արժեր՝ հիսուն ռուբլի,

բայց նա սիրահարվել էր պատանու պես ու չդիմացավ, չնայած բանը միայն արտասահմանյան այդ փոքրիկի գեղեցկությունը չէր: Լեգկոբըտովը սուր ձայնից բացի մի թաքուն թերություն էլ ուներ, որի մասին ոչ ոք չգիտեր, ու որի պատճառով ավելի էր տառապում. ձեռքերը թույլ էին: Ոտքերն ասես որմզդեղնի ոտքեր լինեին, աչքն՝ անասելի սուր, ինքը՝ զուսպ, սառնասիրտ, զգույշ, անխոնջ, որսը կարող էր հետապնդել լուսաբացից մինչեւ մութն ընկնելը, իսկ երբեմն նաեւ լուսնի լույսի տակ, մի քանի տասնյակ կիլոմետր կտրելով աշնանը՝ սեւուղի ու ձմռանը՝ ճերմակ կաճաններով, բայց ահա ձեռքերը դավաճանում էին, հաստատ ժառանգել էր ոչ թե ուժեղ մորից, այլ թուլակազմ հորից, որը խաղաթղթերի տրցակից ավելի ոչինչ չէր բարձրացնում, դրա համար էլ ծանր, խոշոր լիցք ուզող, լայնափող հրացաններից վրիպում էր ու շատ դժվար էր տանում այդ անհաջողություններ-ը: Իսկ ընդամենը երկուսուկես կիլոգրամ կշռող, սեւաներկ կաղնեփայտե ագուստով, իսկական ոսկրյա եզրակալով, թեթեւ, ներձգան «զաուերը» գրիչի պես էր նստում ձեռքում, բայց ցավն այն է, որ Պավել Մատվեեւիչն այդ պահին ոչ միայն «զաուրեի» համար փող չուներ, նույնիսկ հացին ու ծխախոտին մի կերպ էր հասցնում, սակայն հրացանն ամեն օր աչքին էր ընկնում, ինչպես խեղճ աստիճանավորին, ում համար Գոգոլը շինել կարեց, ու խելացի Պելագեյան հասկացավ ամուսնու ուզածը:

- Պարտք արա ու առ: Հրացանը կտանեն՝ քեզ չես ների:

Համոզելու կարիք չկար: Պարտք արեց Ուլյայի հորից, պարտք արեց լուրջ քննադատ Ռազումնիկ Վասիլեւիչ Իվանով-Ռազումնիկից, նույնիսկ փոքրիկ Ալյոշա Ռեմիզովից երեք ռուբլի վերցրեց՝ ի տհաճություն նրա կնոջ՝ Սոֆյա Պավլովնայի, մեծամիտ լիտվական իշխանուհի Դովգելլոյի, որն ավելի սուր էր քննադատում ամուսնու ընկերությունը կոշտուկոպիտ որսորդի հետ, քան Վերա Կոնստանտինովնան: Իսկ բոլորից շատ օգնեց հրատարակիչ Պեշկովը, որը Լեգկոբըտովին օրինակ էր բերում երիտասարդ գրողներին. մտեք ժողովրդի մե՛ջ, սովորե՛ք ժողովրդից, սովորեցրե՛ք ժողովրդին, ամուսնացե՛ք ժողովրդի հետ, երեխա՛ ունեցեք նրանից, որդեգրեք կամ որդեգրվեք նրան: Ինչ-որ վատ, չար հեգնանք էր զգում նրա խոսքում Պավել Մատվեեւիչը, բայց չէր կարողանում բռնացնել Պեշկովին, իսկ գլուխ դնել նրա հետ չէր ուզում. որսորդի բնազդը հուշում էր, որ դեռ իրեն պետք է գալու:

Պարտքը քիչ-քիչ մարեց, եւ այդ ժամանակից որսի էր գնում «զաուերով»՝ հասցնելով հապաղած ընկերների մի կրակոցի դիմաց երկուսն անել. փոքրիկ հրացանի ծուխն արագ էր ցրվում, իսկ տասներկու տրամա-

չափի թնդանոթները դեռ ե՛րբ պատրաստ կլինեն նոր կրակոցի: Ընկերները, որ սկզբում ծիծաղում էին նրա վրա ու «ճիպոտ» անվանում նրբիկ հրացանը, արդեն նախանձում էին, իսկ նա իր թույլ ձեռքերով անցնում էր բոլորից, եւ դա այնքան ցավոտ էր, որ ավելի չար էին ծիծաղում Պավել Մատվեեւիչի վրա, ու շուտով նա սկսեց մենակ գնալ որսի, մինչեւ որ վերջապես ընկեր արեց բարեհոգի մեխանիկին: Բայց վատն այն էր, «զաուերի» ուժը փոքր էր, ու եթե գնդակը ոսկորին չէր դիպչում, թռչունը միանգամից չէր ընկնում, ու հետո նրան դժվար էր գտնել: Լինում էր նաեւ, որ այդպես էլ թռչում ու շարունակում էր ապրել՝ կոտորակը մարմնում:

Ուլյան այդ ամենի մասին ոչինչ չգիտեր, չնայած հետեւում էր Պավել Մատվեեւիչին իր ջահել աչքերի ողջ սրությամբ եւ անվերջ հարցուփորձ անում Ալյոշային, բայց նա շատ բան պատմել չէր կարող: Ասում էր միայն, որ առաջ, երբ խորթ հայրը շներ չուներ, իրեն էր տանում որսի ու վարժեցնում որսաշան հմտություններին:

- Հիմա էլ դեռ մեկ-մեկ տանում է: Որ իմացածս չմոռանամ: Դնում է կրակոցի հեռավորության վրա ու կարգադրում հալածել որսը: Ինչ դուրս է պրծնում, դրա վրա էլ կրակում է: Հետո ես հավաքում եմ: Նա բարի մարդ է, միայն թե՝ շատ դյուրագրգիռ: Մայրս այնպես է վախենում նրանից, որ լավագույն պատառները ոչ թե հարազատ երեխաների, այլ նրա ափսեում է դնում: Ու փորձիր հակառակվել՝ կսպանի՛: Այնքան էլ ցրվա՛ծ է: Մեկ-մեկ մտքի մեջ է ընկնում, տնկվում ուղեսյան պես ու ժամով մնում նույն տեղը: Ու երկար կանգնելու դեպքում անպայման մի բան մոռանում է, իսկ ես հետո պիտի վազեմ անտառով մեկ, ման գամ: Մեկ էլ՝ ցավի չի դիմանում: Ատամները որ ցավում են, վրան բյուրեղային կարբոլաթթու է լցնում... Մայրս ասում է՝ բժշկի գնա, ատամներդ լրիվ կկորցնես, տե՛ս, արդեն շվացնել չես կարողանում, հետդ ոսկորի սուլիչ ես տանում որսի, իսկ նա՝ թքա՛ծ, պրոտեզ կդնեմ:

«Ա՛յ քեզ մարդ,- չորացած շրթունքները լպստելով՝ մտածում էր Ուլյան:- Կարող էր ապրել Պետերբուրգում, ամեն օր տեսնել Բրյուսովին, Բլոկին կամ հենց Լեոնիդ Անդրեեւին... Կարող էր զրուցել նրանց հետ, հարցնել՝ հիմա ինչ են գրում: Բայց բռնել ու մտել է անտառ՝ ուղեսյան պես կանգնելու»:

Մի անգամ չդիմացավ ու մտքերը կիսեց խորթ մոր հետ, քանի որ Վերա Կոնստանտինովնան թեկուզ եւ սառն ու մեծամիտ էր, բայց Ուլյայի կարծիքով գլուխ էր հանում մարդկանցից ու հասուն կյանքից:

- Բլոկին ամեն օր տեսնելը լավ է, երբ ինքդ Բլոկի պես ես: Կամ Բալ-

մոնտի,- երազկոտ պատասխանեց Վերա Կոնստանտինովնան:- Իսկ եթե ոչ՝ ծանր փորձություն է, Յուլիա՛նա: Լեգկոբըտովը մի քիչ վախկոտ է, փախել է բոլորից ու թաքնվել այս Գորբունկիում, չնայած նրա մասին դեռ կխոսեն, հիշի՛ր ասածս:

Վերա Կոնստանտինովնայի դեմքը մշուշվեց, ամսագիրն ընկավ նուրբ ձեռքերից, եւ Ուլյան զարմացավ, որ խորթ մայրը մի տեսակ տարօրինակ է խոսում գյուղական հարեւանի մասին: Ներողամիտ քմծիծաղն անհետացել էր, եւ այդ փոփոխությունն ավելի սրեց աղջկա լարված, տառապագին դիտունակությունը, որ մանկուց չարչարում էր նրան:

- Պա՛վել Մատվեեւիչ, ինչո՞ւ եք այդպիսի մեծ ու սարսափելի մորուք պահում,- մի անգամ լսեց խորթ մոր հարցը:

- Որ ուզենան մռութիս թքել, մորուքիս կպնի:

- Չէ, համենայնդեպս շատ խոցվող եք,- քրթմնջաց Վերա Կոնստանտինովնան ու մատներով դիպավ նրա թեւքին:

Խանդն ու տագնապը այդ պահին ծակեցին Ուլյայի սիրտը, եւ նա որոշեց ավելի ուշադիր ու հետեւողական լինել. Վըսոկի Գորբունկիում նա ուրիշի երջանկության ու դժբախտության իր որսն ուներ, բայց Լեգկոբըտովն արդեն առաջ էր սլանում՝ չնկատելով ուժեղ թիկունքին մեխված մի զույգ կանացի աչքերը: Ի՛նչ Բալմոնտ: Կամ նույնիսկ Բլոկ: Գեղցու մեկն է, չարչի՛, աղանդավո՛ր:

...Իմիջիայլոց, Պավել Մատվեեւիչի ինչի՞ն էին Բալմոնտը կամ Բլոկը: Մեկին անձամբ չէր ճանաչում, չնայած արեւի պես լինելու մասին բանաստեղծությունը որպես բնաբան ծածուկ դրել էր իր գրքում, իսկ մյուսի հետ ծանոթ էր ու խնդրել էր նույն գրքի մասին դեկադենտական գրախոսություն գրել «Վեստալուհիներ» ամսագրի համար: Չէր մերժել, գրել էր. թե սա ոչ պոեզիա է, ոչ էլ արձակ, ուրիշ մի բան է... Եթե չխորանանք, լավ էլ հարգալից էր ստացվել: Նուրբ փոխառություն ժամանակակից արվեստի մասին պոետ Բելիի հոդվածից: Բայց Պավել Կոնստանտինովիչն ամբողջ կյանքում պարծենում էր այդ «ուրիշ մի բան»-ով: Բլոկին ու Բալմոնտին թող չսիրեն կասկածելի իշխանական արյուն ունեցողները, որ խուլիգանություն են անում խոհանոցներում ու դարպաստակերին, մարտավկայությամբ փող աշխատում հիմար մենամարտերում, ձախ ձեռքով պոռնոգրաֆիական պատմվածքներ են գրում բաղնիքի աղջիկների ու կաղլիկ վավաշոտ պարոնտերերի, իսկ աջով՝ մաքրաբարո ու հավատարիմ տիկնանց մասին, որպիսիք բնության մեջ գոյություն չունեն: Իսկ նա ոտք չէր գցում ոչ մեկի հետ, քանզի գնում էր իր ճանապարհով, սակայն Բլոկի հետ հազ-

վաղեպ հանդիպումների ժամանակ անհարմարավետություն էր զգում եւ անընդհատ վախենում, որ աշտարակը մագլցած պոետը հանկարծ կշրմփա գետին՝ երկրպագուհիներին գայթակղության տանելով:

Ուրիշ երկուսն էին Պավել Մատվեեւիչին չարչարում այդ ժամանակ: Մեկի մասին վերջերս էր իմացել եւ Ատտիկյան գաղտնիքների Կուրտ էր կոչում, դաշտագլոր, անարմատ մարդուկ, փուչ արտասահմանցի, որի ողջ էությունը բաղկացած է կարդացածության ու գիտնականության երեւութական նյութից, հանիր այդ նյութը, ողջ եթերը կցնդի ու միայն պատիճը կմնա՝ ո՛չ արյուն, ո՛չ սերմ, ո՛չ այլ մարդկային արտազատումներ: Դրա համար էլ, չնայած Կրտածն ամուսնացած էր կիսավհուկի հետ, որը Լեգկոբըտովի մասին նողկալի լուր էր տարածել, թե անիմաստ ու չմարդկային գրող է, այդ շաղակրատն ու շաղակրատուհին երեխաներ չունեին, միայն դատողություններ ու ճանապարհի փոշի: Ու կինն էլ աշխարհում չեղածն էր պահանջում: Իսկ աշխարհում ամեն ինչ էլ կա, պարզապես պետք է գտնել: Բայց ամեն դեպքում, Կրտածն ու կինը հասարակական կարծիք էին ստեղծում՝ օժիտի պես, ի լրումն նամշած տաղանդի, եւ Տավրիդյան առափնյակի նրա բնակարանով էին անցնում երկրային փառքի տանող բոլոր ճանապարհները, իսկ այդ փառքը, չգիտես ինչու, պետք էր Լոգկոբըտովին, իզուր չէ, որ օր ծերության, արդեն ինքնին կատարելություն ու մարմնացյալ առաքինություն դառնալով՝ իր գաղտնի տետրերում ինքնասիրության մասին գրում էր որպես իր միակ թերության: Էլ ինչ ասես ջահելության մասին, երբ ասես հար ընկած ոտնաթաթ լիներ:

Պավել Մատվեեւիչը մեկ խցկվեց Կուրտի մոտ՝ չընդունեցին, երկրորդ անգամ՝ շեմից ներս չթողեցին, միայն անփույթ պատվիրեցին թողնել ձեռագիրն ու մի ամսից գալ պատասխանի: Բայց ավելի լավ կլիներ չգար. կարդացեք «Կապիտանի աղջիկը», սովորեք, զարգացեք, ձգվեք՝ ահա եւ բոլոր պատվիրանները, որ նրան տրվեցին պարոնտիրոջ ընդունարանում: Հայհոյեց եւ ուզում էր հենց շեմին ոտքերից թափ տալ աճյունափոշին, բայց հեռատեսորեն չշտապեց: Կրտածը շարքային թռչուն չի, զգույշ պիտի մոտենաս, ինչպես կտղած խլահավին: Ու խորամանկ որսորդը հասավ նպատակին: Մեկնեց Նիժեգորոդյան նահանգ, Սվետլոյար լիճ, որի շուրջը ամառային արեւադարձին չոքեչոք պտտվում էր ողջ աղանդավորական Ռուսիան՝ աղերսելով անտեսանելի քաղաքը, իսկ պետերբուրգյան ինտելիգենցիան կողքից հետեւում էր ժողովրդական ակնկալիքներին ու հույսերին եւ ոսկի բառեր շարում փքուն տետրակներում: Աստծուն որոնող գույնզգույն ամբոխի մեջ Լեգկոբըտովը գտավ տարիքով չծանրացած,

բայց գոռոզ երիտսրբահայր-տիրացու Ֆոմա փարիսեցուն, որը ինսուն-հինգին ի ցույց աշխարհի խզել էր կապերը եկեղեցու հետ, հրապարակավ կոպտել Պոբեդոնոսցեւին ու Սինոդին սպառնացել շուտափույթ աշխարհավերջով, եթե ցարին անհապաղ պատրիարք չընտրեն: Ֆոման լավ գիտեր Կրտածին, որովհետեւ մինչեւ արքա-աստծու հետեւորդ դառնալը կարդացել էր նրա գործերը, հետո հանդիպել էր Սվետլոյարում ու բանավիճել նրա հետ, թե ինչ է ճշմարտությունը եւ ինչ տեսքով է հայտնվում նեռը: Երիտսրբահայրը չար նայեց Լեգկոբըտովին ու հայհոյեց մի եռանդուն վատ բառով, բայց Պավել Մատվեեւիչը չշփոթվեց: Փայլախայծի պես կեռից կախեց ժողովրդական փարիսեցուն ու դպիրին եւ նրա ողջույնն առած՝ վերադարձավ Պետերբուրգ՝ ոգով անսթափ մարգարեի մոտ:

- Կի՛ն իմ, լսո՞ւմ ես, մեզ ողջույն են ուղարկում Կիտեժից,- իր Կիբելային շնչակտուր ասաց Կրտածը:- Դե՛, անցեք, նե՛րս անցեք, ի՞նչ եք կանգնել ինքնարձանի պես: Ուրիշ ի՞նչ էր ասում իմ մասին: Պատմե՛ք, պատմե՛ք... Ջի՛նա: Դուրս արի վերջապես:

Ու Պավել Մատվեեւիչը սկսեց պատմել... Իսկ Կրոնսափիլիսոփայական ակումբի հաջորդ նիստին արդեն մեջքի վրա սողում էր բեմում, հետո նաեւ դահլիճով՝ շարքերի արանքով, հարգարժան հասարակությանը ցնցելով «Սողո՛ւմ են, բոլորը սողո՛ւմ են: Անտեսանելի քաղա՛քն են խնդրում» ծղրտոցներով ու կոչելով հետեւել իրեն: Հասարակությունը լոռնետները հառել էր զգուշ զեկուցողին եւ գտնում, որ ծուռումռտիկ է գյուղական կացնի պես, բայց՝ հետաքրքիր եւ օգտակար: Այդպես էլ սողաց-հասավ ուզածին:

Իսկ մյուս մեծին ոչնչով գրավել չհաջողվեց, չնայած երկար տարիներ էին իրար ճանաչում, եւ այդ մեծն անսահման մեղավոր էր նրա հանդեպ: Պավլիկ Լեգկոբըտովը նրա պատճառով էր կույս մնացել համարյա երեսուն տարի ու գեղեցիկ տիկնոջ՝ Շելոմյան գյուղի պատշգամբում ոգեւորված ստում էր, թե ինչ երջանիկ է դրա համար. նրա պատճառով էր ավիրել իր կյանքը, կորցրել միակ սիրելիին, գլուխը կախ տարեկան աճեցնելու կամ այլ օգտակար գործով զբաղվելու փոխարեն դարձել գրող: Նա՝ այդ Պրիապոսը, Մինը, Սատիրը, մտքերի տիրակալն ու սկանդալիստը, կնոջ կոշկատակը, մի կույտ ապօրինածին երեխաների հայրն ու այն ժամանակ անհայտ գավառական փիլիսոփան՝ բուլկու պես Ռ-վ ազգանունով, իր փողով իր գիրքը տպածը, որին գործընկերները տղամարդ ուսուցիչների հավաքի ժամանակ բառի բուն իմաստով հրապարակավ թրջել էին՝ խմբակային միզելով վրան, թե, ահա, ինչ արժի նա, իսկ գիրքն իսկապես էլ

անարժեք բան էր, ու ողջ տպաքանակն անճարը քաշով տվեց հնավաճառին, հաստատ չարությունից ու նախանձից նա Պավլուշա Լեգկոբընտովին դուրս արեց գիմնազիայից, երբ այդ երկուսը՝ ուսուցիչն ու աշակերտը, դեմ առ դեմ ելան Եպիֆանյան փողոցում գտնվող մադամ Ռոզյեի հայտնի հաստատությունում, այն օրը, երբ պահքը կես էր ընկել ու մարտի կատուները մագլցում էին տանիք: Այդ նրա պատճառով էր պատանի Լեգկոբընտովը տասնչորս տարեկանում ուզում ձեռք բարձրացնել իր վրա ու կբարձրացներ, եթե խելապակաս վաճառական քեռին՝ մորեղբայր Իգնատի Իգնատեւիչը, զարմիկին չտաներ սիբիրյան Տոբոլսկ քաղաքը, որտեղ կայսրության օրենքները չէին գործում, եւ խուլիգանին ընդունեցին ռեալական ուսումնարան, եւ նա առաջին աշակերտը դարձավ, եւ ավարտելով՝ հաջողեց ընդունվել Ռիգայի պոլիտեխնիկում: Բայց այդպես էլ մինչեւ վերջ չուղղվեց, դարձավ Fraternitasarctica-ի կորպորանտ, այնտեղից ընկավ մարքսիստների մոտ, մեկնեց Սվանեթիա ու լեզգինկա պարել սովորեց մի ինքնամփոփ ու չեչոտ վրացուց, հետո հայտնվեց միջազգային Վիլնա քաղաքի բանտամրոցում ու մի ամբողջ տարի պատից պատ էր քայլում մեկուսարանում, ինչպես հարավային բեւեռից հյուսիսային բեւեռ, եւ արեւը տեսնում էր միայն պատուհանի շրջանակում: Եվ այդ ամբողջ ժամանակ Ռ-վի մասին էր մտածում ու պատկերացնում ինչպես են հանդիպելու: Իսկ երբ հանդիպեցի՞ն:

«Չէ՛, չե՛մ հիշում: Կներեք, ինչ էր ձեր անո՞ւնը: Իսկ ազգանո՞ւնը,- ու պսպղացնելով ակնոցի ապակիները, որոնց ետեւից զգույշ նայում էին մեխի պես սուր, ժանգոտած փոքրիկ աչքերը:- Չէ՛, չգիտե՛մ, չե՛մ լսել, չե՛մ տեսել: Կհիշեի: Հետաքրքիր ազգանուն է: Քաղքենիների՞ց եք: Ա՛խ, վաճառականներից: Այո՛, ութ հարյուր ութսունհինգ թվին հին եգիպտերեն եմ դասավանդել Օրյոլի նահանգի մի գարշելի փոքրիկ քաղաքում, բայց ոչ մեկին չեմ վռնդել գիմնազիայից: Ինձ ինչ-որ մեկի հետ շփոթել եք: Ա՛խ, գրում է՞լ եք: Զարմանալի չէ: Հիմա բոլորն են գրում: Միայն թե չեն կարդում: Կրոնական թեմաներո՞վ: Ի՞նչ է, հավատացյա՞լ եք: Ա՛խ, որոնող, բայց չգտած: Հասկանում եմ, շատ լավ եմ հասկանում: Այդ դեպքում, աղավնյա՛կս, դիմեք Դմիտրի Սերգեեւիչին ու Զինաիդա Նիկոլաեւնային, լսել եմ, որ նրանք իրենց պատարագներն են մատուցում: Ա՛խ, արդեն այցելե՞լ եք: Եվ ինչ ասացի՞ն: Որ դեկադենտություն չե՞ք սովորել: Ինչպես չեք սովորե՞լ, ինչպե՞ս: Կեն-սա-գրու-թյա՞մբ:- Ու հանկարծ սկսեց ծիծաղել, թուլացավ վիրավորական քրքիջից՝ բացելով փտած ատամներն ու թուքը շաղ տալով:- Բայց ունիկո՛ւմ եք, սիրելի՛ս:- Ու վերջապես, կուշտ ծիծաղելով, բարբա-

ռեց:- Այստեղ արդեն ոչնչով չեմ կարող օգնել: Ես փիլիսոփա չեմ, պարո՛ն, ոչ էլ գրող, լրագրող եմ, ֆելիետոնիստ, չնչին թղթակից ու հիմա զբաղված եմ՝ հոդված եմ գրում: Մի հատ՝ «Ռուսսկոե վրեմյայի», մեկն էլ՝ «Նովոյե սլովոյի» համար: Ու մի խորհուրդ կարող եմ տալ. երիտասա՛րդ, մոտ եղեք անտառներին ու հեռու խմբագրություններից: Եվ գլխավորը՝ ինձնից հեռու մնացեք»:

Եվ որպես հոգու ճիչ՝ արդեն դռների մեջ. «Ես ընտանիքս պիտի կերակրեմ: Չորս երեխա ունեմ, ու նաեւ խորթ աղջիկս է հոգիս հանում»:

- Հո՛րթ ես դու, հո՛րթ: Ոնց հորթ կայիր, էնպես էլ կաս: Գլխավորն ընտանիքն է, բա ո՞նց: Խորթ աղջի՛կը,- հեծկլտում էր Պավել Մատվեեւիչը՝ արցունքները քսմսելով մազակալած այտերին եւ թաց ու թույլ ձեռքերով ամուր գրկած իր զարմանահրաշ «զաուերը»:

4

Արդեն երկու ամիս շոգ, խեղդուկ, անհողմ եղանակ էր, հողը չորացել էր, պնդացել, իսկ հետո ճաքճքեց, փոշու եւ հրդեհների ծխի հոտ փչեց դյուրաբեկ, ճրթճրթացող անտառներից: Գորբունկիի շուրջը հորիզոնները պղտորվեցին, գիշերով հեռավոր հրացոլքեր էին երեւում, որոնք բոլոր կողմերից շրջապատում էին գյուղը, ցերեկը անտառային հրդեհների մուժը պատում էր երկինքը, արեւը նայում էր մշուշի միջով ու չէր վառում առաջվա պես, այլ շնչահեղձ էր անում: Տեղի քահանա հայր Էրոսը հորդորեց անձրեւ սպասել Համբարձման տոնին, հետո՝ Հոգեգալստին, հետո՝ Իվանի օրը, բայց անձրեւ չկար ու չկար: Ջրհորները չորացան, կնանիք ջրի էին գնում գետը ու ծանր դույլերը դժվար կրում սարն ի վեր, իսկ տղամարդիկ տխուր նայում էին նվաղած դաշտերին ու բանջարանոցներին: Այդպիսի երաշտ գյուղը վաղուց չէր տեսել, ասում էին՝ ինչ-որ մեկը շատ մեծ մեղք է գործել Երկնքի դեմ, իսկ հայր Էրոսի մասին շշուկներ կային, որ վերին օրհնություն չունի, ու լավ կլիներ փոխել տեր հորը կամ գաղտնագետ ուսուցիչ հրավիրել: Այդ լուրերը բազմապատկվում էին պարսի պես, կպչում իրար, կառչում իրարից ու կամաց-կամաց դառնում մի սպառնալի զանգված, գյուղին մոտեցող սեւ ամպ, որ պատրաստ էր հեղեղվել անձրեւի պես կամ ակնթարթորեն բռնկվել ու կրակ տեղալ: Մռայլ, մթին մի ուժ ելք էր փնտրում ու հունիսի վերջին գտավ: Իվան Կուպալայի գիշերը ամենախիզախ գեղջուկներից մի քանիսը գերեզմանից քանդեցին-հանեցին տարաբախտ իշխան Լյուպայի դիակը, որի թաղմանը քեֆ էր արել ողջ

գյուղը, եւ Նիտշչի ետեւից իջեցրին Ծելոմ գետը: Մեկ ամսում երկրորդ դիակը լողաց Ծելոմով, նույնքան աննկատ, որքան առաջինը, բայց երաշտը դրանից հետո ավելի չար դարձավ, իսկ գետի ջուրը սկսեց արագ նվազել:

...Օրերը նման էին իրար՝ տանջող, անվերջանալի, հոգի եւ մարմին տոչորող: Լռեցին եւ ինչ-որ տեղ կորան թռչունները, թաքնվեցին գազանները, բայց չնայած չորությանն ու ծխին, մոծակն ու մլակը չէր պակասում, փոխարենը՝ սոված միջատներն ավելի ու ավելի չար էին դառնում: Մոծակները դուրս էին թռչում խոտերից ու խոյընթաց իջնում երկնքից, մլակները ծեփվում էին դեմքերին, աչք ու բերան մտնում, եւ ոչ մի ճյուղ, որով Վերա Կոնստանտինովնան խփում էր ձեռքերին ու ոտքերին, չէր օգնում: Մի քանի անգամ այնպես ցավոտ կծեցին, որ շրթունքներն ու այտերը ուռան: Գիշերը մոծակը լցվում էր տուն, զզվելի ծվվում ականջի տակ, ու քաղաքային տիկինը զայրագնած մտածում էր՝ ավելի լավ է արագ կծեն, քան այսպես տզզան: Կողքին անխռով, ոչնչի ուշադրություն չդարձնելով՝ խռմփացնում էր ամուսինը, ու ոչ մի մոծակ չէր մոտենում նրա՝ մեքենայի յուղով ներծծված, կոպտացած մաշկին, իսկ հարեւան վերնասենյակում անձայն քնած էր նրա վայրի դուստրը:

Վերա Կոնստանտինովնան շատ դժգոհ էր տնեցիներից, որոնք ամեն տարի նրան քարշ էին տալիս Աստծու աչքից ընկած այդ խուլ գյուղը: Իր շրջանակի մարդիկ այլ կերպ պիտի հանգստանան: Հատկապես զայրացած էր ամուսնու վրա. մեխանիկը բավական լավ էր վաստակում, բայց անկարելի էր համարում փող ծախսել հանգստի, ճամփորդությունների, արտասահմանյան առողջարանների ու ջրաբուժարանների վրա: Կինը լավ հագնվելու, սեփական դերձակ ունենալու, գեղեցիկ հագուստներ, սպիտակեղեն կրելու մասին նույնիսկ մտածել չէր համարձակվում: Եվ ընդհանրապես չէր հասկանում՝ ինչի վրա են ծախսվում նրա փողերը. նրանք ոչ թե պարզապես համեստ, այլ աղքատ էին ապրում, թող որ կոկիկ աղքատ: Նույնիսկ ամենօրյա ճաշն աղքատիկ էր, քան ծնողների տանը՝ միօրինակ, կոպիտ կերակուր, որ անտարբեր, առանց համի նրբերանգները զգալու, կլլում էր ամուսինը: Կարելի էր մտածել՝ Վասիլի Խրիստոֆորովիչը սիրուհի է պահում, եւ՝ ոչ մեկը, կամ տանուլ է տալիս թղթախաղում, եթե այդ մտքերը կատարյալ անհեթեթություն չլինեին: Ամուսինը բարոյականության օրինակ էր, բայց հենց այդ օրինակելիությունն էլ, որ ժամանակին գերել ու գավառական երիտասարդության տեւական մոլորություններից ու հիասթափություններից հետո սփոփել էր Վերա Կոնստանտինովնային, հիմա չարացնում էր նրան: Գուցե, եթե պարզվեր այդ մարդը որեւէ արատ

ունի՝ խմիչք կամ մորֆի, նրա համար ավելի հեշտ լիներ, բայց մանրիկ կեղտը չէր կպչում Վասիլի Խրիստոֆորովիչին: Նա մեծ չափումներով էր ապրում:

Վերա Կոնստանտինովնան մի քանի անգամ մեղմ, բայց սրտաճմլիկ փորձել էր խոսք բացել կանացի կարիքների մասին, բայց ուղղամիտ, անկեղծ ու շիտակ ամուսինը հանգիստ ու հաստատուն խույս էր տալիս պատասխանից, ու չնայած ցանկացած գաղտնիք անախորժ է կանացի հոգուն, Վերա Կոնստանտինովնան այս մեկը բացահայտել չէր կարողանում: Միայն կասկածում էր, որ այդ գաղտնիքը կապված է Կոմիսարովի առաջին կնոջ հետ, որն ամուսնուն լքել էր շատ տարիներ առաջ, եւ ում մասին տանը երբեք չէին խոսում, եւ դա Վերա Կոնստանտինովնայի համար ավելի ծանր էր, քան եթե խաբեին ու վիրավորեին: Ո՛չ, ուզում էր այլ կերպ ապրել: Նրան դուր էր գալիս նրբավարությունը, սիրալիրությունը, նրբագեղությունը: Նա սիրում էր կիսատոները, ակնարկները, մթնշաղը, նրան հուզում էին ժամանակակից պոետների բանաստեղծությունները, որեւէ մեկի երազանքը կամ մտերիմ բարեկամը, մուսան դառնալու կոչում էր զգում իր մեջ, բայց դրա փոխարեն հայտնվել էր մկներով ու խավարասերներով լցված հեղձուկ գյուղական խրճիթում ու տառապում միապաղաղությունից՝ կանխավ պատկերացնելով հերթական օրը. ամուսինը, եթե շուտ չի արթնացել ու Լեգկոբըտովի հետ գնացել անտառ, կսկսի ձրի նորոգել գյուղատնտեսական գործիքները, խորթ աղջիկը Լեգկոբըտովի տղայացուի հետ նորից կկորչի գետափին, ու դեռ հարց է՝ այդ անդաստիարակ տղան ինչպես է ազդում նրա վրա, եւ ինչով կվերջանան այդ խաղերը: Բայց երբ փորձեց Վասիլի Խիստաֆորովիչի ուշադրությունը հրավիրել այդ անպատեհ ընկերության վրա, բանի տեղ չդրեց՝ հիմարությո՛ւն, դատարկ բա՛ն է, իսկ Ալյոշան շատ ընդունակ տղա է, եթե սովորի, նրանից հրաշալի ինժեներ դուրս կգա:

- Հետաքրքիր է՝ ո՞վ ուսման փող կտա: Գուցե քո այդ ընկե՞րը,- զայրացկոտ վրա տվեց Վերա Կոնստանտինովնան:

- Ինչո՞ւ: Ես կտամ,- պատասխանեց Կոմիսարովը, ու Վերա Կոնստանտինովնան ավելի բորբոքվեց՝ ինքն էլ ամաչելով իր պահվածքից:

- Ուրիշներին տալիս ես, իսկ քոնո՞նք ինչ են տեսնում քեզնից: Գուցե ուզում ես որդեգրե՞լ նրան: Կամ տնփեսա՞ առնես:

- Ինչո՞ւ ոչ,- ուսերը թոթվեց մեխանիկը:- Քո՞ ինչ գործն է:

Վերա Կոնստանտինովնան քիչ էր մնում շնչահեղձ լիներ այդպիսի լկտիությունից: Ուզում էր գոնե մի անգամ ստիպել, որ այդ մարդը պայթի,

հունից դուրս գա, որ տեսնի ինչպիսին է նա զայրույթի պահին, բայց չէր հաջողվում: «Ամիծվա՛ծ ցեղ,- մռայլ մտածում էր նա:- Աղջիկն էլ է իր նման: Եթե հարազատ աղջիկս լիներ, կթողնեի իրեն այդպես պահեր, բա չէ՞: Հայրը բաց է թողել, ինչ պիտի դուրս գա սրանից: Ընկերություն են անում, բա չէ՞: Թեւանցուկ ման են գալիս: Գիտեմ ես այդ զբոսանքները: Այդ մաշկով նա ընդհանրապես քիչ պիտի լինի արեւի տակ: Մռութը կարմրել է անպարկեշտության աստիճանի: Իսկ ինձ այս ամենից՝ զուտ ներվերի քայքայում»:

Վերա Կոնստանտինովնան երեսուն տարեկան էր դարձել այդ ամառ ու որոշ ժամանակից վեր սկսել էր զգալ տարիքը: Տարիքը ճնշում էր նրան, իր պահանջները ներկայացնում, հիշեցնում իր մասին, իսկ նա դեռ չգիտեր՝ ճի՞շտ է ապրում, թե ոչ: Եվ հասկանում էր, որ իր անձկության պատճառը պարապությունն է: Ամուսնության առաջին տարիներին փորձել էր պայքարել դրա դեմ. երաժշտությամբ էր զբաղվում, նկարչության դասեր առնում, նույնիսկ փորձեց խաղալ սիրողական թատերախմբում եւ մի քնադատական հոդված գրեց սիմվոլիզմի մասին ու Բլոկի ոգով երկու էլեգիա: Նրա խաղը գովում էին պոետները, բնապատկերները՝ դերասանները, իսկ բանաստեղծությունները՝ նկարիչները, բայց պարզվեց ոչ մի որոշակի տաղանդ չունի: Նրան սիրունիկ արտաքին ու քաջառողջություն պարգեւելով՝ բնությունը ոչինչ չէր հավելել, ու ժամանակի ընթացքում Վերա Կոնստանտինովնան սկսեց ողջ սրությամբ զգալ իր անհարկավորությունը: Ավելի ու ավելի հաճախ էր մտածում, որ եթե վաղը հանկարծ ինքը չլինի, այս տանը ոչինչ ի փոխվի, եւ առանց իրեն էլ կշարունակեն ապրել: Երկար ժամանակ նրանց կապը պահում էր այն, որ Վասիլի Խրիստոֆորովիչը համարյա ամեն օր ցանկանում էր կնոջը եւ նույնիսկ արթնացնում գիշերվա կեսին: Վերա Կոնստանտինովնան վստահ էր, որ նա զուտ սեռական անսանձ պահանջմունքին բավարարում տալու համար էլ ամուսնացել է, եւ այդ անհագությունը միաժամանակ վիրավորում ու թույլ էր տալիս կառավարել ամուսնուն՝ զուտ իր հայեցողությամբ համաձայնելով մերձությանը, եւ նրանց հավերժ ծանձրալի մենաստանում մարմնի անսպասելի զիջումը միակ տոնն ու կյանքի արդարացումն էր, այն պահը, երբ Վերա Կոնստանտինովնան զգում էր իր իշխանությունն այդ մռայլ, ինքնամփոփ եւ անասելի հեշտասեր մարդու վրա: Բայց ամուսնու հոգին փակ էր մնում, իսկ ինքը չէր կարողանում ազատվել մտքից, որ նա իրեն օգտագործում է որպես իր, ու դրանից իրեն խորապես նվաստացած էր զգում:

Մի անգամ, գարնանը, լիալուսնից քիչ առաջ, խիստ անտրամադիր Վերա Կոնստանտինովնան գիշերն իր մոտ եկած Կոմիսարովին հայտարարեց, որ նա մարդ չի, այլ անպարկեշտ անասուն, որ ամուսնությունը շաղախել է տոփանքով: Նա կանգնել էր կնոջ առաջ՝ մետաքսե խալաթի փեշերը բաց, կրքից մշուշված աչքերով, կարմրտակած, գրգռված, նողկալի՝ իր պարարտությամբ ու արուի անզսպելի ուժով, ու կինը գիտեր՝ ինչ էլ որ ասի, մեկ է, հիմա ընկնելու է իր անկողնուն, եւ քինախնդրությամբ վայելում էր վերջնական կամքի հաճույքը, բայց ամուսինը լուռումունջ, առանց խալաթի փեշերն իրար բերելու, դուրս եկավ ննջարանից ու այլեւս երբեք այնտեղ չմտավ: Կինը պատրաստ էր երդվել,- հաստատ զգում էր,- որ նա ուրիշ կին չունի ու թեթեւ վարքի տիկնանց մոտ չի գնում: Ստացվում էր, որ ամուսինը կարողացել է սանձել իր մարմինը, եւ այդ օրվանից ինքն էր իրեն վիրավորված, չբավարարված զգում:

«Իսկ եթե պարզապես տգեղացել եմ կամ բերանիցս հո՞տ է գալիս: Սպիտակ մազե՞ր: Կնճիռնե՞ր: Թե տխրությունից շատ եմ ուտում, չաղացել ու անհրապո՞ւյր եմ դարձել»,- կրիայի պատյանից սարքած սանրով սանրվելով՝ Վերա Կոնստանտինովնան հին պղտոր հայելու մեջ ուշադիր նայում էր իր մերկ արտացոլմանը ու չնայած ակնհայտ թերություններ չէր տեսնում, մեկ է, հոգու խորքում ծանրացավ իր հանդեպ անվստահության զգացումը: Անքնություն սկսվեց, որին այնպիսի հիմար երազներ էին հաջորդում, որ հիշելն ամոթ էր, բայց ամենասարսափելին ու անպարկեշտը հենց նոր տեսածն էր: Երազում մի անծանոթ գյուղ էր, վաղ գարուն, մերկացած բարձր ծառեր, սեւ հող, ինչ-որ մեկի թաղումը, ողբ ու կական, անեծքներ, դագաղի ետեւից քայլող տղամարդիկ, կանայք, ու չգիտես ինչու՝ այդ մարդկանց մեջ ինքը՝ հարբած, զզզված կեղտոտ մազերով, հասարակ բաց կապույտ չթե շորով: Քամին քշտում է փեշը, բայց ինքը նույնիսկ չի փորձում ծածկել մերկացած ոտքերը, հետո ինչ-որ փայտե շինություն է տեսնում, մտնում է ու նկատում խոտերին պառկած մի անծանոթ մարդու: Մրսում է, շատ է մրսում, պառկում է կողքին, սեղմվում ողջ մարմնով ու տաքանում...

Հետո կատարվածի ամոթից, քաղցրությունից ու սարսափից Վերա Կոնստանտինովնան իրեն ստիպեց արթնանալ ու վախեցած շուրջը նայեց, ասես մեկը կարող էր թաքուն տեսած լինել իր երազը: Լուսնի լույսը ընկել էր սենյակ, պատուհանների շրջանակների ստվերները թեքվել էին մահճակալին ու անդրադառնում էին խաբուսիկ հայելուց: Պատուհանից այն կողմ թեթեւ թեւաբախման պես շրշյուն լսվեց: Վերա Կոնստանտինով-

նան ցնցվեց ու մոտեցավ պատուհանին, բայց առանձնակի ոչինչ չտեսավ՝ միայն յասամանի ծաղկած թուփն ու «հսկա քայլերը»: Նրան պատեց մենակության սարսափելի զգացումը: «Ըստ երեւույթին շուտով արյուն կգա,- դժգոհ մտածեց նա. միշտ ծանր էր տանում դաշտանին նախորդող օրերը, եւ աչքերը լցվեցին իր հանդեպ խղճահարության արցունքներով:- Ինչո՞ւ ինձ այսպիսի բախտ տրվեց: Ուզում էի Սքանչելի Տիկին լինել, բայց նույնիսկ շարքային տնային տնտեսուհի չդարձա: Կյանքս չստացվեց: Ո՛չ ընտանիք, ո՛չ քաղցր հիշողություններ, ո՛չ դրանց հայտնվելու հույս: Նույնիսկ առանց Լեգկոբըտովի Պելագեյայի վայրկենապես կփլվի մեծ տնտեսությունը, ու գովական գրողը կվերածվի ոչնչի: Ես սնանկ եմ»:

Սույն տխուր, բայց ազնիվ եզրակացությունն անելով՝ Վերա Կոնստանտինովնան թեթեւացած լաց եղավ, բայց չքնեց. այնպես էր հուզվել, այնպես էր խղճում իրեն, որ վերջնականապես փուլ եկավ: Ամուսինը քնած էր կամ քնած է ձեւանում: Պետերբուրգում ավելի լավ էր՝ տարբեր սենյակներում էին քնում, իսկ այստեղ, գյուղում նրան թվում էր բոլորը նկատում են, որ իր ու ամուսնու միջեւ մերձություն չկա, ու ծիծաղում են իրենց վրա՝ եւ՛ Լեգկոբըտովը, եւ՛ Պելագեյան, եւ՛ բոլոր կանայք ու տղամարդիկ ամեն ինչ գիտեն, զգում, հասկանում ու մեղադրում են միայն իրեն:

Սկսում էր լուսանալ, արդեն երեւում էին ծառերի ու ցանկապատի ուրվագծերը, բայց դրանից այն կողմ ամեն ինչ անհետանում էր վաղորդյան մշուշի մեջ: Վերա Կոնստանտինովնան Ուլյայի սենյակի մոտով անցնելիս կիսաբաց արեց դուռը: Աղջիկը հանգիստ, անձայն քնած էր, ու կնոջը մի պահ պատեց վաղուց մոռացված մեղքի զգացումը: Զգույշ մտավ ներս ու ձեռքը տարավ խորթ դստեր՝ բարձին փռված մազերին: Մազերը խոնավ էին. ասես Ուլյան ինչ-որ տեղ անձրեւի տակ մնացած կամ լողացած լիներ: Վերա Կոնստանտինովնան ցնցվեց ու նայեց պատուհանից դուրս: Փեղկերը գոց էին, ըստ երեւույթին ձմեռվանից չէին բացել, կրկնափեղկերի արանքում թափվել էին չորացած ճանճերը: «Քրտնել է խեղճը: Նայես՝ ինչ երազ է տեսնում»:

Հոգու խորքում գիտեր, որ մեղավոր է Ուլյայի առաջ, ամեն ինչ չի արել աղջկան իրեն մոտեցնելու համար, երբ դա հնարավոր էր: Ամուսնանալիս Վասիլի Խրիստոֆորովիչին խոստացել էր, որ Ուլյայի համար կփոխարինի մորը, նույնիսկ պատկերացնում էր, ինչպես են միասին խաղալու, ինչպես են զուգելու տիկնիկներին, ինչպես են ուսենալու իրենց փոքրիկ գաղտնիքներն ու խորամանկությունները, բայց այդպիսի խոստումներ շատ ավելի հեշտ է տալ, քան կատարել, եւ բարի մայրացուի նրա ծրագրե-

որը շատ ավելի արագ փլվեցին, քան երջանիկ կին լինելու պատրանքները: Ցղային, դատարկ բաներից հաճախ լացը կապող գեղձախտավոր աղջնակը, որն այդպես էլ թույլ չտվեց դիպչել իրեն, իր ապուշ ռամկական անունով, որը Վերա Կոնստանտինովնան չէր ուզում արտասանել, միայն ջղայնացնում էր մեխանիկի տիկնոջը: Աղջկա հետ ինչ-որ բան այն չէր: Թե հատկապես ինչը՝ Վերա Կոնստանտինովնան չէր կարողանում հասկանալ, բայց երբ ծածուկ նայում էր խորթ դստերը, մի թաքուն արատ էր զգում նրա մեջ, եւ այդ արատը վախեցնում ու խանգարում էր նրա հետ վարվել այնպես, ինչին հանդուգն աղջնակն արժանի էր: Վերա Կոնստանտինովնան սկզբում անհաջող փորձեր էր անում նվաճելու Ուլյայի վստահությունն ու սերը՝ հանձնարարելով քանդել թելի կծիկները՝ դրանով աղջկա մեջ համբերություն ու համբերատարություն դաստիարակելու համար, ինչպես ժամանակին հենց իրեն՝ Վերա Կոնստանտինովնային էին դաստիարակել Վոտկինսկի արվարձանի հին ազնվականական տանը: Մտածում էր՝ Ուլյան նման է այդ կծիկին,եւ եթե համբերատար, հետեւողական ազատի նրան ողջ շինծուից ու ցուցադրական խառնաշփոթից, հնարավոր կլինի հասնել նրան, որ աղջիկն ավելի հնազանդ լինի: Նույնիսկ թվում էր՝ հենց այդպես էլ կա, եւ աղջիկը դանդաղ, բայց հնազանդվում է, ընկնում իր իշխանության տակ, բայց մի անգամ մտնելով նրա սենյակը, տեսավ, որ Ուլյան գիրք է կարդում: Աղջիկն այնքան տարված էր, որ չլսեց օտար ոտնաձայնը, ու երեխային գովելու պատրաստ դաստիարակչուհու բառերը մնացին կոկորդում, երբ լսեց մանկական տենդագին ու կատաղի շշունջը.

Տարին անցավ հանց փուչ երազ,
Արքան ուրիշ մի կին առավ,
Որ հպարտ էր ու կոտրատվող,
Իրասածի ու շատ խանդոտ:

«Ե՞ս եմ այդպիսին»,- վիրավորված մտածեց Վերա Կոնստանտինովնան:

- Դու պարտավոր չես սիրել ինձ,- ասաց նա Ուլյային:- Ես նույնպես: Բայց քանի որ երկուսս էլ սիրում ենք նույն մարդուն, նրան ցավ չպիտի պատճառենք:

- Դուք ոչ մեկին չեք սիրում,- խոժոռ նայեց Ուլյան:

- Ինչո՞ւ ես այդպես կարծում,- հետաքրքրվեց Վերա Կոնստանտինով-

նան՝ Ուլյային նայելով այնպես, ասես տարաշխարհիկ գազանիկ լիներ, որին անտառից բերել ու վանդակն էին դրել:

- Եթե սիրեիք նրան, երեխաներ կունենայիք:

- Բայց դա հաստատ քո գործը չի, փոքրի՛կ անպատկառ,- մռայլվեց Վերա Կոնստանտինովնան ու մի կերպ զսպեց իրեն, որ չհասցնի աղջկա բերանին:

- Ձեզ ոչ ոք չի հրավիրել այստեղ:

- Կարծում ես, որ հասուն տղամարդը կարող է ապրել մենա՞կ, դստեր հե՞տ,- Վերա Կոնստանտինովնան նայեց կծիկների զամբյուղին եւ ավելի հանգիստ շարունակեց:- Դու արդեն երեխա չես, Յո՛ւլիյա: Նույնիսկ տիկնիկներով չես խաղում: Իմ մայրը մահացավ, երբ տասներեք տարեկան էի, ու հայրս սկսեց ինձնից մի քիչ մեծ աղջիկների տուն բերել: Դա՞ ես ուզում:

- Հայրիկն այդպիսին չի:

- Այդպիսին է, թե ոչ՝ ես քեզնից լավ գիտեմ, ու խորհուրդ չեմ տա, որ փորձես դուրս անել ինձ,- հասուն կնոջ աչքերը փայլատակեցին:

- Եթե չխցկվեք իմ կյանք,- կտրեց փոքրը:

Մի կերպ խաղաղություն հաստատեցին, բայց երերուն խաղաղություն էր: Մեխանիկին, որն ավելի նրբանկատ էր մեքենաների, քան մարդկանց հանդեպ, թվում էր իգական սեռի այդ երկու հարազատ մարդիկ հրաշալի լեզու են գտնում իրար հետ, ուստի սխալվում էին նրանք, ովքեր իրեն խորհուրդ էին տալիս ապահարզանից հետո կրկին չամուսնանալ ու սպասել Ուլյուշկան մեծանա: Մարդիկ միշտ կարող են ընդհանուր լեզու գտնել՝ բարեհոգի մտածում էր երկու հմայիչ, ժպտուն կանանց շրջապատում ճաշի սեղանի մոտ նստած Վասիլի Խրիստոֆորովիչը, բայց երբեք չնայեց սեղանի տակ, որտեղ կնոջ կոշիկները հանկարծ տրորում էին աղջկա ոտքերը, եւ այդ իբր պատահական տրորումները ժամանակի հետ ավելի հաճախակի ու ցավոտ էին դառնում: Վերա Կոնստանտինովնան համոզված էր, որ այդ ապուշ Գորբունկին էլ ի հեճուկս իրեն է, որովհետեւ այդ տանը ոչ ոք չի ուզում հաշվի նստել իր հետ: Բացի այդ, տարեցտարի ավելի ու ավելի էր զայրացնում խորթ դստեր շարժուձեւը: Մեծացող ու սիրունացող Ուլյան գռեհիկ էր թվում նրան, ավելի վայրի, անսանձ, քան երեխա ժամանակ,- ի՛նչ համբերություն եւ ի՛նչ հեզություն,- եւ ուզվում էր միայն մեկ բան՝ հնարավորինս արագ որեւէ տեղ կորչեր այդ աղջիկը, թռչեր, փախչեր, ու որ այլեւս չտեսներ նրան:

Այդ ցանկությունը հատկապես սրվեց, երբ սկսվեցին Ուլյայի դաշտանները: Խորթ դուստրը ոչ մի բառ չասաց դրա մասին, բայց փոփոխությու-

նը զգացած Վերա Կոնստանտինովնան, թեկուզ եւ խղճում էր իր բնության հետ մեն-մենակ թողնված աղջկան, համարյա ֆիզիկական ատելություն ու զզվանք էր զգում նրա հանդեպ:

«Ավելի լավ է տղա լիներ: Թե՞ նախանձում եմ նրա ջահելությանը: Ապագայի՞ն: Խանդո՞ւմ եմ,- նորից ու նորից անգթորեն մտածում էր իր մասին:- Ճիշտ ինչպես հեքիաթում՝ իմ աչքի լույս, հայելի՛, ով է սիրուն ավելի... Նրա մա՞հն եմ ուզում: Հոգեհա՞ն անել, թո՞ւյն տալ, գլուխն ուտե՞լ: Ո՛չ, սուտ է: Ուրիշ բան եմ ուզում»:

Իսկ ուրիշ ի՞նչ:

Նա դուրս եկավ տնից ու ծխախոտ վառեց: Գիշերներն էր ծխում, Վասիլի Խրիստոֆորովիչից թաքուն, պահում էր գլանակները ու սարսափով մտածում ինչ սկանդալ կլինի, եթե նա պատահմամբ գտնի դրանք կամ զգա, որ իրենից ծխախոտի հոտ է գալիս:

«Գուցե բաժանվե՞մ: Ըստ էության, լիովին իրավունք ունեմ, մանավանդ հիմա... Անճար, անհեթեթ, թանձրամարմին մի մարդ, որ իմ մեջ սպանեց կնոջը, ճնշեց բոլոր բնազդները, բացի մեկից, հետո դա էլ խլեց: Նա բռնակալ է, հրեշ, իսկ ես ամուսնանալուց առաջ պիտի խորհրդակցեի նրա նախկին կնոջ հետ ու մանրամասն պարզեի ամեն ինչ: Ինչ-որ գումար կհատկացնի, հետո կանցնեմ աշխատանքի եւ անկախ կապրեմ: Կընդունվեմ կանանց դասընթացներ: Ու կծխեմ, ինչքան սիրտս ուզի: Նվաստացուցիչ է վերջապես իմ տարիքում պահ մտնելը»,- մտածում էր նա՝ հաճույքով ներս քաշելով ու նայելով, թե տաք ծուխն ինչպես է քուլա-քուլա պոկվում շրթունքներից:

Գիշերվանից քամու ուղղությունը փոխվել էր, երկինքը մի պահ ազատվեց սեւ ամպերից, ու հանկարծ այնպիսի լռություն իջավ աշխարհի վրա, այնպես մաքուր, այնպես պաղ էր, որ կինը քարացավ, ու նույնիսկ մոծակները չէին անհանգստացնում նրան: Չար մտքերը թռան-գնացին, ու Վերա Կոնստանտինովնան զարմանալի խաղաղություն զգաց: Երկնքում իրար ետեւից հալվում էին խունացած աստղերը: Հեռվում ենթադրվում էր գետը, ինչ-որ տեղ մի քնատ շուն էր հաչում: Ինչ-որ կերպարանք երեւաց, Վերա Կոնստանտինովնան ծխախոտն արագ պահեց թեւքի մեջ ու ճանաչեց փողոցի մեջտեղով քայլող նախրապանին:

- Ողջույն, Տիմոֆե՛յ,- սիրալիր բարեւեց նա:

- Ջուր թափելո՞ւ եք ելել, աղջի՛կ-պարոն,- շքոցով գլխարկը հանելով, հանդիսավոր խոնարհվելով ու մի տեսակ տարօրինակ աչքով անելով՝

կանչեց Տիմոֆեյը, ու քիչ էր մնում Վերա Կոնստանտինովնայի շունչը կտրվեր այդ լկտիությունից:

- Մեկնե՛լ, այսօր իսկ մեկնե՛լ,- քրթմնջաց նա ու միանգամից չնկատեց, թե ինչպես մեգից դուրս լողաց եւս մի կերպարանք, եւ հստակվեց հարեւանի քաջածանոթ մեծամիտ դեմքը: Մեխանիկի կինն այնպես կարմրեց, որ ինքն էլ զգաց դեմքի գույնի փոխվելը: Լեգկոբըտովը հաստատ լսել էր նախրապանի հարցը: Կինը որսաց իրեն ուղղված ծաղրական հայացքը ու հասկացավ, որ նա ուզում է ինչ-որ բան ասել, բայց, նվաստացած, չբարեւելով, համարյա ցուցադրաբար թիկունքով որսորդին դարձավ ու մտավ տուն, որտեղ ոչինչ չէր փոխվել. առաջվա պես խռմփացնում էր ամուսինը, տզզում էին մոծակները, եւ միայն Ուլյայի մազերն էին մի քիչ չորացել, գույնը բացվել էր, իսկ շունչը համաչափ էր:

Վերա Կոնստանտինովնան ուզում էր բարձր հեկեկալ ու դրանով արթնացնել Կոմիսարովին, պատմել, թե ինչ է պատահել, պահանջել, որ անհապաղ հավաքվեն ու մեկնեն Պետերբուրգ, երբ հանկարծ Տրոֆիմի հարցը ոչ թե կոպիտ ու վիրավորական թվաց, այլ ծիծաղելի, եւ իր բախտի, առավել եւս արտաքինի մասին ծանր մտքերը՝ փուչ ու անիմաստ. դեռ ջահել է, գրավիչ, առողջ, եւ ոչ սպիտակ մազ ու կնճիռ էլ չկա եւ չի կարող լինել, շունչն էլ մաքուր ու թարմ է եւ մարմինը՝ կատարյալ, եւ սքանչելի, երջանիկ կյանք է սպասում իրեն, իսկ Յուլյան... Յուլյան ի՞նչ: Հո մի դար չի՞ ապրելու իրենց հետ, ու պետք չէ անհանգստանալ իր սառնության ու խորթության համար. որքան զուսպ լինի, աղջիկն այդքան շուտ կհեռանա իրենցից:

Այդ մտքից սիրտը ջերմացավ, ծանր, թանձր նիրհը պատեց նրան ու մարմինը սեղմեց սառը սավանին: Վերա Կոնստանտինովնան լավ գիտեր ու սիրում էր քնի մեջ սուզվելու այդ պահը, երբ այնկողմնային պատկերները սկսում են հյուսվել իրականությանն ու աստիճանաբար ծածկում ծեր, խուլ արձագանքող տունը, պատերի ձեռագործ գորգերը, անհայտ գեներալի դիմանկարը. ինքը այ այս փայլուն, ազնվազարմ տղամարդու հետ պիտի ծանոթացած լիներ: Նա դեռ օրորվում էր արթնության ու քնի սահմանին եւ լսեց մուկն ինչպես է հացի չորուկ կրծում հատակի տակ, ինչպես է կոկորդ պատռում աքաղաղը, բայց մյուս չափումից արդեն գինովության պես վրան էին տեղում ինչ-որ փափուկ իրեր, եւ ահա ինքը բլրալանջով ներքեւ տանող երկար ճանապարհի սկզբին է, եւ այնտեղ՝ այդ ճանապարհին մետաղյա փայլուն առարկաներ են անկանոն թափթփված: Դրանք մոտենում էին, ու Վերա Կոնստանտինովնան տեսավ, որ հեծանվի մասեր են. ջարդված ճաղերով ծռմռված անիվ, ղեկ, ոտնակներ: «Լեգկոբըտովինն

են,- գոհությամբ մտածեց նա,- բայց ափսոս, միշտ ուզել եմ քշեմ... Ես եմ սիրուն ավելի...»,- ծիծաղեց նա, ցնցվեց ու վերջապես լողաց անհանգիստ քնի հոսանքով՝ չլսելով, թե ինչպես արթացավ նախ ամուսինը, հետո՝ նրա դուստրը: Սկսվեց եւս մեկ անտանելի երկար ու արագ սպառվող ամառային օր: Բայց Վերա Կոնստանտինովնան արդեն հեռու էր, քունը նրան քաշում էր իր ետեւից, ու որքան հեղձուցիչ էր դառնում խուլ արձագանքող տանը, այնքան տագնապալի, անուշ ու շոգ էր քունը, եւ նա կապույտ շորը հագին նորից անցնում էր անծանոթ անտառային գյուղով ու զգում, թե տաք քամին ինչպես է փչում, ծփծփացնում մազերն ու փաղաքշում թեթեւ-ընթաց ոտքերը, եւ ինչ-որ մեկի կապույտ աչքերը անտառի խորքից ագահ նայում են նրան եւ իրենք էլ վախենում իրենց հայացքից:

5

Ուլյան շատ սուր էր զգում Լեգկոբընտովի ձգտումը զենքին, ու ոչ աղջկական, այլ կանացի զայրույթով էր լցվում, որ որսորդը սխալ բանի վրա է ժամանակ վատնում, եւ նույնիսկ ուզում էր գողանալ հրացանը, որ դաս լիներ հաճույքի համար անպաշտպան թռչնակներին ու գազանիկներին սպանելը, ու նաեւ իր Ալյոշենկային ստիպելը, որ շան պես ծառայի, սառցասառն ջրից հանի խփված սագերն ու բադերը, կրի ծանր ուսապարկերը, թաց փայտով կրակ անի, մի կողքի քնի որսորդական նեղվածք հյուղակներում, միայն թե ավելի շատ տեղ մնա հայրացուին, եւ անտառով մեկ հավաքի անճարակ որսորդի կորցրած կամ մոռացած իրերը: Ուլյայի մեջ մանկուց էր ապրում արդարության անհասկանալի, սրված զգացումը եւ վրեժխնդրության ու արդարամտության մի այնպիսի ծարավ, որ պատրաստ էր ոչնչացնել թե՛ իրեն, թե՛ ցանկացածին, միայն թե ճշմարտությունը հաղթեր: Վաղ հասկանալով, որ ճշմարտությունն ու արդարությունը բազում թշնամիներ ունեն, նա հենց դրա համար էլ երկար դեգերում էր քամոտ գիշերներին, որպեսզի այն ժամին, երբ չարը դուրս է սողում իր թաքստոցներից, ճանաչի բոլոր թշնամիներին: Իսկ առավոտյան միտքը ոչնչ չէր հիշում գիշերվա մասին, բայց սրտով չէր մոռանում, հանդուգն էր, չափազանց շիտակ, անհարգալից ու անխոհեմ ոչ միայն խորթ մոր, այլեւ ուրիշ մեծերի հետ, ինչը գիմնազիայում ի ցույց էին դնում հորը ու սպառնում իջեցնել աշակերտուհի Կոմիսարովայի վարքի գնահատականը: Վասիլի Խրիստոֆորովիչը այդ սպառնալիքներին համբերատար պատասխանում էր, որ աղջիկը բարի եւ ազնիվ սիրտ ունի, իսկ մնացածն իր համար կա-

րեւոր չէ. նրա բնավորության ծայրահեղությունները բացատրվում են անփորձությամբ ու անհագ կենսասիրությամբ:

- Դա ես էլ գիտեմ,- նրա հետ մանկավարժական զրույցի ժամանակ նկատեց գիմնազիայի տնօրինուհի Լյուբով Պետրովնա Միլլերը՝ մի խելացի եւ արդարամիտ կին, որին նույնիսկ Ուլյան էր հարգում ու չէր հակաճառում:- Ես ձեր աղջկան շատ եմ սիրում, բայց հիշեք՝ անփորձությունն է տանում փորձանքի:

- Փորձառության փորձանքն ավելի շատ է,- առարկեց մեխանիկը, բայցեւայնպես խոսեց Ուլյայի հետ, խորհուրդ տվեց իզուր տեղը բզին բռունցքով չխփել եւ ավելի շատ լսել ու հետեւել, թե ինչ է կատարվում աշխարհում: Բայց Ուլյան փոքրուց սովորել էր ապրել իր խելքով ու շտապում էր արագ ընկնել հասուն կյանք, ինքնուրույն գլուխ հանել նրանից, իսկ դուր չեկածը՝ փոխել: Իսկ այդ հեղձուկ ամռանը նրան դուր չէր գալիս Պավելը՝ որդի Մատվեյի, որը, ինչքան շատ էր հետեւում ու մտածում նրա մասին, ավելի ու ավելի էր ներկայանում որպես նենգության ու չարի մարմնավորում, ինչը վրդովում էր աղջկա պարմանի հոգին: Արագաշարժ, գիշատիչ, հաշվենկատ, թեթեւոտն, սրտին փոխարինող վճիտ աչքերով այդ օտարականը մարդ չէր, գազան էր, անտառային Կոշչեյ, որի շղթաներից պետք էր շտապ փրկել, գերությունից ազատել Ալյոշա անունով տղային: Բայց չարագործի դեմ կռվելու համար պետք էր ուսումնասիրել նրան, հետազոտել վարքն ու պոկել նրա զարհուրելի խայթը:

Բայց ինչքան էլ հիմարիկը հետեւեր անտառի արքային, նա ձեռքից չէր թողնում հրացանը, ինքն էր մաքրում՝ չվստահելով ո՛չ Ալյոշային, ո՛չ Պելագեային, եւ այն սակավ ժամերին, երբ հետը չէր տանելու, փակում էր պահարանում, իսկ բանալին պահում հատուկ փականով որսորդական բաճկոնի գաղտնագրպանում, որն արձակելու եւ բանալին օգտագործելու ձեւը միայն ինքը գիտեր: Նեղսրտած Ուլյան վրեժխնդիր լինելով՝ անտառում ետեւից ման էր ածում Լեգկոբըտովին, բայց մոտ չէր թողնում ու երբեք թույլ չէր տալիս տեսնի իրեն: Մոտենում էր հողմահակառակ կողմից ու կանչում, բայց այնքան կամաց, որ Պավել Մատվեեւիչը չկարողանար հասկանալ՝ իրեն թվո՞ւմ է, թե՞ իսկապես գազանի, թռչունի կամ անտառում մոլորված երեխայի ձայն էր: Նայում էր Կարային, բայց խելացի շունը, որին աղջկական խաղերով անհնար էր խաբել, անդրդվելի էր մնում, ու Լեգկոբըտովը, որը սովոր էր շներին ավելի վստահել, քան մարդկանց, հանգիստ առաջ էր գնում անտառային ուղյակով՝ նկատելով անտառում ամեն օր կատարվող փոփոխությունները՝ կարմրած հատապտուղները, խոտի տա-

կից դուրս պրծած սունկը, թափված տերեւներն ու գիշերը սպիտակ մամուռի վրայով վազ տված սրադեմ աղվեսի հետքերը: Դա նրա սիրելի աշխարհն էր, այն միամիտ, հարազատ բնությունը, որի հետ նշանված էր եւ իրեն նրա միակ փեսացուն էր զգում, նրա ունեցած ոչնչից չէր վախենում, համարձակ նայում էր ցանկացած գիշատչի աչքերին, իր անդաստաններում անուն առ անուն գիտեր բոլոր գազաններին, տեսնում էր արմատների ստորգետնյա աճն ու ծառահյութերի շարժումը, եւ եթե կարողանար որեւէ բան խնդրել Երկնքից, կաղոթեր, որ երբեք չդադարեր ցերեկի ու գիշերվա, տաքի ու պաղի, չորի ու թացի, քամու եւ անհողմության, պայծառության ու մութի հերթագայությունը, եւ որ գործողությունների այդ կարգում իրեն տրվեր պահակի ու պահապանի հավերժ անքուն պաշտոնը, ու ոչ մի Երկնային էլ արքայություն պետք չի իրեն: Թող բաժին հասնի ուրիշներին կամ թող ուժով առնեն, ովքեր ցանկանում են բնակվել աստղերի վրա ու նվաճել Տիեզերքը, ինչի մասին երազում էր մեխանիկ Վասիլի Խրիսատոֆորովիչ Կոմիսարովը. իսկ Լեգկոբըտովը երազում էր երկիրը ժառանգել, չնայած Աստծո կանոնի դասերից գիտեր, որ այն բաժին կհասնի հեզերին, իսկ ինքը ինչ առաքինությամբ ասես օժտված էր, բացի դրանից: Բայց եւ այնպես, երկնայինի փոխարեն հույս ուներ տեւական երկրային կյանքի ու կատաղում էր, երբ որեւէ բան իր ցանկությամբ չէր լինում: Դրա համար էլ որպես ոտնձգություն ու սպառնալիք էր ընդունում այդ աշխարհին օտար արարածի միջամտությունը, որը տառապում էր, որ բնության մեջ արդարությունն ավելի քիչ է, քան մարդկանց աշխարհում, կարեկցում էր թռչնակներին, որոնց հետապնդում էին խոշոր գիշատիչ թռչուններն ու չար մարդիկ, ու երազում իր բարեգութ օրենքները հաստատել այդ աշխարհում:

Լեգկոբըտովը տանել չէր կարողանում սենտիմենտալությունը: Բնությունը, նրա համոզմամբ, վեր էր խղճահարությունից ու կարեկցանքից, չէր տարբերակում բարին ու չարը, ավելի ճիշտ, նրա մեջ ամեն ինչ բարի էր, սակայն բոլորին չէր տրված դա հասկանալ: Հենց դրա համար էլ Պավել Մատվեեւիչը նույնիսկ մոծակներին, ճանճերին, մլակներին, բոռերին, կրետներին, իշամեղուներին, մրջյուններին, ինչպես եւ օձերին, դողոշներին, տզրուկներին պաշտում էր որպես բնության պահապանների, որոնք այն պաշտպանում էին հովեկներից՝ նոր, բայց արագ աճող ու նրա համար միանգամից ատելի դարձած ցեղատեսակից: Բայց ոչ մի թռչող արարած չէր կարող կանգնեցնել Ուլյա Կոմիսարովային, ու ժամանակի ընթացքում նրա ներկայությունն անտառում ոչ միայն սկսեց ծանձրացնել որսորդին,

այլ ուղղակի խանգարում էր. սովորականից հաճախ էր վրիպում նույնիսկ թեթեւ «զաուերից», ուշանում էր, զայրանում ու զգում էր, որ անտառում մեկը կենդանիներին զգուշացնում է հրացանավոր մարդու մասին: Որքան էլ վարպետորեն քողարկվեր Պավել Մատվեեւիչը, որքան էլ երկար, համբերատար, առանց մի հատիկ ծխախոտի նստեր դարանում, ողջ ավարը հասցնում էր փախչել կամ թռչում-գնում էր, հենց հասնում էր խուլ ճահճուտի կամ թավուտ անտառի խորքը: Մտքով անգամ չէր անցնի իր որսորդական անհաջողությունները կապել խելառ աղջկա հետ եւ ավելի լուրջ թշնամի էր փնտրում, բայց համենայնդեպս նախազգուշական միջոցներ ձեռք առավ, այնպես որ իզուր էր Ուլյան անձայն հետեւում որսորդին՝ կռահելով, որ այդ մարդը հենց այնպես չի անցնում իր արահետով, եւ շտապում էր այնտեղ, ուր նա ցած էր դնում հրացանը, կախում ծառից ու փոխում կերպարանքը: Աղջկան չէր հաջողվում այնտեղ ընկնել: Բավական է խորանար անտառում ու հատեր անտեսանելի սահմանը, Լեգկոբըտովը չքանում էր, եւ Ուլյան պատրաստ էր երդվել, որ հենց ինքն էլ վերածվում է մի անհասկանալի արարածի, թռչունի, անտառի ոգու կամ ծառի, որը երեկ այդտեղ չէր, իսկ այսօր, տե՛ս, հայտնվեց՝ մեծ, հաստաբուն, ուժեղ, լայնատարած ճյուղերով: Կամ հակառակը՝ հյուսիսային թավուտի բարձրուղեշ ու հարթակեղեւ կայմասոճու, կամ հազվագյուտ խոտի, որ այդ սոճու տակ է աճում:

Ուլյան առանց որսորդի մոլորվում էր անտառում, վախենում էր, որ կկորչի, ուզում էր ճչալ, կանչել նրան, բայց իրեն ցույց տալն ավելի սարսափելի էր, եւ պարզապես լուռ նստում էր, բայց լաց չէր լինում, սպասում էր երբ կհայտնվի հայրը, կբռնի ձեռքն ու կտանի տուն: Մեխանիկի հայտնվելուն պես կախարդված աշխարհը սովորական ու չվախենալու էր դառնում, ու պարզվում էր՝ ինքը ոչ մի անտառում էլ չի եղել, այլ գյուղական շրջապարսպից մի քիչ այն կողմ, եւ ինչ անանցանելի թավուտ էր թվացել, նոսր անտառակ էր, ու ծառերի արանքից երեւում էին խրճիթների մուգ տանիքներն ու լսվում էր ինչպես են կնճմնծում գյուղի շներն ու կչկչում հավերը: Ուլյան վերադառնում էր տուն՝ ցրված պատասխանելով հոր հարցերին, ու սովորականից ինքնամփոփ էր լինում, այնպես, որ նույնիսկ Ալյոշան չէր հասկանում՝ ինչո՞ւ է այդպես սառն իր հետ եւ ինչի՞ վրա է բարկանում:

Իսկ Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովը ոչ մի գազանի, թռչունի, ծառի էլ չէր վերածվում: Երկու ճահիճ ու երեք թավուտ կտրելով, իջնելով խոր ձորակն ու ծանծաղուտով անցնելով գետը՝ բլրալանջով արագ բարձրանում էր վեր, որտեղից երեւում էր ողջ շրջակայքը՝ ընդհուպ մինչեւ հեռվում

կապտին տվող լիճը՝ ձկնորսների առագաստներով ու հեռավոր տաճարների գմբեթներով: Նստում էր լայն ծառակոճղին, գոտու տակից հանում տետրը ու վեպ հորինում գավառական, թվում է՝ երկչոտ, բայց խորաթափանց արեւառ պատանու մասին, որը խուլ անտառից պատահմամբ հայտնվել է ցուրտ քաղաքում: Ճանճերը կծոտում էին Լեգկոբըտովին, մոծակներն արյունն էին խմում, թիթեռները նստում էին ուսերին, թռչունները հացի փշրանք էին կտցում ոտքերի տակ, գլխին ոստայն էին հյուսում սարդերը ու փոշոտ ոտքերի արանքից մամուռն էր բարձրանում վեր, բայց շելոմյան յոգին ոչինչ չէր կարող շեղել ուրիշի ճակատագիրը կշռելուց, որը միայն այդ պահին, այդ վիճակում էր բացվում նրան:

Այդ ժամանակ լրացել էր նրա քառասուն տարին, եւ ծանր, ճնշող ու աղքատ երիտասարդությունից հետո, երբ բոլոր շրջապատողներին, ասենք, հենց իրեն էլ թվում էր, որ նրանից ոչինչ դուրս չի գա եւ կյանքը կավարտի որպես մանր աստիճանավոր, գործակատար կամ հոր պես հարբեցող կդառնա, նրան հաջողվեց զարմանալիորեն շատ բանի հասնել: Մայրը մի քանի տարի առաջ էր մահացել՝ չտեսնելով նրա գրական հռչակը: Պավել Մատվեեւիչը հուղարկավորությանը չհասավ՝ հեռագիրն էր ուշացել, եւ դա վերջին բանն էր, որ, արդեն դագաղում, մայրն արեց որդու համար՝ իմանալով, որ վաղ մանկության օրերին հոր մահվանից վախեցած իր առաջնեկը,- Պավլուշան տնեցիներից առաջինն էր տեսել սեւ կաշվե բազկաթոռում անշարժացած հորը,- խուսափում է թաղումներից ու ջանում չմտածել ոչ իր, ոչ էլ ուրիշների մահվան մասին: Կյանքը մարդունն է ու մարդը՝ կյանքինը, իսկ թե ինչ կլինի հետո... Անհամար ու ամենատարբեր կենդանի արարածներ սպանած, ոչ մեկ հոգեվարք տեսած եւ աչքն իր որսից չկտրած,- փոքրիկ կտցար կլիներ, թե ծանր եղջյուրներով որմզդեղն,- որսորդ Լեգկոբըտովը չէր հավատում անձնական անմահությանը, քանզի գիտեր, որ ամեն մարմին կեր է մեկ այլ մարմնի համար: Ահա կեցության հիմնական օրենքը, իսկ մնացյալը պարզամիտներին հիմարացնելու համար է հորինվել: Եվ մեծ տարբերություն չէր տեսնում մարդկանց ու կենդանիների միջեւ, չհաշված, որ մարդիկ զինված էին, իսկ կենդանիներն՝ անզեն, ուստի եւ խոնարհվում էր այն մեծ անդեմ ու հավերժական ուժին, որն իր օրենքներով կյանքն այնպես կատարյալ էր կազմակերպել, ինչպես ոչ մի Արարիչ չէր կարող: Իսկ եթե բնությունն էլ Տերն է արարել, ամեն դեպքում արարումից հետո երկար քուն է մտել եւ այլեւս չի միջամտում երկրային գործերին: Կամ էլ մեռել է, ինչպես նկատել էր տարաբախտ սրախոսը, որին, աղետ բերելով իրենց գլխին, սպանեցին Գորբունկիի գեղջուկները:

Պավլուշան պատանի տարիներից եկեղեցի չէր գնում. սկզբում դեռահասի խռովության պես բան էր, եւ նրա համար գիմնազիայի տեսուչը, թաղայինն ու տերտերը նույն շարքում էին: Յոթ տարեկան էր, երբ մայրն առաջին անգամ տարավ քաղաք, եւ նա ժամերգության եղավ Վվեդենյան եկեղեցում: Սկզբում խոնարհ կանգնել էր, հետո ծանձրացավ, սկսեց թրեւ գալ տաճարում, ու ոչ ոք չնկատեց, թե ժամերգության կարգը խախտելով, ինչպես ուղիղ Թագավորական դարպասներով վազեց դեպի զոհարան:

- Ձեր տղան դեռ հովվապետ կդառնա,- քահանան չհանդիմանեց վախեցած ու արդարանալու փորձեր անող մորը:- Ով անցնի Թագավորական դարպասներով, բարձր աստիճանի կարժանանա:

Այդ քահանան շուտով մահացավ՝ որբ թողնելով ջահել տխուրաչյա այրուն ու երեքամյա դստրիկին, իսկ Լեգկոբըտովն այլ աստիճանների արժանացավ: Պետերբուրգում այցելում էր օխտինյան վավաշոտ աստվածամայր Դուսյա Միրնովային, զրուցում նրա ամուսնու՝ Դավիդի ու որդու՝ Սոլոմոնի հետ՝ սույն երրորդության մեջ շատ ավելի կենդանի կրակ տեսնելով, քան պաշտոնական դավանանքում: «Ով ինձ նայում է որպես կնոջ, կանացին կստանա, իսկ ով փնտրում է աստվածայինը, կստանա հայտնություն». Պավել Մատվեեւիչը հիանում էր Դուսյայի այս բառերով, ու եթե չլիներ ի բնե զգուշավորությունը, հաստատ կփորձեր երկուսն էլ, բայց կնոջը երբեք չդավաճանեց, իսկ աստվածային հայտնություններից խուսափում էր՝ պահպանելով ի՛ր հարաբերությունները եկեղեցու հետ: Երբ կրոնասեր Պելագեյա Իվանովնան փորձում էր համոզել ամուսնուն, որ գոնե մեծ տոներին եկեղեցի գնա, որպեսզի չբարկացնի հասարակ ժողովրդին ու չհարուցի հայր Էրոսի կասկածները, որը ամեն ամիս կոնսիստորիային զեկուցում էր աղանդավորների մասին եւ ոչ առանց հիմքի կարծում, որ պետերբուրգցի պարոնը ամենավնասակար ու գաղտնի աղանդներից մեկի անդամ է, որսորդն ասում էր, որ կգնա միայն այնպիսի եկեղեցի, ուր ներս են թողնում շների հետ, քանզի շներն ավելի անմեղ ու մոտ են Աստծուն, քան մարդիկ, իսկ ամենաաստվածային պատարագը, որին վիճակվել է մասնակցել, մատուցվել է գարնանային անտառում՝ Պելագեյայի հետ առաջին գիշերից հետո, երբ առավոտյան հազարավոր թռչուններ տարածայն փառաբանում էին Աստծուն, իսկ իրենք, որպես Ադամ ու Եվա, մերկ պառկել էին չոր, փափուկ մամուռին ու երկինք էին նայում:

Չնայած Պելագեյան սովոր էր ամուսնու խոսքերին, գլուխը վախեցած քաշում էր ուսերի մեջ՝ սպասելով, թե երբ է զարկելու Եղիա մարգարեի

կայծակը, իսկ հետո երկար ծունր դնում ու շշուկով խոսում էր սրբապատկերների հետ՝ աղաչելով բոլոր սրբերին, որ չզայրանան եւ իր աղոթքներով ներեն խելքին զոռ տվող հիմարին:

Նա վաղուց հաշտվել, հարմարվել ու հավատարիմ ծառայում էր ամուսնուն, որը, ինքն էլ չնկատելով, օգտվում էր դրանից: Լեգկոբըտովը տանել չէր կարողանում տհաճ գործերը եւ ինչը սրտով չէր, թողնում էր Պելագեյայի վրա: Կինն էր լեզու գտնում գյուղացիների հետ, երբ որսորդական շունը լափում էր մեկնումեկի հավը, կամ Լեգկոբըտովի հովատակը թեթկում էր գյուղացու մատակին: Միայն իրեն հայտնի խոտերով բուժում էր շանը, որի կողին, չնայած իր ողջ շնասիրությանը, դաս տալու համար աղի լիցքով կրակել էր ամուսինը, միայն նրա համար էր քաշում կաթի սերը, ոչ իր երեխաների, ամեն խոստովանության մեղա էր գալիս, որ անպսակ է ապրում եւ ապօրինի են նախկին ամուսնու ազգանունով գրանցված իր երեխաները, ստվերի պես հետեւում էր Պավել Մատվեեւիչին՝ շտկելով նրա բոլոր սխալները, իրեն վարժելով նրա քմահաճույքներին, հերսոտ, մոլեգին բնավորությանը, նրա ցրվածությանն ու աներեւակայելի, խանդավառ ինքնասիրահարվածությանը, նրան, որ իր շներին ավելի լավ գիտի եւ ավելի հաճախ է գուրգուրում, քան իր երեխաներին, էլ չենք խոսում Պելագեայի կամ Այոշկայի մասին: Բայց այդ ամենի, ինչպես գարնանային փրփուրի ետեւում Պելագեյան զգում էր նրա անպաշտպանությունը, մանկականությունը, աներեւակայելի թաքուն խորքն ու սրաթափանցությունը, որի առաջ երկնչում, կարկամում ու պատկառում էր, ներուստ ծգվում նրան ու պարուրում անտեսանելի նրբին վարսերով, պաշտպանում ու պահպանում, ինչպես այս աշխարհում եւ ոչ մի կին չէր պաշտպանի Պավել Մատվեեւիչին:

Լեգկոբըտովը կռահում էր իր ժողովրդական կնոջ, ինչպես ինքն էր ասում, արտասովոր ունակությունների մասին, հաճույքով պատմում ու պարծենում գրող ընկերների մոտ, բայց հոգու խորքում անփույթ էր վերաբերվում ու շատ բան թերագնահատում նրա բնավորության մեջ: Նա սեղանին էր թողնում բոլոր ծրարներն ու թղթերը, ու քոքված Այոշան մոր համար կարդում էր անթաքույց օրագրային գրառումներն ու նուրբ կանացի թղթի վրա գրած արտասահմանյան նամակները, ու միայն նա գիտեր ինչպես են փոքրանում մոր սեւ բիբերը: Պելագեյան ատում էր այդ բոլոր լկստված աղջիկ-պարոններին, այդ կապույտ արյունը, չարանում էր ընդգծված հարգանքից, որով իրեն էր դիմում մեխանիկի կինը, պատասխանում էր հանդուգն ու անհարկի, եւ հաստատ գիտեր՝ որքան էլ այդ լիր-

բը աչքունք խաղացնի ամուսնու առաջ, ոչինչ չի ստացվելու: Իզուր չէր հանուն սիրո վտանգել իր անմահ հոգին եւ ամուսնուն մենակ չէր թողնի ոչ մի տեղ, նույնիսկ գեհենի կրակներում, եթե հանկարծ պարոնի հետ իր անօրինական կապին թողություն եւ մի անծի անցաթուղթ տային դրախտ:

Բայց Պավել Մատվեեւիչը այդպիսի բաների մասին չէր մտածում, նստում էր սեղանի առաջ ու երբ գրում էր, ճախրում էր, ինչպես երազներում ճախրում էր պարմանուհի Իուլիանան: Գրողական ալբոմը ազատ, միայն իրեն հայտնի տարածք էր թվում նրան, որի վրա մտորում էր կյանքի ընթացքի մասին, Կլինի դաշտերում աճող տարբեր խոտաբույսեր նկարագրում, եւ դրանց մեջ նրան հատկապես թանկ էր մեկը՝ ֆացելիան, որը տարօրինակ կերպով հիշողության մեջ բեռլինյան կորսված սերն էր արթնացնում, հիշում էր Պետերբուրգը, գրում հարբեցող գրողների, պեդեռաստների, մորֆինիստների ու կոկաինամոլների մասին, անբարո, այլասերված մարդկանց, որ այլասերում էին իրենց շրջանն ընկնողներին, նրանց անհեթեթ, այլանդակ, ծանր կյանքի մասին, որը նրանք աստվածացնում էին՝ արհամարհելով բոլոր անգետներին, եւ իրեն՝ Պավել Մատվեեւիչին էլ թերիմաց, գյուղագիր ու թեթեւակյաց մարդ էին համարում:

Մի անգամ Գորբունկիի հարեւան գյուղում, որտեղ այն ժամանակ ինքն ու Պելագեյան ապրում էին, կրակի հետ խաղացող երեխաները Զատկին պատահմամբ հրդեհեցին գյուղը: Սկզբում չոր խոտն էր բռնկվել, ուժեղ քամի էր, ու կրակն ակնթարթորեն տարածվեց: Լեգկոբըտովն ու Պելագեյան գյուղից հինգ վերստի վրա էին՝ որսի: Ծուխը տեսնելով՝ նետվեցին տուն ու երբ հասան,- Լեգկոբըտովը, ետեւից՝ հաղթանդամ շնչակտուր կինը,- գյուղական խրճիթներն արդեն բոցավառվում էին իրար ետեւից, ու շուրջը խելագարի պես վազում էին մարդիկ՝ տներից հանելով ամենաթանկը: Մի խրճիթի մոտ քաղաքային ձեւով պաստառած բազմոց էին դրել: Կրակով բռնված խրճիթը նետվելով՝ Լեգկոբըտովը ճանկեց ալբոմների կույտը ու չհասցնելով ոչ փող վերցնել, ոչ մուշտակները, դուրս թռավ՝ ճակատ ճակատի գալով վրա հասած կնոջ հետ:

- Վասենկան ո՞ւր է,- հառաչեց կինը՝ ամենափոքրի, երեքամյա որդու մասին, որին տանն էին թողել՝ հարեւան պառավի մոտ, նա էլ վազել էր իր ունեցվածքը փրկելու ու մոռացել երեխային, ինչպես որ նրան այդ պահին մոռացել էր Պավել Մատվեեւիչը:

Նորից ներս մտնելն արդեն անհնար էր, բայց երբ կրակը հանգավ, մոխրի մեջ ոսկորներ չգտան: Ոչ թե որ երեխան վառվել-մոխրացել էր, այլ նրան հասցրել էր կրակից հանել գիժ Տանկան՝ գյուղի գուշակը, որին չգի-

տեին ինչպես երախտահատույց լինեն, իսկ նա այդպես էլ ոչինչ չխնդրեց ու շուտով մեռավ: Այնպիսի ճոխ թաղում արեցին, ինչպես գյուղում ոչ մեկին չէին թաղել, իսկ հետո նրա գերեզմանին սկսեցին հրաշքներ կատարվել:

Լուսավորյալ հայր Էրոսը չկամեցավ ընդունել այդ հրաշքները եւ կիրակնօրյա քարոզների ժամանակ խավար ժողովրդին շշպռում էր սնապաշտության համար: Բայց ողջ տարածքից գեղջկուհիներն իրենց խնդրանքներով գնում ու գնում էին բարեշնորհ գերեզմանին, եւ Պավել Մատվեեւիչը նույնիսկ ֆելիետոն հրապարակեց «Բիրժեվիե վեդոմոստիում»՝ մեկ անգամ եւս ընդգծելով այն անդունդը, որ ընկած է ժողովրդի ու պաշտոնական եկեղեցու միջեւ: Իսկ ինքը ոչ մի մեղավորություն չէր զգում, քանզի ճակատագրապաշտորեն էր վերաբերվում կյանքին եւ գիտեր իր գլխավոր կոչումը, որի համար պատասխան են պահանջելու վերեւում, եւ պատասխանատու էր այն ամենի համար, որ առանց կախարդության համար բռնվելու ու մեղադրվելու՝ լույս աշխարհ էր բերում մենության ու լռության մեջ:

Նա վաղուց էր նկատել, որ հայրենի դաշտ ու անտառները չափչփելիս աշխարհը շուրջը կանգ է առնում: Իսկ երբ ինքն է կանգնում, աշխարհը սկսում է շարժվել, եւ այդ շարժումը միայն այդ ժամանակ է հնարավոր պատկերել: Կամ էլ, ինչպես մի անգամ ասաց Ալյոշա Ռեմիզովին. «Թռչունը թռչելիս չի երգում: Երգելու համար նրան ճյուղ է հարկավոր»: Եվ բլրալանջի կոճղը Լեգկոբըտովի համար դարձավ այդ ճյուղը, որի վրա նստած՝ երգում էր, աչքը ոչ միայն բացվող եզերքներին, այլեւ իր խեղճ ջահելությանը, երազելով քավել նրա դժբախտությունները, հարություն տալ կորսվածին կամ քաղել չքաղածը: Թեկուզ, որ նրա փոքրիկ հերոսը չի տեսնում հոր մահը, պատանի տարիքում չի վախենում ծախու կնոջից, ու գիմնազիայից նրան չեն վռնդում անբարեհույսի անծնագրով, այլ ինքն է հեռանում, շրջում Ռուսիայով, այցելում նրա գաղտնաածածուկ մենաստանները, ճանաչում նրա անհայտ մարդկանց, օրենսգետներին, ուխտավորներին ու կրոնախեւերին, ճամփորդում ողջ աշխարհում, մեկնում Ամերիկա, հետո վերադառնում Պետերբուրգ եւ աշխարհավերջի այդ քաղաքին հաղթում գաղտնի գիտելիքով, որ ոչ ոք չունի: Բայց երբ նրան հրավիրում են բոլոր կողմերից, առաջարկում կրոնափիլիսոփայական խորհուրդներ ղեկավարել եւ ակադեմիկոս ընտրում, հանգիստ հրաժարվում ու նորից վերադառնում է անտառ՝ շփոթմունքի եւ կյանքի անիմաստության զգացողության մեջ թողնելով դեկադենտներին:

Պավել Մատվեեւիչը գիտեր իր վեպի վերնագիրը, գիտեր ինչով է սկսելու եւ ինչպես կավարտի, գիտեր բոլոր հերոսներին ու նրանց նախատիպերին, ու կանխավ պատկերացնում էր այդ մարդիկ ինչպես են ճանաչելու իրենց, բայց ոչնչից ու ոչ մեկից չէր վախենում. նա գրականություն էր մտել, ինչպես մտնում են մարտի մեջ, բայց ինչ-որ բան կամ ինչ-որ մեկը խանգարում էր գրել վեպը: Լեգկոբընտովը խփվում էր ինչ-որ մեկի սուր աչքին, ինչպես անտառում ոստի կխփվեր, ու բոլոր երազանքները ցրվում էին վառոդի ծխի պես, եւ ակնհայտ էր դառնում, որ կրակոցն անհաջող էր՝ կամ նպատակին չէր հասել, կամ կանացի թեթեւ հրացանից արձակված միայն մի կոտորակ էր դիպել անհայտ թռչունին, ու նա թռել-գնացել է՝ որսորդի դեմ ոխը պահած: Ու Լեգկոբընտովը սրտմտած նահանջում էր, բայց մտադրությունից չէր հրաժարվում ու սպասում էր իր ժամին՝ անցյալից ոչինչ չմոռանալով ու չներելով:

6

Այդ անցյալը չէր մոռանում նաեւ այն խոցվող, նուրբ ու չար մարդը, որին Պավել Մատվեեւիչը պատանության տարիներին իր կցկտուր կյանքի հերոս ու բռնակալ էր ընտրել եւ արդեն երկար տարիներ անշեղ հետեւում էր անտառներին մոտ եւ խմբագրություններից հեռու պատվիրանին: Բայց սեռի փիլիսոփան, որին գիմնազիական սովորությամբ որսորդը Հորթ էր ասում, դժվար թե նկատի ունենալով, որ Հորթը կոչումով ողբերգորեն զոհական կենդանի է, իր անբարեհաճ հիշողություններն ուներ Լեգկոբընտովի մասին: Այն հեռավոր տարին, երբ պատահեց նրանց վեճը, Մոսկվայից եկած մանկավարժը խուլիգան աշակերտի հետ գետի դարափի գլխի մութ նրբանցքում խուլիգան աշակերտի հետ հանդիպումից ավելի էր վախենում, քան նշանավոր գրողից հիմա վախենում էր նրա արդեն հասակ առած աշակերտը: Ռ-վը նույնիսկ արճճե գլխիկով ձեռնափայտ գնեց, ինչի մասին ասել էր իր գրական խնամակալ պղտոր գրաքննադատ Ստրախովին, ու զգույշ էր շրջում քաղաքում՝ խուսափելով օրվա մութ ժամերից ու կասկածելի վայրերից: Չիմացողին կարող էր թվալ՝ հին հունարենի ուսուցիչ Բելիկովն է ուրիշի կերպարանքով անցնում Իտալական փողոցով՝ վախեցնելով քաղքենիներին, բայց իրականում Հորթը բելիկովյան ոչինչ չուներ: Ավելի շուտ՝ հակառակը՝ պատենավոր մարդու պոլնայա հակառակը՝ անպաշտպանություն ու խոցելիություն, ալերգիկ այրոց ու տառապանք:

Ռ-վն ալերգիա ուներ ամեն ինչի հանդեպ՝ թերթերի, կառեթների, պա-

տերի, դռների ու լուսնի, բայց հատկապես այդ գարշելի խուլ քաղաքի, որտեղ ինքն էր նշանակում խնդրել, երբ նրան տանջահար արել ու լքել էր նախկին կինը: Փոքրիկ քաղաքը շատ հուզիչ անուն էր կրում՝ Ելիցա, Դոն թափվող խոր ու ոլոր-մոլոր գետի անունով, եւ հին էր, գեղեցիկ, ազնվական, մեծ տաճարներով, վաճառականական տներով, ողջ Ռուսաստանում հռչակված բանտով, որը ներգրվել էր քաղաքային լանդշաֆտին ու քաղքենիների կյանքին չէր խանգարում: Ապրես ու ապրե՛ս այդպիսի քաղաքում, տրակտատներ գրես այդպիսի քաղաքի մասին, բայց Ռ-վն վատ էր զգում այնտեղ, իրեն արհամարհած, նվաստացրած կնոջ մասին հիշողությունները բզկտում էին փիլիսոփայի նյարդային էությունը, նա տառապում էր միայնությունից, չբավարարված տռփանքից, անկանոն ու անկազմակերպ կյանքից, ու երբ գալիս էր գիմնազիա եւ տեսնում վաճառականների որդյակների բութ, կուշտ, քնատ կերպարանքները, որոնք, կուզես ճաքիր, չէին ուզում մտապահել հիերոտիկ ու դեմիոտիկ գրերի տարբերությունը, նրան բռնում էր չարության չարքը:

Գիմնազիստները վախենում էին ուսուցչից: Ոչ ոք չգիտեր՝ ինչ տրամադրությամբ կգա դասի, կցնցվի՞ ձախ ոտքը, բոլորին անխտիր կկանչի՞ գրատախտակի մոտ՝ պահանջելով, որ թվարկեն ինչ-որ ապուշ Ռոզետյան քարի ոլոր-մոլոր գրերը, որ ոչ մեկը չէր հասկանում, կամ էլ անսպասելի ոգեւորությամբ կբռնվի, պղտոր աչքերը կկենդանանան, կվառվեն, ու շրթունքներից կրակի պես կհորդի Օզիրիս աստծո փայտե ֆալլոսի ու «Մեռյալների գրքի» պատմությունը, այնպես հմայիչ, ասես պատմողն ինքը այդ ժամանակներում տաճարական քուրմ էր եղել, եւ արդեն կարելի էր դասասեղանի տակ թաքուն պոռնոգրաֆիական նկարներ նայել՝ չվախենալով, որ ուսուցիչը կխլի: Ռ-վն գիտեր աշակերտների գաղտնի արատները ու նեռողամիտ էր վերաբերվում, բայց դասարանում մի դեմք՝ մեծամիտ ու հպարտ, իսկապես ատելի էր նրան, եւ նրա տիրոջ հանդեպ որեւէ հանդուրժողականություն փիլիսոփան ցուցաբերել չէր պատրաստվում:

Լկտի դեմքի տերը բարձրահասակ, ամրակազմ տղա էր, երկտարեցի ու պորտաբույծ, ում աչքերում Ռ-վն երազատեսի արհամարհանք էր կարդում, ինչպես մթին հայելու մեջ՝ տեսնում սեփական ծուռ արտացոլանքը՝ անհեթեթ, տափակ, տաղտկալի երազողի, որը երազելուց այն կողմ չի գնա ու չի համարձակվի որեւէ վճռական քայլի: Երրորդ դասարանում, ասես ցանկանալով Ռ-վին ցույց տալ երազանքի եւ իրականացման տարբերությունը, տղան մի քանի համադասարանցիների համոզեց փախչել Ավստրալիա: Նրանք փող գողացան ծնողներից, հրացան ու նավակ առան եւ ու-

սումնական տարվա ամենասկզբին Տիխայա Ելիցայով լողացին ներքեւ: Երկու օր փախստակաների մասին ոչ մի լուր չկար, հետո երեքին էլ Դոնի միջին հոսանքում բռնեց ողջ նահանգում հայտնի՝ ձիագողերի ահուսարսափ Տիխոն Ժլոբովը: Նա դիտակետը դրել էր բարձր սարի վրա, այնտեղ, ուր Տիխայա Ելիցան թափվում էր Դոն, եւ, ինչպես հետո գրում էր «Ելիցկի կուրիեր» թերթը, հովիտների եւ բլուրների վրա պտտվող արծվի հանգույն նկատել էր չարամիտներին, հետապնդել ու բռնել: Վախեցած, դեռ նախքան զոջում պահանջելը զոջացող տղաներին բերեցին գիմնազիայի տնօրեն Բաքսի մոտ ու դատ արեցին:

Հատկապես ջանում էր հնգօրյա խումհարից տանջահար աշխարհագրության ուսուցիչ Վանովը. վիրավորված էր աշակերտների համոզվածությունից, թե հայր Դոնը ուղիղ Ավստրալիա կհանի իրենց լաստը, ու ենթադրում էր, որ այդ անմտության մեջ կարող են տեսնել իր տանջալի դասերի խակ պտուղը: Ամեն ինչ գնում էր նրան, որ փախստականերին կհեռացնեն, ու կհեռացնեին, եթե ցնորամիտ մեկը չհորդորեր խնայել այդ ոչ թե խառնակիչներին, խռովարարներին, նիհիլիստներին, այլ լավ, արտասովոր երեխաներին, որոնք հավատացել էին երազանքին:

- Ռուս գիմնազիստից կանոնավոր տափակություն չես ծեփի, գրողը տանի, վերջապես, մենք ինչ-որ գերմանացիներ չենք,- հայտարարեց Ռ-վն ու մարտահրավերով նայեց գիմնազիայի տնօրենին:

Բաքսը լուռ էր, իսկ Ռ-վն ինքն էլ չհասկացավ ինչու այդպես վարվեց, ավելի շուտ նրա մեջ խիղճն էր խոսել, քանզի ավստրալական այդ ամբողջ արկածախնդրությունն ինքն էր հուշել աշակերտներին՝ իր հին եգիպտական հեքիաթներով:

Այդ օրվանից տղան այնպես էր նայում իր պաշտպանին ու սադրիչին, ասես ինչ-որ գաղտնի գիտելիք էր տեսել նրա մեջ, ու կրնկակոխ հետեւում էր նրան: Դասերից հետո ուր էլ գնար Ռ-վն, լկտի քմծիծաղով ու քաղցած աչքերով լողլող կերպարանքը հետեւում էր նրան եւ ինչ-որ հոգեւոր բան պահանջում, ինչպես ձմռանը կեր է ուզում լղարած կատուն, ու հերիք է մի պատառ գցես, էլ պոկ չի գա, ամեն օր կկանգնի տան շեմին, չար կմլավի ու վնաս կտա ու դեռ ընկերուհիներին էլ կբերի: Տղան մենակ էր հետապնդում, բայց Ռ-վին դեռահասի այդ ուշադրությունը հենց այդ ժամանակ առավել տհաճ էր, քանի որ նրա կյանքը սկսել էր երջանիկ կերպով փոփոխվել. Ելիցայում հանդիպել էր մի այրիացած ջահել, բարեպաշտ իրիցկնոջ՝ այն ռուս ընտանիքներից, որ միայն այդպիսի փոքրիկ քաղաքներում են պատահում: Ամուսնու մահվանից հետո նա շարունակում էր ապրել

սկեսրոջ ընտանիքում, դաստիարակում էր փոքրիկ դստերն ու անձնական երջանկություն չէր փնտրում՝ համոզված, որ այդպես էլ կապրի մինչեւ մահ: Փիլիսոփան նրան տեսնելուն պես սիրահարվեց: Իր ջղային խառնվածքի ողջ կրքով նետվեց ետեւից ու հասավ, ինչպես բաց դաշտում հեղեղն է վրա հասնում: Իրիցկինը փորձում էր դիմադրել, չէր ընդունում սիրահետումները, վախենում էր, ամաչում, աղոթում, որ Աստված հեռու տանի փորձությունը, բայց կամաց-կամաց վարժվեց այդ տարօրինակ, խելագար փայլող աչքերով, զզզված, զայրացկոտ մարդուն, որը հեշտությամբ լացից ծիծաղի էր անցնում ու հետո՝ նորից լացի, ասես իրոք երկու իրար հակաճառող հրեշտակներ էին նստած նրա նեղլիկ ուսերին: Բայց մինչ այդ, մորից առաջ ապագա խորթ հորը նրա յոթնամյա դուստրն էր սիրել:

- Լավն է, մայրի՛կ, բարի՛,- շշնջում էր աղջիկը:- Ամուսնացիր նրա հետ:

- Չգիտեմ էլ ինչ անեմ, Ա՛սենկա,- երկմտում էր մայրը:- Ինձ զույգ չի: Ուսումնական մարդ է:

- Իսկ դու ոչինչ մի մտածիր, պարզապես ամուսնացիր:

Դա նրանց մերձենալու, փոխճանաչման, միմյանց դատապարտված լինելու զգացողության, անվերջ խոսակցությունների տարօրինակ, երջանիկ ժամանակն էր, հասկացված լինելու մասին նրա մշուշոտ դատողությունների ժամանակը, որոնցից իր մանկության, հոր, առաջին ամուսնու մասին անպաճույճ զրույցներ անող կինը քիչ բան էր հասկանում: Եվ նրան թվում էր՝ շատ հասարակ է խոսում, ձանձրալի, ամաչում էր ինքն իրենից ու չգիտեր՝ ինչը կարելի է պատմել, ինչը՝ ոչ, չի՞ նեղանա, չի՞ հանդիմանի ուսումնական մարդը, բայց նա այնպես էր կարողանում լսել, որ կնոջ բոլոր վախերը շուտով ցրվեցին: Ու երբ մի անգամ պատմեց, որ գիմնազիան չի ավարտել, որովհետեւ մայրն իրեն հանել է երկրորդ դասարանից, երբ աղջիկը վարքից չորս էր ստացել, եւ դա այնպես անպատշաճ էր (վարքը՝ չո՞րս, ի՛նչ են ակնարկում դրանք՝ գոչեց մայրիկը), այդ ամոթխած, ներողամտություն հայցող պատմությունը լսելով՝տղամարդը լաց եղավ խանդաղատանքից, եւ կինը զգաց, որ ոչ մի կեղծիք ու խաղ չկա դրա մեջ: Եվ իր աղոթքներում այլեւս Աստծուն չէր խնդրում անցնել այդ փորձանքը, այլ, չհամարձակվելով երազել անձնականի մասին, մրմնջում էր. «Տե՛ր Աստված, թող Քո կամքը լինի», իսկ իր մեջ մտածում էր՝ թող այդ կամքը նրա համար լինի, նրա՛ համար... Զգում էր, որ ընդմիշտ կապվել է այդ անխնամ, ընդերքային մարդուն, բայց հիմա էլ մի ուրիշ խոչընդոտ հայտնվեց նրանց միջեւ: Ռ-վի հանդեպ վաղուց հետաքրքրությունը կորցրած նախկին կինը մարդկային սրտի տարօրինակ օրենքով հանկարծ հրաժարվեց ապահար-

զան տալ: «Ինչ Աստված է կապել, մարդը քանդել չի կարող»,- տիրացուի պես բարբառեց նա, եւ ինչ-որ հիվանդ, ահարկու, ընդմիշտ նվաստացած ու վիրավորված բան առկայծեց ու չքացավ մի պահ լայնացած ու կրկին փակված անթափանց մութ աչքերում:

Փիլիսոփան, որ առաջինը չէր, ում ծգում ու ոգեւորում էր այդ դառը անդունդը, զգացմունքային մատնագրեր էր գրում այդ հնածիսականի վրա, բայց որքան ավելի էր ջանում, որքան ավելի համոզիչ, ամենահնտիմ մանրամասներով էր պատկերում, թե որքան անտանելի էր նախկին ընտանեկան կյանքը, որքան ավելի էր քաղաքապետին բողոքում, որ կինը մերժում էր իր օրինական փաղաքշանքները եւ ամուսնու սերմը կեղտ համարում, իսկ քաղաքապետը Ռ-վի պերճախոս էպիստոլները հյուրասիրում էր ենթակա ողջ գրասենյակին եւ ի պատասխան հարգալիր մերժումներ հորինում, պառակտիչն այնքան համառում էր ու թույլ չէր տալիս օտար երջանկությունն իրականանա:

Ռ-վն ու նրա սիրեցյալը անպսակ մարդուկին լինել չէին կարող: Իրիցկնոջը թույլ չէին տալիս ընտանեկան դաստիարակությունն ու բարեպաշտ շրջապատը: Փիլիսոփան տառապում էր ու չգիտեր ինչ անի: Թաղվեց գավառական անառակության մեջ, բայց անառակությունն էլ չսփոփեց: Այդ ամենը քիչ էր, վրադիր էլ այդ մեծաչյա ավարան, որ հետեւում էր ամեն քայլափոխի ու կարծես ինչ-որ բան կռահելով՝ անընմբռնելի ազդանշաններ էր ուղարկում նրան, այնպես, որ նույնիսկ իր անհասանելի ընկերուհու հետ Ելիցի գետափնյա բլուրների մոտ զբոսնելիս էլ Ռ-վն թիկունքին զգում էր նրա համառ հայացքը, հետո գալիս էրդասի ու երես առ երես բախվում իրեն չարչարողի հետ: Ինչպե՞ս էր ուզում քաշել չար տղայի ականջներն ու ասել՝ չհամարձակվե՞ս լրտեսել ինձ, մի՛ խցկվիր ուրիշի կյանք:

Իսկ տղան, մեկ է, խցկվում էր: Ծատ վատ էր սովորում, այրիացած մայրն անասելի երես էր տվել նրան: Խոսում էին, որ ավելի լավ է հեռու մնալ աշակերտ Լեգկոբբտովից, որ նրա ընտանիքն ահռելի կապիտալ ու ծիաբուծարան ունի քաղաքից երեսուն վերստի վրա, եւ անդրվոլգյան Վետլուգայում աղքատության մեջ մեծացած Ռ-վի մեջ դա ավելի մեծ անբարյացակամություն էր արթնացնում, իսկ տղային այդ անհասկանալի անբարյացակամությունը վիրավորում ու չարացնում էր: Նրանք կռվազան աքաղաղների պես պտտվում էին իրար շուրջ, եւ ի վերջո այդ ամենը ավարտվեց անձնական բախումով. չզղջացող աշակերտը դասին հանդգնորեն հայտարարեց, որ իրեն բոլոր դասընկերներից խելացի ու կարեւոր է համարում:

- Գուցե ինձնից Է՞լ խելացի,- թունոտ հարցրեց Ռ-վն:
- Դուք ավելի կրթված եք,- դողաց տղայի ձայնը:
- Իսկ դո՞ւ:
- Իսկ ես ավելի տաղանդավոր եմ:
- Ինչո՞վ, թույլ տուր հարցնել,- քմծիծաղ տվեց փիլիսոփան:
- Վարքով:
- Ինչո՞վ-ինչո՞վ,- քրքջաց ուսուցիչը, բայց ոչ ոք ծիծաղին չարձագանքեց:
- Ես չէի հանդուրժի կնկա նվաստացումները:

Նա նույնիսկ չթարթեց, այլ ինչ-որ տաօրինակ ծաղրանքով ճպճպացրեց արջի աչքերը, եւ Ռ-վ-ն ցնցվեց նողկանքից:

- Դո՛ւրս դասարանից, խեղկատա՛կ:
- Ձեզ պետք է, դուք դուրս եկեք,- աշակերտի վիրավորված ձայնը պրկվել էր լարի պես, հետ զնգաց ու կտրվեց:- Հո՛րթ:

Ընդարձակ դասասենյակում, որտեղ քսան տղա էր նստած, քար լռություն տիրեց: Գիմնազիստները թողեցին իրենց չարաճճիություններն ու արգելված զվարճանքները ու ջահել ցլիկի պես հայացքները բութ հառեցին վիճողներին: Մարտի վտիտ արեւը լուսավորում էր նրանց նուրբ, արդեն տարիքի նշաններ կրող դեմքերը, իսկ Ռ-վին թվում էր՝ այդ ցլիկներն ուր որ է կմնչան ու ողջ հոտով կնետվեն իր վրա: Ոտքի տակ կտան, կտրորեն տեղում: Ծունչը ծանրացավ, ու թուլություն զգաց մարմնում:

- Նիտշչն է այս ամենի պատճառը,- դասամատյանը շխկոցով փակելով՝ գոչեց ուսուցիչը՝ առաջին անգամ տալով այն անունը, որն աշակերտը չմոռացավ ողջ կյանքում:- Դե ինչ, կգնամ, բայց դու դեռ կվազես իմ ետեւից: Քեզ համար դասերն ավարտված են:

Ռ-վն նույն օրը զեկուցագիր գրեց տնօրենին ու եւս երկու օրից հասավ լկտի դեռահասի հեռացմանը՝ կրկին մեն-մենակ կանգնելով մանկավարժական խորհրդի կարծիքի դեմ եւ անտեսելով Պավլուշայի մոր խնդրանքներն ու արցունքները. իրականում աղքատ ու հինգ երեխաներին մի կերպ պահող կինը նրա ոտքերն էր ընկել՝ աղերսելով խնայել որդուն եւ անսալ իր թշվառ վիճակին: Բայց որքան ավելի էր նվաստանում մայրը, այնքան անհողդողդ էր դառնում Ռ-վն՝ հիշելով իրեն հասցված վիրավորանքը եւ զգալով, որ եթե այդ լկտի, քաղցած աչքերը նորից հայտնվեն իր դիմաց, չի դիմանա ու կպայթի:

- Կա՛մ ես, կա՛մ նա,- տնօրենին հայտարարեց ուսուցիչը:
- Դուք այնքան էլ հետեւողական չեք,- թավ բեղերը սղալելով՝ տխուր

պատասխանեց Բաքսը:- Այն ժամանակ պաշտպանեցիք, հիմա վռնդում եք: Մանկավարժի համար դա լավ չէ: Ես, հասկանալի է, կթողեի նրան, բայց, ցավոք, անհնար է: Չե՞ք վախենում, որ երբեւէ վատ կզգաք սրա համար: Համենայնդեպս, ձեր կենսագրությունը...

- Չեմ զգա,- անգույն ձայնով ասաց Ռ-վն:- Իմ կենսագրության հետ ձեր փոքրիկ խուլիգանը ոչ մի կապ չունի:

Սակայն ուսուցչի եւ աշակերտի տարօրինակ, համարյա միստիկ կապը, նրանց մենամարտն ու տոհմական թշնամանքը չդադարեց, եւ փիլիսոփայի նետած վերջին խոսքը՝ «Դու դեռ կվազես իմ ետեւից», այնպես դաջվեցմնաց, որ եգիպտացին չէր էլ պատկերացնի: Քի՞չ գիմնազիստներ էր ունեցել կամ հանդիպումներ ու բախումներ, բայց երբ թաքուն, խախտելով բոլոր օրենքներն ու Սինոդի որոշումները՝ փակ եկեղեցում ծածուկ պսակադրվեց ամոթխած սիրեցյալի հետ, երբ դուրս պրծավ ատելի Ելիցից՝ ընտանիքով տեղափոխվելով նախ Սմոլենսկի նահանգի դաշտային, ճահիճներով շրջապատված Բելի քաղաք, այնտեղից էլ ավելի ներքեւ՝ Պետերբուրգ, երբ սկսեց տպագրվել Ալեքսեյ Սերգեեւիչի մոտ ու մի քանի սոված տարիներից հետո սկսեց լավ վաստակել, երբ սկսեցին հրապուրվել նրանով, եւ նա նորածեւություն թելադրեց, երբ նրան անարդար, ստորաբար թիկունքից հարվածեց խանդավառ աշխարահավերջական Սոլովյովը՝ անտեղի տեղը «Հուդայիկ» կոչելով, եւ այդ խարանը պետք էր մաքրել, երբ ծանոթացավ Դմիտրիի ու Զինաիդայի հետ, որոնք նրան հրավիրեցին իրենց պատարագամատույց եռեղբայրություն, երբ մուտք գործեց գաղտնի սալոններ ու խմբակներ, արդեն մեծացած խորթ դստեր՝ Ասյայի հետ սկսեց էրոտիկ սեանսների ու միստիկական խեսերի մասնակցել, որոնցից մեկի ժամանակ արյուն էին խմում երիտասարդ կամավորական հրեայի երակից, իսկ հետո մեղա էր գալիս բարեպաշտ կնոջ առաջ ու երդվում այսուհետ առանց նրա թույլտվության ոչ մի տեղ չգնալ, ոչ մի պատմության մեջ չընկնել եւ իր հետ չտանել Ասյային, բայց այնուամենայնիվ գնում էր՝ ուժ չունենալով հաղթահարելու իր հիվանդ բնավորությունը, երբ նրա վրա զայրանում էր գանգրահեր, հախճապակե Բլոկը, թե՝ ինչպե՞ս կարող եք միաժամանակ եւ՛ Կրոնափիլիսոփայական ակումբի անդամ լինել, եւ՛ տպագրվել սեւհարյուրյակայինների թերթերում, եւ նրան ավելի ուժեղ էր սիրում ու ատում անսեռ, վայրենիների մեջ հայտնված Միկլուխո-Մակլային հիշեցնող Մերեժկովսկին, երբ ծնվում էին նրա ապօրինի երեխաները, եւ նա երկարաշունչ խնդրագրեր էր հղում այն ժամանակ կառավարող հովվապետին առ այն, որ նրանց թույլ տան կրել իր ազգանունը, իսկ լուսա-

վորյալ քահանայապետ Անտոնին մեղմորեն մերժում էր, եւ դա հունից հանում էր խնդրարկուին, երբ Եկեղեցին անսահման սիրող Ռ-վն ապստամբեց Քրիստոսի դեմ, եւ ինքն իրեն ամորձատած ներքինվոլգյան եպիսկոպոսն առաջարկեց դրա համար բանադրել նրան,- երբ ինչ էլ կատարվեր նրա հետ՝ փիլիսոփան զգում էր, որ մեկը, իր փոմփոլիկից թեթեւ, բայց ամուր կառչած՝ աննահանջ գալիս է ետեւից:

Այդ ինչ-որ մեկն ամուսնացել էր ամուսին ունեցող կնոջ հետ եւ ապօրինի երեխաներ էր ունենում նրանից, այցելում էր աղանդավորներին ու ճշմարտություն փնտրում նրանց մոտ, գրում էր էրոսի ու թանատոսի, սեւ ու լուսավոր աստծու մասին, կապիկություն անելով՝ բոլոր հյուրասենյակներում, Ռ-վ-ին ինքնագլուխ իր գրական խնամակալ հայտարարում՝ ինչ-որ առանձնահատուկ հարաբերություններ ակնարկելով, եւ փիլիսոփան այդ հեքիաթները հերքելու ոչ ուժ ուներ, ոչ ցանկություն: Նա ձգտում էր չտեսնել իր կեղծ կրկնակին, բայց Ելիցի անհեթեթ, վաղուց մոռացված բախումից քսան տարի անց, պետերբուրգյան գրական հավաքույթներից մեկի ժամանակ, որտեղ այնքան հիմար ու անիմաստ բաներ էին կատարվում, եւ Ռ-վն ինքն էլ չգիտեր ինչու է գնում այնտեղ ու մարգարիտներ շաղ տալիս, անճոռնի, արձանակերպ, հասակն անց աշակերտը, մաշված սեւ որսորդական պայուսակն ուսին, կանգնեց իրեն հալածողի առաջ: Սեռի փիլիսոփան չզարմացավ, չվախեցավ, չդողաց, միայն զգաց ինչպես է կոկորդն ի վեր բարձրանում ելիցյան վաղեմի թախծությունը, ու հիշողության մեջ ինչպես են կենդանանում անապաստանության, քաղցի, մենակության ու նվաստացման պատկերները: Փախչել ուզեց, կլաուստրոֆոբիայի նոպայի պես էր, սարսափելի հիվանդության, որ Ռ-վին չարչարում էր մանկուց. գունատվեց, օրորվեց տեղում, բայց ամրակազմ, սեւամորուք, ծխով ներծծված որսորդը պահեց նրան:

- Եթե դուք չլինեիք,- անփոփոխ տենորիկով ասաց նա եւ ահավոր, կարմրելու աստիճան լարվելով ու քրտնելով՝ որսորդական պայուսակից հանեց իր գործերի երկհատորյակը՝ խիստ հարգալից մակագրությամբ,- ինձնից ոչինչ դուրս չէր գա:

Ռ-վն զգաց, որ գրական ժողովի կարիքների համար վարձակալած Աշխարհագրական ընկերության դահլիճում այդ պահին բոլորը քարացան ու նայեցին իրենց: Կողմնակի մարդուն կարող էր թվալ, թե չկա եւ չէր կարող լինել ավելի հուզիչ պատկեր՝ հավատարիմ որդին վերադարձել է անառակ հոր մոտ, թիկունք կանգնել ու ներում է նրան: Մազախռիվ պատանին սպասել էր երեսուներեք տարի, որ ահա կգրկեն, համբույրներով կծածկեն

ու կօրհնեն իրեն: Ողջ Ռուսաստանին հայտնի իր սուր աչքով Ռ-վն գրական անչափահասի դեմքին ոչ միայն շան լակոտի ցնծություն էր կարդում, այլեւ փութկոտ, համարյա անփույթ՝ ճանաչի՛ր ինձ ու մի կո՛ղմ քաշվիր, ազատի՛ր տեղը: Թվում էր՝ բոլորը սպասում են դրան, բայց նա մերժեց: Եվ ոչ այն պատճառով, որ անկարող էր մոռանալ ելիցյան վիրավորանքն ու հետապնդումները, կամ էլ երիտասարդի ստեղծագործական վարքը սրտով չէր: Ոչ այն պատճառով, որ անպատկառ տղեկին գիմնազիայից հեռացնելու՝ հանրությանն անհայտ, վաղուց մոռացված գավառական պատմությունը կարող էր խախտել Ռ-վի հեղինակությունը՝ նրան ներկայացնելով ոստիկանական բռնակալի դերում. ի՛նչ հաճույքով կօգտվեին դրանից մեծ գրականության բոբչինսկիներն ու դոբչինսկիները, որ ատում էին նրան, երկչոտ վեհերում եւ անհամբեր սպասում, թե երբ կսայթաքի: Ոչ այն պատճառով, որ այդ տարիներին, երբ այս տարօրինակ արարածը դառը անցյալից գրականության մեջ էր հայտնվել իր ապուշ մախաղով ու բնախուզական գրքույկներով, որ ասես դպրոցական հանձնարարություն լինեին, եւ ահա վերջապես սերտել ու եկել էր պատասխանելու. ոչ այն պատճառով, որ արդեն ուշ էր գրական սկզբի համար՝ Բլոկն ու Բելին քսան տարեկանից մի քիչ էին մեծ, երբ հռչակվեցին,- այլ որովհետեւ մի ուրիշ, իրեն օտար բան տեսավ ու հասկացավ խիստ փոխված ելիցյան դեռահաս խուլիգանի մեջ:

- Իսկ քեզնից ոչինչ էլ դուրս չի եկել, բացի նրանից, ինչ ամեն առավոտ դուրս է գալիս,- կոպիտ ասաց փիլիսոփան, իսկ մտքում. «Դու չես իմ ժառանգորդը, թեկուզեւ երազում ես դառնալ: Դու երջանիկ ես, դեռ կտառապես, դեռ կմոլորվես ու կգտնես քեզ, երկար ու խնդուն կյանք կապրես, բայց դա իմ ուղին չի: Դու սխալվել ես, տղա՛: Դու ատում ես տառապանքը: Իսկ նրան պետք է սիրել»:

Ու խելացի տղան ամեն ինչ հասկացավ: Ցնցվեց, ինչպես մտրակի հարվածից, օրորվեց, բայց չընկավ, այլ ավելի ամուր բռնեց խնամակալի փոմփոլիկից, եւ այդ օրվանից Ռ-վն իրեն կապկողի մասին անընդհատ լսում էր ամենատարբեր մարդկանցից, որոնց համար նա անսպասելիորեն շատ օգտակար էր դարձել: Մեկին պտտապարի էր տանում խլիստների մոտ, թեեւ գիտեր, որ խլիստները չեն պարում, մյուսին տանում էր որսորդության ու որսի ընծաներ շռայլում, երրորդին պաշտպանում էր գրագողության մեղադրանքից եւ գաղտնաբառեր ու նշանաբաններ նվիրում, որոնցից շատ ուներ, ասես նվիրական գանձի տեր էր դարձել: Կպավ ազնվաբարո Բլոկին, պիտանի եղավ Վյաչեսլավ Հիասքանչին, մեկնեց «Սլավնիե բուբնի»՝

խորամանկ Վոլոշինի մոտ, մտերմացավ Այյոշա Ռեմիզովի հետ, եւ փոքրիկ, թզուկի պես սրտառուչ Այյոշան Ռ-վին համոզեց ուշադրություն դարձնել իր նախկին աշակերտին ու ավելի մեղմ վարվել նրա հետ, եւ ի պատասխան փիլիսոփայական սրտի «Ինձ կապիկներ պետք չեն, թող նորից կորչի-գնա իր անտառները» աղաղակին՝ ինչ-որ ապուշ, կապկային ազատ պալատ հիմնեց ու երկուսին էլ առավ այնտեղ՝ եւ՛ Ռ-վին, եւ՛ Լեգկոբընտովին, հետո էլ, չգիտես ինչու, կտրեց իր քմահաճ նշանածի համար Աֆրիկայից արիասիրտ պոետ Գումիլյովի բերած կապիկի մորթու պոչը: Անմիջապես այդ պատմության մեջ մտավ կոմս Ալեքսեյ Տոլստոյը՝ զորեղ քիթը խոթելով բոլոր ծակուծուկերը, բայց կոմսին պալատ չընդունեցին, ասացին՝ ոտքերը շատ մեծ են, կասկածելի ծագում ունի, նաեւ՝ նախկին ամուսնուց ապահարզան չստացած հրեուհի կին: Կոմսը խորապես վիրավորվեց մայրաքաղաքային ջհուդակերներից ու մեկնեց Կոկտեբել, որտեղ, ի հատուցումն, փչացրեց ամբողջ գրողական գյուղը, իսկ Ռ-վն անտանելի ատամնացավի տնքոցով ատում էր, ինչպե՞ս էր ատում այդ ժամանակ ռուս գրողներին, որ անկարգացել էին ճիշտ ինչպես գավառական գիմնազիստները մարտ ամսի դասերին, բայց եւ նրանցից փախչելու հնար չկար:

Կարելի էր ուշադրություն չդարձնել պզուկոտ գրական պատանյակներին, բայց ահա անհեթեթագույն Ռազումնիկ անունով ծանծրալի գրականագետը մի անմիտ ներբողյան գրեց եւ հոդվածում համեմատում էր նույն ճանապարհով գնացող երկու գրողներին՝ նշանավոր, բայց արդեն վարընթաց փիլիսոփա Ռ-վին եւ քչերին հայտնի արձակի պոետ Լ-վին՝ նախապատվությունը վերընթաց կրտսերին տալով: Ասենք, այդ խելապուտուկը միշտ էլ մանր մարդ էր եղել, ու ճիշտ էր Զինաիդան, որ թունավոր սարդին չէր թողնում իր սալոնի շեմն անցնի, իսկ նա ի պատասխան չար ֆշշացնում ու նրա դեմ բարեկամություն էր անում պրոֆեսորի որդի Բորենկա Բուգաեւի հետ: Բայց այն ժամանակ ո՞վ կմտածեր, որ վնասատուն օրերից մի օր ուրիշի ձեռքերով նաեւ Ռ-վին կհալածի, չնայած հենց նա էր իննսուներեք թվին հիմնել ինտելիգենտական աղանդը: Ո՞վ կմտածեր, որ օրերից մի օր փիլիսոփայական մեծ խորհուրդ կգումարվի Պետերբուրգում, եւ այդ խորհրդում անբարեհույս կհռչակեն Ռ-վին, իսկ լկտի տղեկը կբազմի այդ խորհրդում ու կվճռի նրա ճակատագիրը: Բայց հենց այդպես՝ առեղծվածային, ծիծաղելի, կապկային կերպով կատարվեց տնօրեն Բաքսի մարգարեությունը ու շրջոնքված կրկնվեց երեսնամյա վաղեմության իրավիճակը, երբ Ռ-վն ելիցյան գիմնազիայից դուրս էր անում ամենածույլ ու անդաստիարակ աշակերտին:

7

Մարմնական արատը, որ Վերա Կոնստանտինովնան կասկածում ու որից վախենում էր, նրա ինքնակոչ աղջկացու Ուլյանան իսկապես ուներ, չնայած եւ հրաշքով վերածվել էր իր հակադրությանը: Ծելոմյան վազորդուհին երկար ժամանակ չէր կարողանում քայլել: Զնամենկայի նրա տարեկիցները վաղուց վազվզում էին բակում, իսկ Ուլյան մոր գրկից շուրջն էր նայում փայլփլուն ու անշարժ աչքերով: Չէր բողոքում, չէր նվում, չէր ձգվում վառվռուն խաղալիքներին, երբեմն միայն փորձում էր սողեսող անել, բայց մի տեսակ տարօրինակ էր ստացվում, շրջանաձեւ, ասես մեկը նրան կապած լիներ անտեսանելի սյանը: Ծնողները սկզբում ուշադրություն չէին դարձնում այդ տարօրինակություններին, իսկ երբ մեկուկես տարեկան դստրիկին տարան պալատական բժշկի մոտ, նա թռուցիկ նայելով՝ ասաց, որ աղջիկը շուտով կքայլի, պարզապես պետք է համբերել: Բայց ժամանակն անցնում էր, իսկ Ուլյան համառորեն չէր ուզում քայլել, ու պարզ դարձավ, որ նրա ոտիկների հետ ինչ-որ բան է կատարվում: Կոնսիլիումի հրավիրված նոր բժիշկները զննություններով չարչարում էին Ուլյային, իրար մեջ լատիներեն խոսում, իսկ ռուսերենի անցնելով՝ չէին շտապում մխիթարական որեւէ բան ասել ծնողներին:

Այդ օրվանից նրանց տանն ամեն ինչ փոխվեց: Ոչ երաժշտություն էր լսվում այլեւս, ոչ կնոջ զնգուն ծիծաղ, ոչ հյուրերի զրույց: Չէին հավաքվում երիտասարդ նկարիչները, որոնց հովանավորում էր պալատի պարետի օգնականը, ամեն ինչ ենթարկվել էր մեկ նպատակի՝ ոտքի կանգնեցնել աղջկան: Վասիլի Խրիստոֆորովիչն ու կինը հնարավոր ամեն ինչ փորձեցին. աղջկան տանում էին արտասահման, ջրաբուժարանները, ցույց էին տալիս եվրոպական նշանավոր բժիշկներին, հետո սկսեցին ուխտի գնալ հեռավոր մենաստանները՝ օգնություն հայցելով սուրբ մասունքներից, հրաշագործ սրբապատկերներից, աղբյուրներից, առվակներից, սրբահայրերից ու սրբամայրերից: Եվ չնայած այդ ամենը ծիծաղելի, անպատշաճ ու նույնիսկ կեղծավոր էր թվում Կոմիսարովին, հանուն դստեր առողջության նա պատրաստ էր նույնիսկ վանք մտնել. միայն թե ամեն ինչ իզուր ու ապարդյուն էր: Եվ որքան էլ պաս պահեց, աղոթեց, իրեն չարչարեց կինը, որքան էլ ծնրադրեց աղերսանքով, որքան էլ հաղորդության ու օծման տարավ դստերը, ինչ մաղթանք էլ որ պատվիրեց, ոչինչ չէր օգնում:

Ուլյան աշխույժ, հետաքրքրասեր, խելացի աղջնակ էր, շուտ սովորեց խոսել, հետո՝ նաեւ կարդալ, նկարում էր, երգում, ծիծաղում, բանաստեղ-

ծություններ արտասանում, բայց ոտքերը չէին ենթարկվում: Առաջվա պես սողում էր՝ շրջանածեւ, համառ, միայն իրեն հայտնի ինչ-որ նպատակով, ասես այդ շրջանների թիվն ինչ-որ բան պիտի նշանակեր, եւ մի սարսափելի, խելագար բան կար այդ շրջանածեւ ուղու մեջ: Ծնողները փորձում էին շեղել վառվռուն խաղալիքներով, քաղցրավենիքով, փուչիկներով, բայց ոչնչի ուշադրություն չդարձնելով՝ Ուլյան սողում էր:

Մեխանիկը ժամանակի ընթացքում սովորեց այդ վիճակին: Հարմարավետ սայլակ էր սարքել դստեր համար, ամռանը հաճախ գնում էին մարգագետինները, եւ նա դաշտածաղիկներ էր հավաքում Ուլյայի համար, Ապուխտին էր կարդում, որի մեծ սիրահարն էր, սիրում, համբուրում ու շոյում էր նրա բարալիկ, չենթարկվող ոտիկները, հուսալով, որ հնարավորինս երջանիկ կդարձնի աղջկա կյանքը, բայց կինը չէր խաղաղվում, եւ Վասիլի Խրիստոֆորովիչը ավելի ու ավելի հաճախ էր մի տարօրինակ վճռականություն տեսնում նրա աչքերում: Կինը ամեն ինչում մեղադրում էր միայն իրեն, միայն գորշ զգեստներ էր կրում, դեմքը ծերացել էր, այնպես, որ ոչ ոք այդ հոգնած, տարեց կնոջ մեջ չէր տեսնի նրա երիտասարդ տարիքը: Երբեմն անհետանում էր տնից, բայց երբեք չէր ասում որտեղ է եղել, եւ օրեցօր ավելի ինքնամփոփ էր դառնում: Այդ ամենը տարօրինակ, վախեցնող էր թվում Վասիլի Խրիստոֆորովիչին, որը լավ էր ճանաչում կնոջը: Խոսելն անիմաստ էր, մեխանիկը չգիտեր ինչպես օգնի նրան, միայն զգում էր, որ կորցնում է կնոջը: Կինը հեռանում էր, գնում էր մի հեռու, մթին, անհայտ եզերք, որտեղ ինքը մուտք չուներ:

- Ի՞նչ է պատահել, Մա՛շա,- տխուր հարցնում էր նա:- Վերադարձի՛ր:

Ու մտքին էր գալիս.

Տերեփուկներ, այո՛, տերեփուկներ...
Անհամար շաղ եկած դաշտում...

Բայց կինը չէր վերադառնում:

Իսկ հետո Ուլյան քայլեց: Նույնիսկ չքայլեց, այլ վազեց: Մի արեւոտ փետրվարյան առավոտ Վասիլի Խրիստոֆորովիչը մտավ մանկասենյակ ու դստերը տեսավ սառացակալած, սառնամանիքից պսպղացող պատուհանի առաջ: Արմունկներով պատուհանագոգից կառչած՝ Ուլյան դուրս էր նայում իր շնչից հալված ապակու միջով, խոսում էր ինքն իրեն ու ճոճում տոտիկները, ինչպես սովորաբար սիրում էր անել, եւ այդ պահերին մեխանիկն աչք չէր կտրում նրանից, մոռանում էր Ժամանակը, որը սովորաբար զգում է, ասես ժամացույց լիներ ուղեղում: Բայց հանկարծ ինչ-որ ստվեր

առկայծեց պատուհանից այն կողմ, աղջնակը լռեց, քարացավ, ճչաց ու լացելով ոչ թե սողաց, այլ ինչ-որ տարօրինակ ցատկերով հետ վազեց պատուհանից ու նետվեց հոր գիրկը: Ծփոթահար, վախեցած, չհասկանալով՝ ինչ է կատարվում, դողում էր հոր ձեռքերին թառած, եւ աչքերում հայտնված արցունքներից Վասիլի Խրիստոֆորովիչին թվաց՝ աղջիկը հիմա ոչ միայն կքայլի, այլեւ կթռչի:

Ուլյան սքանչելի էր, եւ հայրը նույնիսկ վախենում էր, որ անզգույշ շարժումով կվախեցնի, կփախցնի հրաշքը, ու ամուր բռնել էր նրան, ինչպես թռչնակի, հետո շրջվեց անաղմուկ ներս մտած կնոջ կողմն ու ապշեց նրա աչքերի արտահայտությունից: Ո՛չ ուրախություն, ո՛չ երջանկություն, ո՛չ ցնծություն. մի տխուր սարսափ էր քարացել աչքերում: Կինը նրա գրկից առավ դստերը, սեղմեց կրծքին ու հարցրեց.

- Ի՞նչ տեսար այնտեղ, Ո՛ւլենկա:

Աղջիկն ավելի ուժեղ դողաց եւ ամուր գրկեց մորը:

- Մոռացիր ինչ տեսել ես: Հասկացա՞ր ինձ:

Իսկ ամենից ավելի մեխանիկին ապշեցրեց ոչ այն, որ կինը երեք տարեկան երեխայի հետ ինչպես մեծ մարդու հետ էր խոսում, այլ որ Ուլյան ամեն ինչ հասկանում ու գլխով էր անում: Շատ գունատ էր, հետո աչքերը փակվեցին, եւ նա քնեց թե կորցրեց գիտակցությունը: Կոմիսարովը մոլորված նայում էր կնոջը: Զարհուրելի միտքը, որ քայլելու շնորհը կխլվի նույնքան անսպասելի, որքան հայտնվել էր, շանթեց Վասիլի Խրիստոֆորովիչին, բայց կինը կանխեց նրա վախը.

- Կարթնանա ու կսկսի քայլել: Ու ոչինչ չի հիշի:

Ու դուրս եկավ՝ քնած երեխան գրկին:

Կինը բավական երկար չկար, եւ Վասիլի Խրիստոֆորովիչը չէր համարձակվում անհանգստացնել նրան, իսկ երբ մտավ ննջարան, տեսավ, որ Ուլյայի մոր հագին ճանապարհի զգեստ էր:

- Պետք է գնամ:

Եվ ամուսնուն նայեց չոր, վճիտ, խիստ աչքերով, որոնց մեջ ոչ մի կաթիլ խենթություն չկար:

- Ի՞նչ ես անում, Մա՛շա,- կմկմաց ամուսինը:

- Այդպես է պետք: Ես խոստացել եմ:

- Ո՞ւմ: Ի՞նչ ես խոստացել: Ի՞նչ պիտի մոռանա Ուլյան: Ինչո՞ւ չես ուզում ինձ ոչինչ ասել:

- Դու մենակ կմեծացնես նրան ու չփորձես ինձ գտնել: Երբ Ուլյան մեծանա, եթե կուզես ուրիշ կին առ:

- Բայց ինչո՞ւ,- տնքաց ամուսինը՝ տխրությամբ հասկանալով, որ նրան հակառակը համոզելն անհնար է:

Բայց կինն այլեւս ոչինչ չասաց, ու Վասիլի Խրիստոֆորովիչը չգիտեր՝ Ուլյային ինչպես բացատրի ուր անհետացավ մայրիկը: Բայց աղջիկն ասես զգում էր ինչ-որ բան ու ոչինչ չէր հարցնում, եւ ինքն էլ որքան փորձեց Ուլյայից զգուշորեն իմանալ, թե ում էր տեսել պատուհանից այն կողմ ձմեռային այդ ճերմակ առավոտյան, որեւէ պատասխան չստացավ: Ու չէր կարողանում հասկանալ՝ կա՛մ աղջիկն իրոք մոռացել էր, կա՛մ էլ չէր ուզում ասել, բայց այդ պահից ինչ-որ բան խախտվեց նրա հանդեպ մաքուր, անխոռով վերաբերմունքի մեջ:

Ծուտով Վասիլի Խրիստոֆորովիչն ազատվեց Ձնամենկայի պալատից եւ աշխատանքի անցավ Օբուխովյան գործարանում: Նրանք փոխեցին բնակարանը, եւ Ուլյան կամաց-կամաց սկսեց մոռանալ մայրիկին, միայն երբեմն երազ էր գալիս՝ շատ ջահել, համարյա աղջնակ, ու զգեստներն էլ ոչ թե գորշ էին, այլ սպիտակ կամ վարդագույն:

...Երբ Ուլյան մի քիչ մեծացավ, հասկացավ, որ մայրիկը մահացել է, ու հորը սկսեց խնդրել, որ տանի նրա գերեզմանին:

- Միայն այնտեղ կլացեմ ու հետո տանը լաց չեմ լինի, ինձ լավ կպահեմ,- խոստանում էր նա:

Վասիլի Խրիստոֆորովիչը չգիտեր ինչ ասի դստերը, բայց գերեզմանն այդպես էլ ցույց չտվեց: Ու երեւի իզուր: Գերեզմանով ավելի հեշտ կլիներ, ու երկնքում էլ աստղիկ կլիներ, որին կարելի է նայել եւ իմանալ, որ մայրիկի հոգին այնտեղ է: Բայց չկար այդ մխիթարությունը, փոխարենը դատարկություն էր, որը Ուլյան չգիտեր ինչով լցնի եւ օրեր շարունակ մայր ու աղջիկ էր խաղում իր տիկնիկներով, իսկ հետո մի տարօրինակ արարած հայտնվեց նրա կյանքում: Այն սենյակ էր մտնում գիշերները, նստում սնարի մոտ ու դիպչում աղջկա մազերին, շոյում դեմքը, համբուրում, ինչպես ժամանակին մայրիկն էր համբուրում, բայց այդ արարածը մայրիկը չէ, այլ ինչ-որ սառն ու սարսափելի բան, ամբողջովին մոր հակոտնյան: Եվ Ուլյան վախենում էր շարժվել՝ ամեն անգամ մեռնելով նրա սառցեղեն փաղաքշանքի տակ եւ առավոտյան դժվարությամբ կրկին կյանքի դառնալով: Արարածն արգելել էր պատմել իր մասին: Այն երբեք ոչինչ ուղիղ չէր ասում, բայց թափանցում էր գիտակցության մեջ, եւ Ուլյան հասկանում էր, որ եթե որեւէ մեկնումեկին պատմի այդ արարածի մասին, այդ մարդը կմահանա: Գիշերներն արթնանալով՝ աղջիկը վախենում էր լաց լինել, որ հանկարծ չարթնացնի հորը: Եթե մայրը ողջ լիներ, կընկներ նրա գիրկը եւ ան-

միջապես կհանգստանար, բայց քաշվում էր հոր մոտ գնալ եւ միայն անվերջ հարցնում էր.

- Ինչո՞ւ արեւն այնպիսին չի, ինչպես միշտ: Ինչո՞ւ է պղտոր: Լուսինն ինչո՞ւ է ամեն օր տարբեր: Ինչո՞ւ են այսպես ճչում թռչունները: Ծղրիդներն ինչո՞ւ լռեցին:

Եվ հայրը անհեթեթ, անմիտ պատասխաններ էր տալիս, ինչը ստիպում էր, որ աղջիկը զայրանա եւ ասի.

- Բայց տե՛ս, տե՛ս, ուրի՛շ է, երկինքն էլ, որ միշտ կապույտ էր, ճերմակավուն է: Ու ծխի հոտ է գալիս: Վախենում եմ:

- Ախր ինչի՞ց ես վախենում,- բարկանում էր հայրը:- Եթե ցավող տեղ ունես, բժիշկ կանչենք, ու նա քեզ կբուժի:

Գալիս էր մեղմախոս, փաղաքուշ մի մարդ, հիմար հարցեր տալիս, որոնց Ուլյան չգիտեր ինչ պատասխանի, իսկ գլխավորի, գիշերայինի մասին լռում էր, որովհետեւ նրա մասին ոչ մեկին չէր կարելի ասել: Հետո բժիշկը մեխանիկից այցելության վարձը ստանալով՝ շտապ հեռանում էր՝ քթի տակ ինչ-որ բան մրմնջալով սենդակարգի, ջրի ու կահավորման փոփոխության մասին, եւ ինքն էլ չէր հավատում իր ասածին:

- Կուզե՞ս գնանք քեզ նոր տիկնիկ առնենք: Կամ շորիկ,- մի անգամ Զատկից առաջ հարցրեց Վասիլի Խրիստոֆորվիչը ու մեղավոր նայեց աղջկան, որի վրա բոլոր շորերը փոքրացել էին:

- Ուզում եմ,- ասաց աղջիկը,- եթե դու ես ուզում:

Նրանք կառքով գնացին Գոստինի դվոր, եւ հանկարծ զարմանալիորեն մի արտակարգ ուրախություն պատեց Ուլյային, աղջնակն աշխուժացավ, անտեսանելի ներքին հիվանդությունը վախեցավ, նահանջեց, իսկ հայրը ավելի ուրախ էր ու մեղադրում էր իրեն, որ չէր հասկացել այդպիսի պարզ բանը՝ երեխային ավելի շուտ տանել խանութ: Նորածեւ տաղավարը մարդաշատ էր, գոռոզ-սիրալիր գործակատարը մեծի պես էր խոսում նրա հետ, թեւանցուկ անում եւ գովում նրա մազերն ու մաշկը, հետո մոտեցավ մի բարձրահասակ ջահել ֆրանսուհի եւ առաջարկեց գնալ զգեստը փորձելու, եւ այդ ամենը անասելի դուր էր գալիս Ուլյային: Նա ամենագեղեցիկ աղջիկն էր այդտեղ եւ առաջին անգամ գերազանցության քաղցր հուզում էր զգում: Բախումը ուրիշի նախանձի հետ, որով նայում էին ջղային մայրիկներն ու նրանց պզուկոտ դստրիկները, ուրախացնում ու խռովում էր նրան: Նույնիսկ այն, որ միայն ինքն էր հոր հետ եկել, հմայում էր Ուլյային, եւ նա ողջ սրությամբ զգում էր այդ հմայքը: Նույն զգացողությունն ուներ նաեւ մեխանիկը. դստերը նայում էր մեծալուրջ հպարտությամբ եւ ոչինչ

չէր խնայում նրա համար՝ պահանջելով, որ ցույց տան ամենաթանկ ու նորածեւ զգեստները: Բայց երբ արդեն պատրաստ էին ողջ փորձածը գնել, գործակատարը, ցանկանալով հաճույք պատճառել աղջկան, նրան առաջնորդեց սպիտակ հարսնաշոր հագած մի մեծ, արտահայտիչ աչքերով, զուգված-զարդարված տիկնիկի մոտ.

- Մի օր դուք էլ, օրիո՛րդ...

Տիկնիկը լկտի նայեց Ուլյայային, եւ երբ մյուսները շրջվեցին, ձեռքը տարավ մազերին ու ցավոտ ծգեց: Աղջկա աչքին ամեն ինչ սկսեց ճոճվել, մարդկանց դեմքերն աղճատվեցին, եւ Ուլյան արդեն ոչ թե խանութում էր, այլ, չգիտես ինչու, մի մեծ տան մեջ ու լսում էր իր ոչ մանկական ձայնը.

- Գնանք այստեղից, հայրի՛կ, գնա՛նք:

- Իսկ զգեստնե՞րը:

- Ոչինչ պետք չի, շուտ գնանք:

Գործակատարը տարակուսած նայեց Կոմիսարովին, ու դեմքը ծամածռվեց ըմբռնումի արհամարհական կիսաժպիտից:

- Դեռ ինչքա՞ն ես ինձ տանջելու,- բարկացավ մեխանիկը:

- Տո՛ւն, հայրի՛կ, տո՛ւն:

Նա տանը հավաքեց իր տիկնիկներին, վառեց վառարանը ու կրակին տվեց մինչեւ վերջինը, հետո նայեց հորը եւ մի տեսակ ոչ աղջկական, այլ կանացի խղճահարությամբ ասաց.

- Հայրի՛կ, եթե ուզում ես, ամուսնացիր:

Մեխանիկը ցնցվեց՝ չհասկանալով, թե նա ինչպես կռահեց իր ցանկությունը, որն այնքան արագ կատարվեց, որ չէր համարձակվի նույնիսկ ենթադրել: Իսկ երբ նրանց տանը հայտնվեց օտար զգուշավոր կինը եւ սկսեց իրենով լցնել սենյակների, անկյունների ու միջանցքների տարածությունը, Ուլյան զգաց, որ կարող է արշավասույր վազել, ինչպես սովորեցրել էր մի տարօրինակ մարդ Կոլոմյաժի ձիարշավարանում:

8

- Ես ամեն ինչ մտածել եմ,- Ալյոշային ասում էր Ուլյան:- Մենք իրար նման ենք: Դու էլ նույնքան մենակ ու ոչ մեկին պետք չես այս աշխարհում, ինչպես ես: Դու էլ նույն կերպ տխրում ու տառապում ես, իսկ երկուսով լավ կլինի մեզ համար: Մենք կփախչենք այստեղից: Դու կպաշտպանես ինձ, իսկ ես կհոգամ քո մասին: Փրկության ուրիշ ելք չկա:

Նրանք նստել էին երաշտից չորացած շելոմյան ցամաքալեզվակին,

գյուղից երկու վերստ ներքեւ, ու նայում էին նվազող, վճիտ ջրին, որի մեջ դատապարտված-անփույթ խայտում էին նեղիրան, արագաշարժ. մուգ պտավոր թեթեւ ձկնիկները:

- Նավակ ունենք, հայրացուիդ հրացանը կվերցնես: Մեկ է, շուտով նրան պետք չի լինի, իսկ պահարանի դուռը կարող ես ջարդել. տես ինչ ուժեղ ես: Գլխավորը՝ որ էլ չես ծառայի նրան: Ազատ կլինես, Այյո՛շա:

- Եվ ինչ եմ անելո՞ւ,- զգույշ հարցրեց տղան:

- Ո՞նց թե ինչ,- գոչեց Ուլյան:- Ապրելո՛ւ ես,- ու տարակուսանք որսալով նրա հայացքում՝ շարունակեց, իսկ աչքերը շողում էին:- Ձուկ ես բռնելու, որս ես անելու ու լողալո՛ւ ես, լողալո՛ւ ես:

- Ո՞ւր եմ լողալու,- ավելի զգույշ հարցրեց Այյոշան:

- Այ,- աղջիկը մի փոքրիկ շիվ վերցրեց ու թաց ավազին, ջրի եզրին, դասը գերազանց պատասխանող գիմնազիստուհու հաղթականությամբ սկսեց պատկերել փախուստի քարտեզը:- Ամեն ինչ մտածել եմ: Ճելոմով իջնում ենք ներքեւ՝ մինչեւ լիճը, այնտեղից՝ Վոլխով, ու գիշերով, որ ոչ ոք չտեսնի, անցնում ենք քաղաքի մոտով: Հետո Վոլխովով կլողանք մինչեւ Լադոգա: Հաշվել եմ՝ երկու շաբաթում կամ մի քիչ ավելի, կհասնենք: Այնտեղ կծախենք նավակը, տեղ կխնդրենք որեւէ նավի վրա ու կլողանք հյուսիս,- ոստիկը վստահ ուրվագծում էր Լադոգա լիճը՝ մի քիչ ավելի ձգված, քան իրականում կար:

- Բա հետո՞,- համարյա չշնչելով հարցրեց Այյոշան:

- Հետո ավելի հեշտ է: Օլոնեցկի նահանգում, Նադվոիցիում մի ջրվեժ կա, նրանից այն կողմ՝ լիճ, այնտեղ ձմեռելու տեղ կգտնենք ու խրճիթ կսարքենք: Տայգան մեծ է, մուշտակամորթ գազանները՝ շատ: Դու տրապպեր կդառնաս:

- Ի՞նչ,- կարմրեց տղան:

- Գազանորս,- բացատրեց ամբողջ ձմեռ Ջեք Լոնդոն կարդացած Ուլյան,- իսկ ես կսովորեմ մորթի մշակել: Մեր խրճիթը մեծ լճի ափին կլինի, այնտեղ, ուր թափվում է մեծ վտակը: Երբ փոքր էի, մեր տան պատին կախած էր տատիկի գորգը՝ այդ խրճիթի պատկերով: Այն ժամանակ քայլել չէի կարողանում եւ ամբողջ ժամանակ նայում էի գորգին: Ես ամեն ինչ գիտեի, վաղուց գիտեի, դեռ մինչեւ քո այստեղ հայտնվելը: Ես շատ ուժեղ եմ, Այյո՛շա, ես հավատարիմ եմ, ես ամեն ինչ կարող եմ, դու երբեք չես զղջա:

Ուլյան խոսում էր ձեռքերը ոգեւորված թափահարելով, աչքերը վառվում էին, ռունգերը՝ թրթռում, երկար մազերը ծափծափում էին քամուց ու հոսում Այյոշայի այտերով: Աղջկան թվում էր՝ էլի մի ակնթարթ, ու կմատնի

իր գաղտնիքը, կվազի՝ ուժ չունենալով զսպել իրեն, ու երկուսն էլ չնկատեցին բարձրահասակ մարդուն, որը մոտեցավ Ուլյայի քարտեզին ու սկսեց ուշադիր նայել՝ գլուխը հավանության շարժումով մեկ աջ, մեկ ահյակ խոնարհելով: Մարդու շուրջը պտտվում էր շունը, բայց խելացի կենդանին գծագիրը չտրորեց, ու քարտեզը ցրիվ եկավ միայն երեկոյան, երբ չոր ամպրոպ սկսվեց, եւ ուժեղ քամին բարձրացրեց գետափնյա ավազը, բայց այդպես էլ անձրեւ չեկավ, միայն բազում կայծակներ լուսավորում էին երկինքն ու շեղ զիգզագները խժռում էին Իլմեն լիճն ու մեծ անտառները, որոնք իրենց հերթին երկնքին պատասխանում էին կրակով եւ գյուղը հրե օղակի մեջ առած անտառային հրդեհների գետնահուպ ծխով:

...Եթե նունիսկ Ալյոշան նայեր էլ Ուլյայի քարտեզին, դժվար թե որեւէ բան հասկանար: Աշխարհագրության հետ, ի տարբերություն, թվաբանության, տղայի գործերը լավ չէին: Նրա աշխարհը սահմանափակվում էր այն վայրերով, որտեղ եղել էր ու լավ գիտեր, իսկ մնացածը չէր հետաքրքրում: Դրա համար էլ վատ էր հասկանում, թե ինչ է ձեռնարկել խենթուխելառ օրիորդը, որն անընդհատը փակուղու առաջ էր կանգնեցնում նրան իր մտահղացումներով, քմահաճություններով ու տարօրինակություններով: Ալյոշան երբեք չէր առարկում նրան, քանզի ցանկացած առարկություն հղի էր զայրույթի կատաղի բռնկումներով, որոնք չգիտեր ինչպես մարի: Պետք էր համաձայնել եւ հուսալ, որ հեշտ բորբոքվող եւ նույնքան արագ էլ հանդարտվող Ուլյանան միտքը կփոխի: Երբ նա ամառները գալիս էր, տղան իրեն երկու գործի ծառա էր զգում՝ տնտեսության մեջ մոր ու խորթ հոր, մնացած ժամանակը՝ Ուլյայի: Աղջիկը սիրում էր նրան վազեցնել անտառով մեկ, մագլցել տալ ծառերը, որ նայի՝ որտեղից են սկիզբ առնում առուները, ու բարձրանալ լեռնակատարները: Երբեմն այնպես էր հոգնում, որ թվում էր ավելի լավ կլիներ պետերբուրգցի խենթ աղջիկը չքանար իր կյանքից, բայց հենց բաժանվում էին, սկսում էր կարոտել ու սպասում էր, թե երբ են գալու ամառը եւ նա՝ ամեն անգամ նոր, անծանոթ, քաղաքային շորերով ու քաղաքի բույրով: Ալյոշան իր կարոտը չէր արտահայտում, բայց եւ թաքցնել չէր կարող, չնայած բոլորովին չէր հասկանում՝ ի՞նչ է գտել այդ աղջիկն իր մեջ եւ ի՞նչ է ուզում իրենից:

Այդպես էր նախորդ ամառներին, բայց այդ ամառ շատ բան էր փոխվել: Ալյոշան ձգվել էր, առնականացել, ու չնայած նուրբ դեմքն առաջվա պես մանկական էր, կապույտ աչքերում մի նոր, Ուլյային անծանոթ արտահայտություն էր հայտնվել: Դա պատահեց գարնանը, երբ Ալյոշան խորթ հոր հետ գնացել էր կտցարների ամուսնաչուի որսի, ու գիշերը մնացին հեռա-

վոր Բուխարա գյուղում, որտեղ այդ օրը թաղում էին տարօրինակ ու սարսափելի մահով մահացած մի ջահել գեղջկուհու: Կինը աշնանը գնացել էր անտառ՝ խոտաբույսեր հավաքելու, ու կորել էր: Երկար էին փնտրել նրան եւ միայն գարնանը, երբ ձյունն անտառում հալվել էր, կիսափտած մարմինը գտել էին գայլի թակարդում, որի մեջ պատահմամբ ընկել ու արնաքամ էր եղել՝ չկարողանալով ազատվել կամ օգնության կանչել: Անհայտ մնաց՝ ով էր դրել թակարդը. ըստ ամենայնի՝ եկվոր մեկը, եւ Պավել Մատվեեւիչն իր որսաշներով ու հրացանով անհարմարություն էր զգում Բուխարայում, չնայած երբեք թակարդ չէր լարում եւ արհամարհում էր այդպիսի որսը: Սակայն Բուխարան վայրի գյուղ էր, ձմռանն աշխարհից կտրված անանցանելի ճանապարհներով, իսկ ամռանը՝ ճահիճներով, եւ մարդիկ այնտեղ ապրում էին իրենց վայրերի պատկերով ու նմանությամբ՝ խավար, վախվորած, սնապաշտ, որոնց համար ոչինչ չարժեր մեղքը եկվոր մարդու վրա գցելը:

Որսորդները քնելու տեղ չխնդրեցին, պառկեցին խրճանոցում, գյուղի ծայրին: Գյուղում հարբած ձայներ էին լսվում, հեկեկոցը փոխարինվում էր բղավոցներով, հետո վայրի ծորուն երգերով, թե ողբով, բայց, ի վերջո, գյուղը կամաց-կամաց խաղաղվեց: Ապրիլյան օրը թանձրացավ ու կարկամեց, դուրս եկավ Զատկից հետո նվազած առաջին լուսինը: Նրա մեռած լույսը թափանցում էր խրճանոցի տանիքի անցքերից ու լուսավորում ներսը: Նոսր լուսաշերտերը դանդաղ շարժվում էին պատերով, եւ Այյոշային թվաց երկնքում լողացող դեղին, դողդոջուն, իր անամոթությամբ գրգռող ինչ-որ մարմին է տեսնում: Երկար չէր կարողանում քնել ու հուզախռով շուռումուռ էր գալիս. նախորդ օրը Պավել Մատվեեւիչը խոստացել էր, որ թույլ կտա կրակել հրացանից:

Այյոշան կյանքում ոչինչ այդպես կրքոտ չէր երազել, ինչպես «զաուերը» ձեռքն առնելը: Գիտեր, որ հաստատ ավելի լավ լեզու կգտնի այդ թանկարժեք զենքի հետ, քան բռնկվող, անհամբեր այդ մարդը, որն իր պոռթկուն բնավորության ու ձեռքերի դողի պատճառով մեկ անգամ չէ, որ վրիպել էր: Այյոշան վաղուց էր խնդրում տալ հրացանը, մորն էր ասում, որ համոզի ամուսնուն, Բայց Պավել Մատվեեւիչն ամեն անգամ մերժելու պատճառ էր գտնում, ու վերջապես հիմա, երբ սկսվել էր Այյոշայի կյանքի եւս մեկ, Աստված գիտի որերորդ ամիսը, համաձայնեց:

Լուսինը Բուխարայի վրա թաղվեց գիշերային սեւ ամպի մեջ, նինջը պատեց Այյոշային, գլխում սկսեցին խառնվել աղոտ մտքերի ու հիշողությունների պատառիկները, հայտնվեց մոր արցունքաթաց սքանչելի դեմ-

քը, Ուլյայի խստահայաց աչքերը երեւացին մի պահ, հետո ինչ-որ խշշոց արթնացրեց քնած տղային: Ստածեց՝ մուկ է, ու քշելու սովոր շարժում արեց, բայց մուկը չվախեցավ, այլ վազ տվեց նրա դեմքով: Տղան լայն բացեց աչքերն ու չտեսավ, այլ զգաց փափուկ շրթունքներն ինչպես են անհագ համբուրում իրեն: Մութ էր, մի քանի քայլի վրա, ձեռքերն ու ոտքերը տարածած, քնել էր խորթ հայրը, իսկ անտառային բարկ հոտով անհայտ կինը ողջ մարմնով սեղմվել էր տղային: Ալյոշան քիչ էր մնում սարսափից ճչար, բայց կինը ափով փակեց բերանը:

- Կամա՛ց, կամա՛ց, փոքրի՛կ,- շշնջաց նա՝ տղային պարուրելով գինու անուշ բույրով:

«Երազ է,- հանգիստ մտածեց Ալյոշան եւ կյանքում առաջին անգամ չկարողացավ զսպել իրեն լեփ-լցրած տաք ու խոնավ զորությունը: Անասելի ամոթ զգաց, բայց կինը չհեռացավ, միայն ավելի ամուր ու խիստ գրկեց, եւ Ալյոշան զգաց, որ պատրաստ է նորից սիրել նրան: Ծանր վարսերը խուտուտ էին տալիս դեմքը, տղան անվստահ շոշափում էր նրա ուսերը, ու երկու ցանկություն էին կռվում նրա մեջ՝ սիրել եւ քնել, բայց որքան էլ ջանաց արթուն մնալ, մեկ է, քնեց՝ ձեռքը նրա մարմնին, ու չտեսավ ինչպես լուսաբացին, իր դեմքին նայելով՝ կինը «ախ» արեց, թանձր կարմրեց ու սկսեց հապշտապ հագնել կապույտ շորը:

Տղային արթնացրեց Լեգկոբընտովը:

- Հը՞, պուճո՛ւր, բավարարվա՞ծ ես,- կոպիտ հարցրեց նա:

Ալյոշան շփոթված, աղերսանքով նայեց խորթ հորը. ուզում էր էլի մնալ այդտեղ ու սպասել հաջորդ գիշերվան, բայց Պավել Մատվեեւիչը չթողեց ոչ լվացվի, ոչ ուտի, քաշեց-տարավ անտառ եւ ամբողջ օրը վազեցնում էր ամենահետին շան պես՝ ստիպելով սառը ջրից հանել խփած բադերը: Ալյոշան կատարում էր նրա բոլոր կարգադրությունները, անհամբեր սպասում ու չէր համարձակվում հիշեցնել հրացանի մասին, բայց Լեգկոբընտովը մոռացել էր կամ ձեւացնում էր, թե մոռացել է, եւ ի հեճուկս Ալյոշայի կրակում ու կրակում էր երկու փողերից, այնպես, որ տաքացան, ու ստիպված էին սպասել, որ սառչեն: Ի վերջո ոգեւորությունը որսորդին հասցրեց նրան, որ նեղ միջագետակում, ճահճի մեջտեղը շուռ տվեց նավակն ու սկսեց խեղդվել՝ անհույս խրվելով տիղմի մեջ եւ ապարդյուն կառչելով որձախոտի ցողուններից: Գոռում էր ողջ ուժով, բայց քամին քշում-տանում էր ձայնը...

Ալյոշան հերթական բադն էր հանում ջրից, երբ այդ բարձր, հուսահատ աղաղակը հասավ ականջին, ու հետ դառնալով՝ տեսավ շրջված նավակը:

Հաջորդ պահին տղան նետվեց ջուրը: Ցրիմուռները փաթաթվում էին մարմնին, թույլ չէին տալիս լողալ: Հեռվում, եղեգնակույտից այն կողմ նույնպես ջրիմուռներով պատած մի գգուզ գլուխ էր երեւում, ասես ջրի ոգի լիներ, իսկ կողքին հատակն ի վեր ճոճվում էր նեղիրան, թեթեւաշարժ գերանափոր նավակը: Մի պահ լողվորի մտքում առկայծեց թողնել նրան, ոչ ոք երբեք ոչինչ չի իմանա, իսկ ինքը կվերադառնա Բուխարա ու կսպասի նոր գիշերվան, բայց մինչ այդ միտքը կչքվեր, Այյոշան արդեն սուզվել էր եղեգնակույտի տակ ու լողաց սրաշեղը ջրիմուռների միջով: Ականջները զնգում էին, քթից արյուն էր գալիս, բայց հասավ: Մի կերպ շրջեց նավակն ու ներս քաշեց որսորդին, որի մորուքն արդեն համարյա լրիվ ծածկվել էր ջրով, եւ միայն ռունգերն էին աղմուկով ներս քաշում իր սիրած երկրի վերջին, խոնավ օդը:

- «Զաուե՛րը»,- Պավել Մատվեեւիչի արտաբերած առաջին բառն էր, երբ գիտակցությունը վերադարձավ:

Այյոշան գունատվեց:

- Գտի՛ր:

Տղան սուզվեց, եւ, օ՜ հրաշք, առաջին բանը, որ շոշափեցին ձեռքերը, փողակալն էր: Տղան ուժ արեց ու մի սեւացած, ծուռումուռ ոստ հանեց ջրից:

- Կրակ արա ու փնտրիր: Մինչեւ կգտնես,- նետեց ճահճի եզրին կանգնած Լեգկոբըտովը:

Այյոշան ամբողջ օրը դուրս չեկավ ջրից ու գտավ հրացանը, երբ արդեն գտնելու որեւէ հույս չուներ: Լուռ դրեց անշարժ նստած եւ արդեն գարնանային փոշու թեթեւ շերտով պատվող որսորդի առաջ ու պառկեց խարույկի մոտ՝ թաց ափին: Մի ջերմ կամ գովեստի խոսք էր սպասում, բայց Լեգկոբիտովը խլելով «զաուերը»՝ սկսեց մաքրել ցեխը, հետո հպանցիկ նայեց Այյոշային.

- Հրացանի համար շնորհակալություն, բայց կրակել չեմ թողնի:

- Ինչի՞,- ասես հարվածից ցնցվեց տղան:

- Դու խառնել ես կենսական գործողությունների կարգը, տղա՛ս,- տխուր ասաց Պավել Մատվեեւիչը:

Այյոշան ուրիշ ոչինչ չհարցրեց, բայց իր առաջին կնոջն էլ այլեւս չտեսավ: Նույնիսկ չէր կարող ասել՝ երազ էր, թե իրականություն, իսկ մռայլված, չգոյի խորխորատը սուզված ու երեւի այնտեղ ինչ-որ բան տեսած Պավել Մատվեեւիչից հարցնել չէր համարձակվում, բայց այդ օրվանից կանացի ամեն ինչ անկասելի ձգում էր նրան:

Չէր կարողանում առանց դողի նայել կանանց ոտքերին եւ ուսերին, մերկ ձեռքերին, գլխաշորի տակից դուրս պրծած մազերին, ու երբ սկսվեց խոտհունձն, ու նրան կանանց հետ ուղարկեցին դեզ անելու, տանջվում էր նրանց անմատչելի մերձությունից: Գյուղացի կանայք նկատում էին նրա չարչարանքը ու փորձում էին ճանկել կոշտ մազերը՝ «Ա՛խ, անամո՛թ», բայց խոսքի մեջ ոչ թե կշտամբանք, այլ թաքուն հավանություն էր լսվում:

Ուլյան էլ էր զգում, որ Ալյոշայի հետ ինչ-որ բան է կատարվում: Չէր կարող բառերով արտահայտել իր նոր զգացողությունները, բայց մինչ այդ անծանոթ խանդը ծակում էր սիրտը: Պնդակազմ գեղջկուհիներին նետած հայացքները, նրա շփոթվելը, երկնչելը, կանանց տեսնելիս կարմրտակող դեմքը այնպե՛ս էին տանջում աղջկան, այնպես վիրավորական տարբերվում իրեն ուղղված թեթեւ, պարզ ու անփույթ հայացքից: Բայց ավելի անտանելի էր տեսնել՝ ոնց են լպիրշ նայում իր Ալյոշային, ինչպես են նրա թիկունքում քչփչում արեւառ, ուժեղ գեղջկուհիները, եւ ինչ քմծիծաղ կար նրանց հայացքներում, երբ տեսնում էին փոքրիկ կրծքերով, նեղ ազդրերով ու նիհարիկ ուսերով Ուլյային: Նա պատրաստ էր ճանկռտել այդ լրբերին, բայց դրանից ավելի՝ այնպես անել, որ ոչ մի կին աչքերը չպլշեր իր մանկական խաղերի ընկերոջ վրա ու ոչ մեկի աչքերը չտեսնեին նրան:

Կորուսյալ սիրո մասին Պավել Մատվեեւիչի պատմությունը հետապնդում էր Ուլյային: Նա իրեն այդպիսի բախտ չէր կամենում. ողջ խենթությամբ ու երազկոտությամբ հանդերձ՝ Ուլյան կամային աղջիկ էր ու լավ գիտեր կյանքում ինչ է պետք իրեն: Միակ բանը, որ նրան պահում էր տանը այն, էր, որ չէր ուզում իր փախուստով ուրախություն պատճառել խորթ մորը: Բայց ի հեճուկս նրա մնալն ավելի մեծ հիմարություն էր: Ընդհանրապես, եթե հարցնեին ինչ է ուզում, եւ ազնվորեն պատասխաներ այդ հարցին, իր էության մի մասով կխոստովաներ՝ ուզում է, որ խելագարվեն իր պատճառով, հետապնդեն ու փնտրեն, որ մի խուլ անկյունում հիվանդանա ու անկողին ընկնի բարձր ջերմությամբ, եւ այնտեղ էլ գտնեն, շուրջը հավաքվեն բոլոր հարազատ, բայց իրեն լքած մարդիկ: Եվ ինքը... Այստեղ Ուլյան վստահ էր՝ կմեռներ նրանց աչքի առաջ ու հոգով կնայեր ինչպես են անսփոփ ողբում ու տառապում, կամ էլ չէր մեռնի, ողջ կմնար, բայց կթողներ, որ խորապես զգային իրենց մեղքը: Լավագույնը կլիներ՝ նախ մեռնել, ապա հարություն առնել, բայց ինչպե՞ս՝ Ուլյան առայժմ չգիտեր: Գլխավորը՝ նրան դուր էր գալիս այդ գաղափարը՝ փախչել, լողալ հեռու, անհետանալ:

Բայց մի ուրիշ, թաքուն, ոչ մանկական, այլ կանացի միտք էլ ուներ: Ուլ-

յան գիտեր, որ հիմա, երբ մի քանի օրով երկուսով մնան Ալյոշայի հետ, թող որ առանց Իլմեն լճի ու Վոլխովի, առանց խրճիթների ու մանվածքի, այլ պարզապես ափ իջնեն գետաբերանի որեւէ կղզյակում ու սպասեն հետապնդողներին, հենց այդտեղ եւ այդ ժամանակ էլ կկատարվի այն, ինչին ոչ այնքան մարմնով, որքան սրտով ու մտքով արդեն պատրաստ էր, եւ դա ընդմիշտ կմիացնի նրանց: Ուլյան վախենում էր այդ մտքերից, փորձում էր արգելել իրեն, բայց որքան չէր մտածում, այնքան ավելի էր բորբոքվում, ու թվում էր՝ ողջ մարմինը պատվել է մանր պղպջակներով: «Ես լավ կին ու մայր կլինեմ,- շշնջում էր նա որպես արդարացում եւ ավելի էր վախենում այդ ներքին բառերից,- ես չեմ լքի իմ երեխաներին, ես սառը չեմ լինի, չեմ հրաժարվի նրանցից, նախկին չեմ կոչի, այնպես կանեմ, որ հարազատ եղբայրներ ու քույրեր ունենան, ու ոչ ոք իրեն մենակ չի զգա: Եթե փոքր քույր կամ մեծ եղբայր ունենայի, մի՞թե կլքեի նրանց: Այս ամենը նրանից է, որ ես մենակ եմ»:

9

Արեւը դեռ չէր բարձրացել, երբ հեշտ արթնանալով ու հրաժեշտի արագ հայացք գցելով դռանը, որի ետեւում քնած էին հայրն ու խորթ մայրը, Ուլյան իջավ գետափի պայմանավորված տեղը: Նախորդ օրը գյուղը երկար քեֆ էր արել Պողոս-Պետրոսի տոնին ու սովորականից դանդաղ էր արթնանում, բայց, մեկ է, պետք էր շտապել: «Միայն թե քնով անցած չլինի, միայն թե չվախենա, միայն թե մտքափոխ չլինի, միայն թե չխանգարեն»,- աղոթելու պես կրկնում էր Ուլյան: Բայց Ալյոշան տեղում էր: Հագին որսորդական բաճկոն, ուսին՝ գողացած հրացանը, վստահ շարժումներով ինչոր բան էր տեղավորում ջրի վրա ճոճվող նավակի մեջ: Ուղեբեռը մեծ էր, եւ Ուլյայի սիրտը լցվեց քնքշությամբ: Կանգ առավ, քարացավ դարափի գլխին՝ չկարողանալով դիմանալ երջանկությանը, որն արդեն սպասում էր, իր ձեռքերի մեջ էր, հետո կամացուկ ձայն տվեց.

- Ալյո՛շենկա:

Նավակի կողքին կանգնածը շրջվեց, եւ Ուլյան տեսավ Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովին: Մանր, ծակող աչքերը սուր հետաքրքրությամբ նայում էին աղջկան: Թանձր մորուքը թաքցնում էր բերանը, ու դժվար էր հասկանալ՝ չարախնդո՞ւմ, թե՞ կարեկցում է նրան այդ մարդը:

- Երբեք մտքովս չէր անցնի,- մրմնջաց որսորդը,- որ այսքան իրար նման կլինենք, աղջի՛կ:

- Ո՞ւր է Այլոշան:
- Այլոշան չի գա:
- Ի՞նչ գիտեք:
Պավել Մատվեեւիչը թոթվեց ուսերը:
Ուլյան ծանր ու տգեղ լաց եղավ: Շատ էր ամաչում, որ լալիս է ուրիշի, այդ պահին աշխարհում ամենատհաճ մարդու ներկայությամբ, բայց կանգ առնել չէր կարողանում. արցունքները հոսում էին այտերով, եւ անհասկանալի էր որտեղից են հայտնվում այդպիսի առատությամբ: Վաղուց արդեն սպառված պիտի լինեին, բայց հոսում ու հոսում էին, ասես Ուլյայի ներսում մի անսպառ աղբյուր էր բացվել:
- Սխալվել ես նրա հարցում: Դու ազատ ես, իսկ նա՝ ոչ,- անհասկանալի դաժանությամբ ասաց Լեգկոբընտովը:- Ասացին՝ նստիր տեղդ, նա էլ նստեց:
- Այդ դուք եք նրան այդպիսին դարձրել,- ճչաց Ուլյան:- Դո՛ւք:
- Շներ կան, որ ենթարկվում են վարժեցման, ու կան, որ չեն ենթարկվում,- իր մանկավարժական ձեռքբերումները չժխտեց Պավել Մատվեեւիչը:- Կան, որ ոչ մի ուժ, նույնիսկ սեռական բնազդը, չի ստիպի չհնազանդվել տիրոջը, կան էլ, որ փախչում են սիրո կանչով: Սրանք որպես շուն բանի պետք չեն, եւ այդպիսիներին սովորաբար գնդակահարում են, որ չփչացնեն տեսակը: Մարդկանց դեպքում ճիշտ հակառակն է: Քո բախտը չի բերել:
- Ես Այլոշային ձեզ չեմ զիջի,- կատաղի գոչեց Ուլյան, ու ռունգերը փքվեցին:
- Այդպես էլ կարծում էի, որ սիրում ես սեփականացնել մարդկանց, փոքրի՛կ ավազակ: Բայց ասա խնդրեմ, ինչի՞դ է պետք ուրիշի շնիկը, որ ապրում է պարանը վզին ու չգիտի, որ կարելի է կրծել-կտրել: Ավելի վատ՝ գիտի, բայց վախենում է, որ ծեծ կուտի:
- Դուք հրեշ եք:
- Ճիշտ չէ,- բարկացավ որսորդը:- նա լավ ձեռքերում է հայտնվել: Պատկերացրու իմ տեղը այլանդակ կամ անպատկառ մեկը լիներ: Ի՞նչ կծեփեր Այլոշայից: Ենթարկվող որձերն աշխարհի ամենանողկալի ցեղատեսակն են: Իսկ սա քեզ պատիժ է երազանքի համար ու լավ դաս,- տաղտկալի, խրատական ձայնով ավելացրեց նա ու հրամայեց:- Նստի՛ր:
Ուլյան անկամ, ոչինչ չհասկանալով՝ նավակ նստեց: Լեգկոբընտովը թափահարեց թիերն, ու գյուղը շուտով անհետացավ տեսադաշտից: Նավակը հոսանքով արագ իջնում էր ներքեւ, Ուլյան լուռ նայում էր մթին ջրին, որից

պաղ մշուշ էր բարձրանում: Ջուրը ծգում էր ու համոզում, որ ջրահարս դառնա: Դա լավագույն ելքը կլիներ. խեղդվել ու վերածվել ոտքերի փոխարեն ձկնապոչով ջրային կույսի, հետո իր թագավորությունը տանել Ալյոշային, որ այլեւս ուրիշի ձեռքերում չհայտնվի՝ ո՛չ վատ, ո՛չ լավ: Բայց հենց այդ պահին էլ հիշեց ջրահեղձին, որին որսացել էր իրենց ուռկանը, եւ Ուլյան ցնցվեց մտքից, որ իր հետ էլ նույնը կլինի: Ու սուզվեց ընդարմացման մեջ, ինչպես ջուրն են ընկնում, իսկ Լեգկոբըտովը լռում էր՝ վախենալով, որ անզգույշ խոսքով կխրտնեցնի նրան:

Ինչ-որ տարօրինակ բան էր կատարվում այդ պահին Պավել Մատվեեւիչի հոգում: Վատ վարքի համար հանդուգն աղջնակին պատժելու եւ խիստ ձայնով խրատ կարդալու, ցերեկը հասուն մարդկանց հետեւելը, իսկ գիշերը անտառներում թրեւ գալը արգելելու ցանկությունը, պատրաստած բոլոր բառերը ասես սառել էին կոկորդում: Աշխարհում ոչ մի արարած երբեք այդպիսի թրթիռ ու քնքշություն չէր արթնացրել նրա մեջ: Ուլյան շատ մոտ էր նստած՝ պարմանի, թարմ, արեւառ, բացգույն մազերի հյուսքերով, կարմրաշեկ պեպենևներով, համարյա անորսալի հոտով ու նուրբ աղվամազով, ու նրա ներկայությունն այդ նավակում նույնքան տարօրինակ էր, որքան եթե եղջերուի ջահել էգը՝ եղնուհին, պատահմամբ հայտնվեր մարդու կողքին ու թույլ տար իրեն շոյել, ու միայն զգայուն ականջները թրթռային: Լեգկոբըտովն իջեցրեց թիերը: Նավակը անձայն սահում էր ծանծաղացող գետի ջրերով: Ինչքա՞ն տեւեց այդ ամենը. հինգ րոպե՞, տա՞սը, ժա՞մ... Նա կորցրել էր ժամանակի զգացումը, հանկարծ թվաց՝ ինքն ինքը չի, ոչ քառասնամյա, կյանքում շատ բան տեսած ու քիչ հասկացած այդ տղամարդը, այլ սարսափելի մերկ կնոջից Ավստրալիա փախած պատանին, դեռահասը, եւ նորից հայտնվել է այն ժամանակի մեջ, երբ դեռ հնարավոր էր ինչ-որ բան փոխել, առանց ճակատագիրը փչացնելու:

Մինչ այդ աչքերը փակող ինչ-որ ակնակապ ընկել, չքացել էր, եւ նա աշխարհը կերպափոխված էր տեսնում, ավելի մանրամասն, քան սովորաբար, հստակված իմաստներով ու բոլոր գաղտնիքների բանալիներով, եւ ամենաթանկը, որ կար աշխարհում, այդ պահին կողքին էր, հերիք է պարզեր ձեռքը՝ կբռներ: Բայց չգիտես ինչու՝ չէր կարող եւ անշահախնդիր խանդում էր Ուլյային ողջ աշխարհի հանդեպ, պատրաստ էր ամեն ինչից հրաժարվել հանուն նրա եւ ոտքերի տակ դնել նույնիսկ չարաբաստիկ «զուերը», միայն թե թույլ տրվեր սպառնացող բոլոր վտանգներից պաշտպանել այդ աղջնակին:

Հանկարծ մոտակա անտառից մի կտրուկ ձայն լսեց: Ուլյան ցնցվեց ու

բարձրացրեց արցունքներից ուռած սքանչելի մուգ աչքերը:

- Ի՞նչ էր:

- Մի վախենա, սիրելի՛ս, ծերացած չոր ծառ ընկավ:

- Ո՞ւր ենք լողում:

- Ինչպես դու էիր ուզում, ուլի՛կ: Ճելոմով ներքեւ, մինչեւ Իլմեն լիճ, այնտեղից՝ Վոլխով ու Լադոգա: Հետո Օնեգայով դեպի Նադվոիցի:

Ալյոշայի նոր դավաճանությունը վերջնականապես սթափեցրեց Ուլյային:

- Ինձ ափ իջեցրեք:

- Ինչո՞ւ,- զարմացավ Լոգկոբըտովը: Եթե երեխա ժամանակ որեւէ բան տպավորվել է հոգուդ մեջ, ու չես համարձակվում երազանքդ իրականություն դարձնել, կմեռնի քո ներսում ու կթունավորի քեզ: Մեռած երազանքը թույն է դառնում, ինչ արած: Արձակ դաշտերի աչքերը սուր են, մթին անտառի ականջն՝ ավելի...,- խորհրդավոր ասաց նա ու գոռաց:- Կանգ առ,- բայց մինչ ձեռքերը կնետվեին Ուլյայի ետեւից, ուլիկը դուրս թռավ նավակից ու լողաց դեպի բարձրադիր ափը, որից այն կողմ սկսվում էր անտառը:

Ուլյան անվարժ էր լողում, անճարակ, ոտքերով ու ձեռքերով ջուրը փրփրացնելով ու գլուխը բարձր, հոսանքը տանում էր նրան, շոտլանդական վանդականախշ փեշը պղպջակի պես փքվել էր ջրում, մազերը ցրիվ էին եկել՝ խանգարելով լողալ, ջրիմուռները քաշում էին ջրահարսի թեւերից, խոր գետափոսի ջրապտույտը ձգում էր ներքեւ, սուր շիթով ոտքերին էին խփում հատակի սառցասառն ակնաղբյուրները: Գլուխը մի քանի անգամ կորավ ջրի տակ, ու Պավել Մատվեեւիչին մի պահ թվաց՝ աղջիկն ափ չի հասնի: Ծիծեռնակներն ու ջրածիծառները սրընթաց թռչում էին ջրի երեսով, սուր ճչում էին ճախրող ճայերը, Ուլյան մեկ հայտնվում, մեկ անհետանում էր ջրի տակ, ու թվում էր թռչուններն օգնում են նրան, ինչպես յուրայինի, իսկ ջրի երեսին պահում են չռված աչքերով ձկներն ու տանում դեպի ափ: Վերջապես հող գտնելով՝ նա առանց հետ նայելու, շատ թեթեւ ու արագ, մի տեսակ տարօրինակ ցատկերով բլրի լանջով վազեց վերեւ, եւ ակնթարթորեն ծերացած Պավել Մատվեեւիչը «զաուերը» հանելու ու նրա ետեւից կրակելու վայրի, մղձավանջային, անհաղթահարելի ցանկություն զգաց:

«Սարսափելի է,- մրմնջաց նա՝ պատվելով սառը քրտինքով ու համարյա ուժով զսպելով ձեռքերի մղումը,- Աստված չանի՝ բողոքի հորը: Կարող է եւ սպանել»:

Սեւականաչ վանդականախշով թաց շորը փակչում էր Ուլյայի ոտքերին եւ ամբողջ ճախրող, բարեկազմ, կոկիկ, անկշիռ մարմնին: «Ա՛խ, հիմար,- խորթ տղայի մասին մտածեց Լեգկոբըտովը,- խղճուկ ձեռնասուն վիժվածք: Բայց ի՞նչ լավն է»:

Ուլյան դեռ այնքան ջահել էր, որ կոպիտ զգայականություն չէր արթնացնում հասուն, սրատես տղամարդու մեջ, բայց միտքը, որ այդ թեթեւ, անսանձելի, դեռ իր աչքերի զորությունն ու ճապուկ մարմնի նազանքը չիմացող աղջիկը վաղ թե ուշ բաժին է ընկնելու որեւէ մեկին, աներկրային ափսոսանքով ծակում էր որսորդի սիրտը: Եթե միայն կարողանա՛ր նորից ապրել կյանքն ու հայտնվեր Ալյոշայի տեղը, մի՞թե որեւէ ուժ կամ արգելք կխանգարեր իրեն, մինչեւիսկ Պելագեան,- Պավել Մատվեեւիչը հենց նրան էր պատմել ափին տեսած քարտեզի մասին,- մի՞թե մայրը կկարողանար հետ պահել նրան փախուստից, ինչով էլ այդ ամենը վերջանալու լիներ: Եթե միա՛յն... Ասենք, Պելագեյան չէր Ալյոշային արգելել իջնել գետափ: Նա ընդհանրապես իրեն այնքան տարօրինակ պահեց, որ նույնիսկ Լեգկոբըտովի համար անսպասելի էր, թեեւ իրեն ժողովրդական կանանց սրտերի գիտակ էր համարում:

- Է՛, թող մի քիչ էլ օրիորդի հետ նավակով ման գա, Մատվե՛իչ,- ձեռքերը կրծքին խաչելով՝ տարօրինակ գոհունակությամբ ասաց կինը, երբ նախօրեին նա ամենայն մանրամասնությամբ շարադրեց Ուլյայի եւ Ալյոշայի փախուստի պլանն ու լռեց՝ սպասելով բարկության պայթյունի:

- Ախր կփչացնի աղջկան:

- Դրա համար էլ աղջիկ է, որ փչացնեն,- քմծիծաղեց կինը:

- Շուտ չի՞:

- Ինչքան շուտ, Մատվե՛իչ, էնքան անուշ:

Ու Լեգկոբըտովը մի կերպ զսպեց իրեն, որ չհասցնի այդ լկտի կնոջ վարդագույն, տռուզ թշին, փոխարենը՝ սեղմեց ատամները ու հենց այդ պահին որոշեց, որ վաղն իսկ ընդմիշտ կհեռանա այդ զզվեցրած տնից ու կպաշտպանի Ուլյայի անմեղությունը, իսկ տղացուին ասաց, որ եթե առավոտյան իջնի գետափ, կթակի, ինչպես անառակ կատվին: Տղան ատելությամբ նայեց նրան, բայց խռովության փորձը չշփոթեցրեց հասուն տղամարդուն.

- Ու ոչ էլ ձեռներս կկեղտոտեմ քեզ վրա: Հայրը կանի: Կսարքի քեզ, ոնց որ պրիմուսն է սարքում:

...Նավաքիթը դիպավ ափին, որին Ուլյան հասել էր լողալով: Դարափը քսան մետրի չափ եւ այնպես զառիթափ էր, որ ոչ մեկը չէր կարող բարձ-

ռանալ: Մանավանդ՝ արագ: Պավել Մատվեեւիչը մի քանի ռոպե մտահոգ նայում էր վեր՝ փորձելով աստիճաններ կամ հողից դուրս պրծած արմատներ տեսնել, սակայն ծիծեռնակների ափամերձ բներից բացի ոչինչ չգտավ:

Խելագարություն է, մտածեց նա, այս ամենը թվացել է, ոչինչ չի եղել, ու ոչ մի աղջիկ էլ իր նավակը չի նստել ու չի փորձել որեւէ տեղ փախչել: Իր համար հանգիստ քնած է տանը, ու ոչ մի առանձնահատուկ բան էլ չկա այդ աղջնակի մեջ: Եվ ընդհանրապես ոչինչ չկա: Միայն անհամար բզեզներ ու ճպուռներ՝ ջրի երեսին: Իսկ թռչուններն անհետացել են, ասես մեկը վախեցրած լինի նրանց: «Մտապատրանքի մեջ եմ,- ախտորոշեց նա,- սատանան գիտի ինչեր եմ երեւակայել եւ ինքս էլ հավատացել այդ անհեթեթությանը: Ես ընդհանրապես հակված եմ հավատալ ամեն կարգի հիմարությունների: Բայց ի՞նչ է կատարվում ինձ հետ: Ինչո՞ւ չեմ կարողանում հանգիստ ապրել, քնել, երազներ տեսնել: Նստել, գոնե մի քիչ ննջել եւ ամենասովորական երազ տեսնել, թե չէ կխելագարվեմ անքնությունից: Իսկ գուցե արդեն խելագարվե՞լ եմ... Որտեղի՞ց եմ եկել: Ինչո՞ւ է այս ամենն ինձ այսքան հեռու թվում: Ինչո՞ւ չեմ ապրում, այլ ծիկրակում եմ կյանքին: Ի՞մ, ուրիշի՞: Ո՞վ է պատվիրել հետեւել բոլորին ու գրի առնել: Ո՞ւմ կամքն եմ կատարում: Ո՞ւմ եւ ինչո՞ւ եմ ծառայում»:

- Հեռանա՛լ,- տենդոտ շշնջաց նա:- Հեռանալ սրանցից: Հեռանալ ինչպես աղջիկն էր նկարել ավազին: Ո՛չ այդ հիմար տղեկի, ո՛չ իր, ինձ համար էր նկարել, ինքն էլ չիմանալով՝ նշան էր տվել, հուշում, գծագիր, պլան: Ես որ հաստատ կկրծեմ-կկտրեմ պարանը, որով ինձ կապել են: Անուշը, Պո՛լյա, շուտը չի, ժամանակինն է:

Նա բարձրացրեց թիերն ու խփեց ջրին: Նավակը մղվեց առաջ: Պավել Մատվեեւիչն ավելի ու ավելի արագ էր թիավարում, ասես վախենում էր չհասնի, կամ էլ հետապնդումից էր փախչում: Գետը օգնում էր, քշում էր նավակն իր նվազած ջրերով, խաղում նրա հետ, զվարճանում, եւ զմայլանքից զգուշությունը կորցրած որսորդը չափազանց ուշ լսեց սահանքի խշշոցը: «Միայն սա էր պակաս, որ ինձ շպրտի քարերի վրա,- մտածեց Լեգկոբըտովը, բայց մի տեսակ անտարբեր, առանց վախի, ու սկսեց թիավարել դեպի ափը:- Ոչինչ, կշրջանցեմ»: Հոսանքն արագացավ, ու Պավել Մատվեեւիչն զգաց, որ չի հաղթահարում. նավակը գնում էր ուղիղ քարերի վրա, որոնց փրփրակալած խփվում, մռնչում ու ներքեւ էր թափվում գետը: Ողջ ուժով լարվեց, բայց թույլ ձեռքերը պարտվում էին արագ ջրերին: «Ի՜նչ հիմարություն... շրջվել ու ջարդուփշուր լինել... քարաթափ... Որտե-

ղի՞ց այս սահանքը: Ախր լրիվ ծանծաղել էր: Ուլյան... երազը... թող...»:

Նա թողեց թիերն ու սկսեց նայել ինչպես է մոտենում սահանքը: Նավակը սլանում էր խելագար արագությամբ, ավելի ու ավելի արագ, ու Պավել Մատվեեւիչը զգաց, թե հոգում ինչպես է վախի հետ ծնվում մահվան ցնծությունը: Այդ ցնծությունը խորանում էր նավակի արագության հետ, որսորդի սուր աչքերը զննում էին տարածությունը՝ նկատելով ջրին խոնարհված ծառերն ու արդեն ընկած բները: Պերկեսը վախեցրեց մանրածկների վտառին, անհանգստացավ նեղիրան, գավազանի պես երկար բծավոր գայլածուկը: «Այ այսպես էլ ինձ է տանում կյանքը, չեմ ապրում, տանում են... Իսկ սահանքը պետք փակել: Մարդիկ կգան, կփախցնեն թռչուններին ու կխցեն սահանքը»: Ճռթոց լսվեց, Լեգկոբըտովը դուրս թռավ նավակից ու ջուրն ընկավ: «Ահա եւ վերջ, վե՛րջ»,- դաժան ու հաճույքով մտածեց նա ու վեր կացավ:

Ջուրը հագիվ ծնկներին էր հասնում ու ծիծաղելի խոխոջում էր: Ծերտավոր պերկեսները քթով բութ խփվում էին ոտքերին: Ոչ մի սարսափելի սահանք էլ չկար, ամենասովորական ծանծաղուտ էր, որը ձկնորսները հեշտությամբ անցնում էին, երբ ջուրը բարձր էր, իսկ նվազելիս ճոպանով էին քաշում նավակները:

Ծանծաղուտից այն կողմ գետը տարածվում էր եւ ընդհանրապես խոր չէր, բացվել էին բոլոր փոսերն ու ցամաքալեզվակները, նեխահոտ էր գալիս, ու խոշոր թռչուններ էին պտտվում երկու ափ նետված դիակների վրա՝ կառավարչի եւ նրա անսփոփ տիրոջ: Դա մի ֆանտաստիկ, երբեւէ ու ոչ մի տեղ չտեսնված բնապատկեր էր, որ պատահմամբ գտել էր Պավել Մատվեեւիչն ու կյանքում առաջին անգամ սարսափել բնապատկերից: Ջրի երեսին դողում էր խոնավ տաք օդը, որի մեջ տզզում էին ճարպոտ կանաչ ճանճերը, գարշահոտող ձկնային փորոտիքով սողում էին սպիտակ որդերը, թաց ավազի վրայով, սատկած տզրուկների ու փտած ջրիմուռների արանքով վերջին ուժերը լարած քարշ էր գալիս ծռված մուգգույն խեցգետինը: Այդ տարածությունն անսահման էր թվում, անկանգ ընդարձակվող, հիվանդ, աղետի էր ենթարկվել, օգնության էր կանչում ու միեւնույն ժամանակ նախազգուշացնում՝ ամեն ոք, ով կփորձի օգնել, ով ոտք կդնի այստեղ եւ իր հետքը կթողնի թաց ու չբեր հողի վրա, այստեղ էլ կկործանվի ու կդառնա եւս մեկ մեռյալ մարմին՝ արդեն պառկածների կողքին: Բայց ամենագլխավորը, ամենաապշեցուցիչը տեղանքի մահացու գեղեցկությունն էր՝ վայրի, ձգող, հոգին ստրկացնող: Պավել Մատվեեւիչը երբեք չէր մտածել, որ մահը, այլանդակությունը կարող են սքանչելի լինել, հուզող եւ

այն աստիճան գրավիչ, որ անհնար էր դիմադրել: Եվ այլեւս պետք չէր ոչ մի տեղ փախչել: Ուզում էր քայլ անել, բայց հանկարծ մի տարօրինակ միտք հասավ գիտակցությանը, ասես հոգատար մեկը՝ մոր նման կամ կորուսյալ հարսնացուի հուշեց՝ ոչ թե բնությունը, մշակույթն էր փռվել իր առաջ, եւ՛ դյութում, եւ՛ վանում, եւ՛ կարեկցության էր կոչում: Մարդկային ձեռքերի գործ: Եվ պետք չէ, որ ինքը գնա այնտեղ, որքան էլ ցանկությունը մեծ է:

Չիմացավ ինչքան տեւեց իր այդ կանգը, մտասուզումը մեռյալ գետի, դեպի մեծ լիճը եւ ավելի հեռուն՝ հյուսիս հոսող թունավորված ջրերի, երկու մարդկային մեռած մարմինների եւ այլեւայլ վախճանված ջրային ժողովրդի աշխարհը: Որսորդը դժվարությամբ հայացքը փախցրեց Նիտշչից ու նրա խորհրդավոր հովանավորից, հետո հպանցիկ նայեց քարերի մեջ խրված, մի քանի տեղից ծակված նավակին, դժվարությամբ հասավ ծանծաղուտին, որից այն կողմ ողջ տեսածը նրան երազ թվաց: Եվ իսկապես, ի՞նչ դիակներ կարող էին լինել այնտեղ: Ի՞նչ Նիտշչ, ի՞նչ իշխան Լյուպա, որին երբեք ոչ ոք չէր տեսել: Եվ ընդհանրապես, եղե՞լ էր այդ իշխանը, թե գեղջուկներն ու գեղջկուհիներն էին հորինել իրար վախեցնելու համար: Դարձյալ խելագարություն՝ անքնության ու քայքայված նյարդերի հետեւանք: Իսկ իրականությունն այլ էր. փախուստը չհաջողվեց: Մնում էր միայն, որ անտառից դուրս գար պրիստավ Ժլոբովն ու վերադարձներ գիմնազիա:

Արեւն արդեն բարձրացել էր երեք սոճիների վրա ու չնայած մշուշին, վառում էր: Նա հանվեց ու պառկեց ավազին: Քամին ողողում էր մարմինը, մտքերը ցրված ու ներկայից սարսափած՝ շրջում էին անցյալում:

Ահա անհաջող փախուստից վերադառնում են գիմնազիա, հայրենի քաղաք, ժամադրությունների գաղտնի տունը Ելիցում, որի մոտ մի անգամ անսպասելի հանդիպեց գավառական փիլիսոփա Ռ-վին, եւ նորից Պավել Մատվեեւիչի աչքի առաջ հառնեց գիմնազիայի ուսուցիչը՝ վիրավորական քմծիծաղով ու ճաքած շագանակագույն պենսնեով. ինչ ասես կտար որսորդը, որ այդ հանդիպումը չլիներ:

«Դու քեզ ինձնից խելացի՞ ես համարում, ի՞նչ է»:

Այն ժամանակ համարում էր: Իսկ հիմա չգիտեր, միայն զգում էր. որ ճամփաբաժանին է. անցյալը սպառել է իրեն, նորը դեռ չի եկել, ու պարզ չէր՝ կգա՞ արդյոք, եւ ինչպիսի՞ն կլինի, իսկ մինչ այդ ինքն ընկել է անժամանակության մեջ, եւ այդ վիճակը տառապանք էր նրա եռանդուն խառնվածքի համար: Բայց շատ ավելի, տոհմական արատի պես, չարչարում էր

սարսափելի կախվածությունը. ինչ էլ որ աներ Պավլիկ Լեգկոբընտովը թե՛ գրականության մեջ, թե՛ կյանքում, թե՛ որսի ժամանակ, ո՛չ բեռլինյան մշուշոտ, ձկնարյուն տիկնոջ համար էր անում, ո՛չ բարի ընթերցողների ու հիմար քննադատների, ո՛չ հանուն փողի կամ ճանաչման, նույնիսկ ոչ այս թեթեւոտն, արեւառ մարմնին ոսկեգույն աղվամազով աղջնակի, նույնիսկ ոչ ապագա փառքի համար. նրա բոլոր անձնական զոհաբերությունները մատուցվում ու խնկարկվում էին ի հաճույս մեկ ու միակ մարդու, նրա, որ մի օր իրեն վռնդեց կյանքից: Կամ, ավելի ստույգ՝ հրեց դեպի այդ կյանքը, ինչպես ջրի մեջ, ու ստիպեց լողալ:

Ուզում էր պարսավանքի կամ գովեստի խոսք լսել նրանից, որսալ խրախուսող կամ գոնե հետաքրքրված հայացքը, ոչ այն հազիվ նկատելի, անտարբեր գլխի շարժումը, որով Ռ-վն պատասխանում էր իր հարգալից խոնարհմանը, երբ երբեմն հանդիպում էին Տավրիկյանի փիլիսոփայական ակումբում: Եվ դրա համար նրան այնքա՜ն պետք էր այդպես էլ լույսաշխարհ չեկող վեպը: Սակայն ավարտելուց առաջ այդ վեպը պետք էր մինչեւ վերջ ապրել: Դրա մեջ էր Պավել Սատվեեւիչը տեսնում իր անձնական գրողական տարբերանշանը. նրան չընդունող մարդիկ գրականությունից էին գնում կյանք, իսկ ինքը՝ կյանքից գրականություն: Ու գալիս էր՝ ինչպես անտառում, այնպես, որ խոտը չտրորվի ոտքերի տակ: Գեղեցիկ էր գալիս, անաղմուկ, աննկատ: Այդպես միայն խոշոր ու խելացի գազանի ետեւից են գնում...

10

Իր չկայացած գրական խնամակալի հետ հաշիվ տեսնելու հնարավորությունը Պ.Մ. Լեգկոբընտովին ներկայացավ տասնչորս թվականի ձմռանը: Ռ-վն այդ ժամանակ երկու անգամ մեղանչել էր լուսավորյալ մայրաքաղաքի հասարակական կարծիքի դեմ. նախ՝ ցանկացած օրինավոր մարդու համար վիրավորական մի հոդված էր գրել, որտեղ կառավարությանը կոչ էր անում երկիր չթողնել քաղաքական վտարանդիներին, եւ երկրորդ՝ մի քանի ֆելիետոն էր հրապարակել Բեյլիսի գործի վերաբերյալ, որոնք կրթյալ ռուս հասարակությունը անհապաղ որպես հակասեմիտական կարդաց: Եվ չնայած այդ ամբողջ Ռուսաստանում դժվար էր գտնել մեկին, ով պետերբուրգյան Պրիապոսից լավ կիմանար ու կսիրեր ողջ հրեականը, ընդհուպ մինչեւ միկվայում կնոջ լվացման մանրամասները, դա բավական եղավ, որ սեռի փիլիսոփայի դեմ մարդկանց մեջ կուտակված անբարյա-

ցակամության, չարության եւ ատելության խառնուրդը պայթեր:

Ծատ բան հիշեցրին նրան ու չներեցին, եւ պետերբուրգյան ինտելիգենցիայի ուխտը՝ Ատտիկյան գաղտնիքների Կուրտի գլխավորությամբ հանդիսավորությամբ որոշեց Ռ-վին անբարեհուսության խարանով վտարել Կրոնափիլիսոփայական ակումբից: Այլախոհին նամակ ուղարկեցին՝ վեհանձնորեն առաջարկելով հեռանալ առանց աղմուկի ու սեփական ցանկությամբ:

- Չէ՛, կնախընտրեմ հեռացվել,- պատասխանեց փիլիսոփան՝ սովորության համաձայն հետճաշյա ժամին ծխելուց դեղնած մատներով շուռումուռ տալով հնագույն մետաղադրամները, եւ ակումբի հայրերը ստիպված էին իրենց ուսերին առնել ոստիկանական ծանր բեռը:

Առաջին անգամը ոչինչ չստացվեց, քանի որ քվորում չապահովեցին: Երկրորդ նիստին ավելի հիմնավոր պատրաստվեցին: Լեգկոբընտովը ներկա էր այդ խորհրդին ու մեծ հաճույք ստացավ սառը, այն էլ ուրիշի ձեռքով լուծված վրեժից: Սարսափելի երկար աղմկում ու կռվում էին, հիշում Ռ-վի վաստակը, մորմոքում նրա բարոյական անկման համար, կեղծավորություն էին անում, փրփրում, ասում լեզվին եկածը, բայցեւայնպես որոշումը, նախագահողի ճնշման տակ, կայացրին:

- Եթե նրան չհեռացնեք, ես կհեռանամ, իսկ ինձ հետ՝ ողջ խորհուրդը,- ժողովին սպառնաց Գերագույն Կրտածը:

Նրա ծյուրախտավոր կինը կկոցում էր աչքերը, այլ կորիֆեյներ լոռնետների միջով շաղափում էին հասարակությունը, ալեկոծվում էին գավառական հրեաները, ու միայն Պավել Մատվեեւիչը քվեարկեց բոլորի դեմ. որսորդի համար վեհանձնությունը հպարտությունից թանկ էր, ասենք, քվեարկության արդյունքի վրա էլ նրա ձայնը չէր կարող ազդել, բայց մի հարցում համոզված էր՝ Ռ-վն կիմանա ի պաշտպանություն իրեն տրված միակ ազնիվ ձայնի մասին ու չի կարող չկռահել, թե ում ձայնն է: Եթե դա վրեժ էլ էր, ապա նրբագույն, մեծահոգի, նախաբանը, թե վերջաբանը այդպես էլ չավարտվող վեպի, իրենց դիմակայության յուրատեսակ վերջակետ, որ դեռ այնքան էլ նկատելի չէր, բայց ավելի ուշ ի ցույց էր դրվելու: Պավել Մատվեեւիչը որոշ ժամանակից ի վեր հասկանում էր, որ ուսուցչի եւ աշակերտի դիմակայությունը լուծում ունի միայն ապագայում, որտեղից կենցաղային պատկերները միանգամայն այլ կերպ կտեսնվեն, քան իրենց տարօրինակ ժամանակներում, երբ բոլորն իրեն նայում են ինչպես մի անհեթեթ կերպարանքի, որը պատահմամբ մտել է ուրիշի տուն: Նա այդ ապագայով ապրում էր նույնքան, որքան ներկայի համար, ուղիներ էր

փնտրում, դարաններ սարքում, կածաններ բացում, քողարկվում, հոգատար ու հավաք էր, միայն թե իր երջանիկ անգիտության մեջ չէր պատկերացնի խելացի որսորդը, որ փիլիսոփաների ակումբն այդ պղտոր տարում բացարձակ չէր հետաքրքրում մերժված Ռ-վին: Եթե իմանար, վաղուց ներած կլիներ իր բոլոր վիրավորանքները, կհաշտվեր եւ կշարունակեր ապրել ու որս անել՝ հանգիստ թողնելով ուսուցչին, բայց իր անտառից դուրս ամեն ինչ չէ, որ տրված էր հետքախույզին:

Իրականում Ռ-վին բոլորովին չէր հետաքրքրում ով էր կողմ, ով դեմ քվեարկել, ով ինչ էր մտածում իրեն հեռացնելու մասին, ով եւ ինչ նպատակով էր ընդհանրապես հորինել այդ ամբողջ կատակերգությունը: Նա վախուց մտքից հանել էր իր հիմնած ակումբը, դուրս նետել իրենից, ազատվել էր, նախքան հեռացվելը, բայց դժբախտությունն այնուամենայնիվ գտավ նրան. որոշումից երկու շաբաթ անց, որի մասին հաճույքով գրեցին կայսրության բոլոր մշակութային թերթերը, տնից հեռացավ Ռ-վի սիրելի աղջիկը՝ Ասյան, որ ժամանակին բարեպաշտ մորը հորդորել էր. «Ամուսնացիր նրա հետ, մայրի՛կ, ամուսնացիր»՝ իր բարի սրտիկով կանխապես զգալով, որ այդ կարմրահեր, զայրացկոտ, գզգզված, անմաքուր շնչով ու փտած ատամներով մարդու մեջ այնքան սեր ու բարություն կա, որ կհերիքի բոլորին: Ու չէր սխալվել, որովհետեւ Ռ-վն նրան նույնիսկ հարազատ դուստրերից ավելի սիրեց, փաղաքուշ էր, քան նրանց հետ, որպեսզի, Աստված մի արասցե, երբեւէ չմտածեր, թե օտար է այդ տանը, եւ աղջիկն էլ նրան էր վստահում ամենանվիրականը, որ աղջիկները սովորաբար մայրերին են պատմում: Վստահում էր, եւ ահա հեռացավ՝ չկամենալով նույն տանիքի տակ ապրել հետադիմականի, խավարամիտի ու սեւհարյուրյակայինի հետ, եւ ահա այդ Ռ-վն ոչ մեկին ներել չէր կարող:

Ասյան մի անգամ արդեն հեռացել էր եկեղեցական համայնք՝ ոմն հայր Միրոսլավի մոտ, որը սպասավորում էր բժշկական ուսումնարանին կից եկեղեցում, եւ Ռ-վն այդ ժամանակ առաջին անգամ հասկացավ, որ կա մեկը, որ ավելին է աղջկա համար, քան ինքը, բայց այդ հեռացումը նրան չվշտացրեց: Հայր Միրոսլավը բարձրահասակ, նիհարակազմ մարդ էր՝ գեղեցիկ կոպիտ դեմքով, ծագումով մալոռուս էր՝ արեւմտյան նահանգներից, ունիաթականության անջնջելի փառով ու ոչ ռուսական կառչուն հայացքով: Փիլիսոփայական ակումբի նիստերին էլ էր գալիս: Լուռ նստում էր, այնպես, որ դժվար էր հասկանալ՝ հավանությո՞ւն է տալիս, թե՞ դատապարտում է այդ ամենը, իսկ իր տանը կիրակի օրերը երեկույթներ էր կազմակերպում՝ թեյով ու թխվածքաբլիթներով: Այնտեղ ամեն ինչ ավելի

պարզ էր, քան գոռոզամիտ ակումբում, ու տարբեր մարդիկ էին գալիս՝ աղքատ գրողներ, դասընթացների ուսանողուհիներ, ակադեմիայի ուսանողներ, կամավորականներ, ուխտավորներ, վերատեսուչն էլ էր այցելում, բարեմիտ մի մարդ՝ տանտիրոջ ուսումնակից ընկեր վանահայր Ֆեոֆիլը: Իր կոչման համար դեռ շատ երիտասարդ էր, նաեւ՝ սակավախոս, բայց երբ սկսում էր խոսել, բոլորը սկվում էին, եւ վանահոր հանդեպ այդ համընդհանուր ուշադրությունը զայրացնում էր Ռ-վին. որքան չէր սիրում բազմազավակ տերտերներին, նույնքան էլ միաբաններին չէր սիրում: Ֆեոֆիլի մեջ Ռ-վին բարկացնում էր ամեն ինչ՝ եւ՛ վտիտ մարմինը, եւ՛ թուխ, չորչորուկ ու միշտ քրտնած դեմքը՝ սեւ, ասես սոսնձած մազերով, եւ՛ ընդգծված հարգալիրությունը, եւ տերողորմյայի հատիկները գցող արագ, ճարպիկ, անմեղ մատները՝ նորածնի վարդագույն եղունգներով, բայց ամենից ավելի՝ աչքերը՝ միշտ խոնարհած, սակայն միշտ վեր նայող, նրանից էլ վեր, որ Ռ-վի համար ամենաթանկն էր աշխարհում՝ կենդանի, տաք մարդկային բնությունից: Ֆեոֆիլը նրան թվում էր մարմնացումն այն ուժի, որ մարտնչում էր այդ կյանքի դեմ ու ձգում իրեն, ինչպես աղանդավորներ են հավաքագրում: Ու դեռ ոչինչ, երբ վանք էին մտնում ծերունական հասակում կամ ամուրի քահանաները, բայց մոլորեցնելով մենաստանի բա՛նտը քաշել երիտասարդ, կենսախինդ տղամարդկանց ու կանանց, դատապարտել նրանց մարմնավորը հաղթահարելուն եւ գայթակղել սոդոմական մեղքով՝ այդ ամենը Ռ-վին ոճիր էր թվում կյանքի դեմ: Նա երբեմն դրա շուրջ վիճում էր Ֆեոֆանի հետ, եւ ուսանողների շրջանում ավանդություն կար, թե այդ վեճերը սովորաբար ավարտվում էին նրանով, որ փիլիսոփան խոսում էր ջերմեռանդ ու կրքոտ, իսկ Ֆեոֆիլն ի պատասխան ոչինչ չէր ասում, բայցեւայնպես, պարպվելով՝ Ռ-վն եզրակացնում էր.

- Իսկ գուցե եւ դուք իրավացի եք:

Բայց այդ լեգենդն ուսանողները իրենց վերատեսուչի հանդեպ անսահման սիրուց էին հորինել: Իրականում Ռ-վն երբեք ոչ մի հարցում չէր ընդունում Ֆեոֆիլի իրավացիությունը: Նա գիտուն միաբաններին եկեղեցու խոց էր կոչում եւ ուրիշ մարդկանց փնտրում այս աշխարհում: Ու երբ մի անգամ հայր Միրոսլավը,- որ հաճախ էր ուխտի գնում եւ ուխտավորներ բերում հեռու վայրերից՝ ինչ-որ աստվածավախ պառավներ, քոսոտ կրոնախեւեր, երանելի սրբամայրեր, շրջմոլիկներ, ինչ-որ Ֆեկլուշաներ ու Մարֆուշաներ,- Սիբիրից, թե Ուրալից բերեց *նրան,* Ռ-վն ցնծաց, ասես մարգարիտ էր գտել թրիքի կույտում: *Նրա* մասին այդ ժամանակ քչերն էին լսել ու քչերը գիտեին, ու երբ ներս մտավ, սկզբում ուշադրություն չդարձ-

րին. գորշ ու հասարակ գեղջուկ էր, աննշան, լուռումունջ, մանրիկ աչքերով, փոշեկոլոլ դիմագծերով, լուռ թեյ խմեց, երկրորդից հրաժարվեց, խուլ ձայնով ասաց «Շնորհակալություն» ու բաժակը կողքանց դրեց պնակին: Բայց ինչ-որ բան էր փոխվել սենյակում. մարդիկ լուռ էին, կարճահասակ էին թվում: «Ասես սենյակում ոչ մեկը չլինի,- ապշեց Ռ-վն:- Բոլորն անհետացել են»: Նույնիսկ Ֆեոֆիլն էր շվարել, խունացել ու կռացել: Բոլորն ընդունեցին *նրա* գերազանցությունը, *նա* անհասանելի բարձր էր բոլորից, չնայած առանձնակի ոչինչ չէր խոսում: Իսկ դուրս գալուց առաջ նայեց Ռ-վին: Ոչինչ չգիտեր նրա մասին, ոչինչ չէր կարդացել, չէր լսել քահանայապետ Անտոնիի հետ նրա երկպառակությունների մասին, բայց այնպես նայեց, որ կայծակը խփեց փիլիսոփային:

- Ո՞վ էր,- տանտիրոջը հարցրեց Ռ-վն:

- Աստծու մարդ,- պատասխանեց հայր Միրոսլավը:

Դյուրահավատ դեմքը շողում էր ու կորցրել էր խախոլական խորամանկությունը: Սկսեց պատմել, թե ինչպես է անցած ամառ վանամոր հետ այցելել նրան, ինչպես է գյուղում իրենց նավակով տարել գետի մեջտեղը, ու նավակն ինքն իրեն լողացել է հոսանքով վեր:

Բայց Ռ-վին պետք չէին այդ ծիծաղելի հրաշքները: Նրա համար առանց այդ էլ ամեն ինչ պարզ էր. Ռուսաստանը Պետերբուրգ էր ուղարկել իր մարգարեին: Հսկա լռակյաց երկիրը պատասխանել էր վստահ, ուժգին, անվրեպ, այնպես, որ ոչ մեկի մեջ կասկած չմնա իր ուժի հանդեպ:

Բայց Աստծո մարդուն ավելի սիրեց Ասյան:

- Ասես պրկված աղեղ լինի,- պատմում էր խորթ հորը, ու դեմքը շողում էր:- Երբ խոսում է Աստծո մասին, ուզում ես նստել ոտքերի տակ, գրկել ու լաց լինել: Չեմ հասկանում՝ ինչու է այդպես: Գեղեցիկ չի, դեմքը անհետաքրքիր է, ձայնը՝ ցածր, պահվածքը՝ կոպիտ, բայց շատ տաղանդավոր է: Տաղանդավոր է բոլորից, ում տեսել եմ: Նույնիսկ քեզնից: Կարելի է հետեւել նրան ու գրի առնել, ինչպես ուսուցչի խոսքը: Բայց այնքա՜ն տարօրինակ է: Մի անգամ թեյ էինք խմում, ձեռքն իջեցրեց մուրաբայի սկահակի մեջ, ու սեղանի շուրջը նստածները սկսեցին հերթով լիզել նրա մատները: Իսկ ինձ հարցրեց. «Ի՞նչ է, շա՞տ հպարտ ես»:

- Իսկ դո՞ւ:

- Ես չէի ուզում, բայց հետո վերցրի ու լիզեցի ձեռքը:

Ասյան լաց եղավ, ու Ռ-վն գրկեց նրան: Ծոյում էր մարմնեղ, հիվանդոտ աղջկա մեջքը, որին դեռ նիհարիկ, քերծած ոտքերով դեռահաս էր հիշում, որին դաստիարակել էր, իր հետ տարել դեկադենտական հավաքույթների,

հիսնունհիինգին պաշտպանել ոստիկանությունից, երբ նրան ուզում էին քաշել հեղափոխական ընդհատակ, եւ աղջիկը միամիտ դյուրհավատությամբ տվել էր իր հասցեն անլեգալ գրականություն առաքելու համար՝ չհասկանալով, որ խառնակիչների թիրախը ոչ թե ինքն է, այլ հայրացուն. այդ քաղաքական կուրտերն ուզում էին այնպես անել, որ բանտարկեն աղջկան, դրանով իսկ ստիպելով, որ ինքը հանդես գա կառավարության դեմ: Բարեբախտաբար ամեն ինչ հաջող ավարտվեց, եւ նա ոչինչ չբացատրեց Ասյային: Ծատ փորձանքներից էր պահպանել նրան, թվում էր՝անգիր գիտի աղջկան, ու երբեք չէր պատկերացնի, որ այդպիսի հակում ու նվիրում կունենա առ հավատ: Հենց միայն դրա համար կարող էր սիրել ու ներել իրեն անծանոթ մարդուն: Եվ այդ մատները, որ աղջիկը պետք է լիզեր, չէին խռովում Ռ-վին. նա չէր ընկալում ու չէր ընդունում հավատն առանց մարմնականի եւ առանց անհատի: Դավանանքն այնտեղ է, որտեղ կա ուսուցիչ ու նրա մարմինը. որտեղ կա Աբրահամ, Մովսես, Պյութագորաս, Դավիթ արքա, Սողոմոն, Բուդդա, Մուհամեդ, Հովհաննես Մկրտիչ, Հիսուս, հրեական ցաղիկ կամ ծակող հայացքով այդ մութ գեղջուկը, որի ետեւից, բոլորին լքելով, կարող է գնալ իր Ասյան ու լիզել ձեռքերը: Իսկ թե ուսուցիչն ինչպես է հասնում նրան, որ աշակերտները հետեւեն իրեն, գաղտնիք է. կամ հավատում ես մարդուն, ընդունում նրան այնպիսին, ինչպիսին կա, ու մինչեւ վերջ գնում նրա հետ, կամ միանգամից հեռացիր, որ հետո ուրացող կամ դավաճան չլինես: Միջին չկա:

Նույնիսկ երբ լուրեր հասան Ռ-վին, թե ուխտավորն ապրում է քահանայի կնոջ եւ այլ կանանց հետ, ոչ միայն չշփոթվեց, այլեւ հավատաց այդ լուրերին, բարի նշան տեսավ դրանց մեջ, քանզի ատելով ճգնակեցությունը՝ փառաբանում էր կնոջ ու տղամարդու ցանկացած կենակցություն, միայն թե բռնություն ու պարտադրանք չլիներ: Եկեղեցու համար ապօրինի սերը նրա ընկալմամբ մեղք չէր, շնացում չէր, այլ արձագանքն ու կերպը այն հինավուրց, հինկտակարանային ժամանակների, երբ թագավորները բազմաթիվ կանայք ու ստրկուհիներ ու հարճեր ունեին: Եվ այդ ամենը ընդունված կարգ էր, ամեն ինչ սուրբ էր ու սքանչելի, եւ նա երազում էր, որ այդ անցյալը վերադառնա, որովհետեւ մարդն իր պատմությունը շրջաններով է ապրում, հակառակ դեպքում վաղուց հասած կլիներ վերջին. չէ՞ որ պատմությունը շատ կարճ ու տնտեսող է եւ քիչ տարածություն ու ժամանակ ունի: Պատմությունը մարդկանց խաբում է նրանով, որ ցույց է տալիս իբր նորը, բայց իրականում նոր ոչինչ չկա ու չի կարող լինել: Ամեն ինչ շատ մոտիկ է՝ Եգիպտոսը, միջնադարյան Ռուսիան, Իսրայելը, եւ ինչ կատար-

վում է, արդեն եղել է, միայն թե մարդիկ դա չեն հիշում, ուզում են հավատալ, որ իրենք հայտնագործող ու առաջամարտիկ են...

Իսկ հետո ծանր հիվանդացավ Ռ-վի կինը. կաթված էր տարել՝ ոտքերը թուլացել էին ու դժվարությամբ էր խոսում: Վրա հասավ Ռ-վի կյանքի ամենասարսափելի, ամենասեւ շրջանը: Մոռացել էր Ասյայի, նրա որոնումների ու տառապանքների մասին, մանրախնդիր էին թվում եւ՛ գրական վեճերը, եւ՛ վիրավորանքները, եւ՛ գժտությունները եկեղեցականների հետ, եւ՛ հարձակումները հրեաների վրա, եւ՛ դեկադենտների, եւ հեղափոխականների դեմ. ողջ կյանքը փոքրացել, կծկվել ու հանգում էր մեկ բանի՝ այսօր ինչպես է կինը, որն իր վրա էր առել ամուսնու բոլոր մեղքերը ու հատուցում էր: Նրան տանում էր բժիշկների մոտ, որոնցից մեկը, ճակատագրի ինչ-որ անողոք հեգնանքով, իր աշակերտուհիներից մեկն էր, բայց ոչ Ելիցի, այլ Բելիի գիմնազիայի՝ իշխանուհի, վիրաբույժ, պոետ, բայց, ինչպես հետո պարզվեց, ինքն էլ տառապում էր լուսնալույսի հիվանդությամբ: Նա էլ ոչնչով չկարողացավ օգնել, ոչնչո՛վ: Եվ մյուսներն էլ չօգնեցին, միայն փող էին շորթում, խարդախում, խաբում ու ստում, եւ դրա հետ մեկտեղ փորձում էին գիտական զրույցներ վարել նրա հետ ու կարդում էին իրենց անճարակ բանաստեղծությունները: Եվ նա ստիպված էր քաղաքավարի լինել, անհոդաբաշխ ինչ-որ բան քրթմնջալ, իսկ երբ լրիվ անտանելի էր դառնում՝ հրաժեշտ էր տալիս՝ պատճառ բռնելով հոգնածությունը, ու նրանք հեռանում էին վիրավորված, բայց փողն ամեն դեպքում վերցնում էին: Ուրիշ ինչպե՞ս. պրոֆեսորնե՛ր են, ինտելիգե՛նցիա: Իսկ նա միայն կնոջ մասին էր մտածում: Զգում էր ինչպես է հոգնել հույսից հուսահատության մեջ ընկնելուց, ինչպես են հյուծվում ուժերը, ու չգիտի՝ որտեղից ուժ առնի: Եվ այստեղ կրկին հայտնվեց Ասյան:

- *Նա* հետամտում է ինձ:

Հայրացուին չասաց, այլ մորը: Եվ հիվանդությունից ու երեխաներից տանջահար կինը նորից անկողին ընկավ: Ռ-վն այդ ամենը նրանից իմացավ ու ցնցվեց, ինչպես մտրակի հարվածից:

- Չի կարող պատահել,- պատասխանեց Ասյային:- Եթե միայն ինքդ չուզեիր:

Ասյան շնչահեղձ եղավ վիրավորանքից, իսկ նա աղջկան նայեց լրիվ ուրիշ աչքերով եւ իր համար էլ տհաճ սթափությամբ մտածեց՝ ի՞նչ կարելի է սպասել սրա նմանից: Տարիներն անցնում էին՝ ո՛չ ամուսին, ո՛չ երեխաներ, վեստալուհի, պառաված օրիորդ, որի գլխում խառնվել էին չբավարարված ցանկություններն ու իրականությունը: Աղջիկներին պետք է շուտ կնության

տալ: Հենց պատրաստ են լինում մանկածնության, անմիջապես պսակել որեւէ տարեկցի հետ, քանի դեռ նրանք էլ չեն փչացրել իրենց մարմինները հասարակաց տներում կամ ծեռնաշարժությամբ: Պսա՛կել՝ օրենքով, ստիպողաբար, իրենց իսկ երջանկության եւ համընդհանուր բարօրության համար, հանուն առողջ, չփչացած սերնդի: Հակառակ դեպքում գերհասունանում են, ու նրանց հետ ինչ-որ բան է կատարվում, ինչպես Ասյայի հետ: Քարշ է գալիս գրողների հետ, հետո հեքիաթներ գրում իր գրական տետրակներում, թե հիվանդ է սիֆիլիսով, որ պարգեւել է քնած ժամանակ իրեն բռնաբարած հայրացուն: Բոլորին, չգիտես ինչու, ահավոր հետաքրքրում էր նրա անձնական կյանքը, բոլորը խցկվում էին այնտեղ. Ռ-վն թքած ուներ ինչ են խոսում իր մասին եւ ինչ անհեթեթ լուրեր են տարածում, ոչնչով իր կյանքը պաշտպանել չէր կարող՝ հետո կպարզեն, գուցե եւ այդ պատճառով էր հարազատություն զգում այն հեռավոր, անծանոթ մարդու հետ, ում մասին անհամեմատ ավելին էին բամբասում՝ չհասկանալով, չուզելով, չկարողանալով հասկանալ նրան: Երեւի երբեւէ կծնվի, կգա նա, ով ամեն ինչ կհասկանա ու կբացատրի, բայց ոչ այս մեռած քաղաքում, այլ ինչ-որ տեղ Սիբիրում կամ որեւէ մեծ մենաստանի մերձակա մի փոքրիկ ռուսական քաղաքում: Միայն թե դա իր կյանքի օրոք չի լինի:

Իր կյանքում Ասյան էր, ու չգիտեր՝ ինչ անի նրա հետ: Միայն ընկերոջը՝ հայր Պավելին բողոքեց, որ Ասյան կորցրել է սրատեսությունը, անատամ է դարձել, անհամացել է, իսկ հայր Պավելը մխիթարեց, թե պետք է ներողամիտ լինել եւ մարդկանցից չպահանջել ավելին, քան կարող են տալ: Իսկ ինքը բարեկամություն էր անում «հայրիկի» հետ՝ Նովոսյոլովի, որին Ռ-վն տանել չէր կարողանում, ու ոչ թե այն պատճառով, որ Նովոսյոլովը մոլեռանդ հետապնդում էր սիբիրցի եկվորին, եւ ում հետ ասես չէր մտերմանում՝ իր ատելությունը կիսելով, այլ որ կյանքից ոչինչ չէր հասկանում, ու գլխավորը՝ չէր հասկանում՝ ում է ծառայում, եւ ով է օգտագործում իրեն: Ռ-վին ընդհանրապես ապշեցնում էին այդ մարդիկ, որ իրենց հայրենասեր, միապետական, ուղղափառ էին կոչում, բայց անում էին նույնը, ինչ հեղափոխականները, եթե ոչ ավելին՝ քանդելով իրենց տունը: Ա՛խ, ինչ ծանր էր ապրել մի երկրում, որտեղ ամեն ինչ այդ աստիճան խառնվել էր իրար...

Իսկ հետո ուխտավորն ու հայր Միրոսլավը գժտվեցին, սակայն պատճառը Ռ-վն չիմացավ, թեկուզեւ փորձում էր պարզել: Ոստիկանությունը նորից սկսեց հետապնդել ուխտավորին, եւ նա առժամանակ անհետացավ, ասում էին ուխտագնացության է մեկնել Սուրբ երկիր եւ այլեւս Պետերբուրգ չի վերադառնա, բայց նա կրկին հայտնվեց ու կրկին անհետացավ, ու

նորից թերթերում շատ էին գրում նրա մասին, իսկ հայր Միրոսլավը հիվանդացավ տուբերկուլյոզով, ու նրան տեղափոխեցին սպասավորելու կայսրության արեւմտյան ծայրագավառում, որտեղ ծնվել էր, սակայն բոլորն այդ տեղափոխությունը վերագրում էին գեղջուկի խարդավանքներին: Համայնքը քայքայվեց, եւ Ասյան վերադարձավ տուն: Բայց որքան էլ Ռ-վն փորձեց խոսել նրա հետ, աղջիկն ասես փակվել էր իր խեցու մեջ, եւ ի պատասխան ոչ մի բառ չէր ասում: Մորը չէր խնամում, ապրում էր իր կյանքով, որտեղ ոչ եկեղեցի կար այլեւս, ոչ հոգեւորականություն: Հակառակը, ավելի ու ավելի հաճախ էր դատափետում այն, ինչին առաջ խոնարհվում էր՝ եւ՛ միաբաններին, եւ՛ քահանաներին, իսկ ամենից ավելի՝ իր նախկին առաջնորդին: Գնում էր դասընթացների, ու Ռ-վն սկսեց նկատել, որ ինչ-որ վատ բան է կատարվում նրա հետ. հայտնվել էին առնանման ընկերուհիներ, մութ խոսակցություններ սկսվեցին, կեղտոտ հպումներ: Ռ-վն ողնաշարով զգաց իր տանը հայտնված լուսնային ցեղը. դրանք այդ ժամանակ խիստ բազմացել էին՝ առնանման կանայք, որ վարակում էին շուրջն ամեն ինչ:

Դա մի ժամանակ էր, երբ բոլորն ընդունում էին նրան. փառքի, հարստության ու մեծ հարգանքի ժամանակն էր եկել: Բայց դա չէր ուրախացնում: Աղոտ զգում էր, որ գլուխ չի գալիս իր գլխավոր ստեղծագործությունը՝ ընտանիքը: Եվ այդ դժբախտությունը սկսվեց Ասյայից: Կար ժամանակ, որ օրիորդները տղամարդկանց հետ փախչում էին տնից՝ խայտառակելով ծնողներին ու դաստիարակներին: Դրանից չէր վախենում: Եթե նույնիսկ աղջիկը վերադառնար ապօրինի երեխան գրկին: Կընդուներ երեխային, որպես թոռ կընդուներ եւ իր օրինությունը կտար: Բայց Ասյան հեռացավ տնից եւ հեռացավ՝ արյամբ ու ոգով ոչ ռուս կնոջ հետ ապրելու՝ պղծելով ինչ ամենաթանկն էր նրա համար՝ կյանքի ընտանեկան, տաք, տոհմական սկիզբն ու էությունը: Երեւի եթե մտածեր՝ ինչպես ավելի ցավոտ խփել նրան, ապա ճիշտ այդպես կվարվեր, բայց հատկապես ցավոտ էր, որ այդ ամենը դիտմամբ չէր արել: Բայց առավել սարսափելի էր դառնում, երբ մտածում էր, որ այդպիսի բան կարող է կատարվել նաեւ մյուս տնեցիների հետ: Նրանց, որ իր արյունից էին:

Այդ պահին կտար իր բոլոր գրքերի հաջողությունը, իր ողջ սկանդալային փառքը, ողջ ենթադրվող գրական անմահությունը, որ իր երեխաները երջանիկ լինեն: Թեկուզ ոչ բոլորը, գոնե մեկը, գոնե մե՛կը, բայց դաժան, չար, համառ կանխազգացումն ասում էր, որ իր տնից ոչ ոք երջանիկ լինել չի կարող...

Եվ հուսահատության այդ րոպեներին նա դուրս էր գալիս տնից ու տան-

ջահար լինելու աստիճան դեգերում պետերբուրգյան փողոցներում, շրջում Նեւայի երկայնքով, նայում անցորդների դեմքերին, երբեմն, մրսելով,- շատ արագ էր մրսում,- մտնում էր Ռեմիզովի մոտ՝ տաքանալու, նրա կնոջը բացատրում լվացքի ու ցայելու տարբերությունը, ինչպես ծմեռնամուտին ավելի լավ սոսնձել պատուհանների շրջանակները, սփոփանք էր գտնում տան այդ տարօրինակ, գազանի խեղդուկ որջ հիշեցնող տարածության մեջ եւ ձեռքերը երանությամբ վառարանին պարզելով՝ ասում տանտիրոջը.

- Երբեք չեմ հասկացել մեր Տիրոջ խոսքը Լաոդիկեի եկեղեցու հրեշտակին: Ի՞նչ է նշանակում՝ ա՛խ, եթե դուք տաք կամ պաղ լինեիր: Բացատրեք, ի՞նչ վատ բան կա նրա մեջ, որ մարդը տաք է: Ինչո՞ւ անպայման թքել տաք մարդկանց վրա: Աշխարհը տաք մարդկանցով է կանգուն, նրանցով է շարունակվում կյանքը:

- Բայց դուք հո՛ տաք եք,- պատասխանում էր Ռեմիզովը՝ հիանալով նրանով ու ժպտալով մանկական փքված շրթունքներով:

Ռ-վն զայրանում էր, վիճում, թեեւ հոգու խորքում հաճելի էր, որ Այլոշան այդպես է մտածում իր մասին, բայց ոտքով կամ կառքով տուն վերադառնալիս կրկին զգում էր կյանքի տխրությունն ու անիմաստությունը: Մի անգամ այդ տխրությունը հասցրեց նրան, որ մոլորվեց Պետերբուրգում, ինչպես խուլ անտառում: Կանգնել էր Նեւսկիում, նայում էր շուրջն ու չէր ճանաչում մեծ քաղաքը, ասես օտարերկրացի լիներ, ասիացի, սեւ արաբ: Անցորդները հրմշտում էին, կառապանները գոռում էին վրան, իսկ նա մոլորված այս ու այն կողմ էր նայում, ու ձեռքերը դողում էին հուսահատությունից: Մի կիսաղջնակ-կիսաղջիկ գիմնազիստուհի, իր դուստրերի տարեկիցը, մոտեցավ ու հարցրեց.

- Օգնե՞մ, պապի՛կ:

Աղջնակը բարի գորշ աչքեր ուներ, որ նայում էին վստահությամբ ու կարեկցանքով, ու փիլիսոփայի սիրտը թեթեւացավ:

- Մի քիչ ուղեկցեք ինձ, սիրունի՛կ օրիորդ,- փաղաքուշ ասաց Ռ-վն՝ հենվելով նրա ձեռքին:- Չե՞ք շտապում: Եվ մի՛ շտապեք: Մի՛ շտապեք մեծանալ, աղջի՛կ. ոչ մի լավ բան չկա այնտեղ: Ա՛խ, ինչ լավն եք: Ինչ հաճելի դեմք ունեք, նրբիկ: Եվ արտակարգ աչքեր: Եվ ինչքան են սազում ձեզ պեպենները: Եվ արագաշարժ եք, ճարպիկ: Այ ես ոչ մեկին չեմ նախանձում, բայց ձեր ծնողներին կնախանձեի: Դե, դե, ի՞նչ եղավ: Լա՞ց եք լինում: Մի՛ լացեք: Պետք չէ լացել, սիրունի՛կ օրիորդ: Ավելի լավ է աղոթեք մեղավորիս համար: Ինձ համար, իմ ծանր հիվանդ կնոջ, երեխաներիս ու թեթեւամիտ խորթ աղջկաս համար: Բոլորի համար աղոթեք:

Մաս II

ԱՆՁՐԵՎ ՏՈՒՐ, ՏԵ՛Ր

1

Վերա Կոնստանտինովնա Կոմիսարովային ընտանեկան առաջին օրվանից հուզում էր ամուսնու փողերի ճակատագիրը, որոնց բացակայությունը թույլ չէր տալիս գրական սալոն կամ սեփական պատկերազարդ ամսագիր բացել, եւ եթե իմանար, որ ամուսինը տարիներ շարունակ դրանք տալիս է մի խղճուկ քաղաքական կոմունայի կարիքները հոգալուն, ինչպիսիք ինը հարյուր հինգ թվի խառնակությունից հետո այնպես էին բազմացել, ասես մի ահռելի գորտ ձկնկիթ լիներ դրած Նեւսկի պողոտայում, ապա կինը հաստատ հիստերիա կբարձրացներ, կընկներ ցնցումների մեջ, կնետվեր Ծելոմ գետը կամ ապահարզան կտար ամուսնական անհավատարմության համար: Իհարկե, դա փոքր-ինչ նախընտրելի էր, քան եթե ամուսինն այդ փողը տար իր նախկինին, բայց կոմունան ցանկացած ծախու կնոջից շատակեր դուրս եկավ եւ՝ ավելի անշնորհակալ, ու միակ բանը, որ կարող էր սփոփել Վերա Կոնստանտինովնային այն էր, որ կոմունիստներն ամուսնուն նախասենյակից ներս չէին թողնում: Փողը ներողամտաբար վերցնում էին, բայց հասկանալ էին տալիս, որ նրա մուծումները լուրջ մարդկանց իսկական նվիրատվությունների համեմատ դատարկ բան են, ու՝ վերջ: Կոմիսարովը քանիցս խնդրել էր, որ իրեն փորձեն իսկական գործի մեջ, բայց նրան դժկամորեն ու ոչ այնքան համոզիչ, բացատրում էին, թե նախ պետք է վաստակի այդ վստահությունը, ինչից Վասիլի Խրիստոֆորովիչն ուղղակի պայթում ու պահանջում էր, որ ռումբ տան իրեն:

- Կոմունան անհատական տեռորով չի զբաղվում,- մեղմ, բայց հաստատուն, ինչպես քմահաճ երեխային, ասացին Կոմիսարովին:- Ուզում եք հերոսանալ, ընդունվեք էսեռների մարտական կազմակերպություն:

- Փորձել եմ, չվերցրին,- անկեղծորեն խոստովանեց Վասիլի Խրիստոֆորովիչը ու կախեց գլուխը:

- Պետք չէր հեռանալ պալատից: Այնտեղ հաստատ ձեր կարիքը կլի-

ներ: Իսկ հիմա ո՞ւմ եք պետք մեզնից բացի: Այնպես որ, հանգիստ նստեք, աղավնյա՛կս, եւ արեք՝ ինչ կասեն:

Կողմնակի դիտորդի դերը վիրավորում էր մեխանիկին, բայց հլու-հնազանդ կատարում էր բոլոր հանձնարարությունները, չնայած երբեմն մտքով անցնում էր, որ հիմարություններով է զբաղված, եւ կոմունիստներն էլ ողջ ճշմարտությունը չեն ասում, հետ են պահում լուրջ գործերից՝ վախենալով նրա ազնվությունից ու անկաշառությունից, որպես ավելորդ ու վտանգավոր հատկություններ: Կուզեր դրա մասին խոսել որեւէ մեկի հետ, բայց չկար այդ մեկը, թերեւս բացի Լեգկոբըտովից: Որսորդը թեկուզեւ մեծ հաշվով շտրեյկբրեխեր էր, բայց գրողներին ներելի է աշխարհայացքի մշուշը, եւ կյանքի ընդհանուր հարցեր Վասիլի Խրիստոֆորովիչը Պավել Մատվեեւիչի հետ քննարկում էր ու չնայած հաճախ համաձայն չէր լինում, նրա մտքերից իր եզրակացություններն էր անում:

- Բոլոր կուսակցությունների քաղաքական ծրագրերն էլ ծիծաղելի ու չնչին են,- ասում էր նա՝ Լեգկոբըտովների պատշգամբում հետուառաջ անելով, եւ նոր ներկած հատակի տախտակները կենդանի արարածների պես ճռնչում ու դողում էին ոտքերի տակ:- Ի՞նչ են ուզում փոխել՝ պետական կա՞րգը, սեփականության իրավո՞ւնքը, վերացնել գրաքննությո՞ւնը, քաղաքական ազատությունն՞ր տալ,- տաքացած հարցաքննում էր գրողին ու պատասխանի չսպասելով՝ շարունակում:- Մարդկությունը գոյության այս աստիճանին սպառել է իրեն, դրա համար էլ անիմաստ է բարեփոխել հասարակությունը, նորոգել բարքերը, զբաղվել բարեգործությամբ, լուսավորությամբ, ողորմություն բաժանել: Հետադեմ, անկատար, նվաստացուցիչ է մարդկային բնությունն ինքը, որի վերջը շուտով կգա: Նրան կփոխարինի նորը, որտեղ մարդն ազատ կլինի մարմնի իշխանությունից, ու ոչ ոք չի հասկանա, թե նախորդ սերունդներն ինչու էին այդպես տարօրինակ ապրում: Ինչո՞ւ էին լալիս, դավաճանում իրար, ինքնասպան լինում սիրո համար ու տգեղ, աննպատակահարմար բազմանում: Դա իսկական Երկնային արքայություն կլինի, որ նվաճվում է ուժով, եւ որը քրիստոնեության քուրմերը ուզում էին գողանալ մեզնից:

- Կոմս Տոլստոյի՞ն եք կարդում, աղավնյա՛կս,- կարեկցանքով հարցրեց Լեգկոբըտովը:- «Կրեյցերյան սոնա՞տն» եք սերտում գիշերները:

- Չէ՛, չէ՛: Նրա այդ քաղցր շփոթն ավելի վատ է,- ձեռքը թափ տվեց մեխանիկը:- Ավելի լավ է Ֆյոդորովը: Մեծ խառնակիչ էր, անգետ եւ ընդհանրապես հետամնաց մարդ, բայց, որքան էլ տարօրինակ է, հենց նա հասկացավ մի կարեւոր մեխանիկական երեւույթ, որը ոչ ոք չի հասկանում:

Նույնիսկ դուք՝ ձեր հիմար քմծիծաղով: Գերագույն նպատակներին հասնելու համար մարդկային ցեղին էներգիա է պետք, եւ չկա այլ ճանապարհ սեռական սիրո վրա անիմաստ ու բացարձակ անարդյունավետ վատնվող ուժը կարեւոր խնդիրների լուծմանն ուղղելուց բացի: Հենց դրա համար էլ ասում եմ, որ պատանության տարիներին անգիտակցաբար գտել եք ճիշտ ուղին. այսուհետ էլ պետք է այդպես ապրել: Ոչ թե տառապեք կնոջ սիրո կամ դրա բացակայության պատճառով, այլ ձեզ ենթարկեք ավելի կարեւոր ու արժանավոր նպատակների: Հայրերին արդեն հարություն չես տա, բայց երեխաներին կարելի է փրկել, իսկ դրա համար պետք է վերացնել հիվանդությունները, աղքատությունը, դադարեցնել պատերազմները, որոնց հիմքում տոփանքն ու տիրելու ծարավն է:

- Իսկ դուք, սիրելի՛ս, պարզվում է՝ աղանդավոր եք,- տհաճ ծիծաղեց Պավել Մատվեեւիչը:- Այ չեւրեկներն էլ նույնն են ասում ու չեն սիրում տերտերներին: Բոլորի մտքին հովատակների բեռը թեթեւացնելն ու կրտածներին լծելն է: Միայն թե մատակներին չեն հարցրել՝ համաձա՞յն են:

- Հարցնելու կարիք էլ չկա. ինչքան փորձանք կա՝ կանանցից է:

- Իսկ ի՞նչ եք անելու առանց կանանց:

- Հենց այդպես էլ ապրելու եմ:

- Ոչ մեկին չի հաջողվել խաբել բնությանը,- խրատական խոսեց Լեգկոբըտովը:- Ի դեպ, մի քահանա գիտեի, որը կարողանում էր աղոթքով հարություն տալ մեռյալներին: Կույս էր: Եթե նրա դափնիները ձեզ հանգիստ չեն տալիս...

- Գիտեմ, ում մասին եք ասում, ու չեմ ուզում որեւէ ընդհանուր բան ունենալ այդ խավարամոլի հետ,- կտրեց Կոմիսարովը:- Տերտերներն ընդհանրապես կապ չունեն այս ամենի հետ: Դա կեղծ ուղի է, որը կարող միայն շեղել ճշմարիտ նպատակից: Մարդկությունն արդեն տասնհինգ դար Քրիստոս է պաշտում, եկեղեցիներ, վանքեր կառուցում, մեղանչում, ապաշխարում, նորից մեղանչում, եւ ի՞նչ, մենք դրանից ավելի լավն ու բարի՞ ենք դարձել: Մի՞թե կարելի է մտածել, թե այդ ժամանակն անցել է հանուն մարդու, եւ իզուր չի անցել:

- Չէ, հաստատ տոլստոյական եք: Բայց ինչո՞ւ եք կարծում, թե անպայման պիտի ավելի լավը դառնանք: Ուղղակի չդառնանք ավելի վատը:

- Ավելի վա՞տը: Միլիոնավոր մարդիկ տառապում են, դեգերում խավարում, չքավորության մեջ ու մեռնում կանխահաս հիվանդություններից,- դժվարությամբ զայրույթը զսպելով՝ խոսեց Կոմիսարովը:- Մայրերը գյուղերում թաղում են ամեն երկրորդ երեխային, եւ դա սովորական է համար-

վում: Աշխարհում մարդկանց մեծ մասը մինչ օրս չգիտի ինչ է էլեկտրականությունը, բուժօգնությունը, երկաթուղին, մեքենաները: Եվ դա շարունակվելու է, քանի դեռ բնության մասն ենք ու չենք ազատագրվում նրա իշխանությունից: Բնությունը մեր թշնամին է: Բնությունն աղետներ է ուղարկում մարդուն՝ երաշտ, սով, ջրհեղեղ, երկրաշարժ, մեզ կախման մեջ է պահում իրենից, ստիպում է հեքիաթներ հորինել աստվածների մասին եւ ամեն քայլափոխի խաբում է, ինչպես անխելք երեխաների: Այստեղ չե՞նք տեսնում վերջին շաբաթներին: Տեսեք անտառային հրդեհներն ինչ փորձանքներ են բերում մարդկանց: Ռուսաստանում ձեռք ձեռքի շրջում են երկու քույր՝ սովն ու երաշտը, եւ իրենց բերքը հավաքում: Բնությունը պետք է պարտվի, որովհետեւ նրա արքայությունը վշտի եւ անարդարության արքայություն է: Բնությունն ամբողջովին պիտի փոխարինվի տեխնիկայով: Եվ այդպես էլ կլինի: Մենք այսօր արդեն ավելի լավ ենք ապրում, քան հարյուր տարի առաջ, բայց պատկերացրեք ինչպես կփոխվի կյանքը եւս մի քանի տասնամյակ անց, եթե ջանք անենք ու դուրս պրծնենք ժամանակի այս այլանդակ պտույտից:

- Չէ՛, շնորհակալ ենք,- բողոքեց Լեգկոբընտովը:- Ես փոփոխություններ չեմ ուզում ու չեմ պատրաստվում ջանք անել դրա համար: Խնդրում եմ ինձ թողնեք իմ սիրելի շրջապտույտում: Եթե սիրում էլ եմ մեխանիկան, ապա ոչ այն այնքան, որ Կոզյի ճահիճ թռչեմ երկաթյա թեւերով կամ հսկա ճպուռ հեծած: Մարդը պետք է հիշի իր կոչումն ու չխցկվի այնտեղ, ուր չեն հրավիրում, որտեղ պարզապես անկոչ է:

- Ինչ կա որ, իհարկե, լավ է այդպես էլ ապրել, որս անել, խզբզել ալբոմում, շուն վարժեցնել, տառապել անցյալի հիշողություններից, գնալ սեփական տաղանդի կախարդական գնդիկ-բոքոնիկի ետեւից, եւ ինչ ուզում է, թող լինի, ու գլխավորը՝ որ քիչ մարդ լինի շուրջը, մանավանդ գեղջուկներից,- հեգնանքով ասաց մեխանիկը:

- Հենց այդպես՝ ինչ ուզում է, թող լինի,- գեղջուկների մասին ասվածն ականջի ետեւ գցեց Պավել Մատվեեւիչը, ու թուխ դեմքին ամբարտավան արտահայտություն հայտնվեց:- Ես ինքս աճում եմ ինչպես հողից խոտը, դրա համար էլ ինձ անհնար է ոչնչացնել: Բայց ի՞նչ գիտեք այդ գնդիկ-բոքոնիկի մասին, որ այդպես թեթեւ ու անփույթ խոսեցիք:

- Աղավնյա՛կս, դուք չափազանց դյուրազգաց եք ճգնավոր լինելու համար: Առավել եւս՝ խոտ, որը պետք է հնձել, ճմռթել ու տրորել, որ ավելի լավ աճի,- մեղմ ծիծաղեց Վասիլի Խրիստոֆորովիչը, ու Լեգկոբընտովին թվաց լմփոշ զրուցակիցը միայն արտաքուստ է նման անվնաս տարօրի-

նակ երազողի, իսկ իրականում աղանդավորական առաջնորդների նույն տեսակից է՝ սադրում է, շեղում, գայթակղելով կանչում ինչ-որ տեղ, ու որտեղ կսթափվես՝ Աստված գիտի:

Կախարդանքը թոթափելով՝ փորձեց վեր կենալ, բայց մեխանիկը չթողեց.

- Ձեր այդ բոլոր գաղափարները բնավ նոր ու ինքնատիպ չեն: Դրանք վաղուց պտտվում են օդում ու ծաղկափոշու պես նստում երազկոտ գլուխներին: Այ հենց հիմա հիշեցրիք մի տարօրինակ մարդու: Երբեք նրա մասին չե՞մ պատմել: Չորս տարի առաջ ես ու Ուլյուշկան ավիացիոն շաբաթի էինք Կոլոմյաժյան ծիարշավարանում: Ծով ժողովուրդ էր հավաքվել, բոլորի դեմքին՝ հիացմունք, ցնծություն, ապշանք, աչքերում՝ արցունքներ: Հրճվում էին, ինչպես Հարության տոնին: Ըստ էության, դա հենց մեր տեխնիկական Հարությունն էր:

- Դա ինձ հետաքրքիր չի,- խոժոռվեց Պավել Մատվեեւիչը:

- Այո՛, այո՛,- աշուժացավ Վասիլի Խրիստոֆորովիչը:- Հենց դրա մասին էլ ասում եմ: Բոլորը մի տեսակ ջահելացել էին, առույգացել, մտերմացել իրար: Մոռացել էին իրենց վեճերն ու գժտությունները, Խոդինկան, Տոլստոյի վտարումը Եկեղեցուց, պարտությունը Ճապոնական պատերազմում, ջարդերը, հրդեհները, Դվորցովի հրապարակի արյունը, Գապոն տերտերին, Ազեֆին. ամեն ինչ մոռացվել էր, մնացել անցյալում, ամեն ինչ մանր էր թվում այդ բարձունքի կողքին, որին հասել էին մարդիկ: Եվ ոչ միայն օդաչուները, այլեւ նրանց հետեւողները: Ես այն ժամանակ մտածեցի՝ այ մենք դժգոհ ենք մեր ժամանակից, բողոքում ենք ինչ-որ բաներից, բայց հենց մեզ է վիճակվել ապրել պատմական դարաշրջանում, տեսնել առաջին քայլերը, որ երջանկություն կբերեն մարդկությանը: Չէ՞ որ ինքնաթիռները միայն սկիզբն են, եւ այդ հոսքն արդեն անհնար է կանգնեցնել, նույնիսկ եթե որեւէ մեկը կամ մի քանի հոգի դեմ լինեն: Ընթացքն անխուսափելի է, ինչպես անխուսափելի գալու է նոր ժամանակը եւ նրա հետ՝ նոր մարդը: Եվ այդ օրը դա բոլորս զգացինք: Կարեւոր չէ՝ հարուստ, թե աղքատ, կրթված, թե անուս, բոլորս ասես նորացել ու մերձեցել էինք իրար: Անծանոթ մարդիկ գրկախառնվում էին, ջահել օրիորդներն ու ամուսնացած տիկնայք պլշած նայում էին օդաչուներին, ու ոչ ոք չէր մեղադրում նրանց: Ուլյան ինքնաթիռները տեսնելով՝ ուղղակի գլուխը կորցրեց: Նրան նայելուց չէի կշտանում: Իմ երկրորդ ամուսնությունից հետո մի քիչ ճնշված էր, իսկ այստեղ՝ ծափ էր տալիս, ուրախանում բոլորի հետ, իսկ ես վախենում էի միայն, որ ամբոխը կտրորի նրան: Կատա՞կ բան է՝ սեփական աչքով տեսնել

մարդիկ ինչպես են բարձրանում երկինք: Դուք երբեւէ տեսե՞լ եք: Օդաչուն նստում է խցիկում, որ թափանցիկ տուփ է հիշեցնում, ինքնաթիռը սկզբում վազում է ռելսերով, հետո կտրվում գետնից, թռչում ու սավառնում երկրի, տանիքների, ծառերի կատարների, մարդկանց, մեր ողջ խղճուկ ու տխուր եզերքի վրայով: Կարո՞ղ է ավելի հրաշալի տեսարան լինել աշխարհում:

- Թռչունները պակաս չեն անում նույնը,- մռլտաց Պավել Մատվեեւիչը:- Եվ առանց այդ բոլոր ռելսերի ու թափանցիկ տուփերի:

- Ես էլ հենց այդ եմ ասում, հենց դրանով էլ հիշեցրիք այդ մարդուն,- ավելի ոգեւորվեց Վասիլի Խրիստոֆորովիչը:- Եվ ահա այդ բազմության մեջ հանկարծ չգիտես որտեղից հայտնվում է մի չար, ճմռթված, թոքախտավոր պարոն՝ աներեւակայելի գեղեցիկ տիկնոջ հետ: Նույնիսկ դժվար էր հասկանալ ինչը կարող էր կապել այդ երկուսին: Պարոնն ակնհայտորեն անհավասարակշիռ վիճակում էր: Սկզբում նույնիսկ հարբած թվաց, բայց ուղղակի խիստ բորբոքված էր, գուցե եւ թե մեկը, թե մյուսը: «Այս թեւերը մեռած են,- սկսեց գոռալ մի տեսակ ճաքած ձայնով:- Սա օդում խաչված մատերիա է, մարդը նստում է վրան, մտքերը բենզինի, օդապտուտակի ճթճթոցի, մանեկների ու լարերի ամրության մասին են: Մարդը պետք է ինքնուրույն թռչել իմանա: Եվ կթռչի: Իսկ ձեր օդաչուները մարդ չեն: Մեխանիզմներ են, տիկնիկներ»: Ուլյան ուղղակի ցնցվեց վիրավորանքից, ձեռքերը բռունցք դարձան, աչքերում արցունքներ հայտնվեցին: «Ինչպե՞ս կարող եք,- գայրացա ես:- Օդաչուները ջախջախվում են, զոհվում, նրանք խիզախ մարդիկ են»: «Նրանց մահը ողբերգական չէ, այլ՝ վնասվածքաբանական,- կտրեց պարոնը:- Նրանք մեքենաների հավելվածներ են: Ընդամենը»: Եվ հանկարծ դուրս թռավ թռիչքուղի ու վազեց: Շատ արագ էր վազում, չգիտես ինչու՝ ձեռքերը պարզած, ու նման էր ծիծաղելիորեն երկար վերջույթներով մոծակի, բայց ինձ հանկարծ թվաց՝ էլի մի վայրկյան, եւ օդ կբարձրանա, կթռչի բազմության վրայով: Նույնիսկ թվաց տեսնում եմ՝ ինչպես է թռչելու: Այ հիմա կկտրվի գետնից: Էլի մի քիչ: Ահա կտրվեց: Բայց նա սայթաքեց, ընկավ ու գլորվեց խոտերին: Իսկ երբ վեր կացավ, սեւեռվեց ամբոխին, ասես ինչ-որ մեկին էր փնտրում, եւ աչքերիս նայելով՝ տարակուսանքով ասաց. «Չի ստացվում: Առայժմ չի ստացվում: Բայց պետք է ստացվի: Պե՛տք է»: Ուզում էի պատասխանել, որ անհնար է, չի կարող, ամեն ինչ իր օրենքներն ունի, բայց մարդիկ սկսեցին ծիծաղել, ու մի տեսակ վատ, չար էին ծիծաղում նրա վրա, աղմկեցին, շվացրին: Եվ հանկարծ իմ Ուլյան, որ դեռ մի րոպե առաջ պատրաստ էր բռունցքները սեղմած հարձակվել այդ խելագարի վրա, դողաց, բղավեց

ծանակողների վրա, ու նրանք լռեցին, հետ քաշվեցին, մենակ թողեցին այդ մարդուն: Եվ Ուլյան ասաց. «Գնանք տուն»: Ես շփոթվեցի. «Իսկ ինքնաթիռնե՞րը»: «Նա ճիշտ է՝ դրանք մեռած են»:

- Այդպես էլ ասա՞ց,- քմծիծաղեց Պավել Մատվեեւիչը:

- Ես ինձ հանկարծ անասելի վիրավորված զգացի: Շատ էի ոգեւորվել, հավատացել էի, որ տեխնիկան ուժեղ ու խելացի է մարդկային կրքերից, ունակ է ապաքինելու հոգու վերքերը, բժշկելու մեր հիվանդություններն ու անկատարությունները, ու հանկարծ տեսա, որ ոչ միայն սխալվել եմ, այլեւ խայտառակվել: Եվ ումի՞ց: Բավական է հազարավոր հավատավորների մեջ հայտնվեր խելագար, թերահավատ ու ճղճիմ մեկը, որպեսզի իմ հարազատ դուստրը գնար այդ մենակի ետեւից: Փառահեղ թագավորությունը փոխեր խղճուկ քաղաքային խելագարով:

- Իսկ տիկի՞նն ինչ էր անում այդ ամբողջ ընթացքում,- ընդհատեց որսորդը:

- Տիկի՞նը: Տիկինն ի՞նչ,- ուսերը թոթվեց մեխանիկը,- սիրունիկ, ազնվազարմ տիկին էր: Այնպիսի հոգնություն ու թախիծ կար աչքերում: Եվ ամոթ՝ իր ուղեկցի համար:

- Թախիծ եւ ամոթ,- քրթմնջաց Պավել Մատվեեւիչը:- Անկասկա՛ծ: Եվ ուզում եք ոչնչացնե՞լ այդ ամենը: Պատկերացրեք ամոթից զուրկ մարդկանց: Թեկուզեւ թռչել սովորեն:

- Բայց չէ՞ որ ձեր շներն ամոթ չունեն:

- Այդ դո՛ւք չգիտեք շներին,- զայրացավ որսորդը:- Աշխարհում նրանցից ողջախոհ ու ամաչկոտ կենդանի չկա: Շները նույնիսկ սեր անելիս են ամաչում: Երբեւէ տեսե՞լ եք ինչպես են կցվում ու հետո չեն կարողանում բաժանվել, եւ ինչքան տառապանք ու ամոթ է լինում նրանց աչքերում: Իսկ որքան նրբանկատ են հոգում բնական կարիքները: Իսկ ինչպես է տանջվում որսաշունը, երբ վրիպում է որսի ժամանակ: Իսկ ինչպես է պատրաստ հոգի տալ տիրոջ համար: Ես ձեր բոլոր շոգեքարշներն ու ինքնաթիռները մի խելացի շան հետ չեմ փոխի: Ու պետք չի ինձ համեմատել ամեն կարգի խելագարների հետ: Ես երկրային, մեղսագիտակ մարդ եմ: Եվ գիտեմ, որ ամեն ոք կոչված է նրան, ինչի համար բնությունն իրեն ստեղծել է. թռչունները՝ թռչելու, ձկները՝ լողալու, մարդիկ՝ քայլելու: Մեր ինչի՞ն է պետք երկինքը, եթե ոչ մի կերպ չենք կարողանում երկիրը բարեկարգել:

- Դե, ահա,- մեղմ ծիծաղեց Կոմիսարովը, ու դեմքին բարի, մանկական ժպիտ հայտնվեց:- Դատում եք Տոլստոյի պես ու դեռ ինձ եք մեղադրում տոլստոյականության մեջ:

2

Ամբողջ ամառ Պետերբուրգից ուղարկված թերթերն էին կարդում, եւ Վասիլի Խրիստոֆորովիչը նախկինում երբեք այդպես անհամբեր չէր սպասել դրանց, երբեք չէր անհանգստացել, որ անհապաղ չի տեղեկանա նորություններին, այլ՝ մեկ օր ուշացումով: Սարաեւոյում ավստրիական էրցհերցոգին սպանելու լուրը,- տարօրինակ, երկուստեք մարտահրավերով, կատա՞կ բան է՝ բաց մեքենայով շրջել թշնամական քաղաքում՝ ասես մահ փնտրելով ու սադրելով սերբ խենթերին,- ու դրան հետեւած նոր ճգնաժամը Բալկաններում չզարմացրին Կոմիսարովին: Ռուսաստանը վաղուց էին փորձում քաշել ռազմական առճակատման մեջ, բայց հսկա ու ծանրաշարժ երկիրը դժվարությամբ էր տրվում արտաքին ջանքերին, փոխարենը՝ խիստ զգայուն էր ներքին ամենափոքր տատանումների հանդեպ, եւ մեխանիկին ավելի շատ հետաքրքրում էր Ցոբոլսկի նահանգում տեղի ունեցած պատմությունը: Պողոս-Պետրոսի տոնին, օրը ցերեկով այնտեղ սպանվել էր մի մարդ, որի մասին խոսում էր ամբողջ Ռուսաստանը, իսկ Կոմիսարովն անձամբ էր ճանաչում: Երիտասարդ տարիներին Սիբիրյան մեծուղու շինարարությունում աշխատելիս Վասիլի Խրիստոֆորովիչը Տյումենյան մայրուղում հանդիպել էր մի գեղջուկի, որը ոտքով կտրել էր երկրի կեսն ու այցելել Երուսաղեմ եւ Աֆոն: Մի քանի ժամ զրուցեցին խրճիթ-հյուրատանը՝ սպասելով վատ եղանակն անցնի, կամ ինչպես այդտեղ էին հակառակն ասում՝ լավ եղանակ բացվի: Ավելի շատ գեղջուկն էր խոսում էր, իսկ մեխանիկը լսում էր՝ հմայված նրա ձայնով, ձեռքերի շարժումներով, ջերմեռանդ աստվածավախությամբ ու մթին, բայց շատ խոր ու ինքնատիպ խոսքերով: Կրոնապաշտ չլինելով՝ Կոմիսարովն անտարբեր էր բովանդակության հանդեպ. այդ բոլոր սրբազան հրաշքները, գայթակղությունները, փորձությունները, սատանայական չարությունները, գիշերային տեսիլքները, աղոթքներն ու պահքերը ծանձրալի ու խորթ էին Վասիլի Խրիստոֆորովիչին, դրանցից զառամյալ անցյալի հոտ ու գեղջկական անհույս խավար էր սփռվում, որ նա ատում էր ու պայքարում դրա դեմ, բայց խոսքի ելեւէջումը, խոսքի կերպը եւ խոսողի արտաքինը՝ պահքից հյուծված դեմքը եւ հատկապես անքնությունից լարված աչքերը զարմացրին ու սկսեցին իշխել նրա վրա: Բայց շատ ավելի ապշեցրեց օտարականի խորաթափանցությունը:

- Անընտանի՞ք ես: Թե՞ ամուսնացած,- չհարցրեց, այլ կիսով հաստատում արեց գեղջուկը:

- Ամուսնացած եմ:

- Ամուսնացած, բայց անզավակ:

- Հետո՞,- սիբիրցու հանգով մռլտաց Կոմիսարովը:

- Ոչի՛նչ, շուտով կմեկնես Ռուսաստան: Աղջիկ կունենաս: Մեծ իշխանը կմկրտի նրան: Շատ վիշտ կտեսնես նրա պատճառով, բայց մի հուսահատվիր, կանցնի:

Տհաճության զգացումը, որ ինչ-որ մեկը համարձակվում է խցկվել քո կյանք, ընդ որում՝ որքան անքաղաքավարի, նույնքան էլ ճշգրիտ, խայթեց Վասիլի Խրիստոֆորովիչին, մեծ իշխանի հիշատակումը դառը հեգնանք թվաց, ցարի հետ հանդիպման մասին գեղջկական ապուշ երազանք, բայց որոշ ժամանակ անց տեսչական այցով Տյումեն ժամանեց թագավորի հորեղբայրը՝ մի մեծամիտ, կոպիտ, ահեղագոչ մարդ, որ սարսափ էր տարածում մարդկանց վրա: Կոմիսարովը միակն էր, որ չվախեցավ մեծ իշխանից: Մեխանիկը չէր թաքցնում աչքերը, չէր դողացնում ձայնը եւ իր բանիմացությամբ ու ճշտակատարությամբ այնքան դուր եկավ գերագույն վերաքննիչին, որ նա առաջակեց պարետի օգնականի պաշտոնը իր եղբայր Պյոտրի պետերբուրգյան պալատում:

- Տնտեսությունը մեծ է, հսկող աչքը՝ քիչ: Եղածներն էլ...,- խոշոր թաթերից լայքայե ձեռնոցները դժվարությամբ քաշելով՝ խոժոռվեց մեծ իշխանը:- Եղբայրս մեղմ մարդ է, կամազուրկ, ծառայողներն էլ ինձնից, ճիշտ է, վախենում են, բայց, մեկ է, գողանում են: Դու չես գողանա, չէ՞:

Վասիլի Խրիստոֆորովիչն ընդհանրապես չէր պատրաստվում գողանալ, բայց ավելի քիչ՝ Ռուսաստան մեկնելն էր ուզում:

- Միայն թե կինս, Ձերդ Մեծ...,- սկսեց նա:

- Այդպես ցարին կդիմես, երբ ընդունի,- անտարբեր կտրեց մեծ իշխանը:- Ուրեմն ասում ես կինդ...

- Վախենում է մեծ քաղաքից: Բանջարանոց էլ ունի:

- Բանջարանոց Զնամենկայում էլ կարելի է ունենալ: Իսկ մեկնել, մեկ է, ստիպված ես լինելու: Հիմա այստեղ հոգիդ կհանեն, բարի՛ մարդ, եթե մնացիր: Մեր ժողովուրդը, գիտես, բարեսիրտ, նախանձ չունեցող ժողովուրդ է:

Այդպես չուզելով էլ Կոմիսարովը տեղափոխվեց Պետերբուրգ ու սկսեց կառավարել Զնամենկայի՝ մեծ իշխանի պալատի տնտեսությունը, կինը, ինչպես գեղջուկն էր գուշակել, շուտով հղիացավ, իսկ երբ ծնվեց աղջիկը, մեծ իշխանն Ուլյայի կնքահայրը դարձավ:

- Եվ ի՞նչն է զարմանալի,- ուսերը թոթվեց Լեգկոբրտովը, որին մեխանիկն արդեն մի անգամ պատմել էր այդ գեղջուկի մասին՝ որպես խիստ

անձնական դրվագ բաց թողնելով ընտանեկան ու, միեւնույն ժամանակ, մութ, իր համար էլ անհասկանալի պատմությունը:- Աշխարհում քի՞չ են այդպիսի անտուն-անտեր թափառականները: Ընտանիք չեն ուզում, ծուլանում են աշխատել եւ ահա թրեւ են գալիս գյուղից գյուղ: Հետն էլ՝ խառնակվում են կատուների պես:

- Սա ընտանիքավոր էր, երեք երեխա: Տնտեսություն էլ ուներ:

- Ուրեմն վաղ թե ուշ որեւէ մեկից ձեռ կքաշի: Կամ կդադարի թրեւ գալ, կամ ընտանիքը կթողնի: Իսկ որ կատաղի աչքեր ուներ ու լեզուն լավ էր պտտվում՝ ո՞վ Ռուսիայում պերճախոս չի:

Բայց գեղջուկը ոչ մի տեղ չգնաց ու թափառաշրջությունն էլ չթողեց, եւ Վասիլի Խրիստոֆորովիչը մի քանի տարի անց նրան տեսավ Զնամենկայում: Ինչպե՞ս էր հայտնվել այնտեղ, նախկինում ճանաչե՞լ էր մեծ իշխանին եւ արդյոք ինքը չէ՞ր խորհուրդ տվել ծառայության վերցնել Կոմիսարովին. այս բոլոր հարցերն ակնթարթորեն անցան մեխանիկի մտքով եւ նույնքան արագ էլ մերժվեցին որպես հանգամանքների արտակարգ կուտակում՝ ի հաճույս պատահականության: Գեղջուկը մի քանի տարում բավական փոխվել էր, այլեւս ձեռքերը չէր թափահարում, դեմքը կլորացել էր, մաշկը՝ հարթվել, հպանցիկ նայեց մեխանիկին եւ անմիջապես շրջվեց. կամ չէր ուզում ցույց տալ, որ ծանոթ են, կամ գոռոզացել էր, կամ էլ իսկապես մոռացել էր նրան իր կյանքով անցած դեմքերի շուրջպարում: Կոմիսարովն էլ չհիշեցրեց իր մասին, սակայն խոսքաշատ գեղջուկի հետագա ողջ պետերբուրգյան ընթացքը ապշեցնում էր Վասիլի Խրիստոֆորովիչին: Կարծես զառանցանք լիներ՝ կիրթ ու լուսավորյալ քսաներորդ դարում, ասես հողմապտույտով, հերկած դաշտ էր բացվում այդ մարդու շուրջը, ուր ընկնելով մեկը խելքն էր կորցնում, մյուսը՝ խիղճը, երրորդը՝ պատիվը:

Բարեպաշտ ուխտավորի մասին գրում էին, որ անչափելի առնական ուժ ունի ու պղծում է կանանց, որ պետերբուրգյան աղջիկ-պարոնները, համարյա թե ամուսինների խնդրանքով, խմբերով են գնում նրա մոտ՝ գյուղ, ու գեղջուկին լողացնում բաղնիքում, ինչ-որ խելագար գեներալուհի էլ ընդհանրապես թողել էր ամուսնուն, լքել երեխաներին եւ ամենուր հետեւում էր նրան, որովհետեւ բուժել էր իր հիվանդությունը, ինչն անհաջող փորձել էին բազմաթիվ բժիշկներ: Մի զառանցական, աներեւակայելի բովանդակությամբ, գաղտնի հրատարակված գրքույկ հայտնվեց՝ նրա զոհերի խոստովանություններով, իսկ քարոզիչ հեղինակը այնպիսի բուռն վրդովմունք էր արտահայտում, ասես անձնական վիրավորանք ստացած լիներ: Եվ որքան արգելում էին գրքույկը, այնքան անհագ հետաքրքրու-

թյուն էր հարուցում, ու տպավորություն էր ստեղծվում, թե դիտմամբ էլ արգելում են, որ հետաքրքրությունը չնվազի:

Անխտիր բոլորը հարձակվում էին գեղջուկի վրա. Սինոդի գլխավոր վերատեսուչից ավելի արմատական դարձած տոլստոյականներ, միապետականների վերածված հեղափոխականներ, հայրենասեր դարձած կոսմոպոլիտներ, Դումայի պատգամավորներ, բրետյորներ, մինիստրներ, գեներալներ, տերտերներ ու ժուռնալիստներ: Նույնիսկ մեծ իշխանը, որի տնով էր գեղջուկը մտել Պետերբուրգ, հիմա կատաղի ատում էր նրան եւ փորձում նրա ու թագուհու դեմ լարել բոլոր Ռոմանովներին:

- Պատկերացրեք իմ սարսափը,- Վասիլի Խրիստոֆորովիչը մի անգամ լսեց իր բարձրտոհմիկ հովանավորի խոսակցությունը երբեմն Զնամենկա այցելող, միանձնուհու զգեստով մի նրբագեղ տիկնոջ հետ,- երբ հիշում եմ, որ այդ մարդը իմ միջոցով է հանդիպել Նիկային:

- Դու կապ չունես, աղավնյա՛կս,- մեղմ ու ոչ ռուսական առոգանությամբ ասաց վանամայրը. նրանք իջնում էին սանդուղքով, եւ արձագանքը քշումտանում էր խուլ ձայները:- Քանի անգամ եմ ասել քրոջս՝ Ալի՛սա, վռնդիր այդ անառակ տաժանապարտին... Լուսավորյալ Ֆեոֆիլը պատմում էր, որ իր մոտ խոստովանության էր եկել մի տիկին...

Կնոջ ձայնը սկսեց խլանալ, հետո ընդհանրապես մարեց արձագանքող տարածության մեջ, տարալուծվեց կանգուն ու բարձր սկիհներում ու թաքնվեց գոբելենների ետեւում, եւ վերջինը, որ լսեց Կոմիսարովը՝ «Ֆեոֆիլը չէր կարող սխալվել...»:

Տասնմեկ թվին, երբ Կոմիսարովն արդեն պալատում չէր, քաղաքում սկսեցին տարածվել կայսրուհու եւ դուստրերի՝ հեկտոգրաֆով տպած մեղսական նամակները, որոնք հասցեագրված էին գեղջուկին, ու լուրեր պտտվեցին, որ թագուհին ապրում է նրա հետ, իսկ արդեն հասուն արքայադուստրերին գեղջուկն անձամբ է լողացնում: Ամենուր խոսում էին թագակիր ընտանիքի խայտառակության մասին, եւ որքան էլ մեխանիկն այդ ժամանակ իրեն կոմունիստ համարեր, այդ թաքուն գրվածքները կարդալիս ամոթի սուր զգացում էր ունենում:

- Կարեւոր չէ նույնիսկ՝ դրանց մեջ թեկուզ մի հատիկ ճշմարտություն կա՞, թե՞ ոչ, եւ ընդհանրապես անհասկանալի է՝ որտեղի՞ց հայտնվեցին այդ նամակները,- հուզված ասում էր Լեգկոբըտովին:- բայց պատկերացրեք այդպիսի սկանդալի մասնակից լիներ Անգլիայի թագուհին: Ի՞նչ կաներ ցանկացած ջենթլմեն, եթե այդպիսի զազրելի բաներ լսեր նորին մեծության մասին:

- Չգիտեմ, ես, փառք Աստծո, ջենթլմեն չեմ ու երբեք Անգլիայում չեմ եղել, եւ ընդհանրապես չեմ հարգում այդ տերությունը,- անփույթ պատասխանեց Պավել Մատվեեւիչը:- Բայց ֆրանսիական թագուհու համար այդպիսի սկանդալն ավարտվեց գիլյոտինով: Իսկ մեր գնդապետն ինքն է մեղավոր: Եթե ցար ես, կամ քաշած պահիր երկրի սանձը ու ոչ մեկին թույլ մի տուր զազրախոսել, առավել եւս՝ հրապարակավ, կամ էլ հետեւիր ում ես ընդունում դու ու հատկապես՝ կինդ: Մեր ժամանակներում անհնար է թագավորել, ինչպես Եկատերինան՝ իր գվարդիականներով:

- Բայց ի՞նչ կապ ունի ձեր ասածը,- գոչեց Կոմիսարովը:- Այդպիսի խոսակցությունների համար անգլիական ակումբում քիթուբերան կջարդեին, իսկ Ռուսաստանում զզվելի խնդմնդում ու տրորում են քրտնքոտ ձեռքերը՝ կեղտոտ լուրերն իրար փոխանցելով: Եվ դուք էլ նույնը՝ գնդապե՛տ: Ես մեր թագավորին, եթե կուզեք, հարգում եմ, որ ընդունեց այդ գեղջուկին: Այո՛, հարգում եմ: Տեսավ մարգարեին, սրտին մոտ առավ գեղջուկին, առաջնորդին, ինչը չէր արել ոչ մի ռուս միապետ, եւ ոչ նրա, մեր ընդհանուր, հավաքական մեղքն է, որ մարգարեն կեղծ դուրս եկավ:

- Տեսա՛վ մարգարեին, սրտին մո՛տ առավ, որտե՞ղ եք սովորել այդ բառերը: Պարզապես խարդախի մեկն է ձեր այդ գեղջուկը: Խարդախ ու հետն էլ՝ դեկադենտ:

- Դուք նրան տեսե՞լ եք:

- Ուրիշների եմ տեսել:

- Եվ ի՞նչ:

- Եվ այն, որ բոլոր ռուս գեղջուկներն էլ խարդախ են, անբաններ, բաց են ընկել առանց տերերի, կարգուկանոն չեն ճանաչում, տարեկան ցանելն ինչ է՝ չգիտեն, ձեռներից ոչինչ չի գալիս, ոչինչ սովորել չեն ուզում, իրենց ծորակներից ու ցանկապատերից այն կողմ չեն տեսնում, մեջքերը մի գրոշի պետականություն չկա, խավար են, անուս, ագահ, խառնակիչ, կասկածամիտ, նախանձ, անաստված, պարզունակ, եւ նրանց միակ արժանիքն այն է, որ սիրում ու կարողանում են մարդ թաղել: Ու նաեւ, եթե պետք է՝ պար գալ թաղումներին, հետո փորել-հանել իրենց բարերարների աճյուններն ու բաց թողնել գետի հոսանքով ներքեւ,- մռայլ ավելացրեց նա:- Եվ ուզում եք բնությունը դիմանա՞ այդ ամենին: Առանց այն էլ չափից դուրս գթասիրտ է մեր հանդեպ: Տեսեք ինչ է կատարվում՝ շուրջը անտառները վառվում են, իսկ գեղացիք նստել թեյ են խմում ու սպասում անձրեւի, փոխանակ առուներ փորեն: Բոլորդ բնությանն եք մեղադրում, բայց նա ի՞նչ կապ ունի: Վերջերս մի այդպիսի սերմնացանի ասում եմ. «Գնանք փր-

կենք անտառը, սիրտդ չի՞ ցավում, ինչ է»: Իսկ նա ինձ. «Անտառը չարք է, պարո՛ն: Կհասցնենք, պարո՛ն: Ուժեղ չի վառվում: Հայր Էրոսը կիրակի մաղթանքի կարգ կկատարի, Աստված անձրեւ կտա, ու վերջ: Էղած-չէղած տասը դեսյատին բան է վառվել»: Մաղթա՞նք են ուզում: Ի՞նչ կասեք սրան: Կարծում եք այդպես թունդ էլ հավատո՞ւմ են Աստծուն: Երանի չէ՞ր: Մեր խեղճ Էրոսը նրանց համար շամանի պես բան է: Միայն նրա համար են գնում մոտը, որ կովը բուժի, աղոթքով կապի երեխային գեղձախտն ու լուծը, մեկ էլ կնանիք են շտապում ձվերը տերտերի տակ դնել, որ հավերը լավ ածեն: Ահա եւ սրբազան Ռուսիո ամբողջ ուղղափառ հավատը: Իսկ վաղը կրակը նրանց տներին կհասնի: Ի՞նչ են անելու: Տեր հո՞րը կանիծեն: Ուրիշի՞ն կպահանջեն: Կչոքեն ցարի առա՞ջ՝ օգնության հասիր, տեր-թագավո՛ր, կամ ավելի վատ, եղաններով ցարի դե՞մ կգնան: Կամ էլ կքանդեն-կհանեն իրենց բոլոր հանգուցյալներին: Բայց դա էլ քիչ կթվա, առաջին հերթին հենց ինձ ու ձեզ կմեղադրեն, թե անտառը կրակ ենք տվել, կացիններով կտոր-կտոր կանեն, ու ձեր ողջ անձնական հոգածությունն էլ իրենց հանդեպ, պարո՛ն մեխանիկ, կմոռանան: Եվ հույս չունենաք, ոչ մեկին չեն խնայի: Իմ կամքը լիներ, ոչ թե անձրեւ կտայի այդ անբաններին, այլ արաբական անապատ կսարքեի: Մահակով կքշեի առուներ փորելու: Դրանք միայն մի լեզու են հասկանում: Ու մեզ էլ ուրիշ ցար է պետք, ոչ թե այս փալասը: Մենք դեռ շատ փորձանք ենք տեսնելու սրա հետ: Իսկ ձեր սրտի սիրած գեղացին, կուզես այստեղի, կուզես՝ սիբիրյան, որտեղի կուզես, դեռ կխժռի այդ դժբախտ ցարին խոճկորի պես, ու բկին չի մնա, իսկ հետո հենց ինքն էլ կսկսի հարբած արցունք թափել վրան, թե՝ ո՞նց կարողացա ձեռք բարձրացնել իմ թագավորի վրա:

Իսկ հետո Լեգկոբըտովն սկսեց այնպիսի մեղադրանքներ թափել ժողովրդի գլխին եւ այնպիսի բարբաջանքներ՝ իշխանության մասին, որ Կոմիսարովն արդեն լսել չէր ուզում: Տանել չէր կարողանում, երբ իր ներկայությամբ փնովում էին ամենայն ռուսականը: Վասիլի Խրիստոֆորովիչն այդ իրավունքը միայն իրեն էր վերապահում, քանզի ստույգ գիտեր՝ եթե դառը խոսք էլ նետի իր հայրենիքին ու ժողովրդին, ապա միայն նրանց հանդեպ սիրո հորդությունից ու սուր տագնապից, քանզի տնքում էր ներսում ամենայն ռուսականը, տնքո՛ւմ էր, տնքո՛ւմ... Սակայն մեխանիկը սրտի ցավով մի բան պատրաստ էր ընդունել. սիբիրյան առաջնորդը պալատում չպիտի մնար: Եկար, տեսար, խոսեցիր թագավորի հետ, լսեցիր ինչ է ասում թագուհին, շոյեցիր ցարական երեխաների գլուխները, ճամփադ շարունակիր, քեռի՛, շրջիր ռուսական երկարուձիգ ճամփաներով, գիշերիր

ուր պատահի, կեր, ինչ կտան, քարոզիր, սովորեցրու, սփոփիր, ամռանը դարձիր տուն՝ խոտ հնձելու, իսկ աշնանը նորից ճամփա ընկիր, բայց ոչ մի տեղ երկար մի մնա ու ոչ մի տեղի մի վարժվիր: Ոչ պարոնտիրոջ, ոչ գեղջուկի, ոչ իշխանի մոտ երեք օրից ավել մի մնա: Քո ամբողջ ուժը քո ազատության մեջ է, նրա, որ տերերից քեզ ոչինչ պետք չի եւ ազատ ես, ինչպես ծովի քամին: Բայց չէ՛. հերիք չի սատանան հասցրեց Պետերբուրգ, դեռ այստեղ էլ լիուլի իրենն առավ: Ում ասես չի կոտրել այս քաղաքը:

- Կնանիք փչացրին,- խորունկ, թաքուն, անձնական տխրությամբ մրմնջաց Վասիլի Խրիստոֆորովիչը,- մեր պետերբուրգյան տիկինները, հրապուրեցին ժանեկավոր ներքնաշորերով, դե, նա էլ չդիմացավ:

- Ահա՛ թե ինչ,- սուր հաճույքից տնքաց Պավել Մատվեեւիչը, ասես Կոմիսարովին հաջողվել էր թռիչքի պահին հարյուր քայլից որեւէ խոշոր թռչուն խփել:- Ուրեմն ձեր կարծիքով, ամեն ինչում կնանիք են մեղավոր:

- Այո՛,- ավելի տխուր ու ցածր կրկնեց մեխանիկը:- Մեր տիկինների հետ սուրբն էլ չի նկատի, ինչպես մեղք գործեց:

- Բայց այդ թշվառականն ինչո՞ւ էր կանանց մոտ խցկվում, հը՞:

- Ուզում էր մեղքից ազատի, բայց այնպես եղավ, որ իրեն մեղքի տակ գցեցին: Ասում եմ, չէ՞, բոլոր փորձանքները կանանցից են:

- Իսկ ես ձեզ ահա թե ինչ կասեմ, բարի՛ պարոն,- ըմբոստացավ Լեգկոբըտովը,- դուք այդ փորձանք կանանց տեսե՞լ եք: Իսկ ես տեսել եմ ու գիտեմ: Այնպիսի բաներ կհորինեն, որ վեր կթռչես: Ռուս կինը չի համածայնի անառակության, բայց իր համար մեղքեր հորինելու վարպետ է, ինչպիսիք աշխարհը չի տեսել: Կյանքում փախչում է մեղքից, բայց մեղքի մասին խոսել սիրում է: Մտովի լողում է մեղքի մեջ, զգայաբար ապրում մեղքը, հետո գալիս է խոստովանության որեւէ դյուրահավատ տերտերի մոտ, նույնիսկ ոչ տերտերի,- դա դեռ ոչինչ, տերտերներն ընտանիքատեր են, ամուսնացած, աղջիկներ ունեն, ինձնից ու ձեզնից լավ գիտեն կնկա բնույթը,- այլ կգան այ այսպիսի մի Ֆեոֆիլի մոտ, որ պատանությունից վեղարը գլուխն է քաշել ու կյանքը չգիտի, իր ճգնակեցությունից, մեկ էլ հոգեւոր բարձունքներից ու մետաֆիզիկական խորքերից բացի կյանքում ոչինչ չի ճանաչում, նրա խեղճ գլխին կթափի իր բոլոր կանացի երեւակայությունները, արցունքներով կթրջի, արցունքախեղդ կլինի, նա էլ ամեն ինչ հալած յուղի տեղ կընդունի ու դեռ իր երեւակայության չարքերն էլ կգումարի: Կինն էլ հենց զգաց իրեն հավատում են, ավելի կտաքանա, եւ ոչ միայն այն պատճառով, որ նվաստացումը նրա համար հպարտությունից վեր է, այլ որով-

հետեւ ափսոս է, խղճալի, անհասկանալի է այդ անմեղ վանականը, եւ ուզում է իր հմայքներով դյութել նրան, կարեկցել խեղճին, որովհետեւ նա չգիտի ինչ է կնոջ փաղաքշանքը: Իսկ աբեղան այդպիսի հիմարից աչքը կտրած հեռուն փախչելու փոխարեն, ինչ ասես կերեւակայի, սարսափահար կլինի, կբռնվի սեփական կարեւորության զգացումով, կորոշի փրկել նրան ու վախից կմատնի սուտ խոստովանության գաղտնիքը: Եվ այնպես կմատնի, որ կհայտնվի թերթերում, որեւէ քարոզչի, հրապարակախոսի, վառվող ջահի, ուրացյալ տոլստոյականի բաժին կդառնա, որի ուշքումիտքը զուտ դեւերին հալածելն է: Ասենք, տիկնոջը հենց այդ էլ պետք է՝ որ ամբողջ աշխարհն իմանա ու խոսի իր գոյություն չունեցող մեղքերի մասին, որովհետեւ նրա համար հրապարակային ամոթից քաղցր ոչինչ չկա: Ե՛վ իր, եւ՛ ուրիշի: Միայն թե ծափահարեն: Թատերական ժողովուրդ ենք մենք, տեսարաններ ենք սիրում, հենց դա էլ մեզ կկործանի: Իսկ ձեր ժուռնալիստնե՞րը: Մտքներին զուտ սկանդալային լուրեր հրապարակելն է: Ու եթե դրա հետ միասին հնարավոր է նաեւ արքունիքի վրայո՛վ անցնել... Ո՛ւմ եք հավատում, միամի՛տ մարդ,- դառնացած դեն նետեց թերթերի տրցակը:- Կամ մտածում եք այստեղ ճշմարտությո՞ւն կգրեն: Ո՞վ: Մենշիկո՞վը: Սուվորի՞նը: Նե-Բուկվա՞ն: Յաբլոնովսկի՞ն: Պուգավի՞նը: Թե՞ սեռական հարցի վրա խանգարված կնկա ազգանունով այդ հրուշակագործը: Ստո՛ւմ են: Աղավնյա՛կս, բոլորն էլ ստում են: Ե՛վ նրա վրա հարձակվողները, եւ՛ պաշտպանողները: Իսկ ճշմարտությունը ոչ ոք չգիտի: Ու երբեք չեն իմանա:

- Ձեր մեջ ինչ-որ խանդ է խոսում:

- Ո՞ւմ հանդեպ,- քամահրանքով ասաց Լեգկոբընտովը:

- Ախր նախանձո՛ւմ եք նրան,- պայթեց Վասիլի Խրիստոֆորովիչը.- այդ գեղջուկին եք նախանձում: Ու նաեւ նրան սիրողներին, որովհետեւ ինքներդ սիրել չգիտեք:- Եվ Լեգկոբընտովի մթնած աչքերից Կոմիսարովը հասկացավ, որ նշանին է դիպել:

- Գիտե՞ք ինչ: Այ դուք գլուխ եք հանում ձեր պրիմուսներից, ճի՞շտ է,- մտերմաբար ասաց որսորդը:- Ուրեմն շարունակեք գլուխ հանել: Իսկ ինչից չեք հասկանում, մի խցկվեք:

- Խցկվելու եմ,- մեխանիկը վեր կացավ ու մոտեցավ առմուտքին, որտեղից բացվում էր վառվող տորֆի ծխի մեջ կորած Շելոմի հովիտը:- Ողջ կյանքում ինձ դեն են հրել, ամեն ինչ որոշել են իմ փոխարեն ու ցուցումներ տվել: Բավակա՛ն է: Իսկ այդ մարդուն գիտե՞ք ինչու եմ սիրում: Ոչ թե կրոնախեւության ու գյուղական բաղնիքում գեներալուհիների գոռոզությունը կոտրելու, այլ նրա համար, որ ճեղքեց-դուրս եկավ: Ոչ ոք

չկարողացավ, ես չկարողացա, դուք չկարողացաք, իսկ նա հասավ:

...Հասնելը հասավ, ամեն ինչ խառնեց իրար, ամբողջ տիղմը բարձրացրեց հատակից, բոլորին գժտեցրեց, շեղեց, հանելուկ առաջադրեց, որ իսկապես հարյուր իմաստուն չէին կարող լուծել, բայց ահա կարդում էր ողջ Ռուսաստանը,- մեկը՝ հաճույքով, մյուսը՝ չարախնդությամբ, քչերը՝ ցավով,- սարսափելի լուրը հուզագրգիռ թերթերի առաջին էջերում՝ սպանվե՛լ է: Մի ռամիկ կին, սիֆիլիսից այլանդակված դեմքով, օրը ցերեկով գյուղամիջի ճանապարհին մոտ էր վազել, երբ նա վերադառնում էր պատարագից, ու դանակով խփել փորին: Իսկ որտեղի՞ց էր գնել դանակը կամ ո՞վ էր տվել, ո՞վ էր ոգեշնչել եւ ուղղորդել, ո՞ւմ էր պետք այդ սպանությունը: Գրում էին, որ գեղջուկը ժամանակին պղծել էր այդ կնոջը, եւ նա որոշել էր վրեժ լուծել իր եւ անարգված դուստրերի, թե քույրերի համար կամ էլ, հակառակը, ստուգել՝ Տերը կվանի՞ նրանից իր զենքը եւ կցուցանի՞ դրանով նրա սրբությունը, թե՞ թույլ կտա մեռնի: Գրում էին ինչ-որ փախստական քահանայի մասին, որի հետ սպանվածը սկզբում բարեկամություն էր արել, հետո դարձել թշնամին, եւ ուղարկել էր այդ կնոջը, իսկ կինը, դաշույնը փեշի տակ, հարմար պահի սպասելով, մի քանի ամիս հետեւել էր նրան Պետերբուրգից Յալթա, այնտեղից էլ՝ Սիբիր: Բայց թե ինչ կարգալույծ քահանա էր եւ ինչ երկիր է Ռուսաստանը, եթե նրա ճանապարհներով անարգել երթեւեկում են դաշունավոր խելագար կանայք, եթե խելահեղությամբ է լեցուն երկրի հոգին, եւ մուգ, պղպջացող գինին խաղում է թանձր արյան մեջ, այնպես, որ արյունը սկսում է եռալ եւ մի ակնթարթում ավիրում ինքն իրեն: Եվ ինչպե՞ս ապրել այդպիսի երկրում: Ինչպե՞ս վերափոխել այդպիսի երկիրը, դաստիարակել, լուսավորել:

- Դուք գուցե մի որոշակի բա՞ն ընտրեիք: Թե չէ փող եք տալիս հեղափոխության համար, մարտնչում տերտերների դեմ, իսկ ինքներդ, եթե լավ քերենք, Տիխոմիրովից ու Նովոսյոլովից թունդ միապետական եք: Ասենք, հենց դա իսկը ռուսավարի է: Պալատից՝ հեղափոխություն: Միայն թե հիշեք խոսքս. մեծ արյունով է վերջանալու այս ամենը: Եվ փառք եմ տալիս Աստծուն, որ փախա այդ թունոտ տղեկներից, եւ իմ մասնակցությունն այդ գործերին նվազագույն է: Ավելի լավ է որս անեմ:

- Չէ՛, ավելի լավ է եռացող կաթսան նետվել: Այդպես երեւի ավելի ազնիվ կլինի,- մի քիչ անտարբեր պատասխանեց Վասիլի Խրիստոֆորովիչը, ու մտքով չանցավ էլ, թե Պավել Մատվեեւիչի համար որքան վիրավորական էր այդ ըստ ամենայնի անարդար հանդիմանությունը, բայց տխուր նախազգացումը տանջում էր Կոմիսարովին, եւ ինչ-որ չար բան էր տեսլա-

նում նրան թե՛ հուլիսյան շոգ արեւի մեջ, թե՛ անտառային հրդեհների ծխի հետ խառնված հրիկնային մշուշներում, թե՛ աստղերի մեջ, որ աղոտ առկայծում էին ամառնակեսին մոտեցող երկնքի մուգ պաստառին, թե՛ մեծացող լուսնի մեջ, որ դուրս էր պրծել հորիզոնի ետեւից եւ սարսռալով լուսավորում էր դաշտերն ու բացատները եւ ամբողջ աշխարհը բաժանում դողդոջուն լույսի ու անորոշ ստվերների: Եվ Վասիլի Խրիստոֆորովիչը հիշեց սպանված գեղջուկի մեղավոր, խոնարհած աչքերը, գեղջուկի, որ սիբիրյան բքաշունչ մի գիշեր հանդիպեց Տոբոլյան մեծուղում, ինչպես Պուգաչովը՝ Պետրուշա Գրինյովին,- գուցե եւ մազախռիվ ուխտավորը հենց դրա համար էր մեղավոր զգում, որ ուզում էր բարի գործ անել իրեն դուր եկած մարդու համար, բայց ահա թե ինչ ստացվեց՝ ո՛չ իրեն էր պետք ոտք դնել թագավորական քաղաք, ո՛չ Կոմիսարովին: Եվ ահա նրանցից մեկը ողջ չէ, իսկ մյուսին ինչքա՞ն է մնացել:

Վասիլի Խրիստոֆորովիչը հանկարծ այնքան սուր զգաց իր կյանքի արագ ընթացքը, ասես հասել էր լեռան կատարին ու հեռավոր, հալվող ծխամշուշում տեսել վախճանը՝ դեռ աղոտ մանրամասներով, բայց արդեն ակնհայտ, անշրջելի, կապված այն ցուրտ քաղաքի հետ, որտեղից նրան երբեմն հաջողվում էր հեռանալ, բայց մեկնել անհնար էր:

Նա մահվանից չէր վախենում. այն անկատարությամբ, որ կրում էր մարդու մարմինը՝ տգեղ, ծերացող, զառամող, ենթակա բութ բնազդներին, մահը նրան միակ խելամիտ ելքն ու ազատագրումն էր թվում: Բայց տարօրինակ է, մտածում էր Կոմիսարովը, այ եթե իրեն հարցնեին՝ որտե՞ղ, ե՞րբ եւ ո՞ր ժամին կմեռնի պետերբուրգյան պալատներում ակամա գուրգուրված սիբիրցի շրջմոլիկը, կպատասխաներ՝ իհարկե հենց այնտեղ, Պետերբուրգում էլ կմեռնի, բայց ոչ հիմա, ոչ այսպես՝ հունիսյան պայծառ օրով: Բայց արի ու տես ինչ ստացվեց. հարազատ գյուղում մահն ընդունեց, տարվա ամենաամառ ժամանակ եւ իր կյանքի ամռանը: Բայց ինչո՞ւ այդպիսի տգեղ, ամոթալի վախճան: Լա՛վ, մթին ճանապարհին, աշնան մի խուլ կամ ձմեռային նողկալի գիշերով սպանեին չար ու անաստված մարդիկ, ավազակները, գողերը, բայց այսպես, արեւ օրով, քրիստոնեական տոնին, Աստծուց մոռացված ու մարդկանցից նեղացած, թուլամիտ, ջերմեռանդ մի կնիկ թափում է փորը: Հետապնդում է ինչպես գազանին, ու հասնում ետեւից: Բայց չէ՞ որ գիտեր ինչի է գնում, զոհաբերեց իրեն, չվախեցավ, ուրեմն նա էլ իր ճշմարտությունն ուներ: Ուրեմն ինչ-որ մեկի ընտրյալն էր, որ արհամարհել էր առօրյան, լիությունն ու կշտությունը, ուրեմն նա էլ նույն տեսակից է, ինչ այն մարդիկ, որ պատանությունից

գրավել ու գերել են Կոմիսարովին: Միայն թե ինչպես այդ տարաշխարհիկ գեղջուկը՝ իր հոտառությամբ չի հասկացել, չի կանխել նրան: Կամ էլ ամեն ինչ չէ, որ պարզ ու տրված է իմանալ պայծառատեսին: Իսկ գուցե չէ՞ր ուզում կանխել: Գուցե գիտեր, որ իր զոհաբերությունը պետք է ինչ-որ բանի, եւ պատրաստ էր կորստի մատնվել իրեն: Գուցե ինքն էր խնդրել եւ օրհնել այդ մահը:

- Ա՛խ, շրջմոլի՛կ, շրջմոլի՛կ, որտե՞ղ է հիմա շրջում քո հոգին եւ ո՞ւմ է շշնջում իր կախարդական խոսքերը,- երազկոտ մրմնջաց մեխանիկը եւ այնքան սուր զգաց իր կապն այդ մարդու հետ, ասես նույն մեխանիզմի մասեր լինեին, իսկ հիմա ի՞նչ՝ շղթան կտրվել էր եւ անհնար էր որեւէ կերպ վերականգնել: Եվ ինչպե՞ս ապրել այսուհետ, որ պարապ պտույտներ չանես:

Կոմիսարովը նայեց երկինք ու հարցրեց, ասես այնտեղ կարող էին լսել՝ սա ի՞նչ է, ինչո՞ւ: Ինչպե՞ս հասկանալ այս ամենը: Ո՞րն է այս խայտառակ սպանված կերպարի իմաստը: Այդ ի՞նչ տարօրինակ ծնունդ է անծայրածիր ռուսական տարածության ու նրա վերջին ժամանակների, այդ ի՞նչ ավելորդ կամ, հակառակը, չհերիքող մաս է կյանքի անհասկանալի մեխանիզմում:

Բայց որքան վերամբարձ էին դառնում նրա հարցերը, այնքան խոժոռ էր լռում երկինքը. աղոտացած, թխակապույտ, մշուշաքողով պատված ոչ միայն Ծելոմի վրա, այլեւ՝ ողջ Ռուսաստանի, ու թերթերը գրում էին, որ տասը տուն է վառվել Օրյոլի նահանգում, Տվերի նահանգում՝ վաթսուն, վառվում էին Պետերբուրգը, Մոլոգան, Իզբորսկը, Վոլգայի վրա մի ամբողջ շոգենավ էր վառվել, Մոսկվայում հորդառատ անձրեւներ ու խոշոր կարկուտ էր տեղում, իսկ Պոչաեւում՝ փոթորիկ՝ արյան անձրեւով, Վոլոգդայի նահանգում՝ խոց էր տարածվել, Աստրախանում՝ ժանտախտ, Ցարիցինում՝ խոլերա: Բնությունը թշնամի է, բնությունը կռվի է ելել: Ու հենց նույն էջում՝ սենտիմենտալ հուշեր Չեխովի մասին. արդեն տասը տարի է՝ չկա այդ տափակ գռեհիկը, որ մեղմ ու բարի ինտելիգենտ էր ձեւանում եւ կարողացավ խաբել հմայված երկրին: Այ դրան որ հաստատ տանել չէր կարողանում մեխանիկ Կոմիսարովը: Չեխովը չէր հասկանում, չէր լսում Ռուսաստանը, օրոր էր ասում իր հույլ, անզոր կերպարներով, բթացնում թուլացնող ելեւէջներով ու թաքուն ցինիզմով, տեւական ազդող թույն էր ներարկում: Տեխնիկայի մարդ չէր, չէր զգում ռուսական ուժը եւ այդ ուժի, խռովության, հեղափոխության վտանգը չէր հասկանում. դրա համար էլ մեռավ թոքախտից, չապրեց, չտեսավ մեծ արյունը, փասափուսան քաշեց, մինչեւ ոտքի կելներ իրեն անհասկանալի Ռուսաստանը: Բայց ինչպե՞ս կա-

րող է փրկվել մի երկիր, որտեղ մի կողմից Չեխովն է, մյուս կողմից՝ այ այս գեղջուկը: Ինչպե՞ս չպայթի այդպիսի թագավորությունը:

Այսպես խորհրդածում ու քաղցր գինի էր խմում Վասիլի Խրիստոֆորովիչը՝ հիշելով նորոգ հանգուցյալ Աստծո ծառային, լսում էր ինչպես է քնել գյուղը, ու ոչ մի ձայն չկար, ասես մեռած լիներ, ու հանկարծ ինչ-որ ձայն լսվեց գիշերվա մեջ. ձիու թեթեւ դոփյուն, թե ինչ-որ արագ քայլեր: Ձայնը հեռու էր, բայց մեխանիկ Կոմիսարովի զգոն լսողությունն այդ հեռվից էլ որսում էր: Դուրս եկավ տնեց ու սկսեց ուշադիր զննել խավարը: Խորհրդավոր թխկոցը մեկ հստակվում էր, մեկ ընդհանրապես կորչում, հնչում էր տարբեր կողմերից, կանչում ու բաց չէր թողնում, բայց ինչ-որ տագնապալի բան կար նրա մեջ, ու չնայած ոչ մի նախազգացման, առավել եւս ուրվականների ու տեսիլքների մեխանիկը չէր հավատում, սարսափը պատեց հոգին: Ուզում էր գոռալ, բայց մտածեց, որ կվախեցնի անհայտ արարածին, կամ խավարում ցույց կտա իր տեղը:

«Գուցե նրա հոգին է շրջում այս տեղերում,- առկայծեց մտքում, ու սառը քրտինքը պատեց նրան:- Գուցե ասի, ինչ կենդանության օրոք չհասցրեց ասել: Կամ էլ պարզապես դեգերում է անհանգրվան»:

- Հոգեհանգստի կարգ պիտի կատարվի,- շշնջաց մեխանիկը՝ ինքն էլ չհասկանալով՝ որտեղից դուրս լողաց այդ բառը,- բայց այստեղի տերտերը չի համաձայնի: Չէին սիրում քեզ, անապատակա՛ն, տերտերները, քո փառքին ավելի էին նախանձում, քան գրողները... Հե՛յ,- զգույշ կանչեց նա, բայց ոչ ոք չարձագանքեց:

Լռություն էր, ինչպես սառցասառն քարանձավում, ամեն ինչ քարացել էր, ասես աշխարհն արդեն վերջացած լիներ, կամ էլ Կոմիսարովն էր մեռել այդ աշխարհում, դադարել էր որեւէ բան զգալ, իսկ հետո ինչ-որ տեղից, կողքից, որտեղից Վասիլի Խրիստոֆորովիչն ընդհանրապես չէր սպասում, աղջկական մի աղոտ կերպարանք հայտնվեց՝ կապույտ շորով: Թափանցիկ տեսիլքը խտանում, թանձրանում էր ու վերջապես մարդկային ուրվագծեր առավ:

- Ո՞ւլյա,- թուլացած ձայնով հարցրեց Վասիլի Խրիստոֆորովիչը:

Դուստրը ծանր էր շնչում, ուսերը ցնցվում էին, խճճված մազերը ծածկում էին դեմքը:

- Որտեղի՞ց հայտնվեցիր: Ո՞ւր էիր: Ո՞ւմ հետ:

Ուլյան ճչաց, վախ հայտնվեց աչքերում, ջղածգումն աղավաղեց դեմքը, թվում էր՝ էլի մի վայրկյան, եւ կանհետանա, կլուծվի ծխացող աղջամուղջում, նույնքան անսպասելի, որքան հայտնվել էր, բայց ահա ճանաչեց հո-

ը, զարմանքով նայեց շուրջն ու լաց եղավ: Երկար լացեց, եւ հայրը տարիներ ի վեր առաջին անգամ հետ չմղեց նրան, սեղմեց կրծքին, անհմուտ ձեռքերով շոյում էր թաց մազերը, ինչ-որ բան մրմնջում, անճարակ փորձում հարցուփորձ անել, բայց Ուլյան միայն գլուխն էր օրորում, ուսերը ցնցվում էին, եւ ասես տենդի մեջ մրմնջաց.

- Նորից տեսա նրան:

- Ո՞ւմ:

- Ծատ մոտ է:

- Ո՞վ: Ո՞ւմ ես տեսել:

Աղջիկը չպատասխանեց, անկշիռ մարմինը թուլացավ, աչքերը փակվեցին: Վասիլի Խրիստոֆորովիչը ֆիզիկապես զգաց այդ ներքին ամայությունն ու հյուծումը, եւ սուր խղճահարությունն ու տագնապը անտանելի դարձան: Ինչը Ուլյային հոր մեջ սառնություն, խորթություն ու անտարբերություն էր թվում, իրականում քնքշության ու սիրո արտահայտություն էր, որն անհնար էր տեսնել, որովհետեւ աղջիկը թունավորված էր, հյուսված վախին, եւ որքան ավելի էր Վասիլի Խրիստոֆորովիչը սիրում նրան, այնքան սուր էր ծակում նախազգացումը, որ կարող է ինչ-որ բան պատահել աղջկան: Այնպես փխրուն, թույլ, անպաշտպան էր նա, որ հայրը երբեմն մտածում էր, որ իր կյանքի ամենաերջանիկ, ամենախաղաղ ժամերը նրանք էին, երբ Ուլյան չէր կարողանում քայլել, եւ ինքը ուսերին դրած էր ման տալիս նրան, ասում էր՝ իմ խխունջիկ, եւ աղջիկն ամբողջովին իրենն էր: Իսկ հիմա բաց էր սպառնացող աշխարհի առաջ, եւ որքան մեծանում, այնքան նմանվում էր մորը, վերածվում էր նրան, եւ այդ նմանությունը տանջում էր հորը, իսկ ականջներում հնչում էր կնոջ հրաժեշտի աղաղակը. «Միայն թե չկործանես իմ աղջկան»: Բայց ինչպե՞ս չկործանի: Ինչպե՞ս մեծացնի, որ նա չկրկնի մոր ու մայրացուի ճակատագիրը: Ո՞վ կհուշի:

«Ախ, Մա՛շա, Մաշա, այս ի՞նչ արեցիր: Ինչո՞ւ հեռացար մեզնից: Այդ ի՞նչ ծանր երդում էիր տվել: Ինչի՞ համար: Ինչո՞ւ: Ո՞ւմ: Մի՞թե Աստված, որին հավատում ես, այնքան կատաղի ու դաժան է, որ քեզնից պահանջեց այդ զոհաբերությունը: Եվ ո՞րն է դրա իմաստը: Դու մեր դստերն ավելի էիր սիրում, քան ես: Գիշերներն արթնանում էի քո արցունքներից ու աղոթքից, հիշում եմ ինչպես էիր խնդրում, որ քո Աստված քո կյանքից առնի ամեն ինչ, որ պետք է Ուլյային, հիշում եմ այդ ամենը ու ոչինչ չեմ հասկանում»:

Ծանրամարմին, ծերացող տղամարդը նստել էր նեղ, սպիտակ մահճակալի եզրին ու նայում էր անհանգիստ քնի մեջ երբեմն ցնցվող դստերը, ու չէր նկատում, որ արցունքները հոսում են չսափրած այտերով, հետո դուրս

եկավ տնից ու գնաց մարագ՝ նորոգելու քամիարը, որ նախորդ օրը բերել էին հարեւան գյուղից՝ Աստծու սիրուն խնդրելով մեխանիզմը հասցնել մինչեւ կալսելու օրերը:

3

Կրոնափիլիսոփայական ակումբում իրականացված ոստիկանական գործողությունից առաջ Պետերբուրգում մի աղմկահարույց դեպք էլ եղավ: Չեվրեկների աղանդում, ուր մուտք ուներ Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովը, եւ որտեղ երկար տարիներ սփոփանք ու կարեկցություն էր գտել՝ հուսահատու տխուր մի պահի որոշելով անդամագրվել չեվրեկներին, խռովություն էր հասունացել: Աղանդի առաջնորդ Իսիդոր Ծչետինկիրը՝ նողկալի, ախտավոր մի մարդ, հայտնի նրանով, որ իր ստրկուհիներին հարճ էր դարձնում, որոշել էր մինչեւ չափահասության հասնելը մայրերից խլել երեխաներին, որոնցից շատերի հայրը հենց ինքն էր, ու հանձնել մանկատներին, եւ այնպես, որ խեղճ կանայք չիմանային ուր են ընկել իրենց զավակները: Դժբախտ կանայք բիբլիական ողբ ու կական բարձրացրին, որ շոյում էր Իսիդորի սադիստական ականջը, բայց հովվապետը հաստատ էր որոշել ստուգել հոտի հավատարմությունն ու դաստիարակչական նպատակներով գնալ մինչեւ վերջ:

- Մարդու թշնամիք տնեցիք են իր,- ասում էր Իսիդորը, ու ճաղատացող բարձր ճակատը պսպղում էր հենց նոր լվացած ձվի պես:- Ամուսինների թշնամին իրենց կանայք են, մայրերինը՝ որդիք, եւ հայրերինը՝ դուստրերը: Դժվար չէ հնազանդեցնել նրան, ով լուսավոր ու սուրբ է: Դպիրներն ու փարիսեցիները դրա վարպետն են: Իսկ դուք կարողացեք հնազանդվել ու ծառայել անգետին ու կեղտոտին, ընկեք նրա հետ, համբուրեք նրա անմաքուր շուրթերը ու ձեր սիրով կյանք տվեք նրան: Միայն մեղքն ու կիրքը ճանաչածը կճանաչի ճշմարիտ սրբությունը: Դուք բարու համար եք եկել այստեղ, բայց նախ նետվեք եռացող կաթսան, մինչեւ վերջ ըմպեք չարի գավաթը եւ նույնքան փորձառու ու անխոցելի դարձեք նրա համար, որքան ես:

Հոտը հովվին ականջալուր՝ կատարում էր բոլոր կարգադրությունները, իսկ Ծչետինկինի երեւակայությունը հարուստ էր: Հետեւորդներին կողոպտելուց ու Կամենկի կղզու առանձնատուն տեղափոխվելուց հետո Իսիդորը որոշեց փորձել անկյալ մարդկությանը հայտնի բոլոր մեղքերը, ինչպես բնական, այնպես էլ հակաբնական: Նրա զգոն հսկողության տակ եւ անձ-

նական մասնակցությամբ եղբայրներն ու քույրերը համատեղ եւ առանձնին-առանձին մեղանչում ու ապաշխարում էին՝ մեկմեկու հասցնելով մոլուցքի աստիճանի, բայց աղանդավորների մեջ գտնվեց մեկը, որ առաջնորդից պահանջեց դադարեցնել չարություններն ու սպառնաց, որ դրանց մասին կհայտնի ոստիկանություն:

Ցանկացած մեկին Իսիդորն անհապաղ կոչնչացներ, իսկ ոստիկանությունից չվախենալու իր պատճառներն ուներ, բայց այդ քաջը ոչ այլ ոք էր, քան կամավորագրյալ Պավել Մ. Լեգկոբընտովը, որին վաղուց պիտի վռնդած լիներ, որպեսզի անհնազանդության մեղքի չտաներ եղբայրներին եւ քույրերին: Սակայն մոլորյալ պետերբուրգյան ինտելիգենցիային իր եկեղեցում փրկել ու նրանց առաջնորդը դառնալ ցանկացող եւ այդ նպատակով ներգրավված Լեգկոբընտովի հետ փիլիսոփայական ակումբի սրբապիղծների խորհուրդ այցելած հայր Իսիդորը տրվեց սեփական սնափառությանն ու փառասիրությանը եւ դաժանորեն պատժվեց դրա համար: Տավրիկյան պալատում Շչետինկինին ծափ ու ծիծաղով վռնդեցին ամբիոնից՝ անտես առնելով նրա բոլոր նախկին ծառայություններն ու նվիրատվությունները, իսկ մի վտիտ, լոռնետավոր կին «Լե՛շ, լե՛շ» ծղրտալով ուղղակի հարձակվեց վրան: Իսիդորը վախեցավ, որ հիմա կծվատի իրեն կամ էլ կաթվածահար կլինի, իսկ Պավել Մատվեեւիչը շփոթվեց այդ ամենից եւ փորձելով արդարանալ՝ Իսիդորին ասում էր, որ կրոնական փիլիսոփաների հոգեւոր առաջնորդները անխելք են, խլականջ ու կույր, ու թող կորչեն գրողի ծոցը, իսկ «լեշ» բառը պետք է մեկնել զուտ փիլիսոփայական, ակումբային տեսանկյունից: Նա ծամածռում էր շրթունքներն ու քաշքշում սեւ, անխնամ, ճահճահոտով ու ծխով ներծծված մորուքը, իսկ հետո, Իսիդորի ընտանի քարոզներից մեկի ժամանակ բոլորի ներկայությամբ ասաց, թե սատանան հենց Շչետինկինն է, որ կա:

Բարձր չասաց, կիսաձայն, բայց բոլորը լսեցին: Աղանդավորների մարած, անկենդան դեմքերը պայծառացան, աչքերը լայն բացվեցին, փայլեցին, եւ Իսիդորի եկեղեցում իրարանցում սկսվեց: Սեռական տենդից ու ինքնակոչ հովվապետի երեւակայությունից հոգնած գառնուկները Լեգկոբընտովի վրա դրեցին քաղաքը գեղեցիկ աղջիկներին խժռող վիշապից փրկելու բարեհամբավ պատասխանատվությունը: Պավել Մատվեեւիչն ինքն էլ իրենից այդպիսի հերոսություն չէր սպասում: Նրան հոգեհարազատ էր դիտորդի, տարեգրի, ճանապարհասյան դերը, որի կողքով իրար ընդառաջ են գալիս պատմական հոսքերը, ու եթե որեւէ բանի վրա զայրանում էլ էր, ապա կամացուկ, իր ալբոմում, որը պահպանում էր գալիք լեգկոբը-

տովագետների համար, բայց այստեղ սի՞րտը չդիմացավ, թե՞ որսորդական բնազդը խոսեց, իսկ գուցե եւ Պավել Մատվեեւիչը միայն ձեւանում էր, թե անսիրտ փայտի կտոր է, ու սպասում էր հարմար պահի, որ կրակի. ամեն դեպքում՝ մի անտարբեր չմնաց եւ մի անպատեհ պահի կանգնեց ուսուցչի առաջ, որը մտերմիկ խոստովանեցնում էր իր առաջ ծնկի եկած գորշաչյա, քամահար այտերով մի կնոջ:

- Ի՞նչ ես ուզում,- աչքն իսկ չթարթելով՝ խիստ հարցրեց Իսիդորը:

- Ձիշտն այն կլիներ, որ խեղդեի քեզ,- առանց երկմտելու պատասխանեց Լեգկոբըտովը՝ փորձելով չնայել կնոջը:- Կամ էլ մի քսան տարով կալանավաշտեր քշեի:

- Ա՛խ դու ոջիլ,- կշտամբանքով ծոր տվեց Ճչետինկինը:- Քեզ ներս առան, ջերմացրին, հոգեւոր սնունդ տվեցին, իսկ դու որոշեցիր Հուդա դառնալ: Դե ինչ, գնա դավաճանի՛ր, ստացի՛ր քո արծաթները, մատնի՛ր ուսուցչին, համբուրի՛ր նրան:

- Քեզ՝ նեռիդ, այլեւս ոչ ոք չի համբուրի,- մռայլ խոստացավ Լեգկոբըտովը:

- Կհամբուրե՛ն,- շալվարն անշտապ կոճկելով՝ պատասխանեց Ճչետինկինը:- Իսկ դու, մանր խուլիգա՛ն, գլուխդ կջարդես: Կամ էլ քեզ կջարդեն:

Բայց Պավել Մատվեեւիչը չվախեցավ: Գնաց առաջ ու մինչեւ վերջ՝ օգտագործելով միակ զենքը, որ ուներ: Լեգկոբըտովը թեկուզ եւ Ճչետինկինին սպառնացել էր ոստիկանությունով, սակայն բաժանմունք գնալը, թաքուն մատնություն անելը նրան, որպես ռուս գրողի կոչում կրող ինտելիգենտի, անպատիվ գործ թվաց, իսկ այ հրապարակային, հեղինակային, ճաշակավոր մատնագիր հորինելը, որ կարծագանքեր ողջ Պետերբուրգո՛ւմ...

Չեվրեկների աղանդի պարագլխի դեմ լեգկոբըտովյան հոդվածները պայթեցին օճառամանի տեսքով քողարկված ռումբի պես: Դրանք համարից համար հրապարակում էր «Ռուսսկոյե վրեմյան», սենսացիաների սիրահար հասարակությունը հերթ էր կանգնում, թերթավաճառները փողոցներում բղավում էին Լեգկոբըտովի անունը, եւ հաջողությունը ջախջախիչ էր: Բայց հաջողությանն անմիջապես պոչ եղավ թշնամանքը: Նախանձողները պնդում էին, թե հոդվածները Լեգկոբըտովը չի գրում, այլ նրա անվան տակ թաքնվող, ավելի ճիշտ՝ Պավել Մատվեեւիչից անունը գնած ինչ-որ մեկը: Նաեւ ասում էին, որ ֆելիետոնիստը խտացնում է գույները, իրականում ոչ մի նման բան աղանդում չի կատարվում, եւ ճարպիկ մարդը պարզապես կարիերա է անում աղանդավորների վրա, իսկ ինքը այդ ընթաց-

քում գաղտնի ծառայության է անցել Սինոդում, որտեղ նրան հովանավորում են գլխավոր վերատեսուչ Սաբլերը, փութաջան քարոզիչ Սկվորցովն ու երկու ջերմեռանդ տերտերներ՝ Վոստորգովն ու Վոստոկովը: Աջ պահպանողական «Պետերբուրգյան վեդոմոստին», հակառակը, պնդում էր, որ աղանդավորների վրա կրակող ամեն ոք իրականում նշան է բռնում Եկեղեցուն, իսկ «Իստորիչեսկի լիստոկը» պահանջեց շտապ պարզել՝ իրականում ում շահերին է ծառայում Լեգկոբընտովը եւ «Եվրոպան Երկրորդ գալստից առաջ» մասոնական օթյակից բացի, «Արկտիկական եղբայրության» անդամ չէ՞ նշանավոր գեներալ-թատերասեր Ֆունկովսկու հետ: Վիրավորված նրանից, որ Պավել Մատվեեւիչն իր կարկանդակները տաք-տաք տալիս է մրցակիցներին, «Բրատսկոյե սլովոն» ակնարկեց, որ մերկացնողը կամ պայմանավորվածություն ունի Ճչետինկինի հետ, կամ էլ երազում է զբաղեցնել նրա տեղը, իսկ մի ճարպիկ պատկերազարդ ամսագրիկ, որի մանուշակագույն կազմին շեղակի դեղին ծաղիկ էր դաջված, «Անծանոթուհի» ստորագրությամբ հոդված հրապարակեց՝ պնդելով, թե Լեգկոբընտովի սեւեռուն հետաքրքրությունը աղանդավորական գործերի հանդեպ բացատրվում է հենց իր սեռական շեղումներով, եւ ճիշտ կլիներ զբաղվել հենց նրա ինտիմ կյանքով: Անսպասելի խստությամբ արտասահմանից իր դժգոհությունը կարճ, բայց կտրուկ բաց նամակով արտահայտեց հրատարակիչ Մաքսիմ Պեշկովը՝ հայտարարելով, թե Լեգկոբընտովն ինքն էլ չի հասկանում ում ջրաղացին է ջուր լցնում, քանզի ռեժիմի թշնամին ժողովրդի բարեկամն է: Սակայն բոլորից կոշտ արձագանքեց Պավել Մատվեեւիչին Սվետլոյարից ծանոթ Ֆոմա-փարիսեցին, որն այդ կապակցությամբ դուրս եկավ գիտական ճգնությունից եւ «Սամոդերժավնի ինվալիդին» տված ընդարձակ հարցազրույցում հայտարարեց, որ Տերն իր աղոթքներով առաջիկա երեք ամսում կպատժի Լեգկոբընտովին:

Պավել Մատվեեւիչը ցնցվեց՝ հիշելով երիտասարդաբար խոժոռ հայացքը, բայց չնահանջեց: Չէր կարողանում հասկանալ՝ ի՞նչ կապ ունի արքաաստծո հետեւորդ Ֆոման Իսիդորկայի հետ, բայց նրան արդեն ոչինչ կանգնեցնել չէր կարող, նույնիսկ համընդհանուր առաջադիմական բոյկոտի սպառնալիքը, Եկեղեցու բանադրանքը, ջհուդամասոնական հռչակը, իր անտառային ննջարանի լրտեսումը եւ աշխարհի ու նրա անշնորհակալ մարդկանց վախճանի մասին ամենահուսահատ մարգարեությունները: Զարմանալի, մոլեգին խանդավառություն էր պատել գրողին: Ո՛չ պատանության ու երիտասարդության տխուր հուշերը, ո՛չ կնոջ կարոտը, ո՛չ հյուսիսային բնությունը, ո՛չ Սվետլոյար լիճը, ո՛չ անտառակտցարների որսը,

ո՛չ շուն վարժեցնելը՝ ոչինչ նրան այնպես չէր ոգեւորում, ինչպես պայքարը Իսիդորի դեմ, որը անձնական անհրաժեշտություն էր դիտում: Ճչետինկինի մտքով չէր էլ անցնում, թե ինչ վտանգավոր մարդու է թողել իր եռացող կաթսան, եւ ինչպիսի բանիմացությամբ է նա նկարագրելու մարդկանց կառավարման մեխանիկան: Լեգկոբըտովին հաջողվեց բացել Իսիդորի գերիների ու գերուհիների լեզուները եւ ամենայն մանրամասնությամբ գրի առնել նրանց անարտահայտիչ, բայց դրանով իսկ ավելի զարհուրելի պատմությունները օրգիաների եւ այլանդակությունների մասին: Հոտի՝ իր դեմ տված ցուցմունքները կարդալիս Ճչետինկինը ցնցվում էր: Լրագրային հոդվածներն այրում էին ձեռքերը, եւ ավելի լավ կլիներ ընդհանրապես չկարդալ, բայց չէր կարող, քանզի դրանց մեջ իր անունն էր հոլովվում: Այդ տպատառ անունը տասնյակ հազարավոր տպաքանակներով տարածվում էր ողջ Ռուսաստանում, եւ կարեւոր չէր՝ փառաբանություն, թե պարսավանք էր հնչում նրա մասին. պատանեկության տարիներից դա փախստակ վանականի մեջ մի զգացում էր արթնացնում, որը սրությամբ ու երանությամբ համեմատելի էր միայն սեռական հաճույքի հետ:

«Հայտնի՞ է, արդյոք, ռուս հասարակությանը, թե որտեղից հայտնվեց այս սրիկան: Այս, թող թույլ տրվի ասել, մարդն առաջին անգամ հայտնվել է Ցարիցինում՝ հեղափոխական խառնակչությունից հետո եւ որպես ավելի սարսափելի օրերի նախակարապետ: Բայց ուսանողների հետ չէր եկել, ոչ էլ հեղափոխականների,- ոչ թե գրում, այլ բութ, ցանկասեր վարազին որսորդական արահետով հետապնդելու պես՝ տողերի վրայով թռչում էր Լեգկոբըտովը:- Ոչ անաստված ինտելիգենցիայի հետ: Ոչ հրեաների հետ, ոչ տոլստոյականների, ոչ դուխոբորների եւ ոչ մոլոկանների, որոնց՝ հասարակության վրա վատ ազդեցության մասին անընդհատ պատմում են մեզ՝ շեղելով գլխավորից: Եկել էր այնտեղից, որտեղից ամենաքիչն էին սպասում եւ որտեղից, պարզվեց, ավելի հարմար էր հասցնել հարվածը՝ Ուղղափառ եկեղեցու գրկից, միապետականների ու սեւհարյուրակայինների միջավայրից: Ինը հարյուր հինգին գիտուն կուսակրոնը, Պետերբուրգի հոգեւոր ակադեմիայի շրջանավարտը Ցարիցինի հրապարակում վառում էր հեղափոխության հիդրայի ծղոտե խրտվիլակը, ինը հարյուր յոթին Տրոիցկի վանքի պատին կախեց Լեւ Տոլստոյի դիմանկարն ու պահանջեց, որ բազմահազարանոց հոտը հրապարակավ թքի այդ նկարի վրա: Նա ժողովրդին հանում էր ապստամբության, կոչում էր ամեն ուրբաթ թագավորական ծիանոցում բաղնիքի ավելներով հրապարակավ թակել վարչապետ Ստոլիպինին, մասոնական շունչը նրանից քշելու համար: Ինքնագ-

լուխ խաչերթերի ժամանակ խոնարհ վանահայրն իրեն թույլ էր տալիս վիրավորել անցորդներին՝ առանձնակի հաճույք ստանալով ազնվատոհմ տիկնանց նվաստացնելուց: Փողոցային հայհոյանքը նրա բերանում սովորական ու հրապարակային արտահայտություն էր, իսկ իշխող հովվապետը ոչ միայն աչք էր փակում այս այլանդակությունների վրա, այլեւ ամեն կերպ աջակցում էր: Երբ աշխարհիկ իշխանությունները փորձեցին խելքի բերել խռովարարին, ուժ գործադրել ու վտարել քաղաքից, նա փախավ պահնորդներից, իր հետեւորդների հետ փակվեց վանքի տաճարում եւ օրեր շարունակ իր քարոզներով մարդկանց հասցնում էր խելահեղության: Մի քանի հազար մոլեգնած կանայք նրա գլխավորությամբ դուրս պրծան տաճարից եւ սկսեցին ծեծել ու ճաղերով ծակծկել քաղաքապահ ոստիկաններին: Մեր քաջարի ռուսական ոստիկանությունը սովոր չէ կռվել կանանց դեմ ու ստիպված էր նահանջել: Բայց միայն ոստիկանությունը չնահանջեց, նահանջեցինք բոլորս: Երկու տարի տեւեց այդ այլանդակությունն ու անօրինությունը, երկու տարի նա բզկտում էր մեր հասարակությունը անիմաստ ու սադրիչ արարքներով, երկու տարի գրգռում էր ռուս ժողովրդին, մինչեւ վերջապես Սինոդն իր մեջ ուժ գտավ այդ «վանահորն» ուղարկելու իր խիստ կանոնադրությամբ հայտնի Լավրիշչեւյան անապատ՝ ապաշխարելու: Եվ ի՞նչ: Վանքում հրապարակավ հրաժարվելով հոգեւոր աստիճանից՝ նա հանգիստ լքեց մենաստանն ու աղանդ հիմնեց, որտեղ, անտեսելով հասարակական հիմունքները, տրվեց անամոթ եւ այլանդակ անառակության: Բայց ինչո՞ւ դա հնարավոր դարձավ: Որովհետեւ Իսիդոր Ճչետինկինը ամենահարազատ, ամենակոպիտ ու սարսափելի, ամենաանխուսափելի ծնունդն է մեր լիբերալ ժամանակների, ուր ծաղկում են չարի բոլոր ծաղիկները, եւ հասարակությունը ողջունում է այդ ծաղկումն ու լիբերալիզմը, իսկ եկեղեցին անտարբեր հետեւում է, թե ինչպես են մարդիկ ոչ թե տաճար գնում, այլ կրոնական աղանդներ ու անհասկանալի համայնքներ, եւ ոչնչի համար պատասխանատու չէ ո՛չ Աստծու առաջ, ո՛չ էլ մարդկանց»:

Պավել Սատվեեւիչը նաեւ թույլ ցարի եւ ապաշնորհ ոստիկանության մասին էր գրում, բյուրոկրատական Սինոդի ու խեղճ քահանայապետության, եւ ուղղափառության ճգնաժամի մասին՝ ամենազոր աղանդավորության ֆոնին, եւ Պետերբուրգի ազնվականական սալոնների, որտեղ Իսիդորին ընդունում ու մեծ փողեր էին տալիս խելապակաս կոմսուհիներն ու կոսմոպոլիտ բարոնուհիները, եւ ռուս ինտելիգենցիայի մասին՝ հիստերիկ տխմարի ու ճորտի, որը դեռ արժանին կստանա իր աստվածացրած ժո-

ղովրդից, եւ ազգայնականների թշվառության ու միապետականների բթության մասին, բայց «Ռուսսկոե վրեմյայի» վախլուկ խմբագիրը մերժեց այդ ֆիլիպիկները՝ Լեգկոբըտովին մեղադրելով, որ խուճապ է սերմանում, բայց ի հրապարակվածն էլ լիուլի էր:

«Մենք հիշողություն չունենք,- ռուս հասարակությանն իր ուղերձն ավարտում էր Լեգկոբըտովը:- մենք մոռացել ենք ինչ ահեղ նախանշնակ կարող է դառնալ ռուս պատմության մեջ փախստակ վանականը: Մի՞թե Գրիշկա Օտրեպեւը մեզ ոչինչ չի սովորեցրել: Կամ գիմնազիայում չե՞նք անցել խառնակ ժամանակների մասին եւ երեք հարյուր տարի անց ուզում ենք ավելի ահարկո՞ւ կրկնել այդ իրադարձությունները, ծարավի ենք նո՞ր արյան, սովի, քաոսի ու մահերի: Կամ խելագարվել ու կորցրել ենք ապրելու եւ մեր բախտը տնօրինելու կամքը: Ռուսաստանը նորից պիտի նստի գիմնազիայի դասասեղանի առաջ ու սովորի: Իսկ վնասարար Իսիդորկային խայտառակաբար վռնդել դասարանից»:

4

«Սրիկա՛: Ի՞նչ սրիկան է: Ո՞նց էր խնդրում, ոնց էր որբուկ ձեւանում, անմեղ աղավնի, որ ինձ մոտ թողեն: Ֆիուդի մեկը ջիուդ, մաջար, գնչու, անօրեն»,- տխուր կրկնում էր Իսիդորը՝ հիշելով թխավուն եկվորին եւ անիծելով իրեն դյուրահավատության համար: Մարդկային ցեղի անարդարության ու երախտամոռության մասին դառը մտքերը տանջում էին նրան: Ի՞նչ դժվար էր այդ գրչակի համար անիծյալ խոսքեր հյուսել՝ չարքերին ուրախացնելով, հապա փորձիր բարեպաշտ կյանքով ապրել, երբ բոլորը դեմ են քեզ, եւ պատանի տարիներից օդում ժամանակ առ ժամանակ չարքեր են թռչում՝ մեկ ճարպիկ չարքաճուտը հոլի պես կպտտվի ու կբռնի ձեռքդ, մեկ որեւէ հարբած կնիկ կխցկվի համբուրվելու, եւ զզվելի ու քաղցր է այդ համբույրը: Սկզբում միայն գիշերը, երբ արթնանում ու չես կարողանում քնել, հետո նաեւ ցերեկը, բազմության մեջ սկսեցին կպչել: Սարսափելի էր դառնում, ահը խեղդում էր, հոգում խառնվում էին փառաբանությունն ու հայհոյանքն առ Աստված: Հուսահատություն, միայնություն, ուրիշ լինելու զգացում, երբ ոչ մի ընկերոջ չես կարող պատմել, թե ինչ է կատարվում քեզ հետ, ու խոստովանության ժամանակ էլ մեղա չես գա, ինքդ պիտի հաղթահարես: Դժվար է մեն-մենակ դեմ գնալ դիվական ուժին, բայց ի՞նչ անես:

Ինչպե՞ս էր կսկծում մայրիկը, երբ միակ որդին տասնութ տարեկանում

հայտարարեց, թե պատրաստվում է կուսակրոն դառնալ: «Աստծու սիրուն, Իլյո՛ւշենկա, աղաչում եմ, պետք չի սեւազգեստ վանական դառնալ: Չուներս իմ մայրական օրհնությունը դրա համար: Ուզում ես եկեղեցուն ծառայել, ծառայիր, տերտեր դառ, բայց մինչ այդ ամուսնացիր, ուրախացրու ինձ: Քեզնից ի՞նչ կուսակրոն: Կուսակրոն վանականները միս չեն ուտում: Իսկ դու միս սիրում ես: Կուսակրոնները ձուկ են ուտում, իսկ դու ձկանը մոտ չես գալիս»: Դա ճիշտ էր. Իլյուշենկան իսկապես ձուկ չէր ուտում այն բանից հետո, երբ յոթ տարեկանում ձկան փուշը մնաց կոկորդը: Եվ այնպես սարսափելի էր խեղդվում, որ քիչ էր մնացել հոգին տար Աստծուն: Այդ օրվանից ձուկ չէր կարողանում ուտել, ոչ թե սովորական, խաշած կամ տապակած, ընդհանրապես ոչ մի տեսակի՝ ոչ ձկնապուր, ո՛չ փափկամիս, ո՛չ կոտլետներ, ո՛չ ձկով կարկանդակ: Եվ ի՞նչ, այդպիսի դատարկ բանի համար վանք չմտնե՞լ: Եվ առաջին անգամ նա չլսեց մայրիկին: Ոչ թե այն պատճառով, որ քիչ էր հարգում, այլ որ Նոր կտակարանում ամենից ավելի այն խոսքն էր սիրել, որ ասում էր՝ բազում են կոչվածները, բայց սակավ են ընտրյալները: Մանկուց իրեն այդ երկրորդների թվին էր դասում, քանզի հոգու խորքում գիտեր՝ եթե ամեն ինչ անմռունչ կրի մինչեւ վերջ, ոչ թե պարզապես փրկություն կգտնի, այլ կհասնի այնպիսի բարձունքի, որից արդեն այն ժամանակ շունչը բռնվում էր: Մի նպատակ ուներ Իլյուշենկան, ոչ մեկին չէր ասում, բայց կրում էր իր էության ամենատաք ու մթին ներսում՝ ուզում էր Ռուսաստանում վերականգնել պատրիարքությունը,- սարսափելի էր ասել, բայց եւ լռել չէր կարող,- դառնալ նոր ժամանակների պատրիարքը, քանզի չգիտեր մեկին, ով ավելի էր արժանի այդ կոչմանը: Եթե իմանար այդպիսի մարդու, անմիջապես կգիջեր տեղն ու կսկսեր ծառայել նրան, բայց չկար այդպիսին, ուստի ինքը պիտի կրեր այդ խաչը:

Իլյուշան մեծանում եւ այդ նվիրական երազանքով կառուցում էր իր կյանքը՝ պաշտպանվելով իրեն շրջապատող ստվերներից ու բարձրանալով լերկ լեռան գագաթը: Եվ չնայած սարսափելի էր վանական կյանքը, ապաշխարությունը վախեցնող, կուսությունը՝ նողկալի եւ առաքինությունը՝ ծիծաղելի, դեպի վեր այլ ճանապարհ չկար: Եվ այնքան լավ սկսեց, այնքան լայն բացեց թեւերը, եւ նրան՝ ջահել, գեղեցիկ միաբանին, հոգեւոր մարտիկին, ուղղափառության կազակին, քարոզչին, որ երազում էր երկրորդ Նիկոն դառնալ, ո՞վ կասեր ինչով կավարտվի այդ ամենը:

Ի դեպ, մեկը այնուամենայնիվ, ասաց: Ակադեմիայի տեսուչ Ֆեոֆիլը: Նա Իսիդորի, ինչպես որ ակադեմիայի սաներից շատերի խոստովանահայրն էր ու նաեւ, ըստ երեւույթին, պայծառատես, որովհետեւ Իսիդորի մի

խոստովանությունից հետո, երբ նա աննշան մեղքեր էր թվարկել, Ֆեոֆիլը, աչքերը խոնարհած եւ նիհարավուն նուրբ դեմքի արտահայտությունը չփոխելով՝ կամացուկ հարցրեց.

- Ամեն ի՞նչ պատմեցիր:

- Ամեն ինչ:

- Իսկ պատահո՞ւմ է, որ աղոթքի կամ սպասավորության ժամանակ մտքովդ աստվածանարգություն, նողկալի, վատշվեր բաներ անցնեն:

«Երբեք»՝ ուզում էր պատասխանել Իսիդորը, բայց հակառակ իր կամքի ոչ թե բերանից թռավ, այլ կոկորդից, ամենաներսից պոկվեց.

- Պատահում է:

- Հաճա՞խ:

- Միշտ:

- Եվ ո՞ւմ է ուղղված լինում այդ նողկանքը:

- Աստվածամորը:

- Է՞լ ում:

- Սուրբ Հոգուն,- գլուխը ավելի հակելով՝ ասաց Իսիդորը:

- Իսկ որեւէ՝ մեկին տեսնո՞ւմ ես:

- Տեսնում եմ,- ասաց ու աչքը գցեց սենյակի անկյունը, որտեղ լվացարանում պահ էր մտել իրեն չարչարող չարքաճուտը, ու վախեցած նայեց սեւասքեմ վանականին:

- Եվ ի՞նչ ես անում այդ ժամանակ:

- Կառավարում եմ նրանց:

- Դու խոսում ես դեւերի՞ հետ,- խոստովանահոր հանդարտ ձայնը դողաց:

- Ես նրանց հրամայում եմ լռել, եւ նրանք լռում են: Նրանք հնազանդ են ինձ, ինչպես Իոհան Նովգորոդցուն:

Չարքաճուտը թեթեւացած շունչ քաշեց, ու Ֆեոֆիլը ոչինչ չասաց: Խորասուզվել էր իր մեջ, եւ Իսիդորը միանգամից չհասկացավ՝ ինչ է անում: Հետո գլխի ընկավ՝ աղոթում էր ու մոռացել էր որտեղ է: Ֆեոֆիլի հետ այդպես պատահում էր. երբեմն տեւական անշարժանում էր, քարանում աղոթելով, ասես քնի մեջ էր սուզվում: Իսիդորն սկսեց ծանձրանալ, ուզում էր դուրս գալ, բայց առանց թողության աղոթքի չէր կարող: Նա հայացքներ փոխանակեց չարքաճտի հետ ու հազաց:

- Դեւերի հետ խոսել չի կարելի,- անգույն ձայնով արտաբերեց Ֆեոֆիլը:- Դու մեծ վտանգի մեջ ես: Երբեք մի քարոզիր ու մի ձգտիր որեւէ ասպարեզի: Դու ծանր հիվանդ ես: Հնազանդեցրու քեզ: Միայն աղոթիր ու

ապաշխարիր: Ապաշխարիր եւ աղոթիր: Եվ այդպես մինչ ի մահ: Եվ խնդրիր Աստծուն՝ ավելի վաղ գա քո ետեւից, քան աղոթքդ լսված կլինի:

Նա ծածկեց սանի գլուխը փորուրարով, բայց թողության աղոթք չկարդաց եւ արագ դուրս եկավ: Իսիդորը վախեցավ: Բայց ոչ նրա վերջին բառերից: Վախեցավ, որ Ֆեոֆիլը գնաց ռեկտորին զեկուցելու, իսկ Սերգիի հետ կատակները վատ էին վերջանում. վեհապետը ոչ մի միստիկայի չէր հավատում, խիստ էր, չոր ու հաշվեհարդար անելիս՝ կտրական: Եվ այդպես էլ չիմացավ՝ տեսո՞ւչն էր այս անգամ պահել խոստովանության գաղտնիքը, թե՞ ռեկտորը նշանակություն չէր տվել, բայց նրա կյանքում այդ դեպքից հետո ոչինչ չփոխվեց: Իսիդորը նաեւ խորհուրդներին չանսաց. իր ուղին, իր տաղանդը բոլորից լավ գիտեր, եւ ոչ մի ուժ չէր կարող կանգնեցնել նրան: Իսկ դեւե՞րը: Դեւերը ի՞նչ: Սրբակյա՛ցն՝ ուր, դեւե՛րն՝ ուր: Մարտի է ելել նրանց դեմ եւ պետք է հաղթի:

Գիտեր եւ նրան, ով կօգներ իրեն: Ռուսաց ցարը: Այ թե ում բարեկամն ու դաստիարակն էր ուզում լինել, որ պաշտոնն էր ձգում նրան, եւ խոնարհաբար ինչ էր խնդրում իր աղոթքներում: Եվ տերը լսեց իր հավատարիմին: Երբ պարտվեցին դեղնադեմների հետ պատերազմում ու սկսվեց խռովությունը, երբ բոլոր անցքերից դուրս սողացին խառնակիչները, երբ լկտիացած բանվորները ոչ թե պարզապես հացուկարագ եւ ութժամյա աշխատանքային օր, այլեւ ինչ-որ ապուշ ազատություն էին պահանջում, որը չգիտես ինչներին էր պետք, երբ ինտելիգենտները սկսեցին ճոճել Եկեղեցին ու սրտաճմլիկ մորմոքով ինչ-որ առանձնահատուկ Աստված փնտրել ամենուր, բացի տաճարներից, Իսիդորը հռչակվեց գահի թշնամիների դեմ քարոզներով: Նախ՝ իր վանքում, հետո՝ քաղաքում, հետո նահանգում ժողովրդին ընդվզման էր կոչում հեղափոխության դեմ, խռովության՝ անկարգությունների դեմ, կոչ էր անում ջարդել ցուցարարներին, ու ժողովուրդը հավատաց նրան, բազմություններով գնաց նրա, ոչ թե անզոր նահանգապետի ետեւից:

Արարողությունները նրա վանքում վեց ժամ էին տեւում, Իսիդորի քարոզներին լալիս ու աղաղակում էին հազարավոր ձայներով, այնքան պերճախոս ու համոզիչ էր խոսում: «Ուզում եք փրկվել, պահպանեք ինձ,- թռչում էր խուլ ձայնը վանքի հրապարակի վրայով:- Առանց ինձ բոլորդ՝ եւ՛ երեխաները ձեր, եւ՛ թոռները, եւ՛ ծոռները, բոլո՛րդ կմեռնեք: Այստեղ, այս պատերի մեջ, այս պատերի տակ է փրկության տապանը»: Ամբոխը ոսկեբերան էր կոչում նրան ու նվիրատվություններ անում ողջ քաղաքից, ամբողջ հարուստ նահանգից: Ի փառս Իսիդորի ջանում էին հարյուրավոր,

ապա եւ հազարավոր մարդիկ, եւ քայքայված վանքը վերածվում էր անառիկ ամրոցի՝ շրջապատված պարիսպներով ու խանդակով եւ հողի մեջ խորացող երկար ու ճյուղարվորված անցուղիներով: Չէր վախենում ոչնչից ու ոչ մեկից, փոխարենը՝ իրենից էին վախենում:

Իսիդորը շատ թշնամիներ ուներ, անսահման ատում էին նրան, հալածում թերթերում, մարդասպաններ ուղարկում, դատապարտում էին քահանայապետերն ու Սինոդի գլխավոր վերատեսուչը համոզում էր աքսորել Սոլովկի, զորավոր ու սարսափելի էր նրա թշնամին՝ Պյոտր Արկադեւիչ Ստոլիպինը, բայց Իսիդորին ավելի մեծ ուժ էր պահպանում: Նրան արտաքսում էին, բայց վերադառնում էր ավելի ամրացած եւ ուժեղ: Ժողովուրդը գնում էր նրա ետեւից, դրա մեջ էր նրա գերագույն ճշմարտությունը, եւ նա գիտեր՝ ուր առաջնորդել ժողովրդին: «Ես Գապոն քահանան չեմ, ես ոչինչ չեմ խնդրելու ցարից, ես ինքս կպահպանեմ ցարին ու գայլի պես կհոշոտեմ նրա բոլոր թշնամիներին»,- ասում էր մերձավորներին, իր ամենահավատարիմ աշակերտներին: Ասում էր քահանայապետի տանը, ասում էր նահամգապետին: Ճիտակ ու անթաքույց: Եվ նրա մասին լսեց Պետերբուրգը, լսեցին հենց պալատում, եւ մի անգամ անձամբ թագավորը կանչեց իր մոտ: Բոլորն ապշած էին ցարի ընտրությունից, բոլորը քչփչում էին՝ պետք չէ թույլ տալ, որ սեւասքեմ խառնակիչը կանգնի թագավորի առաջ, գայթակղությունը մեծ է եւ ոչ մի օգուտ՝ թերթերը կտարածեն, սալոններում լեզվին կտան, կմոլորեցնեն ժողովրդին, բայց տեր-թագավորն ականջ չդրեց իր բոյարներին, դավաճաններին, վախկոտներին ու անաստվածներին: Թագավորական սրտին բացվել էր հավատարիմ մարդը, իսկ հավատարիմ մարդուն՝ թագավորի սիրտը: Հոգու աչքերով տեսավ Իսիսդորը՝ ամեն ինչ ճիշտ այնպես է, ինչպես պիտի լիներ, ինչպես նախանշված էր իրեն, եւ ահա արդեն սպասավորում է Ցարսկոյե սելոյի ընտանեկան եկեղեցում, ահա քարոզ է կարդում, որին ականջալուր է օգոստափառ ընտանիքը: Եվ այդ պահին ի՞նչ հետաքրքիր, թե իր դեմ ժանիք է սրում ամենազոր վարչապետը. պարզվեց՝ Պետրուշայի ձեռքերը կարճ են, ապա եւ ընդհանրապես ջախջախվեց թշնամին: Իսկ Ֆեոֆիլը վաղուց արդեն Պետերբուրգում չէր. թագուհու սրտով չէր եղել ու ծառայության էր տեղափոխվել հարավ՝ պալատից հեռու: Իսկ թագավորն ընտրեց հավատարմին, մերձավորեց նրան, գնահատեց, սիրեց:

Բայց երբ սեւասքեմն արդեն պատրաստ էր տոնելու հաղթանակը, երբ արդեն հավատացել էր, որ կգրավի իր տեղը գահի կողքին, եւ փոշեցրիվ կանի բոլոր թշնամիներին եւ ավելի կբարձրանա՝ ցարին բացելով իր վե-

ռաբերմամբ Աստվածային հղացումը, պարզվեց՝ նվիրական սրբատեղին արդեն զբաղված է: Եվ ո՞վ էր զբաղեցնողը: Ավելի խստապահանջ մի ճգնավո՞ր: Սրբագույն արդարակյա՞ց: Ցերմեռանդ աղոթարա՞ր: Մեկը, ում կարող էր իրավամբ զիջել իր տեղն ու դերը եւ հնազանդվել: Երանի թե: Մի դուրսպրծուկ, խաբեբա, անառակ ու անգետ գեղջուկ, սիբիրցի չալդոն, որ բաղնիք էր տանում պետերբուրգյան տիկնանց եւ գոհացնում նրանց իր անչափելի անդամով, խարանակիր ազգանունով մի անարգ խլիստ, որ Իսիդորից առաջ էր խցկվել ցարական ընտանիք: Եվ կարողացե՞լ էր սրիկան: Բոլորին հմայել էր՝ եւ՛ Ֆեոֆիլին, որ այն ժամանակ դեռ շատ ուժեղ էր, եւ՛ նիժնեվոլգյան եպիսկոպոսին, եւ մեծ իշխանների հետ ամուսնացած չեռնոգորյան երկու միստիկ տիկնանց, եւ ողջ սեւ հարյուրյակին,- բոլորի՛ն խաբեց եւ այնպես հավատացյալ ներկայացավ, այնպես հպատակ, այնպես պերճախոս, այնպես միապետական եւ անխոնջ ուխտավոր, այնպես լվաց բոլորի ուղեղները, որ ցարական պալատ տարան նրան անհեռատես մարդիկ, ներկայացրին թագավորին, ու հետո որքան էլ զղջում էին, արդեն ուշ էր: Տգի պես խրվեց ցարական մարմնի մեջ: Տարին չանցած՝ խլիստը դարձավ ուղղափառ ցարի առաջնագույն բարեկամը, խոստովանահայրը, զրուցակիցը, ցարական ընտանիքի քարոզիչը, որին երկար նամակներ էին գրում թագուհին ու նրա հիմար դուստրերը: Իսկ բարեկրթության անվարժ չալդոնը ամենուր պարծենում էր այդ նամակներով, եւ երբ Իսիդորը չհավատալով՝ գունատված գոչեց «Խաբում ես, շո՛ւն, ոչ մի նամակ էլ չունես», հանեց ճմռթված թերթիկներն ու ցույց տվեց. «Սիրեցյալ իմ եւ անմոռանալի ուսուցի՛չ, փրկի՛չ եւ դաստիարա՛կ: Ինչպե՛ս եմ տառապում առանց քեզ...»:

Դա թագուհու ձեռքն էր, թագուհու ձայնը, եւ Իսիդորը հասկացավ, զգաց, որ սուտ չի, իսկական են նամակները: Եվ ինչպե՛ս ատեց այդ ժամանակ խլիստին: Բայց ցույց չտվեց, դարձավ նրա մտերիմը, ընկերը, մեկնեց Սիբիր, գիշերեց գյուղական խրճիթում, չալդոնի հետ գնում էր բաղնիք, քաշեց նրա բոլոր գաղտնիքները, գողացավ թագուհու նամակներն ու աշխարհով մեկ արեց՝ թող բոլորն իմանան ինչ է կատարվում պալատում, հետո իր հովանավորին՝ նիժնեվոլգյան քահանայապետին խնդրեց հուշել թագավորին, հուշել հովվապետ Անտոնիին՝ թող վռնդեն ինքնակոչին ու անառակին, զազրախոսին, որը չի կարողանում պահել ուրիշի գաղտնիքները, թող նրա տեղը կանչեն ամենաարժանավորին, ամենակուսականին, ամենաողջախոհին, որ իր թեմում շան պես պահպանում է թագավորական գահը ջհուդներից ու ձախ հեղափոխականներից, թող կոչվածին հաստա-

տեն՝ Ռուսաստանը խռովությունից փրկելու: Եվ հավատավոր հովվապետն ընկալեց, հովվապետը բռնկվեց, հովվապետն ինքն էլ զգաց՝ ինչ-որ բան այնպես չէ ռուսական պետության մեջ, խռովություն է հասունանում, սեփական ձեռքերով աղետ են բերում իշխանությանը, իսկ խլիստը ջուր է պղտորում ու խաղում խառնակիչների օգտին, բայց ականջ չդրին վեհին, եւ ամեն ինչ վատ վերջացավ, շա՛տ վատ վերջացավ:

Այդ հիշողություններից այնպես էին ցավեցնում Իսիդորին, որ հուսահատությունից ու չարությունից ուզում էր թավալվել գետնին: Չէ՞ որ ամեն ինչ այնպես էին մտածել ու հաշվել, որ սխալ լինել չէր կարող: Պետերբուրգում հովվապետի հետ որոշել ու դեկտեմբերի մի օր խլիստին կանչել էին Վասիլեյան կղզու վանատուն եւ, խաչը ձեռքներին, սրբապատկերի առաջ պահանջել, որ հանգիստ թողնի ցարական ընտանիքը, եւ արգելել էին ընդհանրապես մոտ գնալ կանացի սեռին: Ու որպեսզի ոչնչով չկարողանա մեղք գործել, որոշել էին ամորձատել,- հովվապետն իր փորձով գիտեր դա ինչպես է արվում,- միայն թե չալդոնը ճարպիկ ու կռվարար էր, դուրս պրծավ չարի զավակը չորս ուժեղ այրերի ձեռքից եւ անշալվար, անիծյալ անդամը թափ տալով՝ կտրեց Նեւան ու վազեց պալատ՝ գանգատվելու: Եվ ո՞ւմ խոսքին ականջալուր եղավ կուրացած, միտքը կորցրած տեր-թագավորը: Իր հավատարիմ զավակների՞: Վեհի՞: Քահանայապետի՞: Աստվածավախ ուխտավոր Միտենկա Կո՞զելսկու: Խլիստին հավատաց, ծռակող, կակազ գեղցուն, շնացողին, արվամոլին, ձեռնաշարժին ու անառակին: Նրա՛ն հավատաց:

Հովվապետին ու Իսիդորին աքսորեցին տարբեր մենաստաններ՝ ապաշխարելու: Վեհն ընդունեց ու հնազանդվեց, քահանան ապստամբեց ու սպառնաց, որ կհրաժարվի հոգեւոր աստիճանից, եթե խլիստին անհապաղ չվռնդեն ցարի մոտից: Բայց այս անգամ Իսիդորին չլսեցին: Եվ ի՞նչ էր մնում, եթե ոչ խզել կապերը նրանց հետ՝ արյամբ գրելով հրաժարիմքը սուտ եկեղեցուց ու սուտ հովվապետերից: Վեհը նրան համոզում էր չհրաժարվել աստիճանից՝ հա՛յր Իսիդոր, հնազանդվիր, քեզ մի արտավիժիր Եկեղեցու գրկից, վիժվածք մի եղիր: Բայց հիմա էլ նա չլսեց: Որովհետեւ գիտեր իր ճշմարտությունը: Որմնադրի մերժած քարն անկյունաքար կդառնա: Ինքը այդ քարն էր, Պետրոսը, ռուսաց նոր պատրիարքը՝ կոչված կործանելու զառամ, ճարպակալած, հույլ, ուժատ ռուսական Եկեղեցին, որն ի տարբերություն երուսաղեմյան կնքավազանի՝ ապաքինում խնդրող խեղանդամների, ոչինչ չէր սպասում, այլ ողջ-ողջ նեխում ու գարշահոտում էր: Իսիդորը գիտեր, որ կվռնդի նրանց, ինչպես Փրկիչը ժամա-

նակին վաճառականներին քշեց տաճարից, հավատում էր, որ իր ետեւից ոչ թե հազարներ, այլ միլիոններ կգնան, գիտեր, որ ամբողջ երկիրը կելնի ոտքի, ճշմարտությունը կհաղթանակի, եւ թագավորը կհասկանա իր սխալը, մեղա կգա հավատարիմ մարդու առաջ ու կվերադարձնի նրան:

Իսիդորն իր տենդող երազներում անվերջ տեսնում էր զղջման այդ տեսարանը, ողջ Պետերբուրգի աչքի առաջ գլխին մոխիր ցանող քրջազգեաց կայսերն ու գոռոզ կայսրուհուն իրենց երեխաների հետ ծնկաչոք էր տեսնում զրպարտված սեւասքեմ քահանայի դեմ: Իսկ եթե ոչ՝ նոր ցար էլ կընտրեր, թագավոր ու հովվապետ կհռչակեր իրեն, եւ այդ ժամանակ Ռուսաստանը հաստատ կդառնար այն Երրորդ Հռոմը, որից հետո չորրորդը չի լինի: Ա՛խ, ինչպիսի ուժ էր զգում այդ օրերին: Քնելու ժամանակ չկար, ոչինչ ուտել պետք չէր. Տերն ամեն ինչ տալիս ու շշնջում էր՝ մի՛ շեղվիր, խիզախի՛ր, զավա՛կս: Եվ ափսոս կլիներ, եթե կորչեր այդ հանդուգն ուժը, եթե որեւէ օգուտ չբերեր ո՛չ հովվին, ո՛չ գառնուկներին այս տան: Իսիդորը պտտվում էր պալատի շուրջը, ոտք ու կոշիկ մաշում պետերբուրգյան ստոր մայթերին, սպասում էր հրաշքի եւ ուշադրություն չէր դարձնում տրտմած չարքաճտին, որը ծանծրույթից հորանջելով նայում էր իր ճիգերին, ինչպես ձկնորսն է ուռկանն ընկած ձկան թպրտոցին նայում. ո՞ւր պիտի փախչի:

Իսկ գոռոզ հյուսիսային քաղաքն առաջվա պես անտարբեր էր, հղփացած, երեսառած, եւ Իսիդորի խոսքն ու արարմունքը ոչ մեկին չէին զարմացնում: Թերթերի թղթակիցները դեւերի պես օգտագործում էին նրան, քանի դեռ խլիստի դեմ էր մարտնչում, այդպես էլ զվարճացան մի քիչ ու մոռացան: Իսիդորը խլիստին դա էլ չէր կարողանում ներել. ինչո՞ւ նրան ամեն ինչ, իսկ մյուսներին՝ ոչինչ: Հերիք է չալդոնը փոշտա, շուրջը խռնվում է գրչակների ամբոխը: Դուման նիստ նիստի ետեւից է նվիրում նրան, քահանայապետերը զայրանում են, նահանգապետները՝ գազազում, իսկ Իսիդորը մի ամբողջ ճառ կխոսի, հրապարակավ մեղա կգա հանգուցյալ Լեւ Տոլստոյի առաջ, նրա նկարը կկախի վերնասենյակում, սուրբ պատկերների կողքին, մոմեր կվառի, խունկ կծխի եւ ուսուցիչ կկոչի, մեկ է, ոչ ոք չի հետաքրքրվի:

Միայն մի բուռ խելառ կնանիք ու սակավուժ տղամարդիկ հետեւեցին Ծչետինկինին, եւ Իսիդորը նրանց վրա էր թափում իր ողջ չարությունը, չկայացած հովվապետության երազանքը՝ միաժամանակ լրացնելով ջահելության բացթողումները՝ գոհացնելով մարմինը նույն կրքով ու տռփանքով, որով ժամանակին սանձում էր: Իսկ հետո փողը սկսեց վերջանալ, եւ

նա վախեցավ, որ համայնքը կքայքայվի, բոլորը կհեռանան իրենից՝ նոր ուսուցիչ փնտրելու: Խուճապահար եղավ, տագնապեց ու սկսեց աղոթել, որ այդպիսի բան չլինի, բայց ոչ ոք չէր արձագանքում, եւ երբ կորցրեց հույսը, հայտնվեցին մութ մարդիկ, որ պատանությունից իրեն չարչարողի պես օդից էին հյուսվում: Այդ մարդկանց չէր կանչել, չգիտեր ովքեր են ու որտեղից հայտնվեցին: Մեկը ցածրահասակ էր, բարետես, սեպածեւ փոքրիկ մորուքով, ակնոցով, սիրալիր, բարեկիրթ, գիտունների այն տեսակից, որոնց Իսիդորը ողջ կյանքում ատել ու պայքարել էր, իսկ հիմա ստիպված էր խոսել նրա հետ, իսկ մյուսը՝ նիհար, բարձրահասակ, այնպիսի ծակող հայացքով, որ Իսիդորը, որքան էլ իրեն ուժեղ մարդ էր համարում, փշաքաղվեց: Բայց զրույցը չստացվեց: Իսիդորը փորձեց խոսել աստվածայինի մասին, ընդհատեցին, մարդկայինի մասին փորձեց՝ ծանձրացան: Դու դրանից ոչինչ չես հասկանում, ասաց բարետեսն ու սկսեց Իսիդորին հարցուփորձ անել խլիստի, թագավորի եւ թագուհու մասին: Եվ որքան շատ էր հարցնում, այնքան Իսիդորի սրտում եռում էր ատելությունը, արդեն ոչ միայն խլիստի դեմ, այլեւ նրանց, ում նա «հայրիկ» ու «մայրիկ» էր ասում: Եվ որքան ավելի էր ատում, այնքան ահագնանում էր վրեժի զգացումը: Բայց մթին մարդիկ վրեժխնդրություն չէին ուզում, առաջարկեցին գիրք գրել այն մասին, թե ինչպես է վանական դարձել, ինչպես էր սովորում ակադեմիայում, ինչպես ծանոթացավ, ապա գժտվեց խլիստի հետ, խլիստի կանանց, թագուհու եւ դուստրերի գողացված նամակների մասին: Իսիդորը շփոթվեց. քարոզ կարդալը մի բան է, գիրք գրելը՝ ուրիշ:

- Չեմ կարող:

- Քեզնից ոչինչ չի էլ պահանջվում, հայրենակի՛ց,- խոսեց նիհարը, որ մինչ այդ լուռ էր, եւ Իսիդորը նրա մեջ ճանաչեց համերկրացի վոլգացուն:- Ուրիշները կգրեն: Դու միայն անունդ դիր:

- Ո՛չ,- առարկեց նա:- Ես իմ անունը ոչ մեկին չեմ տա:

- Տես, է՛,- քմծիծաղեց նիհարը:- Դու էլ չես ուզում դադար մնաս, տղա՛: Դե ինչ, գրիր:

Նրանք մի քիչ կանխավճար թողեցին՝ խոստանալով, որ մնացածը հետո կտան, եւ անհետացան: Իսիդորը սկզբում սպասում ու վախենում էր, սարսափելի էին թվում այդ՝ չգիտես ում բանբերները, բայց նրանք այլեւս չհայտնվեցին, եւ Իսիդորը մոռացավ հանգիստ նստելու կարգադրությունը: Հանգիստ մնալ չէր կարողանում. նա չէր ապրում, այլ առաջ էր մղվում կամ մղում էին, ու չգիտեր ինչ է սպասում առջեւում, ու հանկարծ պարզվեց, որ իր ամեն քայլին հետեւում է անողոք որսորդը՝ թաքնված նշանա-

ռուի պես սպասելով կրակելու պահին: Եվ ոչ ոք այդ դարանի մասին չէր զգուշացրել: Ճիշտը նրան խեղդելն էր, եւ կխեղդեր, բայց չհասցրեց: Բոլոր թշնամիներին աչքի տակ չես պահի, ահա եւ սայթաքեց հարթ տեղում, չնկատեց վտանգը այնտեղ, ուր կար: Բայց ո՞վ կմտածեր, որ անվնաս երազող-բնապաշտը, որ անօգնական ինչ-որ բառեր էր թոթվում ռուս ժողովրդի եւ Աստծուն փնտրելու մասին, խենթը, որը երազում էր կարգուկանոն հաստատել աղանդավորական քաոսում, ամենավտանգավոր թշնամին կլինի:

Ոստիկանությունն էլ ոչնչով չօգնեց: Ուրացան, մոռացան պահնորդական բաժանմունքին մատուցած նախկին ծառայությունները, երբ ջահել աբեղան խուզարկուներին գցում էր իր մրցակիցների՝ բապտիստների, մոլոկանների, դուխոբորների գաղտնի հավաքույթների հետքին, իսկ հետո նաեւ խլիստական աստվածամայր Դուսյա Միրնովային հանձնեց: Վրեժ լուծելով, որովհետեւ, երբ Պետերբուրգ գալուն պես առաջարկել էր դաշինք կնքել ու միավորել հոտը, կուշտուկուռ, զեխ, դիմափոշով ծեփված Դուսյան այնպես մեծամիտ ու քամահրանքով էր նայել նրան, որ քիչ էր մնում մռութին հասցներ, մազերից բռնած՝ քաշեքաշ անել կամ էլ նվաստացնել, եւ հաճույքով քարշ կտար ու կնվաստացներ, եթե նրան ամենուր չհետեւեին հեշտասեր որձ առաքյալները, որոնք հերթով բավարարում էին կնոջը: Ուրիշ կերպ պատասխանեց Դուսյային, բայց դա չփրկեց: Ծչետինկինը չհասցրեց փախչել, բռնվեց Ֆինլանդական կայարանում, կանգնեց դատարանի առաջ, եւ չնայած փաստաբան Նեզաբուդնիի բոցաշունչ ճառին, որը պահանջում էր պաշտպանել խղճի ազատությունն ու անհատի իրավունքները, կամ գոնե հոգեկան հիվանդ ճանաչել իր պաշտպանյալին, աքսորվեց Սիբիր՝ կալանավորական վաշտեր, այն նույն վայրերը, որտեղ ծնվել էր նրան կործանած չալդոնը:

Հասարակությունը երկու մասի բաժանվեց. մեկը ծաղրում էր, մյուսը՝ ծափահարում, թերթերը ցնծում ու հայհոյում էին, ոմանք ասում էին, թե պատիժը չափից դուրս մեղմ է, Իսիդորից հոգնած Սինոդը լռում էր, իսկ որբացած հոտը, նրա դեմ անհերքելի ցուցմունքներ տալով, նոր ուսուցիչ ընտրեց, որն իր հայեցողությամբ եղբայրներին ու քույրերին միավորեց ազատ ամուսնությամբ: Պավել Մատվեեւիչ Լեգկոբընտովին որպես բարեբար-հարսանքահայր հրավիրեցին ընդհանրական հարսանիքին, հատուկ պատիվներ տվեցին նրա ժողովրդական տիկնոջը, իսկ Իսիդորին ուրացան: Իսիդորին մոռացան, դավաճանեցին, եւ միակը, որ հետեւեց տապալված ուսուցչին, խեղված մարմնով, փլված քթով երեսնամյա սիզրան-

ցի քաղքենուհի Ֆիոնիան էր, որին բոլորը սիֆիլիսով հիվանդ նախկին մարմնավաճառ էին համարում, իսկ նա ասում էր, որ կույս է, եւ միշտ ու բոլոր մեղքերում կնանիք ու աղջիներն են մեղավոր, պետք չի գեղեցիկ լինել ու գայթակղության մեջ գցել տղամարդկանց: Կնոջ գեղեցկությունը սատանայից է, այ ինքն էլ ջահել է եղել, սիրուն, տղամարդիկ հանգիստ չէին թողնում, վաճառականները փող էին շաղ տալիս ոտքերի տակ, սեմինարիստները ձեռքն էին խնդրում, աստիճանավորները խնամախոսներ էին ուղարկում, իսկ նա Աստծուց միայն մի բան էր խնդրում՝ վերցրո՛ւ գեղեցկությունս: Եվ աղոթքը կատարվեց: Եվ որքան ամոթապարտ էր նրա անկումը, փառքն այնքան ավելի կլինի:

Ֆիոնիան Իսիդորին գիտեր Ցարիցինից, որտեղ այլ կանանց հետ կատակոմբեր էր փորում ու քարեր հանում, եւ Իսիդորին պատվում էր որպես իր փեսացուն, եւ ամեն կեսգիշերի վառում էր կանթեղը՝ նրա հայտնվելուն սպասելով: Բայց Իսիդորի հայտնությունն ուշանում էր:

- Սպասի՛ր, ժանանակը չի,- ասում էր նա:- Հենց ժամանակը հասնի, առաջինը դու կիմանաս, իսկ մինչ այդ արթուն եղիր:

Քույրերը Ֆիոնիային չէին սիրում, երեսին ու թաքուն ծիծաղում, ծաղրում էին, կճատ, աղայի տականոց, պոռնիկ անվանում, բայց երբ Իսիդորին բանտարկեցին ու բոլոր գառնուկները ցիրուցան եղան, միայն նա մնաց առաջնորդի հետ: Չհավատաց վատ-վատ բաներին, որ սուրբ հոր մասին գրում էին, հաստատուն էր, հավատարիմ եւ ուզում էր նրա հետեւից գնալ կալանավաշտեր, բայց Իսիդորն այլ բան պատվիրեց: Երբ տեսակցությունը թույլատրեցին, ինչի համար Ֆիոնիան հարսնացու էր ներկայացել՝ թավալ գալու աստիճան ծիծաղեցնելով վերակացուներին, Իսիդորը շշնջաց.

- Ինձ համար չանհանգստանաս: Նրա՛ն պատժիր: Աստուծով եմ երդվեցնում՝ սպանի՛ր սրիկային:

- Գրողի՞ն,- այլանդակված քթով աղմուկով ներս քաշելով բանտի օդը՝ հարցրեց կույսը:

Ճչետինկինը ցնցվեց, մի պահ մտքի մեջ ընկավ՝ ասես ծանրութեթեւ անելով՝ ում մահվան լուրն ավելի մեծ հաճույք կպատճառի:

- Չէ՛, չալդոնին,- ասաց նա, եւ ափսոսանք հնչեց ձայնի մեջ:- Գրչակով ուրիշները կզբաղվեն: Իսկ դու խլիստի վերջը պիտի տաս եւ արագ:

Եվ կռանալով Ֆիոնիայի ականջին՝ սկսեց արագ ինչ-որ բան շշնջալ: Եվ որքան երկարում էր շշնջոցը, այնքան խտանում էր վախը այլանդակված աղջկական դեմքին, ինչից այն ավելի էր սեւանում ու աղավաղվում:

Բայց Իսիդորը խոսում էր, ավելի ու ավելի տաքանալով, ասես հանդես էր գալիս ամբոխի առաջ, եւ կնոջ վախն աստիճանաբար նվազեց, իսկ այտերին կրկին խաղաց վարդագույնը:

- Ամեն ինչ կանեմ ոնց ասեցիր,- պատասխանեց նա՝ խոնարհվելով ու համբուրելով ուսուցչի ձեռքը:- Օրհնիր, հա՛յր:

- Աստված օրհնի: Ու ոչնչից չվախենաս: Գլխավորը՝ մեղք չգործես: Հիշո՞ւմ ես «մեղք» բառը ինչից է ծագում:

- Հա, սուրբ հայր,- գլխով արեց Ֆիոնիան:- Մեղք գործել, նշանակում է վրիպել նշանակետից:

- Դե, ուրեմն չվրիպես:

Լեգկոբըտովը այդ խորհրդավոր խոսակցության մասին, ի բարեբախտություն իրեն, չգիտեր: Նա ցնծում ու տոնում էր հաղթանակը, ու երանությունը միայն փիլիսոփա Ռ-վի բառերն էին թունավորում, որ բարի մարդիկ հաճկատարությամբ հասցրել էին նրան. «Չկա այնպիսի հասարակական կարգից վատը, որի օրոք քրեական հետապնդումը սկսվում է թերթի հոդվածից: Ժուռնալիստներին իշխանություն տալն ավելի վտանգավոր է, քան ոստիկաններին տալ իշխանությունը: Եվ ընդհանրապես, չեմ հասկանում, աղանդավորները նրա ինչի՞ն էին պետք, եթե այդքան լավ է ստացվում շների մասին գրելը»:

Բայց Պավել Մատվեեւիչը այդ վիրավորանքն էլ կուլ տվեց: «Վեպին ամեն ինչ պետք կգա»,- մռայլ տնտեսվարությամբ մտածեց նա, իսկ գլխում արդեն հասունանում էր մտահղացումը՝ ինչպես միացնել Ռ-վին՝ Կրոնափիլիսոփայական ակումբից եւ Ծչետկինին չեւրեկների աղանդից վտարելու գործերը, ինչպես օգտագործել երկու կեղծ մարգարեներին եւ տանել այն զուգահեռը, որը վերջնականապես ամեն ինչ իր տեղը կդնի ուսուցչի եւ աշակերտի չկայացած հոգեւոր սիրավեպում: Այս անգամ նրան կարծես հաջողվել էր խփել ու աղ դնել շարունակ փախս տվող երջանկությունը:

5

Քամիարն այնպես էր ջարդրդվել, ասես տերը վրան փորձել էր ողջ անձնական ատելությունը: Կոմիսարովին միշտ ապշեցրել էր, թե գեղջուկներն ինչպիսի դաժանությամբ են վերաբերվում էին իրեց մեքենաներին: Ամեն ինչին էին այդպես վերաբերվում. կանայք ծեծում էին երեխաներին, անասուններին էին ծեծում, հիմա էլ թանկարժեք արտասահմանյան մեքե-

նան՝ Քլեյթոնի հինգ համարի լայնակի զտիչ քամիարը, լինգո՞վ էին թակել, ինչ է: Կամ էլ մտածել էին՝ ավելի ուժեղ խփեն, ավելի լա՞վ կաշխատի: Իսկ երբ չի աշխատել, բարկացել ու վերջնական ջարդուփշուր են արել: Ա՛ռ, ստացի՛ր, անիծվա՛ծ: Մեխանիկը նայում էր այլանդակված խելացի սարքին, ու սրտում կատաղությունը խառնվում էր խղճահարությանը, ասես խեղված մարդ էր պառկած իր դեմ:

Վասիլի Խրիստոֆորովիչը համբերատար հոգածությամբ, ջանալով ցավ չպատճառել՝ քանդում էր մեքենայի ներքին օրգանները, մտածելով, թե ինչպես ավելի լավ կլինի վերականգնել ջարդված թիապտուտակը, եւ ինչպես վարվել բզկտված քառօղակ մեխանիզմի հետ, որտեղից գտնի կամ ինչով փոխարինի պակասող մասերը, ու հանկարծ մտքով անցավ, որ քամիարն այն արարածի կամ, ավելի ստույգ, առարկայի կերպարն է, որ մարդկանց դիմավորում է մահից հետո: Այդպիսի մի բան ասվում էր Ավետարանում, որ վատ էր հիշում, կարդացել էր վաղուց ու ստիպողաբար, որպես ինչ-որ ծանձրալի եւ ոչ պարտադիր ընթերցանության գրքույկ, բայց հետմահու հատուցման գաղափարը մտապահվել էր եւ շատ հարազատ էր նրան: Չնայած Կոմիսարովը չէր սիրում տերտերներին ագահության ու ծուլության համար, բայց նրանք մի բան ճիշտ էին ասում՝ ինչպես այստեղ ապրես, այնպես էլ այնտեղ կստանաս: Հակառակ դեպքում ո՞ւր է արդարությունը: Հո այդպիսին չի՞ կարելի համարել անէությունը, որը հավասարեցնում ու փոշի է դարձնում բոլորին: Ու հիմա, քամիարը նորոգելիս, խորհում էր, որ պետք է տառացի մեկնաբանել երկնային հունձքի մասին Հիսուսի խոսքերը. սովորական մարդկային ընկալումով ոչ մի Ահեղ դատաստան էլ չկա, ինչպես եւ չկա Պետրոս առաքյալը՝ իր դրախտի բանալիներով, ասենք, դրախտ էլ չկա, իսկ ահա խելացի հսկա մեքենան, որն իր միջով բաց է թողնում մեռյալներին եւ որոշում հետո ինչպես վարվել յուրաքանչյուրի հետ՝ դե՞ն նետել, թե՞ օգտագործել ինչ-որ խելամիտ գործում,- այդպիսի մեխանիզմ անկասկած գոյություն ունի, քանզի բնության մեջ ոչինչ չի կարող հենց այնպես անհետանալ:

Երեւակայությունն անմիջապես այսպիսի պատկեր գծեց. մահը որպես հունձք եւ կոպիտ կալսում՝ շղթաներով, իսկ հետո երկրից անընդհատ ստացվող հոգիների հսկա դեզը՝ բաղկացած ամբողջական կամ ջարդված հատիկներից, մղեղից, փուչ ու տրորված հասկերից, որոմի սերմերից, կավի հատիկներից, դարմանի փշրանքից, ավազից ու այլ խառնուրդներից, ռուսական, գերմանական, ամերիկյան, անգլիական հսկա սայլերով հասցվում է հսկա մեքենայի մոտ, եւ ամեն սայլի համար իր ծեւի ու չափի անց-

քերով ցանց է նախատեսված: Դեզի վրա փչում է երկնային քամու հզոր հոսքը եւ ցորենը զատում որոմից: Հսկա քամիարը երբեք դադար չի առնում. ամեն րոպե, երբ մարդիկ երկրի վրա աշխատում են, քնում, խմում, սիրում, սպանում, բռնաբարում, կողոպտում, հերկում, ձուկ բռնում, որս անում, երեխա ծնում, հիվանդանում, նորանոր հոգիներ են հասնում մեքենային, ու երկնքում կատարվում է այդ աշխատանքը, որին հետեւում ու քամիարը կառավարում է ինչ-որ մեկը, բայց այդ մեկը շնչավոր արարած չէ, որ կոչվում է Աստված, այլ մեծ էվոլյուցիան, որին ենթարկվում են եւ՛ կյանքը, եւ՛ մահը: Եվ այն երբեք չի սխալվում, հոգնել ու թուլանալ չգիտի, նրան անհնար է կաշառել, համոզել, խաբել, գութը շարժել... Այնտեղ, ինչ-որ օդային ուղիներում իր ճանապարհն էր անցնում սպանված շրջմոլիկի հոգին՝ զտվելով նախկին ու թվացյալ մեղքերից, փոքրանալով, որպեսզի խառնվի նույնպիսի մաքուր հատիկներին ու վերածվի երկնային հացի, որ սնում է Տիեզերքը եւ պահպանում նրա աստղերի վառքը: Ու նաեւ մտածում էր երազկոտ Վասիլի Խրիստոֆորովիչը, որ երբ մեկնի այստեղից, իր տեղն այդ մեխանիզմի կողքին կլինի, կդառնա նրա հսկիչն ու կհետեւի, որ ոչինչ չփչանա երկնային կառույցում, յուղը չպակասի, շղթաները չժանգոտեն, եւ իր ողջ կյանքն այստեղ միայն նախապատրաստություն է այդ ապագա ծառայությանը:

Իսկ այդ ընթացքում լուսանում էր, բարձրանում էր հեղձուցիչ, վաղ ծերացած արեւը, ստվերները կարճանում էին, եւ առավոտվա տապից դուրս պրծավ շներով շրջապատված լեգկոբընտովյան հեծանիվը, որ դղրդացնում էր վաղուց չյուղած շղթան եւ ըստ երեւույթին գոյություն ուներ իր անդադրում հեծյալից առանձին:

- Դե ինչ, գո՞հ եք,- գոչեց որսորդն ու ընթացքից ցած թռավ՝ թողնելով, որ հեծանիվն ինքնաբեր անցնի մի քանի մետր եւ շխկոցով ընկնի գետնին:

«Սա էլ հեծանիվն է ջարդում,- ցրված մտածեց Կոմիսարովը,- իսկ ես հետո ստիպված պիտի նորոգեմ»:

- Հա՛, չգիտե՞ք:

Պավել Մատվեեւիչը մազերը սովորականից խռիվ էին, աչքերը վառվում էին, ինչպես որս անելիս:

- Թերթերը դեռ չե՞ք կարդացել: Ահա, խնդրե՛մ:

Նա անփույթ շարժումով դազգահին նետեց «Բիրժեվիե վեդոմոստին», եւ Վասիլի Խրիստոֆորովիչը բացված էջին տեսավ այն մարդու պատկերը, որին ողբում էր, դողդոջուն գիշերվա մեջ փորձում էր գտնել նրան ու կռահել հետմահու ճակատագիրը:

- Ոչ թե սպանված է, այլ՝ վիրավոր,- հաղթական հայտարարեց Պավել Սատվեեւիչը:- Ծոգենավով տեղափոխել են Տյումեն, վիրահատել, շատ արյուն է կորցրել, բայց եթե ընդհանուր վարակում չսկսվի, կապրի:

Ակնթարթային ու անսպասելի լուրը այնպես ապշեցրեց ռացիոնալ Կոմիսարովին, որ աչքերում, այդ օրն արդեն երկրորդ անգամ, արցունքներ հայտնվեցին: Հանկարծ ուրախություն ու ջերմություն զգաց, որ գեղջուկը ողջ է, եւ շրջվեց Պավել Սատվեեւիչից, որ չտեսնի ու յուրովի չմեկնաբանի իր ժպիտն ու արցունքները: Ահա՛ թե ինչ, ուրեմն կնկա ուժը չի հերիքել ծանր դաշույնով ծակելու գյուղացու գործից պնդացած փորը: Այո՛, կենսունակ դուրս եկավ շրջմոլիկը, ասես հոգին կոշտ թելերով կարած լինեին մարմնին:

- Բայց հո չե՞ն ուրախանա մեր գրչակները,- բորբոքված խոսում էր Լեգկոբրտովը:- Լսո՞ւմ եք՝ ոնց են ճռճռում գրիչները Ռուսիայով մեկ՝ անսպառ փողե՛ր են հայտնվել: Ջեկուցագրեր գավառական ոստիկանապետին, հեռագրեր նահանգապետին, խնդրագրեր եպիսկոպոսին, նամակներ մինիստրին, աղերսագրեր ցարին, կանանց հիստերիկ լացուկոծ նավահանգստում: Ողջության մաղթանքներ՝ զանգահարությամբ: Բա թղթակիցնե՛րը, թղթակիցնե՛րը: Այ դուք կասկածում եք, թե նախանձում, անբարյացակամ եմ վերաբերվում նրանց, բայց ասացեք խնդրեմ, ինչպե՞ս է լինում, որ աղքատ ու խուլ սիբիրյան գյուղում, դեռ մինչեւ մահափորձը, մայրաքաղաքային թղթակից է հայտնվում, այն էլ՝ հրեա: Պատահականությո՞ւն է:

- Դե, այնքան էլ խուլ գյուղ չի,- մռլտաց Կոմիսարովը:- Քանի՛ ծուխ ունի: Մեծուղու եզրին: Ու ոչ էլ ընչազուրկ է:

- Թեկուզ քաղաք լինի: Խնդիրն այդ չէ:

- Իսկ ի՞նչն է:

- Այն, որ սույն ճարպիկ երիտասարդը փող է ստանում միանգամից երկու գերատեսչությունից՝ լրագրողական ու ոստիկանական:

- Որտեղի՞ց գիտեք:

- Գիտեմ,- խույս տվեց Պավել Սատվեեւիչը:- Ֆոմկան է պատմել: Երկուսում էլ լիքը ծանոթ ունի: Այստեղ ուրիշ հարց է ծագում. Դավիդսոնն աչքաթո՞ղ էր արել այդ կնոջը, թե՞, հակառակը, գիտեր, որ հայտնվելու է Պոկրովսկոյեում, եւ հրաման էր ստացել չմիջամտել, իսկ անհրաժեշտության դեպքում օգնել նրան: Եվ գլխավորը՝ ո՞վ է կանգնած նրա թիկունքում: Հեղափոխականնե՞րը, ոստիկանությո՞ւնը, աղանդավորնե՞րը, Ջունկո՞վսկին: Թե՞ մեծ իշխանուհի Ելիզավետա Ֆյոդորովնան, որն ինչ որ բանի համար

վրեժ է լուծում քրոջից կամ էլ ուզում է փրկել նրան, պաշտպանել գայթակղությունից: Եվ վերջապես, ինչո՞ւ գործը չհասցվեց ավարտին: Սրբազան Ռուսիայում մարդ սպանելուց հեշտ բան կա՞: Իսկ գուցե ընդհանրապես չէ՞ին ուզում սպանել: Հը՞: Պատկերացրեք այդ տեսարանը. սիֆիլիսով հիվանդ, սեւ շալով փաթաթված կրոնասեր կինը խոր խոնարհվում է գեղջուկի առաջ, ողորմություն խնդրում նրանցից, իսկ հետո, ուշադրությո՛ւն, ներքնաշորի տակից հանում է կովկասյան դաշույնը, որ խփի իր տղամարդկային ուժով հայտնի մարդու շեքին: Սա ի՞նչ է, ձեր կարծիքով կենցաղային մահափո՞րձ է: Ծարքային սպանության փո՞րձ, որ ամեն օր պատահում է մեր սրբազան Ռուսիայում: Չէ՛, սիրելի՛ս, սա ծիսական գործողություն է: Կրոնական արարողություն: Զոհաբերություն մի մռայլ, չար, նախանձ արարածի:

- Ո՞ւմ,- ցնցվեց Կոմիսարովը:

- Կա մի այդպիսի գազան,- ատամների արանքից նետեց Պավել Մատվեեւիչը:

- Մտագա՛յլը,- մրմնջաց Վասիլի Խրիստոֆորովիչը՝ ինքն էլ չհասկանալով մտքում ինչպես կցվեցին այդ երկու բառը:

- Որտեղի՞ց գիտեք,- լարվեց Լեգկոբըտովն ու կասկածով նայեց զրուցակցին:

- Նա է ասել:

- Մտագայլի մասի՞ն,- հարցն անհամբեր կրկնեց որսորդը:- Եվ ի՞նչ էր ասում:

- Ասում էր, որ ցանկացած մեղք ու առաքինություն սկսվում է մտադրությունից, եւ պետք է սովորել տարբերակել մտքերն ու կանխազգացումները, դրանցից որն է Աստծուց եւ որը՝ սատանայից:

- Ե՞վ:

- Իսկ դրա համար ամեն առավոտ ու երեկո պետք է մաքրել մտքերը, ինչպես ատամներն են մաքրում: Հիվանդ ատամները պետք է բուժել, փչացածները՝ հեռացնել: Ավելի հաճախ խոստովանել մեղքերը, հակառակ դեպքում անմաքուր մտքերով մարդու շունչն անմաքուր է լինում: Ասում էր, որ կարողանում է զգալ այդ շունչը: Այսքանը, էլ ոչինչ չեմ հիշում: Բայց ձեր ինչի՞ն է պետք:

- Պետք չլիներ, չէի հարցնի: Խնդրում եմ, փորձեք ամեն ինչ հիշել:

- Ո՛չ,- առանց ափսոսանքի կրկնեց կոմիսարովը,- չեմ հիշում, իսկ հորինել չեմ կարող:

- Մի՞թե ընդհանրապես ոչինչ չեք հիշում:

- Երկնային արքայության մասին էինք խոսում:
- Ինչի՞, ինչի՞,- ապշեց գրողը:
- Ասում էր՝ բարի մարդը նման է որոշակի նյութի, որից Երկնային արքայությունում նավեր են կառուցվում:
- Խլիստակա՞ն:
- Երկնային նավեր, որ լողում են եթերում: Երկնային արքայությունն ավելի քիչ է բնակեցված, քան երկրայինը, եւ այնտեղ դեռ շատ բան պիտի հայտնագործվի: Ու նաեւ ասում էր, թե չի հասկանում ինչու են մարդիկ ուզում ավելի երկար ապրել երկրի վրա ու դրախտ ընկնել որպես զառամյալ ծերունիներ: Երիտասարդների կյանքն այնտեղ ավելի ուրախ է: Դրա համար էլ պետք է գնալ, քանի դեռ ուժեղ ու պինդ եք, եւ պետք է դա խնդրել Աստծուց:
- Հիմարացրել է ձեզ,- դառնությամբ ասաց Լեգկոբըտովը:- Բոլորին է հիմարացրել: Ե՛վ թագավորին, եւ՛ փոքրավորին: Փուչ ծաղրածու. ահա թե ով է նա: Եվ ինչո՞ւ ձեզ է հանդիպել, ոչ թե ինձ: Հաստատ այդպես չէր ծամածռվի: Ինչո՞ւ ժամանակից շուտ խցկվենք այնտեղ: Աղանդավորական հիմարություններ են: Իսկ Ֆիոնիան ու Իսիդո՞րը: Ընդամենը գործիք են ինչ-որ մեկի ձեռքին: Ա՛խ, շատ բան կտայի, որ տեսնեի այդ դաշույնը, որով ծակել են նրան: Ձեր կարծիքով ի՞նչ է, այդ անքիթ հիմարն ի՞նքն է իր հավի ուղեղով մտածել այդ ամենը: Ո՛չ, աղավնյա՛կս, սա ուրիշի պիեսն է: Այս թշվառականին հաստատ որեւէ փիլիսոփա է հուշել: Ինտելեկտուալ սադրիչ, մտքերի տիրակալ: Իսկ հիմա, տեսե՛ք, տեսե՛ք, վրդովվում է, տողը երկու ռուբլով ֆելիետոններ է թխում «Նովոյե սլովոյի» համար, թե մի արտակարգ մարդու են սպանել, անասելի լուրջ մարդու, մեր օրերի Իլյա Մուրոմեցին, Դավիթ արքային, ռուսաց փարավոնին, հեքիաթի հիմարիկ Իվանին: Ընտանիք պիտի կերակրի, չէ՞: Լուսնային մարդիկ, թափված տերեւներ, նորությունների առաջին տրցակ, նորությունների հինգերորդ տրցակ: Չէ՛, էդ մորքուրը միայն խաղազինվոր էր ուրիշի խաղում: Հիմա բոլորը կնետվեն նրանով զբաղվելու, պարզելու՝ որեւէ մեկի սիրուհին եղե՞լ է, որտեղի՞ց սիֆիլիսը, նա լքե՞լ է այդ կնոջը, թե՞ չի լքել, իսկ այդ ընթացքում լրիվ ուրիշ մի տեղ եւ ուրիշ մարդիկ ինչ-որ սարսափելի բան կգործեն, որ հիմա նույնիսկ պատկերացնել չենք կարող: Բնականաբար ուշադրություն եք դարձրել, որ Պոկրովսկոյեի պատմությունը համընկավ Սարաեւոյում էրցհերցոգի սպանությանը:
- Ֆերդինանդին երկու շաբաթ առաջ են սպանել:
- Այսինքն հենց այն օրը, երբ մերն էին մտմտում, եթե եվրոպական

օրացույցով հաշվենք: Բայց օրացույցները վաղ թե ուշ հավասարվում են, իսկ պատմության մեջ մնում են ինչ-որ մեկի ծրագրած կրկնակ հարձակումները:

- Այդպես չէ,- արագ առարկեց Կոմիսարովը:- նույնիսկ այդ դեպքում օրերի տարբերություն կա:

- Տառակերություն մի արեք,- ձեռքը դժգոհ թափ տվեց Պավել Սատվեեւիչը:- Ի վերջո, նրանք էլ կարող էին սխալվել: Ավելի լավ է նայեք ինչ լավ է մտածված. երկու դեպքում էլ նույն մեթոդն է: Բայց իրականում ինչ-որ մեկը հյուսում է, չէ՞, այդ ցանցը, թակարդներ լարում ու հետապնդում մեզ, կցում մեր ճակատագրերը: Գիտե՞ք նաեւ ինչի է նման,- պոետական ոգեշնչումով հարցրեց որսորդը:

- Ինչի՞:

- Ստոլիպինի սպանությանը: Ի տարբերություն ձեզ, ես երբեք չեմ սիրել այդ գործչին. անսկզբունքային էր ծանոթություններում, ճոռոմախոս, պոռթկուն, նրա բոլոր գեղեցիկ արտահայտություններն էլ գրոշ չարժեն, քանզի Ռուսաստանում անհնար է որեւէ բան անել վճռական եւ արագ, միայն մեղմ, հանգիստ, դանդաղ, անչար ու անշտապ կառավարումն է ի զորու արժանավոր պտուղներ տալ մեր մեծ հարթավայրում: Բայց ես այսօր ստիպված եմ ընդունել, որ նրա հեռանալով ամեն ինչ ավելի վատացավ: Այդ գուշակը ինքնապահպանման ինչ-որ բնազդ այնուամենայնիվ ուներ: Նա իշխանությունը պաշտպանում էր ժողովրդից: Իսկ ժողովրդին՝ ինտելիգենցիայից: Իսկ այսօրվաններն այդ ընկալումն ընդհանրապես չունեն: Ո՛չ ցարը, ո՛չ մինիստրները, ո՛չ գեներալները, առավել եւս՝ դումայականները: Ստոլիպինը գահի վերջին պահապանն էր: Ասենք, չէ՛, ճիշտ չե՛մ: Նախավերջի՞ն: Վերջինը հիմա Տյումենում փռված է հիվանդանոցային մահճակալին, որի շուրջը հավաքվել են բժշկության լուսատուներն ու հրաշագործում են գեղացու փորի ու մանավանդ փորատակի վրա՝ որպես կայսրության գերագույն արժեքի: Ու հենց այդպես էլ կա: Պարոնին Կիեւում չհասցրին փրկել, իսկ գեղջուկին Տյումենում, մեկ էլ տեսար՝ հաջողվեց, ի դժբախտություն բոլորիս:

- Ինչո՞ւ ի դժբախտություն:

- Աստված է վկա,- եւ Լեգկոբըտովը երկար տարիների ընթացքում առաջին անգամ խաչակնքեց,- Աստված է վկա, ավելի լավ կլիներ ձեր սիբիրյան առջնորդն անշրջելի մեռներ այս գիշեր եւ այլեւս երբեք չհղանար այս հողի վրա, որը նրա ընկերն ուզում էր վերաբաժանել:

- Այդ երկուսը ոխերիմ թշնամիներ էին:

- Իսկ մեզ մոտ՝ Ռուսիայում հարազատներն իրար անծանոթ են մնում, ավանդույթ է,- ձեռքերը կտրուկ, երկու թեւի պես թափահարեց գրողը:- Երկնքում կգրկախառնվենք, ով կհասնի այնտեղ ու ներքեւ չի գլորվի: Ձեռագի՛րը, մարդասպանի ձեռագի՛րը. ահա թե ինչն է կարեւոր: Չէ՞ որ Բոգրովը նման էր այդ Ֆիոնիային: Անձնապես վիրավորված մենակ, որին հապճեպ մահապատժի ենթարկեցին, ու ոչ մի հանցակից չգտան: Մի՞թե լրջորեն մտածում եք, որ նրա ետեւում ոչ ոք չկար: Չեմ զարմանա, եթե այս սիֆիլիտիկին էլ սուսուփուս հարցաքննեն ու շտապ կախաղան հանեն կամ հոգեբուժարան դնեն: Այս ամենը նույն շղթայի օղակներն են: Ստոլիպինը - Ֆերդինանդը - ձեր սիբիրցի ընկերը: Դաշտ են ազատում մի չտեսնված հոգեհացի համար, որին, ցանկություն չհարցնելով, ինձ ու ձեզ էլ են կանչելու:

- Սխալ տեղ եք փնտրում,- մռայլ ասաց Վասիլի Խրիստոֆորովիչը ու նորից անցավ քամիարին:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ չափազանց եք մեծացնում արարածոց թիվը:

- Հա՛, Օկամայի ածելի՛ն,- հարձակվեց Պավել Մատվեեւիչը:- Երբեք մի վստահեք այդ խավարամիտներին: Ո՛չ միջնադարի, ո՛չ հիմիկվա:

- Ո՞ւմ:

- Վանականներին, ո՞ւմ,- նա զսպանակի պես վեր թռավ ու սկսեց մեծաքայլ չափել բակը:- Սխալ տեղ եք փնտրում: Այստեղ լուրջ դավադրություն է: Եվ ոչ մասոնական, ինչպես որոշ մորուքավոր գլուխներ համարում ու սրտաճմլիկ ահազանգում եւ թնդացնում ու ողբում են իրենց արվարձաններում: Ամեն ինչ շատ ավելի վատ է: Մի՞թե դուք, մարդկային հոգու մեխանի՛կ, այդպես էլ չհասկացաք, որ ներկան կառավարվում է ապագայից: Ե՛վ ձեր այդ բոլոր արյունոտ տղերքը, եւ՛ թղթակիցները, եւ՛ ոստիկանները հրահանգները ստանում են ուղիղ այնտեղից: Ինչ-որ մեկը մկան պես կրծում է ժամանակի միջնորմները եւ ոչ թե պարզապես հետեւում,- դա դեռ մեծ դժբախտություն չէր լինի,- այլ իր կամքն է թելադրում մեզ: Ինչ-որ մեկն ուզում է մեր կյանքն ապրենք այնպես, ինչպես իրենց է հարմար, ոչ թե մեզ: Երեխաները եսապաշտ են ծնողների հանդեպ, թոռները՝ տատերի ու պապերի, բայց արդեն կրկնապատիկ, եւ որքան հեռու, այնքան եսասիրությունն ուժգնանում է: Մենք դեռ չենք սովորել եւ արդեն չենք սովորի այդպես մակաբուծություն անել սեփական անցյալի վրա, ինչպես նրանք: Մեր հեռավոր նախնիները մարդակերներ էին, որպեսզի այսօր ձեր կոմսմարմնամարզիկ Տոլստոյը, ի լրումն իր մյուս վայելքների, կարողանա բու-

սակեր էլ լինել: Լա՛վ, ոչ ձեր: Ձերը Ֆյոդորովն է, որ զգաց դա եւ ապստամբեց, բայց հնարավո՞ր է, արդյոք, մեռած մարդկանց հարությունից ավելի ծիծաղելի ուտոպիա հորինել: Ո՞ւմ են պետք նրանք: Ի՞նչ են անելու այստեղ: Թաղեցինք ու մոռացանք: Ախր կխժռեն մեզ ձեր այդ գալիք սերունդները, հանուն որոնց այսօր տանջահար եք անում եւ՛ ձեզ, եւ՛ ձեր հարազատներին: Մեր երեխաները. ահա թե ինչն է մեզ սպառնում: Գուցե ասեք՝ դա է՞լ չեք զգում: Թեկուզ ձեր Ուլյան:

- Ուլյան ի՞նչ,- վրա պրծավ Կոմիսարովը:

Աչքերը մթնեցին, ու Պավել Սատվեեւիչը զգաց, որ հիմա մեխանիկը բռնելու է կոկորդն ու բաց չի թողնելու:

- Ոչինչ, բացի նրանից, որ ձեր դուստրը հետաքրքրասեր ու անզգույշ է եղնիկի պես, որին չար մարդկանց պետք է պահպանի զգոն մայրը,- հաշտ պատասխանեց նա եւ հանգիստ ու առանց վախի նայեց Վասիլի Խրիստոֆորովիչի աչքերի մեջ:- Հայրերը պիտանի չեն այդ դերին, որքան էլ ջանան, պարո՛ն նիտշչական:

- Ե՞ս եմ նիտշչական:

- Ուրիշ ո՞վ: Սպանված կառավարչի հավատարիմ աշակերտն ու հետեւորդը: Սեր առ հեռավո՛ր: պայծառ ապագա՛: Մարդ-մեխանիզմների թագավորությո՛ւն: Իվան Ահեղը՝ ռուս մեծ տեր-թագավոր: Նոր բարոյականություն, նոր հարաբերություններ նոր տղամարդու եւ նոր կնոջ միջեւ: Եվ հին աշխարհը արյունոտ տոփանք է: Իսկ ես թքած ունեմ ձեր հեռավորների ու նորերի վրա,- որոտում էր Լեգկոբընտովը՝ զրուցակցին շեղելով անհարկավոր հարցերից:- Դեկադենտներին են կուշտուկուռ կարդացել դրանք, հոտած մարքսիստներին: Ու ողջ պատմությունը նրանց համար երկրորդ գալստյան սպասասրահ է:

- Անհեթեթություններ եք խոսում, հարգելի՛ս, եւ ինքներդ այնքան էլ գթասիրտ չեք ձեր մերձավորների հանդեպ:

- Դա որ հաստատ ձեզ չի վերաբերվում: Նախ ձեր կանանցից գլուխ հանեք:

Կոմիսարովը գունատվեց:

- Կներեք,- ասաց գրողը՝ ձեռքը նրան պարզելով:- Ներեցեք, Աստծու սիրուն... Բայց այդ պատմությունն իսկապես վիրավորել է ինձ: Այ դուք երազում եք ապագայի մասին, ձեր կյանքն եք դնում նրա համար, իսկ ես վախենում եմ նրանից: Եվ հատկապես ռուսական ապագայից եմ վախենում: Նայեք ձեր շուրջը: Մի՞թե չեք տեսնում ինչ հրեշավոր, բզկտված աշխարհում ենք ապրում եւ ինչ է սպասում մեզ: Տեխնիկայի խելահեղ զար-

գացումը, որով այդպես հպարտանում եք, ի՞նչ է, մեր սերնդի՞ ծառայությունն է: Կամ այդ երկինք չբարձրացած խելագարը, որի մասին վերջերս պատմում էիք: Եվ ձեր ինքնաթիռներն էլ: Ի՞նչ է, հենց այնպե՞ս հայտնվեցին: Ձեր մեխանիկական եղբայրությունից որեւէ մե՞կն է հորինել: Ո՛չ: Այդ ամենը մեզ այնտեղից են ուղարկում,- մատը տնկեց նա:- Բայց հենց այնպես չեն ուղարկում, այլ միայն իրենց հայտնի նպատակով:

- Ո՞վ է ուղարկում:

- Չգիտեմ՝ ով: Գիտեմ միայն, որ նրանք կան, նրանք ապրում են մեր մեջ ու մեզ հրում են անդունդը:

- Ի՞նչ է, ինձ լրտեսության մե՞ջ եք կասկածում,- մեծամտորեն խոժոռվելով՝ հարցրեց Կոմիսարովը:

- Ձեզնից ի՞նչ լրտես,- ձեռքը թափ տվեց Լեգկոբրտովը:- Դուք միամիտ, ցնորքներով ապրող մարդ եք, հեքիաթի ծերունի, որին ով չի ալարում, հեծնում է: Եթե, իհարկե, չեք ձեւանում...

6

Կոմունիստների հետ կապը Կոմիսարովը պահում էր մի մարդու միջոցով, որին Քեռի Թոմ էին կոչում: Նրան էր փոխանցում փողն ու գործարանային վիճակագրությունը, որով Քեռի Թոմը վերջերս սկսել էր հետաքրքրվել՝ մեխանիկին խնդրելով գրանցել, թե Օբուխովյան գործարանը ամսական ինչ ու ինչքան արտադրանք է տալիս: Թե ինչին էր պետք՝ Կոմիսարովը չէր հարցրել, բայց կանոնավոր կատարում էր բոլոր հանձնարարությունները, չնայած եւ երբեմն որսում էր գործարանի ինժեներների տարակուսած հայացքը՝ մեխանիկի ինչի՞ն են պետք իր պարտականություններին ուղղակի չվերաբերող տվյալները:

Բանբերը սովորաբար նախօրոք զգուշացնում էր հանդիպման մասին, չնայած ստույգ տեղն ու ժամը պայմանավորվում էին վերջին պահին եւ այնպիսի գաղտնապահությամբ, ասես Սանկտ-Պետերբուրգի ողջ պահնորդական բաժանմունքը հետեւելիս լիներ հենց այդ երկուսին: Ցանկացած կեղծիքի հանդեպ զգայուն մեխանիկը խոժոռվում ու ձեռ էր առնում Քեռի Թոմին, բայց նա անխոցելի էր այդ խայթոցների հանդեպ, եւ Կոմիսարովը ժամանակի ընթացքում այնպես վարժվեց գաղտնագործությանը, որ երբ հուլիսի սկզբին Քեռի Թոմից անսպասելիորեն բաց հեռագիր ստացավ՝ Կազանյան Աստվածամոր տոնի հաջորդ օրը Պոլցիում հանդիպելու առաջարկով, տհաճորեն զարմացած էր:

Ամեն ինչ շատ տարօրինակ էր, փնթի եւ սադրանք էր հիշեցնում: «Այսպես մարդուն ոստիկանություն հանձնելն էլ հեռու չի,- մտածում էր կայարանի ճանապարհին:- Իսկ եթե Ազե՞ֆ է»: Ճանապարհը փոշեկոլոլ էր, ընդառաջ էին գալիս հարբած տղամարդիկ ու տոնահանդերձ հովեկներ, դեպի Պեչորյան մենաստան ու ավելի հեռուն՝ Պյուխտիցի էին քայլում արհեստավարժ ուխտավորները, մուրացկանները կռվշտում էին, ու հակառակի պես՝ բոլորն էլ տգեղ, անմաքուր, երկար ճանապարհից, թե իրենց արատներից ու կրքերից ուժասպառ: Մեկը հենց ճամփեզրին բնական կարիքն էր հոգում, մյուսը սիրաբար գրկախառնվել էր ճամփամերձ խոտերի մեջ: Քեֆը լավ մի չարչի, Կոմիսարովից առաջ անցնելով՝ մետաղադրամներ նետեց ամբոխի մեջ: Տուրուդմփոց սկսվեց, փոշին ավելի թանձրացավ, աղմուկ-աղաղակ, հարբած արցունքներ: Չարչին քրքջաց, մի քանի դրամ էլ նետեց, եւ երբ լռակյաց ու հերսոտ բելոռուս սայլապանը Վասիլի Խրիստոֆորովիչին հասցրեց կայարան, մեխանիկը վերջնականապես գրգռված ու հոգնատանջ էր:

Քեռի Թոմն ուշանում էր: Նրան սպասելով՝ Կոմիսարովն ուսումնասիրում էր գնացքների չվացուցակն ու հետեւում հավաքվածներին: Կայարանը տասը տարի առաջ էր կառուցվել, բայց այդ ընթացքում այնքան ուղեւոր էր ընդունել ու ճանապարհել, որ հարյուր տարեկան էր թվում: Պոլցիով էին անցնում Պետերբուրգից Եվրոպա մեկնող գնացքները, եւ Վասիլի Խրիստոֆորովիչը հանկարծ մտածեց, թե օտարերկրացիներն ինչ հետաքրքրությամբ ու ապշանքով են նայում անտառներով ու լճերով շրջապատված այդ կայարանին, փոշոտ ճանապարհներին, ծռված խրճիթներին, հետո հասնում են Պետերբուրգ եւ ավելի ապշում քաղաքի մռայլ գեղեցկությունից, ծանր գետից, հսկա պալատներից, ինչպիսիք չկան ոչ Լոնդոնում, ոչ Փարիզում: «Դու իմ խղճուկ ու լիառատ...,- շրթունքները շշնջացին մանկուց ծանոթ տողերը:- Ինչո՞ւ: Ի՞նչն այնպես չի: Այս մեծ երկիրն ինչո՞ւ չի կարողանում կարգավորել իրեն: Զուտ այն պատճառով, որ ծայր ու սահման չունի՞, փախած խմորի պես բռնել է աշխարհի կեսն ու չի գտնում իր սահմանները: Թե՞ ուրիշ բան է տանջում մեզ»:

Նա հանկարծ հիշեց Լեգկոբընտովին եւ արտասահմանյան հարսնացուի հետ չկայացած հանդիպման նրա պատմությունը: «Պատկերացնում եմ ինչ է ապրել այստեղ: Իսկ կինն այդպես էլ հետ է գնացել...»: Եվ Վասիլի Խրիստոֆորովիչը նույնպես ուզեց մեկնել մի տեղ, ուր ոչինչ չի թունավորի հայացքը: Ինչքա՞ն կարելի է այդ գյուղը: Եվ ինչո՞ւ: Կոմիսարովը հայտնվեց ինքնախարազնման եւ իր հանդեպ անխնա պահանջկոտության այն

վիճակում, որ առաջ ունենում էր միայն գիշերները: «Ըստ էության, այն ամենը, որ անում եմ կյանքում, ոչ թե ինչ-որ բան փոխելու համար է, այլ փրկվում եմ դատարկությունից եւ անձնական անիմաստությունից: Ո՞վ եմ ես: Կոտոշավոր, քաղցրասեր հաստլիկ ու միակ դստեր ոչմիբանացու հայր, եւ նրան էլ ընդհանրապես չեմ հասկանում ու չեմ կարողանում օգնել, չնայած օգնությունս հաստատ պետք է: Ճիշտ է Լեգկոբըտովը՝ հոտառությունս դրան չի հերիքում: Նրբանկատ չեմ, կոպիտ եմ, անճարակ, փչացրի այդ սուտլիկ Վերոչկայի կյանքը՝ չգիտես ինչու ամուսնանալով նրա հետ, ինձ անհայտ նպատակներով զբաղվում եմ արդյունաբերական լրտեսությամբ ու դրանից ոչ մի եկամուտ չունեմ: Ինչո՞ւ է այսպես անհեթեթ դասավորվում կյանքը եւ որտե՞ղ է սխալ թույլ տրվել: Ես շեղվել եմ նպատակից եւ ավելի ու ավելի եմ հեռանում, ինչպես որ հեռանում է իմ երկիրը: Ես հեռանում եմ նրա հետ միասին, փոխանակ կանգնեցնեմ նրան, մղեմ անհրաժեշտ ուղղությամբ: Բայց այդ նպատակը եղել է, չէ՞, պարզապես կորցրել եմ, աչքաթող արել ու չեմ կարողանում գտնել: Կամ էլ ինչ-որ մեկը գողացել է ինձնից, չար ու գիշատիչ մեկը, մտագայլի պես»:

Մտքում նորից կցված այդ երկու բառը ստիպեցին ցնցվել: Վասիլի Խրիստոֆորովիչը ինչ-որ ժամանակից ի վեր տարօրինակ բաներ էր նկատում: Ավելի ու ավելի հաճախ էր սարսափելի, հրեշավոր զգացում ունենում, որ ինքը՝ հարգարժան մարդ, չգիտես ինչու ուզում է որեւէ անպատկառ, անպատշաճ, խելագար բան անել, որի մասին առաջ երբեք չէր մտածել: Օրինակ, մոտենալ այ այն սպիտակ գլխանոցով բարետես տիկնոջն ու քացի հասցնել: Կամ բոլորի աչքի առաջ մերկանալ, կարիքը հոգալ փողոցի մեջտեղը, հրել, շոգեքարշի տակ գցել այն երկաթուղային ծառայողին կամ այս ջահել կնոջը, կամ կեղտոտ բառերով մայր հայհոյել... Ինչ էր դա՝ ինքն էլ չէր հասկանում, բայց մի արտաքին ուժ խուժել էր գիտակցության մեջ, նվաճել ու որդի պես լափում էր ուղեղը: Կամ, ինչն ավելի մոտ էր ճշմարտությանը, ժանգ էր, մետաղի կոռոզիա: Դեռ կարողանում էր հաղթահարել այդ մտքերը, դիմադրել, չենթարկվել, չհետեւել դրանց, բայց լիովին ազատագրվել, մաքրվել՝ չէր կարողանում: Դրանք այն իրականությունն էին, որը ստիպում էր մտածել, որ սիբիրցի շրջմոլիկի ասած մտագայլը պատրանք կամ երեւակայություն չէ, այլ իրոք գոյություն ունի՝ մանրէ, վիրուս, ճճի, բայց այդ վիրուսով վարակվում է շուրջն ամեն ինչ: Դա հոգեւոր կատաղության տեսակ էր, վարակ, համաճարակ, աղետ: Եվ միայն մտքերը մաքրելով, մտավոր հիգիենայով ոչինչ չի ստացվի, մանավանդ, որ միայն ինքը չէր տառապում այդ հիվանդությամբ: Բազում ու բազում ռուսա-

կան աչքերում էր տեսնում Կոմիսարովը նույն հիվանդագին փայլը, եւ Աստված գիտի, թե այդ փայլն ինչի կարող է հասցնել...

...Մեկ ժամ անց Քեռի Թոմի հետ նստած էին կայարանի բուֆետում, կում-կում օղի էին խմում, վրայից՝ շաքարափոշով պատած քաղցր կարկանդակներ, որովհետեւ ուրիշ նախուտեստ չկար: Այրուքի հոտն այդտեղ ավելի ուժեղ էր, քան գյուղում, խառնված քարածխի, լցված արտաքնոցների հոտին, ինչ-որ տեղ սոխով ծուկ էին տապակում, զզվելի դզզում էին ճանճերը, քրտինքը հոսում էր մեխանիկի այտերով, թեւատակերը թաց էին, եւ Կոմիսարովը նախանձով էր նայում փոքրամարմին չորչորուկ մարդուն, որն, ըստ երեւույթին, երբեք չէր քրտնում, ու պատկերացնում էր հեռավոր, երբեւէ չտեսած անապատը, ուր շրջանցիկ ճանապարհով գնում են այս կոկիկ պարոնի նախնիները:

«Քանի՞ տարեկան է: քառասո՞ւն, թե՞ պակաս: Բայց երեսունի տեսք ունի: Հաստատ երեխասեր է, ու որեւէ Սառա նրա համար մի կույտ երեխա է ծնել, պաշտում է ամուսնուն ու ջհուդական ձեւով գայլածուկ է պատրաստում: Մտքով անգամ չի անցնի դավաճանել ամուսնուն, առավել եւս՝ լքել: Երեխաներն էլ են պաշտում նրան, հարազատներն էլ, եւ այդ ամբողջ հրեական կագալը՝ նույնպես: Եվ ինքն էլ սիրում ու հոգում է նրանց մասին: Մենք այդպես չենք կարողանում: Բայց ի՞նչն է այս մարդուն ստիպում հեղափոխության մեջ մտնել: Հինկտակարանային հուդայականն ինչո՞ւ է արհամարհել իր հայրերի ավանդույթն ու խոնարհվել օտար կուռքին: Թե՞ այդ կուռքն օտար չէ նրան: Մենք նույն կուսակցության մեջ ենք, մենք պետք է ընդհանուր համոզմունքներ, նպատակներ, գաղափարներ ունենանք, բայց երբեք ո՛չ հարազատություն եմ զգացել նրա կողմից, ո՛չ էլ համերաշխություն, թերեւս միայն հարգալից հետաքրքրասիրություն: Ստուգաբան գիտնականի հետաքրքրասիրություն բզեզի ինչ-որ ենթատեսակի հանդեպ: Բայց մի բան կա այս մարդու մեջ, որ ծգում է ինձ՝ հինավուրց արյան կա՞նչ, թե՞ ինչ-որ տարօրինակ հավերժական թախիծ»:

- Գործերը լավ չեն,- բաժակի մեջ շաքարավազ լցնելով ու խնամքով խառնելով՝ ասաց Քեռի Թոմը:- Ես մեկնում եմ Վիեննա եւ ուզում եմ հրաժեշտ տալ ձեզ:

- Եվ զուտ դրա համա՞ր եք ինձ արժանացրել ձեր տեսությանը:

- Ո՛չ, ոչ միայն դրա: Ես լիազորված եմ ձեզ փոխանցել իմ ու ընկերներիս շնորհակալությունը այս տարիներին մեզ հետ աշխատելուհամար: Չնայած, եթե անկեղծորեն, չգիտեմ՝ ինչո՞ւ էիք աշխատում:

- Դուք երբեք սենտիմենտալությամբ աչքի չեք ընկել, ընկե՛ր:

- Գիտեմ,- Քեռի Թոմը ժպտաց ու նմանվեց երեխայի: Ըստ երեւույթին կյանքում առաջին անգամ ոչ մի տեղ չէր շտապում, ասես հայտնված լիներ մի տեղ, ուր սարսափելի չէ անձնական վտանգը:- Ռուսաստանում դժվար է սենտիմենտալ լինել:

- Իսկ այնտեղ ծանծրալի է:

- Եթե Եվրոպայի մասին եք ասում, այն ինձ չի հետաքրքրում:

- Իսկ ի՞նչն է հետաքրքրում:

- Շախմատը:

- Դուք շախմատի՞ստ եք,- Վասիլի Խրիստոֆորովիչը մարդկանց մեջ գնահատում էր այն շնորհները, որոնցից ինքը զուրկ էր:

- Կոմպոզիտոր:

- Ներեցե՞ք:

- Ես շախմատային կոմպոզիտոր եմ:

Նա լռեց, եւ Կոմիսարովը հանկարծ մտածեց՝ այ հիմա կբաժանվեն եւ այլեւս երբեք չեն հանդիպի, հնարավոր է դրանով կտրվի իր կապը կոմունայի հետ, եւս մի կորուստ ունենա ու չիմանա ինչով լցնել իր կյանքի դատարկությունն ու անիմաստությունը: «Կամ էլ որոշել են այսպես հեռացնել ինձ: Ստացել են, ինչ կարող էին, ու հիմա դուռն են ցույց տալիս: Դե ինչ, այդ դեպքում կորցնելու ոչինչ չունեմ...»:

- Վաղուց էի ուզում խոսել ձեզ հետ,- բարձրաձայն ասաց մեխանիկը՝ ջանալով հնարավորինս անփույթ լինել:- Եթե հրաժեշտից առաջ մի քիչ ժամանակ տրամադրեք... Ծնորհակալ եմ եւ կփորձեմ հակիրճ լինել: Ես շատ եմ հարգում ձեզ ու ձեր ընկերներին, գիտեմ, որ մշտապես վտանգում եք ձեր կյանքը, ազատությունը, առողջությունը, սակայն բացարձակ չգիտեք ու չեք հասկանում Ռուսատանը: Երբեք չեք իմացել ու չեք հասկացել: Ու չեք սիրել:

- Այդպես եք ասում, որովետեւ լե՞հ եմ,- ծիծաղեց Քեռի Թոմը:

- Ի՞նչ կապ ունի,- Վասիլի Խրիստոֆորովիչը փորձում էր չկարմրել, բայց զգաց, որ, մեկ է, կարմրում է:- Չգիտեի էլ, որ լեհ եք: Կարծում էի՝ հրեա եք: Այդպես չէ՞,- վրա տվեց նա եւ ավելի թունդ կարմրեց:

- Կներեք, որ հիասթափեցրի:

- Ի՞նչ ցնդաբանություն է,- խոժոռվեց Կոմիսարովը:- Ես շատ լավ եմ վերաբերվում հրեաներին, վրդովվում եմ, որ ցարիզմը հալածում է նրանց, եւ արհամարհում եմ սեւհարյուրակայիններին: Միշտ հավատացել եմ Բեյլիսի կատարյալ անմեղությանը եւ, վերջապես, անձամբ ինձ էլ է վիրավորում օտարման շերտը...

- Եվ իզուր: Այն շատ հրեաների է պաշտպանել եւ օգնել պահպանելու իրենց ավանդույթները,- հաշտ ասաց Քեռի Թոմը:- Դուք արդարանալու ոչինչ չունեք, Վասի՛լի Խրիստոֆորովիչ: Հակասեմիտիզմը տարաբնույթ է եւ միշտ չի ծայրահեղ ձեւեր ընդունում: Դա մի ճյուղավորված հիվանդություն է, գործնականում երբեմն առանց ախտանշանների: Ուղիղ արտահայտեք ձեր մտքերն ու մի վախեցեք, թե կնեղացնեք որեւէ մեկին:

- Ես միշտ ուղիղ եմ խոսում ու չեմ պատրաստվում արդարանալ,- վրդովվեց Կոմիսարովն ու հուզմունքից մի ամբողջ բաժակ ջուր խմեց:- Եվ ընդհանրապես, խնդիրն արյունը չի: Չգիտես ինչո՞ւ, անընդհատ շեղում եք ինձ եւ ուրիշի մտքեր վերագրում: Իսկ արյունն ընդհանրապես կապ չունի: Ձեր՝ Ռուսաստանը չզգալը միանգամայն այլ պատճառներ ունի:

- Այո՞:- կոմպոզիտորը հորանջեց:- Կներեք, վերջին գիշերները համարյա չեմ քնել:

- Կարծում եք չե՞մ հասկանում ինչու եք այդպես անսպասելի մեկնում,- մեծապետական գոռոզությամբ հարցրեց Վասիլի Խրիստոֆորովիչը:- Ուրեմն ասեմ:

- Շնորհ արեք:

- Դուք հեղափոխությունը վերաբերվում էիք, որպես գործարար ձեռնարկի, որի մեջ փող է դրվում՝ շահույթ ստանալու ակնկալիքով: Իսկ հիմա, երբ տեսնում եք, որ շահույթ չի լինի, որոշել եք վերցնել կապիտալը եւ ներդնել ավելի հուսալի տեղ ու ավելի բարձր տոկոսներով:

- Իսկ կարծում եք շահույթ կլինի՞:

- Չգիտեմ՝ կատակում եք, թե լուրջ եք ասում, բայց այդպիսի չափանիշներով հեղափոխությանը վերաբերվել չի կարելի,- զայրացավ մեխանիկը:- Հեղափոխությունն էլ, Ռուսաստանի պես, ոգու երեւույթ է, որն անհնար է չափել փողով, տալ կոնցեսիայով, բանկ դնել, վաճառել, փոխանակել, անհնար է որեւէ բան հաշվարկել կամ կանխատեսել: Նրանով չի կարելի առեւտուր անել. նրան միայն կարելի է պատկանել, սիրել, ծուլվել, տրվել, դառնալ նրա մասը: Դուք՝ խելացի մարդ, ինչպե՞ս չեք հասկանում, չեք տեսնում, չեք զգում, որ Ռուսաստանն այսօր չափազանց անկայուն է: Ռուսաստանը լեփ-լցված է, գերհագեցած, հղի է էներգիայով, որ ելք է փնտրում. կամ մոլեռանդ քրիստոնյաներ կդառնանք ու Խաչակրաց արշավանքի կելնենք դեպի Կոստանդնուպոլիս, որ ազատագրենք Սուրբ Սոֆիան, կամ ընդհանրապես կմերժենք Աստծուն ու կսկսենք վառել մեր տաճարները: Մենք կոչնչացնենք բոլոր այլազգիներին կամ, հակառակը, այն աստիճան կնվաստանանք, որ նրանք կսկսեն իշխել մեզ ու տրորել մեր երկիրը: Հնա-

ռավոր է ամեն ինչ, բացի միջինից: Ռուսաստանում դարեր շարունակ եռացող նյութ է կուտակվել, եւ այսօր կուտակման այդ գործընթացն ավարտվել է, մոտեցել սահմանին ու հասել կրիտիկական զանգվածի:

- Գուցե հենց ա՞յդ է պատճառը, որ մեր անտառները վառվում են,- թեյը խառնելով՝ հարցրեց Քեռի Թոմը:

- Նաեւ այդ պատճառով,- չարագուշակ պատասխանեց մեխանիկը:- Բայց անտառները դեռ լրջորեն չեն վառվում: Հետո են վառվելու: Երբ վրա կհասնի կամ մեր սրընթաց վերելքը, կամ հրեշավոր ուժի պայթյուն եւ...

- Եվ դուք, բնականաբար, կընտրեիք առաջինը:

- Իսկ դուք՝ երկրորդը: Եվ այդպես էլ կլինի. չափազանց շատ են շեղումներն ու հակասությունները: Եվ չափազանց շատ են մեր շուրջը այն երկրներն ու ժողովուրդները, որոնք շահագրգռված չեն, որ զարգանանք, ինչին կհետեւեր Ռուսաստանի աշխարհակալությունը: Դրա համար էլ պայթյունն անխուսափելի է: Խնդիրն այն է, որ այդ ցնցումից դուրս գանք նվազագույն կորուստներով եւ ազատված էներգիան ուղղենք հանուրի բարօրությանը: Բայց դա քաղաքական խնդիր չէ, տեխնիկական է: Ես դրա մասին փորձել եմ խոսել մեծ իշխանի հետ. ինձ նայեցին, ինչպես խելագարի: Ընդունելություն խնդրելով՝ մի քանի խնդրագիր ուղարկեցի թագավորի անունով, ինձ չէին պատասխանում եւ ի վերջո ընդհանապես վտարեցին պալատից:

- Ահա՛ թե ինչ,- քրթմնջաց Քեռի Թոմը եւ առաջին անգամ հետաքրքրությամբ նայեց Կոմիսարովին:- Իսկ ես մտածում էի՝ ձեր կամքով եք հեռացել: Այսպես ասած, չեք դիմացել որկրամոլության եւ անառակության տեսարաններին:

- Իսկ դուք կդիմանայի՞ք: Նրանք ժամանակ ունեն լսելու ամեն կարգի կրոնախեւերի, դատարկաբանների, խենթերի, առագաստանավերով լողալ հանգստանալու բալթիական ժայռակղզիներում, ամեն ամառ իրենց խելապակաս շքախմբերով հասնել Լիվադիա, բարձրաշխարհիկ անբանների ընդունելություններ կազմակերպել, պարահանդեսներ տալ, անիմաստ խաչերթեր ու անհեթեթ փառաբանություններ անել ինչ-որ իբր սրբերի, գնել ֆրանսիական թերուսների խզբզանքները, որոնք վառ բծերից ու տկլոր կանանցից բացի, ուրիշ ոչինչ ներկոտել չեն կարողանում: Իսկ լսել մարդուն, որն իսկապես կարեւոր բան է ուզում հայտնել, բարեհաճել չեն կամենում: Հավատացե՛ք, սա անձնական վիրավորածություն չէ, բայց երբ նրանք հրաժարվում են տեսնել ինչ է կատարվում շո՛ւրջը... Ինձ ի՞նչ էր մնում: Ձեռքերս ծալած նստեի՞: Ես այդպես չեմ կարող:

- Համենայնդեպս նեղացել եք:

- Այ դուք էլ ինձ չեք հավատում,- դառնությամբ ասաց մեխանիկը:- Միայն թե, ի տարբերություն նրանց, նաեւ օգտագործում եք:

- Եվ ինչու եք, բարի՛ մարդ, թույլ տալիս, որ ձեզ օգտագործե՞ն,- քմծիծաղեց Քեռի Թոմը:- Չէ՞ որ այնքան էլ միամիտ չեք, ինչպիսին ուզում եք երեւալ:

- Որովհետեւ շատ շուտով մեզ բոլորիս աղետ է սպասում,- մռայլ ասաց Կոմիսարովը:- Ու չկարծեք, թե ձեր հեքիաթային խնդիրներով պահ կմտնեք Եվրոպայում: Աղետը կգավթի մարդկային ամեն ինչ եւ շախ ու մատ կանի բոլորիս:

- Հենց ա՞յդ էիք ուզում անձամբ հայտնել թագավորին,- Կոմպոզիտորը ձեռքում մտախոհ պտտում էր դատարկ բաժակը:- Չեմ կարծում, թե նորին մեծությունը հետաքրքրվեին դրանով: Մեր ցարը կրոնասեր է, բայց նույնիսկ կրոնասեր տիրակալի համար ձանձրալի ու տհաճ են աղետալի կանխատեսումները: Այդպիսի բաներն ավելի նուրբ պիտի արվեն: Ես էլ եմ զգում, որ աշխարհավերջը մոտ է: Հենց դռանն է, շեմին՝ ինչպես նկատել է մի խորաթափանց ջհուդակեր, որին ձեզնից առաջ էին դուրս արել պալատից: Նրանք տարօրինակ առաջնահերթություններ ունեն այնտեղ: Բայց մեկ է, ձեզ չեմ հասկանում. եթե իրոք վստահ եք, որ Ռուսաստանին ցնցումներ են սպառնում, ինչո՞ւ չեք փորձում կանխել: Եվ եթե կանխելն, ինչպես պնդում եք, անհնար է, ինչո՞ւ եք մղում դեպի աղետը: Ի՞նչ եք ուզում: Իր ժամանակին եւ արիաբար դիմավորեք աղետը:

- Անհրաժեշտ է, որ աղետից հետո իշխանության գան տեխնիկական մտածողությամբ մարդիկ, որոնք այնպես կվերակառուցեն կյանքը Ռուսաստանում, որ նրան այլեւս նոր ցնցումներ չսպառնան:

- Եվ հենց ձեզ եք տեխնիկական մտածողությամբ մարդ համարում, որը գիտի ինչպես ճիշտ անել այդ ամենը:

- Ոչինչ էլ չեմ համարում: Եվ ընդհանրապես, խնդիրը ես չեմ, այլ մենք բոլորս:

- Ո՞վ բոլորս:

- Նրանք, որ ապրում են Ռուսաստանում եւ ուրիշ հայրենիք չեն փնտրում: Եվ նշանակություն չունի՝ արյամբ ու ծագումով ով է այդ մարդը,- մեխանիկի ձայնը դողում էր:- Մենք պետք է անկախ լինենք ողջ աշխարհից եւ խզենք կապերը մեզ շրջապատող երկրների ու ժողովուրդների հետ: Ոչ ոք՝ ո՛չ գերմանացիները, ո՛չ անգլիացիները, ո՛չ թուրքերը, ո՛չ, այսպես կոչված, եղբայր սլավոնները, ո՛չ չինացիները, ո՛չ ճապոնացիները, ո՛չ պար-

սիկները, ո՛չ արաբները, ո՛չ շվեդները, ո՛չ ամերիկացիները, ո՛չ հրեաները, ո՛չ, կներեք, լեհերը, ոչ մեկը մեր պատմական դաշնակիցը չէ: Բնությունն այնպես է վճռել, որ մեզ մոտ, մեր հողի վրա կա ամեն ինչ, որ կարողանանք մենակ, անկախ ապրել, ու չշփվենք աշխարհի հետ,- Վասիլի Խրիստոֆորովիչը հապճեպ, վախենալով, որ կուշանա, նետում էր նվիրական, վաղուց ելք փնտրող մտքերը:- Ռուս մարդը որքան տաղանդավոր, նույնքան էլ ծույլ է: Եթե նրա համար ավելի հեշտ է մեքենա գնել արտասահմանից, իր երկրում չի արտադրի: Այսպես ասենք, գուցե եւ հնարի այդ մեքենան, բայց գործը դրանից այն կողմ չի գնա, որովհետեւ կհայտնվեն ճարպիկ խարդախներ, վաճառականներ, բանկիրներ, միջնորդներ, որոնց այդ հայտնագործությունը շահավետ չի լինի: Շահավետ կլինի գնել Անգլիայից ու եկամուտ ստանալ՝ այստեղ չնչին գնով առնելով մեր հացն ու փայտը ու եռակի թանկ վաճառելով իրենց զիզի-պիզիները: Եվ ռուսը կնահանջի, կհանձնվի, թափ կտա ձեռքը: Ռուսները միայն այն ժամանակ են սկսում հոգալ իրենց մասին, երբ ուրիշ ելք չի մնում, երբ հասնում են անդունդի եզրին: Մենք աղետավոր գիտակցության ու կենսակերպի ազգ ենք, դրա համար էլ ես ոչ միայն չեմ պատրաստվում պայքարել այս աղետի դեմ, այլեւ կանչում, արագացնում եւ օրհնում եմ աղետը: Աղետը կհամախմբի մեզ, ի հայտ կբերի մեր լավագույն որակները, իսկ անդորրը թուլացնում է, նվաստացնում, ինչից եւ օգտվում են մեր թշնամիները: Մի՞թե չեք տեսնում ինչքան ենք կախված եվրոպական տերություններից: Այո՛, ինչ-որ բան արտադրում ենք, բայց եթե հաշվենք ինչքա՞ն մեքենաներ, գործիքներ, հաստոցներ, տեխնիկա ենք ներկրում Ֆրանսիայից, Անգլիայից, Գերմանիայից: Ռուսաստանը նրանց համար իրացման ահռելի շուկա է, եւ նրանք չեն ուզում կորցնել այդ շուկան: Մենք խելահեղ վարկեր ենք վերցնում. ինչպե՞ս ենք մարելու: Որտե՞ղ են եւ ո՞ւմ են պատկանում ռուսական փողերը: Դուք գիտե՞ք: Չնայած, հենց ձեզ հաստատ հայտնի է,- թունոտ ավելացրեց նա:- Բայց եթե վաղը եվրոպական պետություններն ինչ-ինչ պատճառներով Ռուսատանին առեւտրական կամ դրամային բոյկոտ հայտարարեն կամ հետ պահանջեն միանգամից բոլոր պարտքերը, մեր արդյունաբերությունը կանգ կառնի, իսկ բանկերը կպայթեն: Իսկ եթե հանկարծ պատերա՞զմ սկսվի: Պատկերացնո՞ւմ եք օտարերկրյա զենքի առաքումներից մեր բանակի կախվածության աստիճանը: Զենքի՛: Այսօրվա պայմաններում ով ասես կարող է շանտաժի ենթարկել մեզ ու ստիպել, որ օտար շահեր պաշտպանենք: Գուցե եւ դուք թքած ունեք դրա վրա, բայց ես՝ ոչ: Ես, ի տարբերություն ձեզ, Եվրոպա չեմ փախչի: Ես փախչելու տեղ չունեմ: Ես

ռուս եմ, ու ցավ եմ զգում, որ մենք՝ հսկայական, մենք՝ աշխարհի ամենամեծ երկիրը խայտառակ կերպով սնանկ ենք: Ահա թե որն է ներկայիս կառավարության գլխավոր սխալը: Այո՛, Վիտտեն փորձեց ինչ-որ բան անել. հեռացրին: Ստոլիպինը փորձեց. առեղծվածային, աներեւակայելի կերպով սպանեցին, իսկ այսօրվա մինիստրները լավագույն դեպքում կամազուրկ են, վատագույն դեպքում՝ ուրիշի կամքն են կատարում, ընդ որում, անհայտ է, թե ում: Այ դուք նոր ասում էիք՝ օտարման շերտը փրկել է հրեաներին: Մենք էլ պիտի այդպես անենք,- ոգեւորված գոչեց Վասիլի Խրիստոֆորովիչը,- անցնել այդպիսի շերտի ետեւը, որ փրկենք մեզ ու ոչ մեկին ներս չթողնենք:

- Ինչն էլ կլինի ձեր նոր կառավարության նպատակը, որտեղ որոշել եք կանխապես ձեզ համար տեղ ապահովել:- Քեռի Թոմի աշխույժ, խելացի աչքերը քաջալերանքով նայում էին Կոմիսարովին:- Ստացվում է, որ նույնպես ներդրում եք անում եւ շահույթ ակնկալում ապագայում: Ինչ կա որ, շատ ու շատ խելացի է: Մնացած ամեն ինչ հիմարություն է, իսկ այ սա գործ է: Մի՛ բարկացեք,- նա դիպավ գունատված հռետորի թեւքին:- Ուղղակի չեմ սիրում դիլետանտներին: Գիտե՞ք ինչպես են ասում որոշ միապետների մասին՝ «Ճանասեր է, բայց ոչ հմուտ»: Սակայն խոստովանեմ, Վասի՛լի Խրիստոֆորովիչ, ուրախ եմ, որ ասացիք: Թեթեւացրիք սիրտս, ճի՛շտ, թեթեւացրիք: Երկար ժամանակ չէինք հասկանում ինչ դրդապատճառներ ունեք: Ինքներդ դատեք, փառասեր չեք, արնարբու չեք, արդարության դեւը ձեզ չի չարչարում: Որոշ ընկերներ նույնիսկ ասում էին՝ սադրիչ եք, ներդրված գործակալ, պետականամետ, անհեթեթություն է, իհարկե, բայց նույնիսկ մտածում էի, թե մեծ վշտից կամ թաքուն մեղքի պատճառով եք միացել մեզ: Գիտեք ինչպես է լինում՝ կինն է դավաճանում, երեխաներն են գնում սխալ ճանապարհով կամ ինչ-որ մտքեր են հայտնվում մարդու գլխում ու սկսում են գրգռել, եւ մարդը սկսում է վախենալ նրանցից: Կամ էլ մարդ որեւէ սարսափելի բան է իմանում իր մասին, օրինակ, որ չի կարողանում անտարբեր նայել փոքրիկ աղջիկներին. ահա եւ նա մերն է: Մարտական կազմակերպության կեսը մահապարտներ են, հատկապես՝ կին մահապարտներ՝ քողարկված ինքնասպաններ: Չեն համարձակվում ձեռք բարձրացնել իրենց վրա կամ մանկուց այնպիսի դաստիարակություն են ստացել, որ վախենում են Աստծուց, թեկուզ եւ չեն հավատում, իսկ եթե գործողություն է, խնդրեմ՝ սրտի գերագույն բռնկումով եւ ինքնազոհությամբ: Ու կարեւոր չէ՝ կրթվա՞ծ է տիկինը, թե՞ մտքով ու հոգով հիվանդ քաղքենուհի՝ դանակը չթե շորի տակ պահած:

- Ուրեմն այդ դո՞ւք էիք Պոկրովսկոյեում...

- Ասացի, չէ՞, որ մեր կուսակցությունը անհատական տեռորով չի զբաղվում,- անգույն ձայնով ասաց Քեռի Թոմը:- Եվ ես վախենում եմ նմաններից ու նրանց ոչ մի լուրջ գործի չեմ ներգրավի: Երբեք չգիտես ինչ սպասես, եւ նրանց վրա հույս դնել չի կարելի: Փոխարենը՝ ձեր հարցում ամեն ինչ պարզվեց: Ահա եւ հրաշալի է:

- Ո՛չ,- գոչեց մեխանիկը, այնպես, որ բուֆետում նստած սակավաթիվ մարդիկ շրջվեցին նրա կողմը:- Ոչինչ էլ չպարզվեց: Նրա համար չեմ ասում, որ ես եմ ուզում իշխել: Ես ընդհանրապես երեւի այդ ժամանակ ողջ չլինեմ: Ինչպես եւ դուք: Մի գայթակղվեք: Մենք դատապարտված ենք ճիշտ այնպես, ինչպես այն մարդիկ, որոնց մասին քամահրանքով եք խոսում: Խոսքը գալիք սերունդների մասին է: Նրանք չպիտի կրկնեն մեր սխալները եւ իշխանությունը հանձնեն չարչու կեղտոտ ձեռքերին: Եվ ես գիտեմ, որ ինժեները, վարպետը կամ մեխանիկը, ինչ մտքեր էլ որ ունենան, չեն կարող վնաս պատճառել, ի տարբերություն մեզ:

- Ո՞ւմ:

- Այ այսպիսի քաղաքական գործիչների, պրոֆեսորների, փաստաբանների, ժուռնալիստների:

- Ինչպես ձեր այդ բարեկա՞մը,- ճշտեց Քեռի Թոմը:

- Ի՞նչ բարեկամ,- դառնությամբ հարցը վերադարձրեց Կոմիսարովը:

- Ծա՞տ բարեկամներ ունեք ժուռնալիստների մեջ:

- Փառք Աստծո, ոչ մեկը:

- Իսկ ոմն Լեգկոբը՞տով: Պավել Մատֆեեւիչ, եթե հիշողությունս չի դավաճանում:

- Լա՛վ, էլի,- ձեռքը թափ տվեց Վասիլի Խրիստոֆորովիչը,- դուք էլ վտանգ գտաք: Մատֆեեւիչը հենց միանգամայն անվնաս մարդ է:

- Մենք էլ առաջ այդպես էինք մտածում: Ի դեպ, եթե դժվար չի՝ ի՞նչ կարծիքի եք նրա մասին:

- Ոչ մի: Ես նրա մասին մտածելու ժամանակ չունեմ: Ես ձեզ լուրջ բաներ եմ ասում, իսկ դուք թույլ չեք տալիս խոսել, անընդհատ շեղում եք դատարկ բաների վրա:

- Վասի՛լի Խրիստոֆորովիչ, աղավնյա՛կս, ես հաճույքով կխոսեմ ձեր բոլոր կարեւոր հարցերի մասին, բայց՝ հաջորդ անգամ: Եվ էլ պետք չէ խմել:

- Դա ձեզ չի վերաբերվում,- կտրեց Կոմիսարովը:- Իսկ եթե ուզում եք իմանալ իմ կարծիքը Լեգկոբըտովի մասին, խնդրեմ: Միջակ գրագետ: Վա-

ճառականի անդաստիարակ որդի, որ կյանքում մի անգամ ուշացել է, եւ այդ ժամանակից նրան անընդհատ թվում է՝ ինչ-որ բան չի հասցնում: Ահավոր եսասեր: Փառամոլ՝ սնափառության աստիճանի, թեկուզ եւ փորձում է թաքցնել իր փառասիրությունը: Ցղային է, դյուրաբորբոք, մանկամիտ: Յուրովի խելացի է, սրաթափանց, դիտողունակ, տպավորություններին ծարավի, աշխատասեր, բայց անասելի զգուշավոր: Քամելեոն չի, բայց կարողանում է պահ մտնել ու սպասել: Ոչ մի դեպքում վախկոտ չէ: Պաշտում է թաքուն նայել հայելուն եւ նույն խանդավառությամբ հիանալ թե՛ իր արժանիքներով, թե՛ արատներով: Այդպես էլ ողջ կյանքում կհիանա այդ անտառային փոքրիկ նարցիսը: Ուրիշ ի՞նչ: Մեծ երազող է, իմ կարծիքով, բայց երբ պետք է, այնպես հաստատուն է կանգնում հողին, որ ոչ մի ուժ չի կարող տեղից շարժել: Եթե ես գուշակ լինեի, կասեի, որ երջանիկ աստղի տակ է ծնվել եւ երկար ու լավ կապրի, եթե միայն նրան չկործանի կասկածամտությունը: Բայց դուք ինձ բոլորովին չեք լսում:

7

- Ինչո՞ւ, լսո՛ւմ եմ,- Քեռի Թոմը բարձրացրեց աչքերը, եւ Վասիլի Խրիստոֆորովիչը ապշեց, թե որքան էին փոխվել դրանք: Չէր կարողանում հասկանալ հատկապես ինչ էր կատարվել, բայց ուրիշ մարդ էր նստած նրա առաջ, ուրիշ աչքերով, ուրիշ դիմագծերով, եւ ոչ մի կերպ հնարավոր չէր այդ մարդուն քառասուն տարեկանից պակաս համարել եւ նրա մեջ տեսնել անտիկ հուդայականների ժառանգին: Բայց լեհի էլ քիչ էր նմանվում: Նա ազգությունից դուրս էր, տարիքից դուրս, ժամանակից ու տարածությունից դուրս:

- Ասացիք՝ կասկածամի՞տ է դարձել: Ինչքա՞ն ժամանակ է եւ ի՞նչ նկատի ունենք:

Հարցն այնքան պահանջկոտ հնչեց, որ Կոմիսարովը չէր ուզում պատասխանել, բայց ինքն էլ չհասկացավ, թե ինչպես՝ սկսեց ոչ թե խոսել, այլ ցուցմունք տալ:

- Այս գարուն նրան վախեցրել էր ինչ-որ սրբահայր Ֆոմա:

- Ինչպե՞ս:

- Գուշակել էր, որ շուտով կմեռնի:

- Եվ նա հավատացե՞լ է:

- Կարծում եմ՝ այո:

- Ինչի՞ց եզրակացրիք:

- Սկսել է որսի ժամանակ ավելի հաճախ վրիպել:
- Այդքա՞նը:
- Ո՛չ: Վերջին օրերին շատ անհանգիստ է, խուսափում է մարդկանց աչքերի մեջ նայել: Կարծես ինչ-որ բան է թաքցնում:
- Ըհը,- բավարարված քրթմնջաց Քեռի Թոմը:- Իսկ այդ ի՞նչ Ֆոմա է:
- Հոգեւոր հյուրախաղի վարպետ: Խաղախարդախ: Խուլիգան:
- Դուք նրան տեսե՞լ եք, որ այդպես եք դատում:
- Ոչ, միայն լսել եմ Լեգկոբըտովից:
- Եվ ի՞նչ էր ասում:
- Ոչինչ էլ չէր ասում: Մի անեկդոտ պատմեց:
- Կներե՞ք:
- Պավել Սատվեեւիչն այդպես ասաց: Մի խոսքով, առակ: Շատ կարճ, ծիծաղելի: Հռոմի պապը մեռնում է: Ընկնում է Պետրոս առաքյալի մոտ: Մի ժամից դուրս է գալիս Պետրոսի մոտից՝ աչքերն արցունքոտ, բռունցքով խփում է կրծքին. «Տե՛ր Աստված, ինչպե՛ս կարող էի, ինչպե՛ս կարող էի»: Գլխավոր վերատեսուչ Պոբեդոնոսցեւն է մահանում, ընկնում է Պետրոս առաքյալի մոտ: Երկու ժամից դուրս է գալիս՝ աչքերն արցունքոտ, մազերն է պոկում, հեծեծում է. «Տե՛ր Աստած, ինչպե՛ս կարող էի, ինչպե՛ս կարող էի»: Ֆոման է մեռնում: Ընկնում է Պետրոս առաքյալի մոտ: Մի ժամ է անցնում, երկու, երեք: Դուրս է գալիս արցունքի մեջ կորած Պետրոս առաքյալը, բռունցքներով խփում է կրծքին. «Տե՛ր Աստված, ինչպե՛ս կարող էի, ինչպե՛ս կարող էի»:
- Իմ կարծիքով, այս անեկդոտում ոչ մի ծիծաղելի բան չկա,- մռայլվեց Քեռի Թոմը:- Բայց թվում է՝ ձեր բարեկամի տագնապներն այնքան էլ անհիմն չեն, որքան կարծում եք:
- Չեմ հասկանում՝ Լեգկոբըտովն ինչով կարող է հետաքրքրել ձեզ,- վեր կենալով՝ ասաց Կոմիսարովը,- բայց գիտեմ մեկ բան. Պավել Սատվեեւիչը երբեք չի վերադառնա հեղափոխություն եւ բոլոր հանգամանքներում կփրկվի:
- Նույնիսկ այն աղետի մեջ, որով մեզ սպառնո՞ւմ եք:
- Նույնիսկ այնտեղ:
- Որսորդ է, չէ՞, եթե չեմ սխալվում:
- Հետո՞ ինչ:
- Տարօրինակ չե՞ք համարում, Վասի՛լի Խրիստոֆորովիչ, որ մարդիկ, որոնք սիրում են ապրել, եւ, ինչպես պնդում եք, պատրաստվում են երկար ապրել, միեւնույն ժամանակ այնքան կասկածամիտ են, որ ինչ-որ խաղա-

խարդախի պատճառով կորցնում են հանգիստն ու վախենում են գնալ որսի:

- Ինչո՞ւ պիտի վախենա,- այդ խճճված խոսակցությունը վերջնականապես ձանձրացրեց Կոմիսարովը, բայց Քեռի Թոմը նրան բաց չէր թողնում:

- Հրացանը կարող է չկրակվել: Կամ պայթել ձեռքերի մեջ: Սարդը պատահմամբ կարող է որեւէ մեկի թակարդն ընկնել ու դուրս չգալ, այնպես, որ հետո միայն ոսկորները գտնեն: Նավակը կարող է շրջվել կամ թռչել քարերի վրա, ու ոչ մեկը չտեսնի: Քի՞չ պատահականություններ են լինում:

- Դրանք նրա մասին չեն:

- Պատահում է նաեւ, որ, օրինակ երկուսով գնում են որսի, եւ մեկը սպանում է մյուսին: Հը՞:

- Ինչպե՞ս:

- Ասենք, աչքին ինչ-որ բան է երեւացել, նա էլ կրակել է: Ու պատահմամբ դիպել գլխին: Կամ սրտին:

- Չեմ հասկանում ուր եք տանում:

- Ինչո՞ւ: Ամեն ինչ էլ հիանալի հասկանում եք,- փոքրիկ պարոնն ավելի մտերմիկ ժպտաց:- Նույնիսկ շատ լավ եք հասկանում: Մի քանի տարի առաջ դուք չէի՞ք կոմիտեին խնդրում ձեզ փորձել իսկական գործի մեջ:

- Ի՞նչ նկատի ունեք,- խոժոռվեց Կոմիսարովը:

- Այն, ինչի մասին հենց հիմա մտածեցիք,- սիրալիր պատասխանեց Քեռի Թոմը:

Վասիլի Խրիստոֆորովիչը լռեց: Քեռի Թոմն էլ էր լռում: Եվ հասկանալի չէր՝ ինչ են լռում այդ երկու պարոնները, մեկը՝ խոշոր, մարմնեղ, քրտնած, մյուսը՝ փոքր-մոքր, չորչորուկ, պատանու կամ ծերունու պես բարակիրան: Վասիլի Խրիստոֆորովիչը սպասում էր, թե որեւէ միտք կհայտնվի գլխում, թեկուզ ամենից անհեթեթը, ամենաչարը, որ նրան դրդում էր բռնել ոստիկանի ականջը կամ քացի տալ հարգարժան տիկնոջը, գոնե այդ միտքը գար, եւ նա կօգտագործեր այդ միտքը սադրիչի, երկդիմի գործակալի դեմ, որն անհասկանալի էր՝ ում է ծառայում եւ ինչ է ուզում իրենից, բայց հակառակի պես բոլոր մտքերը պահ էին մտել, ու գլուխը դատարկ էր: Միայն ճանճերն էին բզզում լռության մեջ, եւ այդ բզզոցն այնպես տանջալից էր, որ Կոմիսարովը չդիմացավ:

- Դուք ի՞նչ է... դուք ուզում եք հանձնարարել ինձ... սպանե՞լ Պավել Լեգկոբըտովին,- վերջապես դուրս մղեց իրենից:

- Բայց ինչո՞ւ սպանել: Պետք չէ սպանել: Եվ ընդհանրապես, մի՞թե դուք նման եք մարդասպանի, Վասի՛լի Խրիստոֆորովիչ: Ոչ թե սպանել, այլ...

այսպես ասենք, պատահմամբ օգնել Պավել Մատվեեւիչին դառնալու դժբախտ պատահարի մասնակից, մանավանդ, որ, ինչպես ասում եք, հոգեբանորեն պատրաստ է դրան:

- Կատակո՞ւմ եք,- տրտում խոսեց Կոմիսարովը:

- Ի՜նչ կատակ: Կատակի համար կնստեի այս ծակուռում ու ձեր պատմաբանական զառանցանքնե՞րը կլսեի: Այդ բարիքից Տավրիկյանում էլ շատ ունեմ: Ես ձեզ հետ լուրջ բաների մասին եմ խոսում: Լեգկոբընտովը, ինչպես բարեհաճեցիք նկատել, զգուշավոր մարդ է, կասկածամիտ, իսկ դուք առայժմ կասկած չեք հարուցում, որովհետեւ առայժմ անճարակ դմբոներ է համարում մեզ: Ու լավ է, որ այդպես է: Ուրեմն ձեզ համար, Վասի՛լի Խրիստոֆորովիչ, դա ավելի հեշտ կլինի, քան մեր ընկերներից որեւէ մեկի, որոնց կյանքը չէինք ուզի վտանգել: Չնայած, նկատի ունենալով ձեր հարաբերությունների բարեկամական բնույթը, սա ոչ մի դեպքում հրաման չէ մեր կողմից: Այնպե՛ս... առաջարկ է: Ցանկություն... Խնդրանք... Բայց եթե չձեռնարկեք այդ գործին, ստիպված կլինենք ուրիշին փնտրել:

Մեխանիկ Կոմիսարովը զգաց, որ մարմնակազմությունն իսկապես զգալ է տալիս: Ալկոհոլը հանկարծ սկսեց եռալ ծանր մարմնում, արյունն ավելի ուժգին խուժեց քունքերը, այնպես, որ մանուշակագույն երակները տրոփեցին, եւ աշխարհի պատկերն անհաստատուն դարձավ. անհետացան երկաթուղագծերը, պատվեցին դողդոջուն ծխաքողով, փոխարենը՝ կտրուկ, ասես գեհենից, քարածխի հոտ եկավ: Եվ այդ քարածխային ծածկույթի մեջ հյուսվեց Պավել Մատվեեւիչի պայծառ, պարմանի, դեռահասի դեմքը, բայց՝ հեռվում, այն տարածության վրա, ուր մի անգամ գարնանը Կոմիսարովի նշանոցին էր նստել որմզդեղնի գլուխը: Այն ժամանակ չկրակեց, վախեցա՞վ, խղճա՞ց, շփոթվե՞ց, թե՞ հրացանը խաղաց ձեռքերի մեջ՝ մեխանիկը հաստատ ասել չէր կարող, եւ ի պատասխան Լեգկոբընտովի զայրույթի միայն հիմար ժպտաց, իսկ հիմա նրա անտառային դաստիարակն ինքն էր հանկարծ զոհաբերության կենդանի դարձել, որին պատրաստվում էին մահացու հալածել գիշատիչ մարդիկ, ու Վասիլի Խրիստոֆորովիչի ձեռքն էին տալիս ծանր հրացանը:

- Կարծում եմ՝ նրա համար էլ հաճելի կլինի ընկնել ձեր, այսպես ասած, գթասիրտ, համակիր ձեռքով, քան որեւէ անտարբեր վարձու մարդասպանի կամ մոլեռանդ կուսակցականի: Իսկ եթե հետո լավ փաստաբանի կարիք լինի, մենք կօգնենք,- եզրափակեց Քեռի Թոմը՝ կոկիկ խոնարհելով գլուխը:- Բայց մի վախեցեք, կանխամտածված սպանությունը գործնականում անհնար է ապացուցել: Բոլոր վկաները ձեր օգտին կխոսեն: Եվ եթե

ամեն ինչ ճիշտ կազմակերպենք, կարելի է այնպես անել, որ մարմինն այստեղի ճահիճներում չգտնեն, բայց խոստովանեմ, մեզ պետք է, որ այդ պատմությունը լայն հնչողություն ստանա, հայտնվի թերթերում եւ՝ ոչ միայն ռուսական: Հակառակ դեպքում՝ ինչի՞ համար է այդ ամենը: Տեսնո՞ւմ եք, ձեզնից ոչինչ չեմ թաքցնում, չնայած կարող էի: Բայց չէ՞ որ ռուս մարդը պետք է տուժի հանուն արդարության...

«Ներկան կառավարում են ապագայից,- մտքում հայտնվեց Լեգկոբըտովի նախազգուշացումը:- Իսկ եթե հակառա՞կը՝ ներկան կառավարվում է անցյալի՞ց: Պատրաստել եւ ուղարկել են: Սպիտակները սկսում են, սեւերը՝ հաղթում... Ինչ-որ մեկը կրծում է ժամանակի միջնապատերը ու մկան պես վազում այս ու այն կողմ: Ինչո՞վ դեր չի այ այս Քեռի Թոմի համար»:

- Ի՞նձ եք ստուգում,- խռպոտ հարցրեց մեխանիկը՝ զգալով, որ լեզուն դժվարությամբ է շարժվում չորացած բերանում:- Թե՞ շուն եք քսի տալիս որսի վրա:

- Քաղաքական անհրաժեշտություն: Ձեզ, ենթադրում եմ, բարոյականությո՞ւնն է առաջնորդում:

- Բանականությունը: Չեմ հասկանում՝ ինչո՞ւ: Ինչո՞ւ սպանել միանգամայն անմեղ, ոչ մեկին չխանգարող մարդուն:

- Վասի՛լի Խրիստոֆորովիչ, մի՞թե ենթադրում եք, որ պատճառներ չունենալով այդպիսի առաջարկով կդիմեինք ձեզ: Եվ մի՞թե կարծում եք ինձ հաճույք է պատճառում ձեզ դրա մասին խնդրելը: Պավել Մատֆեեւիչը, ցավոք, սխալ ճանապարհով ու հեռուն է գնացել ու մեզ համար չափազանց տհաճ մի քանի արարք կատարել,- բամբերը վշտացած լռեց:

«Գոնե գնացք անցներ»,- տրտում մտածեց Կոմիսարովը, բայց հետճաշյա կայարանում շոգ էր, խաղաղ, ամայի: Կոմիսարովը ձեռքով նշան արեց, մոտեցավ դուրս պրծած աչքերի տակ սեւ շրջանակներով չորչորուկ, տարեց մատուցողը ու լաֆիտի նոր սափոր դրեց սեղանին:

- Ուրեմն եկել եք այստեղ, որ ինձ համոզեք սպանել ընկերոջս,- քիչ անց ասաց նա:- Վրեժ լուծել նրա համար, որ տասնհինգ տարի առաջ դուրս է եկել ձեր քաղաքական աղանդից, ուր մտնելիս երիտասարդ էր ու խորապես դժբախտ: Իսկ հետո հասկացել էր, որ սխալվել է, եւ դա իր գործը չէ: Բայց նրա քայլը կրկնել փորձողների համար լավ դաս կլինի, չէ՞: Մի՞թե ձեզ համար հանցագործության վաղեմության ժամկետ չկա: Ավելին, մի՞թե համայնքից դուրս գալը հանցագործություն է: Չէ՞ որ հենց նոր ասացիք՝ ձեր կուսակցությունն անհատական տեռորով չի զբաղվում: Թե՞,- հանկարծ

հասկացավ նա, ու պղտոր պատկերը հստակվեց,- ինձ եք ուզում շղթայել: Որ հետո շանտաժի հիմք ունենաք: Որ արդեն ոչ մի տեղ չփախչե՞մ: Մի՞թե հեղափոխությունը ոչնչով լավ չի պալատից: Իսկ ի՞նչ կկատարվի, եթե իսկապես գաք իշխանության,- նա վեր թռավ ու քունքերը շփելով՝ քայլեց պատուհանի երկարությամբ:- Լսեք, չե՞ք վախենում, որ հիմա ոչ թե մատուցողին կկանչեմ, այլ տեղամասային ոստիկանին:

- Այ թե ինչ է անում շոգը,- մտահոգ ասաց Քեռի Թոմը:- Գումարած խմիչքը, գրողը տանի: Ախ, ի՞նչ փորձանք է... Երեւում է խմել չգիտեք: Լսեք, Կոմիսա՛րով, եթե սպանեինք մեր բոլոր շտրեյկբրեխերներին, ստիպված կլինեինք գնդակահարել Ռուսաստանի կեսը:

- Եվ կգնդակահարե՞ք,- ավելի խայտառակ գրգռվածությամբ պայթեց Վասիլի Խրիստոֆորովիչը՝ հեղձուկ օրվանից ընկնելով մռայլ ու ցուրտ հավերժության մեջ:

- Իսկ եթե այլ կերպ չի՞ կարելի,- նրա ետեւից հասավ Քեռի Թոմն ու բռնեց թեւքից:- Նստե՛ք, Աստծու սիրուն, մի տաքացեք, ինչպես ցլիկը զուգավորվելուց առաջ: Մեկ է, ոչ մի տեղ չեք գնա ու ոչ մեկին չեք կանչի: Ինչ արած, եթե հիմա չեք ուզում սպանել, մի սպանեք:

- Ի՞նչ է նշանակում «հիմա»: Ես ձեր մռութը կջարդեմ:

- Անիծված լյախ:

- Ի՞նչ:

- Պիտի ավելացնեիք՝ «Մռութդ կջարդեմ, անիծված լյա՛խ»: Ու որ ծխամորճը ոչ մեկին բաժին չհասնի:

- Զառանցո՞ւմ եք, ինչ է: Զառանցո՛ւմ եք, այս ամբողջը զառանցանք է, զառանցա՛նք,- խուլ ճչաց Կոմիսարովը:- Այս կայարանը, ծուխը, այս մանրիկ մտքերը:

- Ոչ մի միտք պատահական չի հայտնվում: Մտքերը հենց այնպես չեն բռնի ոչ մեկին, գիտեն ում ընտրեն,- խնդմնդաց Քեռի Թոմը:- Եվ այդ մանրիկ մտքերը մաքրել չի լինում, չէ՞: Հը՞: Խցկվում է ամեն կարգի անպատկառ ու դիվական միտք: Ուրեմն միանգամից վերջ տվեք բոլորին: Բազմաթիվ մանր մեղքերից միայն մեծ մեղքն է ազատում: Կամա՛ց, կամա՛ց, մենք առանց այն էլ չափազանց շատ ուշադրություն ենք գրավում: Համարեք, որ այս ամենը թյուրիմացություն էր: Պատահմամբ ձեզ չհասցեագրված նամակ եք կարդացել:

- Իսկ ո՞ւմ է հասցեագրված:

- Կարեւոր չէ: Ցպահա՛նջ: Ես ձեզ ուրիշ խնդրանք ունեմ: Դատարկ բան է: Շուտով մեզ կարճ ժամանակով պետք կլինի ձեր պետերբուրգյան բնա-

կարանը ու որոշ բաներ Վերա Կոնստանտինովնայի զգեստապահարանից:

- Ի՞նչ: Ինչի՞ համար,- հարցրեց մեխանիկը՝ ավելի շատ ապշած նրանից, որ Քեռի Թոմը գիտի իր կնոջ անունը:

- Պետք է օգնել մի մարդու: Ձեզ նման՝ մտքեր ունեցող: Սակայն հագուստի հետ կապված բոլոր ծախսերը կհատուցենք: Հուսամ՝ դեմ չե՞ք:

- Մատ երկու քայլով,- գոչեց Կոմիսարովը:- Եթե միանգամից խնդրեիք, գուցե եւ մտածեի կամ բացատրություն պահանջեի, բայց հիմա ստիպում եք համաձայնել ու նորից օգտագործում եք առանց պարզաբանումների: Մի՞թե բնակարանի պես դատարկ բանի համար հորինեցիք Լեգկոբըտովի մասին այս ամբողջ ցնդաբանությունը:

- Համաձա՞յն եք, թե ոչ:

- Կնոջս զգեստապահարանն աղքատիկ է:

- Ահա եւ առիթ կլինի թարմացնելու: Վասի՛լի Խրիստոֆորովիչ,- Քեռի Թոմը վեր կացավ ու ձեռքը պարզեց մեխանիկին,- դուք շատ ազնիվ, օրինավոր մարդ եք: Ես միշտ մեծ հարգանքով եմ վերաբերվել ձեզ, իսկ այսօր ավելի հարգեցի:

Մեխանիկը նայեց նրա կառչուն, փոքրիկ թաթին եւ, ինքն իրեն արհամարհելով թուլության ու վախի համար, ուր որ է սեղմելու էր, բայց դրա փոխարեն, ինքն էլ չհասկացավ ինչպես՝ սեղանից խլեց խմիչքի կիսատ բաժակն ու շփեց Քեռի Թոմի դեմքին, հետո մյուս ձեռքով ողջ ուժով հասցրեց թուխ մռութին:

Ամեն ինչ շատ արագ կատարվեց, բայց չվրիպեց բուֆետում գտնվող մարդկանց ուշադրությունից: Բոլորը թողեցին իրենց գործերն ու սեւեռվեցին հեղափոխականների վրա:

- Համենայնդեպս չդիմացաք,- գլուխն օրորեց Քեռի Թոմը՝ վեր կենալով ու անձեռոցիկով սրբելով դեմքը, որի վրա արյունը խառնվել էր գինուն:- Այդպես էլ գիտեի, որ այս ամենը նման մի բանով կվերջանա: Բայց մի՞թե ձեզ համար մտքերի անառակությունն ու սատանայի չարությունները կարեւոր են նրա կյանքից, ում ձեր բարեկամն եք համարում:

Ամոթահար, խայտառակված Կոմիսարովը չգիտեր ինչ անել: Ասես օդը դուրս էին քաշել միջից, եւ նա ընկճված լռում էր:

- Եկեք դուրս գանք, թե չէ իսկապես ամեն ինչ կվերջանա ոստիկանությամբ,- մտահոգ ասաց Քեռի Թոմը:- Եվ համարենք, որ տեղի ունեցածը գործի հետ կապ չունի: Չէ՞ որ դուք խելացի, մտածող մարդ եք,- շարունակեց նա, երբ անցնում էին կայարանամերձ հրապարակով,- եւ պետք չէ

զգուշացնել, թե ինչ կլինի, եթե որեւէ մեկն իմանա մեր խոսակցության մասին: Բնականաբար, ներառյալ Լեգկոբընտովը: Այդ դեպքում ես նրա կյանքի համար կես գրոշ էլ չեմ տա, չնայած չեմ հասկանում՝ ինչ եք գտել այդ շատախոսի մեջ: Իսկ հիմա գնացեք տուն ու քնեք: Աստծուն հավատո՞ւմ եք:

- Այո՛, այսինքն՝ ո՛չ: Չեմ հավատում: Մի խոսքով, չգիտեմ: Սատանային եմ հավատում,- տառապած ձայնով ասաց Վասիլի Խրիստոֆորովիչը:- Այսինքն, ոչ թե հավատում եմ, այլ գիտեմ, զգում եմ, որ գոյություն ունի: Իսկ Աստծու մասին ոչինչ չգիտեմ: Չեմ զգում: Իսկ դո՞ւք,- ագահ հետաքրքրությամբ հարցրեց նա:- Հավատո՞ւմ եք: Զգո՞ւմ եք:

- Մենք բարդ հարաբերություններ ունենք,- խուսափողական պատասխանեց Քեռի Թոմը:

- Ոչ մի հարաբերություն էլ պետք չի: Պարզապես պետք է հավատալ:

- Ուրեմն հենց դուք էլ աղոթեք: Եթե ձեր ամբողջ մտածածը հաջողությամբ ավարտվի, խոսք եմ տալիս, ոչ ոք ձեռք չի տա ձեր գազանորսին: Թող թափառի իր անտառներում եւ գրի թռչունների ու շների մասին, եւ ասեք նրան՝ այեւս քիթը չխոթի ուր չեն խնդրում: Անտառներին մոտ ու խմբագրություններից հեռու: Ու թող հանգիստ թողնի սրբահայր Ֆոմային: Չե՞ք մոռանա:

- Հը՛մ,- քրթմնջաց Վասիլի Խրիստոֆորովիչը՝ զգալով ինչպես է անցնում հարբածությունը:

- Կռացեք, մի բան ասեմ... Բայց եթե հանկարծ, ինչ-ինչ պատճառներով,- շշնջաց Քեռի Թոմը՝ Կոմիսարովին պարուրելով դիմափոշու, արյան ու գինու քացրավուն հոտով,- ինչ-որ կանխազգացումներով, որոնք ձեզ չեն խաբում, համենայնդեպս ուզեք սպանել նրան, խեղդել ու նույն կերպ կանգ առնել չկարողանաք... եւ պետք չէ, պետք չէ: Պարզապես այդ ժամանակ հիշեք մեր խոսակցությունը ու չամաչեք:

8

- Լսե՛ք, անքաղաքավարություն է վերջապես՝ ուղեկցել տիկնոջն ու լռել: Ո՞ւր եք այդպես շտապում: Մենք ի՞նչ է, ինչ-որ տեղից ուշանո՞ւմ ենք: Եվ ինչո՞ւ եք վերցրել հրացանը: Պատրաստվում եք սպանե՞լ ինձ:

Պավել Մատվեեւիչը ցնցվեց: Նա դանդաղ քայլել չգիտեր եւ արդեն մոռացել էր, որ ուրիշի կնոջ հետ զբոսնում է Ճելոմ գետի ափին: Տրամադրությունը զզվելի էր: Նախորդ օրը հարեւան գյուղից վերադառնալիս, ճանա-

պարհի կեսին, այնտեղ, ուր խոր ձորակը կտրում էր ճանապարհն ու բաժանում երկու մասի՝ երկարը շրջանցումով տանում էր վերեւ, իսկ կարճը ձորակը հատում էր փայտե կամրջակով, անսպասելի սլացավ ներքեւ: Հեծանվի արգելա՞կն էր փչացել, թե՞ հեծանվորդը չէր հաշվարկել արագությունը, բայց երբ ուշքի եկավ, պառկած էր ձորակի հատակին, իսկ գլխից մի քանի սանտիմետրի վրա մի հսկա գլաքար էր, որ միլիոնավոր տարիներ առաջ քաշել-բերել էր սառցադաշտը: Լեգկոբըտովը շոշափեց խորդուբորդ ու խոնավ քարը ու ցնցվեց մտքից, թե ինչ կպատահեր, եթե ավելի թափով իջներ: Բայց առանց այդ էլ կարգին տուժել էր. հագուստը ճղճղված էր, իսկ Կոմիսարովի նվիրած արտասահմանյան հեծանիվն ըստ երեւույթին այլեւս ենթակա չէր նորոգման:

Այդ տեսքով անհնար էր գնալ տուն, ստիպված էր սպասել մութն ընկնի ու մտածել չարն ի բարին փոխելու մասին, ինչը վաղուց Պավել Մատվեեւիչի գլխավոր կենսական հնարքներից էր: Ցանկացած պարտություն պետք է վերածվի հաղթանակի, իսկ հաղթանակն՝ ընդլայնածակվի. Լեգկոբըտովը ձգտում էր իրենով ծածկել աշխարհը՝ եւ ուղղահայաց, եւ հորիզոնական:

Ինչ կլիներ, օրինակ, մտածում էր նա, եթե գնայի երկար ճանապարհով: Կամ, ասենք, պատկերացնում էր մի այսպիսի իրավիճակ. տղա եւ աղջիկ, միասին քայլում են ճանապարհով, հետո ճանապարհը երկու մասի է բաժանվում, աղջիկն ընտրում է ավելի երկար, փորձված ուղին, տղան՝ կարճ ու վտանգավորը, ու փորձանքի է գալիս, բայց ինչ-որ կերպ դուրս է պրծնում դժվար վիճակից, հետո երեխաները հանդիպում են, հաշտվում, եւ ամեն ինչ ավարտվում է հեղինակի իմաստուն խրատախոսությամբ: Բայց երբ բարոյախրատական վերջաբանը մտմտացող Լեգկոբըտովը ճղճղված շալվարով հասավ տուն, կարեկցանքի փոխարեն նրան դիմավորեց մեծացող որդիների ծիծաղն ու կնոջ թունոտ ժպիտը: Միայն խորթ տղան էր լռում, բայց երեւում էր, որ հոգու խորքում չարախնդում է բոլորից ավելի: Նա ընդհանրապես որոշ ժամանակից ի վեր փոխվել էր՝ սովորականից մռայլ ու ներամփոփ էր դարձել, եւ Պավել Մատվեեւիչի մտքով անցավ, որ եթե նորից խեղդվելիս լինի, Ալյոշան մատը մատին չի տա իրեն փրկելու համար:

«Հակառակը՝ թիակով կհասցնի գլխիս: Հիմա նրա հետ որսի էլ չես գնա: Կաքավի նման կգնդակահարի, հետո կասի՝ դժբախտ պատահար էր: Եվ ոչ ոք ոչինչ չի ապացուցի»: Լեգկոբըտովը այնքան պարզ տեսավ այդ պատահական կրակոցն ու իրեն՝ կողքանց ընկած սպիտակ մամու-

ռին, որ նույնիսկ վատ զգաց: Կատաղած շանն այ այդպես առանց երկմտելու կխփեր: Բայց ինչպե՞ս վարվի տղայի հետ: Գուցե իսկապես ժլատություն չանի՞, նրա՞ն տա Կոմիսարովի այդ խենթուխելառ աղջկան, ու թող աղջիկն իր իմացածով վարժեցնի սրան:

Ուլյայի փոխարեն, թե Ուլյայի հետ չկայացած փախուստից հետո Պավել Մատվեեւիչը մի փոքր ընկճվել ու անհանգիստ էր: Զգում էր, որ ընտանիքը, որի վերաբերյալ երբեք կասկած չէր ունեցել, այլեւս ամուր թիկունք չէ: Ընտանիքն էլ փլուզվում էր, ինչպես շուրջն ամեն ինչ: Նույնիսկ Պելագեյան, ում սերը նրան անսակարկելի ու հավերժ էր թվում, այդ աստվածային հիմարիկը, գյուղական անգրագետ հրեշտակը, սուրբ գեղջկուհին կանանց դասընթացներում սովորող ինչ-որ նեղացկոտ, փքված աղջիկ-պարոն էր դարձել: Վերեւից էր նայում ամուսնուն, իսկ երբ փորձեց սովորականի պես կոպիտ շոյել կնոջը, ընդհանրապես ըմբոստացավ, գազազեց ու գնաց մենակ քնելու խոտանոցում: Ստացվում էր՝ ոչ թե ինքն էր լքել նրան, այլ կինը՝ իրեն: Առաջ, որքան էլ գժտվեին՝ ցերեկը հասնելով փոխադարձ վիրավորանքների, ծեծի ու կատաղության բռնկումների, գիշերը հաշտվում էին, բայց այլեւս չկային այդ գիշերները: Պավել Մատվեեւիչը ծանր էր տանում ամուսնական բաժանումը, զայրանում էր, չարանում, տանջվում չբավարարված ցանկությունից ու նաեւ այդ պատճառով որոշեց գբոսանքի գնալ Վերա Կոնստանտինովնայի հետ՝ նույնիսկ կնոջից չթաքցնելով այդ հանգամանքը: Դա նրա վրեժն էր տնեցիների հանդեպ: Գումարած՝ անասելի զայրացած էր մեխանիկի վրա, որ չի կարողանում սանձել իր կանանց, ավելին՝ ինքն էլ կնկա պես մի բան էր դարձել: Պելագեյան ամուսնուն պատասխանեց նրանով, որ առանց ընթրիքի թողեց ու չփաթաթեց փաթաթանները, եւ որսորդը շատակեր աղվեսի պես սեղանից մի կտոր հաց խլելով՝ դուրս թռավ տնից՝ սոված, չարացած ու անհամբեր, սապոգները բոբիկ ոտքերին:

Ճանապարհին խաչերթի հանդիպեց: Հայր Էրոսը՝ թանձրամարմին, ոչ ծեր, բայց ամբողջովին ճերմակած, կարմրատակած դեմքով, ճարպով, ջրով ու մսով լեցուն, ծանր երկնագույն հանդերձներով՝ փոշոտ ճամփով շնչակտուր քայլում էր առջեւից, նրան խաչով, խաչվառներով ու սրբապատկերներով հետեւում էին տղամարդիկ, կանայք, երեխաներ: Բայց ժողովուրդը քիչ էր: Մեծ մասը այդպես էլ մնացել էր գյուղում՝ թեյ խմելու, բայց եկածների մեջ էլ որսորդը ոչ մի լարվածություն չնկատեց:

- Անձրեւ տուր, Տե՛ր, ծարավ հողին,- միալար կոչում էր հայր Էրոսը, ու ժողովուրդը աններդաշնակ կրկնում էր.

- Անծրեւ տուր, Տե՛ր, անծրեւ տուր, Տե՛ր:

«Ինչպիսի՛ ալիտերացիա,- դժգոհ մտածեց Պավել Մատվեեւիչը,- լրիվ սլավոնական հեթանոսություն: Ա՛յ թե գործ է բռնել տեր հայրը: Եվ ինչո՞ւ անծրեւ տրվի այս անբաններին ու անհավատներին: Ջա՞նք են թափել: Որեւէ բա՞ն են արել այդ անծրեւի համար: Տերտերն էլ ուժեղ է. իր ասածին չի հավատում, բայց ուզում է հեղեղ թափվի: Գիտական գրքեր կարդալու, փիլիսոփայելու, լուսավորելու փոխարեն ստիպում են շամանություն անի»:

Լեգկոբըտովը հիշեց ուխտավորների մոլեգին աչքերը Սվետլոյարում, հիշեց բազմահազարանոց երգեցողությունը ողջ ամառային գիշերվա ընթացքում եւ որերորդ անգամ համոզվեց, որ աղանդավորությունը Ռուսաստանում ուժեղ է հույլ ուղղափառությունից, հզոր նմանակի պես կանգնած է նրա թիկունքում եւ վաղ թե ուշ կուլ կտա նրան, եւ հանդարտ, ծույլ ջրերը պաշտոնական Աստծուն կտանեն դեպի ռուսաց մթին ապագան:

Արեւն այդ ընթացքում արդեն իջել էր անտառից անդին, բայց տագնապալի կարմիր երկինքը շառագունած էր նրա ճառագայթներով ու ծայրեծայր վառվում էր: Ծոգը քիչ-քիչ նվազում էր, չնայած առաջվա պես խեղդուցիչ էր, քամոտ, ծխապատ ու տագնապալի, եւ որսորդի կողքով քայլող՝ կապույտ շալն ուսերին գեղեցիկ աղջիկ-պարոնը մտածում էր, որ իր համար դժվար է արտասանել «գետի երկայնքով», ստացվում էր «գետիկանքով», եւ դա, չգիտես ինչու, անասելի զայրացնում էր նրան: Չնայած արդեն գետ էլ չկար, միայն անունն էր մնացել, չորացող առվակ, որի ափերին թափթփվել էին սատկած ձկների ու գորտերի մարմինները:

Վերա Կոնստանտինովնան ուզում էր ծխել, սակայն Պավել Մատվեեւիչի ներկայությամբ չէր համարձակվում:

- Ասում եք՝ չեք հիշում ինչպիսին էր, բայց գոնե անունը հիշո՞ւմ եք:

- Ո՞ւմ:

- Ձեր հարսնացուի: Դե, ում հետ դուք... ով ձեզ... Բեռլինում, մահարձանը, թանգարանը, զառ խաղացող աղջիկը, կայարանը, Պոլցին... հերիք է մատով անի...

- Ձեր ինչի՞ն է պետք:

Լեգկոբըտովը հեգնությամբ թե զայրացած նայում էր Վերա Կոնստանտինովնային: Չարանում էր, որ ժամանակ է կորցնում այդ քմահաճ, անհավասարակշիռ կնոջ հետ, որն իրեն կանչել է իբր Ուլյանայի եւ նրա խորհրդավոր գիշերային զբոսանքների ու փոխակերպումների մասին խոսելու, բայց դրա փոխարեն փորփրում է իր անցյալը:

- Բացի այդ, չեմ հասկանում՝ ի՞նչ նպատակով պատմեցիք այդ ամենը, հետն էլ փորձելով խաբել բոլորին:

- Ներեցե՞ք:

- Գոնե հիմա մի ստեք,- զզվանքով ասաց Վերա Կոնստանտինովնան:- Որքան ուզում եք կարող եք խաբել իմ բարեհոգի ամուսնուն ու նրա խելառ աղջկան, բայց՝ ոչ ինձ: Դուք դիտմամբ չեք գնացել Պոլցի այն օրը, երբ ձեր սիրեցյալի գնացքն անցնելու էր կայարանով: Վախեցել եք հանդիպե՞լ նրա հետ կամ, որ կհիասթափվե՞ք, Պելագեայի համա՞ր եք վախեցել, չեք ցանկացել ձեր ապուշ երազանքը փոխարինել իրական կյանքո՞վ՝ չգիտեմ եւ չեմ ուզում իմանալ, բայց գիտեմ, որ այդ պահին միայն ձեր մասին եք մտածել: Դուք միշտ մտածել եք ձեր մասին եւ նրա մասին՝ երբեք: Բեռլինում դուք կնոջն արթնացրիք նրա մեջ ու լքեցիք՝ վախենալով, որ տհաճություններ կունենաք հոր կողմից: Կողոպտեցիք ու տկլոր թողեցիք ճանապարհին:

- Ինչպե՞ս, ինչպե՞ս:

- Սուրբ մի ձեւացեք,- զայրացավ Վերա Կոնստանտինովնան:- Նա ձեզ պետք էր ոգեշնչման, տպավորությունների սրության համար: Դուք էիք, չէ՞, հայտարարում, որ նա ձեր մեջ արթնացրեց գրողին: Ի՜նչ մեծ բան: Պատկերացնո՞ւմ եք՝ գրողին: Թքած ունեմ ձեր գրողության վրա, որ ոչ մի կոպեկ չարժի: Ոչ մեկի գրողությունը չարժի, ձերը՝ առավել եւս:

- Իմ գործերից որեւէ բան կարդացե՞լ եք,- խեթեց Լեգկոբընտովը:

- Դուք ինձ հետաքրքիր չեք:

- Չի երեւում,- ծիծաղեց որսորդն ու սղալեց մորուքը:- Միայն թե միանգամից զգուշացնեմ՝ ոչինչ չի ստացվի:

- Ի՞նչ չի ստացվի,- կարմրեց Վերա Կոնստանտինովնան:

- Չեք կարողանա ինձ համբերությունից հանել:

- Ես ձեր մազերը կպոկեմ: Հատիկ-հատիկ կպոկեմ,- գազազեց կինը:

- Ինչո՞ւ եք այդպես ատում ինձ,- ապշեց Լեգկոբընտովը:- Ի՞նչ վատ բան եմ արել ձեզ:

- Ձեր հաճույքի համար մի անգրագետ գեղջկուհի եք գտել, որը ձեր ոչ մի տողը չի կարող կարդալ, իսկ մյուսին ուղարկում էիք ձեր գրքերն ու սպասում հավանության: Մի՞թե չեք հասկանում, չարաբաստիկ գրչա՛կ, քաղցրածայնիկ կո՛ւյս, որ նա սիրո խոսքեր էր փնտրում ու չէր գտնում այդ խոսքերը:

- Որովհետեւ վատ էր փնտրում,- քրթմնջաց որսորդը:

- Վա՞տ էր փնտրում,- վերջնականապես հունից դուրս եկավ Վերա

Կոնստանտինովնան, ու դեմքը սկսեց վառվել:- Իսկ երբեք չե՞ք մտածել նրան ինչ է արժեցել այդ հեռագիրն ուղարկելը: Այ դուք անընդհատ խոսում եք, թե ձեր հոգու ինչ-որ մասն անձեռնմխելի է, իսկ գոնե մի պահ կարո՞ղ եք պատկերացնել ինչ է զգացել նա, երբ գնացքը կանգնել է խուլ կայարանում, եւ դուք այնտեղ չեք եղել: Հնարավո՞ր էր ավելի մեծ վիրավորանք հասցնել կնոջը: Գիշեր, ամայի կառամատույց, տղամարդիկ... Ո՞ւր կորչես: Դուք ընդհանրապես հասկանո՞ւմ եք ինչ է կինը: Որտեղի՜ց,- քամահրանքով ձեռքը թափ տվեց նա,- դուք մայրիկ-դայակից, ձեր գյուղական կոնկուբինայից բացի ոչ մեկը չեք էլ ունեցել: Ու դրանից հետո ձեզ գրո՞ղ եք երեւակայում: Գոնե հասկանո՞ւմ եք ինչ է գրողը:

- Որտեղի՜ց,- արձագանքի պես կրկնեց Լոգկոբըտովը:

- Մի՛ ծաղրեք: Գրողը,- ոգեշնչված խոսեց Վերա Կոնստանտինովնան,- իսկական գրողը նկատի ունեմ, հանդուգն, խիզախ, լկտի մարդ է: Չունի՛ բարեկամներ, հակառակը՝ բազում կանայք ու բազում թշնամիներ ունի, մենամարտում է, սրտեր կոտրում, իր անունը թողնում ամենուր, եւ ամեն կին երազում է որդի ունենալ նրանից, որ հետո, երբ մեծանա, ականջին շշնջա, թե ով է իր իսկական հայրը, որպեսզի որդին իմանա ու հպարտանա դրանով: Գրողը դժբախտացնում է մերձավորներին, որ հեռավորները երջանկանան: Գրողը հողմ է, հրաբուխ, երկրաշարժ: Գրողը էլեկտրական հոսանքի պես պիտի խփի: Իսկ դուք ի՞նչ հոսանք: Ի՞նչ կա ձեր կյանքում, բացի ամոթալի հիշողությունից, որ ձեզ ներքինու պես պահեցիք սքանչելի կնոջ հետ: Բավական է, գլուխս մի տարեք: Ու ոչ մեկինը մի տարեք:

Պավել Մատվեեւիչը մտախոհ նայեց Վերա Կոնստանտինովնային ու կարճ լռությունից հետո ասաց.

- Այնպես եք խոսում, ասես այդ ամենը ձեզ հետ է պատահել:

- Իսկ եթե այդպե՞ս է:

Լեգկոբըտովը ցնցվեց եւ ավելի ուշադիր նայեց կնոջ աչքերի մեջ.

- Դուք իրոք շատ դժբախտ եք ձեր ամուսնու հետ:

Վերա Կոնստանտինովնան ցնցվեց, հետո թույլ թափ տվեց ձեռքն ու ապտակեց գրողին: Հարվածը հպանցիկ ստացվեց, եւ հասկանալի չէր՝ ապտա՞կ էր, թե՞ պարզապես անհմուտ հպում, անճարակ շոյանք: Այդ անճարակությունից երկուսն էլ լռեցին ու որոշ ժամանակ լուռ էին քայլում:

Առաջինը խոսեց Լեգկոբըտովը.

- Լսեք, ինչո՞ւ եք եկել ինձ հետ: Կծե՞լ եք ուզում:

- Ուզում եմ իմանալ հետո ինչ եղավ նրան:

- Վերադարձավ Ռուսաստան ու պսակվեց մի սրիկայի հետ: Սա ձեզ բավարարո՞ւմ է:

- Ինձ մանրամասներ են պետք:

- Լա՛վ, եկեք մանրամասնենք,- Լեգկոբըտովը հառաչեց ու մի կտոր հաց հանեց որսորդական բաճկոնի գրպանից:- Կուզե՞ք: Իսկ ես կուտեմ:

9

- Ձեզ արդեն պատմել եմ,- սկսեց Պավել Մատվեեւիչը՝ հաճույքով ծամելով վրան ծխախոտի փշրանք ու վառոդի հատիկներ կպած մի քիչ խոնավ հացը,- որ ջահել տարիներիս հեղափոխական եմ եղել: Եվ առաջինը, որ արեցինք՝ մի հասարակաց տուն ջարդուփշուր անելն էր Վիլնայի արվարձանում:

- Ինչո՞ւ:

- Երեւի, որ վերջ տանք կանանց նվաստացմանը,- ուսերը թոթվեց Լեգկոբըտովը:- Բայց դրանից ոչ մի խելացի բան դուրս չեկավ: Կիսամերկ տիկնայք գոռում ու ֆշշացնում էին, տիրուհին ուշագնաց պառկել էր ուսանողուհու պես, այցելուները նախընտրեցին սուսուփուս ծլկել, որ ցուցմունք չտան ոստիկանությունում: Ի սարսափ մեզ, պարզվեց, որ այցելու պարոնների մեջ էր նաեւ մեր ընկերը: Ավելին, այնտեղ գնում էր կուսակցական փողերով: Ամոթանք տվեցինք, բայց ամեն ինչ իզուր էր: «Դուք հիմար եք,- ասում էր նա:- Ուզում եք վերափոխել մարդու բնությունը, իսկ դա անհնար է: Վիլնան հիմնադրել է երկաթյա գայլուհին, որը տրվում էր բոլորին, ով նրան ցանկանում էր: Եվ այնտեղ միշտ լինելու են եւ՛ անառակներ, եւ՛ խաբեբաներ, եւ՛ մարդասպաններ: Եվ նրանք ամենամոտն են Աստծուն: Եվ ձեր ողջ հեղափոխությունն էլ հորինվել է զուտ նրա համար, որ օրինականացվի անառակությունն ու թույլատրվեն ապահարզանները»:

Վերա Կոնստանտինովնան զգաց, որ նորից կարմրում է, սակայն, բարեբախտաբար, վրահաս աղջամուղջում դա այնքան էլ նկատելի չէր:

- Երբեմն տարօրինակ մարդիկ էին հանդիպում հեղափոխականների մեջ,- մտախոհ ասաց Պավել Մատվեեւիչը:- Մաքուր եւ կեղտոտ, քաջ ու վախկոտ, ագահ ու անշախնդիր, սակայն բոլորը հասկանում էին, թե ինչ է կուսակցական կարգապահությունը: Իսկ այս մեկը՝ ոչ: Ասում էին՝ մարտական կազմակերպությունից է տեղափոխվել մեզ մոտ, իսկ այնտեղ ընկել է բանակից դասալքելուց հետո: Չգիտեմ՝ ճիշտ էր, թե ոչ, բայց անպիտանության ու անկրթության առումով ապշելու տիպ էր: Ոչինչ չէր կարո-

ղանում, ոչինչ չգիտեր, ոչինչ չէր ուզում: Փորձել էր ծովային դառնալ, դուրս էին շպրտել նավից, ոսկեխույզ էր եղել, մի կերպ էր փախել հանքավայրից, որս էր արել, բոլոր կենդանիները փախել ու թռչունները ցիրուցան էին եղել: Այնպիսի մեկը, որ մեռներ, վրան լացող չէր լինի: Նրան սկսեցին պատրաստել ահաբեկչական գործողության եւ ուղարկեցին կարանտին: Գիտե՞ք դա ինչ է:

«Կարմրախտ, քութեշ, ջերմություն: Վերափոխման պահքին ուխտ կգնամ Պեչորա: Հենց այստեղից էլ կգնամ՝ կնանիքանց հետ»:

- Է՛, ոչինչ էլ չգիտեք, ու ոչ մի տեղ էլ չեք գնա,- նրա մտքերն արագ ցիրուցան արեց Լեգկոբընտովը:- Կարանտինը այն ժամանակամիջոցն է, երբ ահաբեկիչը պետք է քաղքենի ձեւանա, որեւէ տեղ թեթեւ ծառայության մտնի, սիրավեպ սկսի որեւէ սիրունիկ քաղքենուհու հետ եւ բթացնի ոստիկանության զգոնությունը: Օրինակ, ինչպես ձեր ամուսինը:

- Ի՞նչ,- գոչեց Վերա Կոնստանտինովնան:

- Այ դրանից արդեն ինքներդ գլուխ հանեք,- հաճույքով ասաց Պավել Մատվեեւիչն ու անշարժացավ:- Ձեզ չի՞ թվում, որ մեզ հետեւում են:

- Ո՞վ է հետեւում: Ինչո՞ւ:

- Չգիտեմ: Ոչ մեկին չե՞ք կանչել այստեղ:

Նա ուշադիր նայեց աղջամուղջի հեռուն: Արդեն մութ էր, միայն լույսի մի նեղ, պղտոր շերտ էր կախվել ցամաքած գետի վրա: Քամին ուժեղացել էր, ու չինձած չոր խոտը խոնարհվում էր նրա տակ, եւ Վերա Կոնստանտինովնան իրեն զգաց այն երազում, ուր գիշերային քամին փաթաթվել էր ոտքերին: Հանկարծ ոտքն ինչ-որ լպրծուն բանի վրա դրեց, որը ծվաց ու փախավ: Վերա Կոնստանտինովնան ճչաց.

- Սա ի՞նչ էր:

- Ի՞նչ: Որեւէ կենդանի,- ցրված պատասխանեց Պավել Մատվեեւիչը:

- Ի՞նչ կենդանի:

- Լորտու, գորտ, գուցեեւ իժ: Անտառում չորություն է, նրանք էլ, բնականաբար, սողում են դեպի գետը: Բոլոր կենդանիներն էլ տառապում են:

- Ուզում եմ տուն գնալ,- վախեցած ասաց Վերա Կոնստանտինովնան:

- Բայց չէ՞ որ սրանք էլ յուրովի խաչի երթ ու աղոթք են անում,- կանացի քմահաճությանն ուշադրություն չդարձնելով՝ ասաց Պավել Մատվեեւիչը,- ու դեռ հայտնի չէ՝ ում աղոթքն է ավելի հասանելի: Պետք էր Կարային վերցնել... Իզուր չվերցրի: Մինչեւ լուսինը չբարձրանա, չես տեսնի ով է թրեւ գալիս անտառում... Այսպես ուրեմն, ահաբեկիչները շատ ծանր են տանում կարանտինը. ուզում են արագ բռնկվել, պայթել, ցրիվ գալ: Իսկ Սավելիին այն-

քան էր դուր եկել հանգիստ կյանքը, այն էլ՝ կուսակցական փողերով, որ երբ մի փոքրիկ մարդուկ եկավ կենտրոնից՝ ուրախ լուրը շուրթերին ու ռումբը՝ պայուսակում, նա հայտարարեց, որ մտափոխվել է: «Խելագարվե՞լ եք: Ախր խեղդում էիք ձեր խնդրագրերով: Քանի՛սը կուզեին լինել ձեր տեղում: Մենք ձեզ վերցրինք առանց փորձաշրջանի, մենք վստահեցինք ձեզ, ինչպե՞ս կարող եք»: Բայց Սավելիին ոչինչ չէր հետաքրքրում: Բոլորին ասում էր, որ կյանքի ու մահվան սահմանին է եղել եւ չի ցանկանում ժամանակից շուտ տեղափոխվել մյուս կողմը: Առաջ կարծում էի, թե այդպիսի մարդկանց վռնդում կամ ավելի վատ բան են անում. «Դեւերը» հիշո՞ւմ եք: Բայց նրան ձեռք չտվին, ներեցին, նույնիսկ թողեցին կուսակցության մեջ ու հանձնարարեցին զբաղվել քարոզչությամբ: Հետո պարոն Անդրեեւը,- նա ու Սավելին կարծեմ ծանոթություն ունեին Կուպրինի միջոցով, բոլորով այլանդակվելու աստիճան խմել էին Գատչինայում եւ Ալյոշկա Տոլստոյի հետ գնացել դերասանուհիների մոտ,- այսպես ուրեմն, Անդրեեւը, եթե հիշում եք, մի անասելի կեղծ պատմվածք էր հորինել հասարակաց տուն գնացած հեղափոխականի մասին: Հաստատ Սավելին էր պատմել, նա էլ թոցրել էր սյուժեն:

- Այո՛, այո՛,- փութկոտ գլխով արեց Վերա Կոնստանտինովնան:- «Անդունդը»: Հետ գնանք, հա՞:

- Ո՛չ, «Խավարը»: «Անդունդը» դրանից էլ վատն է: Խուլիգանները մթին անտառում բռնաբարում են հերոսուհուն, հետո նրանց է միանում այդ կնոջ սիրեկանը: Ապշեցուցիչ է, թե օրինավոր կանանց ինչքան են հետաքրքրում պոռնիկներն ու բռնաբարությունները: Երեւի հոգեսոմատիկ երեւույթ է: Վախ ու ենթագիտակցական մղում բռնությանը: Նա կարողանում էր օգտվել դրանից:

- Ո՞վ:

- Ում մասին խոսում ենք: Քարոզչական աշխատանք էր կատարում Սեւծովյան նավաստիների շրջանում, շրջում էր անառականոցներով ու պանդոկներով, կապվում ազնվատոհմ տիկնանց հետ, ընկերանում հասարակ կանանց, եւ ոչ մի խուզարկու չէր կարող նրա մեջ կասկածել ճարտարախոս էսեռին: Ապշեցուցիչ է. անպետք նավաստի, բայց այնպես էր պատմում ծովի մասին, որ իսկական ծովայինները բերանները բաց լսում էին: Իսկ հետո սիրահարվեց: Մինչ այդ բոլոր կանայք նրան հետաքրքրում էին միայն որպես կահույքի առարկա, ինչպես, կներեք կոպիտ խոսքի համար, դռան անցքը, որի մեջ ժամանակ առ ժամանակ կարելի է թքել, արհամարհում էր կանանց ու ծիծաղում իմ զգացումների վրա, իմ չարտահայտված սիրո վրա, ինձ վրա էր քրքջում: Այն ժամանակ թվում էր՝ կսպա-

նենք իրար: Թաքուն կմորթենք: Ու երեւի մորթեինք, բայց ոստիկանությունը նրան բռնեց առափնյակում:

- Դո՛ւք եք արել,- խեղդուկ ճչաց Վերա Կոնստանտինովնան:

- Ի՞նչ:

- Հանծնել եք պահնորդական բաժանմունքին: Չեք համարձակվել սպանել, բայց հանծնել եք: Որովհետեւ նա իսկական էր:

- Հիմարություններ մի խոսեք: Ե՞ս ինչ կապ ունեմ: Այն կինն էր հանծնել: Ավելի ճիշտ, հանծնել էին այդ կնոջ պատճառով:

- Ի՞նչ կին:

- Նրա կանայք շատ էին,-մռայլ ասաց Լեգկոբրտովը:- բայց հենց այդ կնոջ անունն էր Ալյա: Ալյա Ռասպուտինա: Էսեռական քարոզչուհի: Գեղեցիկ, վայրի, անհավասարակշիռ: Թերթերը գրել են նրա մասին: Սանավանդ, երբ հայտնվեց ազգանվանակիցը: Կամ էլ ազգականը:

- Ես թերթ չեմ կարդում,- թուքը կուլ տվեց Վերա Կոնստանտինովնան. շատ էր ուզում ծխել:

- Երեւում է,- Պավել Մատվեեւիչը շտկեց սապոգը:- Դուք ընդհանրապես ժամանակակից կին չեք. շատ անտեղյակ եք: Գիշերները նավաստիները նավակներով հասնում էին ափ, իջնում պայմանավորված տեղում, որտեղ նրանց էին սպասում Ալյան ու Սավելին եւ լուսնյակ գիշերով, սեւծովյան ալիքների ճողփյունի տակ բարձրացնում նրանց հեղափոխական ոգին: Բայց մի անգամ Ալյան պնդեց, որ Սավելին օրը ցերեկով քարոզչության գնա Գրաֆսկի առափնյակ: Սավելին ոչ մի տեղ գնալ չէր ուզում, բայց Ալյան սկսեց ծաղրել նրան, մեղադրեց վախկոտության մեջ, եւ նա չդիմացավ՝ գնաց: Հենց այնտեղ էլ նրան, շալվարի շեքը արձակած, բռնեցին հանրային զուգարանում: Որպես դասալիք զինվորի, որն ի լրումն նաեւ քարոզչություն է անում ծովայինների շրջանում, պետք է որ կախեին կայմից կամ առնվազն ուղարկեին ցմահ տաժանակրության: Ալյան զգում էր իր մեղքը ու որոշեց փախուստ կազմակերպել: Ափին մոտեցավ կարմիր առագաստներով մի թուրքական նավ...

- Ինչո՞ւ կարմիր,- անհանգիստ հարցրեց Վերա Կոնստանտինովնան, ու մտքով անցավ Բալմոնտը:

- Մաքսանենգություն: Առագաստների տեսքով կարմիր մետաքս էին բերում:

- Ինչի՞ համար:

- Քիչ ֆանտազիաներ են ունենում մարդիկ,- ուսերը թոթվեց Լեգկոբրտովը:- Մեկին կարմիր ներքնաշոր է դուր գալիս, մյուսին՝ կարմիր դրոշ,

երրորդին՝ դագաղների կարմիր պաստառ: Բայց փախուստը ձախողվեց. Սավելին չկարողացավ մագլցել պարիսպը: Եվ Այյան մի լավ փաստաբան գտավ, որը ժամանակ էր ձգում, ցուցմունքներ հայթայթում իր պաշտպանյալի անմեղսունակության վերաբերյալ եւ այդպես ձգեց մինչեւ հինգ թիվը: Սավելիին ազատեցին հոկտեմբերի համաներումով, արգելեցին ապրել մայրաքաղաքներում, բայց, մեկ է, նա մեկնեց Պետերբուրգ եւ առաջինը, որ արեց՝ գնաց կոնսպիրատիվ բնակարան՝ Ռասպուտինայի մոտ: Այնտեղ առաջին անգամ կինը զիջեց նրան:

- Որտեղի՞ց գիտեք այդ ամենը,- զզվանքով հարցրեց Վերա Կոնստանտինովնան:- Արձակած շալվարի, Այյայի մասին: Էլի թերթերի՞ց: Թե՞ Անդրեեւի մոտ եք կարդացել:

- Ինչո՞ւ կարդալ: Պատկերացրեք մեկին, որ երկու տարի նստած է բանտում եւ երազում ու արթմնի տեսնում է նույն պատկերը, թե ինչպես է գալիս այդ կնոջ մոտ, ու կարեւոր չէ՝ նա համաձա՞յն է, թե ոչ: Այյան նրան չէր սիրում, բայց միամտաբար կարծում էր՝ եթե մի անգամ նրա հետ լինի, Սավելին կկորցնի հետաքրքրությունը, ինչպես կորցրել էր իր նախորդ կանանց հանդեպ: Հեղափոխականներն ընդհանրապես շատ պարզ ու հասարակ են սիրո հարցում: Երբ քեզ ամեն վայրկյան կարող են կախել կամ տաժանակրության ուղարկել... Բացի այդ, մեղավոր էր զգում նրա առաջ: Բայց Կրուդի հարցում սխալվեց: Բանտարկության երկու տարիները լրիվ փոխել էին նրան: Կնոջն առաջարկեց կեղծ անձնագրերով ու կուսակցական գանձարկղով փախչել Զատկի կղզի: Այյան հրաժարվեց: Սավելին հանեց ատրճանակը, պահեց կնոջ վրա եւ ասաց՝ կամ գալիս ես ինձ հետ, կամ սպանում եմ: Ու դրանից հետո ինձ եմ սպանում, անմիջապես: Նրա մոլեգնությունը սարսափելի էր: Հրեշ, նախկին սիֆիլիտիկ, հոգեգար, իսկ Այյան ասես երկնային հրեշտակ լիներ, այնքան մաքուր, որ ուրիշի արյունը չէր կպչում: Սավելին կրակեց կնոջ սրտին: Բայց այստեղ էլ վրիպեց: Գնդակը ծակեց կուրծքը, բայց սրտին չդիպավ: Առատ արնահոսություն սկսվեց, բժիշկ կանչեցին, նրան տեղափոխեցին հիվանդանոց՝ Բենեդիկտովի մոտ, եւ ինչ-որ պատմություն հորինեցին: Ու հրաշք էր, որ ոստիկանությունը չբռնեց նրանց: Հենց այդ ժամանակ էլ որոշվեց սանձել Սավելիին: Այյան շատ կարեւոր գործիչ էր, հայրը՝ առաջին նարոդավոլեցներից, ինքը ծնվել էր Չիտայի մոտ, աքսորում ու մանկուց տենդում էր հեղափոխությամբ: Իսկ էսեռների ղեկավարությունը պայմանավորվածություն ուներ ոստիկանության հետ՝ ամեն ամիս հանձնել որոշակի քանակով դավադիրների, որպեսզի ոստիկանները հաշվետու լինելու թիվ ունենային,

իսկ իրենք՝ ոգեշնչման աղբյուր: Չեմ զարմանա, եթե իմանամ, որ ինձ էլ են այդպես նստացրել:

- Ի՞նչ եք անընդհատ՝ ձեր մասին ու ձեր մասին,- զայրացավ Վերա Կոնստանտինովնան:- Մտքովս չէր անցնի, որ կարելի է այդքան շատախոս ու ինքնասիրահարված լինել: Եվ ընդհանրապես, ինչո՞ւ եք այդպես դանդաղ քայլում: Քիչ առաջ սլանում էիք որմզդեղնի պես, հիմա սողում եք, ինչպես թրթուրը: Որոշել եք անտառո՞ւմ գիշերել:

- Ոտքս հարել եմ,- խոժոռ ասաց Պավել Մատվեեւիչը:

- Ուրեմն եկեք նստենք,- անտանելի ծխել էր ուզում:

- Հիմա կհասնենք խոտհարքը, Պոլյան այնտեղ դեզ է արել:

- Ուր կհասնե՞նք,- հարցրեց Վերա Կոնստանտինովնան:

- Անտառի բացատ, որտեղ խոտ են հնձում,- բացատրեց Պավել Մատվեեւիչը:- Միայն թե ծխախոտի հետ այնտեղ զգույշ, մեկ էլ տեսար վառեցիք: Տեսեք, ինչ չորություն է: Հարյուր քայլի վրա ամեն ինչ լսվում է,- նա նորից կանգ առավ:- Հաստատ ինչ-որ մեկը հետեւում է: Մի՞թե չեք զգում:

- Ո՛չ:

- Սավելիին նոր փախուստ խոստացան, բայց ասացին, որ կազմակերպելու համար ժամանակ է հարկավոր, եւ ինչ-որ կերպ զսպելու համար բանտային հարսնացու ուղարկեցին մոտը:

- Ում ուղարկեցի՞ն:

- Գիտե՞ք, այդպիսի օրիորդներ կան, որ ինքնազոհաբերման ձգտումից կամ էլ սեռական, թե որեւէ այլ մղումով իրենց քաղբանտարկյալների հարսնացու են հայտարարում, եւ նրանց տեսակցություն է թույլատրվում կալանավորների հետ: Նույնիսկ թույլ են տալիս միասին աքսոր գնալ, եթե պսակվեն: Ահա եւ գնաց աղջիկը: Այդպես էլ մարտական խումբ չէին ընդունել, որքան էլ խնդրել էր: Այ նա հաստատ վախկոտություն չէր դրսեւորի,- մտախոհ ասաց Պավել Մատվեեւիչը:

- Ձե՞ր...

- Եվ առաջին բանը, որ արեց այդ սրիկան նրան տեսնելուն պես, ամենասարսափելի, ամենից մարմնական, հեթանոսական, անամոթ համբույրն էր՝ ուշադրություն չդարձնելով վերակացուին: Դա բավական էր. աղջիկը կործանվեց:

- Կործանվե՛ց,- կրկնեց Վերա Կոնստանտինովնան եւ հիշեց գիմնազիան, որտեղ սովորում էր, իսկ հետո մի քանի տարի աշխատեց որպես դասվար, մինչեւ որ մտերմացավ իր տեսուչի հետ ու հեռացվեց անբարեհույսի խարանով: Գիմնազիստուհիները չէին ենթարկվում, իսկ նա ամոթանք էր

տալիս եւ փորձում ավելի խիստ ու մեծական հագնվել, բայց ամեն ինչ իզուր էր: Իսկ հիմա նրա կյանքը այնպես կտրուկ էր փոխվել, եւ ո՛ւմ մտքով կանցներ՝ այդ անասելի վախլուկը գնում է անտառի թավուտը, որ դավաճանի սիրելի ամուսնուն, իր փրկարարին ու բարերարին, որը, աննրբանկատ հարցեր չտալով, նրան տարավ Պետերբուրգից, հրաշալի, նրբազգաց մարդուն, որն այնքան մեծահոգի էր, այնքան նրբազգաց, այնքան սիրալիր ու հոգատար այս բոլոր տարիներին: Դեռ մի ժամ առաջ թվում էր ամուսինը ոչնչություն է, փալաս, գորշ ու ծանձրալի քաղքենի, վեհից ու հիասքանչից հեռու, որին հիմար հաստոցներից ու արդարության թագավորության մասին անիմաստ խոսակցություններից բացի ոչինչ չի հետաքրքրում, որը կործանեց դերասանուհու, գրողի եւ նկարչուհու իր ապագան, եւ ինքը մնաց ինչպես չոր խոտի դեզը ձյան վրա, որն այդպես էլ չբոցավառվեց, քանզի լուցկին մոտեցնողը չկար, մինչեւ չգտնվեց, չհայտնվեց, նրա խամրած կյանք չխուժեց ծխով ներծծված մորուքով այս կտրիճը, տղամարդը, որսորդը, լեյտենանտը, որին նա սպասում էր, կանչում, եւ թող միասին այրվեն իր արգելված երջանկության խարույկում: Բայց ամենավերջին պահին կատաղությունը բռնեց կնոջը:

- Ո՞ւր է այդ գրողի տարած բացատը: Եվ ինչո՞ւ նրա մոտ գնաց հատկապես ձեր սիրեցյալը, ոչ թե մեկ ուրիշը: Արդյոք դո՞ւք չեք մղել դրան: Դո՞ւք չեք նրան պատմել բանտի, բանտային հարսնացուների, ինքնազոհաբերման մասին: Դո՞ւք չեք ոգեւորել նրան, հետո վախեցել ու փախել: Ուրեմն ինչո՞ւ եք ծանձրացնում ձեր անվերջանալի ողբ ու տրտունջով:

- Որովհետեւ ինքն էր ուզել,- սովորականից բարակ ու բարձր ձայնով գոռաց Պավել Մատվեեւիչը:- Որովհետեւ կան այդպիսի ապուշներ, որ ուզում են նետվել եռացող կաթսան ու հավատում, որ մահը հարություն կտա իրենց: Որովհետեւ կան կանայք, որոնք երազում են, որ իրենց բռնաբարեն: Որովհետեւ ուզում էր արբենալ իր տառապանքներով, զոհաբերությամբ, դժբախտությամբ, եւ թքած ուներ հոր վրա, անցավ նրա վրայով, պսակվեց բանտի եկեղեցում եւ այդ հրեշի ետեւից աքսոր գնաց Տոշնի կղզի, հանդուրժեց նրա բոլոր այլանդակությունները, հարբեցողությունը, սուտը, դավաճանությունները, այդ ամբողջ գասկոնությունը, մինչեւ որ...

- Լռե՛ք,- խեղդվելով հրամայեց Վերա Կոնստանտինովնան:- Կինը, որին միտումնավոր ստիպում են տառապել, ամեն ինչի իրավունք ունի, նույնիսկ մարմինը վաճառելու, եթե դա թեթեւացում կբերի:

- Այդ ձե՞ր միտքն է: Թե՞ Համսունի մոտ եք կարդացել,- հաշտությամբ հետաքրքրվեց Պավել Մատվեեւիչը:

- Դուք հրե՛շ եք, մարդասպա՛ն եք, դահի՛ճ,- ճչաց Վերա Կոնստանտինովնան:- Ես ատում եմ որսորդներին, ատում եմ նրանց, ով հանուն զվարճանքի սպանում է անպաշտպան թռչուններին, նապաստակներին, այծյամներին եւ անգամ գայլերին: Կենդանի սպանելը նույնն է թե կին սպանես: Դուք ինձ բերել եք ձեր կնոջ կապած դեզի մոտ, մինչդեռ անարժան եք նույնիսկ նրա ոտքերը համբուրելուն: Ավելի լավ է երեք Սավելի, քան ձեր նման մեկը: Եվ ո՞վ է ձեզ իրավունք տվել այդպես խոսել այդ մարդու մասին: Խոտի շյուղ ընկավ ծոցս: Ձեռք չտա՛ք, ինքս կհանեմ: Լա՛վ, հանեք, իսկ հիմա հետ քաշվեք: Իսկ ձեր մտածածը չի լինի: Երբե՛ք չի լինի: Հույս չունենաք: Ես շատ եմ հարգում ամուսնուս, որպեսզի թույլ տամ: Նա ձեզնից հարյուրապատիկ ազնիվ ու մեծահոգի է: Լուցկի տվեք: Ձեռք չտա՛ք ինձ: Սպասե՛ք: Ո՞ւր եք գնում: Չհամարձակվեք ինձ մենակ թողնել: Ես ազնվազարմ կին եմ, ինչ-որ գեղջկուհի չեմ ձեզ համար, որ այսպես... Այ այսպե՛ս... այսպե՛ս...

Անտառի թիկունքից դուրս լողաց լուսնի մերկ, վավաշոտ մարմինը ու լուսավորեց բացատը: Ինչ-որ ստվերներ նշմարվեցին, իրար անցան լուսնալույսի մեջ, Վերա Կոնստանտինովնան զգաց ինչպես են գրկում իրեն, հետո մերկացնում թույլ ձեռքերը, բայց համոզված չէր, որ այն մարդուն ձեռքերն են, ում իր ետեւից տարել էր գետի ափով: Ուժերը լքեցին նրան, նորից տարօրինակ քնկոտություն իջավ վրան ու կաշկանդեց մարմինը: «Թո՛ղ,- մտածեց նա:- Թող ամեն ինչ կատարվի, ինչպես այն երազում, ու ես մեղավոր չեմ լինի: Երազում կարելի է: Երազում մեղք չի: Երազում...»:

Ինչ-որ բարձր ճռթաց եւ ասես ընկավ անտառում: Նրան համբուրողը բարձրացրեց գլուխը, ականջ դրեց եւ հանկարծ պոկվեց տեղից ու արագ անհետացավ ծառերի արանքում, մթության մեջ: Կինը կարող էր երդվել, որ ոչ թե պարզապես անհետացավ, այլ վերածվեց գազանի, թե թռչունի: Նույնիսկ տեսավ փոխակերպման պահը, տեսավ Լեգկոբըտովն ինչպես չորեքթաթ կանգնեց եւ վնասված ոտքի վրա կաղալով՝ վազ տվեց՝ հրացանը ուսին, ու սարսափը պատեց նրան: Ահարկու ձայներով լի չար անտառը շրջապատել էր բացատը, աներեւակայելի բարձր դեզն ու նրան սեղմվող Վերա Կոնստանտինովնային: Ինչ-որ նողկալի փափուկ բան վազեց մարմնով: Մո՛ւկ: Էլի մեկը: Վերա Կոնստանտինովնան ուզում էր ճչալ, բայց մկներն այնքան շատ էին՝ փոքրիկ, տաք, ծվվացող, վազում էին փորի, կրծքի վրայով, խճճվում սքանչելի, ալիքվող մազերի մեջ, խցկվում ականջները, բերանը...

- Պա... Պավել Մա... Պավ,- անզոր ծվաց նա:

Ձայներն ավելի շատացան. անտառում ինչ-որ բան էր ճռնչում, պտտվում, ճարճատում, աղմկում, իսկ իր երկնային ուղու բարձրակետին հասած լուսինը պատվել էր ամպերով: Լուսապսակը մեծանում էր՝ բռնելով ողջ շրջակայքը, եւ ամոթը խայթեց Վերա Կոնստանտինովնային: Ասես իրեն տեսավ վերեւից՝ մկներով շրջապատված, կիսամերկ, խռիվ մազերով, սիրեկանից լքված, նստած այդ չարաբաստիկ քրքրված, սուր բուրող չոր դեզի վրա, ինչ-որ բացատի մեջտեղը, ու վաղը դրա մասին կիմանա ողջ շրջանը, կգրեն թերթերն ու պատկերազարդ ամսագրերը: Ուզեց թաքնվել, բայց լուսնալույսն այնքան ուժեղ էր, այնպես ամենուր, որ նրանից պահվելն անհնար էր:

Ամբողջովին լուսավորել էր նրան՝ ի ցույց դնելով խայտառակությունը երկրի ու երկնքի առաջ, իսկ հետո լուսինն սկսեց արագ իջնել եւ Վերա Կոնստանտինովնայի աչքի առաջ մի քանի րոպեում թաքնվեց հորիզոնից այն կողմ, բայց՝ շատ մոտ, ասես ընկել էր անտառի ետեւը, եւ այնտեղ, Վիսոկիե Գորբունկիից ոչ հեռու մի ահարկու վիհ էր բացվել: Միանգամից մթնեց, ինչպիսի խավար չէր եղել աշխարհի արարման օրվանից: Վերա Կոնստանտինովնան մտածեց, որ հիմա արդեն հաստատ պետք է շտապ արթնանալ, բայց ոչ մի կերպ չէր ստացվում:

Երբեք այդպիսի սարսափ չէր զգացել: Մի գիշերային թռչուն անձայն անցավ գլխավերեւով՝ թեւը քսելով մազերին: Խոշոր թիթեռներն ու չղջիկները պտտվում էին շուրջը եւ խցկվում աչքերն ու քիթը: Քամի բարձրացավ եւ անընդհատ ուժեղանում էր, ասես ուզում էր անամպ սեւ երկնքով քշել աստղերի երամը, եւ Վերա Կոնստանտինովնային թվում էր երկնաքամու ահարկու, խուլ կաղկանձի մեջ գայլի ոռնոց է լսում: Քամին իջնում ու սլանում էր վեր, չոր ճյուղեր, խոտեր, գորտեր, մկներ, լորտուներ, ոզնիներ, բզեզներ քաշում սարսափելի շուրջպարի մեջ, քամին նրան էլ էր առնում պտույտի մեջ, բռնում էր մազերից, ուսերից, առանց քաշվելու մտնում մարմինը, եւ նա եղունգներով կառչում էր հողից, խոտի արմատներից, որ չթռչի մահացու բարձունքները, գլխիվայր շրջված երկինք, որտեղ նրան հանկարծ հսկա մաղի պես մի բան երեւաց: Եվ երբ արդեն ինքն ուզեց կտրվել գետնից, որսալ քամին, ինչպես առագաստն է որսում Իլմեն լճի վրա, ու ճախրել վեր, ու բաց թողեց հողը, արդեն ուշ էր: Ամեն ինչ խաղաղվել էր:

Դրանից օգտվելով՝ Վերա Կոնստանտինովնան ծխախոտ վառեց, եւ դեզն անմիջապես բռնկվեց, բայց ոչ թե նրա կրակից, այլ աստղալույսից, եւ նա հազիվ հասցրեց վեր թռչել ու նետվել անտառի կողմը, եւ այնտեղ,

անտառի փեշին, ծառերից ու թփերից անդրադարձող այդ սարսափելի հրացոլքում Վերա Կոնստանտինովնան երկու անթարթ, սքանչելի աչքեր տեսավ: Անտարբեր նայում էին նրան, ոչ մի սպառնալիք չկար այդ աչքերում: Հետո սկսեցին դանդաղ մոտենալ, եւ կնոջ ամենամեծ ցանկությունն էր՝ մնալ տեղում ու սպասել այդ աչքերի տիրոջը, բայց աչքերը հանկարծ անհետացան, նա նետվեց դրանց ետեւից ու խփվեց հրացանը կրակի պահած որսորդին:

- Տեսա՞ք նրան:

- Ո՞ւմ:

- Գազա՛նը: Հսկա գազա՛նը,- տենդոտ, կցկտուր, բորբոքված գոչեց կինը:

- Ոչ մեկին էլ չեմ տեսել,- անգույն ձայնով պատասխանեց որսորդը:

- Ինչպե՞ս թե չտեսաք: Ո՞ւր էիք այսքան ժամանակ: Ինչ-որ գազան կար այստեղ: Ի՞նչ է, ուզում էիք սպանե՞լ: Կրակեցի՞ք վրան,- ատելությամբ հարցրեց կինը ու զգաց մատներն ինչպես են ուզում խրվել նրա զզվելի մազակալած դեմքի մեջ ու սեղմել մորուքի տակ թաքնված կոկորդը:

- Ուլյան,- անորոշ ասաց Լեգկոբըտովը:

- Ի՞նչ Ուլյան:

- Ուլյան է այնտեղ:

- Լրտեսո՞ւմ է, ի՞նչ է ուզում,- ծղրտաց Վերա Կոնստանտինովնան, ու դեմքը պատվեց կարմիր բծերով:- Հետեւե՛լ է մեզ: Անընդհատ լրտեսում է ինձ: Գիտեի, ասում էի, խնդրում էի՝ պետք չէ այսօր ոչ մի տեղ գնալ: Ինչո՞ւ չլսեցիք:

Լեգկոբըտովը լուռ էր. պարող կրակի թուփը արտացոլվել էր աչքերում, եւ Վերա Կոնստանտինովնային թվաց՝ նայում է գյուղի հեռավոր պատուհաններին եւ ինչ-որ սարսափելի բան է տեսնում:

- Դե, ի՞նչ եք կանգնել սեփական հուշարձանի պես:

- Ինչո՞ւ վառեցիք դեզը,- խլածայն հարցրեց Պավել Մատվեեւիչը:

- Դեզի փողը կտամ,- ճչաց կինը:- Ո՞ւր է այդ փոքրիկ սրիկան:

- Հետ նայեք:

Վերա Կոնստանտինովնան շրջվեց, եւ աղաղակը քարացավ կոկորդում:

Վառվող դեզից կրակի առվակներ էին վազում չորս կողմ ու վառում չոր խոտը, կրակը շարունակում էր հոսել դեպի անտառ, եւ նրա աչքի առաջ սկսեցին մոմերի պես բռնկվել ցցաչոր ծառերը: Կրակը բարձրանում էր երկինք, ավելի ու ավելի վեր, ավելի ու ավելի սարսափելի, ու թվում էր՝ շու-

տով մեղավոր երկինքն էլ կբռնկվի, կբոցկլտա այդ տապից եւ մաշված տանիքի պես կփլվի երկրի վրա:

- Ի՞նչ եք կանգնել: Փախչե՛նք:

- Ես չեմ կարող հեռանալ այստեղից,- տխուր ու նվաղած ձայնով ասաց Պավել Սատվեեւիչը:- Դժբախտ դեպք է պատահել:

- Ի՞նչ դեպք:

- Սխալմամբ կրակել եմ ձեր խորթ աղջկա վրա:

- Յուլյան մեռա՞ծ է,- Վերա Կոնստանտինովնայի անհնազանդ բարակ շրթունքները միանգամից չպոկվեցին իրարից, եւ ինքն էլ ապշեց, թե որքան հանգիստ ու անտարբեր հնչեց հարցը:

- Վիրավոր է:

«Ափսոս,- մտածեց կինը,- շատ ափսոս, որ այդպես, ու դու ոչնչով լավը չես այդ Սավելիից: Նույնպիսի ապուշ ու ապաշնորհ»:

Իսկ բարձրաձայն ասաց.

- Որտե՞ղ է:

- Անտառում,- պատասխանեց Լեգկոբըտովը: Ու կամացուկ ավելացրեց:- Հայրը հետն է: Ես նրանց պետք է հանեմ անտառից, բայց այսպիսի կրակի միջով համարյա հույս չկա:

Վերա Կոնստանտինովնան կառչեց նրա ձեռքից: Խավարը նրանց գլխավերեւում դարձավ անտանելի, հեղձուկը՝ նույնպես: Ոչինչ չկար, ո՛չ երկիր, ո՛չ երկինք, ո՛չ աջ, ո՛չ ձախ, կրակն այնքան արագ էր լափում անտառը, որ ոչ մի կենդանի արարած չէր կարող դուրս պրծնել: Վերա Կոնստանտինովնան հանկարծ մտածեց, թե ուր չքացավ սքանչելի աչքերով գազանը, մի՞թե նա էլ է զոհվել, եւ խելահեղ, անսփոփ ափսոսանք զգաց նրա համար, շատ ավելի, քան իր, իսկ Լեգկոբըտովը գնաց դեպի հրդեհը, եւ շուտով արդեն նա էլ չէր երեւում:

Վերա Կոնստանտինովնան մեն-մենակ մնաց ողջ աշխարհում. բոլոր հարազատ կամ ինչ-որ բանով զայրացնող մարդիկ անհետացել էին, եւ նա այնպիսի որբություն զգաց, ինչպիսին զգացել էր վաղ մանկության օրերին, երբ գիշերն արթնանում էր, կանչում մորը, բայց ոչ ոք չէր գալիս: Մտածեց գնալ Լեգկոբըտովի ետեւից ու ծուլվել արդեն կրակի հովիտ դարձած վառվող կածաններին, բայց դրա փոխարեն նայեց երկինք, ձգվեց ոտքերի ծայրերին, որ ավելի մոտ լինի, եւ աղջնակի պես, մեղավոր-մեղավոր խնդրեց.

- Անձրեւ տուր, Տե՛ր, ծարավ հողին:

Երկինքը լուռ էր:

- Անձրեւ տուր, Տե՛ր, ծարավ հողին,- մի քիչ ավելի բարձր խնդրեց Վերա Կոնստանտինովնան: Հետո չդիմացավ ու ճչաց, վեր-վեր թռավ՝ անզոր սպառնալով փոքրիկ բռունցքներով.

- Անձրեւ տուր, Տե՛ր, ծարավ հողին: Անձրեւ տուր, Տե՛ր, ծարավ հողին:

Կայծակը ձեւեց երկնակամարը, հետո երկրորդը, երրորդը, վնգաց քամին՝ խլացնելով ամպրոպի որոտը, եւ նույնիսկ ոչ թանձրացած ամպերի, այլ ավելի վեր, նրանցից էլ վեր տարածությունից հորդեց սառցասառն հեղեղը: Տապալեց կնոջն ու հետը քաշեց դեպի գետի վրա կախված զառիթափը, այնպես, որ նա ստիպված էր կառչել փշրվող թփերից, որ չընկնեի Ճելոնը: Գետը մի վայրկյանում եռաց, փքվեց ինչպես թթխմորից ու սկսեց արագ բարձրանալ: Կրակն ու ջուրը կռվի բռնվեցին: Ծխից, գոլորշուց, տաք քամուց շունչը կտրվում էր: Չոր հողը կրակ էր շատրվանում ներսից, բայց երկինքը շարունակում էր ջրի ահռելի զանգվածներ տեղալ հողին, հետո անձրեւը խոշոր կարկուտ դարձավ, վառվող բացատը թշշաց, սեւացավ ու պատվեց աղավնու ձվի չափ կարկտահատիկներով, իսկ սառցակտորներից հետո երկնքից ուշաթափ, թռիչքից խելագարված սուզաբաղեր թափվեցին: Սկզբում անշունչ ընկած էին, հետո սկսեցին շուռումուռ գալ, սողացին, սողացին թաց խոտի վրայով, հոտոտում ու համբուրում էին իրար, երջանիկ, որ ողջ են, որ անձրեւ աղերսեցին ու ստացան:

- Օգոստոսին կնանիքանց հետ՝ ուխտագնացության,- մրմնջաց Վերա Կոնստանտինովնան ու մտովի, ասես ուշագնաց լինելով, խաչակնքեց:

Մաս III

ՍՎԵՆՑՅԱՆԻԻ ՃԵՂՔՈՒՄԸ

1

Ոչ ոք չգիտի՝ որտեղ ու երբ է ծնունդ առել մտագայլը, չգոյի ինչ անդունդներից ու խորխորատներից է հայտնվել գազանը, որը կարող է ցանկացած տեսք ընդունել ու թափանցել մարդկային էության մեջ: Սուրբ հայրերից ոմանք համարում էին, որ մտագայլը հենց սատանան է, մյուսները նրան սատանայի եւ անառակ կնոջ ծնունդ էին համարում, երրորդները նրա մեջ տեսնում էին ամենասեւ, չարկամ ու շողոքորթ ոգիներից մեկին, եւ Եկեղեցու ցանկացած բարեպաշտ զավակ մինչ Սուրբ հաղորդությունը կարդում էր Հովհան Ոսկեբերան լուսավորչի աղոթքը: Սակայն հնավանդ աղոթքը՝ երբ երկար բաժանվեմ Քեզանից, մտային գայլի՝ գազանի որսը կդառնամ, բոլորին չէ, որ օգնում էր,բոլորը չէ, որ աղոթելով կարողանում էին մաքուր մնալ իրենց մտքերում:

Իզուր չէ, որ մեխանիկ Կոմիսարովն այդքան վախենում էր մտքից՝ այդ մռայլ, ոչ մեկից չվերահսկվող ու ոչ մեկին չենթարկվող, անոչնչանալի եւ ամեն ինչ կանխորոշող ուժից, որ խուժում է մարդու գիտակցության մեջ ու լափում: Մարդիկ մտքում կարող են իրենց իսկությունից ավելի ազնիվ ու ավելի ստոր լինել, միտքը մարդուց մարդուն փոխանցվում է անհայտ ճանապարհներով, վարակում ժանտախտի պես, տարածվում օդով, ապրում հողի ու ջրի մեջ, միտքը աշխարհում ամեն ինչից նյութական է, եւ ահա զգում ես, որ կախված ես մտքերից, բայց քո՞նն են, թե՞ օտար, ինչ-որ մեկից ներշնչված՝ ի՞նչ իմանաս:

Մտքերը հետապնդում ու հալածում են, չարչարում եւ ավելի կտանջեն այնտեղ, որտեղ մնալու ես առանց մարմնական պատյանի: Միտքը հենց էներգիան է, որին մարդիկ չեն կարողացել տիրել, ու քանի մարդ են, չեն տիրի, միտքը կրակ է, քամի, արյուն, սերմ, ծուխ: Միտքը հզոր է մարդուց, քանզի մարդը ոչ մեկին պատասխանատու չէ իր մտքերի համար: Արարքների համար՝ այո՛, խոսքերի՝ այո՛, բայց ինչպե՞ս պատասխան տաս մտքերի համար, եթե կարող են գալ դրսից եւ ամբողջովին նվաճել քեզ: Այ եթե

կարողանաս կառավարել նրանց, իսկ ավելի լավ է սովորես ընդհանրապես չմտածել, չթողնես խցկվեն ուղեղդ, կդառնաս քո կյանքի տերը: Այդ ժամանակ չեն լինի քեզ այցի եկող ահարկու գայթակղությունները, չեն լինի փորձությունները, կնոջ հայացքի իշխանությունը, ստիպված չես լինի ատամ կրճտացնելով ճնշել վավաշոտ մարմինդ, որովհետեւ նրա հետ լեզու գտնել դեռ կարելի է, բայց ինչպե՞ս կառավարես գլուխդ, ինչպե՞ս փրկես նրան մտագայլից, թույլ չտաս չափչփի ուղեղդ ու երեւակայության մեջ գայթակղիչ ու սարսափելի պատկերներ գծի, որոնք դժբախտաբար նաեւ իրականանում են: Հերիք է մարդը ուղեղից մի չվերհսկվող ազդանշան ուղարկի, մի թույլ ազդակ, մտագայլն անմիջապես որսում է, եւ այլեւս անհնար է փախչել գայլից, չկա մի այնպիսի ծառ, որի վրա կարելի է բարձրանալ, չկա այնպիսի թաքստոց, որտեղ կարելի է պահվել, ոչ մի տան մեջ ու տաճարում, հրապարակում, խուլ անտառում կամ բաց ծովում՝ ամենուր կհասնի, ու հերիք է տիրի մարդկային հոգու մի փոքրիկ մասին, անհագ նորից ու նորից կպահանջի, ու մարդը ստիպված իրենով կսնի նրան, մինչեւ դժբախտ զոհից չմնա միայն կաղապարը:

Քանի՛-քանի՛ այդպիսի կաղապար է դեգերում աշխարհում, ու ոչ մեկի մտքով չի անցնում, որ մինչեւ վերջ կերված են: Բայց հերիք է մի քիչ ուժեղ ցնցես այդպիսի մարդուն, հերիք է մի փոքրիկ փորձություն, անհարմարություն, եւ ամբողջ դատարկությունը կբացվի, եւ ապշահար կլինեն, ովքեր դեռ երեկ անկախ, հարգարժան պարոն էին համարում նրան: Եվ ահա թե էլ ինչի մասին էր մտածում Կոմիսարովը. երբ Միջնադարում միաբաններն ու հավատաքննիչները խավարի մեջ էին պահում մարդկանց, որպեսզի ավելի հեշտ կառավարեն, ոչ թե իշխանությունը կորցնելուց էին վախենում, ինչի մեջ հետո նրանց մեղադրում էին ոչ այնքան խելացի մարդիկ, այլ մտագայլից փրկում, պահպանում էին իրենց գառներին, եւ գազանին այլ բան չէր մնում, քան կանգնել ու շրթունքները լիզել՝ հեռվից նայելով պարարտ հոտին, որը հսկում էին մոլեգին պահապան հրեշտակները: Մտագայլն այն ժամանակ էլ էր փորձում մասնատել հոտը, գոնե մի գառ փախցնել, ուշադրություն սեւեռել իր վրա, ականջներին շշնջալ գայթակղության բառեր, բայց եթե հոտի մեջ քոսոտ ոչխար էր հայտնվում, հովիվներն անմիջապես քշում էին, իսկ ամենից անհնազանդներին, որ հակաբնական կապի մեջ էին մտնում մտագայլի հետ, վառում էին խարույկների վրա: Այդ հեռավոր ժամանակներում մտագայլը տկար ու հույլ էր, վախվորած պտտվում էր մարդկանց բնակավայրերի շուրջը ու քաղցած աչքերով նայում կացարանների աղոտ ճրագներին, քաղաքային պարիս-

պերին ու տաճարների բարձր ցցածողերին, իսկ որս ճարում էր թերեւս միայն հարուստ դղյակներում ու թագավորական ապարանքներում: Նրա վայրի ոռնոցը տարածվում էր ամայի, սակավաբնակ երկրի վրա, եւ այդ ոռնոցից սարսափն էր պատում մարդկանց, զարհուրելի ասքեր էին հորինում նրանք եւ ավելի ջերմեռանդ աղոթում Արարչին՝ դրանով փրկվելով եւ մենության ու անկարության մեջ թողնելով գայլին:

Ամեն ինչ փոխվեց այն ժամանակ, որը Վերածնունդ ճոխ անունով կոչեցին: Գիտուններ, տիտաններ, հանճարներ, շողշողուն ասպետներ, շաղակրատներ, մտածողներ, փիլիսոփաներ, մարդասերներ հայտնվեցին եւ այնպես կշտացրին մտագայլին, որ նիհար, նվազ, թույլ, կիսակույր կենդանուց, որը խղճալի վնգստում էր որեւէ մաշված վիուկ, զառամ հեքիմ, հերետիկոս-միլլենարիստ կամ մանիքեական փնտրելով, վերածվեց կուշտուկուռ, պատկառելի առանձնյակի՝ խնամված մորթով, պիրկ պոչով, ուժեղ թաթերով, ամուր ատամներով, որոնք կարող էին պատառոտել ու կրծել ուզածդ հոգի: Գազանը սովորել էր փաղաքուշ ու հարգալից լինել, խոսում էր այն լեզվով, որին տիրապետում էին ուսյալ ու գիտուն այրերը, փայլում էր սրամտությամբ, աշխույժ ու անկաշկանդ էր, ամենուր սպասված, ընդունված ու սիրելի, եւ կամաց-կամաց նրան դարձան միլիոնավոր մարդկային հոգիներ՝ իրենց անիմաստ աշխարհիկ տեսլականներով: Նրան հպատակվում էին պերճ քաղաքներ, հարուստ ու շքեղ պալատներ, բյուրգերական տներ, համալսարաններ, ակադեմիաներ, դրամատներ, կայսրություններ, որոնց տիրույթների վրա արեւը մայր չէր մտնում, մայրցամաքներ, կղզիներ ու արշիպելագներ, գինեվետ հովիտներ, առողջարաններ, բորսաներ, կուրիաներ, վանական ուխտեր, եւ միայն մի երկիր մուտք չուներ մտագայլը: Ինչպես վառարանի ծխով՝ աղոթքներով պարուրված այդ երկրում ավար չէր գտնում գազանը,մարմինների մահվանից հետո անբիծ հոգիներն այնտեղ ելնում էին երկինք, եւ զուտ միտքը, որ ինքը բաժին չունի մեծ մայրցամաքի հսկա տարածքից, տափաստաններից, անտառներից, տունդրայից, ուր կենում էին հարյուր հազարավոր սովորական գայլեր, եւ ոչ մեկը քաղցից չէր տառապում, կատաղի նախանձ ու չարություն էր շարժում այդ գոռոզ կենդանու, հոգեւոր հրեշի մեջ: Եվ որքան էլ փորձեց տիրել այդ երկրին, գայթակղել, խաբել, ամեն ինչ զուր էր, երկիրը չէր հանձնվում, ներս չէր թողնում, բայց գայլը չէր դադարում մտածել նրա մասին, հետեւել, տենչալ ու հսկել, թե ինչպես են փոխվում նրա իշխաններն ու ցարերը, ինչպես են հեռանում տայգա, տերունի իշխանության դեմ ընդվզում ազատասեր գեղջուկներն ու փախչում արեւելք՝ հասնելով մինչեւ օվկիա-

նոս եւ օվկիանոսից էլ անդին, ինչպես են փորձում այդ երկիրը բզկտել այլազգիները, բայց թաղվում-մնում են անծայրածիր, անհաղթահարելի, հսկա եզերքներում՝ այնպիսի բարձր եւ ուժեղ երկնքի տակ, ասես հենց այդ երկրի գլխին էր հաստատված Աստծո գահը, եւ խայտառակ անզորությունից բացի, ուրիշ ոչինչ չէր զգում մտագայլը:

Բայց ժամանակն անցնում էր, եւ ինչ-որ բան սկսեց փոխվել, պղտորվել Ռուսաստանի անծայրածիր եզերքներում: Նախ համարյա աննկատելի ինչ-որ ճաք բացվեց այդ ողջախոհ գոյի մեջ: Առաջ էլ այդպիսի բան եղել էր, բայց դեռ ժամանակը դանդաղ էր, ու ճաքը հասցնում էր փակվել, մինչ մտագայլը փոքրիկ մողեսի չափերի սեղմվելով՝ կհասցներ ներս սողոսկել: Բայց որքան ժամանակի հոսքն արագանում էր, բոպեներն ու ժամերը՝ կարճանում, որքան երկնքով ավելի արագ էր գլորվում արեւը եւ հապճեպ էին իրար փոխարինում ձմեռներն ու գարունները, ճաքը մեծանում էր, չէր հասցնում սպիանալ, գայլը կրծում էր այն, լցնում իրենով, եւ Ռուսաստանը բնակեցնող մարդկանց մեջ ավելի ու ավելի հաճախ էին հայտնվում անհամբեր ու կարեկցանքին անհաղորդ, իրենց հայրենիքն արհամարհող եւ հետամնաց, խավար, դժգույն ու դժբախտ համարող գլուխներ, որ կրքոտ երազում էին վերափոխել երկիրը եւ իրենց ուսուցիչ առնելով պատանեկությունից մարմինն ու հոգին մտագայլի զետեղարան արածներին՝ խժռվում գազանից ու նմանվում էին նրան: Այդպիսին էին ֆրանսիացի ծաղրաբան փիլիսոփաները, հետո՝ նրանց կայսրը, որ մտադրվել էր հպատակեցնել ողջ աշխարհը, գիտուն գերմանացիները, ուսյալ անգլիացիները, գոռոզ ավստրիացիները, համաեվրոպական ուտոպիստները, տնտեսագետները, միստիկները, աղանդավորները. նրանք բոլորը փորձում էին թափանցել Ռուսաստան, բայց երկիրը դուրս էր թափում, փսխում, հիվանդանում էր նրանցով, ցնցվում դավադրությունների ու խռովությունների տենդում, բայց եւ ապաքինվում էր: Եվ այդպես շարունակվեց մինչեւ ամենավերջերս Ռուսաստան չթափանցեցին մի տեւտոնի գրվածքները, որը կարողացել էր խոնարհվել ու լիովին, ողջ հոգին ու ողջ գիտակցությունը դարձնել մտագայլի կացարան, ինչը մինչ այդ ոչ մեկին չէր հաջողվել:

Իրավացի՞ էր, թե՞ ոչ գրող-բնապաշտ Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովը՝ համարելով, որ տասնմեկ տարի խելագար ձեւացող, սեփական մեզը խմող Նիտշէն 1900 թվականին չի մահացել, գաղտնի տեղափոխվել է Ռուսաստան, Վիսոկիե Գորբունկի գյուղ, եւ այնտեղ, համաշխարհային պատերազմից կես տարի առաջ մեռցվել տեղի սերմնացանների ձեռքով, ու

որ հենց նա էր Ռուսաստանի գլխավոր չարիքը՝ սնուցելով երկրորդական վտանգները, որոնք միայն շեղում էին գլխավորից: Պայքարում էին ահաբեկիչների, խառնակիչների, հեղափոխականների դեմ, կախաղան հանում ու տաժանակրության ուղարկում նրան, ով այնքան էլ վտանգավոր չէր, իսկ իրական թշնամուն ներս թողեցին: «Նիտշչն է այս ամենի պատճառը» բառերը, որ դառնությամբ արտաբերել էր Պավել Սատվեեւիչ Լեգկոբըտովի գիմնազիական ուսուցիչ փիլիսոփա Ռ-վն ռուսական խուլ գյուղաքաղաքում, այն օրը, երբ պահքը կիսվել էր ու մարտյան կատուները մագլցում էին տանիք, գուցե եւ հենց այդ պատճառով էին ցմահ խոցել վտարված աշակերտին, որովհետեւ դրանց մեջ լսել էր իր ժամանակի ամենագլխավոր ճշմարտությունը ու հետագայում կարողացավ փոխանցել մեխանիկ Կոմիսարովին եւ դիտմամբ, թե ակամա նրա պարզունակ տեխնիկական ուղեղում սերմանել մի չափազանց կարեւոր գաղափար: Հենց Պ.Մ. Լեգոկբըտովն էր դեռ իրենց դաշինքի ամենասկզբում Վասիլի Խրիստոֆորովիչին մի գիշերով տվել Նիտշչի փիլիսոփայական ստեղծագործությունների դժվարընթեռնելի թերթիկները ու պատվիրել էր ոչ մեկին ցույց չտալ, քանի որ այդպիսի գրությունների համար կարող են տաժանակրության էլ ուղարկել:

Կոմիսարովը, որը, ինչպես ցանկացած ռուս մարդ, իր կամքից անկախ սիրում էր արգելված պտուղը, բացի այդ, հարգում էր Եվրոպան տեխնիկական արտադրանքի համար, մի շնչում կարդաց ընդհատակյա աշխատությունը, եւ ամեն ինչ փոթորկվեց, շուռ եկավ ներսում, ցնցվեց ու փշաքաղվեց սարսափից: Սակայն պատժվելու վախը չէ, որ պատեց նրան, այլ լրիվ հակառակ զգացում՝ նետվել պահնորդական բաժանմունք, գրաքննիչ գրասենյակ, գլխավոր վերատեսուչ Պոբեդոնոսցեւի մոտ, մատնություն անել իր վրա ու գոռալ՝ թույլ մի՛ տվեք, վառե՛ք, արգելե՛ք: Չի կարելի, որ ռուս մարդը սա կարդա, չի՛ հաղթահարի: Ցանկացած հերձված կհաղթահարի, ցանկացած դավ կմերժի, բոլոր խարդավանքները կբացահայտի ու գժտությունները կբուժի, բացի սրանից, որովհետեւ անիծված Նիտշչը ոտնձգել է ամենանվիրականի դեմ, բացել է այն դռնակը, որի ետեւում ցանկացած ռուս մարդ իր ամոթն է պահում: Իսկ առանց ամոթի ռուսը ոչ մի կերպ չի կարող, քանզի կկորցնի եւ՛ աստվածային, եւ՛ մարդկային կերպարանքը: Իսկ Նիտշչը այդ ամոթն է պղծել, վտարել է ռուսական հոգուց, բայց այնպես նուրբ, հմուտ, հմայիչ ու ոգեշնչող, որ կարդացողները չէին հասկանում ինչ է կատարվում իրենց հետ, ում են կանչում եւ ինչու, եւ իրենց ակամա կամքով տալիս են ամենանվիրականը: Եվ որքան ավելի է

մարդն ամաչելու ընդունակ, Նիտշչին կարդալով՝ այդքան ավելի խորն է գլորվում:

Բայց Վասիլի Խրիստոֆորովիչը չգնաց իր վրա մատնություն անելու, կեղծ ամոթխածությամբ՝ չուզեց մատնիչ լինել, վախեցավ, որ կստիպեն պատմել, թե շարքային մեխանիկի մոտ որտեղի՞ց են հայտնվել այդ թերթիկները, եւ ինքը ոչ ստել կկարողանա, ոչ դավաճանել ընկերոջը: Բայց իզուր, իզո՛ւր չգնաց: Գուցե այդ դեպքում Ռուսաստանն ավելի երկար ապրեր առանց Նիտշչի, հասցներ պատրաստվել հակաթույն ստեղծել, որպեսզի վերստին աղոթքներով պարուրվեր ռուսական հողը, կանգ առներ, դանդաղեր ժամանակը, սառույցով պատվեր Ռուսաստանը, ամրանար, փակվեին մարմնի բոլոր ճաքերը: Չհասցրի՛ն: Նիտշչը խանգարեց: Հաղթեց բոլորին: Իսկ երբ կոտրված գրաքնությունը հանուն պատշաճության ջղային կնոջ պես ախուվախ անելով՝ անձնատուր եղավ, երբ նիտշչական գրերով թերթիկները տպագրեցին ռուսական անամոթ տպարանները, երբ նիտշչական վարակը անցավ ողջ Ռուսիայով, թմրեցրեց, բթացրեց զգայունակությունն ու զգուշությունը, իսկ հետո խաշեց եռջրով, աղաթթվով ու հալված պղնձով, երբ ուզածդ գիմնազիստ, որ ուրիշ ոչինչ չէր կարդացել, ընթերցեց դրանք, երբ Նիտշչին բարձի տակ պահեց անմեղ օրիորդը՝ ամաչելով իր անմեղությունից ու որոշելով վաղն իսկ վերջ տալ դրան, երբ լիբերալ պրոֆեսորները դասախոսությունների ժամանակ ուսանողներին սկսեցին պատմել Նիտշչի մասին. երբ ոչ մի ինտելիգենտ չէր համարձակվի ասել, որ Նիտշչ չի կարդացել, կամ, հակառակը, կարդացել է, բայց դուրը չի եկել, փոխարենը՝ ցանկացած մարդասպան, բռնաբարիչ, գող, շնացող կամ դրամանենգ դատարանում համարձակ հայտարարում էր, որ ինքը նիտշչական է, եւ կայսրության բոլոր թերթերը տարածում էին նրա ասածը, երբ մարդասեր փաստաբանները սկսեցին մեկնաբանել եւ արդարացնել Նիտշչի ցանկացած արատ ու ստորություն, ցանկացած նողկանք, իսկ երդվյալ ատենակալները դատարանին հայտարարեցին՝ «Անմեղ է», երբ սկսեցին հայտնվել եւ ահավոր մոդայիկ դարձա Նիտշչի նմանողությամբ վեպերն ու վեպիկները. երբ էժանագին պիեսներ, ոտանավորներ, հոդվածներ ու պրիվատ-դոցենտների հորինած դիսերտացիաներ տարածվեցին Ռուսիայով մեկ, իսկ առաջադեմ հասարակությունը սկսեց բաժնեգրումով գումար հանգանակել Նիտշչի հուշարձանի համար, վարակի դեմ պայքարելն արդեն ուշ էր:

Բայց ինչո՞ւ միայն Կոմիսարովը պիտի ցավեր դրա համար: Ո՞ւր էին նայում մյուսները: Ո՞ւմ էին արգելում: Տոլստոյի՞ն: Ռոզա՞նովին: Սոլովյո-

վի՞ն: Մերեժկո՞վկուն: Լեոնիդ Անդրե՞եւին: Նիտշչին էր պետք վտարել Եկեղեցուց: Բայց եթե Նիտշչը ուղղափառ չէ, ինչպե՞ս վտարել: Հենց այդպես էլ վտարել: Գլխա՛նց վտարել: Դո՛ւրս Ռուսաստանից եւ ընդմիշտ: Բանադրե՛լ: Իսկ բոլոր Նիտշչ կարդացածներին բանտ դնել: Մենախո՛ւց: Թող պատից պատ տարածությունը քայլելով չափեն ու փիղ հաշվեն: Եվ այդպես մեկ-երկու տարի պահելուց հետո արտաքսել Ռուսաստնից, եւ այլեւս երբեք ներս չթողնել: Մեկուսանալ նրանցից, ինչպես բորոտից, ժանտախտավորից, որովհետեւ հենց այդպիսին էլ կան: Չարեցի՛ն: Ինչպե՞ս կարելի է բառերով գրածն արգելել, այն էլ այդպես տաղանդավոր, խելացի, նուրբ, խենթ ու խիզախ գրածը: Չէ՞ որ Նիտշչը սարսափելի, բայց ճշմարտությունն է ասում մարդու մասին: Չի՛ կարելի անտեսել այդ ճշմարտությունը: Եվ ո՞ւմ հետ ենք բանավիճելու: Ինչի՞ մասին ենք խոսելու: Ո՞ւմ ենք փառաբանելու: Նիտշչը մեր ամեն ինչն է, մեր աստվածը, մեր Պուշկինը: Նիտշչի հետ անձամբ Չեխովն էր ուզում զրուցել: Չե՞խովը: Սրբապատկե՞ր են գտել... Լա՛վ, ասենք, թե սրանք այսպես, իսկ բարեպաշտության պահապաններն ու ջատագովնե՞րը, բարոյականության ու անաղարտության պաշտպանները՞ը. նրա՞նք ուր էին նայում եւ ինչ էին մտածում:

Ինչո՞ւ Եկեղեցին այդքան թույլ գտնվեց: Ո՞ւր էր նրա ձայնը, նրա ուժը: Ինչո՞ւ Սինոդը չհավաքվեց խորհրդի: Ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ իբր խավար ու տգետ Միջին դարերում, կարող էր հալածել հերետիկոսներին, իսկ հիմա անզորացել էր: Ո՞ւր էր Նիկոնը: Ո՞ւր էր Գերմոգենը: Ավվակումը: Ինչո՞ւ էր լռում Պոբեդոնոսցեւը: Ինչո՞ւ հոգեւորականությունից ոչ ոք ձայն չբարձրացրեց: Հովհան Կրոնշտադտցին, դիվեեւյան քույրերը, օպտինյան սրբահայրերը, Սոլովկիի սեւասքեմները: Նաեւ բարեպաշտ աշխարհականները: Նովոսյոլովը, Տիխոմիրովը, Մենշիկովը, Նիլուսը, Սամարինը: Իսկ հեռավոր մենաստանների ազնվաշուք հայրերն ու եղբայրները: Այդ բոլոր սրբահայրերը, ուխտավորները, հաշմ տաղասացները, ինչու խաչերթի չելան անհիծյալ Նիտշչի դեմ: Եվ պերճախոս սիբիրցի գեղջուկն էլ, որ ի ցավ շատերի, պալատ էր սողոսկել, ինչո՞ւ ցարին ոչինչ չասաց Նիտշչի մասին:

Ա՜խ, եթե թագավորն իր հրովարտակով արգելեր Նիտշչին: Չէր լինի հինգ թվի խառնակչությունը, հարկ չէր լինի հիմնել անբան Դուման, ոչ մեկին ազատություն տալու կարիք չէր լինի. չէ՞ որ այդ ամենը տեւտոնից եկավ, ու դեռ ինչքան ու ինչե՛ր են գալու: Սա միայն սկիզբն է: Խելագարնե՛ր, խելագարնե՛ր, ինքնասպաննե՛ր, սեփական տան գողե՛ր, սեփական ընտանիքը քանդողնե՛ր, սեփական աղջիկներին պղծողներ ու մանկաս-

պաննե՞ր. ահա թե ով եք դուք: Ոչ մի չարագործի, գողի ու հոգեառի, Ռուսաստանն ատող ոչ մեկին չէր հաջողվել թույնի պես այդպես խոր թափանցել ռուսական գիտակցության մեջ, վարակել խելահեղությամբ ու տեղ պատրաստել, ուր Ֆեդերիկո Նիտշչի մեռած գլխից ափ իջավ, տեւտոնի խելագար գանգից դատարկ ակնախոռոչներով, ականջներով, քթով ու բերանով դուրս պրծավ գազանը, որը միաժամանակ կարողանում էր եւ՛ առանձնյակ, եւ՛ ոհմակ լինել, սեղմվել-հասնել մանրէի չափերի եւ մեծանալ գետածիու չափ, ամենասարսափելի զավթիչը, որ երբեւէ ոտք էր դրել ռուսական հողին,- դուրս սողաց ու քար կտրեց հիացմունքից:

Երկիրը փռվել էր նրա առաջ. ֆանտաստիկ, անծայրածիր, հարուստ, սքանչելի եւ անպաշտպան երկիրը: Տեսնում էր նրան ծայրեծայր, նրա բոլոր քաղաքները, տաճարները, պարիսպները, ցանկապատերը, փողոցային լապտերները, նրա խղճուկ խրճիթներն ու շքեղ պալատները, նրա հսկա գետերը, լճերն ու դաշտերը, նրա աղբյուրները, թաքստոցները, բները, ճահիճներն ու պտղաշատ բացատները, եւ մի պահ նույնիսկ խղճաց նրան: Բայց խղճահարությունը գազանի մեջ միայն ուժգացնում էր տռփանքը, եւ ագահությամբ, որպիսին նախկինում երբեք չէր զգացել, իր էության մեջ կուտակված ողջ վավաշոտությամբ, որ մարդու երեւակայությունից վեր է, մտագայլն ատամները խրեց Ռուսաստանի մեջ ու սկսեց պատառոտել:

2

Միայն սրիկաները, նախանձները, քծնողներն ու գոռոզները չէ, որ բաժին էին դառնում գիշատիչ գազանին: Միայն նրանց ուղեղը չէր մտնում ու լափում մարդկայինի ամենահամեղ պատառները: Գազանին ծառայում էին նաեւ նրանից վախեցողները, արհամարհողները, ատողները, խուսափողները. ճարտար խաբեբան այդպիսի մարդկանց բանալին էլ էր գտնում: Գայլը մարդու հետ վարվում էր մոտավորապես այնպես, ինչպես խելացի որսորդը գազանի հետ: Ուսումնասիրում էր նրա վարքը, ձեռնասուն դարձնում մանր չարքերին, որոնք հետո որսաշների ու որսկան թռչունների պես հետապնդում էին մարդուն, խորամանկ թակարդներ էր լարում, ծուղակներ սարքում, դրոշակներ շարում, քողարկվում էր, ու քչերին էր հաջողվում դուրս պրծնել: Մտագայլը հաշվենկատ ու խելացի էր եւ բոլորին չէ, որ հետապնդում էր: Եթե ճիշտ է, որ դրախտում ամենամեծ ուրախությունը մեղավորի ապաշխարելն է, ապա դժոխքում էլ չկա ավելի մեծ հաճույք, քան քարշ տալ-բերել բարեպաշտ մարդուն, պղծել սրբությունը,

անարգել անմեղությունը, նվաստացնել պարմանությունն ու ոտնակոխ անել առաքինությունը: Դա լավ գիտեր հեշտասեր Իսիդորը, որն իր ջահել քրմուհիներին ուղարկում էր տաճար՝ Սուրբ հաղորդության, եւ անմիջապես դրանից հետո ստիպում հաճույք պատճառել իրեն: Իսկ ահա, Վըսոկիե Գորբունկի գյուղի բոլոր մարդկանցից ամենատհաճը մտագայլի համար աստղաշատ գիշերները դաշտերով ու խոտչարքերով սլացող թեթեւամիտ աղջիկն էր, բայց ոչ այն պատճառով, որ վիուկություն էր անում,- գայլը դա կհասկանար ու հավանություն կտար,- այլ որ թեթեւոտն էր, որբ ու մենակ, եւ նրան պահպանող ուժը միայն մի անգամ էր թույլ տվել, որ մտագայլը մոտենա ու վախեցնի աղջկան, եւ որպես սփոփանք ու հատուցում այդ վախի ու մանուկ օրերի՝ հրաշափառ վազքի շնորհն էր ուղարկել նրան:

Բայց գայլը միամիտ չէր, որ հետ քաշվեր ու հանգիստ թողներ աղջկան, քանզի իր իրավունքներն ուներ նրա հանդեպ, ու դրա մասին ոչ ոք չգիտեր, բացի կնոջից, որ կյանք էր տվել Ուլյային: Մեխանիկ Կոմիսարովի կինն էր, որ հուսահատ, մեղքից հալածված, հաշմանդամ դստեր համար տագնապից ու վախից տանջահար, մի անգամ խելագար մոլուցքի մեջ չդիմացավ ու որոշեց դիմել մութ ուժերին, եթե լուսավոր ուժերն այդպես էլ չօգնեցին: Մի ակնթարթ էր միայն, մեկ բառ ու մեկ աղաչանք, բայց այդ սարսափելի, սեւ պահը եղել էր, ու մտագայլը գիտեր դրա մասին: Գիտեր նաեւ, որ կինը իրեն չի ներել այդ անկումը, հրաժարվել է ամենայն երկրայինից, տարօրինակ ուխտ արել եւ ընդունել է խորհրդավոր պատիժը. իրեն արգելել է տեսնել դստերը, մինչեւ չափահաս դառնալը: Բայց եղածն արդեն եղել էր:

Հենց դրա համար էլ երկնային ուժը պահպանում էր Ուլյային, բայց այդ ուժի կարողություններն էլ անսահման չէին: Չէ՞ որ երկրի երեսին ոչինչ վերջնական վճռված չէ, ու ոչ ոք չգիտի՝ ուր կգլորվի կախարդական գնդիկ-բոքոնիկը, որի ընթացքին իր նոթատետրորում հետեւում էր խորատես Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովը: Այդպես էլ ոչ ոք չգիտեր՝ ինչպես կդասավորվի եւ ինչից է կախված Ուլյայի ճակատագիրը, կբավականացնե՞ն մայրական ապաշխարանքի ջերմ աղոթքն ու հայրական թաքուն սերը, թե՞ չարի ուժերը կհաղթեն: Ավելին՝ անհայտ էր հենց աղջիկն ինչպես կպահի իրեն, երբ կյանքը սկսի փորձել նրան: Եվ մտագայլն էլ, որ ի սկզբանե գիտեր՝ Ուլյայի կյանքում այդպիսի փորձություններ շատ են լինելու, իր պատկերացումներն ու խորամանկ պլաններն ուներ, թե ինչպես կուլ տա ուլիկին, որի տոտիկների զնգուն կտկտոցից բուրդը թափվում ու աչ-

քերը խամրում էին՝ անկշտում գազանին վերադարձնելով այն ժամանակները, երբ հսկա երկիրը փակ էր նրա առաջ: Եվ հիմա, ոտք դնելով նրա տարածք, պահ մտնելով անտառներում ու ճահիճներում, մեկ ցատկով հաղթահարելով ահռելի տարածություններ, ուշադիր փնտրում էր՝ ինչպես որսա մի անաղարտ հոգի, որից կարելի է կառչել, եւ ինչ նենգություն հորինի: Կարելի է ենթադրել, որ հեղձուկ հուլիսյան գիշերով Վերա Կոնստանտինովնա Կոմիսարովայի համար լուսնային ներկայացում սարքելու մտահղացումն էլ մտագայլինն էր, նա էր ոգեշնչողն այդ բոլոր իրադարձությունների, որոնք քիչ էր մնում հետաքրքրասեր աղջկա զոհվելու պատճառ դառնային, ու չէր պատրաստվում հրաժարվել իր այդ որսից, այլ ավելի էր տենչում եւ օգնության կանչում իր ողջ հնարամտությունը: Հենց նա էր բորբոքել սարսափելի անտառային հրդեհը, որի մեջ իրենց վախճանը պիտի գտնեին մի բուռ մոլորված մարդիկ, եւ այնպես զայրացրեց երկնքին, որ պատասխանեց չտեսնված կարկուտով՝ ջարդելով շրջակա համարյա բոլոր ցանքսերը եւ անապակի ու անտանիք թողնելով տների կեսը, այնպես, որ գորբունկովցի տղամարդիկ անզոր ձեռքերն էին տարածում՝ «Չափն անցավ տեր հայրը», իսկ հայր Էրոսը ցցում էր ստորին շրթունքն ու վերեւից նայում սսկված սերմնացաններին, որոնք տեսել էին Աստծո ուժն ու այդ ուժի հետ լեզու գտնելու իր անձնական ունակությունները: Բայց այդ ամենը գայլին չէր հետաքրքրում, նա հայր Էրոսին անօգտակար էր համարում իր մտահղացումների իրականացման համար, եւ Ուլյայի խորթ մոր անձնական զղջումն էլ գազանի պլանների մեջ չէր մտնում, ուստի Վերա Կոնստանտինովնան գեղջկուհիների հետ ոչ մի ուխտի էլ չգնաց: Ու դժվար թե տանեին էլ իրենց հետ:

Ընդհանրապես, այդ ձախողված գիշերվանից հետո պատմությունը շատ արագացավ, մարդկային կյանքի մասնավոր դեպքերը հայտնվեցին ընդհանուր հոսքի մեջ ու սլացան առաջ՝ խառնվելով իրար, ինչպես ձնհալի ջրերն են խառնվում ցեխաջրերին, տապալված ծառերին, նավամատույցից պոկված նավակներին ու լաստերին, սառցակտորներին, առատ փրփուրին, աղբին ու քշվում դեպի մռնչացող սահանքը, ոչ այն ծանծաղուտը, ուր ժամանակին խրվել էր փախստական Լեգկոբընտովի նավակը, այլ իսկական սահանքաշեմը, ջրվեժը, վիհը, եւ այդ մահացու հոսքում առանձին ճակատագրերը պակաս նկատելի ու նշանակալի են դառնում, եւ սկսում են գործել ուրիշ օրենքներ:

...Լուրը, որ մեխանիկը ծեծելով կիսամեռ է արել կնոջը, իսկ դստերը որսորդական հրացանով քիչ է մնացել գնդակահարի որսադաշտերի վարձա-

կալը, որին հետո ողջ գյուղի աչքի առաջ մորուքից բռնած քաշեքաշ էր անում գազազած Պելագեյան, վերջին բառերով հայհոյում կրակի ճարակ դառած դեզի համար ու սպառնում կտրել անառակի տղամարդկային ելունդը, որ չկարողանա քարշ գալ քաղաքային պոռնիկների ետեւից,- այդ լուրը, ինչպես եւ հրաշալի փողոցային ներկայացումը, որն ուղեկցվում էր տղեկների խրախուսական գոռում-գոչյունով ու գյուղական շների երջանիկ հաչոցով եւ ամենաֆանտաստիկ ու անհեթեթ բամբասանքների տեղիք տվեց, մեծ հետք չթողեցին ժողովրդական հիշողության մեջ, որովհետեւ Վըսոկիե Գորբունկիի եւ շրջակա գյուղերի բնակիչներին ցնցած երկնային նշաններից ու դրա հետ կապված հարաբերականորեն ոչ մեծ տրամաչափի իրադարձությունից մի քանի օր անց, ի լրումն վերջին ամիսների բոլոր աղետների, տեղի ունեցավ այն մեծն ու սարսափելին, որը եւ կանխահայտնում էին այդ նշանները՝ հռչակվեց ցարական մանիֆեստն ու սկսվեց գերմանացիների հետ պատերազմը:

Դա Պավել Մատվեեւիչին թույլ տվեց որոշ անհրաժեշտ ցուցմունքներ տալուց հետո առժամանակ անհետանալ գյուղից՝ քահանային ասելով, որ պատերազմը գերմանացիների հետ ամեն ինչի վերջն է, եւ ոչ թե պետք է պատարագ մատուցել, այլ հոգեհանգիստների պատրաստվել ու տեղ ազատել նոր գերեզմանների համար: Հայր Էրոսը միայն գլուխն էր օրորում ու մրմնջում Աստծո կամքի մասին, բայց գրողը դառնացած ընդհատեց.

- Ա՛խ, տե՛ր հայր, մի՞թե չեք տեսնում, որ վաղուց արդեն ոչ թե Տերը, այլ նրա թշնամին է տնօրինում Ռուսաստանում: Սվետլոյար լճի մոտ ժողովուրդն ասում էր, որ Արարիչը մեղքերի համար Ռուսաստանը հարյուր տարով գերության է տվել սատանային ու հրաժարվել է նրանից:

- Հերետիկոսություն է:

- Հերետիկոսությո՞ւն: Իսկ լսե՞լ եք ինչ գազան է հայտնվել մեր անտառներում:

- Ասենք, թե լսել եմ,- կեսբերան պատասխանեց երեցը:

- Եվ ինչ կասե՞ք:

- Կասեմ, որ պետք է քիչ թրեւ գալ անտառներում, Աստծո տաճար գնալու փոխարեն, այդ դեպքում վատ մտքեր էլ չեք ունենա:

- Մեկ՝ մոտ եղեք անտառներին, մեկ՝ հեռու մնացեք անտառներից,- զայրացավ Պավել Մատվեեւիչը:- Կողմնորոշվեք վերջապես:

- Ես վաղուց եմ կողմնորոշվել, իսկ դուք, եթե անտառից դուրս չեք գալիս, գոնե վերցնեիք ու սպանեիք գազանին:

- Ա՞յս:

- Իսկ ինչ առանձնահատուկ բան կա սրա մեջ: Գազանը միշտ էլ գազան է: Գտնել հետքը, շրջապատել, խփել, իսկ մորթին, որ խրատ լինի սատանային, փռել ցանկապատին, որ չհամարձակվեն ոտք դնել այստեղ ու մոլորեցնել բարի մարդկանց:

- Եվ օրհնություն կտա՞ք այդ գործի համար,- հարցրեց Պավել Մատվեեւիչը՝ ինքն էլ չհասկանալով՝ ծամածռությո՞ւն է, թե՞ լուրջ է խոսում:

- Օրհնում եմ: Գուցե եւ հենց դրա համար են տարկետել ձեր ժամանակը,- մրմնջաց հայր Էրոսը,- որ այդպիսի հանձնառություն ունեք:

Լեգկոբըտովը ցնցվեց ու ծակող հայացքը հառեց պարզամիտ տերտերին:

- Ի՞նչ տարկետման մասին է խոսքը, տե՛ր հայր:

- Իբր չգիտեք,- դժգոհ ասաց քահանան,- ձեր մահվան հետաձգումը: Իսկ եթե պետք լինի, ձեզ օգնական էլ կգամ: Շան տեղ կծառայեմ ձեզ:

- Շնորհակալ եմ, մի կերպ մենակով գլուխ կբերեմ,- չոր գլուխ տվեց որսորդը քահանային, որից ամենաքիչն էր միստիկական պայծառացում ու խոնարհություն սպասում, ու չդիմանալով՝ խայթեց:- Ձեր կազմվածքն էլ այն չի, որ շան տեղ ծառայեք ինձ ու վազվզեք անտառներում:

Բայց այդ օրվանից մարդկային ցեղի թշնամուն սպանելու միտքը հանգիստ չէր տալիս Պավել Մատվեեւիչին եւ աստիճանաբար սկսեց կյանքի նպատակ դառնալ՝ դեռ անհստակ, հեռու, բայց՝ հնարավոր, ամենակարեւոր, հանուն որի նա հայտնվել ու հանդուրժվում էր աշխարհում: Ճիշտ այնպես, ինչպես ասաց հայր Էրոսը՝ սպանել ու փռել մորթին, որ դժոխքը ցնցվի:

Սակայն հեռակա վեհ խնդիրներ լուծելուց առաջ Պավել Մատվեեւիչը պետք է բացատրվեր իր վիրավորված մերձավորների հետ ու մեղա գար նրանց առաջ: Իսկ դա դժվար գործ էր, քանզի որսորդը մինչ այդ ոչ մեկից ներողություն չէր խնդրել, որովհետեւ ներողություն խնդրելու անհրաժեշտությունը հիշողության մեջ արթնացնում էր գարնանային դասարանը կիսով մոռացված Ելիցում եւ աշխարհագրության ուսուցչի ծաղրական հայացքը: Բայց այն ժամանակ Լեգկոբըտովը բոլոր առումներով իրավացի էր: Իսկ հիմա այնպես էր ստացվել, որ ծայրեծայր մեղավոր էր, եւ դա չարչարում էր անհանգստության անսովոր նրա հոգին: Որքան էլ գրողը հետաձգեց տհաճ արարողությունը, ստիպված էր կյանքում առաջին անգամ գրիչ շարժել ոչ թե աշնանային անտառի աղվեսին պատկերելու, այլ գերագույն ջանքով մի քանի տող հորինելով՝ իր սխալն ընդունելու համար: Եվ

դրա հետ միասին՝ քավության պատրաստակամություն հայտնել, ինչպես Ռուսիայում ավանդաբար լուծում էին այդ կարգի հակասությունները, ու նաեւ ստուգել՝ այդ դեպքի համար է՞լ է գործում իր մահվան տարկետումը:

Ծանր ու հեղձուկ գիշեր ապրեց եւ այդպես էլ պատասխան չստացավ Կոմիսարովից, բայց հաջորդ օրը հանդիպեցին,- դիտմամբ, թե պատահաբար՝ երկուսն էլ հրացաններով էին,- Ծելոմի բարձր ափին, զառիթափի գլխին, որով ոչ մեկը չէր կարող բարձրանալ, բայց այստեղ էլ նրանց միջեւ որեւէ խոսակցություն կամ գործողություն չեղավ: Կանգնեցին, նայեցին իրար, մեկը՝ շփոթված, մյուսը՝ քարե դեմքով, ու քանզի միակ հոգին, որ կարող էր խռովվել այդ հանդիպումից, այդ ժամերին այլ չափումներում էր, նրանց անակնկալ հանդիպման մանրամասները ոչ ոք չիմացավ:

Սակայն Լեգկոբըտովին դեռ երկար թվում էր՝ ինչ-որ մեկը պահպանում, թե նշանառության տակ է պահում իրեն, ու տխուր մտքերը հանգիստ չէին տալիս, քանզի աղոտ կռահում էր, որ մի անուղղելի բան է պատահել իր կյանքում, որն այլեւս նախկինը չի լինի: Անհասկանալի էր՝ դա կապված էր իրողությունների ընդհանուր ընթացքի՞, թե՞ Պելագեայի սառնության հետ, որը նրա վրա թափելով ողջ զայրույթը՝ լռել ու այնպես մեծամիտ ու անմատչելի էր պահում իրեն, ասես ոչ թե գեղջկուհի էր, այլ վիրավորանք ստացած տոհմիկ ազնվական: Լեգկոբըտովը միայն մի բան գիտեր, որ չկայացած դավաճանությունն ասես իրեն կապել էր կնոջը, ոտնակապ գցել, եւ հիմա ինքը Պելագեայից կախված էր ճիշտ այնպես, ինչպես ժամանակին կինն էր կախված իրենից: Փոխատեղում էր կատարվել, դերափոխություն, եւ ամենատհաճն այն էր, որ դա անտես չէր մնացել նաեւ հասարակության աչքից:

Գորբունկիի կնանիք կարեկցում էին Վասիլի Խրիստոֆորովիչին ու դատապարտում Վերա Կոնստանտինովնային, առավել տեղյակները պնդում էին, որ նրա գիշերային հանդիպումը որսորդի հետ առաջինը չի եղել, ու վկայաբերում նախրապան Տրոֆիմին, որը մի առավոտ կնոջը բռնացրել էր փողոցում, բայց միայն հիմա էր հասկանում, որ բոլորովին ջուր թափելու չէր ելել պետերբուրգցի տիկինը ու կարմրելն էլ պատահական չէր. իրոք, հո նախրապանի անմեղ հարցից չկարմրեց, այլ նրանից, որ այդ առավոտ նրան սպասում էր Լեգկոբըտովը: Հիմա արդեն շատ բան պարզ էր. օրինակ, ինչո՞ւ մեխանիկը հնձի չպատրաստեց գյուղը, ինչո՞ւ Պողոս-Պետրոսի տոնի հաջորդ առավոտ տնից փախավ մեխանիկի աղջիկը՝ իզուր կարծելով, թե իր փախուստն աննկատ կմնա, ինչո՞ւ էր մռայլվել ու այլեւս ոչ մի ջահել կնկա աչք չէր գցում գեղեցիկ պատանի Ալյոշան:

Երբեմն Պելագեայից աղ ուզելու էին գալիս ու զգույշ խորհուրդ տալիս, թե ինչպես ախոյանի առաջն առնի, բայց իր ողջ զայրույթը սպառած գրողի կինը պահ էր մտել, սպառնալի լռում էր, ոչ մի հարցի չէր պատասխանում եւ պարտքով աղ էլ խելամտորեն չէր տալիս, եւ ի վերջո նրան մոռացան, ինչպես ընդհանրապես մոռացան խաղաղ կյանքը՝ այնպես արագ փոխվեց ամեն ինչ եւ՛ Վիսոկիե ու Նիզկիե Գորբունկիում, եւ՛ Բուխարայում, եւ՛ Նովոլոկում, եւ՛ նույնիսկ այն ճահճուտ տեղերում, ուր թաղքուճներ էին աճում գեղջուկների ու գեղջկուհիների գլխին:

Գյուղերը պատերազմ էին ճամփում զորակոչիկներին, գյուղերի վրա տարածվում էր եկեղեցական զանգահարությունը, մի քանի անգամ գետի վրայով աերոպլաններ թռան, անտանելի փոշեկոլոլ էին ճանապարհները, հանկարծահաս գիշերային ջրհեղեղից ու կարկտի տարափից հետո նորից անձրեւ չկար, միայն ժամանակ առ ժամանակ չոր ամպրոպներ էին որոտում, իսկ Պոլցիով անցնում էին զինվորական գնացքները: Նրանց ընդառաջ քաղաք էին վերադառնում մերձակա կամ հեռավոր գյուղերի հովեկները, շրջանցիկ ճանապարհով տուն էին դառնում Եվրոպայում փակված ռուս ճամփորդներն ու թերթերում գրում այն դժբախտների մասին, որոնց պատերազմը վրա էր հասել Գերմանիայում, եւ գերմանացիները ռուս կանանց ու երեխաներին փակում էին կուպեներում, օրերով բաց չէին թողնում, իսկ հետո քշում էին բաց դաշտ, եւ կայզերական բանակի զինվորները հետաքրքրությամբ նայում էին բնական կարիքները հոգացող անհրավված մարդկանց: Գրում էին հիվանդանոցներից դուրս շպրտված ռուսական անձնագրերով կիսամերկ, անօգնական հիվանդների, բռնաբարված կանանց, խոշտանգումների, նվաստացումների ու ծաղրուծանակի ենթարկվող վիրավորների մասին, որոնց վրայից գերմանացի զինվորները պոկում էին վիրակապերը: Մտավորական մարդիկ վիճում էին, թե նման իրավիճակում իրեն ինչպես պիտի պահի աշխարհին Շիլլեր ու Գյոթե տված քաղաքակիրթ ազգը: Ոմանք պնդում էին, որ գերմանացիների բանականությունը մթագնել է, մյուսները հավաստիացնում էին, որ նրանց իրական էությունը միշտ էլ այդպիսին է եղել՝ բարբարոս, վայրագ, մտազուրկ, որ գերմանացիները վաղուց գազան են ու միշտ անասուն են եղել՝ իրենց զատկական բացիկներով, որոնց վրա պատկերում էին պետքարաններում պպզած կուշտուկուռ կանանց, իրենց գարեջրով ու երշիկով, իրենց Լյութերով ու Կալվինով, իրենց Բիսմարկով ու Վիլհելմով, իրենց անսրտությամբ ու դաժանությամբ, որպիսին աշխարհում ոչ մի ազգ չունի: Եվ չնայած Վերա Կոնստանտինովնան դեռ վերջերս ասում էր, որ թերթ չի

կարդում, հիմա կարդում էր առանց բացառության ամեն ինչ, սարսափում ու սնահավատորեն մտածում էր՝ իսկ ինչ կլիներ, եթե ամուսինը լսեր իրեն, եւ ամռանը մեկնեին Գերմանիայի ջրաբուժարանները, ինչպես ինքը երազում էր: Երեւի ճակատագիրը վատթարից պահպանեց իրեն այստեղ՝ Գորբունկիում:

Կինը չգիտեր ու չէր էլ փորձում հասկանալ՝ ի՞նչ է կատարվում Վասիլի Խրիստոֆորովիչի հոգում եւ ինչ էր որոշել այդ մարդը: Դա ոչ ոք չգիտեր, բայց մեխանիկը կողքից նայողին ոչ զայրացած էր թվում, ոչ վիրավորված: Խաղաղ էր ու թերեւս չափազանց մտախոհ, եւ դա ավելի սարսափելի էր Վերա Կոնստանտինովնայի համար, քան պետերբուրգյան թերթերի ընթերցումը: Եթե իմանար ամուսնու՝ մեխանիզմի նմանվելու երազանքի մասին, հաստատ կորոշեր, որ նա վերջապես իրականացրել է այդ երազանքը, թեեւ պարզ չէր՝ ինչ նպատակի համար էր կառուցվել այդ սարքը, առավել եւս անհասկանալի էր՝ ինչպես է օգտագործվելու: Համարյա անհավատարիմ կինը համոզված էր, որ անիծյալ գետափնյա զբոսանքի դրաման կավարտվի արյունով, ու չէր կասկածում, որ Վասիլի Խրիստոֆորովիչը կսպանի եւ՛ իրեն, եւ՛ նրան, ում հետ քիչ էր մնում դավաճաներ ամուսնուն: Կոմիսարովի հետ համատեղ կյանքի մի քանի տարում Վերա Կոնստանտինովնան նրանից միայն մի բան էր հասկացել՝ այդ մարդը չի հանդուրժի եւ չի ների որեւէ վիրավորանք, առավել եւս՝ այդպիսի վիրավորանք: Բայց ամուսինը հանդուրժեց (Վերա Կոնստատինովնան առաջին ծեծը հաշվի չէր առնում՝ իրավացիորեն ենթադրելով, որ ոչ թե սիրեկանի, այլ խորթ աղջկա համար է), ու կինը հիասթափության պես մի բան զգաց, որին շուտով փոխարինեց նոր վախը: Ո՛չ, ավելի լավ է չհանդուրժեր, ավելի լավ է ծեծեր ամեն օր, տանջաքննության ենթարկեր, եւ ինքը կպատմեր ինչ եղել է, ծայրահեղ դեպքում՝ ավելի լավ կլիներ, եթե հարբեր, տրվեր գինարբուքի, տնից վռնդեր իրեն, ուղարկեր ծնողների մոտ՝ Վոտկինսկ, միայն թե այդպես ահարկու չլռեր...

Իսկ նա լռում ու լռում էր, քանի դեռ Ուլյայի համար մնում էին գյուղում ու տանը փակված, ինչպես պաշարման մեջ, լռում էր, երբ ամենայն զգուշությամբ գնացքով վերադառնում էին Պետերբուրգ, ու մեխանիկը չէր հեռանում Ուլյայից, չնայած վիրավոր աղջկա խնամքը որոշ դեպքերում կնոջ գործ էր: Ոչ մի բառ չասաց, երբ վերջապես տանջահար հասան տուն, ու պարզվեց, որ իրենց բացակայությամբ ինչ-որ մեկը եղել է բնակարանում, բացել ու խառնշտորել կանացի զգեստապահարանը, բայց ոչինչ չի վերցրել դեղին քաթանե շորից բացի: Վերա Կոնստանտինովնայի համար այդ

կողոպուտն այնքան ծիծաղելի ու անհեթեթ էր, որ ընդամենը խղճաց թշվառ գողին, որը պետք է որ չափազանց հիասթափված լիներ՝ իր աղքատիկ հագուստեղենը տեսնելով, ու հուսահատությունից վերցրել էր ձեռքն ընկած թշվառ շորը:

Բայց ամուսինն այստեղ էլ իրեն անսպասելի պահեց: Ոստիկանություն չկանչեց, հարցուփորձ չարեց հարեւաններին ու դռնապանին, բայց կատարեց կնոջ երազանքը՝ այնքան փող տվեց, որքան նա երբեք ձեռքին չէր բռնել, ու պատվիրեց հագուստ, սպիտակեղեն ու գլխարկներ գնել ըստ իր հայեցողության: Իսկ երբ Վերա Կոնստանտինովնան առարկեց, թե հիմա զգեստների ու գնումների ժամանակը չէ, իսկ մտքում՝ ո՞ւր եմ գնալու այս կապտուկներով, Վասիլի Խրիստոֆորովիչը այնպես նայեց նրան, որ կինը դողացող ոտքերով վազեց Նեւսկի պողոտայի՝ պատերազմի պատճառով դատարկված նորաձեւ խանութներն ու հապճեպ, հանցագործի պես, առանց փորձելու վերցրեց առաջին հանդիպած հագուստները, ասես հինգ րոպեում նրբաճաշակ ուտելիք կուլ տար: Հետո անհմուտ վճարեց եւ տուփերով ծանրաբեռնված դուրս եկավ լավ վարժեցված ծառայողների ու մանեկենների քմծիծաղի ուղեկցությամբ, ու խոժոռ կառապանը նրան տարավ տուն:

Փողոցները լցված էին հարբած, գրգռված արհեստավորների, ուսանողների ամբոխներով, ոստիկանությունը չէր միջամտում, ու Վերա Կոնստանտինովնային թվաց՝ այդ բոլոր մարդիկ նայում են իրեն, դատապարտում ու գիտեն իր խայտառակության մասին, թիկունքում քչփչում են, որ գյուղում իրեն թեթեւ վարքի տեր կին են համարում, ինչ-որ մեկի սիրուհին է, եւ հայրենասիրական ամբոխը ամեն պահ կարող է հարձակվել վրան, կողոպտել, բռնաբարել կամ սպանել: Ուզում էր որքան կարելի է շուտ հասնել տուն, բայց հարբած խառնամբոխը փակեց պողոտան ու մղվեց դեպի Իսահակի տաճար: Հորձանքը շուռ տվեց կառեթն ու տարավ իր հետ: Վերա Կոնստանտինովնան սարսափից ճչաց, բայց մի ջահել, ոգեւորությամբ ու կրակով առլեցուն, ցորնագույն բեղերով դեմք ծեփվեց պատուհանի ապակուն, ու զնգուն, կրքոտ ձայնը գոչեց. «Չվախե՛ս, օրիո՛րդ»:

Վերա Կոնստանտինովնան ամուր գրկեց գնումներով տուփերն ու մարդկային հոսանքով քշված՝ շուտով արդեն հրապարակում էր, որտեղ ամբոխը հորդում էր դեպի գերմանական դեսպանության հսկա, ոչ պետերբուրգյան շենքը, որ վերջերս էր կառուցվել մայրաքաղաքի ամենակենտրոնում: Մարդիկ, կառքերը, ավտոմեքենաները հեղեղել էին դեսպանատան հարակից տարածությունը: Դիմացը՝ կարկամած տաճարի առաջ մի

քանի խարույկ էր վառվում, ու հրշեջները չէին շտապում մարել կրակը:

- Սա ի՞նչ է: Ո՞ւմբ,- կողքին հայտնված ուսանողին վախեցած հարցրեց Վերա Կոնստանտինովնան:

- Գերմանացիներին են վառում:

- Ո՞ւմ,- սարսռաց կինը:

- Վիլհելմի դիմանկարները:

Դեսպանության հսկա շենքն ամբողջովին լուսավորված էր: Երեւում էր ինչպես են պատուհանից պատուհան վազում մարդիկ ու դուրս նետում թղթերի տրցակներ, սեղաններ, աթոռներ, պահարանիկներ, բազկաթոռներ... Այդ ամենը դղրդոցով թափվում էր մայթերին ու ջարդուփշուր լինում: Շուրջը գվվում էին արհեստավորներ, քաղքենիներ, բանվորներ, առեւտրականներ, ինտելիգենտներ. թվում էր՝ ողջ Ռուսաստանն է հավաքվել ու միավորվել ողջ գերմանականը ոչնչացնելու պոռթկումով: Պաշարված շենքում մարդկանց թիվն աճում էր, դուրս էին կախվում պատուհաններից, ձեռքերը թափահարում, հրապարակում կանգնածներն ի պատասխան ձեռքով էին անում, ու Վերա Կոնստանտինովնան ցնցվեց. մի պահ թվաց կատարելապես անհնարինը՝ որ համարյա ուղղաբերձ պատով վերին հարկ մագլցած ու տանիքի ձիաքանդակներից մեկին հեծած պարմանուհին իր խորթ աղջիկն է: Ամբոխը ցնծագին սուլեց, աղմկեց, մի քանիսը բարձրացան աղջկա ետեւից ու սկսեցին ճոճել ձիաքանդակները: Ձիերը դիմանում էին: Սկսեցին ջարդել: Ձիերին պահող մերկ հելլենները տապալվեցին մայթին: Մի քանի հոգի այս ու այն կողմ թռան, մեկը բռնել էր արյունոտ գլուխը: Վերա Կոնստանտինովնան համոզված էր, որ մյուս բեկորներն իր վրա են թափվելու: Խփեց կառապանի մեջքին, բայց նա նույնիսկ հետ չնայեց:

- Ոստիկա՛ն, ինչո՞ւ ոստիկան չկա,- ճչաց Վերա Կոնստանտինովնան, բայց ձայնը խառնվեց ամբոխի խուլ գվվոցին:

Հանկարծ բոլորը հետ քաշվեցին, ու երկրորդ պատուհանից դուրս նետեցին մի մարդու՝ ըստ երեւույթին փախչել չհասցրած ու սարսափից թաքնված գերմանացու, եւ անհասկանալի էր՝ ողջ է, թե մեռած: Ամբոխը տնքաց, հետ քաշվեց, որ ուժ առնի ու կրկին հորդի առաջ, բայց այդ պահին հրշեջները բացեցին ջրանետները, ու սառցասառը ջուրը խփեց մարդկանց: Ձին թպրտաց ու առաջ սլացավ, բայց խփվեցին ուրիշ կառքի, շուռ եկան, Վերա Կոնստանտինովնան խուլ ճչաց եւ ավելի ամուր կառչեց իր տուփերից:

...Նույն գիշեր Կոմիսարովը եկավ նրա ննջարան ու դրանից հետո ամեն գիշեր գալիս էր, բայց կնոջ սառած մարմինը որեւէ ուրախություն չէր զգում, որքան էլ նա ջանում էր խաղալ այդ ուրախությունը:

3

Մադամ Կոմիսարովային վախեցրած համաժողովրդական ցնծությունը չէր դադարում, հակառակը՝ օրեցօր բորբոքվում էր: Չնայած գերմանական դեսպանատունն ավիրելու հաջորդ օրը թերթերի մեծ մասը շփոթահար գրեց ժողովրդական ցասման արտահայտությունների եւ հայրենասիրական խանդավառության չափազանցությունների մասին, իսկ ոստիկանությունը պահպանության առավ Ավստրիայի դեսպանատունը, Պետերբուրգը զատկական ցնծության մեջ էր, որը տեւեց մի քանի շաբաթ: Ի տարբերություն գյուղի, որտեղ բոլոր տներում ոռնում էին կանայք եւ ավելի մռայլ էին դարձել տղամարդկանց դեմքերը, կայսրության մայրաքաղաքի փողոցներում ու պողոտաներում շրջում էին երջանիկ մարդիկ, տաճարներում պատարագներ էին մատուցվում ի փառս ռուսաց զենքի եւ ուղղափառ զորքի հաղթության, Կոնստանդնուպոլսի, նեղուցների եւ Սուրբ երկրի դարձի համար, հոգեւորականությունը քննարկում էր՝ ում են բնակեցնելու Պաղեստինում եւ առաջարկում ավետյաց երկիր ուղարկել հարավային նահանգների ռուս գեղջուկներին: Ենթադրվում էր, որ այդ պատերազմը վերջինն է լինելու մարդկության պատմության մեջ եւ կտեւի երկու ամսից ոչ ավելի ու կավարտվի թշնամու ջախջախումով, Ռուսաստանի հաղթանակով ու հավերժ խաղաղության հաստատումով: Ուսանողները կամավոր էին գրվում, վաճառականները հարյուր հազարավոր ռուբլիներ էին հանգանակում բանակի կարիքների համար, քաղաքը ոգեւորված էր իր փոփոխություններով ու չգիտեր ինչպես վարվի այդ ոգեւորության հետ: Եկեղեցիներն ու սինեմաները պայթում էին ժողովրդի առատությունից, փողոցներն ու պողոտաները լցված էին տոնահանդերձ, ոգեւորված մարդկանցով: Երթերը փոխարինվում էին ցույցերով, ու թվում էր Պետերբուրգի վրա անվերջանալի զայրագին-ցնծուն գվվոց է կախված: Ասենք, մի գիշեր Պետերբուրգն էլ դադարեց գոյություն ունենալ. Պետրոգրադ, սուրբ Պետրոսի քաղաք, ռուսական քաղաք, սլավոնական աշխարհի ու միասնականության կենտրոն: Եվ անմիջապես ողջ հինը սրբվեց, թվաց ծիծաղելի եւ անպարտադիր: Պատերազմը բացահայտեց իրերի իսկական չափը, անձնականը կծկվեց, փոքրացավ եւ պահ մտավ հոգու ու մարմնի թաքստոց-

ներում, իսկ ողջ հանրայինը դարձավ մեծ ու կարեւոր: «Հայրենիք», «Ռուսաստան», «թագավոր», «Ցարգրադ» բառերը, որոնց վրա դեռ մի շաբաթ առաջ ծիծաղում էին ինտելիգենտները, հանկարծ հնչեցին ողջ հզորությամբ, այլեւս ոչ ոք չէր ամաչում դրանք արտասանելուց, հակառակը՝ ամոթալի դարձավ սրբազան պատերազմում հաղթանակից բացի այլ բանի մասին մտածելը, եւ պարզվեց՝ նախկին բոլոր փորձություններն ու անձնական հիասթափությունները չնչին են, քանզի պատերազմական ժամանակներում հայրենասեր չլինելը նույնքան ամոթալի էր, որքան խաղաղ ժամանակ հայրենասեր լինելը: Տասնչորս թվականի ամռանը սկսվեց նոր կյանք, եւ նպատակ հայտնվեց այդ նոր կյանքում: Եթե պատերազմը չլիներ, հարկ կլիներ հորինել երկիրն անիմաստությունից ու կամազրկությունից փրկելու համար, որոնց մեջ թաղված էր նախորդող բոլոր տարիներին:

Այսպես էր խոսում թուլակազմ, քնքուշ, ձայնեղ մի մարդ պալատի հրապարակում, ուր եկել էր Ուլյանա Կոմիսարովան: Դեռ թույլ էր: Լեգկոբընտովի «զաուերի» գնդակը նրան բռնել էր թռիչքի մեջ ու խրվել կուրծքը՝ մի քիչ սրտին չհասած: Աղջիկը շատ արյուն էր կորցրել, բայց ծեր, կիսակույր բուժակ Յաբլոկովին հաջողվեց դուրս քաշել արճճի բութ քթով կտորը, եւ մի քանի օր անց աղջկան զննող երիտասարդ, բայց արդեն նշանավոր մայրաքաղաքային վիրաբույժ Սերաֆիմովը մեծ գովասանքով արտահատվեց իր գյուղական գործընկերոջ աշխատանքի մասին ու գովեց աղջկական կրծքի կոկիկ վիրակարը:

Իսկ Ուլյայի մեջ այդ սպին եւ ամեն շաբաթ նրան զննող, ուժեղ ու հմուտ մատներով դիպչող բարձրահասակ տղամարդը ամոթի զգացում ու արյան հորդում էին արթնացնում: Ու նաեւ դժվար էր հիվանդ լինել, երբ դրսում այդպիսի բաներ են կատարվում, եւ նա արգելքը խախտելով՝ փախավ տնից: Ագահաբար լսում ու նայում էր շուրջը՝ ձուլվելով ցնծացող հեղեղին, որ սլանում էր դեպի քաղաքի կենտրոն, եւ մի անգամ հարյուրհազարանոց հրաշալի ժողովրդական ամբոխի մեջ տեսավ թագավորին: Եվ նույն պահին մի զարմանալի թուլություն պատեց նրան եւ այնպիսի սեր ցարի հանդեպ, որ բոլորի հետ ծնկի եկավ ու երդվեց, որ, եթե պետք լինի, նրա համար կտա արյան վերջին կաթիլը: Կայսրը մենակ չէր. կողքին կանգնել էր ծովայինի համազգեստով տասը տարեկան մի տղա՝ ապագա ռուսական ցարը, ու չնայած Ուլյան նրան չէր տեսնում, արքայազնը պատկերանում էր որպես մի ուժեղ, գեղեցիկ պատանի: Ժողովուրդը բղավում էր, կանանց աչքերում արցունքն էր լճացել, իսկ տղամարդիկ մոլեգին էին: Ասում էին,

որ քաղաքը լցված է գերմանական լրտեսներով, ու մարդիկ մղվում էին ջարդուփշուր անելու գերմանական կրպակները: Ուլյան քայլում էր բոլորի հետ՝ երջանկություն, ցնծություն, ատելություն զգալով, եւ ափսոսում էր միայն, որ աղջիկներին կռիվ չեն տանում:

Միայն նա չէր այդպես մտածում, այլեւ գիմնազիայի բոլոր ընկերուհիները: Ուսումնական տարին երբեք այդպիսի խանդավառությամբ չէր սկսվել, երբեք այդպես ոգեշունչ չէին գրկախառնվել ամառային արձակուրդներից հետո, եւ իրենց տնօրինուհուն այդպիսի սիրահարված աչքերով չէին հետեւել բոլոր դասարանների գիմնազիստուհիները, երբեք իրար այդքան հարազատ չէին զգացել, այդպիսի ոգեւորությամբ չէին զբաղվել ձեռագործով, եւ չնայած աշակերտուհիներին արգելվում էր թերթեր ու պատկերազարդ հանդեսներ կարդալ, Ուլյան չդիմացավ գայթակղությանը:

Խորթ մորից առաջ էր հասցնում թերթել «Նիվան», աչքի առաջ իրար էին հաջորդում միանգամից համերաշխված դումայական գործիչների, անգլիական, սերբական, չեռնոգորյան ու բելգիական թագավորների, գեներալների, մինիստրների եւ դեսպանորդների դեմքերը, հայացքը կանգ առավ վիրավոր սերբական արքայազնի վրա, բայց դեռ Կոլոմյաժյան ձիարշավարանի ավիացիոն շաբաթից նրա համար ամենաթանկը ֆրանսիացի խիզախ ավիատոր Ռոլան Գարոն էր, որը ժամանակին բածրության ռեկորդ էր սահմանել եւ թռել-անցել Միջերկրական ծովի վրայով, իսկ այս պատերազմում զոհվել էր՝ գրոհելով գերմանական «Ցեպելին» դիրիժաբլը: Նրա մահվան լուրն առնելով՝ Ուլյան կյանքում առաջին անգամ լաց եղավ ոչ թե աղջկական անուշ արցունքներով, այլ կնավարի, անսփոփ հեծկլտոցով: Բայց որոշ ժամանակ անց պարզվեց, որ օդաչուն ողջ է, սենսացիայի սիրահար թերթերն էին շտապել հայտնել նրա զոհվելու մասին, եւ Ուլյան հասկացավ, որ ինքը երկինքը նրա կողմն է, ուրեմն երկրի վրա էլ Ռուսաստանի եւ նրա հավատարիմ հավերժ դաշնակիցների համար էլ ամեն ինչ լավ կլինի:

Գոգոլի փողոցի խանութից գնեց ռազմական գործողությունների քարտեզը, քինախնդրությամբ գույնզգույն թանձր գծեր էր քաշում վրան ու տեղաշարժում փոքրիկ դրոշակները: Ամեն նոր օրվան սպասում էր անհամբերությամբ, եւ այդ սպասումը մռայլող միակ հանգամանքը քարտեզի վրա զորքերի տեղակայման իր կարծիքով չափազանց դանդաղ փոփոխությունն էր: Ուզում էր արագ տեղաշարժել դրոշակները, ավել շատ զարմանահրաշ կորագծեր քաշել եւ բանաստեղծության պես անգիր անել բելգիական ու լեհական փոքրիկ քաղաքների ու գյուղերի անվանումները,

որոնց մասին առաջ չէր էլ լսել: Մնացած նորությունները նրան ընդհանրապես չէին հետաքրքրում, պատերազմը կլանել էր ամեն ինչ, բայց մի անգամ մեխանիկի դուստրը մի տարօրինակ լուսանկար տեսավ հետաքրքրաշարժ պատերազմական պատկերների շարքում: Կալանավաշտերից փախած ու սահմանն անցնելու համար կնոջ շորեր հագած մի հանցագործի լուսանկար էր:

«Թո՛ւ, ի՞նչ տհաճ կերպար է»,- կալանավորի սափրած գլխին ու լկտի աչքերին նայելով՝ մտածեց Ուլյան, բայց ամենատարօրինակն այն էր, որ հագի շորը մեկին մեկ մայրացուի զգեստապահարանից անհետացածն էր: Եթե այդ շորը չլիներ, չէր կարդա լուսանկարի տակի փոքրիկ գրառումը:

«Այս հանցագործության հետքերը տանում են ամենավերեւները, ու կարելի է ենթադրել միայն, թե որքան վեր: Միամտություն կլիներ մտածել, որ մարդը պատերազմի ժամանակ կարող է անարգել կտրել երկրի կեսը ու հատել սահմանը,- գրում էր Ս.Ֆ, սկզբնատառերի տակ թաքնված անհայտ մարդը:- Ակնհայտ է, որ այս ամբողջ հակահիդորյան արշավը, որ սկսել է սակավաճանաչ գրող (իրականում ձեռնադրման բարձր աստիճանի մասոն) Պ.Մ.Լեգկոբըտովը, կոչված էր թաքցնելու կարգալույծ վանականին ղեկավարողների իրական նպատակները: Այսօր ակնհայտ է, որ նրան կալանավաշտ ուղարկած նույն բարձրաստիճան անձինք են իրենց նպատակները հետապնդելով՝ բեմականացրել այդ փախուստը: Բնականաբար, պատերազմի ժամանակ Ճչետինկինի փախուստն աննշան դեպք կթվա քաղքենուն: Բայց չմոռանանք, որ հինգ թվականի հեղափոխությունը սկսվեց պատերազմի ժամանակ, եւ հրձիգը Գապոն քահանան էր: Բոլոր հիմքերը կան երկյուղելու, որ հաջորդը կսկսվի քահանա Իսիդորից»:

Ուլյան թոթվեց ուսերը, հետո մտքի մեջ ընկավ, նայեց խմբագրության հասցեն, հետո նորից թոթվեց ուսերն ու դեն նետեց բոլոր կասկածները: Գաղափար չուներ՝ ով է Օկամը, եւ ինչ ածելի է սարքել բրիտանացի աբեղան, բայց ենթագիտակցաբար հետեւում էր նրա սկզբունքին՝ աշխարհում քի՞չ իրար նման շորեր կան: Սակայն փախստակի լուսանկարով էջը համենայնդեպս պոկեց ու պահեց, ինքն էլ չիմանալով՝ ինչու:

...Երբեք այդպիսի լիարյուն կյանքով չէր ապրել, երբեք այդքան իրենը չէր զգացել ընդհանուր գործը, երբեք այդպես չէր հոգացել հեռավոր, անծանոթ ռուս մարդկանց համար, երբեք այդպես չէր կանխավայելել ապագան եւ այն ցնծությունը, որով հաղթողներին ընդունելու էին Պետրոգրադի փողոցներում: Միակ իրողությունը, որից ոչ թե պարզապես վշտանում,

այլ ամաչում ու մռայլվում էր Ուլյան, այն էր, որ բոլոր ընկերուհիների հայրերը կամ ավագ եղբայրները ռազմաճակատում էին, իսկ իր հայրը մնացել էր քաղաքում, ու դա նրան դուրս էր դնում ընդհանուր հպարտությամբ ու տագնապով միավորված աղջիկների շրջանից: Հասկանալի է, որ ցանկացածին կարող էր հայտնել, որ հայրն աշխատում է զինագործարանում, բայց դա քիչ էր: Իսկ մեխանիկը ոչ միայն չէր պատրաստվում պատերազմել որեւէ մեկի հետ, այլեւ տարակուսանքով ու ցավով էր նայում աղջկան, իսկ կնոջ վրա ընդհանրապես չէր նայում: Բայց ավելի սարսափելին այն էր, որ Լիտեյնի պողոտայի նրանց բնակարանի մերկ պատերը, որ ժամանակին Վերա Կոնստանտինովնան փորձել էր զարդարել միջակ նկարիչների բնապատկերներով, ծածկվում էին Ուլյային անծանոթ մարդկանց նկարներով, եւ ասես հատուկ աղջկա համար մեխանիկը բարեխղճորեն մակագրություններ էր կցում դրանց. Գյոթե՝ գերմանացի մեծ բանաստեղծ եւ փիլիսոփա, Շիլլեր՝ նշանավոր գերմանացի բանաստեղծ, Հեգել՝ գերմանացի հանճարեղ փիլիսոփա, Կանտ՝ նշանավոր գերմանացի փիլիսոփա, Մարքս՝ մեծավաստակ գերմանացի տնտեսագետ:

Այդ բոլոր մարդիկ, բացի ծաղրաբան Գյոթեից, իսկ Կանտը՝ հատկապես, լուրջ-լուրջ նայում էին Ուլյային, եւ աղջիկը, չհամարձակվելով գերմանացիներին պոկել պատերից, կողքով անցնելիս ֆշշացնում ու թքում էր: Իսկ եթե հանկարծ ընկերուհիներից որեւէ մեկը գա իրենց տո՞ւն: Ուլյան իրեն ուրիշի հանցագործության պարտակող էր զգում, եւ որ հանցագործը հայրն էր, ավելի էր դառնացնում նրա դժբախտությունը...

Այդպես էլ, թշնամական դեմքերի անուրախ շրջապատման մեջ, դիմավորեցին Սուրբ Ծնունդը, իսկ փետրվարին տեղի ունեցավ Ավգուստյան անտառների աղետը, գարնանը սկսվեց գերմանացիներ հարձակումը, Ռոլան Գարոն այս անգամ իսկապես խփվեց ու հայտնվեց գերմանական գերության մեջ, եւ Ուլյան առաջին անգամ կասկածեց մոտալուտ հաղթանակին: Պատերազմը, որը խոստացել էին ավարտել մի քանի ամիս առաջ, չէր էլ մտածում ավարտվելու մասին: Պատերազմն ընդլայնվում, ուռչում, աճում էր, հաղթանակը սկսել էր նահանջել, եւ ինչ-որ բան էր փոխվել պետերբուրգյան օդում, ոչ ոք չէր հասկանում՝ ինչ է կատարվում, ինչու գերմանացիներն այլեւս չեն նահանջում, հակառակը՝ նեղում են ռուսներին: Առաջվա պես խանդավառ չէին գիմնազիայի աղջիկները, ոմանք արդեն թաղել էին կռիվ գնացած հայրերին ու ավագ եղբայրներին, մյուսների հարազատները հաշմանդամ էին վերադարձել, ոմանք էլ սպասում էին գերի ընկածներին: Ուլյան վանում էր վատ մտքերը, այլեւս չէր մոտենում ռազ-

մական հաղորդագրություններով քարտեզներին, թերթ չէր կարդում, իսկ միջանցքում գերմանացիներն ավելի ու ավելի լկտի էին նայում նրան, այնպես, որ ուզում էր աչքերը հանել, ներկով ծեփել դեմքերը: Եվ եթե հոր վախը չլիներ, այդպես էլ կաներ, բայց հենց այդ ժամանակ, երբ պատրաստվում էին դիմավորել առաջին պատերազմական Զատիկը, որ շատ վաղ էր այդ տարի, մարտյան, ցուրտ, մեխանիկն անսպասելի ու մի տեսակ հպանցիկ, աչքերը չբարձրացնելով, ասաց, որ մեկնում է ռազմաճակատ:

Աղջիկն ու կինը տարակուսած նայեցին նրան:

- Ամրացագիրդ հանե՞լ են,- վախեցած հարցրեց Վերա Կոնստանտինովնան:

- Ո՛չ,- Կոմիսարովը տխուր էր, ծգված ու խիստ:- Ե՛ս եմ գնում:

Կինը մի տեսակ տարօրինակ նայեց նրան, իսկ Ուլյան լաց եղավ՝ ինքն էլ չհասկանալով՝ վշտի՞, թե՞ ուրախության արցունքներ են, կամ էլ սրտում այդ երկու զգացումներն այնպես էին ծուլվել, որ բաժանելն անհնար էր:

- Գիտեմ, որ մեղավոր եմ քո առաջ, բայց այլեւս մնալ չեմ կարող,- հրաժեշտ տալիս նրան ասաց հայրը, եւ Ուլյան Դվորցովի հրապարակի ոգով մեկնաբանեց այդ դառը բառերը, հիանում, ապրում ու հպարտանում էր հորով, որը, թեկուզ ուշացումով, բայց որոշում էր կայացրել, սակայն ոչ մի կերպ չէր հասկանում նրան: Նրան չէր հասկանում ու հավանություն չէր տալիս ոչ ոք: Ո՛չ կինը, ո՛չ գործարանի ղեկավարությունը, որոնց դժվարությամբ համոզեց, որ ռազմաճակատ մեկնելը քմահաճություն չէ, նյարդային պոռթկում չէ, առավել եւս՝ հայրենասիրական արբեցում, անհրաժեշտություն է՝ գործի մեջ փորձարկելու այն, ինչով զբաղված էր նախորդ տարիներին: Վասիլի Խրիստոֆորովիչը տխուր ու դատապարտված՝ իրենն էր պնդում, որ անկախ ամեն ինչից մեկնելու է ռազմաճակատ, իսկ թե ինչ նկատառումներով՝ ոչ մեկին չի վերաբերվում, եւ ի վերջո նրան հանգիստ թողեցին որպես իշխան Անդրեյ Բոլկոնսկու բարդույթով մանրբուրժուական թերարժեք ինտելիգենտի:

Ուլյան այդ ամենը չգիտեր, բայց չէր խոսում մոլորված, միանգամից փոխված մայրացուի հետ՝ նրան համարելով ընտանեկան աղետների միակ պատճառը, ու չէր տեսնում, որ Վերա Կոնստանտինովնան իրականում շատ ավելի վատ ու անողորմ է մտածում ինքն իր մասին: Տեղեկությունը, որ ամուսինը՝ այդ հույլ շնչարգելությունից ու նյարդային խանգարումներից տառապող, կյանքին դժվար հարմարվող քաղաքացիական մարդը սեփական կամքով ինչ-որ անհասկանալի, անիմաստ կռվի է գնում, խոցել էր

կնոջը, ինչպես կյանքում երբեք ոչինչ չէր խոցել: Դա ոտնձգություն էր այն միակի դեմ, որ հասկանալի եւ ամբողջովին իրենն էր ու բոլորովին վերջերս էր վերադարձել իրեն՝ իր մարմնի դեմ:

«Նրան կսպանեն ու հաստատ կսպանեն առաջին իսկ մարտում, եւ դրա միակ մեղավորը կլինեմ ես, եւ ընդմիշտ կկորցնեմ նրան»,- մտածում էր կինը, եւ այդ միտքը, որ բոլորովին վերջերս դեռ կարող էր հուսադրող ու ազատագրում խոստացող թվալ, հիմա սարսափեցնում էր: Սարսափելի էր ամեն ինչ, սկսած հավաքակետի հրաժեշտից՝ անհեթեթ, սառը, անկապ, այդպես էլ չհաշտված հոգով եւ իրար ոչ մի շիտակ բառ չասած: Վաղ առավոտ էր, մութ, ծիերը խրխնջում էին, Վերա Կոնստանտինովնան չէր հասկանում ինչ է կատարվում, ուզում էր գոռալ, բայց ստիպված էր զսպել իրեն: Ուլյան զայրացնում էր իր անհարկի ոգեւորությամբ, դրանից ավելի շփոթության էին մատնում կողմնակի մարդիկ, որոնք սեւեռուն նայում եւ միայն իրենց հայտնի ինչ-որ իմաստ էին փնտրում նրա աչքերում: Մի շարժուն, ոչ բարձրահասակ տարեց մարդ, որի ներկայությունը մի տեսակ անպատշաճ ու վիրավորական էր զինվորական համազգեստով հզոր տղամարդկանց կողքին, մոտ վազեց Վասիլի Խրիստոֆորովիչին, երկար թափահարում էր ձեռքը, հետո ինչ-որ գրքույկ տվեց, որն ամուսինը կասկածոտ զգվանքով վերցրեց, ու Վերա Կոնստանտինովնան զգաց ինչպես է ատում այդ կնանման, հարմարակյաց, տնական մարդուկին, որն իր ներկայությամբ թունավորում էր ամուսնու հետ հրաժեշտի վերջին րոպեները: Իսկ մարդուկը չէր հանդարտվում, մոտեցավ նաեւ Վերա Կոնստանտինովնային, ներկայացավ որպես թերթի թղթակից՝ խեղդելով բերանից փչող հոտով, ասաց, որ ուզում է հարցազրույց անել մարտական ռուս սպայի կնոջ հետ: Կինը թշնամաբար, կտրուկ պատասխանեց՝ դժվարությամբ զսպելով զգվանքն ու հաղթահարելով այդ ծաղրաբան, վավաշոտ մռութին հասցնելու, թե թքելու ցանկությունը:

- Ինչպե՞ս կարող եք: Ինչպե՞ս չեք հասկանում: Այդպես էր պետք: Ես ամաչում եմ ձեզ համար: Ձեզ ի՞նչ էր արել այդ պապիկը,- նրա վրա հարձակվեց Ուլյան, իսկ Վերա Կոնստանտինովնան միայն ուզում էր շուտ ավարտվի այդ ամենը, պառկի իր միայնակ անկողնում ու մոռացումի տրվի դողդոջուն, անհանգիստ քնի մեջ, բայց երբ վերադարձավ ամայացած բնակարանը, երբ հանկարծ հասկացավ՝ ինչ է կատարվել, վատ զգաց: Վերա Կոնստանտինովնան պատրաստ էր խեղդվել հեծկլտոցի մեջ, բայց արցունքները, որ միշտ փրկել էին նրան, այս անգամ չէին հոսում: Լճացել էին նրա էության խորքերում եւ խցանել մարմնի բոլոր ելքերն ու մուտքերը,

ինչից Վերա Կոնստանտինովնան իրեն թունավորված զգաց: Այնպիսի հոգեվիճակում էր, ասես Վասիլի Խրիստոֆորովիչին մահացու հիվանդություն էին ախտորոշել, եւ ինքը նրան ոչնչով չէր սփոփել կյանքի վերջին շաբաթներին, եւ որեւէ բան շտկել, փոխել այլեւս անհնար էր: Ամեն ինչ հանկարծ գլխիվայր շրջվեց նրա հոգում. եթե առաջ համարում էր, որ կյանքը չի ստացվել, քանի որ ամուսինն իրեն քիչ էր սիրում, կոպիտ էր, անտարբեր իր ցանկությունների հանդեպ, ապա հիմա ամեն ինչի մեղավորը միայն իրեն էր համարում:

- Այդ ես էի քիչ սիրում նրան,- ասում էր իրեն՝ գիշերներն արթնանալով ու տենդագին նայելով շուրջը:- Ես չէի հասկանում, գնահատում նրան ու քիչ հավատարիմ էի նրան: Հենց այդպես՝ քիչ հավատարիմ: Շատ անհավատ: Ահա թե ով եմ ես: Բայց եթե նրան մի բան պատահի,- չգիտես ում ուղղված սպառնալիքով ասում էր նա,- ես չեմ ապրի: Վերջ կտամ կյանքիս, այդպես էլ իմացեք:

Բնակարանը լուռ էր, զգոն, իրերը լուրջ նայում էին նրան՝ հայելիով հսկա պահարանը, պահարանիկը, սպասքապահարանը, եւ կնոջը թվում էր՝ հասկանում ու կարեկցում են իրեն: «Այդպե՛ս, Վե՛րա, այդպե՛ս» թիկթակում էր պատի ժամացույցը: Խորդենին ծգվում էր դեպի բարձր առաստաղը, համարյա աննկատ ճոճվում էր ջահը. Վերա Կոնստանտինովնան միայն հիմա հասկացավ, թե որքան է սիրում այդ տարածքը, որովհետեւ այն հիշում է ամուսնուն, պահպանում նրա ոտնածայները, ձայնը, կարոտում է նրան, զայրանում եւ ուզում, որ նա վերադառնա: Նկատեց, որ ամուսնու մեկնելուց հետո դռները սկսել են դժվար բացվել, հատակի տախտակները ճռռում են ու վառարանը ծուխ է անում, ուզում էր գրել նրան այդ ամենի մասին, պատմել, թե ինչքան մարդ է սպասում նրան, քանզի այդ իրերն էլ մարդիկ էին, ժողովուրդը, որին նա պաշտպանում էր, պաշտպանում էր ոչ թե հսկա, անհասկանալի, միայն քարտեզին կամ պատմության զնգուն արձագանքներում գոյություն ունեցող Հայրենիքը, այլ ահա այս հրաշք, ջերմ տունը, որպեսզի ոչ ոք չգա ու չավերի: Կարծես սկսել էր հասկանալ պատերազմի թաքուն իմաստը, բայց հերիք է վերցներ գրիչը ու ոչինչ չէր կարողանում գրել: Սրտով զգացածը անստույգ էր թղթին, ու նրան թվում էր ամուսինն իրեն ճիշտ չի հասկանա, կբարկանա, կհանդիմանի ու չի հավատա կնոջ հետ կատարվածին: Վերա Կոնստանտինովնայի վերջին հույսն ու ապավենն այն էր, որ վերջին ամիսների մերձությունը Վասիլի Խրիստոֆորովիչի հետ կավարտվի հղիությամբ, բայց ուշացած արյունը եկավ արցուքների փոխարեն եւ շաբաթից ավելի տանջում էր նրան, այն-

պես, որ անկողնուց վեր կենալ չէր կարողանում: Ուզում էր կանչել Ուլյային, գանգատվել իր մենակությունից, բայց խորթ աղջիկը սովորականից անբարեհաճ ու սառն էր:

Վերա Կոնստանտինովնան հիմա խառը զգացումներով էր նայում փշոտ, անսիրտ աղջնակին, որին անծանոթ էին հասուն տագնապներն ու վախը: Նրանք այնքան օտար էին իրար, որ տարբեր ժամերի էին ճաշում եւ ընթրում ու հերթով էին կարդում ճակատից ստացած չոր, զուսպ նամակները, որոնցից անհնար էր հասկանալ ինչպես է իրենց տունը լքած տղամարդը: Բայց Ուլյան այդ տողերում էլ խորթ մոր մեղքն էր տեսնում. եթե հայրը սիրեր, այլ կերպ կգրեր: Նույնիսկ այն, որ Վերա Կոնստանտինովնան ապրիլին գթության քույրերի դասընթացներ ընդունվեց, չհաշտեցրեց երկու կանանց, այլ ավելի բաժանեց իրարից՝ վերածելով մրցակիցների: Ավելի ճիշտ, իրեն վրավորված զգացող Ուլյան էր մրցում մայրացուի հետ, իսկ Վերա Կոնստանտինովնան խոնարհությամբ տանում էր նրա բոլոր վիրավորանքները ու պատրաստվում ծանր, անմաքուր աշխատանքի: Բայց Ուլյան այստեղ էլ ոչնչի չէր հավատում, հոր կնոջ որոշումը նրան հերթական թատերային քայլն էր թվում, կեղծավորություն, եւ նա համոզված էր, որ շուտով ամեն ինչ կձանձրացնի երես առած տիկնոջն, ու նա կվերադառնա իր պապայանսներին ու պատկերազարդ հանդեսներին, բայց քանի դեռ Վերա Կոնստանտինովնան սովորում էր խնամել հիվանդներին, Ուլյային մնում էր միայն անզոր երազել ու հիշել, թե ժամանակին ինչպես էր սուրում հեռավոր անտառներով, ճահիճներով ու լճերով, որոնցից այն կողմ հիմա կռվում էր հայրը:

Բայց դրանք լրիվ ուրիշ մտքեր էին, որոնց մեջ ուրախալի ոչինչ չէր մնացել: Ուլյայի ձեռքերն ու ոտքերը ծանրացել էին, եւ նա ոչ թե վազել, հազիվ էր քայլում եւ դարձել էր ինքնամփոփ, մանրախնդիր ու անմարդամոտ: Վատ էր սովորում, եւ նույնիսկ գիմնազիայի դասարանական դաստիարակչուհին, որ առաջ երբեք դիտողություն չէր արել նրան, հիմա ամոթանք էր տալիս. «Այսպիսի ժամանակներում, մադմուազե՛լ, ինչպե՞ս կարելի է չսովորել աորիստոսը: Ստիպված եմ լինելու խոսել մադամ Կոմիսարովայի հետ»:

Նախկինում պառաված օրիորդի մանրախնդրությանը ներողամիտ վերաբերվող Ուլյան չարանում ու կոպտում էր ոչ պակաս հաջողությամբ, քան ժամանակին Ելիցի գիմնազիայի հին եգիպտերենի ուսուցչին՝ գիմնազիստ Լեգկոբընտովը:

- Միայն փորձե՛ք, կզոջա՛ք,- եւ մի այնպիսի բան կար աչքերում ու ձայ-

նի մեջ, որ դաստիարակչուհին նահանջում ու տխրությամբ մտածում էր, թե ինչ կատարվեց ու դեռ ինչեր են սպասում անհնազանդ, կոպիտ, վաղ հասունացած այդ աղջնակների սերնդին:

Դաստիարակչուհին խիստ կրոնասեր ու զգայուն կին էր եւ այդ օրերին ապրում էր վերջին ժամանակների զգացումով ու փութացնում դրանց գալուստը՝ ուրախանալով ապոկալիպսիսի ահեղ նախանշաններով, որովհետեւ դրանցից անդին, բոլոր տառապանքներից ու սարսափներից հետո տեսնում էր երկրորդ գալուստն ու նոր Երուսաղեմը: Գիտեր, որ միայն ինքը չի այդպես զգում, եւ աշխարհում ինչ-որ տեղ կան հարյուր քառասունչորս իր պես հավատարիմ, մեռյալների հարությունն ու գալիք դարի կյանքը իր պես հուսացողներ, եւ հոգու խորքում երջանիկ էր, որ իրեն բարի բախտ է վիճակվել լինելու վերջին քրիստոնյաների թվում, եզակիների, որոնց չի կլանի ծովի խորքից հայտնված Գազանը: Ընտրյալների նվիրական ցանկից ոչ մեկին չէր ճանաչում, բացի մի թշվառ պառավից, որն էլ հավատի էր բերել դասարանական դաստիարակչուհուն եւ, նախանշանները պարզելով, նրա համար բացել սպասվող աշխարհավերջի գաղտնիքը: Պառավը ողորմություններով էր ապրում, երբեմն տեւական ժամանակով անետանում Պետերբուրգից, ուխտ էր գնում՝ հեռավոր Սիբիր, Կովկաս, Սուրբ երկիր ու Սոլովկի, վերադառնալով՝ իջեւանում էր դաստիարակչուհու մոտ, ժլատ բառերով պատմում ուխտագնացությունից եւ հաճույքով լսում գիմնազիայի մասին նրա պատմությունները:

Լուսանկարներն էր նայում, հարցեր տալիս ուսուցիչների, աշակերտուհիների, նրանց ծնողների, աղջիկների փոխհարաբերությունների, սիրահարությունների մասին, եւ աշխարհիկ կյանքի հանդեպ սովորաբար անտարբեր կնոջ այդ հարցերը զարմացնում էին դաստիարակչուհուն, բայց չէր համարձակվում ցույց տալ շփոթմունքը: Բայց ամենից ավելի նրան ցնցեց, որ կինն իրականում այնքան ծեր չէր, որքան թվում էր: Մի անգամ ժամանակից շուտ տուն գալով՝ դաստիարակչուհին ճգնավորի շղթաներ տեսավ նրա դեռ ամուր մարմնին: Մուրացկանն արգելեց խոսել դրանց մասին, իսկ երբ դաստիարակչուհին զմայլանքով ասաց, որ ինքն էլ է ուզում շղթաներ կրել, սառն ու գոռոզ նայեց նրան, ճիշտ ինչպես երբեմն տնօրինուհին էր նայում, ու դաստիարակչուհին երկնչեց: Բայց իսկապես սարսափեց, երբ մուրացկանը մատի շարժումով մոտ կանչեց ու ցույց տալով աշակերտուհիներից մեկի լուսանկարը՝ ինչ-որ բան շշնջաց, ինչից դաստիարակչուհին ցնցվեց, անվստահ նայեց հյուրին, չդիմացավ ու հարցրեց. «Ինչպե՞ս, մի՞թե նա էլ»,- ապա լռեց ու սկսեց արագ գլխով անել:

4

Վերա Կոնստանտինովնայի դասընթացներում քիչ չէին ազնվատոհմ կանայք, բայց ի զարմանս բոլորի, առավել եւս իր՝ փափկասուն Վերան, որին մայրը մանկուց փնթոշ ու անճարակ էր համարում, որին բանի տեղ չէր դնում ամուսինը (ու եթե դներ, եթե նրա մեջ տեսներ ավելին, քան պարզապես էգն է, գուցե եւ ամեն ինչ այլ կերպ լիներ), որին արհամարհում ու սառը եսասեր էր համարում երես առած խորթ աղջիկը, նույն ինքը՝ մադամ Կոմիսարովան ամենաընդունակ աշակերտուհին դուրս եկավ: Մյուսներից քիչ էր խոսում հայրենասիրական պարտքի ու քրիստոնեական գթասրտության մասին, ինչի համար տիկնայք եւ օրիորդները մեղադրում էին նրան, իրեն անկախ ու սառն էր պահում, ոչինչ չէր պատմում ընտանիքի մասին, թեեւ ընկերուհիներն արագ մտերմացան նրա հետ: Սակայն դժգոհ ձայները լռեցին, երբ սկսվեց իսկական աշխատանքը: Ոգեշունչ հայրենասերներից ոչ մեկը չէր կարողանում նրա պես հմուտ վիրակապել կամ չորացնել վերքը, ոչ մեկը չուներ նրա ինքնատիրապետումը արյուն, թարախ ու մեռած մարմիններ տեսնելիս: Ոչ մեկը նույն հանգստությամբ վիրահատարանից չէր հանում կտրած վերջույթներն ու անկողնային հիվանդների սենյակից՝ աղտեղություններով թասը: Ոչ մեկին այդպես չէին գովում, եւ ոչ մեկն այդքան հանգիստ չէր վերաբերվում գովեստներին՝ բնավ չմեծամտանալով ու կեղծ շփոթմունք չխաղալով, այլ ընդունելով հավուր պատշաճի: Իզուր չէ, որ Վերա Կոնստանտինովնան երեխա ժամանակ սովորում էր բարակ թելերի կծիկներ քանդել: Նա հրաշալի օգնական էր, կես խոսքից հասկանում էր վիրաբույժներին, ուժեղ, ճարպիկ ու շատ նուրբ, զգայուն ձեռքեր ուներ, ասես սիրուհի լինելու նրա միակ տաղանդը գտել էր իր իսկական տեղը: Բոլոր քննությունները գերազանց հանձնեց, եւ երբ եկավ նշանակումների պահը, դասընթացների պետը միայն նրան ծառայության առաջարկեց Ցարսկոյե սելոյի հոսպիտալում, որտեղ աշխատում էին կայսրուհին ու մեծ իշխանությունները: Ժողովրդավար Վերա Կոնստանտինովնայի առաջին մղումը հրաժարվելն ու ավելի հասարակ տեղ խնդրելն էր, բայց նրա բարի դաստիարակը թափ տվեց ձեռքը.

- Ոչ մի դեպքում, տիրուհի՛: Ի՞նչ քմահաճություններ են: Ումից ասես, բայց ձեզնից չէի սպասի: Բարի եղեք գնալ ուր նշանակում են:

Եվ նա ենթարկվեց, ուրիշ ինչ էր մնում: Ասենք, աշխատանքն էլ ամեն տեղ աշխատանք էր, եւ թագուհին ու դուստրերն էլ առանձնապես չէին հետաքրքրում Վերա Կոնստանտինովնային: Թագուհին մի քանի անգամ հա-

ճելի բառեր ասաց նրան, տոհմիկ տիկնայք վերեւից չէին նայում, մեղմ ու պարզ էին նրա հետ, բայց մեխանիկի կինը նկատեց, որ անտարբեր է այն ամենի հանդեպ, որ առաջ այնպես ցանկալի ու հրապուրիչ էր թվում: Միայն վիրավորներին էր հետեւում ու հոգում միայն նրանց մասին: Վերա Կոնստանտինովնան համոզված էր, որ վաղ թե ուշ նրանց մեջ կտեսնի նաեւ ամուսնուն: Պատկերացնում էր այդ տեսարանը. նրան կբերեն ծանր, բայց ոչ մահացու վիրավորված, ինքը կխնամի նրան, ամուսինը սկզբում չի ճանաչի կնոջը, հետո կճանաչի, եւ ինքը կկարողանա լավացնել նրան:

- Եվ այդ ժամանակ ես նրա լավագույն կինը կլինեմ աշխարհում: Եվ այդ ժամանակ ոչ մի տեղ չեմ թողնի նրան: Ոչ մի պատերազմ: Իմ ինչի՞ն է այս պատերազմը: Իմ ինչի՞ն է այս հայրենիքը, որի մասին սրանք խոսում են, եթե իմ հայրենիքն իմ ամուսինն է:

Այդպես էր խոսում ինքնիրեն, երբ ծանր քնից հետո ընկնում էր պետերբուրգյան կույր օրվա մեջ, այդ էր շշնջում կրկին քնի մեջ թաղվելիս, ուր ոչ մի երազ չէր տեսնում, այդ մտքերով էր ապրում, անխոնջ աշխատում՝ իրեն ամբողջովին տալով հիվանդներին, ասես նրանցից ամեն մեկի մեջ էր ամփոփված այն մարդու պատկերը, որի մասին անդադար մտածում եւ իր հոգատարությամբ օգնում նրան: Այդ բոլոր խեղված մարդիկ՝ այնքան տարբեր, անօգնական, անզոր, հուսահատ ու հույսը չկորցրած, հեզ, լկտի, բարի, չար, կապված էին իրար հետ, եւ մեկին խնամելով՝ Վերա Կոնստանտինովնան օգնում էր մյուսներին, համբերատար վերաբերվում իր հասցեին արված նրանց կտակներին: Նրա համար տղամարդկային հետաքրքրությունն իր արտաքինի հանդեպ, մերթ կոպիտ, մերթ քնքուշ հպումները մարմնին, ամենը, որ դեռ վերջերս ջղաձգման, ամոթի կամ զայրույթի պատճառ կդառնար, վիրավորների առողջանալու նշան էր եւ ոչինչ ավելի: Եվ ինքն էլ բնավ չէր նեղվում ինչ վերք էլ մշակելու լիներ՝ սովորել էր նրանց վերաբերվել որպես տառապող մարմնի, որին տառապանքն ազատում էր ամաչելու անհրաժեշտությունից եւ դարձնում անմեղ, ինչպես փոքրիկ երեխաներինը: Այդ աշխատանքը նրա համար ելք էր դեպի չիրականացած մայրություն, եւ Վերա Կոնստանտինովնան զգում էր, որ իր մարմնում էլ են փոփոխություններ կատարվում. սովորել էր համարյա չքնել, երկար ժամանակ կարող էր չուտել, հոգնել չգիտեր, իսկ անհրաժեշտության դեպքում նախապես էր ճաշում կամ քնում եւ ասես վերադարձնում էր պարտադրված անգործության տարիներին կուտակված պարտքը:

- Դուք ձեզ չեք խնայում,- մի անգամ չոր նկատեց վիրաբույժը, որին վերջին ժամանակները օգնում էր:

Դա իգական սեռի մի խիստ տարօրինակ արարած էր, որն իր մասին միայն արական սեռով էր խոսում: Իշխանական տիտղոս ուներ ու Վերայի անունից, բայց խնդրում էր իրեն Սերգեյ ասել, տղամարդու հագուստ էր կրում եւ անընդհատ ծխում էր, այնպես, որ Վերա Կոնստանտինովան, որը հիմա առանց վախենալու կարող էր տրվել իր փոքրիկ մեղքին, քիչ էր մնում թողներ ծխելը: Իշխանուհուն բժշկության խոշորագույն լուսատու էին համարում, շշուկով խոսում էին, որ կարող է կարել-կպցնել պոկված ոտքը, որ անմարդկային ուժի մատներ ունի, եւ աչքերը մաշկի միջով տեսնում են մարդու ներքին օրգանները, բայց ծանր բնավորության տեր էր ազնվականուհին: Մի անգամ վիրահատության ժամանակ, երբ կայսրուհին էր օգնում, իշխանուհի Վերան գոռաց օգոստափառ անձի վրա, եւ թագուհին, որը դեմ էր այդպիսի բաներին, լռեց:

Բայց ամենասարսափելին սկսվեց այն ժամանակ, երբ Վերա Կոնստանտինովնան նկատեց, որ սարսափելի այրակերպ կինը մի տեսակ տարօրինակ, հարցախույզ քնքշությամբ է նայում իրեն ու փորձում է դիպչել իր հանճարեղ մատներով: Մի անգամ նա Վերա Կոնստանտինովնային կարգադրեց հանել գլխաշորը, եւ իշխանուհու աչքերը մշուշվեցին գթության քրոջ ուսերին թափված ծանր, ոսկեգույն վարսերի տեսքից: Չնայած ապրած երեսուն ու ավելի տարիներին եւ ամենաժամանակակից գրականությունն ըմբռնելու փորձերին, մադամ Կոմիսարովան միայն լսելով գիտեր լեսբիական սիրո մասին, եւ այդ հայացքը շփոթեցրեց ու մտածմունքի մեջ գցեց նրան:

Սիրահետումներն ավելի ու ավելի համառ ու բուժքրոջ ստորադաս վիճակի պատճառով՝ ավելի ծանրակշիռ էին դառնում, եւ Վերա Կոնստանտինովնան, որ պատրաստ էր կրել նոր աշխատանքի բոլոր դժվարությունները, այդպիսի փորձության անպատրաստ դուրս եկավ: Մոտավորապես պատկերացնում էր ինչպես պատասխանել հետամտող տղամարկանց, բայց կանա՞նց: Եվ ինչպես դիմադրես մեկին, որ դիմացդ կանգնած, ծանր, աղոտ հայացքը չկտրելով՝ բանաստեղծություն արտասանելու պես երգեցիկ կրկնում է.

- Դուք շատ դժբախտ եք: Դժբախտ եք ընտանեկան կյանքում: Ձեզ պաշտպանություն է հարկավոր: Դուք շատ եք տառապել տղամարդկանց պատճառով, որոնք չարիք են բերել ձեզ: Դուք այլեւս խաղալիք չպիտի լինեք նրանց կոպիտ ձեռքերում եւ մշտապես մեղքի զգացում ունենաք նրանց պատճառով:

Վերա Կոնստանտինովնային այդ ճշմարիտ խոսքերը սկզբում զայրացնում էին, հետո սկսեցին վախեցնել եւ, ի վերջո, զինաթափեցին: Իր մեջ ուժ չէր գտնում դիմադրելու վիրաբուժական փաղաքշանքներին, բայց փոխարենը զգում էր որքան դժբախտ ու միայնակ է այդ խոսքերն արտասանողը, եւ վերջին ամիսներին տառապյալներին սփոփելուն ու նրանց քմահաճույքները կատարելուն վարժված Վերա Կոնստանտինովնան զգում էր, որ փափուկ ու ենթարկվող է դառնում, ինչպես իրեն խեղդող բարձը:

«Աստվա՛ծ իմ, ո՞ր մեղքիս համար,- մտածում էր նա՝ վերադառնալով իր ցուրտ տունը, որտեղ նրան սպասում էր չար խորթ աղջիկը, որ քթին փակի իր սենյակի դուռը կամ կոպտի հերթական անգամ:- Ի՞նչ սարսափելի բան եմ արել, որի համար ինձ անընդհատ հետապնդում են ինչ-որ անհասկանալի մարդիկ: Ոչ մեկին չարիք չեմ կամեցել, չէ՛, մի անգամ կամեցել եմ: Բայց մի անգամ էլ պատժվել եմ դրա համար: Իսկ նրանք, մեկ է, ժամանակ առ ժամանակ ինչ-որ բան են պահանջում ինձնից: Ինչ-որ փոքրիկ չար չարքեր, ճանճեր, եգիպտական մորեխ: Եվ ինչո՞ւ պիտի անվերջ կախված լինեմ այլոց ցանկություններից, քմահաճույքներից, խենթություններից: Չե՛մ ուզում, չե՛մ լինի, չե՛մ կարող...»:

Բայց հերիք է վերադառնար լազարեթ ու տեսներ իշխանուհուն, չուզելու, չլինելու եւ չկարողանալու վճռականությունն անհետանում էր, Վերա Կոնստանտինովնան կակղում էր, թուլանում ու մտածում էր այն մասին, որ կամ պետք է զիջի, ենթարկվի, կամ ուժ գտնի իր մեջ ու հեռանա, ինչ էլ որ ասելու լինի դասընթացների իր դաստիարակը, ու երեւի այդ երկուսից որեւէ մեկով էլ ամեն ինչ ավարտվեր, եթե տարաբախտ գթության քրոջը չնկատեր հենակներով տեղաշարժվող մի բարեհամբույր թմբլիկ կին՝ թագուհու ֆրեյլինան, թե ֆավորիտուհին, ում Աննուշկա էին ասում: Շատերն այդ Աննուշկային չէին սիրում, ինչ ասես խոսում էին նրա մասին, խարդավանքներ նյութող ու երեսպաշտ կոչում, հիմար ու խենթ, թագավորին սիրահարված գիմնազիստուհի, կեղտոտ գեղջուկի հոմանուհի, մոլագար, բայց նա հասկացավ Վերա Կոնստանտինովնային պատուհասած աղետը:

- Աղավնյա՛կս, կարճ կտրեք ձեր մազերն ու հեռու մնացեք լիտվուհուց: Պատկերացնո՞ւմ եք, ինձ էլ էր ուզում որսալ:

- Չե՞զ,- հարցրեց Վերա Կոնստանտինովնան ու հարազատի պես նայեց խեղված Աննուշկային:

- Ի՛նձ, ի՛նձ,- պատրաստակամ գլխով արեց նա:- Իշխանուհի՛ է, բա չէ՛: Այդ չուխոնցիների ամեն մի խոզարած իրեն իշխան է համարում: Սպանդանոց պիտի քշեին դրան, ոչ թե մարդկանց բուժելու: Թագուհին ինձ բար-

կացնելու համար բարեհաճ է նրա հանդեպ, իսկ ես մինչեւ օրերիս վերջը նրա պատճառով հենակներով եմ քայլելու:

Վերա Կոմստանտինովնան լսել էր այդ պատմությունը: Ձմռանը դժբախտություն էր պատահել Աննուշկային. Պետերբուրգից Ցարսկոյե մեկնող գնացքը դուրս էր ընկել գծերից, ու մի քանի վագոն ջախջախվել էր: Կասկածում էին, որ ահաբեկչություն է, քանի որ ահագին մարդ էր տուժել: Աննուշկան պետք է որ մահանար ցավային ցնցումից, բայց հրաշքով ողջ մնաց: «Աստված փրկեց»,- համոզված ասում էր բոլորին, բայց իշխանուհու արած վիրահատությունն անհաջող դուրս եկավ, եւ Աննուշկան դրա մեջ բժշկողի չար կամքն էր տեսնում: Նա խիստ աստվածասեր էր եւ առաջ ու հիմա էլ ուխտ էր գնում հեռավոր վանքերը, հասնում Սիբիր, հյուրընկալում ուխտավորներին, հայտնի էր արտակարգ զրուցասիրությամբ, բարի էր ու բարեհամբույր, բայց քչերին էր մոտ թողնում, եւ մի անգամ Վերա Կոնստանտինովնային արժանացրեց իր ամուսնության պատմությունը լսելու պատվին, որը դառը հետք թողեց մեխանիկի կնոջ սրտում ու բացեց այն աշխարհը, որը մինչեւ բոլորովին վերջերս արհամարհում էր:

- Ինձ թագուհին ամուսնացրեց,- անշտապ պատմում էր Աննուշկան՝ Վերա Կոնստանտինովնային անգլիական թեյ հյուրասիրելով Ցարսկոյե սելոյի իր փոքրիկ տնակում, որ լազարեթից հեռու չէր:- Դա հեշտ չէր նրա համար: Արդեն մի քանի տարի նորին մեծության ֆրեյլինան էի, շատ էր կապվել ինձ հետ ու չէր ուզում բաժանվել: Համարյա ընկերուհիներ էինք, ու թագավորն էլ շատ բարի էր իմ հանդեպ: Բայց երբ քսաներեք տարիս լրացավ, նորին մեծությունները խոսեցին ծնողներիս հետ ու փեսացու գտան ինձ համար: Առաջին իսկ տեսակցությանն այնպե՛ս վատացա: Սառն էր, օտար, հեռու, ու կարծես ես էլ իրեն բոլորովին դուր չէի եկել: Չափազանց պարզունակ ու հիմարիկ էի նրա համար: Իսկ նա ծովային սպա էր, Ճապոնական պատերազմի հերոս ու նաեւ պալատական պարետի զարմիկը: Հարսանիքի նախօրեին նորին մեծաությանն աղերսեցի, որ թույլ տա ընդմիշտ ֆրեյլինա մնամ իր կողքին: «Դու քո տունը պիտի ունենաս, զավա՛կս,- ասաց նա:- Ամեն ինչ լավ կլինի: Աստված չի թողնի քեզ: Իսկ մենք բարեկամներ կմնանք, եւ դու ինձ այցի կգաս ամուսնուդ հետ: Երբ երեխաներ ունենաս, ես նրանց կնքամայրը կդառնամ»: Հարսանիքն արեցին, իսկ հետո ամեն ինչ գնաց ոչ այնպես, ինչպես կարծում էր թագուհին: Երեւի չեք հավատա, բայց հենց առաջին գիշերվանից ամուսինս ոչ մի անգամ չմտավ իմ ննջարան, խուսափում էր ինձնից, լռում ու ոչինչ չէր բացատրում, իսկ ես չէի համարձակվում հարցնել կամ խոսել: Երբեմն կա-

տաղության պոռթկումներ էր ունենում, բղավում էր վրաս ու հայհոյանքներ տեղում: Մի անգամ նրան թվացել էր, թե պարահանդեսում սեթեւեթել եմ մեծ իշխաններից մեկի հետ, ու երբ վերադարձանք տուն, խփեց ինձ: Ապշած էի:

- Ի՞նչ,- ցնցվեց Վերա Կոնստանտինովնան:

- Առաջ ինձ թվում էր նման բան հնարավոր է միայն խուլ գյուղերում: Բայց այստեղ՝ սպան, ազնվականը քարշ էր տալիս մազերիցս բռնած, ապտակում, ինչպես հասարակ կնկա, այնպես, որ հետո մի ամիս ոչ մեկի աչքին չէի երեւում: Կպատկերացնեի՞ք այդպիսի բան, սիրելի՛ս:

- Կպատկերացնեի,- մրմնջաց Վերա Կոնստանտինովնան ու հիշեց գետը, որի ափով քայլում էր, բայց իր պատմությամբ տարված Աննուշկան չէր լսում նրան:

- Փորձում էի ձեւ անել ու նույնքան ուրախ երեւալ, ինչպես ամուսնությունից առաջ, բայց թագուհին նկատեց, որ տխուր եմ: «Աստվա՛ծ իմ, ինչպե՛ս ես տառապում, զավա՛կս, բայց ես քեզ կօգնեմ»: Ասացեք, ինչո՞վ կարող էր ինձ օգնել: Թույլ տար, որ բաժանվեմ ամուսնուցս ու երջանկություն փնտրեմ մեկ ուրիշի հե՞տ: Հասկանում էի, թե դա ինչ հարված կլիներ նորին մեծությունների համար: Առանց այդ էլ պալատում ինչ ասես խոսում էին իմ մասին: Ո՞չ, հասկանում էի, որ կործանված եմ ու ոչնչի հույս այլեւս չունեի: Ու չնայած ժամանակի ընթացքում ամեն ինչ կարգի ընկավ, ամուսինս մեկնեց Ծվեյցարիա եւ այնտեղ ամուսնացավ...

- Բայց ինչպե՞ս:

- Չգիտեմ,- գրգռված պատասխանեց Աննուշկան,- չգիտեմ ու չեմ ուզում իմանալ: Եվ խնդրում եմ, պետք չէ ընդհատել ինձ ու աննրբանկատ հարցեր տալ: Ես վերադարձա պալատ եւ այդ օրվանից ոչ մի տեղեկություն չունեմ նրա մասին: Ես այլեւս ֆրեյլինա չէի, այլ նորին մեծությունների մտերիմ բարեկամը, եւ այդ օրվանից իմ կյանքն ընդմիշտ կապված է նրանց հետ: Մտածում եք՝ մեծ հատուցում էր տառապանքներիս համար:

Վերա Կոնստանտինովնան ուզում էր ասել, որ այդպես չի մտածում, բայց չհասցրեց:

- Ա՛խ, ինչպե՛ս եք սխալվում: Դա իմ խաչն է: Կյանքը պալատում շատ ծանր է: Դուք երջանիկ եք, բարեկա՛մս, որ չգիտեք: Մարդիկ այնտեղ չար են, նախանձ, կեղծավոր: Ցանկացած գեղջկուհի երջանիկ է ցարական ֆրեյլինայից, առավել եւս՝ մտերիմ ընկերուհուց: Իսկ թագուհու հետ,- ձայնը իջեցրեց Աննուշկան,- բնավ հեշտ չէ: Հրաշալի կին է, մեծահոգի, ճշմարտասեր, մաքուր, ջերմ, սրտով եմ կապված նրա հետ, երկուսս էլ

երաժշտություն ենք սիրում ու երբեմն զուգերգում ենք,- իմ ձայնը կոնտրալտո է, նրանը՝ սոպրանո,- բայց եթե իմանայիք, թե որքան հաճախ է ջղային, անհանդուրժող, անարդար լինում... Ես հոգնել եմ այդ կյանքից ու շատ եմ մտածել վանք մտնելու մասին: Բայց ինչպե՞ս մենակ թողնեմ նրան: Չէ՞ որ, բացի ամուսնուց, երեխաներից ու ինձնից, ոչ ոք չունի:

«Այնքան էլ քիչ չի»,- մտածեց Վերա Կոնստանտինովնան:

- Ինչո՞ւ ոչինչ չեք ուտում: վախենում եք գիրանա՞ք: Իսկ ես արդեն ոչնչից չեմ վախենում:

Զարմանալի հաճելի դեմք ուներ՝ կլոր, մի քիչ թմրած, արտակարգ գեղեցիկ մաշկով ու շատ բարի կապույտ աչքերով: Աննուշկան ախորժակով կարկանդակ էր ուտում, գդալով խառնում թաք թեյը,- տաք չէր սիրում,- ու Վերա Կոնստանտինովնան զգում էր, որ նրանից հարմարավետություն, հոգատարություն, ջերմություն, բարություն է տարածվում, ինչպես հեքիաթային դայակներից: Նա նորից ուզեց խոսել իր դժբախտություններից, բայց տանտիրուհին առաջ ընկավ.

- Ես ոչ մի դեպքում չէի հաղթահարի այս բոլոր փորձությունները, բայց Աստված մի մարդու ուղարկեց ինձ, մի ուխտավորի՝ Սիբիրից: Երեւի լսել եք նրա մասին, բայց հաստատ միայն վատն եք լսել: Ա՛խ, մի հավատացեք, բարեկա՛մս: Այդ ամենը ճիշտ չէ: Միայն նրա աղոթքներով եմ դեռ կենդանի: Երբ հունվարին եղավ այդ ահավոր աղետը, մի քանի ժամ ուշագնաց պառկած էի մահացածների հետ: Հետո գտան, հանեցին մարմինների կույտից, տարան Ցարսկոյե, ու բոլորը մտածում էին, որ շուտով կմեռնեմ: Խուլ խոստովանություն արեցին, հաղորդություն տվեցին, իսկ հետո հայտնվեց նա: Ծնողներս չէին ուզում ներս թողնել, հեքիմը փորձում էր դուրս անել, բայց նա, մեկ է, մտավ ներս, երկար աղոթեց, հետո բռնեց ձեռքս ու սեւեռուն աչքերիս նայելով՝ ասաց. «Կապրի, բայց հաշմանդամ կմնա»: Հետո անցել էր հարեւան սենյակ եւ ուշաթափվել:

Վերա Կոնստանտինովնան ուզում էր հարցնել Աննուշկային, թե որտեղից կարող էր իմանալ այդ ամենը, եթե անգիտակից վիճակում է եղել, բայց վախեցավ, որ նորից չափից դուրս հետարքրասեր կթվա:

- Զարմանալի մարդ է, ոչ ոքի նման չի: Այդպիսին միայն հայր Հովհան Կրոնշտադտցին էր, որ երեխա ժամանակ փրկել էր ինձ, երբ ծանր հիվանդ էի, բայց սուրբ հայրն ավելի չոր ու խիստ էր: Իսկ սա շատ տարօրինակն է. գինի է խմում, պարում, մութ մարդկանց հետ ընկերություն անում, ընդունում է թեթեւամիտ կանանց: Այդ ամենը շատ է անհանգստացնում թագուհուն, բայց ոչինչ ուղիղ չի համարձակվում ասել, որ հանկարծ չվի-

ռավորի: Իսկ ես գիտեմ, որ նրան ոչ մի վատ բան չի պատահի: Կատարելապես անկիրք մարդ է, այն բարձունքում, ուր մեզնից ոչ մեկը չի կարող հասնել, եւ ինչ անհնար է մյուսների համար, նրա համար հնարավոր է: Դրա համար էլ ատում են նրան: Ամ՛խ, ինչպե՛ս են ատում: Ու նրա հետ էլ՝ ինձ: Դուք, իհարկե, կցանկանաք խոսել նրա հետ: Նրան շատերն են ուզում տեսնել, ու խնդրում են միջնորդեմ, բայց ես բոլորին մերժում եմ: Պետք է խնայել, ի վերջո օրական մի քանի տասնյակ մարդ է ընդունում: Գալիս են անվերջանալի հոսքով, ու բոլորը ինչ-որ բան են ուզում նրանից:

- Ես...

- Իսկ դուք տեսնում եմ շատ լավն եք, դուր եք գալիս ինձ, եւ ես կհոգամ ձեր մասին: Բայց մի հարց էլ կա,- շշուկի անցավ Աննուշկան:- Առաջ, երբ առողջ էի, կարողանում էի հետեւել նրան:

- Ինչո՞ւ հետեւել,- տագնապեց Վերա Կոնստանտինովնան:

- Ասում էի, չէ՞- ավելի գրգռված պատասխանեց Աննուշկան,- որ շատ տարօրինակ կյանքով է ապրում, իսկ դա անհանգստացնում է նորին մեծությանը: Նրան պետք է զսպել: Բայց ես հիմա չեմ կարող, տեսնում եք, նույնիսկ նրա բնակարան բարձրանալ չեմ կարողանում: Իսկ դուք այդ դերում, կարծում եմ, պիտանի կլինեք:

- Ինչո՞ւ եք այդպես որոշել:

- Ես լավ եմ հասկանում մարդկանց,- առարկեց Աննուշկան,- ու տեսնում եմ, որ բավական նրբանկատություն ու խելք ունեք, որպեսզի նրան հետ պահեք չմտածված արարքներից, անցանկալի ծանոթություններից ու հանդիպումներից, բայց ամենագլխավորը՝ ամեն ինչ կպատմեք ինձ. կդառնաք իմ ականջներն ու աչքերը: Այնտեղ, ցավոք, ամեն ինչ բավական բարդ է, շատ շատերն են հիմշտվում շուրջը:

- Իսկ եթե հրաժարվե՞մ,- հարցրեց Վերա Կոնստանտինովնան:

- Խորհուրդ չէի տա,- մրմնջաց Աննուշկան քաղցր երգեցիկ ձայնով, ինչից մեխանիկի կինը փշաքաղվեց:

Այդպես Վերա Կոմիսարովան իր կամքին հակառակ ծանոթացավ նրա հետ, ով ժամանակին զբաղեցրել էր ամուսնու մտքերը, եւ ում մասին ժամանակ առ ժամանակ, ասես հրամանով սկսում էին գրել թերթերը՝ այսինչ տեղն է եղել, անկարգություններ արել այնինչների հետ, աղմուկ բարձրացրել, պարել, կռվել, խմել, արտաքսվել, իսկ հետո լռում էին, ասես նա երբեւէ չէր էլ եղել, ու թվում էր՝ մի անտեսանելի ձեռք կա նրա հայտնությունների եւ անհետացումների թիկունքում:

Բայց դա բոլորովին չէր հուզում Վերա Կոնստանտինովնային: Նա հի-

մա ավելի հազվադեպ էր լինում տանը, արհամարհական արտահայտությունն այլեւս չէր թառում սիրունիկ դեմքին, ասենք, դեմքն էլ էր փոխվել. ոչ թե ծերացել, այլ խորացել էր: Կրոնասեր էր դարձել, բայց աննկատելի, չընդգծված, ու չնայած տանը սրբապատկերներ, մոմեր, կանթեղներ էին հայտնվել, դրանք պահված էին կողմնակի աչքերից, ու միայն երբեմն Ուլյան լսում էր, թե խորթ մայրն ինչպես է վեր կենում գիշերներն ու աղոթում, բայց նույնիսկ դա չէր կարող խղճահարություն կամ հարգանք արթնացնել նրա մեջ: Միայն թե Վերա Կոնստանտինովնան այլեւս ոչ խղճահարության կարիք ուներ, ոչ հարգանքի: Նրա հետ կատարվածը դժվար կլիներ կրոնական հեղաշրջում անվանել: Նույնիսկ եկեղեցի չէր գնում. ինչի՞ն էր այդ եկեղեցին, որով լցոնել էին փոքրիկ Վերայի մանկությունն ու կուսությունը: Ի՜նչ օգուտ... Եկեղեցին ոչ օգնեց նրան, ոչ պահպանեց: Իսկ այստեղ ամեն ինչ ուրիշ էր, բնազդային, գիշերային մղձավանջի հանդեպ երեխայի վախի նման, գլուխը հարվածից պաշտպանող թույլ ձեռքերի շարժման պես: Վերա Կոնստանտինովնան պետք է լցներ այն անդունդը, որ պատերազմից առաջ մի գիշեր բացվել էր նրա առաջ, խորացել հիշողության մեջ ու ոչ մի կերպ բաց չէր թողնում, պետք է մոռանար գիշերային խավարում հայտնված սքանչելի ու սարսափելի աչքերը, պաղել անտառային հրդեհից ու տաքանալ զայրացած երկնքից վրան թափված սառցահեղեղից հետո, եւ դա հնարավոր էր միայն այդտեղ, այդ տանը: Ինչ էլ որ լիներ ամռանը կատարվածը՝ զառանցանք, երազ, Աստծո պատիժ, այնքան սարսափելի էր, այնքան անտանելի, ասես ինքն էլ էր երկաթուղային աղետի ենթարկվել, որ փշրել էր նրան, խեղել ու դարձրել հաշմանդամ: Նա այլեւս չէր վախենում վիրահատարանի սարսափելի իշխանուհուց, որն, ինչ-որ բան զգալով, հանգիստ էր թողել նրան: Նույնիսկ Աննուշկան՝ իր լպրծուն շատախոսությամբ ու փոքրիկ տնակով, պետք չէր Վերա Կոնստանտինովնային եւ այլեւս չէր վախեցնում իր գեղգեղանքով: Հիմա նրան արդեն ընդհանրապես ոչինչ չէր կարող վախեցնել: Նա ապրում էր մի զգացողությամբ, որ անցած մի քանի ամսում փոխվել է հոգին ու մարմինը լցնող նյութի բաղադրությունը, ու բավական է փորձեր դիմել նախկին Վերայի գիտակցությանը,- ի՜նչ դատարկ բան, ընդամենը փորձել էր դավաճանել ամուսնուն, եւ նույնիսկ դա չէր կարողացել, իսկ նա անտաշի պես պահեց իրեն, ռամիկի, որ գաղափար չունի, թե ինչպես պետք է վարվել ազնվազարմ, նրբագեղ կնոջ հետ,- անմիջապես հիշողության մեջ հայտնվում էր երկնքից գլորվող լուսնի անհաստատ լույսի տակ ապրած ողջ նվաստացումը, վառվող անտառը, խորթ աղջկա արյունոտ մարմինը՝ ամուսնու

ձեռքերին, որսորդի ճերմակած շրթունքները, գեղջուկ կանանց անհագ հետաքրքրասիրությունը, Պելագեյայի ատող աչքերը: Վերա Կոնստանտինովնան փախչում էր այդ հիշողություններից՝ հասկանալով, որ եթե չլիներ պատերազմը, աշխատանքը լազարեթում՝ արյան, թարախի ու մարդկային արտաթորանքների մեջ, կսկսեր խմել, մորֆի օգտագործել կամ իրար ետեւից փոխել տղամարդկանց. աշխատանքը փրկեց:

Բայց ամենից ավելի երախտապարտ էր այն մարդուն, ում ձեռքն էր հանձնել իրեն, եւ որը խաղաղություն էր տվել նրան: Ոչինչ չէր հարցնում, ոչնչի համար չէր կշտամբում կնոջը: Երբ երկար հերթում կանգնած մարդկանց չար հայացքների տակ Գորոխովայա փողոցի կեղտոտ սանդուղքով բարձրացավ նրա բնակարանը, եւ ուղեկցեցին պարզ կահավորված, սրբապատկերներով ու կանթեղներով հյուրասենյակ, Վերա Կոնստանտինովնան երկար ամիսների ընթացքում առաջին անգամ կարողացավ լացլինել՝ ավելի առատ արցունքներով, քան ժամանակին նրա փոքրիկ խորթ աղջիկը՝ Շելոմի ափին: Բայց խանդաղատանքից չէ, վախից էր լացը: Տանտերը սկզբում բոլորովին դուր չեկավ նրան. այդ վայրի գեղջուկը, որ նախրապան Տրոֆիմին էր հիշեցնում. ուր որ է մի հիմարություն կասի կամ որեւէ անշնորհք հարց կտա: Բայց նա լռում էր: Ամեն ինչ տեսնում էր, ամեն ինչ գիտեր, հասկանում ու պարզապես լռում էր՝ թողնելով, որ լաց լինի: Հետո բռնեց ձեռքը, նայեց աչքերի մեջ, մի քանի հասարակ բառ ասաց, ու Վերա Կոնստանտինովնան խաղաղվեց նրա ծանր հայացքի, խուլ ձայնի հնչյունների տակ: Այն խելահեղը, որ մոլեգնում էր հոգում, հանդարտվեց ու լռեց, սարսափելի մտքերը թողեցին նրան, լուծվեցին թափած արցունքների մեջ, որոնց փոխարինեց այդ մարդուն, նրա ձայնին, ձեռքերին ենթարկվելու քաղցր, մինչ այդ անծանոթ պահանջը: Գիտեր, որ այդ հնազանդումը չի կարող ունենալ եւ չի ունենալու սահմաններ, հասկանում էր, որ կանի ինչ նա կամենա ու երբ կամենա, հիշում էր ամեն ինչ, որ գիտեր նրա մասին, որ կարդացել էր թերթերում եւ սարսափել էր մինչ այդ, բայց, մեկ է, հավատով ու անդարձ գնաց նրա ետեւից, դարձավ մեկը նրանցից, որ շրջապատում էին նրան, ծառայում նրան, լսում նրան, հավատում ու նվիրված էին նրան: Եվ երբեք չէր դավաճանի նրան, չէր լրտեսի, չէր մատնի, վնաս չէր պատճառի: Եվ երբ դրա մասին խոսեց փոքրիկ տնակում, Անանուշկան չզարմացավ, միայն տխուր օրորեց գլուխը.

- Դուք է՞լ:

Վերա Կոնստանտինովնան հասկացավ, որ ինքը առաջինը չէ, որ անցել է այդ առաջարկի ու փորձության միջով, ու դիմացել է, ուրեմն մնացած

ամեն ինչին էլ կդիմանա: Լավ էր զգում իր նոր քույրերի շրջանում, նրանց հետ կարելի էր չկասկածել, չհուսահատվել, չվհատվել, այլ պարզ ու առանց դատողությունների հավատալ: Այլեւս սարսափից չէր արթնանում գիշերները, անհասկանալի տխրությամբ չէր նայում դեղատնից բերած փոշիներին, հանգիստ անցնում էր բարձր կամուրջներով, որոնց տակով հոսում էին Նեւայի մածուցիկ ջրերը, եւ սլացող գնացքն էլ չէր ծգում ու չէր վախեցնում նրան: Միայն հիմա հասկացավ ինչ սարսափելի է եղել իր նախկին կյանքը եւ այդ հոգեւոր ազատագրման համար պատրաստ էր ընդունել ամեն ինչ: Եվ երբ գա իր հերթը, երբ հասնի օրը, եւ նա վարձքը պահանջի, որ կանանցից առնում են տղամարդիկ, երբ ասի, որ այդպես է պետք, ու հենց դրա մեջ է իր ապաշխարությունը, մի՞թե կտատանվի թեկուզ մեկ վայրկյան եւ մեղք կհամարի այդպիսի սերը: Մի՞թե նրան չի տա իր ողջ քնքշությունը, ինչպես ցավը տվեց: Բայց նա ոչինչ չէր խնդրում. պարզապես կար: Եվ կինը՝ հուզախռով, դողահար, մաքուր՝ երջանիկ սպասում էր իր ժամին:

5

Գարնան վերջին Ուլյան «Նիվայում» կարդաց Լեգկոբըտովի ակնարկը: Զինվորական թղթակից դարձած շելոմյան որսորդը սովորության համաձայն բարեխիղճ ու սրաթափանց նկարագրում էր ինչ տեսել էր ձմռանը Ավգուստյան անտառներում՝ Լեհաստանից ռուսական բանակի նահանջի ժամանակ, Լվովում, Գալիցիայում ու Կարպատներում, հիշատակում էր լրտեսների ու դասալիքների մասին, պատերազմը համեմատում ծննդաբերության հետ եւ պնդում, որ այն աղճատում է բնությունը, փոխում կենդանիների ու թռչունների վարքը, եւ բնությունը կպատժի մարդկանց՝ այդ ոչնչացման համար: Լեգկոբըտովը ոչ մեկին չէր վախեցնում, զգույշ էր գրում, համարյա ջրաներկ, բայց նրա հասարակ բառերն այնպես ազդեցին Ուլյայի վրա, որ տարօրինակ կերպով իրեն նվաստացած, վիրավորված բնության մաս զգաց, որին պաշտպան էր կանգնում Պավել Մատվեեւիչը: Նախկին աղջկական հետաքրքրասիրությունն այլեւս չկար, եւ Ուլյայի հոգում միահյուսվել էին երկու զգացում՝ վախն ու կախվածության սուր զգացումը, ասես վրան կրակած տղամարդը կապած կամ, ավելի ստույգ, վարժեցրած լիներ նրան, ինչպես չարություն անող շանն են դաս տալիս՝ կողին աղի լիցք կրակելով: Այդպես էլ Ուլյայի սարսափելի վերքը չէր լավանում եւ անընդհատ ցավում էր:

Խորթ մոր պես նա էլ լավ էր հիշում այն հուլիսյան գիշերը, իր անսպասելի արթնացումը, ծառերի բները, դեզերը, լուսնալույսի շողքը բացատի վրա, երջանիկ թեթեւ վազքն ու գետափով անցնող երկու կերպարանքները: Հիշում էր կնոջ ճիչն ու որսորդի՝ սարսափից լայնացած աչքերը, երբ քաշեց «զաուերի» ձգանը: Հասցրեց տեսնել ծխի թեթեւ, արագ ցրվող ամպը, տաք, փափուկ գնդակը ու մի քիչ չհասցրեց խույս տալ, ընդունեց իր մեջ, կորցրեց հավասարակշռությունը, եւ նրա հետ կատարվեց այն, ինչից ողջ կյանքում վախենում էր՝ ցավոտ ընկավ եւ այդպես էլ չկարողացավ վեր կենալ:

Ուլյան չէր մեղադրում իր վրա կրակողին, ինքն էր մեղավոր, կորցրել էր զգոնությունը ու շատ էր մոտեցել նրան, բայց գուցե եւ խնդիրն այդ մարդը չէր, պարզապես ավարտվել էր այն ժամանակը, երբ աղջիկները ցատկոտում են ուլիկի պես, եւ որսորդն արել էր այն, ինչ պիտի անե՞ր: Կամ էլ գուցե իզո՞ւր դուրս թռավ նավակից իր չկայացած փախուստի առավոտյան, պետք էր Շելոմով լողալ ոչ նրա հետ, ում հետ ուզում էր, այլ նրա, ով եկել էր իր ետեւից, եւ այդ ժամանակ ո՛չ Լեգկոբըտովի գիշերային ժամադրությունը կլիներ խորթ մոր հետ, ո՛չ ընկնող լուսինը, ո՛չ կրակոցը, ո՛չ անտառի հրդեհը, ո՛չ մյուս՝ աշխարհը փոխած իրադարձությունները, եւ պատերազմն էլ չէր լինի: Այո՛, անկասկած, պատերազմն ինչ-որ անհեթեթ պատճառներով սկսվեց իր ու Ալյոշայի ուռկանի դուրս քաշած սպանված գերմանացու, սխալմամբ արձակված գնդակի, բացատում իր գիշերային վազքի պատճառով՝ խախտվեց տիեզերքի փխրուն հավասարակշռությունը. Ուլյան դա զգում էր իր այն թաքուն մասով, որը պատասխանատու էր գիշերային փոխակերպումների ու տեղափոխությունների համար: Բայց միտքը, որ այդ երկուսը՝ հրածիգն ու զոհն են շարժման մեջ դրել մարդասպանության հսկա մեխանիզմը, մեղավորության զգացում չէր արթնացնում զուտ այն պատճառով, որ ոչ մի հոգի այդ մեղքն իր մեջ տեղավորել չէր կարող, ու եթե մինչեւ վերջ տաներ այդ միտքը, պետք է ընդուներ, որ հայրը կռիվ գնաց, ու խորթ մայրն էլ հոսպիտալում էր աշխատում միայն իր մեղքը քավելու համար, չնայած դա նույնքան անհնարին էր, որքան ձեռակերտ լեռ բարձրացնելը:

Նա երբեմն զարդատուփից հանում էր կուրծքը խայթած արճճի կտորը, ու տնտղում բարակ մատներով: Ինչո՞վ կավարտվեր այդ ամենը, եթե հրացանը մի քիչ ավելի հզոր լիներ: Ուլյան նայում էր կրծքի կոկիկ սպիին ու մտածում՝ ի՞նչ է այնտեղ, այդ մի քանի միլիմետրից այն կողմ: Ծալապատիկ, գլուխը կախ, արճճի կտորը ձեռքին՝ ժամերով անշարժ նստում էր

գետնին, ու երբ մի անգամ հայացքն ընկավ հայելու արտացոլմանը, ապշեց, որ դիմացը նստած աղջիկը նման է նրան, ում Ուլյան երբեք չէր տեսել, բայց միշտ ճանաչել ու քույր էր զգում՝ Բեռլինի Հին թանգարանի զառ խաղացող աղջկան՝ փողոցի ստվերախիտ լորենիների տակ, ում մասին շատ վաղուց ոչ թե հորն ու խորթ մորը, այլ իրեն էր պատմում Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովը: Եվ որքան ուժգին էր զգում այդ առեւանգված, դավաճանված աղջկան, այնքան ուժեղ էր ձգում կյանքի ու մահվան գաղտնիքը, ու տանջում էր հարցը, թե ինչո՞ւ չի կարելի փոխել անցյալը, ինչո՞ւ չի կարելի ժամանակի մեջ վերադառնալ հետ եւ ինչ-որ բան շտկել այնտեղ, ինչո՞ւ ամենայնի տերը սառն ու խստասիրտ ճակատագիրն է, ում կարգադրություններն են կատարում մարդիկ: Նրանց թվում է՝ ազատ ու անկախ են իրենց արարքներում, բայց իրականում ազատություն չկա, կան միայն թելեր, որոնցով կառավարում են մարդկանց, եւ ահա նա զգացել էր ձգված ու իրեն ցավոտ ձգած թելը, զգացել ու պատժվել էր դրա համար: Նա անպայման պետք է որեւէ մեկի հետ խոսեր այդ թելի մասին, հասկանար՝ ինչպես թուլացնի, եթե լրիվ ազատվել հնարավոր չէ, բայց կողքին ոչ մի հարազատ հոգի չկար: Եվ Ուլյան մտաբերում, երեւակայում ու փորձում էր կանչել, մտքում խտացնել այն ժամանակի թանկ պատկերները, երբ ոչինչ չէր կաշկանդում ու չէր սահմանափակում իրեն՝ բաց պատշգամբը, գետի բարձր ավազոտ ափը՝ ծիծեռնակի բներով, տեւական կանաչ մայրամուտները, օգոստոսի թափվող աստղերն ու ջրողող մարգագետինները, որոնց վրայով թռչում ու ճչում էին կրակոցներից վախեցած թռչունները, Այլոշային, խոտի դեզերը, իր ճախրուն գիշերային վազքը դեպի լիճը եւ ոգեշունչ դեմքը նրա, ով, չգիտես ինչու, ընդհատեց այդ վազքը:

Մի անգամ հոր գրադարանից վերցրեց Լեգկոբըտովի գրքերը, եւ դրանք տարօրինակ ազդեցություն ունեցան վրան: Կարդալիս ծանձրալի էին, եւ ուզում էր մի կողմ դնել, շատ բան անհասկանալի էր, քիչ էին մարդիկ, խոսակցությունները, դեմքերը, իրադարձությունները, բայց մի քիչ ժամանակ անցավ, ու Լեգկոբըտովի արտահայտությունները, պատկերները, շեշտերը, կերպարները սկսեցին դուրս լողալ հիշողության մեջ, ու պարզվեց՝ Ուլյան առեղծվածային կերպով հաղորդակից է այն վայրերին, որ նա նկարագրում էր: Գրի մեղմ, նրբանկատ ու շատ պարզ ոճը ոչ թե պարզապես կապ չուներ, այլ հակոտնյան էր այդ կոպիտ, դյուրաբորբոք մարդու, որը կյանքում բիրտ ու տհաճ էր թվացել աղջկան, որովհետեւ ամենանուրբը տալիս էր բառերին, եւ իրեն ոչինչ չէր մնում: Ամ՛խ, ինչ հրաշալի գրող էր: Ուլյան երբեք չէր մտածել, թե որեւէ մեկը կարող էր այդպես

զգալ իր հոգին, պատկերել գիշերաքամու շարժման, հեռավոր լուսնի լույսի մեջ հայտնված տերեւների դողի, սեպտեմբերյան վաղ առավոտյան՝ սարդոստայնի ցողի կաթիլների կամ անտառային առվակի հոսքի մեջ, երբ գալիս է առաջին ձյունը, ու սեւ ջուրը ճանապարհ է բացում իր համար: Այդ ամենը Ուլյայինն էր, հարազատ, սրտամոտ, բազում անգամներ երազներում տեսած, բայց չգիտակցած տանջալին, եւ միայն այդ մարդն էր կարողացել գտնել այն բառերը, որ հավաստում էին կյանքի իրական լինելը: Ուզեց անհապաղ տեսնել Պավել Մատվեեւիչին, պատմել ամեն ինչ նրա գրքերի մասին, ասել ամենը, որ չէր ասել, չէր հասկացել, չէր տեսել այն հեռավոր կինը, որին որսորդը դժբախտություն էր ունեցել հանդիպելու Բեռլինում, զառ խաղացող աղջկա մահարձանի մոտ ու չգիտես ինչու տարվել էր նրանով, փոխանակ ընդմիշտ մնար այդ աղջկա հետ, բայց Լեգկոբընտովը Պետերբուրգում չէր, առաջվա պես դեգերում էր ինչ-որ տեղ՝ ռազմաճակատում, թե իր ընտանիքի հետ, շուն էր վարժեցնում ու գնում որսի՝ տասնյակ կիլոմետրեր կտրելով ու տուն բերելով որսորդական ավարները, որոնցով ապրում էին մերձավորները: Գրողի մասին փորձեց խոսել մայրացուի հետ, բայց Վերա կոնստանտինովնան, որ, թվում էր, պատրաստ է ամեն ինչի մասին խոսել խորթ դստեր հետ, մի տեսակ վախեցած, մեղավոր, նույնիսկ համառորեն լռում էր, ու նրանք գժտվեցին: Ավելի ճիշտ, Ուլյան նորից գոռաց նրա վրա եւ այնպես, որ հետո ինքն էլ ամաչեց: Բայց ինչպե՞ս չգոռաս այդ կրոնախեւ ձեւացող կնոջ վրա:

Տխրությունը հատկապես ծանրացավ ամռանը, երբ առաջին անգամ չկարողացան գնալ գյուղ: Ուլյան տառապում էր հեղձուկ քաղաքում ու չգիտեր ուր կորչի: Նախապատերազմական կյանքը թվում էր սքանչելի, հրաշք, սուր ափսոսանք էր արթնացնում, ու սիրտը մղվում էր այնտեղ, ու թվում էր անցնող օրվա ետեւում, ինչպես անտառային արահետի շրջադարձից անդին, վերջապես կբացվի, կհայտնվի գետը: Բայց օրերն անցնում էին, ու ոչինչ չէր կատարվում, հակառակը՝ ճանապարհն ավելի ու ավելի էր խորանում խուլ ու մռայլ անտառի մեջ, ու պարզվեց, որ պատերազմը տոն չէ, հրապարակների ցնծություն չէ, գույնզգույն պատկերներ չեն տեղագրական քարտեզների վրա, պատերազմը դժվարություն է, տաղտուկ, աղքատություն ու ինքնասահմանափակում, պատերազմը այն համբերատարությունն է, որին ժամանակին փոքրիկ աղջկան ապարդյուն փորձում էր վարժեցնել խորթ մայրը: Եվ Ուլյան ավելի ու ավելի հաճախ սկսեց լսել, որ Ռուսաստանը պատրաստ չէ տեւական պատերազմի, որ զորքերին չի բավականացնում զենքը, արկերը, զինվորական սապոգները, եւ

ոչ մի Կոնստանդնուպոլիս ու նեղուցներ իր հայրենիքը չի հասնի:

Գարնանը լրտեսության մեղադրանքով գնդակահարվեց գնդապետ Մյասոեդովն ու պաշտոնանկ արվեց ռազմական մինիստր Սուխոմլինովը, իսկ գերմանացիները շարունակում էին հարձակումը դեպի արեւելք՝ գրավելով նորանոր տարածքներ ու մեծացնելով փախստականների թիվը: Օգոստոսին հայտնի դարձավ, որ թագավորը որոշել է անձամբ գլխավորել բանակը Ուլյայի կնքահոր՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչի փոխարեն: Ասում էին, որ այդ ամենը ինչ-որ թշնամիների մեքենայություններ են, սեպտեմբերին անսպասելիորեն պաշտոնից հեռացվեցին ներքին գործերի մինիստրն ու Սինոդի գլխավոր վերատեսուչը: Քաղաքում պայթում էր խլիստի մասին խոսակցություններից,եւ ավելի ու ավելի հաճախ էր հնչում այն մարդու ազգանունը, որ հիպնոսել էր ցարական արքունիքն ու իր չար կամքն էր թելադրում: Նրա պատճառով են երկրի բոլոր աղետները, նա է ցարին մղում խելահեղ որոշումների, փոխում մինիստրներին ու կառավարում եկեղեցին, նրա մասին քչփչում էին գիմազիայի աղջիկները, հերթերում խոսում էին մարդիկ, եւ ինչ-որ անպարկեշտ, վախեցնող բան կար նրա անվան մեջ, այնպես որ, Ուլյան կանխապես ատում էր այդ մարդուն, արհամարհում, վախենում ու չէր հասկանում՝ ինչու ոչ ոք չի կարողանում հաղթել նրան:

Հայրը առաջվա պես հազվադեպ էր գրում, ժլատ, առանց քնքշությունների ու կենցաղային մանրամասների, եւ նրա սառնությունը, որ սկզբում վիրավորում, հետո նաեւ անհանգստացնում էր Ուլյային, հանկարծ հասկանալի ու հարազատ դարձավ: Ոչ թե աղջկական, այլ կանացի խելքով, հասուն դստեր բնազդով հասկանում էր, որ նրա բոլոր քայլերի պատճառը հեռանալու, ընդհուպ ամենածայրահեղ կենսական խնդիրները պատերազմի միջոցով լուծելու ցանկությունն էր: Ուլյան հիմա էր հասկանում, թե ինչու ռազմաճակատ մեկնելիս ներողություն խնդրեց իրենից, եւ ինքը, չհամարձակվելով այդ ընտրության համար դատապարտել հորը, բնազդաբար օտարվեց նրանից՝ հաշտվելով այն մտքի հետ, որ նա այլեւս չի վերադառնա իրենց տուն, եւ չեն կրկնվի այն օրերը, երբ վիրավորվելուց հետո խնամում էր իրեն՝ ցավեցնելով ու շփոթմունք պատճառելով: Հիշում էր այն երջանիկ օրերը, երբ հայրն այնպիսին էր, ինչպես իր երեխա ժամանակ, եւ, բժիշկներին չվստահելով, ինքն էր բուժում աղջկա մրսածությունը, լուրջ տեսքով ալոէ կաթացնում քթի մեջ, մանանեխի սպեղանիներ կպցնում մեջքին, ստիպում, որ վառած շաքար կուլ տա՝ կաթով, ոտքերը մանանեխով տաք ջուր դնում ու ման էր տալիս՝ շալակն առած: Հայրը այն

Ժամանակ Ուլյային այնքան ծիծաղելի էր թվում իր այդ հոգատարությամբ, որ իրեն պատկերացնում էր որպես ինչ-որ մեխանիզմ, որ փչացել ու նորոգում էր պահանջում, բայց հիմա այդ ամենը նույնքան թանկ էր նրա համար, որքան մանկական հիշողությունները մոր մասին, որքան ամառը Ծելոմի ափին, որքան կապտաչյա Այլոշան, եւ նա կհամաձայներ ցանկացած վերքի կամ հիվանդության, միայն թե հայրը վերադառնար այնպիսին, ինչպիսին եղել էր մինչ այն, երբ նրան իրենից գողացավ չար ուժը:

Ինչ զզվելի՛ է ապրել անտղամարդ տանը: Ուլյան երբեք դրա մասին չէր մտածել, բայց հիմա ֆիզիկապես զգում էր տղամարդու հոտի, ձայնի, թափթփվածության ու թերթերի խշշոցի պակասը: Անտանելի է երկու կարոտող կանանց կյանքը նույն բնակարանում: Եթե գոնե նույն արյունից լինեին, հեշտ կլիներ, բայց այսպես՝ կյանք չէր, տառապանք էր: Ու չնայած մայրացուն քիչ էր լինում տանը, մեկ է, Ուլյան ավելի երկար էր մնում գիմնազիայում, այցելում էր ընկերուհիներին, շրջում փողոցներում, իսկ տուն գալով՝ արագ պառկում էր քնելու ու սպասում երազներին:

Երազները նրա միակ ուրախությունն էին՝ վառ, թանձր, շոշափելի, որ ոչ թե պարզապես տեսնում, այլ ապրում էր դրանց մեջ, դիպչում, կրում դրանց հետքերը, մտապահում, բայց երազներն այլեւս ոչ վազք էին դառնում, ոչ թռիչք: Մի անգամ ասես արթմնի տեսավ իրեն հետապնդող հեռավոր օրը Կոլոմյաժյան ձիարշավարանում, մարդկանց ամբոխը, աերոպլանները, օդաչուներին, հորն ու թուլակազմ մարդուն, որ փորձում էր թափ առնել ու թռչել: Ուզում էր մոտ վազել նրան, բայց ինչ-որ մարդիկ բռնել էին ձեռքերը ու չէին թողնում: «Ցարդուփշուր կլինես, հիմարի՛կ»,- ասում էին նրանք, իսկ ինքը ճչում էր, փորձում էր պոկվել, բայց չկարողացավ, իսկ երբ արթանացավ, արցունքները խեղդում էին: Նորից իրեն նորածին ու վաղ մանկության մեջ էր զգում, ասես ինչ-որ ուժ կապել էր անտեսանելի ձողին, եւ ինքը շրջաններ են անում շուրջը, անիմաստ, ծանր, աննպատակ՝ խոր հորից ջուր քաշող ձիու պես:

Ուլյան դժվարությամբ վեր կացավ, դանդաղ հագնվեց եւ ուռած աչքերով հասնելով գիմնազիա՝ հանդիպեց դասարանական դաստիարակչուհու համր հարցին՝ ի՞նչ է պատահել:

- Հանգիստ թողեք ինձ վերջապես: Ի՞նչ եք ուզում ինձնից,- ճչաց նա, ու դաստիարակչուհին այնպես հեզ ու անպաշտպան նահանջեց, որ Ուլյան ամաչեց իր արարքից, ասես հաշմանդամի վիրավորած լիներ:

Բայց մի անգամ Վերա Կոնստանտինովնան խախտեց ձգվող լռությունն ու մտավ խորթ դստեր սենյակ:

- Քեզ մի մարդ է ուզում տեսնել,- վախվորած, բայց հաստատուն եւ, ինչպես Ուլյային թվաց, ինչ-որ փութաջանությամբ ասաց նա:

- Ո՞վ,- հարցրեց աղջիկը եւ ազգանունը լսելով՝ կրկնեց:- Ո՞վ, ո՞վ: Խելագարվե՞լ եք, ինչ է: Ես նրա մոտ չեմ գնա, երբեք ու ոչ մի դեպքում չեմ գնա: Ինձ ո՞ւմ տեղն եք դրել: Թե՞ մտածում եք ձեր հարազատ աղջիկը չեմ, ինչ ասես կարող եք անե՞լ:

Եթե մի տարի առաջ ասեր այդ ամենը, մայրացուն հաստատ կգոռար վրան, գուցե եւ փորձեր խփել, բայց հիմա ոչ մի մկան չշարժվեց Ցարսկոե սելոյի հոսպիտալի գթության քրոջ դեմքին:

- Պետք չէ այդպես խոսել: Չէ՞ որ նրան բոլորովին չես ճանաչում: Շատ հասարակ, հավատացյալ, մեզ հարազատ մարդ է, որ աղոթում է Վասյայի համար:

- Ի՛նչ ստեր են: Ինչպե՞ս կարող է աղոթել մեկի համար, որին չի ճանաչում:

- Նրանք ծանոթ են,- ավելի հեզ ու հաստատուն պատասխանեց Վերա Կոնստանտինովնան:- Եվ եթե այդ մարդու աղոթքները չլինեին, Վասյան վաղուց ողջ չէր լինի:

- Ինչի՞ց իմացաք:

- Գիտեմ: ես քեզ երբեք ոչինչ չեմ խնդրել, բայց հիմա շատ եմ խնդրում: Հայրդ ուրիշ պաշտպան չունի:

- Ո՛չ,- ավելի չարացած կտրեց Ուլյան:

- Ինչպես կուզես, աղջի՛կս,- մեղմ ասաց մայրացուն ու ցամաք աչքերով նայեց նրան:

6

Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովը վաղ երիտասարդության տարիներին Վիլնայի օրինակելի բանտում տասնութ ամիս անցկացնելուց հետո այդ քաղաքում չէր եղել, եւ հիշողություններն այնքան ծանր էին, որ որսորդը չգիտեր ինչպես վարվեր դրանց հետ, ինչպես օգտագործեր, չնայած հենց բանտն էր ծեփել նրա բնավորությունը, ինչպես բանտարկյալները շախմատի խաղաքարեր էին ծեփում կաթից ու հացի միջուկից, այնպես ամրացնելով, որ հետո այլեւս ջարդել չէր լինում: Սեփական հիմարության պատճառով, թե ինչ-որ մեկի չար զրպարտությամբ այնտեղ հայտնված երեսուներեքամյա Պավլուշան սկզբում ուշքի չէր գալիս, գլուխն էր օրորում՝ քշելով ֆրանսիական հինավուրց վանքի պատերի սատանայական կախար-

դանքն ու հուսալով, որ այդ պատերը վատ երազ են, իսկ հետո կիսանիրհի մեջ ընկավ, լճից ափ նետած ծածանի պես, որը դեռ մի քանի օր կարող է ապրել առանց ջրի: Պավել Մատվեեւիչը պատանությունից աչքի էր ընկնում գերբնական կենսունակությամբ եւ, հանգամանքներից կախված, մինչեւ վերջ սեղմվելու կամ ընդարձակվելու, իրենով ողջ տարածությունը լցնելու ունակություն ուներ: Այդպես էլ բանտային նիրհը մեկ անհետանում, մերթ վերադառնում էր, բանտարկյալը մեկ օրինակելի վարք էր դրսեւորում, մեկ էլ հանկարծ սկսում էր ահավոր մոլեգնել, եւ նրան պատժում էին եռօրյա մենախցով: Ուզում էին ավելի խիստ էլ պատժել, սակայն բանտի բժիշկը, երես առ երես խոսելով Լեգկոբըտովի հետ, առաջարկեց հանգիստ թողնել կալանավորին, մանավանդ, որ հակաօրինական գործունեությունից ընդմիշտ զզվեցնելու նպատակին հասել ու անցել էին, եւ այդպիսի մարդուն պատժախուց նստեցնելն անիմաստ էր:

Այդքան տարիներ անց էլ Պավել Մատվեեւիչը չէր կարողանում մոռանալ այն զգացողությունը, որ իր գլխավոր պատիժը ոչ թե մարմնական զրկանքներն ու սահմանափակումներն էին, այլ սեւեռուն, ուղեղը շաղափող միտքը, որ մինչ ինքը բանտում է, օդի բարեփոխություն է կատարվում աշխարհում, իսկ ինքը ներկա չի, չի լսում, չի զգում, եւ այնպիսի հուսահատություն էր պատում նրան, որ ազատություն ստանալուց հետո երդվեց ոչ մի օր ապարդյուն չապրել: Բանտարգելության մեկուկես տարվա ընթացքում պատահմամբ հեղափոխականը նմանվեց ժլատ մենատնտեսի, որի համար ցանկացած մանրուք հաշիվ է ու ոչ մի կոպեկ իզուր չի ծախսվում: Սովորեց ագահորեն հաշվել նախ կյանքի ամեն ժամը, հետո՝ ամեն րոպեն, եւ անընդհատ հարցնում էր իրեն՝ դրանք ճի՞շտ է ապրել, թե՞ ոչ: Եվ ամեն ակնթարթը թանկ էր թվում, ասես մի քիչ կյանք էր մնացել, եւ ուզում էր լիարժեք օգտագործել այդ օրերը: Լեգկոբըտովը հենց դրա համար էլ ալբոմ էր պահում, որ ծանրացնի, խտացնի կյանքը, դրոշմի ժամանակի ընթացքը, իսկ հիմա, Վիլնայի կեղտոտ փողոցներով քայլելիս, ներքին դողով իրեն կողոպտած բանտին մոտենալիս, որսորդը մտածում էր, որ եթե ինչոր պատճառով կրկին փակեին այստեղ, մի օր էլ չէր դիմանա, կջարդեր գլուխը՝ ծանրաքար պատերին խփելով:

Պատերազմի եւ ռազմաճակատի մոտենալու պատճառով բանտը վերակազմավորվել էր. կալանավորներին տեղափոխել էին կայսրության խորքը, իսկ նախկին վանքում ժամանակավոր հոսպիտալ էր տեղակայվել: Սայլեր էին ներսուդուրս անում, վիրավորներ էին բերում, մթերք, սարքավորումներ, եւ ժամանակին բլուրների վրա փռված ուրախ, խաղաղ, բազ-

մաբղետ, բազմացեղ քաղաքը նմանվել էր մրջնանոցի, որի մեջ մահակ են խրել կամ սապոգով տրորել էին: Մի տեղ քրքիջ էր լսվում, մի տեղ դագաղներ էին տանում, եւ այդ ամենը՝ կողք կողքի ու իրար չխանգարելով: Պավել Մատվեեւիչը հիշեց հորը, սեւ կաշվե բազկաթոռում կարկամած մարմինը, հիշեց մոր սարսափն ու ճիչը. «Հիմա մենք աղքատ ենք, ընչազուրկ ենք»: Մահվան վախը, որ նրան թողել էր պատերազմի առաջին օրերին, հայր Էրոսի հետ զրույցից հետո, նորից խրվեց սիրտը, իսկ մտքում թաղման կանոնի վարընթաց ու վերասլաց բառերը՝ «դամբանական ողբը, որ երգ է արարում»: Չէր հիշում՝ որտեղ ու երբ էր լսել վերջին անգամ, պետք է որ՝ մոր գերեզմանին: Գերեզմանն անխնամ էր, անհարմար էր զգում քահանայի առաջ, որը լավ էր ճանաչում իրենց ընտանիքը, մեղավոր էր զգում, որ հազվադեպ է այցելում ու համարյա չի հիշում մորը, չնայած աշխարհում ոչ ոք մոր պես անշահախնդիր չէր սիրել նրան: Քահանան բարոյախրատական, սփոփիչ, հանգստացնող, այդ կանաչ թմբի հետ հաշտեցնող, ինչ-որ հանդիպում ու հավերժական կյանք խոստացող բառեր էր ասում: Ու մինչ անխոհ նայում էր այդ հանգստավետ թմբիկին, խաչի կողքին աճած արոսենուն, գիտակցության կողքով համաչափ հոսող, ցավն ու վախը պարուրող ու բթացնող սահուն խոսքերի շարքում նրան տարօրինակ կերպով զարմացրեց մի արտահայտություն, որ մահը ձեռքբերում է: Հարցական բարձրացրեց գլուխը, բայց գյուղական քահանան արդեն շարունակում էր սփոփիչ երգը, ու ոչ ոք Պավել Լեգկոբընտովին չէր կարող պատասխանել, թե ինչ կարող էր ձեռք բերել իրենից հեռացած մայրը: Ի՞նչ զգացում, ի՞նչ հատուկ գիտելիք: Ի՞նչ պիտի առաջարկեին երկրային օդի, ջրի, լույսի, հարազատ երեխաների փոխարեն: Մի՞թե կա ավելի լավը. ավելի արժանին: Բայց նա հանկարծ հասկացավ մի կարեւոր բան. այնտեղ հեռացող մարդիկ գիտեն մահվան գաղտնիքը, գիտեն երբ են իրենց մոտ գալու նրանք, ում կարոտում են, այս հողակույտի տակ պառկած մայրն էլ գիտի օրն ու ժամը, երբ կմահանա իր որդին՝ այդպես էլ չսպանելով մտագայլին:

Բայց ի՞նչ մտագայլ, որտեղի՞ց, ինչո՞ւ: Ոչ մի գայլ էլ չկա, հորինվածք է այդ ամենը, պատրանք է, տեսիլք, հիվանդ ու տենդող ուղեղի արգասիք: Միայն սովորական գայլեր կան, որ անտառներում հարձակվում են պատերազմից ծանր վիրավորված մարդկանց վրա, եւ այդ գայլերին չի հետաքրքրում՝ ռուսնե՞ր են իրենց առաջ, թե՞ գերմանացիներ: Բնությունն անտարբեր է, ինչպես անտարբեր է մահը, եւ ոչ մի ձեռքբերում էլ այնտեղ չկա: Կա միայն չարը: Մահը կրկնակակոխ հետեւում է նրան, մահն էլ հենց

մտագայլն է, ու ոչ թե մենք նրան, ինքն է մեզ հետապնդում: Չգիտեր որտեղից սպասի նրա հարձակմանը, բայց զգում էր, որ կյանքը նմանվել է անեզր լճի վերջին սառույցի վրայով քայլելուն: Վաղուց է փխրվել այդ սառույցը, հալ ընկել ու տեղ-տեղ այնքան բարակել, որ ցանկացած պահի կարող է փլվել ոտքերի տակ: Եվ Պավել Մատվեեւիչին շրջապատող հազարավոր մարդիկ՝ զինվորականներ, քաղաքացիներ, երիտասարդներ, ծերեր, խիզախներ, վախկոտներ, բոլորը, բոլորը քայլում էին այդ փխրուն սառույցի վրայով: Մեկը ծանր էր, մյուսը՝ թեթեւ, բայց ծանրությունը քաշից չէր կախված, այլ ուրիշ մի բանից, ինչը մարդը գիտենալ չէր կարող: Եվ Պավել Մատվեեւիչն էլ, ում թվում էր, թե ամեն ինչ գիտի իր մասին, նույնպես չգիտեր: Գուցե ինքն էլ արդեն կշռված ու դիտված է... «Թող որ այդպես,- իր մտքերին առարկեց Լեգկոբրոտվը,- թող որ՝ կշռված, գլխավորը՝ որ մնան, փրկվեն իմ տետրերը: Կգա, կհայտնվի նա, ով կկարդա ու կգնահատի դրանք: Անմիտ, անմարդկային գրող: Դուք եք անմիտը, դուք եք անմարդկային, դուք եք ծառայում մահին ու կանչում նրան, իսկ ես՝ կյանքն եմ կանչում, կյանքի համար եմ բանում ու մինչեւ վերջին շունչս հավատարիմ եմ լինելու նրան, ինչպես հոգով հավատարիմ եմ քեզ, իմ սե՛ր: Ա՜խ, եթե կարողանայիր լսել ինձ, եթե միայն կարողանայիր արձագանքել, մի նշան տայիր: Բայց չես լսում. չես կարող կամ չես ուզում: Ինչո՞ւ: Չէ՞ որ կողքիս ես, գիտե՛մ»:

Ինքն էլ չնկատեց՝ ինչպես հայտնվեց հին քաղաքի արվարձանում, հասարակաց տան մոտ, որ ժամանակին ջարդուփշուր էր արել ու դրա համար մեկուկես տարի մեղքերը քավել սուրբ Ֆրանցիսկոսի առաջ: Ավերվելն այդ ուրախ հաստատության օգտին եղավ: Վիլնան միշտ հռչակված էր եղել լուպանարիումներով, բայց հիմա արդեն դա համեստ հասարակաց տուն ու փողոց չէր պարզապես, մի ամբողջ թաղամաս էր, որտեղ վերուվար էին անում տարբեր տարիքի կանայք: Ժամանակ առ ժամանակ նրանց տղամարդիկ էին մոտենում ու տանում, ավելի ճիշտ, տարվում էին գոց վարագույրներով գեղեցկատես տներից որեւէ մեկը: Պավել Մատվեեւիչը տղեկի պես կարմրեց եւ արագացրեց քայլը՝ ձգտելով շուտ հատել գայթակղության այդ վայրը, երբ հանկարծ կանանցից մեկը, արդեն ոչ երիտասարդ, բայց դեռ շատ գեղեցիկ, դիմաքողով կոկիկ գլխարկը գլխին եւ ուշահաս կապույտ ծաղիկների փունջը ձեռքին, մոտեցավ ու թեւանցուկ արեց գրողին:

Այնքան պարզ ու բնական, ասես վաղեմի ծանոթներ լինեին: Լեգկոբրոտվը խեթ նայեց նրան: Կնոջ զգեստը թանկարժեք չէր, բայց նրբաճաշակ

էր, ու գրողը տարակուսեց՝ կարի՞քը, վի՞շտը, թե՞ մի ուրիշ բան էր նրան նետել փողոց: Բայց կինը ոչնչով չէր հիշեցնում այն դժբախտ, ծեծկված, անկիրթ իգական արարածին, որին պատանության տարիներին տեսել էր Ելիցում ու ողջ կյանքի համար սարսափահար եղել:

Կինը նեղ, ոլորապտույտ փողոցում հպվեց պատահական ուղեկցին, հետո նայեց նրան՝ փորձելով գրգռիչ արտահայտություն տալ հայացքին, բայց տղամարդը զգաց, որ նա ամաչում է, եւ դրանից ինքն էլ ամոթ ու տաքություն զգաց, ասես տասնհինգամյա անհամբեր տղեկ լիներ: Փորձեց ազատել թեւը, բայց կինը ինչ-որ բան ասաց, ու տղամարդը ցնցվեց. ձայնը ծանոթ էր: Պավել Մատվեեւիչին թվաց՝ իր ծերացած բեռլինյան սերն է՝ այն անասելի ամոթխած, հպարտ տիկինը, իր Լաուրան, որին չգիտես ինչու այդպես էլ չհանդիպեց, եւ նա կյանքի իր առանձին մասն էր ապրում, իսկ ինքը միշտ մտածում էր նրա մասին, մտքում կանչում, զգում էր նրան, եւ ահա վերջապես հանդիպել էին տարօրինակ ու արտասովոր հանգամանքներում: Որքան բարձրանում էին փողոցով, այնքան հաստատ էր ճանաչում կնոջը՝ շարժվելու կերպից, գլխի առանձնահատուկ խոնարհումից, թրթռուն ուսերից, կանացի բնության այն անորսալի նշաններից, որ բացվում են միայն սիրող, կարոտող սրտին: Ու հոգում խուճապ էր:

Լեգկոբըտովն ուզում էր ուղիղ ամեն ինչ հարցնել, բայց կինը մատը տարավ շուրթերին եւ օրորեց գլուխը: «Ի՞նքն է, թե՞ ինքը չի, ճանաչե՞ց, թե՞ ոչ,- տենդագին մտածում էր տղամարդը:- Եվ ինչ տարօրինակ է նրան հանդիպել այստեղ: Զառանցա՛նք է, քո՛ւն... Չնայած, տարօրինակ ոչինչ էլ չկա: Երեւի այսպիսի մաքուր, արժանապատիվ տիկնայք էլ հենց նետվում են եռացող կաթսան: Ինչպես էր ասո՞ւմ: Կինը, որին դիտմամբ ստիպել են տառապել... Իսկ նրան իսկապես ստիպել են»:

Երբեք չէր հավատա, որ ողջ կյանքի երազանքը կկատարվի այստեղ, այս պահին, եւ այսքան տարօրինակ կկատարվի: Հիշողության մեջ դուրս լողացին ինչ-որ մեկի վիրավորական բառերը, որ ինքը ոչ մի կին չի ունեցել Պելագեայից բացի, եւ որսորդը մտածեց, որ, ահա կարող է հերքել դա, գնալ հետ ու փոխել իր անցյալը: «Մի՞թե հանուն դրա պիտի հասնեի այստեղ: Ինչ աներեւակայելի եւ իմաստուն է ամեն ինչ մտածված: Սիրելի՛ս, սիրելի՛ս, մաքուր, անմեղ արարած, ինչ մեղավո՛ր եմ քո առաջ: Իմ եւ միայն իմ պատճառով քեզ հետ կատարվեց այս ամենը, բայց հիմա ամեն ինչ ուրիշ կլինի...»,- կնոջ մերձությունից հարբելով՝ մրմնջում էր նա:

Մի հաշմասայլակ ընդառաջ ելավ, ու Պավել Մատվեեւիչը ճանաչեց Վիլնայիին հայտնի գուշակ Մոյշա Էպշտեյնին: Այդ Մոյշային՝ ջրակալած աչ-

քերով ու գորտնուկը վզին ծեր, ճմռթված հրեային, վաղուց, շատ վաղուց էին ման տալիս քաղաքում: Գուշակությամբ էր վաստակում իր հացը, ըստ լուրերի՝ աներեւակայելի հարուստ էր, եւ ժամանակին հենց նա էր երիտասարդ ուսանող Պավել Լեգկոբըտովի համար գուշակել, որ մի տարի բանտ կնստի: Մոյշան շատ չէր փոխվել: Փոխվել էր նրան օգնող կինը՝ զառամել էր, չորացել, իսկ Մոյշան իր սայլակում նստած նույն վարդագույն այտերով, խնամված, միշտ անուշահոտություն բուրող, իր ներսը, թե աշխարհին նայող ծերուկն էր, ու Պավել Մատվեեւիչը ցնցվեց՝ վախենալով, որ կճանաչի իրեն ու նորից որեւէ սարսափելի գուշակություն կանի: Ուզում էր թաքնվել, բայց հաշմանդամի հայացքն անտարբեր սահեց նրա վրայով ու սեւեռվեց ուղեկցող կնոջը: Կինը անմիջապես հետ քաշվեց Լեգկոբըտովից եւ մենակ ու արագ քայլեց մայթով, ասես ինչ-որ նշան լիներ ստացած: Պավել Մատվեեւիչն ուզում էր նետվել նրա ետեւից, բայց խփվեց հաշմասայլակին, ընկավ, իսկ երբ վեր կացավ, իր Լաուրային տեսավ մի բարձրահասակ հետեւակային սպայի հետ, եւ կինը նրան հպվել էր նույնպիսի քնքշությամբ, ինչպես հենց նոր իրեն:

Խանդը չխոցեց որսորդին, ոչ էլ ափսոսանքը, այլ կորստի, ամայության եւ ուշանալու այն տառապագին զգացումը, որ անհաջող կրակոցից հետո հետապնդում էր նրան: Ուզում էր հետեւակային շտաբս-կապիտանից խլել իր որսը, բայց կինը նույնիսկ հայացքը չփախցրեց, այնպես անտարբեր նայեց, որ Լեգկոբըտովը հետ քաշվեց, մոլորվեց ու չհասկացավ՝ այդ ինչ ցնորք էր. կնոջ մեջ իր բեռլինյան սերը հիշեցնող ոչինչ չկար, շարքային, դեռ լրիվ չքրքրված պոռնիկ՝ կատարյալ կախման մեջ իր մադամից կամ կավատից:

Իսկ այդ ընթացքում փողոցում ժողովուրդը շատանում էր, բայց զինվորական համազգեստով տղամարդկանց ու վառ հագուստներով կանանց հարաբերումը հասարակաց տան նախասենյակ չէր հիշեցնում, այլ ինչ-որ տարօրինակ արարողություն, ավելի շուտ՝ դիմակահանդես կամ գաղտնաձեռ, որին ոմանց հրավիրում էին, ոմանց՝ ոչ: Եթե անհեթեթ չլիներ, կարելի էր մտածել, թե այցելուի դերում այստեղ կանայք են, սակայն պատին հենված ու փողոցի մարդկանց հետեւող Լեգկոբըտովը հանկարծ հասկացավ բանն ինչ է: Այդ տղամարդիկ շուտով կսպանվեն, եւ նրանց ընտրող կանանցից յուրաքանչյուրը վերջինը կդառնա այս ջահել ենթասպայի կամ այն տարեց գնդապետի, կամ այս երկու կամավորագիրների համար: Իսկ կանայք ոչ թե մարմին էին վաճառում, այլ կապված էին մեռյալների գաղտնիմացության մասին նրա նախորդ մտքերի հետ: Կանայք վերջին

սփոփանք էին տալիս ռազմիկներին եւ յուրաքանչյուրին հիշեցնում իր ամենաթանկը՝ կնոջը, հարսնացուին, սիրուհուն կամ պարզապես բազմության մեջ հանկարծ նկատված կամ երազում տեսած ու զարմանալիորեն սիրելի դարձած մի դեմք: Եվ նրան թեւանցուկ արած կինն էլ հենց այն պատճառով էր նման իր սիրելիին, որովհետեւ վերջից առաջ խոստանում էր կյանքում չիրականացածը, իսկ հետո Մոյշայի օգնությամբ հասկացավ սխալը. Լեգկոբըտովը դեռ ապրելու է: Նա այդ պահին հասկացավ, նշան ստացավ կնոջից, պատասխան վերջին ամիսներին տանջող հարցերին՝ ինչքա՞ն է իրեն մնացել, ու կրկին չի՞ հայտնվի իր կյանքում սրբահայր Ֆոման, չի՞ չեղարկի մեկ այլ քրմի՝ հայր Էրոսի կռահած տարկետումը եւ նոր ճակատագրական օր չի՞ նշանակի: Չի հայտնվի, չի նշանակի, չի չեղարկի, քեզ շատ է մնացել՝ ասում էին կնոջ զայրացկոտ աչքերը, տեւող ես դու, թեթեւ, եւ այդ թեթեւությամբ էլ կտրվի քեզ, իսկ այ սրանց՝ ուրիշներին, ծանրերին մի քիչ է մնացել ապրելու, դրա համար էլ նրանք լավն են քեզնից, արժանավոր, վեհանձն, ինչպես ամեն ոք, որ շուտով կմեռնի, նրանց համեմատ, ովքեր շարունակելու են ապրել:

Պավել Մատվեեւիչը միակ խաբվածը չէր. նրա աչքի առաջ կանայք շփոթված ու արտասվաթոր թողեցին էլի մի քանի հոգու ու հեռացան ցնծացող ընտրյալների հետ: Եվ ընտրյալները չէին հասկանում իրնց դժբախտությունը, իսկ լքվածները՝ երջանկությունը: «Կգնայի՞ նրա հետ, եթե իմանայի, որ վաղը ողջ չեմ լինելու: Այո՛, կգնայի՛,- ասաց ինքն իրեն ու նայեց այդ ներկայացումը բեմադրած Մոյշայի խունացած, անտարբեր աչքերին:- Ամեն ինչ կտայի, որ տեսնեի նրան ու լինեի նրա հետ»: Աչքերն արցունքոտվեցին. պատանության հուշերը, այնպես կենդանի, որ ասես այդ ամենը հենց երեկ էր եղել, արթնացան սրտում, ու Լեգկոբըտովը շշնջաց. «Չգիտեմ դու էիր, թե ոչ, իմ երեւակայությունը, թե գայթակղությունը, բայց եթե դու չես, որտեղի՞ց գիտես ինչպիսին է եղել այն միակը, որին սիրել եմ ու պիտի սիրեմ: Ես ոչ մեկին չեմ տա նրա անունը, չեմ բացի նրա գաղտնիքն ու չեմ ասի ողջ ճշմարտությունը, միայն խնդրում եմ, որ երեւա ինձ, նշան տա՝ որտեղ է եւ ինչ է անում: Գիտեմ, որ ոչնչով չեմ կարող քավել իմ մեղքը նրա հանդեպ, եւ այդ հիշողությունը տանջելու է ինձ, բայց ուզում եմ տեսնել նրան»:

Ու դեռ երկար դեգերում էր քաղաքի դարուփոսերով, մոլորված նայում կանանց դեմքերին, բայց, տարօրինակ է, որքան էլ ջանաց գտնել մեղքի փողոցը, չկարողացավ, ու որքան էլ հարցուփորձ էր անում, անցորդներից ոչ մեկը չգիտեր՝ կա՞ այդպիսի փողոց: Իսկ երբ հարցրեց գուշակ Մոյշա

Էպշտեյնի մասին, կասկածոտ նայեցին նրան եւ ասացին, որ Մոյշան մեռել է երեք տարի առաջ ու թաղված է հին հրեական գերեզմանատանը, եւ ուզածդ մարդ ցույց կտա նրա շիրիմը:

7

Լեգկոբըտովը միայն «Ռուսսկոյե վրեմյայի» համար զինվորական ակնարկ գրելու, խռովարար պատանության հեռավոր օրերի տագնապալի հիշողություններին կամ ներկայի միստիկական ապրումներին տրվելու համար չէր հասել Վիլնա: Պատերազմի սկզբից, ավելի ճիշտ ընթացքի հետ, մինչ Ռուսաստանով մեկ կնանիք տրվել էին զինվորական բամբակած շալվարներ կարելով փող աշխատելու գործին, Պելագեյան անճանաչելի էր դարձել: Արդեն ոչ մի աղջիկ-պարոնի նման էլ չէր. կենդանական վախը սրբել-տարել էր ողջ գոռոզությունն ու մեծամտությունը:

- Կռի՛վ կտանեն: Կտանեն ու կսպանեն նրան,- անվերջ կրկնում էր կինը:

- Ոչ մի տեղ էլ չեն տանի,- զայրանում էր որսորդը:- Մինչեւ նրա բանակի ժամանակը գա, պատերազմը կվերջանա:

- Չի՛ վերջանա,- հուսակտուր ասում էր կինը:

- Իսկ ես քեզ ասում եմ՝ կվերջանա, կհաշտվեն գերմանացու հետ, ի՞նչ ունենք կիսելու, ու գարնան կողմ տղամարդիկ կգան տուն: Հասկացի՛ր, անխե՛լք կնիկ,- բացատրում էր Պավել Մատվեեւիչը՝ դիտմամբ մատչելի խոսելով, թեեւ նույն հաջողությամբ կարող էր համոզել ձիուն կամ ուրիշի մարագում փակված գերմանական հեծանիվի կտորտանքին:- Ինչքան էլ հիմար լինեն վերեւում նստածները, չեն կարող չհասկանալ, որ ռուս գեղջուկը երկար կռվող չի: Ինչքա՞ն ժամանակում ջարդեցին Նապոլեոնին: Կես տարո՞ւմ: Նույնն էլ գերմանացին: Մի տարում չկարողացա՞ն հաղթել, ուրեմն վերջ, խաղաղություն հաստատենք: Թե չէ այնպիսի բաներ կսկսվեն այստեղ, որ ոչ մի գերմանացու հետ չի համեմատի:

Բայց եկավ գարունը, եւ ամայացած գյուղում կնանիք, ծերերն ու դեռահասները դուրս եկան վարուցանքի, ավելի ու ավելի շատ մահվան գրեր էին մտնում գեղջկական խրճիթները, եւ մի գիշեր Լեգկոբըտովն արթնացավ տարօրինակ ձայնից: Պելագեյան կացինը ձեռքին կանգնել էր որդու գլխավերեւում:

- Ի՞նչ ես անում:

- Մատնե՛րը, մատնե՛րն եմ կտրելու,- շշնջաց կինը:

- Ցա՛ծ դիր կացինը:

- Հարազատ տղադ լիներ, էդպես չէիր խոսի: Սիրտդ կցավեր, անհոգի՛, սա՛ռը մարդ: Մենակ գրքերն ու հեռու մարդիկ են մտքիդ, իսկ մոտիկներին ոչ տեսնում ես, ոչ էլ տեսել ես,- ասաց Պելագեյան եւ խղճալի ու անզոր լաց եղավ:- Դե, ներիր, ներիր ինձ, հիմար կնիկ եմ: Ես էլ չգիտեմ ինչ եմ խոսում, վախից խելքս թռցրել եմ: Տար անտառ, Պավլո՛ւշա, մի տեղ թաքցրու նրան, ախր բոլոր ծակուծուկերը գիտես: Գետնափոր սարքեք ճահիճներից դենը, ոչ մեկը էնտեղ չի հասնի, ես էլ ձեզ ուտելիք կբերեմ: Խնդրում եմ, արա՛, հիշիր ինչքան բարիք ես տեսել ինձանից,- աղերսում էր նա, իսկ Լեգկոբըտովը չգիտեր ինչպես վարվի այդ կնոջ հետ, ինչպես հանգստացնի, բայց մի բան պարզ էր՝ հանգիստ չի տալու:

- Իմ երեխաներին էլ այդպես սիրեիր,- տրտնջաց որսորդը, բայց հետո եղավ այն, ինչին ոչ նա էր սպասում, ոչ Պելագեյան. Այլոշան մի օր անհետացավ: Գնաց առանց մի բառ ասելու, որեւէ գրություն թողնելու ու ոչինչ չվերցնելով, բացի հրացանից, որ կողպեքը կոտրելով՝ հանել էր զենքի արկղից:

«Զաուերն» անասելի ափսոս էր, բայց Լեգկոբըտովին ձգում էր երիտասարդի մասին սյուժեն, որը չի ուզում կռիվ գնա ու քաշվում է հեռու անտառները, որտեղ կրակոցները դեռ չեն վախեցրել կենդանիներին ու մարդկանց, եւ որպես անտառային Ռոբինզոն ապրում է վայրի բնության շքեղ գրկում: Ու մտածեց մի կողմ դնել ոչ մի կերպ չգրվող վեպն ու մի ուրիշ պատմություն սկսել, գրել մի շնչում, արագ, այնպես, որ ձեռքը չհասներ բառի ետեւից, իսկ բառը՝ մտքի, ինչպես երիտասարդ տարիներին: Արդեն տեսնում էր իր պատանի հերոսին, որ թաքնվում է մարդկանցից եւ անցնում գազանների խուլ կածաններով, որտեղ չի իշխում մարդկային խելացնորությունը:

Պավել Մատվեեւիչը ճշմարտության հարյուրերորդական մասն էլ չէր կարող ասել, թե ինչ սարսափ է իրեն պատել այդ պատերազմից, միայն երկչոտ, զգույշ, տողատակով իր ամենախորաթափանց ընթերցողներին հասկանալ էր տալիս, որ մարդկանց աշխարհն անբուժելի հիվանդ է, եւ պատերազմն այդ հիվանդության ամենասարսափելի արտահայտությունն է, եւ բոլոր նրանք, որ կանչում ու փառաբանում են պատերազմը, խելագար են ու չարագործ: Բայց չարությունն ու սակավամտությունը ցույց տալը չէր նրա գրողական խնդիրը,- դժվար գործ չի, բոլորն էլ կարող են,- Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովը ոչ թե պետք է ժխտեր, այլ հաստատեր՝ ցույց տար բնության հետ նշանված մարդու ներդաշնակ կյանքը:

Երիտասարդ փախստականն այդ դերի համար կատարյալ էր: Որսորդը հիմա լրիվ այլ կերպ էր ընկալում Ալյոշային, քան այն ժամանակ, երբ ցամաքող Ծելոմի ափին, վերջին նախապատերազմական ամռանը նրա մասին պատմում էր Ուլյանա Կոմիսարովային: Այլեւս չէր արհամարհում խորթ որդուն՝ համոզված, որ բնական կյանքի՝ անտառում գոյատեւելու, համբերատար լինելու, մարմնի անզգայության հասնելու դասերը օգտակար կլինեն, եւ Ալյոշան չի կորչի: Մեկ ուրիշը՝ գուցե, բայց նա սնունդ կհայթայթի, տուն կսարքի, հագուստ կգտնի ու կհաղթահարի դժնի ժամանակը, ինչպես խելացի ու համբերող գազանն է անցկացնում ձմեռը: Եվ դա կդառնա վրահաս ռուսական ժամանակի գլխավոր սյուժեն. ինչպես դիմանալ այդ ժամանակին, գոյատեւել, չկորչել, ինչպես հասնել գարուն, հասնել լույսին ու ջերմությանը ու թույլ չտալ, որ զոհաբերվես պատերազմին:

Բայց ամեն ինչ այլ կերպ գնաց, քան մտովի կառուցել էր Պավել Մատվեեւիչը: Մինչ Պելագեյան, տնտեսությունը բարձիթողի արած, առավոտից իրիկուն խոսում էր սրբապատկերների հետ, իսկ Լեգկոբըտովը տենչանքով ու ագահաբար չափուձեւ էր անում իր մտահղացումն ու նրա մանրամասները, Վըսոկիե Գորբունկի մտավ մի ավտոմեքենա, ինչպիսին գյուղում ոչ ոք երբեք տեսած չկար, ու չէին էլ մտածի, որ աշխարհում լինում են այդպիսի ինքնաշարժվող սայլեր: Նույնիսկ թշնամական հեծանիվին հաղթած խառնածին շները չհաչեցին՝ պապանձվել էին այդ չտեսնված երեւույթից ու պոչերը տակը քաշած՝ հավատարիմ հայացքով հետեւում էին գորշ մեքենային, որ կտրեց փոշոտ փողոցն ու կանգ առաբ Լեգկոբըտովի տան առաջ: Դուռը բացվեց, ու ջահել, դժգոհ համհարգի ետեւից ավտոյից դուրս եկավ լամպասավոր շալվարով, բայց այնքան կարճահասակ ու մանրամարմին մի մարդ, որ անհասկանալի էր՝ ինչո՞ւ գործի դնել մեխանիկական այդ մեծ սարքը այդպիսի վտիտ մարմին տեղափոխելու համար:

Պելագեյան սարսափից մեռած աչքերով նայում էր հյուրերին, Պավել Մատվեեւիչը մորուքն էր քաշքշում՝ պատրաստվելով տհաճ խոսակցության, բայց գեներալը մոտեցավ տանտիրուհուն, հմուտ խոնարհեց գլուխն ու զգացական ձայնով շնորհակալություն հայտնեց նշանառու որդու համար:

- Ի՞նչ, ի՞նչ նշանառու,- շփոթված՝ մրմնջաց Պելագեյան ու դեմքին հիմարավուն, իմաստազուրկ ժպիտ հայտնվեց:

- Ինչ հրաշք է մեր ռուս ժողովուրդը,- ըմբռնում ու հավանություն փնտրելով՝ Լեգկոբըտովին դարձավ փոքրիկ գեներալը ու նրան էլ խոնարհվեց՝ հանձին լարված մորուքի անմիջապես ճանաչելով նշանավոր գրողին ու

ազգագրագետին:- Ձեր որդին, հարգելի՛ս, կամավոր ներկայացել է հավաքակետ, որպեսզի կատարի իր հայրենասիրական պարտքը, եւ չնայած փոքր տարիքին, նշանակում է ստացել հետեւակային գնդում,- բացատրեց զինվորական մարդը. ժպիտը չէր իջնում մաքուր սափրած, անպաճույճ դեմքից, իսկ կլոր շագանակագույն աչքերը սրտառուչ թրջվել էին:- Այնպես որ, ընդունեք, մայրի՛կ, հրամանատարության եւ անձամբ իմ կողմից...

Խոսքն ավարտել չհասցրեց, քանի որ մայրիկը սահեց ցած ու փլվեց համհարզի ոտքերի տակ:

«Ի՞նչ գրողիս պարտք: Պարզապես սիրտը կրակել է ուզել,- դառնությամբ մտածում էր Կարայի հետ գետափ իջած Պավել Մատվեեւիչը:- Հրացանն ավելի շուտ պիտի տված լինեի, տնից չէր գնա: Իմ մեղքն է»:

- Գտի տղայիս, Մատվե՛իչ, ինչ ուզես՝ կանեմ: Գնա՝ ուր կուզես, բաց կթողեմ, լրիվ կազատեմ, մենակ թե մինչեւ էդ գտի նրան: Գտի, Աստծու սիրուն, ու հետ բեր: Չի կարելի երեխաներին պատերազմ ուղարկել: Եթե ինքը քեզ պետք չի, գոնե էդ անիծված հրացանի համար գտի:

«Լրիվ պառավել է»,- տհաճությամբ նայելով կնոջ՝ արցունքներից ուռած դեմքին՝ մտածում էր որսորդը:

- Կռվել է ուզում տղան, թող կռվի,- խիստ ասաց նա:- Իսկ ես ինքս քեզնից կհեռանամ, երբ ժամանակը գա: Ու ոչ էլ թույլտվություն կհարցնեմ:

- Ինքդ գնաս,՝ կփոշմանես,- անզոր շշնջաց կինը:

...Դա բոլորովին այն բանակը չէր, որ Լեգկոբըտովը տեսել էր մի տարի առաջ: Գարնանային եւ ամառային նահանջը թանկ էր նստել բանակի վրա: Գեղջկական սայլերին պառկած վիրավոր զինվորներ, կեղտ, ծղոտե ներքնակներ՝ հոսպիտալներում, ոջիլ, գաղթականներ, վառվող արտեր ու մթերային պահեստներ, որ ոչինչ չմնա թշնամուն, խառնաշփոթ, գողություն, խոսակցություններ դավադրության ու դավաճանության մասին, լրտեսամոլություն, բայց գլխավորը՝ ոգին էր փոխվել: Արդեն ոչ մոտալուտ հաղթանակին էին հավատում, ոչ սեփական ուժին, վախենում էին գերմանացիներից ու խոսում, որ պետք է հաշտություն կնքել նրանց հետ, քանի չեն հասել Պետրոգրադ:

«Ժամանակին նրանք փրկեցին ինձ,- իր ժողովրդի թշնամիների մասին մտածեց Լեգկոբըտովը:- Հիմար, ոչմիբանացու թերահասին կրթություն ու գիտելիք տվեցին, ճիշտ է, վաստակեցին իմ հաշվին, բայց իրենց օգուտն էլ տվեցին, որը կարողացա տնօրինել: Իսկ հիմա կռվով գալիս են, որ ոչնչացնեն... Ինձ, ընտանիքս, խորթ տղայիս, գրքերս: Ինչո՞ւ: Ի՞նչ են անելու այս տարածությունները, այս վայրի, խավար ժողովրդին, որին ոչ կրթել է

հնարավոր, ոչ դաստիարակել, ոչ ոչնչացնել: Բայց չէ՞ որ սա նույն Նիտշչն է: Եթե չլիներ խելագար պրոֆեսորը, նրանք չէին համարձակվի խուժել մեր երկիր: Նիտշչն է նրանց իրավունք տվել, հատել է սահմանը... Հիմար, հիվանդ, դժբախտ դեռահաս, վախեցած մարդկային բնությունից, որը վճռել է հորինել նորը: Նի՛տշչ, Նի՛տշչ, այս ի՞նչ արեցիր, ինչո՞ւ այսքան մարդ հետեւեց քեզ: Դու կարոտում էիր Ռուսաստանը, ձգտում էիր այնտեղ, բայց չէիր վստահում, վախենում էիր, որ կվանի քեզ, ու եկար ոչ թե որպես խոնարհ սիրահար, այլ որպես վախկոտ բռնացող ու խայտառակեցիր եւ՛ քեզ, եւ՛ զոհիդ»:

Պավել Մատվեեւիչը գնում էր Նովո-Սվենցյանի՝ Այլոշային գտնելու, ու գնացքին դեռ երկու ժամ կար: Սանիտարական գնացքի մոտ անօգնական իրար էր անցել անքնությունից կարմրած աչքերով ջահել բուժքույրը: Վիրավոր զինվորները ջուր էին խնդրում, իսկ նա չէր կարող տալ, որովհետեւ ջրաման չուներ: Քույրը վազեց կայարանապետի մոտ:

- Չեմ կարող, օրիո՛րդ, չեմ կարող, ամբողջ ամանեղենը համարակալված է: Կորավ՝ ո՞վ է պատասխան տալու: Ես դրա համար դաշտային դատարանի դատաստանին չեմ գնա:

Մի կորամեջք քահանան հարձակվեց նրա վրա.

- Իսկ Ահեղ դատաստանից չե՞ս վախենում,- ձեռքը տարավ փարաջայի տակ ու դուրս քաշեց դրամաքսակը:- Ահա, ամանեղեն գնեք, քույրի՛կ: Նաեւ՝ հաց, միս, բանջարեղեն վիրավորներին:

Քահանան շրջվեց, ու Պավել Մատվեեւիչը ճանաչեց հայր Միրոսլավին, որին հանդիպել էր Պետերբուրգում, Կրոնափիլիսոփայական ակումբի նիստերին:

- Ինչ լավ է, որ եկել եք,- նրան տեսնելով՝ ոգեւորվեց հայր Միրոսլավը, ու Լեգկոբընտովը զարմացավ, որ սովորաբար լռակյաց քահանան կարող է նաեւ այդպիսին լինել:- Պատերազմի մասին պետք է ավելի շատ գրել: Այ այսպիսի չինովնիկների, անտարբերության, գողության, դավաճանության մասին էլ: Ախր Պետերբուրգում ոչինչ չգիտեն: Կազակների մասին վարդագույն պատմվածքներ են հորինում «Նիվայի» համար, խիզախության, հերոսության մասին: Նրանց բոլոր գթության քույրերը մաքուր հագնված են, սպաները՝ ազնվաբարո, զինվորները՝ նվիրյալ, ուսանողները թողել են համալսարաններն ու որպես հետախույզ գնացել կռիվ: Իսկ այստեղ կարդում ու ծիծաղում են: Այստեղ ոչնչի ու ոչ մեկին չեն հավատում: Այո՛, ոչ ոք չի ուզում ճշմարտությունն ասել պատերազմի մասին: Վախենում են, չեն կարողանում, չգիտեն... Ու ճիշտն ասենք՝ դառն է այդ ճշմարտությունը:

Անցյալ տարի, երբ գրավեցին Գալիցիան, ուղղափառ գալիցիացիք հարազատի պես էին ընդունում մեզ... Մենք հույս տվինք նրանց՝ վերջացավ ձեր գերությունը, այսուհետ բացեիբաց կդավանեք ձեր հավատը, իսկ երբ մայիսին Պերեմիշլը տվեցինք, ի՞նչ անեինք այդ մարդկանց: Մնան՝ կկոտորեն ավստրիացիք: Ստիպված տարանք մեզ հետ: Բաց հազարներ են՝ կանայք, երեխաներ, ծերեր, պատկերացրեք այդքան ժողովուրդը. մեկը մեռնում է, մեկը՝ ծննդաբերում, ուտել-խմել է հարկավոր, անասունին էլ պիտի կեր հասցնես: Ամառ, շոգ, ճանճեր, խոլերա, քանի՛սը մեռան... Եվ ո՞վ պիտի պատասխան տա դրա համար,- նա հառաչեց ու սովոր շարժումով ծխախոտ փաթաթեց:- Արդեն որ ամիսն է, նահանջում ենք: Վարշավան թողեցինք, Ռովնոն թողեցինք, Նովո-Գեորգիեւսկը, Բրեստ-Լիտովսկը, եւ այդ ամենը՝ ամսից էլ պակաս ժամանակում: Ուր որ է Վիլնան կտանք:

- Այդ որ հաստատ չի լինի,- խիստ ասաց Պավել Մատվեեւիչը. պատկերացնել, որ իր սիրելին ման է գալու գերմանացի սպաների, գուցե եւ զինվորների հետ, ավելի տառապալի էր, քան նրան յուրայինների հետ տեսնելը:

- Չի՞ լինի,- հառաչեց հոգեւորականը:- Գիտե՞ք ինչու եմ այստեղ: Սրբությունները տարհանելու՝ Վիլնեցի Անտոնիի, Իոաննի ու Եվստաֆիի մասունքները: Իսկ եթե այդպես է՝ քաղաքը չենք պահի: Առանց նահատակների չի լինի Աստծո կամքը:

«Տերտեր է, բայց ինտելիգենտից էլ վատը,- գրգռված մտածեց Պավել Մատվեեւիչը: - Ի՞նչ կապ ունեն նահատակները»:

- Զարմանալի է,- շարունակեց հայր Միրոսլավը,- գերմանացիները քանակով ոչ մի տեղ մեզնից ավել չեն, բայց ջարդում են մեզ: Իսկ ինչո՞ւ: Որովհետեւ նրանց մոտ ամեն ինչ անհամեմատ լավ է կազմակերպված: Վերջերս խոսում էի մի շտաբայինի հետ: Պարզվում է՝ նրանք գերմանական թերթերից ավելի շատ ճշմարտություն են իմանում, քան իրենց զեկուցագրերից: Երեք օր առաջ Մոլոդեչնո կայարանում մեր զինվորների երեք հազարանոց ամբոխը զինաթափել ու ծեծել է գինու պահեստի պահպանությանը: Այնպես են հարբել, որ ստիպված նրանց զսպել են համազարկային կրակով: Իսկ թիկունքում հազարավոր զինված դասալիքներ են վխտում, հազարնե՛ր: Անկարգություններ են սարքում, նույնիսկ մարտական սպաներն են վախենում նրանցից: Գերմանացուց չեն վախենում, իսկ սրանցից փախչում են: Ի՞նչ կհրամայեք անել դրանց նմաններին:

- Տրիբունալին հանձնել,- պայթեց գրողը:

- Ախր մեղք են: Ինչ-որ մեկի հայրն են: Կամ հակառակը՝ զավակները:

Իսկ հիշո՞ւմ եք ինչպես սկսվեց ամեն ինչ: Ինչքան ցնծություն, հույս, հավատ: Իսկ կամավորներին հիշո՞ւմ եք,- երազկոտ ասաց հայր Միրոսլավը:- Այդ սքանչելի ռուսական դեմքերը, այդ պոռթկումը: Ազատագրել Կոստանդնուպոլիսը, Սուրբ Սոֆիան. մի՞թե հրաշալի չէր այդ ամենը: Մի՞թե այն ժամանակ ուրախություն, հպարտություն չէինք զգում մեր Հայրենիքի համար: Իսկ հիմա ուժով ռազմաճակատ են քշում մորուքավոր մռայլ գեղջուկներին, որ կռվել չգիտեն, չեն ուզում ու միայն խանգարում են: Ջուտ իրենց հողի մասին են մտածում ու թե ոնց ողջ մնան ու շուտ հասնեն տուն: Տասը զինվորին՝ հինգ հրացան: Գնդերում շաբաթներով ավագ սպաների երես չեն տեսնում, կապը լավագույն դեպքում հեռախոսով է, իսկ հաճախ ընդհանրապես կապ չկա: Ահա, խնդրեմ. մի շաբաթ առաջ հետախույզներ էին ուղարկել առաջին գիծ: Գիշերն էր պետք ուղարկել, բայց ցերեկով ուղարկեցին, կրակի տակ ընկան, ու բոլորն էլ զոհվեցին, բացի մի տղայից:

Պավել Մատվեեւիչը, որ մինչ այդ ցրված էր լսում հայր Միրոսլավին, ցնցվեց ու հայացքով կառչեց նրանից.

- Ի՞նչ տղա:

- Լավ ջահել է, ճարպիկ, հմուտ, հրաշալի կրակում է: Նշանառու է: Իր զենքով է եկել:

- «Զաուերո՞վ»,- նույնիսկ չհարցրեց, այլ հաստատեց Պավել Մատվեեւիչը ու կրճտացրեց փտած ատամները:

- Չգիտեմ, ես զենքից բոլորովին գլուխ չեմ հանում, բայց բոլորը ծիծաղում էին նրա հրացանի վրա: Իսկ նա դրանով այնպես վարպետորեն էր խոցում գերմանացիներին եւ ուրախանում էր երեխայի պես: Նույնիսկ սարսափելի էր: Մի բան է, որ հասուն տղամարդիկ են սպանում, լրիվ ուրիշ՝ այդ ցնծացող փոքրիկ հրեշտակը: Հիշում եմ՝ մի անգամ հարցրի՝ տղա՛, ինչո՞ւ ես փախել տնից: Հոր ու մորդ հետ ապրել չէ՞ր լինում: Մտածում էի՝ հիմա կսկսի հայրենասիրությունից, ցարից խոսել: Տեսել եմ այդպիսի երիտասարդների, ճիշտ է՝ ավելի շատ՝ ուսանողներից: Իսկ սա գիտե՞ք ինչ պատասխանեց:

- Ի՞նչ,- առաջ մղվեց Լեգկոբըտովը:

- Պատերազմն իմ անձնական հնարավորությունն է:

- Ինչպե՞ս թե:

- Ես էլ նույնը հարցրի: Իսկ նա՝ սխրանք կգործեմ, ասում է, ու սպայական կոչում կտան: Հարցնում եմ՝ ինչի՞դ է պետք: Ասում է՝ չեմ ուզում գեղջուկ մնամ:

- Ի՞նչ, ի՞նչ,- զարմացավ Պավել Մատվեեւիչը:

- Պատկերացրեք, այդպես էլ ասաց: Այդպիսին են հիմա ջահել գյուղացիք: Հիշում եմ դեռ մտածեցի՝ ինչ կկատարվի Ռուսաստանի հետ, եթե բոլոր գեղջուկները որոշեն պարոն դառնալ:

- Իսկ հետո ի՞նչ եղավ այդ տղան,- գրողն այնպես զգույշ հարցրեց, ասես վախենում էր վախեցնել որսի թռչունը:

- Իսկ հետո սկսեց կարոտել, գիշերները լաց էր լինում, տրտնջում, մորն էր ուզում, չգիտեին ինչ անեն: Վնգստում էր շնիկի պես, որին լքել է տերը: Դե, հիմա եկեք ու ասեք, որ բոլոր դասալիքներին պետք է տրիբունալին հանձնել:

- Հետո՞,- գոչեց Պավել Սատվեեւիչը:

- Մի անգամ հետախույզներն անցան հակառակ կողմն ու այդ հերոսին բռնեցին հենց գերմանական խրամատների մոտ: Ըստ երեւույթին ուզել էր նրանց կողմն անցնի, բայց չէր հացրել: Դեռ, ասենք, թիկունք փախչեր, բայց գերմանացիների մո՛տ:

- Եվ ի՞նչ, հիմա կալանավորվա՞ծ է,- Լեգկոբըտովը փորձում էր այնպես խոսել, որ ձայնը չմատնի, ու չէր կարողանում, բայց հայր Միրոսլավը ոչինչ չէր նկատում կամ ձեւացնում էր, թե չի նկատում:

- Կալանքի տակ պիտի առնեին, բայց մի ենթասպա խղճաց: Վերցրեց իր մոտ՝ վերադաստիարակելու:

- Ի՞նչ ենթասպա:

- Մի շատ տարօրինակ մարդ, ասեմ ձեզ,- շշնջաց քահանան:- Իմ կարծիքով՝ ինչ-որ մեկի կողմից է ուղարկված այստեղ...

8

Գորոխովայա փողոցի բնակարանը ապշեցրեց Ուլյային: Արտասովորն սկսվեց հենց տանը մոտենալու պահից: Ավտոմեքենաներ, կառքեր էին շարվել վարձու բնակարաններով պետերբուրգյան սովորական շենքի առաջ, ինչպես կայարանի հրապարակում: Աղքատիկ ու շքեղ հագնված մարդիկ, աստիճանավորներ, սպաներ, գեղջուկներ, շատ էին կանայք, ոմանք՝ սգաշորով, ուսանողներ, կուրսիստկաներ, գաղթականներ, հրեաներ, լեհեր, միանձնուհիներ, գթության քույրեր, հոգեւորականներ: Մի քանիսը կանգնած էին բակում, մյուսները խմբվել էին սանդուղքի վրա: Սպասում, շփոթվածություն, հուզմունք, բայց ամենից ավելի՝ համբերություն: Ուլյան հիշեց, որ գիմնազիայում իրենց պատմում էին Աֆրիկայի երաշտի մասին, թե ինչպես են ջրխմոցի գալիս վագրեր, փղեր, անտիլոպներ, շնա-

գայլեր, զեբրեր, ու ոչ մի կենդանի չի վնասում մյուսին: Այդպիսի մի բան էլ այստեղ էր կատարվում: Պատուհանի մոտ կանգնած երկու տղամարդ անթաքույց զննում էին բարձրացողներին, ոմանց կանգնեցնում էին, մյուսներին բաց թողնում՝ ոչինչ չհարցնելով: Վերա Կոնստանտինովնային արհամարհանքով նայեցին, Ուլյային՝ խղճահարությամբ: Աղջիկը կարմրեց, բայց հետ դառնալու համար արդեն ուշ էր: Մի բարձրահասակ, չորչորուկ, անգույն աչքերով կին արդեն նրանց առաջ բացել էր դուռը:

- Ո՞ւր եք գնում,- չար հարցրեց կինը:

- Նշանակված է... Աննա Ալեքսանդրովնայից զանգ է եղել... ինքն է ուզել տեսնի,- Ուլյայի ականջին հասավ մայրացուի կամացուկ, երկչոտ շշունջը. բոլորն այդտեղ ցածր ու զգույշ էին խոսում, ասես կանխավ ինչ-որ բանի համար մեղավոր լինեին:

Կինը դժգոհ հետ քաշվեց ու նրանց ներս թողեց դեղին պաստառներով ու մեծ, պղտոր հայելիով ընդունարան: Այստեղ էլ ժողովուրդ էր հավաքված, եւ ջրխմոցի եկած կենդանիների զգացողությունն ուժգնացավ: Բայց Ուլյան ոչ մի ծարավ էլ չէր զգում, ուստի հետ դառնալու ցանկությունն ավելի բորբոքվեց: Եթե կարողանար, վեր կկենար ու դուրս կթռչեր օդանցքով, սակայն բոլոր օդանցքները փակ էին. վախենում էին միջանցաքամիներից:

Սպասում էին տանտիրոջը: Վերա Կոնստանտինովնան լարված էր, եւ այդ զգացումը փոխանցվեց Ուլյային: Նա նայեց հայելու մեջ եւ չճանաչեց իրեն: Ծառագունած այտերով, լայնացած սեւ բիբերով ու բացգույն, ոլորվող մազերով նիհարիկ աղջիկը չէր կարող գիմնազիստուհի Ուլյանա Կոմիսարովան լինել: Մի պարմանի քրիստոնեական կույս էր՝ հնագույն ասքերից, որ այստեղ էր բերվել խայտառակության ու նվաստացման: Անկապ մտքերի պատառիկներ անցան Ուլյայի գլխով, Լեգկոբընտովին հիշեց՝ աղանդավոր պարագլխի մասին իր պատմություններով, որի ազգանունն աղջիկը մոռացել էր, բայց սեռական նողկանքի մասին անհասկանալի արտահայտությունը հիշում էր: Եվ այդ սենյակում գտնվող բոլոր մարդիկ նրան այդ պահին այդ նողկանքի ապագա զոհեր թվացին: «Պետք էր որեւէ բան վերցնել, թեկուզ խոհանոցի դանակ: Ինչպե՞ս մտքովս չանցավ»,- ուշացած մտածեց Ուլյան, ու սրտնեղելուց աչքերը խոնավացան:

Նա այնպես կանգնեց, որ տեսնի հավաքվածներին, միայն թե ոչ ուղիղ, այլ կախարդված ապակու միջով: Ընդունարանում մի քսան մարդ կար, ցածրաձայն զրուցում էին, անկյունում ֆրանսերեն էր լսվում: Խնդրարկուների այդ տարբնույթ, բազմաբղետ խմբում Ուլյայի աչքին ընկավ մի ճա-

շակով հագնված տիկին. արցունքոտ աչքերի արտահայտությունը ոչ մի կերպ չէր համապատասխանում խիստ, վշտալի դեմքին: Թվում էր այդպիսի կինն ընդհանրապես ոչ լաց պիտի լինի, ոչ գա այս անպարկեշտ տունը, եւ կինը հասկանում էր, ամաչում էր դրանից, ոչ մեկին չէր նայում, չնայած եւ չէր թաքցնում կարճատես աչքերը: Ծատ լարված էր, եւ այնպիսի տեսք ուներ, ասես մի սարսափելի որոշում էր կայացրել, ձեռքերը դողում ու ջղաձիգ սեղմել էին պայուսակը: «Այ սա կարծես հասկացել է: Ըհը, հիմա այստեղ պատմություն կսկսվի,- ուրախ մտածեց Ուլյան:- Հետաքրքիր է, ինչ-որ տեղ տեսել եմ նրան: Բայց շատ է փոխվել»:

Սպասումը երկարում էր, բնակարանի խորքից անհասկանալի ձայներ էին լսվում, ինչ-որ բան ընկավ ու գլորվեց, հետո դուռը բացվեց, դուրս եկավ մի մարմնեղ տիկին, դեմքը քողով փակած եւ ոչ մեկին չնայելով՝ արագ գնաց դեպի մուտքը: Նրա ետեւից մի բարձրահասակ նիհար մարդ էր գալիս. մետաքսյա շալվար էր հագել՝ փողքերը լաքած սապոգների ճտքերում, երկարափեշ ռուսական շապիկով ու անթեւնոցով, թեթեւ ու անձայն, որսորդի պես ոտնաձայրերին քայլելով՝ մտավ ընդունարան: Մազերն իջել էին լայն ճակատին, առաջ էր մղվել ամբողջովին ծաղկաչեչով պատած քիթը, անորոշ գույնի մեծ աչքերը փոս էին ընկել տգեղ, բայց յուրովի գրավիչ դեմքին, ստորին շրթունքով մի ոչ մեծ ճաք էր անցնում, ապա կորչում թավ, թաղքած մորուքի մեջ: Սենյակում անմիջապես ինչ-որ շարժում ու հրմշտոց սկսվեց, ինչ-որ մեկը նետվեց նրա մոտ՝ օրհնություն ստանալու, թեթեւ քամու պես խուլ հայհոյանք լսվեց:

- Հապա լռեք,- գոռոցաց անգույն աչքերով վերակացուհին:- Մեր հայրն ինքը կընտրի՝ ում հետ ու երբ խոսի:

Բարձրահասակ մարդն առանձին-առանձին մոտենում էր յուրաքանչյուրին, ուշադիր լսում, ցածրաձայն ինչ-որ խորհուրդներ տալիս, սփոփում, երբեմն բարկանում էր, բայց՝ անչար, ու բոլորովին նման չէր գեղջուկի:

«Բժի՛շկ,- Պոլցիի հիվանդանոցը հիշեց Ուլյան:- Հիմա կսկսի բոլորին մերկացնել»:

- Դո՞ւ ինչի ես էստեղ: Հրա՞շք ես ուզում,- քառասունին մոտ գիրուկ, խանդավառ մի քաղքենուհու հարցրեց մարդը:- Ի՞նչ հրաշք: Քանի՞ երեխա ունես:

- Հինգ:

- Էլ ի՞նչ հրաշք է պետք քեզ: Գնա ու դաստիարակի երեխեքիդ: Ա՛ռ, իմ կողմից նվեր կանես նրանց: Քե՞զ ինչ է հարկավոր, տե՛ր հայր,- հավատարիմ աչքերով նայող գավառական քահանային դարձավ նա:- Քանի՞ ծուխ

ես ուզում: Իսկ ո՞վ է ձեր հովվապետը: Ա՜խ, տե՛ր հայր, եթե Անտոնիին ասես, որ ես եմ ուղարկել, ոչ թե ծուխ կստանաս, այլ կվռնդեն կամ էլ վանք կուղարկեն՝ ապաշխարելու: Էնպես որ, ներող եղիր, տե՛ր հայր: Քե՞զ ինչ է պետք, աղջի՛կ: Թե արդեն աղջիկ չես:

Ուլյայից մի քիչ տարիքով, բայց մեծավարի գեղեցիկ հագնված տիկինը ջանում էր հարգալից արտահայտություն տալ դեմքին, բայց ցատկոտող նեղ բիբերով աչքերը մատնում էին նրան:

- Օրհնություն ստանալու եւ խորհրդի եմ եկել սուրբ մարդու մոտ՝ մի դժվար գործում,- հեզածայն սկսեց նա:- Բայց իմ հանգամանքները խիստ անձնական են, եւ կուզեի, որ...

- Ամուսնացա՞ծ ես:

- Ի՞նչ:

- Հարցնում եմ՝ ամուսնացա՞ծ ես:

- Այո՛:

- Վաղո՞ւց:

- Մի տարի է:

- Իսկ ամուսնուդ սիրո՞ւմ ես:

- Սի...

- Սպասի՛ր,- ընդհատեց կնոջը:- Անցած տարի մի վանական Տիխվինում թեյ հյուրասիրեց ինձ: Նա էլ մի գլուխ սուրբ-սուրբ էր ասում: Իսկ սեղանի տակ արաղի դատարկ շիշ էր: Հարցնում եմ՝ էդ ո՞նց է, որ ինձ սուրբ ես ասում, օգնություն խնդրում, իսկ արաղը սեղանիդ տակ է: Հը՞: Չե՞ս հասկանում,- հանկարծ այնպես գոռաց, որ պատուհանի ապակիները զնգացին:- Չե՞ս հասկանում՝ ինչ եմ ասում: Ամեն ինչ էլ հասկանում ես, լի՛րբ,- զզվանքով նետեց մարդը:- Էստեղից ո՞ւր էիր գնալու: Հը՞: Ո՞ւմ մոտ: Լավ է, որ գոնե կարմրեցիր: Մոռացիր նրան: Վերադարձիր տուն, մարդուդ մոտ, ու գլխիցդ հանի գեշ մտքերը:

- Ինչո՞ւ է նրա հետ այդպես խոսում,- Վերա Կոնստանտինովնային շշուկով հարցրեց Ուլյան:

- Չգիտեմ,- ընդունարանից արագ դուրս եկող ջահել կնոջից էլ թունդ կարմրելով՝ պատասխանեց մայրացուն:

Հերթը հասավ արցունքոտ աչքերով կնոջը: Գունատ էր, աշխարհից կտրված ու նման էր ոչ թե մարդասպանի, այլ զոհի: Ուլյան քարացավ, բայց, մեկ է, չէր լսում ինչ է ասում կինը, սակայն մաշկով զգում էր նրա տառապանքն ու ամոթը: Թվում էր՝ էլի մի քիչ, ու կկորցնի գիտակցությունը, դա մի տարօրինակ փոխակերպություն էր, կամքի փոխակերպում անկա-

մության, ուժի փոխակերպում թուլության ու դյուրաբեկության, նա ինչ-որ բան էր պատմում, միալար, ծանձրալի, անհույս, բողոքում էր՝ ոչինչ չխնդրելով, եւ տանտերն արագ ու մի տեսակ գազանային շարժումով շրջվելով՝ նայեց ներկաներին եւ միանգամից ընդգրկելով բոլոր դեմքերը՝ որսաց չռված աչքերով մի պարոնի.

- Փող կա՞ մոտդ: Տո՛ւր:

Վերցրեց, առանց հաշվելու տվեց արտասվաթոր տիկնոջն ու մեղմ ասաց.

- Վերցրու ու հույսդ չկորցնես: Ու երբեք մի հարցրու՝ Աստված ինչո՞ւ է վիշտ ուղարկում: Նրանով ենք փրկվում միայն:

Կինը տարօրինակ նայեց նրան, ու դժվար էր ասել՝ ինչն էր հայացքում ավելի շատ՝ երախտագիտությո՞ւնը, շփոթմո՞ւնքը, թե՞ տարակուսանքը, ուզում էր ինչ-որ բան հարցնել, եւ Ուլյային թվաց կռահում է՝ ինչի մասին. դա հասկանում էին սենյակում գտնվող բոլոր մարդիկ, եւ կինն էլ զգում էր, որ հասկացել են, ու դրանից տառապանքն ավելի թանձրացավ, բայց մարդը գրկեց նրա ուսերը ու տարավ դեպի ելքը: Դուրս գալուց առաջ կինը պոռթկումով շրթունքները հպեց նրա ձեռքին:

- Լա՛վ, լա՛վ: Տես, է՛: Գնա Աստուծով: Իսկ պայուսակիդ միջինը դեն գցի: Ի՞նչ է, ի՞նձ էիր ուզում սպանել, հիմա՛ր:

- Ինձ:

- Ավելի մեծ հիմարություն է:

Հետո նստեց սեղանի մոտ, վերցրեց գրիչը եւ կոպիտ մատներով անհմուտ բռնելով գրչակոթը, գլուխը հակած, դանդաղ, ջանադրաբար մի քանի ծուռումուռ բառ գրեց թղթին ու տվեց այդ ամբողջ ընթացքում աչքը նրանից չկտրած պատկառելի պարոնին:

- Ա՛ռ, կարդա՛:

- «Սիրալի հարազատ ունթունի լավ տղին գրեգորի»,- հլու-հնազանդ կարդաց պարոնն ու հարցական նայեց գրողին:

- Էդ թղթով գնա Ռուխլովի մոտ: Կարող է՝ չմերժի:

- Ջղային մարդ է,- տխուր ասաց պարոնը:

- Գիտեմ, որ ջղային է: Բայց, մեկ է, գնա:

- Բա որ մեր հայհոյի՞:

- Իսկ դու զսպիր հպարտությունդ ու խոնարհվիր նրան: Սինիստր է, չէ՛:

- Մեկ է, կվռնդի:

- Երանի նրանց, որ հալածվում են արդարության համար: Ճշմարտության ես եկել իմ մոտ, չէ՞:

Պարոնը շփոթվեց եւ ավելի տխուր նայեց իր փողերը տարած կնոջ ետեւից:

- Ուրեմն տառապիր նրա փոխարեն: Իսկ եթե ստի ես եկել, գուցե եւ փողերդ է՞լ անմաքուր էին: Բախտավոր ես, որ հեշտ պրծար դրանցից: Քանի՞ տարեկան ես, գեղեցկուհի՛,- Ուլյային դարձավ տանտերը:

- Տասնվեց,- պատասխանեց աղջիկն ու չգիտես ինչու ավելացրեց:- Ու կես:

- Ո՛ւո՛ւ, ինչ մե՛ծ ես: Եվ ինչի ես եկե՞լ:

Լացելու աստիճան կարմրած Ուլյան շփոթված նայեց խորթ մորը: Թվում էր այդ պահին բոլորն իրեն են նայում ու վատ բաներ մտածում:

- Արի գնանք ներս, էնտեղ էլ ամեն ինչ կպատմես: Իսկ դու, մերի՛կ, մեզ մի սպասի,- Վերա Կոնստանտինովնային դարձավ նա:- Գնա Ցարսկոյե ու Անանուշկային ասա՝ իրիկունը կգամ: Ու էլ բան չասես:

Նա կիսաբաց արեց տան խորքը տանող դուռը, եւ բնակարանն Ուլյային հսկայական ու սարսափելի թվաց, ինչպես Կապույտ մորուքի գետնահարկը:

- Հը, ի՞նչ ես կանգնել, ուլի՛կ: Թե՞ ոտերդ էլ քոնը չեն:

Վերա Կոնստանտինովնան սարսափով, մեղավորությամբ ու համր նախազգուշացումով նայեց խորթ դստերը, բայց Ուլյան արդեն ներս էր մտել:

9

Ծելոմյան ընկերոջ կերպափոխությունն ապշեցրեց Լեգկոբըտովին: Վասիլի Խրիստոֆորովիչը երբեք այդքան առույգ, թարմ, ջահել չէր եղել: Նիհարած, արեւառ, աներեւակայելի պայծառ, խոր աչքերով նայում էր Պավել Մատվեեւիչին՝ առանց որեւէ շփոթմունքի կամ վիրավորվածության, ասես նրանց միջեւ որեւէ գժտություն ու վեճ չէր եղել, կամ էլ եղածն այնքան մանր բան էր տեղի ունեցողի համեմատ, որ նույնիսկ հիշատակման արժանի չէր: Դա լրիվ ուրիշ, նոր, գրողին անծանոթ մարդ էր, ու Լեգկոբըտովը անկեղծ հիացմունքին խառն նախանձի պես մի բան զգաց:

- Հրացանի ետեւի՞ց եք եկել:

- Չէ՛, Այլոշային տեսնելու:

- Քնած է,- ձեռքը գրողին պարզելով՝ ժպտաց մեխանիկը:- Կուրախանա, որ ձեզ տեսնի:

Նրանք դուրս եկան գետնատնից:

- Վերջին օրերին շատ քայլեցինք, հետո էլ խրամատավորվում էինք,

հալումաշ է եղել խեղճը:- Կոմիսարովի ձայնի մեջ քնքշություն լսվեց:- Փառահեղ տղա ուներ: Ճիշտ է, մի քիչ թթվել է, բայց ոչինչ, կանցնի: Երբ ազատ ժամանակ է լինում, հետը մաթեմատիկա եմ պարապում: Գյուղում էի ուզում պարապել, բայց այդպես էլ չհասցրի, ստիպված եմ՝ այստեղ: Շատ արագ է ըմբռնում: Պատերազմը վերջանա, անպայման կուղարկեմ սովորելու: Կտեսնեք, այս պատերազմը շատերին օգտակար կլինի:

Անտառի փեշին խաղաղ էր, աշնանային օրը թեքվում էր դեպի մայրամուտ, թույլ արեւը թիկունքում էր, եւ երկու տղամարդիկ՝ զինվորական ու քաղաքացիական, քայլում էին իրենց ստվերների ետեւից: Տեղանքը մասամբ հիշեցնում էր Շելոմի հովիտը, անծանոթ գետը հոսում էր նրանց ոտքերի տակով ու կորչում հողի կոպիտ ծալքերում: Անշարժում, հանդարտ երկինքը փռվել էր ծառերի սաղարթների ու հնձած դաշտերի վրա, դեպի հարավ ու արեւելք բլուրների ուրվագծեր էին երեւում, դեպի արեւմուտք էին ձգվում ճահիճներ, ճմաթմբեր, մամուռ, հատապտղի թփեր, անտառային ճանապարհներ, լեռնակատարներ, հեռվում մի խաղաղ, փոքրիկ քաղաք էր երեւում, ու Լեգկոբըտովին մի պահ թվաց՝ այդ տարին չի եղել, եւ իրենք քայլում են դաշտամիջի ճանապարհով, ինչպես հաճախ քայլել են:

- Ուրեմն ասում էր՝ ես բոլշեւիկյան լրտես եմ եւ ուղարկվել եմ այստեղ բանակը քայքայելո՞ւ,- քմծիծաղեց Վասիլի Խրիստոֆորովիչը, բայց աչքերը տխուր էին:- Իհարկե, ամեն ինչ ճիշտ է, հենց ռազմաճակատում վիճակը վատացավ, հեղափոխականները շտապեցին զինվորներին հանել պատերազմի դեմ: Այստեղ այդպիսի մի քանիսին բռնել են:

- Եվ ի՞նչ արեցին:

- Չգիտեմ, պետք է որ գնդակահարած լինեն,- անտարբեր պատասխանեց Վասիլի Խրիստոֆորովիչը:- Իսկ ի՞նչ կհրամայեք: Մի տարի առաջ գուցե ես էլ նրանց հետ լինեի: Բայց՝ ոչ այսօր: Խոստովանում եմ, որ ռազմաճակատ եմ եկել ոչնչի չհավատալով: Փախել եմ պատերազմ, ինչպես Մոպասանն էր բարձրանում Էյֆելյան աշտարակը, որ այդ այլանդակությունը չտեսնի: Պետերբուրգի ցույցերը ճնշող տպավորություն էին թողնում: Տեսնել չէի կարողանում ինչպես է դրանցով ոգեւորված դուստրս, ինձ խեղդում էր մայրաքաղաքի այդ ցնծությունը, այդ ամբողջ ցնդաբանությունը՝եւ այդ ժամանակ ձեր միակը՝ ես, կառաջնորդեմ ձեզ Բեռլին: Իսկ երբ հիշում եմ առաջին շաբաթների վակխանալիան՝ երկու ամսում կջախջախե՞նք թշնամուն, մարդկության վերջին պատերա՛զմը... Բոլորն այնպես էին հավատում մոտալուտ հաղթանակին, որ երբ չեղավ այդ հաղթանակը, բոլորից բարձր գոռացողներն իրենց խաբված զգացին: Եվ դա

ամենամեծ ստորությունն էր: Այդ ամենը ոչ մի կապ չունի իրական պատերազմի հետ: Երբ հայտնվեցի այստեղ, լրիվ ուրիշ բան տեսա ու հասկացա: Պատերազմը որպես փորձություն է ուղարկվել Ռուսաստանին, մեզնից յուրաքանչյուրին: Մեզ կներվեն մեր բոլոր հիմարությունները, բոլոր մեղքերը, բոլոր այլանդակություններն ու չարագործությունները, եթե հիմա արժանապատվորեն պահենք մեզ: Ողջ ավելորդը, հինը, չեխովյանը կչքանա, կանցնի, կկորչի, եւ կմնա նորը, թարմը, առույգը: Ու ես սարսափում եմ մտածել, թե ինչ կկատարվի Ռուսաստանի հետ, եթե չդիմանանք այն բարձունքի վրա, ուր մեզ դրել է պատմությունը: Կներեք, որ այսպիսի խանդավառությամբ եմ խոսում, բայց չափազանց երկար եմ լռել, որովհետեւ իմ զինվորներին այս խոսքերը պետք չէին. նրանք առանց այդ էլ ամեն ինչ հասկանում են,- նա մի պահ լռեց՝ ասես սպասելով Լեգկոբըտովի համաձանությանը կամ առարկությանը, բայց Պավել Մատվեեւիչը ոչինչ չասաց, ու Կոմիսարովը ավելի համոզված շարունակեց:- Իսկ ահա ձեր նմաններին պետք են, շատ են պետք: Կասեք՝ սերբերը: Ի՞նչ կապ ունեն այստեղ սերբերը. սերբերը միայն առիթ են: Խնդիրը նրանք չեն, մենք ենք: Մեր եւ ձեր հայրենիքն է ճակատագիրը փոխելու հնարավորություն ստացել, եւ մենք ամենավերջին հանցագործը, դավաճանն ու հավատուրացը կլինենք, եթե չօգտագործենք այդ հնարավորությունն ու չջախջախենք այն երկիրը, որն իր գայթակղողին է ուղարկել մեզ ու մեղավոր է մեր բոլոր աղետների համար: Բայց միայն գերմանացիներին չպիտի հաղթենք: Նախեւառաջ պետք է հաղթենք ինքներս մեզ: Մեր հուլությունը, անձեւությունը, կամազրկությունը: Մենք պետք է բուժենք Ռուսաստանի այն վերքերը, որ խելագար անմտությամբ հասցրել ենք վերջին տարիներին: Պատերազմը դաստիարակություն է, պատերազմը բուժում է, պատերազմը մեր փրկությունն է: Ես երբեք այսքան երջանիկ չեմ եղել: Հպարտանում եմ յուրաքանչյուր սպանած թշնամու համար: Թող որ շատ չեն, բայց կան: Իսկ ամենից ավելի ատում եմ պացիֆիզմն ու պացիֆիզմ քարոզողներին: Բայց ձեզ, կարծես, այնքան էլ հետաքրքիր չի իմ ասածը: Կխոսեմ նրա մասին, ինչ ձեզ հետաքրքրում է: Ձեր մասին: Կարծեմ խնդրե՞լ էի աչքիս չերեւալ:

Պավել Մատվեեւիչը թույլ թոթվեց ուսերը, բայց սիրտը սեղմվեց:

- Դուք ինձ չլսեցիք: Դե ինչ...Հիշո՞ւմ եք, պատմում էիք, որ հետապնդելիս գազանը մեծ ու սարսափելի է թվում, իսկ սպանելուց հետո հանկարծ պարզվում է՝ փոքրիկ բան էր, ու հիասթափվում ես՝ ինչո՞ւ սպանեցի այս փոքրիկին: Ես ուզում էի սպանել ձեզ, ու կգնայի տաժանակրության, որով-

հետեւ ձեր արարքն այնպես անտանելի, անհնարին, այնպես հրեշավոր էր... Եվ եթե չլիներ այդ մարդը...

- Ի՞նչ մարդ,- լարվեց Պավել Մատվեեւիչը, ու նորից սիրտը ծակեց ծանր կանխազգացումը:

- Կարեւոր չէ: Եվ ահա, երբ ձեզ նշանի առա, հանկարծ այլ կերպ տեսա ամեն ինչ: Մտածեցի, ահա կսպանեմ, ու նապաստակի նման ընկած կլինեք գետնին... Իսկ հիմա մտածում եմ՝ ըստ էության ի՞նչ տարբերություն: Ո՞ղջ եք, թե՞ մեռած... Երկար ժամանակ ունեի այդ ամենի մասին մտորելու համար: Դուք գրող եք, դուք պետք է ոգեւորեք, գոտեպնդեք զինվորներին, իսկ ինչ եք անո՞ւմ: Ես կարդացել եմ ձեր ակնարկները «Ռուսսկոյե վրեմյայում»: Այո՛, անկասկած օժտված են բարձր գեղարվեստականությամբ, դուք ճշգրիտ եք մանրամասներում, ձեզ հաջողվում է դիմանկարը, բնապատկերը, չնայած երեւում է, որ այնքան եք սիրում բնությունը, որ ամաչում եք այն նկարագրել: Մի քիչ ավելի վատ են ստացվում երկխոսությունները... Է՞լ ինչ կար: Հա՛, լեզուն լավն է, մաքուր, դուք դրան գյուղում եք սովորել, ձեր կնոջից էլ եք փոխ առել: Բայց, անկեղծ լինենք, ի՞նչ օգուտ ձեր ստեղծագործություններից: Ինչ հետեւություն պիտի անի դրանցից զինվորը, սպան կամ քաղաքացիական անձը թիկունքում: Որ այս պատերազմը մեզ պետք չէ՞: Որ անիմա՞ստ է: Այ գրում եք դասալիքների մասին, որ կրակում, վնասում են իրենց մատները: Իսկ ինչո՞ւ եք գրում: Որպեսզի որեւէ մեկը հետեւի նրանց օրինակի՞ն: Ես հեռու եմ այն մտքից, որ դուք ինչ-որ չար կամք եք կատարում, բայց մի քիչ հեռատես եղեք: Ձեզ թվում է՝ պատերազմի հաջողված պատկեր եք գտել՝ կույր Գողգոթա: Ձանգվածային ինքնազոհաբերում՝ անմիտ եւ աննպատակ: Դե, ուրեմն բացահայտեք այդ նպատակը, այնպես արեք, որ մարդիկ իմանան ինչի՞ համար են մեռնում: Ինչո՞ւ են պատերազմ ուղարկում իրենց որդիներին, ամուսիններին, հայրերին եւ տանը թողնում միայն կանանց ու երեխաներին: Ձեզ համար պատերազմը խելագարություն է: Իսկ մեզ՝ այստեղ գտնվողներիս համար՝ կյանքի իմաստ: Ինչո՞ւ եք ուզում մեզ զրկել այդ իմաստից: Ո՞վ է ձեզ այդպիսի իրավունք տվել: Կարծում եք՝ չե՞մ տեսնում այս տառապանքները, արյունը, թարախը: Չե՞մ տեսնում ինտենդանտական թալանը, անճարակությունը, ստորությունը, դավաճանությունը: Չե՞մ տեսնում ինչպես են ոմանք տալիս իրենց կյանքը, իսկ մյուսները հարստություն են դիզում տառապանքի ու դժբախտության վրա: Ընդունեք սա որպես անխուսափելի նվազագույն չարիք: Ռուսաստանն այսօր մասնատված է, եւ ամենասարսափելին վրա կհասնի այն դեպքում, եթե չկռվող Ռուսաստանը բա-

ռոյալքի կռվողին: Այստեղ լուրեր են հասնում, թե ինչպես են ապրում թիկունքում, քաղաքներում ինչպես են ճարպակալում սպեկուլյանտները, ինչպես են հարստանում, ինչպես են կողոպտում պետական գանձարանը, եւ Աստված չանի, պատռվի այն բարակ թաղանթը, որը ռազմաճակատը բաժանում է թիկունքից, եւ այդ ամբողջ վարակը հորդի այստեղ, եւ բանակը բարոյալքվի: Քանի՛ անգամ կարող էի արձակուրդ գնալ, առաջարկում էին, բայց չեմ ուզում, եւ եթե իմ կամքը լիներ, կռվողներին ընդհանրապես կարգելեի մեկնել թիկունք եւ անհապաղ թիկունքն էլ կվերափոխեի: Կփակեի այդ բոլոր թերթերը, կարձակեի բոլոր կուսակցություններն ու Պետական դուման, որն առանց այն էլ ոչ մեկին պետք չէ, ու վնասից բացի ուրիշ ոչինչ չի տալիս, բայց պատերազմի ժամանակ եռակի վտանգավոր է: Իսկ այս իբր չոր օրենքը: Երբ թեյնիկներով կոնյակ են մատուցում պետերբուրգյան ռեստորաններում...

- Պետրոգրադյան...

- Ես ռեստորաններն էլ կփակեի. հիմա զվարճության ժամանակ չէ: Ողջ երկիրը պետք է դառնա մեկ միասնական ռազմական ճամբար, կայսրության բոլոր հպատակներն անխտիր պետք է կրեն պատերազմական ժամանակի դժվարությունները: Պատերազմը նույնն է, ինչ Մեծ պահքը հավատացյալների համար: Երբ ամեն օր թաղում ու հոգեհանգիստ են անում, երբ ողբում ու տառապում են, չի կարելի հարսանիք անել: Կանենք պատերազմից հետո: Կուտենք, կխմենք, կուրախանանք ու կսգանք մեր զոհվածներին:

Բարձրացան թեք սարալանջով, եւ նրանց առաջ բացվեց հեռուն, որտեղ կանգնած էին գերմանական զորքերը: Պատերազմի ոչ մի նշան չկար, նույնիսկ հատուկենտ կրակոցներ չէին լսվում, չէր երեւում ոչ մի ծխի քուլա, բայց Պավել Մատվեեւիչի սիրտը կրկին սեղմվեց այն մտքից, որ այդ անդորրը խաբուսիկ է, եւ ցանկացած պահի կարող է խախտվել դղրդոցից, գնդակների սուլոցից, արկերի ոռնոցից ու մարդկանց աղաղակից: Մտքի մեջ ընկավ, եւ մեխանիկի խուլ, խրատական ձայնը հասնում էր հեռվից, ինչպես կացնի թխկոցն անտառում, ասես մեկը թաքուն ծառ էր կտրում տերունական պուրակում:

- Պետերբո՛ւրգ, Պետրոգրա՛դ... Մի՞թե դա է կարեւոր: Կարեւորը, որ Պյոտրի՝ հաղթողի պատվին է: Ինչո՞ւ հարյուր տարի առաջ հաղթեցինք այն Հայրենական պատերազմում: Որովհետեւ երկիրը միասնական էր: Հիշո՞ւմ եք Տոլստոյի այն տիկնոջը, որ Նապոլեոնի մասին լսելուն պես լքել էր Մոսկվան՝ աղոտ գիտակցելով, որ նրան ծառայել չի կարող: Բայց վս-

տահ չեմ, որ եթե այսօր գերմանացին հասնի Կիեւ, Մոսկվա կամ Պետրոգրադ, բնակիչները նույնպիսի վճռականությամբ կթողնեն իրենց քաղաքներն ու կվառեն տները, որ բաժին չընկնեն թշնամուն: Ու եթե հանկարծ հայտնվի որեւէ գանգրամազ, դեղնահեր բանաստեղծիկ եւ սխրանք հռչակի, որ ինքը երկրի առաջին դասալիքն է, կասկածում եմ, որ չեն սկսի ծափահարել նրան, փոխանակ հասցնեն մոտակա լապտերասյանն ու կախեն՝ ուշադրություն չդարձնելով նրա բոլոր շնորհներին: Այսօր կա միայն մեկ շնորհ՝ հավատարմություն թագավորին: Գիտեմ, որ ինքս խորապես մեղավոր եմ նրա առաջ, վնասել եմ հայրենիքիս, հանդուգն եմ եղել, անհարգալից, ինքնահավան, չեմ գնահատել, չեմ հասկացել նրան, ինչպես որ հարյուր հազարավոր, միլիոնավոր մարդիկ Ռուսաստանում: Բայց նա նեռել է բոլորիս,- ծղրտան գոչեց Վասիլի Խրիստոֆորովիչը, եւ աչքերում արցունք հայտնվեց:- Թագավորը գլխավորեց բանակը, եւ մենք երախտապարտ պիտի լինենք նրան այդ մեծահոգության համար: Գլխավորել բանակը նրա ժամանակավոր նահանջի պահին. մի՞թե սա խիզախ, վճռական մարդու քայլ չէ:

- Ողջ Ռուսաստանն էր դեմ այդ նշանակմանը,- չհամբերեց Լեգկոբըտովը:

- Ողջ Ռուսաստա՞նը: Ողջ Ռուսաստանն այսօր այստեղ է: Ողջ Ռուսաստանն իմ հետեւակայիններն են: Եվ նրանք ուրախ էին, երբ իմացան, որ թագավորն այսուհետ մեր գերագույն գլխավոր հրամանատարն է: Նրա՝ Աստծո օծյալի հետ մենք կհաղթենք թշնամուն: Ա՜խ, եթե իմանայիք ինչ հրաշալի զինվորներ ունենք: Որքան կրոնապաշտ են, որքան քրիստոսասեր: Եթե տեսնեիք ինչ ոգեւորությամբ են գնում մարտի: Այ դուք, հիշում եմ, ասում էիք իբր ուղղափառությունը ծերացել է, եկեղեցին մեռած է, բյուրոկրատական, ժողովուրդը հեռացել է նրանից, ու միակ հույսը ինչ-որ չտեսնված ժողովրդական ուսուցիչներ են: Ի՜նչ հիմարություն, Լեգկոբը՛տով: Ո՞ւր են ձեր այդ ուսուցիչները: Ոչ մեկին այստեղ չեմ տեսել, փոխարենը տեսել եմ հասարակ գյուղական քահանաների: Ոչ նրանց, որ քաղաքներում տարբեր հիմարություններ են լցնում գլուխները, այլ սովորական, աշխատավոր, գեղջկական տերտերների, որոնց ծաղրում էր Պուշկինը: Ուրեմն թող նա էլ ամաչի: Ես ինքս կյանքում առաջին անգամ ամաչում ու թաքցնում եմ, որ անհավատ եմ: Ես համարյա պատրաստ եմ հավատալ, որքան էլ որ անհեթեթ լինի հավատն առ Աստված, այն պետք է, առանց նրա՝ ոչ մի կերպ: Եվ դա ամենից լավ հասկանում են այստեղ գտնվողները: Ո՛չ, Լեգկոբը՛տով, պատերազմը բարիք է Ռուսաստանի համար: Պա-

տերազմը կոչված է մագրագործելու, թարմացնելու մեր հոգիները: Ինչ-քա՛ն սուտ գրեցին ռուսական բանակի մասին: Հիշեք Տոլստոյի, Չեխովի այդ բոլոր գործերը, «Երեք քույրը», Կուպրինի այդ նույն «Մենամարտը», որ պարզապես կլանում ու գովաբանում էինք բոլորս: Բայց այդ ամենը հիմա այնքան անցած, կծվահամ, հնացած է թվում: Կարծես թե Կուպրինն ինքն էլ է հասկացել: Իսկ դո՞ւք: Դուք հասկացե՞լ եք: Ինչո՞ւ եք եկել: Մի՞թե չեք զգում ձեր վիճակի ողջ կեղծությունը: Ծտապել եք այստեղ, ինչ-որ խառնիխուռն տպավորություններ կհավաքեք ու կշտապեք գյուղում կամ Պետրոգրադում գրելու ձեր ակնարկները՝ հաշվելով, թե ինչքան են վճարելու տողին: Չե՛զ նայեք: Ո՞ւմ եք հետաքրքիր ձեր աղանդավորներով, վայրի թռչուններով, ձեր գրպանային գրական սրտնեղություններով: Մնացեք այստեղ: Մի՞թե չեք ամաչում, որ ձեր տղան կռվում է, իսկ դուք նստել եք թիկունքում: Մնացե՛ք: Փոխարենը՝ հետո, երբ պատերազմն ավարտվի, այնպիսի փորձառություն կունենաք, որ կգրեք ձեր «Պատերազմ եւ խաղաղությունը» ու փառք կբերեք եւ՛ ձեզ, եւ՛ ռուս գրականությանը: Բայց դա՝ հետո: Հիմա գրելու ժամանակը չէ: Ռուսաստանին այսօր գրողներ, բանաստեղծներ, նկարիչներ չեն պետք: Անկեղծ ասած, երբեք էլ պետք չեն եղել, բայց այսօր՝ հատկապես: Ռուսաստանին պետք են զինվորներ, սպաներ, ռազմիկներ, եւ եթե ուզում եք ծառայել Հայրենիքին, թողեք ձեր դատարկ թերթը, զենք վերցրեք, եւ ավելի շատ օգուտ կտաք երկրին: Չէ՞ որ որսորդ եք, լավ եք կրակում: Գուցե ամենը, որ մինչ այս արել եք կյանքում, զուտ նրա համար էր, որ այսօր հայտնվեք այստեղ:

«Խելագարվել է,- ցրված մտածեց Պավել Սատվեեւիչը,- բոլորս էլ կարծես այնքան էլ առողջ ու խելացի չենք, բայց այս մարդը ակնհայտորեն խենթ է: Նրան շուտով կսպանեն: Եվ ամենասարսափելին այս պատմության մեջ այն է, որ ինչքան շուտ սպանեն, այնքան լավ: Վիլնայի մեղսավոր փողոցում կանայք ձեռքից ձեռք կխլեին նրան: Հանրայնորեն վտանգավո՛ր է: Կատաղա՛ծ: Կատաղած շո՛ւն: Բայց չէ՞ որ զինվորներ կան նրա հրամանի տակ, իմ Այլոշան: Ու քանի դեռ սա ողջ է, բոլորին կվարակի իր խենթությամբ»:

- Թե՞ մեռնելուց եք վախենում: Մի վախեցեք: Հայրենի հողի համար մեռնելը մի՞թե երջանկություն չէ: Մի բան է միայն սարսափելի՝ այդ գազաններին գերի ընկնելը, բայց այդ դեպքի համար միշտ մի փամփուշտ ունեմ պահունակում:

- Ես, մեկ է, չէի կարողանա կրակել մարդկանց վրա,- ասաց Պավել Սատվեեւիչն ու շրջվեց:

- Դո՞ւք,- խռպոտ հարցրեց Կոմիսարովը, ու Պավել Մատվեեւիչը ֆիզիկապես զգաց այդ մարդուց հորդող ցասումը, բայց հաջորդ պահին մեխանիկը կարողացավ զսպել իրեն:- Հիմա ժամանակը չէ,- մրմնջաց նա՝ ատամները սեղմելով, եւ համոզված ասաց:- Սա որսորդություն չէ, պատերազմ է, Լեգկոբը՛տով, պատերա՛զմ: Ամենավեհը, որ կա աշխարհում: Պատերազմում մարդիկ չկան: Կան յուրայիններ եւ օտարներ: Դա է միակ հայտանիշը: Եվ դուք, ի բարեբախտություն ձեզ, դեռ յուրային եք ինձ համար, դրա համար էլ ձեռք չեմ տա: Իսկ օտարներին կսպանեմ: Ցանկացածին, որ ոտնձգել է,- կարեւոր չէ՝ իր կամքով, թե ինչ-որ մեկի հրամանով,- իմ երկրի դեմ: Հիմա մի մայրաքաղաքային փիլիսոփայի գիրքն եմ կարդում: Առաջ ահավոր բաներ էր գրում, նույնիսկ ձեզնից շատ ավելի վատ, այնպես, որ ընդհանրապես հնարավոր չէր կարդալ՝ այդ բոլոր լուսնային մարդկանց մասին, անվերջանալի բառահեղեղ, սեթեւեթանք, անատամ հարձակումներ Քրիստոսի վրա, սեռական հարց, հրեական հարց, աղանդավորներ, գրողներ, Եգիպտոս, ինչ-որ ապուշ հնագույն մետաղադրամներ, կարծես գրելու ուրիշ ոչինչ չկար: Նա սարսափելի էր, ինչպես Նիտշչը, եւ, ըստ էության, հենց Նիտշչ էր, որ կար: Ռուսական Նիտշչը, ձեր կուռքը: Իսկ հիմա նայեք այդ մարդն ինչ հզոր է գրում պատերազմի մասին: Հայրենական մեծ պատերազմ եւ ռուսական վերածնունդ: Ահա միակ արժանի թեման: Նա ձեր համքարությունից միակն է, որ կարողացավ վրայից թափ տալ խաղաղության թեփը, որով պատված էինք բոլորս, ու հասկանալ՝ այսօր ինչ է զգում Ռուսաստանը եւ ինչով է ապրում: Նա հավատ է ներշնչում հաղթանակի հանդեպ, Ռուսաստանի հանդեպ, նրա բանակի ու թագավորի հանդեպ: Նա գիտի, որ հրաշալի, խիստ ու պատասխանատու օրեր ենք ապրում, որոնք հետո հիշելու ենք որպես լավագույնը, որ եղել է մեր կյանքում,- Կոմիսարովը ծոցից մի բարակ, մաշված գրքույկ հանեց, թերթեց, ու Պավել Մատվեեւիչը հասցրեց տեսնել հեղինակային մակագրության պես մի բան՝ տիտղոսաթերթին:

- Որտեղի՞ց:

- Ի՞նչ: Հա՛, ինքն է մակագրել նվիրելիս:

Լեգկոբըտովը սուր, այրող խայթոց զգաց. ցանկություն առաջացավ Վասիլի Խրիստոֆորովիչի ձեռքից խլել գրքույկն ու պատառոտել, բայց նախ՝ տեսնել ընկերոջն ինչ կարող էր մակագրած լինել իր մաղձոտ ստեղծագործողը, բայց դրա փոխարեն հարցրեց.

- Իսկ եթե համենայնդեպս պարտվե՞նք:

- Իսկ եթե պարտվենք, պատմության մեջ չի լինի սրանից ավելի

հերյուրված ու հայհոյված պատերազմ,- չար ծղրտաց Վասիլի Խրիստոֆորովիչը:- Մեզ բոլորիս կխառնեն ցեխին, ամեն ինչ կկորցնի իմաստը, ոտնատակ կարվի, կուրացվի: Բայց այդ դեպքում առավել եւս ձեր պարտքն է՝ գրել այս պատերազմի մասին: Լսե՛ք...

10

Սենյակը, ուր մտավ Ուլյան, տարբերվում էր ընդունարանից, բայց ոչ մի ճոխություն այնտեղ չկար: Պատերին՝ մի քանի սեւացած սրբապատկեր, որոնց առաջ վառվում էին կանթեղները, բայց հոտն այնպիսին չէր, ինչպես եկեղեցում. խոնավության ու բորբոսի հոտ էր փչում: Սենյակի կենտրոնում մի մեծ սեղան էր դրված՝ առանց սփռոցի, շրջապատված մաշված նստիքներով վիեննական աթոռներով: Բաց դուռը տանում էր առանձնասենյակ, եւ Ուլյան հասցրեց տեսնել գրասեղանը՝ դատարկ թանաքամանով ու առանց մի հատիկ թղթի, արհեստական կաշվով պաստառած բազմոցը ու մի ծեր, մաշված բազկաթոռ: Եվ ամբողջ բնակարանն էլ հնամաշ ու անհարմարավետ թվաց՝ Պոլցիի կայարանի սպասասրահի պես:

- Իսկ ես քեզ հիշում եմ,- ասաց տանտերը, ու ներողամիտ մի արտահայտություն հայտնվեց կնճռոտ, մազակալած դեմքին. այդպես տարեց մարդն է հետեւում մանկական չարություններին:

- Բայց ես ձեզ չեմ հիշում,- կտրեց աղջիկը՝ կամքի վերջին փշուրներն ի մի բերելով, ու քաշվեց դեպի պատուհանը:- Որտեղի՞ց կարող եք հիշել:

Չորրորդ հարկից բակը հեռու էր թվում: Երկու հոգի կանգնել՝ վերեւ էին նայում: Փքված պարոնը, շուրջը նայելով, բռունցքով կուրծքը ծեծելով՝ կտրում էր բակը: Հետո ասես ուշքի եկավ ու վազեց: «Այն կնոջ ետեւից: Ուշ է՝ չի հասնի: Իսկ ես, եթե մի բան լինի, անմիջապես ցած կնետվեմ»,- մտածեց Ուլյան ու հանգստացավ իր վճռականությունից:

- Պալատում եմ տեսել, Պետրուշայի մոտ: Այ էսքան պուճուր աղջիկ էիր,- ցույց տվեց ձեռքերով,- չաղո, խելոք, վստահող, իսկ հիմա նիհարել ես, չար ես ու կասկածամիտ:

- Ստում եք: Ոչ մի պալատում էլ չեք եղել:

- Ինչի՞ որ:

- Որովհետեւ ձեզ ոչ ոք ներս չէր թողի:

- Հիմա չէին թողի,- հեշտ համաձայնեց մարդը:- Իսկ էն ժամանակ ոչ թե թողել, խնդրել էին, որ գնամ: Կառք էին ղրկել հետեւիցս: Պետրուշայի ախպերը՝ քո կնաքահայրը, հիմա իմ թշնամին է, սպառնում է, որ կկախի, եթե

չգնամ բանակ, իսկ էն ժամանակ ինքն ու սիրականը աղաչում էին, որ իրանց համար բարեխոս լինեմ թագավորի մոտ:

- Ինչո՞ւ,- հարցրեց Ուլյան, չնայած չէր պատրաստվում ոչինչ հարցնել:

- Որ թույլ տա ամուսնանան: Ինձ ատում են նրանք, ովքեր ժամանակին ինձ էստեղ են բերել: Եվ սիրում են, ովքեր ժամանակին ատում էին: Զարմանո՞ւմ ես:

- Դա ինձ չի հետաքրքրում:

- Եկել ես, որ կոպտե՞ս,- ուրախ-ուրախ հարցրեց մարդը:

- Եկել եմ, որովհետեւ մայրացուս էր խնդրել, որ գամ:

- Էդքա՞նը:

- Ճի՞շտ է, որ դուք կարող եք օգնել հորս:

- Դու էլ կարող ես օգնել:

- Ձեր կարծիքով ի՞նչ պիտի անեմ:

- Պիտի աղոթես նրա համար:

- Աղոթում եմ,- չկամ պատասխանեց Ուլյան. մանկուց այնքան էլ կրոնասեր չէր, իսկ որոշ ժամանակից ի վեր Բարձրյալին սկսել էր վերաբերվել որպես ուսուցչի, որը կարող է պատժել վատ վարքի ու խրախուսել լավի համար: Վերջերս էլ, հատկապես դատապարտված, տանջահար ժպտացող դասարանական դաստիարակչուհու պատճառով, Ուլյային թվում էր՝ իրեն բոլորովին լավ չի պահում, ուստի, եթե մի ավելորդ անգամ հիշեցնի իր եւ իր խնդրանքների մասին, դրանից ոչ մեկի համար լավ չի լինի: Իսկ այսպես, գուցե եւ դուրս պրծնի՝ ոչ մեկը չի նկատի, չի կանչի գրատախտակի մոտ ու չի իջեցնի վարքի գնահատականը:

- Էդ ի՞նչ աղոթք է: Սառն ես աղոթում, անտարբեր, ծույլ,- առարկեց մարդը:- Պետք է ջերմեռանդ աղոթել ու ոչնչից չվախենալ: Գիտե՞ս ինչ է իսկական աղոթքը: Լաց է, ճիչ է, հանդգնություն, վազք, պար է Աստծո առաջ: Միայն այդպիսի աղոթքը կլսի ու կտեսնի Աստված: Իսկ քո այդ ամբողջ նվնվոցը ոչ մեկին պետք չի: Գիտե՞ս Աստված ամենաշատը ում չի սիրում:

- Մեղավորներին:

- Ոնց կարող է չսիրել նրանց, ում եկել է փրկելու, ում համար խաչ է բարձրացել: Աստծո օրենքից քեզ՝ երկու: Վախկոտներին ու թույլերին չի սիրում:

- Ես թույլ չեմ,- զայրացավ Ուլյան:

- Աղոթքում թույլ ես: Իսկ պետք է խուլիգան լինել: Աստծո թագավորությունն ինչո՞վ են նվաճում:

Ուլյան հիշեց դաստիարակչուհուն:

- Չգիտեմ: Հնազանդությամբ: Լավ վարքով:

- Ուժով են նվաճում: Պիտի պահանջես, թակես դռները, զահլա տանես, գոռաս ամբողջ աղոթքի ժամանակ: Իսկ դու դրա փոխարեն կռիվ ես տալիս մայրացուիդ հետ: Մա՛րդ ես գտել: Կարծում ես Աստծուն հաճո՞ է, որ նույնը խնդրող երկու հոգի ատեն իրար:

- Բողոքե՞լ է,- քամահրանքով հարցրեց Ուլյան:

- Ինչի՞, ես աչք չունե՞մ: Նա բարի է ու սիրում է հորդ:

- Որ սիրեր, գիշերները ամուսնուց անտառ չէր փախչի:

- Դատարկ բան է, Ո՛ւլյուշկա:

- Դատարկ բա՞ն,- Ուլյան հիշեց երիտասարդ տիկնոջը:

- Հի՛ն: Անցա՛ծ: Մոռացի՛:

- Որ սիրեր, այստեղ մենակ չէր թողնի նրա աղջկան,- համառորեն իրենն էր պնդում Ուլյան՝ պատուհանի կողմը խեթելով:

- Ախ, ահա՛ թե ինչ,- քմծիծաղ տվեց մարդը, եւ աչքերն աղոտ փայլեցին:- Վայ թե հավատում ես էն վատ բաներին, որ մարդիկ իմ մասին խոսում են:

- Չգիտեմ,- քրթմնջաց Ուլյան՝ չնայած դեռ մի որպե առաջ հավատում էր:

Մարդը մոտեցավ նրան, այնքան մոտ, որ Ուլյան զգաց ինչպես է զարկում նրա սիրտը՝ արյունը մղելով ուժեղ, նիհար մարմնով:

- Վախենո՞ւմ ես ինձնից:

- Ոչ,- մրմնջաց աղջիկը:

- Եվ ճիշտ ես անում՝ մի՛ վախեցի: Սուտ են ասում: Ամենասկզբից սուտ են ու մինչեւ աշխարհի վերջն էլ ստելու են, որովհետեւ սատանան է նրանց հայրը: Որ իմ մասին սուտ են ասում, էդ ոչինչ: Փորձանքն էն է, որ մայրիկի ու հայրիկի մասին են ստում: Սիրո՞ւմ ես նրանց:

- Ծնողների՞ս,- հառաչեց Ուլյան:

- Թագավորին ու թագուհուն, նրանց երեխեքին: Սիրո՞ւմ ես:

- Սիրում եմ,- եւ աղջիկը հիշեց մարդկային բազմությունը Դվորցովայա հրապարակում, հոր կողքին կանգնած ծովային հագուստով լրջադեմ գեղեցիկ տղային, բայց պատկերն անհստակ էր, մշուշված, եւ նույնպիսի զգացում էր սրտում: Ոչ թե զգացում, այլ զգացման թույլ հիշողություն:

- Հիմա սիրում ես, հետո կատես,- դառնությամբ ասաց մարդը:- Ատում ես, հետո էլի կսիրես, բայց արդեն ուշ կլինի: Ախ, շա՛տ ուշ կլինի:

Ձայնը խլացավ, եւ աչքերն անթարթ սեւեռվեցին Ուլյային: Ոչ մի բարի

ծերուկ, ոչ մի անտառային Պան՝ հարցախույզ, ցասկոտ հայացք, ճշգրիտ շարժումներ, եւ ոչ մի տեղ չես փախչի այդ աչքերից ու քո աչքերն էլ չես փախցնի: Արյունը խուժեց Ուլյայի գլուխն ու սիրտն ուժգին խփեց:

- Ձեր միսն եք ծամելու, մեղա եք գալու, փառք եք գոչելու, բայց ի՞նչ օգուտ, ուղղափառնե՛ր:

Նա պահարանից մուգ հեղուկով մի փոքրիկ գրաֆին հանեց:

- Իսկ հարազատ մայրդ ո՞ւր է, գիտե՞ս:

- Չէ՛:

- Մեղադրո՞ւմ ես նրան:

- Չեմ հասկանում,- մի քիչ հապաղելով՝ ասաց Ուլյան:- Չեմ հասկանում՝ այսքան տարում ինչու ոչ մի անգամ չփորձեց գտնել ինձ:

Մարդը գլուխը քաշեց բաժակը, հետո՝ մեկն էլ, ու կարմրած դեմքը խիստ աշխույժ ու արահայտիչ դարձավ:

- Ուրեմն չի կարողացել: Մի՛ մեղադրի նրան, ոչ մեկին մի մեղադրի: Եվ արդարություն մի փնտրի. չկա արդարություն ու չի լինելու: Ու ոչ մի իմաստ էլ մի փնտրի: Իմաստ թող դպիրներն ու փարիսեցիները փնտրեն: Գթասրտություն խնդրի: Աստծուն սիրի, Ո՛ւլյուշկա: Ինչ էլ որ պատահի, սիրի նրան ու մի տրտնջա: Ամեն ինչ նրա ձեռքին է: Ամեն ինչ նրա կամքով է: Վստահեցիր նրան, քեզ մոռացար՝ կփրկվես: Համառեցիր՝ կկորչես: Եկեղեցի չե՞ս գնում: Ուրեմն քո բառերով աղոթիր նրան, ամենուր, փողոցում, տանը, ցերեկը, գիշերը աղոթիր, ուրիշ ոչնչի մասին մի մտածի, միայն նրա: Մենակ էդ դեպքում աղոթքդ տեղ կհասնի: Չուրանաս նրան, ինչ էլ որ լինի, չուրանա՛ս: Մեղք կանես, կընկնես, խոզի պես թավալ կգաս ցեխերում, կբարձրանաս երկինք՝ հիշիր Աստծուն: Ոչ թե նա, մենք ենք նրան լքում: Դե՛, արի մոտս, օրհնեմ քեզ:

Ուլյան մոտեցավ ու հանկարծ տաքություն զգաց: Տապը ծոծրակից ողնաշարով իջավ, բռնեց ողջ մարմինը՝ ոտքերից մինչեւ քթի ծայրը: Եվ քաղցր ու ամոթալի էր միաժամանակ: Չէր հասկանում ինչ է կատարվում իր հետ, երբեք այդպես չէր դողացել՝ ո՛չ Ալյոշայի հետ, ո՛չ նավակում՝ Ծելոմի վրա, ո՛չ աղջկական շոգ երազներում:

- Դե՛, դե՛,- նրան խաչակնքելով՝ կամացուկ ասաց մարդը:- Արդեն հարսնացու ես: Բայց դեռ ժամանակը չի: Պիտի համբերես: Սպասի, հիմա աղջիկներիս հետ կծանոթացնեմ:

Նա ինչ-որ տարօրինակ կոկորդային, թռչունի ձայն արձակեց, ու երկու աղջիկ մտան հյուրասենյակ: Մեկը Ուլյայի տարիքին էր, մյուսը՝ ավելի մեծ, բայց երկուսն էլ այնքան խիստ, որ Ուլյան երկնչեց: Օրիորդների պես էին

հագնված, բայց երկարափեշ շղարշե զգեստները երկուսի վրա էլ վատ էին նստում: Մազերն անհմուտ էին հարդարված: Ու չգիտեին՝ ուր թաքցնեն ձեռքերը: Կանգնել էին՝ աչքերը խոնարհած:

- Մատրյոշկան ու Վարվառան: Ուզում եմ թագավորի աղջիկների հետ դաստիարակվեն,- ասաց մարդը, ու պարծենկոտ արտահայտություն խաղաց գեղջկական դեմքին:- Առայժմ գիմնազիա եմ տվել սովորելու, Ստեբլին-Կամենսկու մոտ: Բայց քաշվում են, ոչ մեկի հետ ընկերություն չեն անում, բողոքում են, թե՝ գեղցի են ասում մեզ, ու խնդրում են, որ հանեմ էնտեղից: Այ որ ընկերանայիր հետները, պահելու ձեւ սովորացնեիր:

Աղջիկները թունդ կարմրեցին ու չար նայեցին Ուլյային:

«Մեկը լինի՝ ինձ սովորեցնի»,- մտածեց նա, բայց ոչինչ չասաց:

Ճաշ մատուցեցին. ձկնապուր, ամսական բողկ, թթու կաղամբ, կարտոֆիլ, կվաս՝ վարունգով ու սոխով: Տանտերը վեր կացավ, աղոթք արեց, խաչակնքվեց սրբապատկերի առաջ, դեմքը պայծառ էր, ջահելացած, մեջքը՝ շիտակ, լարի պես ձիգ, բայց աղոթքն ավարտվեց, եւ նա նորից վերածվեց գուցե թե իր տարիքի համար չափազանց շարժուն սովորական մարդու: Թեթեւակի գինովցած գեղջուկ, որոնց Ուլյան տեսել էր Գորբունկիում, հանդիպել բազմության մեջ՝ կայարաններում ու հրապարակներում, միայն աչքերը աներկրային էին, քննախույզ, խորաթափանց:

Ոչ մեկին ափսե չտվին, ուտում էին՝ գդալները հերթով սեղանի մեջտեղը դրած ձկնապուրի մեծ թասի մեջ թաթախելով: Ոչ մեկը մյուսին չէր խանգարում, ոչ մեկի գդալից չէր կաթում, միայն Ուլյայի գդալից, որքան էլ ջանում էր, երբեմն մի քանի կաթիլ ընկնում էր սեղանին: Աղջիկները նկատեցին դա եւ իրար նայեցին: Ուլյան ցած դրեց գդալը:

- Համով չի՞:

- Կշտացա:

- Վայ թե մսի ես սովոր, հա՞: Պետք չի, լեշ մի կեր,- փաղաքուշ ասաց տանտերը:- Միսը մարդուն վառում է, ձուկը՝ պայծառացնում: Մեր Փրկիչը ձուկ էր ուտում: Դու էլ կեր:

Եվ Ուլյան անխոս վերցրեց գդալը, որից նորից սեղանին ընկան ձկնապուրի ծիածանագույն կաթիլները:

Ճաշավարտին սենյակ մտավ վարդագույն այտերով ու ցորնագույն այտմորուսներով մի հաստլիկ եւ կռանալով՝ ինչ-որ բան շշնջաց տանտիրոջ ականջին:

- Հիմարություններ ես խոսում,- կտրուկ պատասխանեց նա:- Ի՞նչ է ուզում ինձանից:

Հաստլիկն ավելի եռանդով շշնջաց:

- Ոչ մի տեղ էլ չեմ գնա, թող ինքը գա իմ մոտ:

- Չի կարող գալ այստեղ,- աղիողորմ ասաց հաստլիկը:

- Ինչո՞ւ չի կարող: Հիվա՞նդ է:

- Վախենում է:

- Ինչի՞ց է վախենում:

- Մարդիկ ի՞նչ կասեն:

- Ցասնվեց ու կես տարեկան աղջիկը չվախեցավ, իսկ նա վախենում է: Դրանից ի՞նչ մինիստր:

Ուլյան իր վրա զգաց այցելուի չտեսնող հայացքը:

- Հավատարիմ կլինի:

- Վախկոտները հավատարիմ չեն լինում:

- Թագուհին է խնդրել նրա համար,- վերջին հաղթաթուղթը բացեց հաստլիկը:

- Մայրիկը շատերի համար է խնդրում: Լա՛վ, գնանք նայենք քո պետին,- հառաչեց տանտերը՝ ճիշտ ու ճիշտ շուկա եկած գեղջուկի պես, որն ուզում է լծասարք առնի ձիու համար, բայց կարգին բան չի գտնում:

Նրա դուրս գալուց հետո Ուլյան մենակ մնաց քույրերի հետ: Աղջիկներն առաջվա պես խոժոռ էին նայում, եւ Ուլյան վախեցավ, որ հիմա վեր կկենան, կծեծեն իրեն ու վզակոթին տալով՝ դուրս կշպրտեն սենյակից: Հատկապես մեծից էր վախենում՝ խոշոր, կոպիտ ու խիստ վճռական Մատրյոնայից: Ուլյան պատկերացրեց նրան գիմնազիայում ու մտածեց, որ գեղջկուհին շատ մեղմ է ասված: Այդ օրն արդեն երկրորդ անգամ բնակարանից նահանջելու ուղիներ էր փնտրում, բայց այդ պահին հիշողության խորքից դուրս լողաց «վախկոտների ու թույլերի» մասին խոսքը, ասես տանտերը ոչ մի տեղ էլ չէր գնացել, այլ թաքուն հետեւում էր նրա առաջին դասին:

- Եվ ինչի՞ց եք դժվարանում: Լեզունե՞րը: Պատմությո՞ւնը: Աշխարհագրությո՞ւնը,- կտրուկ հարցրեց նա:

- Նիքսենը,- մռայլ ասաց Մատրյոնան:

- Ի՞նչ, ի՞նչ: Նիքսե՞նը,- թեթեւացած շունչ քաշեց Ուլյան:- Բայց դա շատ հեշտ է: Ահա, տեսեք: Առաջ բերեք աջ ոտքը, իսկ ձախի ծայրը թեթեւ հպեք հատակին: Հիմա կքանստեք, գլխավորը, որ մեջքն ուղիղ լինի, ձեռքերն այսպես պահեք, գլուխը մի քիչ հակած, հետո թեթեւ բարձրացեք,- նա նրբագեղ ծնկածալ ողջույն արեց ու գոչեց:- Աչքե՛րը: Ամենակարեւորը աչքերն են: Երբ կքանստում եք, իջեցրեք կոպերը, իսկ բարձրանալիս վեր նայեք: Ամեն ինչ կախված է նրանից, թե ով է ձեր առաջ: Մի բան է տնօրի-

նուիին, մեկ այլ բան՝ դասարանային դասիարակչուհին, բոլորովին ուրիշ, երբ տղամարդ է: Բացի այդ, կարելի է նաեւ այսպես, սա կոչվում է «թաթախել», երբ չես ուզում, բայց պետք է: Իսկ հիմա՝ դու,- դիմեց փոքր քրոջը, որը նրան մի փոքր ավելի հաշտ ու պակաս վտանգավոր էր թվում:

Ուլյան իրեն արգելեց ծիծաղել, այնպիսի զգացում ուներ, ասես մարտահրավեր էր նետվել իրեն, ու ճակատից հետ գցելով մազափունջը՝ սկսեց ծալել աղջիկների անզգա, փայտացած ոտքերն ու շտկել կորսետի անսովոր մեջքերը:

- Այ այդպե՛ս, այդպե՛ս, կեցցե՛ք, հրաշալի՛ է,- գովում էր Ուլյան՝ հաճույքով նայելով, թե ինչպես են ենթարկվում քույրերն ու միեւնույն ժամանակ խանդով նայում իրար:

Ուլյային անսպասելիորեն դուր եկավ այդ դերը, որն ինչ-որ նոր, իմաստավորված շարունակություն էր խոստանում: Այդպես երեխա ժամանակ սիրում էր արծանիկներ ծեփել կավից կամ խմորից, եւ հիմա այդ երկու աղջիկները նրան այն նյութն էին թվում, որին կարող էր տալ ցանկացած ձեւ: Հիշեց ինչպես էին իրեն քմծիծաղով նայում Գորբունկիի աղջիկները, ու վրեժխնդիր հաճույքով մտածեց՝ քաղա՛ք տեղափոխես դրանց, ավելի ուժեղ կդողային:

Իսկ քույրերն այդ ընթացքում դադարեցին խրտնել, լեզուները քիչ-քիչ բացվեցին, սկսեցին պատմել իրենց գյուղի, ուխտավոր Դմիտրի Պեչյորկինի մասին, որը երկար ապրել էր Աֆոնում եւ պատերազմից մեկ տարի առաջ ինչ-որ խառնակչության պատճառով վերադարձել տուն, նրա քույր Դունյայի մասին, իրենց մոր, եղբոր մասին, եւ միայն հորն էին շրջանցում: Պատմեցին միայն, թե ինչ սարսափելի էր, երբ անցած ամառ քիչ էր մնացել սպանեն նրան:

- Ու եթե էդ վերքը չլիներ, գուցե եւ ոչ մի պատերազմ էլ չէր լինի,- շեկ, նոսր մազափունջը մատին փաթաթելով՝ ասաց Մատրյոնան:

- Նա դե՞մ էր պատերազմին,- զարմացած հարցրեց Ուլյան, եւ տենդի ու զառանցանքի միջով կրկին հիշեց գյուղը, աղեկտուր լացող կանանց, ապա Ձմեռային պալատի հսկա հրապարակը, խաչվառները, սրբապատկերները, պատշգամբն ու հազարաձայն երգչախումբը. «Աստվա՛ծ, փրկիր քո ժողովրդին...»:

- Հայրիկը հեռագրեր էր ուղարկում թագավորին, որ դիմանա ու պատերազմ չսկսի: Ինքս եմ դրանք տարել փոստատուն: Մեր տան Աստվածամոր սրբապատկերը լաց եղավ: Հայրիկն ասաց, որ աղետ է լինելու:

- Խղճում է մարդկանց: Ու Միտյային՝ մեր եղբորն էլ է խղճում: Չի ուզում, որ զինվոր գնա:

- Իսկ ձեր մա՞յրը որտեղ է:

- Մայրիկը գյուղում մնաց: Եկել էր այստեղ, բայց ասաց, որ քաղաքում չի ապրի: Իսկ հայրիկը տես մեզ ինչ է նվիրել:

Վարվառայի կապույտ աչքերը պարզասիրտ նայում էին Ուլյային: Աղջկա ձեռքին երկու խոշորացույց ապակիներով սարք էր, ու նրանք սկսեցին լուսանկարներ նայել: Լուսանկարներում ռուս զինվորներ էին՝ գերմանացի զինվորներին գերի վերցրած ծիավոր կազակներ, զորակոչված գեղջուկներ՝ կարտուզներով ու ուսապարկերով, մեծ սվինավոր հրացանով զինվոր՝ մարտական ընկերոջ թարմ գերեզմանի մոտ, արեւմտաուկրաինական փոքրիկ քաղաքի հրապարակում կանգնած գունդ: Մի վանող լուսանկար կար. զինվորը փսխում է եւ մակագրություն՝ «Պասբացեքի հետեւանքը»: Զինվորական լուսանկարներն ընդմիջվում էին Մոսկվայի տեսարժան վայրերի պատկերներով՝ Ձիարշավարան, Ցվերյան ուղեկալ եւ Լուբյանկայի հրապարակ, հետո գալիս էին արտասահմանյան լուսանկարները՝ դաշտերում բրինձ հավաքող կիմոնոյով ճապոնուհիներ, Ռուս-ճապոնական պատերազմի եղբայրական գերեզմաններ, Գերմանիայի բնապատկերներ, Փարիզ, Բրիստոլ, Ժաննա Դ'Արկի հուշարձանը: Մի լուսանկար կար. խոտի շյուղը բերանում մի աղջիկ պառկել է մարգագետնում: Աղջիկը բարձրացրել էր շերտավոր գուլպայով ոտքը ու մտախոհ նայում էր մի կողմ:

- Սրա պես մեկն էլ կար, բայց էդտեղի աղջիկը լրիվ տկլոր էր,- բողոքեց Մատրյոնան:- Ու Վարկան ճղեց:

Ուլյան զարմացած նայեց աղջիկներին, որոնց պետք է լավ վարվելակերպ սովորեցներ, ու ոչինչ չասաց, բայց հանկարծ մտքում հայտնվեց վերջին խաղաղ ամռան պատկերը: Ճելոմի կղզին, ինքն ու Ալյոշան խեցգետին են որսացել ու պատրաստվում են եփել: Շատ շոգ է: ԻՆՔԸ գնում է արագահոս գետակում լողալու: Գորտի պես տափակած՝ թափահարում է ձեռքերն ու ոտքերը, շուրջը ցայտեր են թռչում, ու վախենում է, որ իրեն կբռնի գայլածուկը կամ կկծի խեցգետինը: Գետում ձուկը շատ է, պերկեսը հետապնդում է մանր ձկներին, պոչով ջուրն է ծեծում ձիածուկը, նեղիրան ու սրընթաց մարմինն է վեր նետում խոտերում թաքնված կանաչ պուտավոր գայլածուկը, ու յուղ է կապում վառ արծաթագույն շիղածուկը: Գետակն ապրում է իր կյանքով, ու գործ չունի տաք, մաքուր ջրում ուրախ թպրտացող երեխայի հետ: Ուլյան կորցրել է ժամանակի զգացումը, ու

հանկարծ թվում է՝ կապույտ աչքեր առկայծեցին թփուտում: Ամաչում է՝ հիշելով, որ հագին ոչինչ չկա, հետո վեր է կենում եւ քայլում ուղիղ դեպի ափը: Դանդաղ դուրս է գալիս ջրից, երկար կանգնում արեւի տակ՝ նայելով ջրի կաթիլներն ինչպես են չորանում թխացած մաշկին, քամում է մազերը, բայց, երբ, արդեն հագնված, վերադառնում է կրակի մոտ ու քնաթխույզ նայում ուղեկցի աչքերին, շփոթմունքի ոչ մի հետք չի գտնում խիտ ու խունացած թարթիչներով արեւառ դեմքին:

11

Լեգկոբըտովը վերադառնում էր գիշերակացի վայրը: Ցրտեց, քամի բարձրացավ, աստղերը շատացան, ինչպես լինում է օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին: Խշրտացող գիշերվա մեջ, հեռվում հրացոլք էր երեւում, բայց դա կարելի էր հովիվների խարույկի տեղ դնել ու մտածել, որ այդ գիշեր պատերազմը վերջացել է ու վրա է հասել խաղաղությունը: Ոչ մեկը չհանդիպեց ճանապարհին, բանտային հիշողություններն այլեւս չէին չարչարում նրան, ինչպես որ չէր տանջում իրեն մերժած կնոջ հուշը: Հանկարծ ուրախ թեթեւություն զգաց: Մտածեց՝ որդու մասին պատմելով ինչպես կուրախացնի Պելագեային: Թող որ չկարողացավ հետը տանել Այյոշային, բայց գուցե իսկապես՝ կվերջանա պատերազմը, կգնա սովորելու ու կփոխի գեղջկական դառը ճակատագիրը: «Ի՞նչ կա որ: Տղան իսկապես կեցցե: Եվ ըստ էության, դա իմ վաստակն է: Ես Այյոշայի համար նույնն եմ, ինչ Ռ-վն՝ ինձ համար: Երբ երեխա էի, ատում էի նրան, իսկ հետո հասկացա, որ դա ամենագլխավորն ու ամենաթանկն է իմ կյանքում: Չնայած, կարծես խեղճ Ռ-վն խելագարվել է: Ծուտով կամաչի իր այդ գրքի համար: Ի՞նչ էր գրոտել: Ռուսական վերածնունդ, բոլորս ջահելացել ենք, գոտեպնդենք իրար մեծ գործից առաջ, պատմական ժամանակ, վիպական Միկուլա Սելյանինովիչն արթանանում է, պատերազմը որպես մեծ դաստիարակություն, պատերազմ-մեծ բժշկող... Ի՜նչ գրողիս գործ, ի՜նչ վերածնունդ, ի՜նչ Միկուլա, երբ ամեն ինչ թռչում է անդունդը, ու ոչ ոք կռվել չի ուզում: Ուսուցիչը շատ վեր է բարձրացել եւ ինքն էլ դա չի հասկանում: Հետն էլ՝ կնկա պես լացակումած: Հենց կնիկ էլ կա: Խորամանկ, ցանկասեր ռուս կնիկ, որ թուլանում է Կոմիսարովի պես տղամարդու առաջ: Ահա եւ քեզ՝ հոգով սիրեցինք իրար: Մեկի հետ կգրկվեն, մյուսին կրծքով կպաշտպանեն: Բայց անկումը, մեկ է, լինելու է, ու ցավոտ է լինելու: Ե՜վ իրենք կխեղվեն, եւ՛ մյուսներին կջարդեն: Ախ, նստեցնեին դրանց, ու թող երկուսով

խոսեին խլահավերի պես, որ իրենցից բացի ոչ մեկին չեն լսում ու չգիտեն, որ որսորդն արդեն մոտ է ու բարձրացնում է հրացանը»:

Գիշերվա ամենամութ ժամն էր: Լեգկոբըտովը բարձրացրեց գլուխն ու նայեց վեր: Ինչ-որ բան էր փոխվել նրան շրջապատող աշխարհում: Ծառերը, թփերը, առաջին չոր ու թափված տերեւները. ոչինչ այնպիսին չէր, ինչպես սովորաբար լինում էր: Անտառն ասես մի օտար չար կամք էր թողել ներս, որն իրենով լցրել էր ընդլուսնյա տարածությունը ու վտանգ բերել: Նայեց խավար հեռուն. ո՞վ կամ ի՞նչ ուժ էր սպառնում, ումի՞ց կամ ինչի՞ց էր վտանգը, եւ որտեղի՞ց հայտնվեց նորից փխրուն սառույցի վրայով քայլելու այդ զգացումը: Հանկարծ Կոմիսարովին տեսնելու սուր ցանկություն ունեցավ՝ նրա հետ լինել այդ գիշեր, ոչինչ չասել, չլսել, պարզապես լինել կողքին:

Հսկա կիսալուսինը դուրս լողաց հարեւան բլուրների թիկունքից: Բարձրանալով՝ աչքի առաջ փոքրանում էր, բայց ավելի ու ավելի ուժգին էր փայլում ու լուսավորում հովիտը: Սաղարթախիտ ծառերի ստվերները պառկում էին հողին, այնքան ընդգծված, որ հակառակ նրանց՝ հողի լուսավորված երեսը նույնքան պայծառ էր երեւում, ինչպես լիալուսնի ժամանակ: Պավել Մատվեեւիչը տեսնում էր բոլոր մանրամասները, ասես գիշերակացի վերադարձող մարդ չէր այլեւս, այլ անքուն գիշերային թռչուն, որ բարձրացել վեր ու հետեւում էր զոհին: Ո՞ւմ էին փնտրում, ո՞ւր էին սեւեռված նրա մշտարթուն աչքերը: Ինքն էլ չգիտեր, պարզապես ճախրում էր խոտի, ծառերի, թփերի, բոլոր կողմերից ճահիճներով շրջապատված, պնակի պես կլոր փոքրիկ լճի, պատերազմի ավիրած անտառային խուտորների, ցանկապատերի, անտեր խոտհարքերի վրայով, երբ հանկարծ աչքն ընկավ մի մեռած մարմնի: Թռիչքի զգացումն անմիջապես չքացավ, ու որսորդը հայտնվեց գետնին: Բնազդով ուզում էր խույս տալ մահացածից, բայց մի անհայտ տիրական ուժ Լեգկոբըտովին ստիպեց մոտենալ գետնին ընկած մարդուն: Գերմանացի զինվոր էր, ըստ ամենայնի՝ սպանված պատահական գնդակով կամ արկի բեկորով: Ինչպե՞ս էր գերմանացին հայտնվել այդտեղ, ինչո՞ւ ընկերներից ոչ մեկը չէր նկատել նրա բացակայությունը, գուցե ինչ-որ հատուկ առաջադրանքով ուղարկել էին թշնամու թիկունք, գուցե պարզապես մոլորվել էր, կամ էլ պատերազմից հոգնած՝ ցանկացել էր մենակ շրջել անտառում, որս անել կամ սունկ հավաքել, կամ էլ պատահական, ակնթարթային ու մեկուսի մահ էր փնտրել, եւ ահա երջանիկ էր, որ ցանկությունը կատարվել է: Գետնին պառկած մարմինը պահանջում էր, որ իրեն թաղեն, ու որքան էլ Պավել Մատվեեւիչը դեմ

էր վերջին ծեսին, ստիպված էր գործի անցնել: Բնությունն օգնում էր նրան: Ծուրջը նայելով՝ Լեգկոբըտովը մի ոչ մեծ փոս տեսավ, հին խրամատ, թե առու, որ փորել էին ճահիճը ցամաքեցնելիս: Գերմանացու ծանր, չենթարկվող մարմինը քաշեց փոսը ու ջանալով չնայել թշնամու գեղեցիկ, ջահել դեմքին, ծածկեց ճյուղերով: Ուզում էր հրացանն էլ հետը դնել, բայց միտքը փոխեց ու վերցրեց՝ ցրված մտածելով՝ մահվան նախօրեին այդ պատանու կյանքում եղե՞լ է վերջին սիրած կին, թե երբեք ոչ ոք չի եղել, եւ նա հեռացել է կյանքից այդպես էլ առանց սեր վայելելու: «Տարօրինակ է, ինչո՞ւ է կնոջ մարմինը կուսության նշան է կրում, իսկ տղամարդունը՝ ոչ»,- հանկարծ անպատեհ մտածեց նա:

Լուսինն այդ ընթացքում ավելի էր բարձրացել: Շատ նման էր մեկ տարի առաջ Շելոմի գլխին կախված լուսնին, եւ նրա լուսնի տակ Պավել Մատվեեւիչը բացատում տեսավ գազանին: Ուժեղ, ճկուն, պատրաստ ամեն վայրկյան անհետանալու՝ գայլը բարձրացրել էր գլուխը ու թվում էր պատրաստվում է ոռնալ, ինչպես հազարավոր գայլեր ոռնում են՝ նայելով խավարի կրծած լուսատուին: «Մի՞թե նա է»,- մտածեց Պավել Մատվեեւիչը եւ արագ սկսեց նշան բռնել: Հրացանը ծանր էր, անսովոր, եւ նա վախենում էր անզգույշ շարժումով վախեցնել գայլին, բայց գազանը չէր շարժվում, ասես անկենդան լիներ, երկաթյա, ինչպես անառակ էգ գայլը, որ հիմնել էր Վիլնան, իսկ հիմա եկել էր գերմանացի պատանու ետեւից: Լեգկոբըտովն անշարժացավ, շունչը պահած՝ քաշեց ձգանը ու հետեւեց, թե օդն ու գիշերային խավարը ճեղքելով, արագ պտտվելով՝ շիկացած, փոքրիկ, իր տաքությունից փափկած գնդակն ինչպես է թռչում դեպի գազանը: Թվում էր՝ շատ երկար է թռչում, գայլն էլ դա զգաց, բայց չփախավ, այլ գլուխն անտարբեր դարձրեց կրակողին: Լեգկոբըտովն ուշացած մտածեց, որ հիմա գնդակը հետ կթռչի գազանի պողպատյա բրդից ու կխոցի իրեն: Բայց գնդակը անարգել խրվեց ու մնաց գայլի մարմնի մեջ: Պավել Մատվեեւիչը մի գնդակ էլ արձակեց, հետո՝ եւս մեկը: Քամի բարձրացավ: Համաչափ, հաստատուն, արեւմտյան, ասես մեկը գերմանական կողմից պոմպերով մղում էր օդը, եւ որսորդի աչքի առաջ լուսադեմի բացատում կանգնած գազանը հանկարծ օրորվեց, բայց չընկավ, ուղղակի սկսեց կորցնել խիստ, վեհատես ուրվագծերը: Մարմինն աղոտանում ու վերածվում էր ծանր ցածրանիստ ամպի, որը լողաց բացատի վրայով՝ կառչելով թփերից ու նոսր ծառերից, ինչից նրանց տերեւները ոլորվում ու թափվում էին: Սուր հոտ տարածվեց եւ ուժեղանում ու ուժեղանում էր: Լեգկոբըտովը չտեսավ՝ բացատի հակառակ ծայրին ռուս աշխարահզորայինները փոքրա-

մարմին ենթասպայի հրամանով ինչպես են շտապ հագնում անպետք հակագազերը, որ նրանց չէին կարող պաշտպանել թույնից, եւ զինվորները ստիպված դեմքերը փաթաթում էին հապճեպ թրջած լաթի կտորներով ու ոտնափաթաթաններով, իսկ եթե մոտակայքում ջուր չկար՝ մարդու ներքին հեղուկով: Կանաչ տամուկ ամպը իրենով լցրեց ողջ տարածությունը, նրա թանձր շերտերում ոչնչանում էր կենդանի ամեն ինչ, ու Պավել Մատվեեւիչը գլխապատառ փախավ նրանից՝ բնազդաբար բարձունք փնտրելով, ուր կարելի էր փրկվել: Ամպը դանդաղ էր սողում, ու թվում էր հեշտ կլինի թաքնվել, բայց տարուբերվող զանգվածը անշտապ, թեթեւ հասավ ետեւից ու նրան տապալեց կնոջ կուրծք հիշեցնող բլրի գագաթին: Պավել Մատվեեւիչը փոքրիկ ջրափոսում թրջած մորուքը քաշեց քիթուբերանին ու շունչը պահեց: Այդպես պառկել էր մեռած թռչունների, գորտերի, բզեզների, որդերի, թիթեռնիկների հետ ու փորձում էր հնարավորինս քիչ ու կարճ շնչել:

Մտքերը պղտորվում էին, անէանում, թվում էր պառկած է կիսադատարկ լճակի հատակին: Նեխած ջուրը հոսում էր վրայով, եւ այդ շերտի միջով տեսնում էր ծանոթ դեմքեր, կենդանի ու մեռած մարդկանց, որոնք հորդում էին մեկ ընդհանուր հոսքով, եւ ողջի ու մեռյալի այդ անբաժանությունը հանգստացնում էր նրան: Առկայծեց բեռլինյան Լաուրայի դեմքը, Պելագեայի, մոր, հոր, սպանված գերմանացու, որին հենց նոր հապճեպ թաղել էր, ու Լեգկոբըտովը մտածեց, որ համենայնդեպս մեռել է, վիլենյան պոռնիկն ու անոտ գուշակը սխալվել էին՝ ոչ թե պատահական գնդակը, ոչ թե բեկորը, այլ գերմանացիների բաց թողած գազը հասավ նրան, ամեն ինչ վերջացած է, մնում է սպասել, թե ով իր հերթին կգտնի նրան ու հողին կհանձնի տանջահար մարմինը: Բայց հետո հայտնվեց Ուլյա Կոմիսարովայի պարմանի դեմքը: Աղջիկը խոնարհվեց վրան, պարզեց ձեռքը: Լեգկոբըտովը լաց եղավ ու բարձրացրեց գլուխը: Ամպը առաջ էր անցել՝ եզրով դիպչելով նրան, իսկ հետո կրակոցներ լսվեցին, ու երեւացին թշնամիները:

Քայլում էին համաչափ շղթայով՝ ինչ-որ լկտի ուժի ցուցադրությամբ, ջահել, հանդուգն, իրենց կոպիտ երգերը բղավելով, հոխորտալով իրենց խիզախությամբ ու ոչ միայն մահվան, այլեւ կյանքի հանդեպ արհամարհանքով: Նրանց օժանդակում էր հրետանին, ու Լեգկոբըտովը նորից հիշեց Նիտշչին: Գերմանացիները տեւտոնին կրում էին իրենց մեջ ու գալիս էին նրա համար վրեժ լուծելու: Վրեժխնդիր լինելու նրանցից, ովքեր հրապուրել էին Նիտշչին, առեւանգել, բերել իրենց երկիր, ապա սպանել էին:

Լեգկոբըտովն ուզում էր վեր թռչել ու փախչել անտառի խորքը, սակայն ինչ-որ զգացում, մեկի խիստ ձայնը հրամայեց անշարժանալ տեղում: Բայց գերմանացիները հասցրին նկատել նրա շարժումը: Մեկը մոտ վազեց Պավել Մատվեեւիչին, ձեռքից խլեց հրացանը եւ ուղղեց պառկած մարդու վրա:

- Սա Վալտերի հրացանն է, ճանաչեցի:

- Մի կրակիր, Ֆո՛լկեր: Նա արդեն մեռած է, բոլոր ռուսները վաղուց մեռած են,- գոչեց հաղթանդամ ֆելդֆեբելը:

- Սա ողջ է, ես տեսա: Կսպանեմ Վալտերի հրացանով:

Պավել Մատվեեւիչն ափսոսաց, որ գիտի այդ լեզուն, ավելի լավ կլիներ չհասկանար ու չիմանար այդ վերջին, տխուր, հուսահատ պահի վրա հասնելը: Ցանկացավ բարձրացնել գլուխն ու նայել իրեն սպանողի աչքերի մեջ, ինչպես բազում անգամներ իր աչքերի մեջ էին նայել իր սպանած կենդանիները, վերջին անգամ շունչ առավ, ու լսեց ինչպես հնչեց կրակոցը, ու հենց այն պատճառով, որ լսեց, հասկացավ, որ ուրիշն էր կրակել:

Գերմանացին ճչաց ու սկսեց փլվել գետնին, իսկ դեպի արեւելք սահած թունավոր ամպի միջից հայտնվեցին ռուս զինվորները: Աղճատված, այլայլված դեմքերով, դուրս պրծած աչքերով, խանձված կոկորդներով, փալասներով փաթաթված՝ նրանք չէին կարողանում գոռալ, այլ շշուկով խռպում, հազում ու անկանոն կրակում էին իրենց դիմացը: Սարսափելի էին հառնած մեռյալների պես, բայց Պավել Մատվեեւիչը հարազատություն զգաց ու գնաց նրանց հետ՝ նույն կերպ հազալով ու խռպալով, օրորվելով, զգալով՝ ինչպես է ինչ-որ բան կտրվում, պայթում ներսում: Ոչնչով չէր կարող օգնել նրանց, մտքով չէր անցել վերցնել Ֆոլկերի հրացանը, որն այլեւս պետք էլ չէր, որովհետեւ դաշտում գերմանացի չէր մնացել, իսկ ռուսները գնում էին առաջ, եւ նա ուզում էր բոլորի հետ լինել, մենակ չմնալ այդ հսկայական աշխարհում: Բայց, մեկ է, մնաց: Խելահեղ կույր գրոհից հետո զինվորները թափվում էին գետնին ու շնչակտուր լինում ափ նետված խոշոր ձկների պես, բայց գերմանացիներն արդեն նահանջել էին, թաքնվել վառվող դեզերի ծխի ու կրակի ետեւում:

...Մի քանի ժամ անց Լեգկոբըտովը անցնում էր ամայացած, քլորով վառված դաշտով: Սարսափելի տեսարաններ էին բացվում աչքի առաջ: Գլուխը հետ գցած ու բաց, ճչացող բերանով, երկինք նայող աչքերով երիտասարդ սպան քարացել է հրանոթի մոտ: Զինվորը, ասես կենդանի, կիսով չափ հրանոթի մեջ է դրել արկը ու ձեռքերը հետ չքաշած, չոքած, զարմացած երկինք է նայում, կարծես հարցնում է. «Ի՞նչ է կատարվում»: Կեր-

պարանքները հեռվից կենդանի էին թվում, բայց երբ մոտեցավ, տեսավ, որ սպայի գլխի երեք քառորդը ետեւից պոկված է, իսկ զինվորի աղիքները՝ թափված: Դաշտի վրա թռչուններ էին պտտվում: Քանդված, հրդեհից հետո դեռ ծխացող դատարկ շինություններ, ջարդված հեռագրասյուներ ու ծառեր, գնդակներով ծակծկված պատեր, կույր ակնախոռոչների նման դուռ ու պատուհանի շրջանակներ, արկերի բացած անցքեր, լերդացած արյան հետքեր, կեղտոտ բամբակ, թանզիֆ... եւ ամենուր, ամենուր դիակների շշմեցնող հոտը:

Լեգկոբըտովը վախենում էր, որ այդ դժբախտների մեջ կտեսնի Կոմիսարովին, բայց Ալյոշային տեսավ: Տղան ճղճղված, ցեխոտ շինելով, «զաուերն» ուսին քայլում էր ճանապարհով, այնպիսի թշվառ տեսքով, արցունքից թրջված աչքերով ու ցնցվող շրթունքներով, որ Պավել Մատվեեւիչն ակամա խղճաց նրան, բայց խղճահարությունը հաղթահարելով, խստաձայն, ինչպես ժամանակին անտառում ստիպում էր հալածել գազանին, գոռաց.

- Տո՛ւր հրացանը:

Ալյոշան անտրտունջ ուսից իջեցրեց «զաուերը»:

- Ո՞ւր է հրամանատարդ: Ինչո՞ւ նրա հետ չես: Դու պետք է նրա կողքին լինես:

Ալյոշան դողում էր ու ոչինչ չէր խոսում:

- Արի հետս: Վե՛րջ, քո կռիվը պրծավ, հերի՛ք է: Սրա՛ն տեսեք, որոշել է սպա դառնալ: Քո նման գյուղացուց ի՞նչ սպա: Մայրդ սպասում է: Դաշտում բանող ձեռք չի մնացել: Դե՛, արի մոտս, արի՛,- ու ձեռքի ափը կտրուկ խփեց ոտքին:

Բայց Ալյոշան օրորեց գլուխը, հետ-հետ գնաց եւ անհետացավ աշնան թանձրացող մթնշաղում:

12

Հոկտեմբերի սկզբին «Ռուսսկոյե սլովոյում» տպվեց Սվենցյանիի ճեղքմանը նվիրված Լեգկոբըտովի հոդվածը: «Ռուս լիբերալ մամուլը երեսպաշտորեն ողբում է Հյուսիս-արեւմտյան ռազմաճակատի վերջին իրադարձությունների համար,- գրում էր Պավել Մատվեեւիչը՝ մի քիչ անհրամարավետ զգալով զինվորական բառերի տարածքում եւ այդ պատճառով սովորականից ավելի կռվազան դառնալով:- Գերմանական քարոզչությանը երկրորդելով՝ բերվում են սարսափելի թվեր մեր կորուստների մասին, տողա-

միջերում խոսվում է ռուսական բանակի ահավոր բարոյալքման մասին: Շուտափույթ պարտություն է գուշակվում մեզ համար: Մի հոդվածում նույնիսկ այսպիսի բան կար. «Ռուսաստանին անընդհատ խփել են հետամնացության համար, բայց վերջին հարյուր տարում դեռ երբեք այդպես չեն հասցրել Ռուսաստանին, ինչպես 1915 թվականին»: Հասարակական կարծիքը հաճույքով ընդունում է պարտվողականության այդ պաշտամունքը, մենք սկսում ենք հավատալ սեփական թերարժեքությանն ու մեր հոգում պարտվում ենք դեռ իրական պարտությունից առաջ, որովհետեւ վաղուց կորցրել ենք հոգեւոր ինքնությունը: Անդեմ, անկամ, անլեզու, վարակված հոգեւոր թույնով, կարիճից թե կատաղած գայլից խածված՝ դեգերում ենք սեփական պատմության քառուղիներով, ինչպես խավար միջանցքով: Բայց իրականում ինչ է կատարվել Սվենցյանիում, որն իբր դարձել է մեր ռազմական խայտառակության մարմնավորումը:

Սվենցյանիի ճեղքումը գերմանական բանակի վերջին հաջողված հարձակումն էր, որի ընթացքում տիրացան ռուսաց երկրի մի մասին, զավթեցին Վիլնան եւ մեր քաղաքներից ու գյուղերից էլի մի քանիսը, բայց անասելի ծանր գին վճարեցին դրա համար ու չհասան իրենց առաջ դրված նպատակին: Ռուսական բանակը թույլ չտվեց շրջապատեն իրեն: Չնայած գերմանական բարբարոսությանը, թունավոր գազերի կիրառմանը, մեր բանակը դուրս պրծավ գերմանական հրամանատարության պատրաստած աքցանից, կրկնեց կուտուզովյան զորաշարժը՝ զիջելով իր տարածքի մի մասը, բայց պահպանելով զորակազմը: Սվենցյանին դարձավ մեր Բորոդինոն, բայց, դժբախտաբար, Ռուսաստանը չնկատեց այդ, չհասկացավ իր ռազմական հաջողությունը, իսկ անանուն զինվորների սխրանքն այդպես էլ անհայտ մնաց: Մեզ համար անգին են այն ժամերը, երբ անջատ-անջատ, վատ զինված, քլորով թունավորված ռուս զորականները զսպում էին գերմանական զորքերի ընտիր խմբավորման հարձակումը, իսկ հետո անցան հակահարձակման ու փախուստի մատնեցին թշնամուն, եւ ամեն ոք, ում վիճակվել է այդ սեպտեմբերյան օրերին լինել Սվենցյանիում ու Վիլիի ափերին, անկախ իրենց անձնական որակներից եւ քայլերից, հերոսացան: Այդ հերոսությունը մարդու ազատ ընտրության արդյունք չէ, ոգու բարձր պոռթկում չէ, պարտադրված հերոսություն է, բռնի, հուսահատ, բայց պակաս արժանի չէ հարգանքի, քան ինքնակա հերոսությունը, իսկ գուցե եւ ավելի թանկ արժե: Այդպիսի հերոսությունը ոչ փառք է փնտրում, ոչ հռչակ, ոչ պատիվներ, պարգեւներ չի պահանջում, այդ բառի գերագույն իմաստով՝ անշահախնդիր է ու դրված հաղթանակի

հիմքում, որը մեզնից կարող է գողանալ միայն վհատությունը, որ մեզ պարտադրում են վախկոտներն ու ներքին թշնամիները: Եթե նույնիսկ Սվենցյանին մեր անկման ամենաստորին կետն է այդ արշավանքում, ապա դրանից հետո անխուսափելիորեն սկսվելու է վերելքը: Գողգոթային եւ Խաչելության խավարին հետեւում է Հարությունը, որը կլուսավորի այս մեծ պատերազմում ռուս ժողովրդի կրած տառապանքների ու զոհերի իմաստը»:

Մոլորության մե՞ջ էր Լեգկոբըտովը, թե՞ ոչ, նրա մտքերը անհետ կորած Վասիլի Խրիստոֆորովիչ Կոմիսարովի հետ անվերջանալի վեճի արծագա՞նքն էին, մեխանիկի հանդեպ մեղավորության զգացմա՞ն կամ մեկ այլ բանի՞, բայց այս անգամ ոչինչ Պավել Մատվեեւիչի ասածով չեղավ: Չնայած Սվենցյանյանիի ճեղքման հետեւանքները հաջորդող մի քանի շաբաթվա ընթացքում չեզոքացվեցին ռուսական զորքերի կողմից, գերմանացիների որեւէ ահռելի նահանջ նահանջ էլ չեղավ, եւ ռուսական զորքերի մեծ հարձակումն էլ տեղի չունացավ: Տեւական մարտերում հյուծված երկու բանակները դեմ դիմաց մնացին նույն դիրքերում, սակայն ռուսական թիկունքն ավելի արագ էր քայքայվում,քան գերմանականը: Ռուսաստանը ճակատում չէր պարտություն պարտության ետեւից կրում, այլ պարտվում էր, ինչպես արդարացի նկատել էր մեխանիկ Կոմիսարովը, կրակի գծից հեռու իր քաղաքներում եւ մոտենում աղետին նույն արագությամբ, որով եւ մոտենում էր հաղթանակին, եւ ոչ ոք չգիտեր՝ որն ավելի շուտ վրա կհասնի:

...Պատերազմի մեկուկես տարում Պետրոգրադի բնակչությունը մեկ միլիոնից հասավ երեք միլիոնի: Մայրաքաղաքը փքվել էր եկվորների հոսքից ու նմանվել մի հսկա սպասասրահի: Նեւայի երկայնքով՝ փողոցներում, պողոտաներում, ջրանցքներում թրեւ էին գալիս զինվորները, շատշատ էին, ծխում էին, խորխում, զազրախոսում, աչքերում առկայծող լկտիության ետեւում թաքնվել էր վախկոտությունը, եւ ո՛չ գիմնազիստուհիները, ո՛չ օրիորդները, ո՛չ երիտասարդ տիկնայք այլեւս հույսով չէին նայում նրանց: Հիմա վախենում էին իրենց պաշտպաններից եւ ջանում էին շրջանցել շինելներով ու զինված մարդկանց, արեւմտյան նահանգներից մայրաքաղաք հասած գաղթականներին, զորակոչից խույս տվող քաղքենիներին, դիակապուտներին, սպեկուլյանտներին, դասալիքներին: Քաղաքում թանձրացել էր նեխման հոտը, ասես այնտեղ էլ էր հասել այն թունավոր ամպը, որ քիչ էր մնում սպաներ Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովին, բայց Պետրոգրադի բնակիչները թունավորում չէին զգում: Փոխարենը՝

բոլորի համար հոգեւոր քայքայման ամենասարսափելի խորհրդանիշն էր դարձել ոչ մեկի հանդեպ չարիք չգործած մի մարդ, որն ապրում էր Վիտեբսկի կայարանի մոտ, Գորոխովայա փողոցի թիվ վաթսունչորս տանը, ուր հանգստյան օրերին ասես ծառայության էր գնում Ուլյանա Կոմիսարովան ու սիրով բարձրաշխարհիկ վարվելակերպ սովորեցնում գեղջուկի ու անճարակ, բայց ամրակազմ աղջիկներին:

Ուլյան իր այդ այցելություններն ի ցույց չէր դնում, բայց մի անգամ, ձմռանը, Ծնունդյան տոներից քիչ առաջ, դասարանական դաստիարակչուհին, աչքերը խոնարհելով, Ուլյային ասաց, որ գիմնազիայի տնօրինուհին է կանչում: Դաստիարակչուհին էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց գիմնազիստուհին արդեն ընդառաջ էր գնում իր դժբախտությանը:

- Եթե ձեզ համար թանկ չէ ձեր անունը, մադմուազե՛լ, գոնե գնահատեք գիմնազիայի հեղինակությունը, որտեղ պատիվ ունեք սովորելու,- չոր ասաց մադամ Միլլերը:- Հուսամ, ձեզ պետք չէ բացատրել, թե այդ պարոնն ինչ նպատակներով է աղջիկներ հրավիրում իր մոտ:

Լյուբով Պետրովնայի թիկունքում ողջ հասակով կանգնել էր թագավորի պատկերը, եւ նրա խիստ ու ազնվաբարո հայացքը դատապարտող էր: Ուլյան զգաց ինչպես է կարմրում ու որ վիրավորանքից լաց չլինի, մարտահրավերով նայեց կնոջ աչքերին, որը միշտ նրան դուր էր եկել իր արդարամտությամբ, լրջմտությամբ, նրանով, որ երբեք չէր խրախուսում մատնություններն, ու այն հիմար աղջնակները, որոնք փորձում էին բանսարկությամբ զբաղվել, դա անում էին առաջին ու վերջին անգամ: Եվ ահա Ուլյան նայում էր նրա խոժոռված հոնքերին, ցասկոտ հայացքին, որով տնօրինուհին առաջ նույնիսկ ամենախայտառակ մատնիչներին չէր նայել:

Ուլյան ուզում էր որեւէ հանդուգն բան ասել:

- Աղջիկնե՞ր: Համոզվա՞ծ եք, մադա՛մ:

- Հիմարություններ մի խոսեք, մադեմուազե՛լ,- հեգնանքով պատասխանեց տնօրինուհին:- Այդ հեքիաթները կպատմեք ձեր դասարանական դաստիարակչուհուն: Ի՞նչ է, կարծում եք՝ ես աղջկան կնոջից չե՞մ տարբերում: Անկեղծ ասած, ես բնավ գործ չունեմ ձեր անձնական կյանքի հետ, բայց չեմ ուզում աղմուկ ու խայտառակություն լինի:

- Ինչո՞ւ եք հավատում բամբասանքներին:

- Թող այդ պարոնն այնպես ապրի, որ բամբասանքներ չլինեն,- կտրեց մադամ Միլլերը:- Ինձ նա չի հետաքրքրում, այլ իմ գիմնազիան, եւ չեմ ուզում, որ վաղը իմ աշակերտուհիների ծնողները գան ու իրենց աղջիկներին հանեն գիմնազիայից: Այնպես որ, կամ այլեւս չեք գնում այնտեղ, կամ

բարի եղեք հայտնել ձեր խորթ մայրիկին, որ այլ ուսումնական հաստատություն գտնի ձեզ համար: Եթե նրան չի հետաքրքրում ձեր դաստիարակությունը, դրանից ուրիշները չպիտի տուժեն:

«Իզուր այն ժամանակ չփախա»,- մտածեց Ուլյան՝ դիտմամբ անփույթ կնիքսեն անելով, ու քինախնդրությամբ պատկերացրեց, թե ինչ կկատարվի այդ ինքնավստահ տիկնոջ հետ, եթե այդ ամենը պատմի Գօրոխովոյայում: «Սիրալի հարազատ խռիկ տու ախմախ կնգան որ լավ աղջիկներ ա նեղացնում»:

Պահնորդական բաժանմունքի՝ իրեն արդեն սովորած եւ անտարբեր հայացքներով հանգիստ ուղեկցող գործակալների կողքով արագ բարձրանալով բնակարան՝ Ուլյան իր առաջ տեսավ փափուկ մորուքով մի ալեհեր գեղեցիկ տղամարդու, որի դեմքը դողում էր, իսկ կողքին մի նրբադեմ պատանի էր կանգնած, որ բաղեղի պես փաթաթվել էր ծերունուն:

- Դու ո՞վ ես,- վախեցած հարցրեց ծերունին:

- Ուլյանան:

- Ոչ մեկին չասես, Աստծու ծառա, որ մեզ տեսել ես այստեղ:

- Ո՞ւմ եմ տեսել,- չհասկացավ Ուլյան, բայց դեմքն անհետացավ, մորուքի տակ առկայծեց մեծ լանջախաչը, կարմրած տղան հետեւեց ծերունուն, ու հեգնոտ խուլ ձայնը գվվաց բնակարանի խորքում.

- Դո՞ւ ինչ հոգս ունես էսօր, ուլի՛կ:

- Ամեն ինչ կարգին է,- իր համար անսպասելի պատասխանեց Ուլյան ու մտածեց, որ երբեք ու ոչինչ չի խնդրի այդ մարդուց ու ոչ մեկից չի բողոքի:

Ասենք, առանց նրա բողոքի էլ տնօրինուհու հետ խոսակցությունը ոչ մի հետեւանք չունեցավ: Պարզապես այդ օրվանից որսում էր ուսուցիչների տարօրինակ հայացքները, շատ զգույշ էին դաս հարցնում, ասես աղջիկը վերածվել էր մի փխրուն անոթի, ու վախենում էին ջարդել: Փոխարենը՝ փոխվել, խստացել էին դասընկերուհիները, անվերջ քչփչում եւ իրենց հեռու էին պահում Ուլյայից:

- Թող գնա իր գեղցիների մոտ,- մի անգամ լսեց թիկունքում:

Ուլյան բորբոքվեց, բայց արդեն նահանջի տեղ չուներ: Նահանջը կնշանակեր համաձայնել, որ նվաստացնեն իրեն, ընդունել պարտությունը, իսկ այդպիսի բան թույլ տալ չէր կարող: Այդ ամենը առավել վիրավորական էր նրանով, որ ոչ մի մեղավորություն չէր զգում եւ առանձնահատուկ ոչինչ չէր տեսնում իր նոր ծանոթների մեջ, ինչպես որեւէ սարսափելի ու գերբնական ոչինչ չէր տեսնում նրանց հոր մեջ: Աղջկան դուր չէր գալիս միայն նրան շրջապատող հիվանդագին երկրպագումը, եւ թեթեւ արհամարհան-

քով ու բարկությամբ էր նայում երկրպագուհիներին, որոնք պատրաստ էին ուտել նրա ափից կամ մորուքից սուրբ մասունքի պես առանձնացնել հացի փշրանքը, եւ Ակիլինայից խնդրում էին նրա հագած սպիտակեղենը, որքան կեղտոտ, այնքան լավ:

Նրան թվում էր՝ բնակարանի տերն էլ է նույնպիսի քամահրանքով վերաբերվում նրանց, ու չէր կարողանում հասկանալ՝ նրա ինչի՞ն են պետք եւ ինչո՞ւ չի վռնդում այդ կանանց: Երբեմն մտածում էր, որ փառասիրությունից է, որ նրան դուր է գալիս թույլերի եւ խեղճերի պաշտպան լինելը, դուր է գալիս, որ իրեն քծնում են աշխարհիս հզորները, որ իր անճարակ, անգրագետ խոսքը, սովորական թղթի վրա արված անփույթ գրությունը ավելի թանկ արժե, քան զինանշանի կնիքով մինիստրական շրջաբերականները: Բայց նա թերեւս շատ պարզամիտ էր այդպիսի սնափառության համար: Ավելի շուտ, վարժվել էր այդ երկրպագմանը, ինչպես քաղցր գինուն, եւ դեմքերի, իրար հաջորդող աղքատիկ ու ճոխ զգեստների, համազգեստների, փարաջաների, սերթուկների շրջապտույտով դյութված՝ արդեն անկարող էր կանգ առնել: Բայց Ուլյան այդ ամենի մասին չէր համարձակվում հարցնել ո՛չ նրանից, ո՛չ աղջիկներից:

13

Վերա Կոնստանտինովնային էլ ոչինչ չէր պատմում, չնայած երբեմն հանդիպում էր նրա քննախույզ հայացքին, որի մեջ դժվար էր ասել ինչն էր ավելի շատ՝ կանացի հետաքրքրասիրությո՞ւնը, տագնա՞պը, թե՞ վախը: Այդ սառը եւ տարօրինակ կերպափոխված կինը խորթ դստերը Գորոխովոյի տուն տանելով՝ արել էր իր գործը, իսկ մնացածը, ըստ Ուլյայի, նրան չէր վերաբերվում, եւ մեխանիկի աղջիկը չէր տեսնում խորթ մայրն իրականում ինչպես է տառապում վիրավորանքից, որի համեմատ Վերա Կոնստանտինովնայի բոլոր նախկին ապրումները, բոլոր այդ «Ե՞ս եմ ամենքից սիրունն աշխարհում» հարցումները անմեղ զվարճանք էին թվում: Ինչո՞ւ է այս աղջնակի հետ ավելի շատ ժամանակ անցկացնում, քան իր հետ՝ դառնությամբ հարցնում էր Վերա Կոնստանտինովնան: Ինչո՞ւ է Յուլյան առանց հուզվելու բարձրանում վարձու շենքի աստիճաններով ու հանգիստ հատում բնակարանի շեմը, իսկ հասուն, իր գինն իմացող կինը դողում է աղջնակի պես: Այո՛, ամեն ինչ հասկանում էր, ինքը չէր կարող նրա աղջիկների ընկերուհին լինել, բայց ներսում արթնացած ինչ-որ սրված գազանային բնազդով Վերա Կոնստանտինովնան ուրիշ բան էր կասկա-

ծում եւ ավելի էր գազազում դրանից: Իսկ կնոջ հարցերի հասցեատերը չէր խրախուսում դրանք ու պատժելով՝ ավելի էր հեռանում նրանից: Նույնը զգում էին եւ՛ Ակիլինան, որը պարզապես արհամարհում էր նրան, եւ՛ Անուշկան, որ հեգնանքով, թե հետաքրքրությամբ էր նայում, ինչից գթության քույրն ուզում էր ափսեն ջարդել ցարական ֆրեյլինայի գլխին: Տարօրինակ էր. որեւէ մեկը դեռ մի քանի ամիս առաջ Վերա Կոնստանտինովնային կասե՞ր, որ իր կյանքում կհայտնվի մի մարդ, որից ինքը այդ աստիճան կախում կունենա, կփնտրի նրա հայացքը, կնեղվի, որ իրեն բավարար ժամանակ չի տրամադրում կամ էլ չոր է իր հետ: Լա՛վ, գոնե արիստոկրատ լիներ, իշխան, նշանավոր պոետ կամ նկարիչ. փռչոտ, կակազախոս, մետաքսե անթեւնոցով ու ճռճռան սապոգներով մի գեղջուկ, որից թթու կաղամբի ու թանկարժեք գինու հոտ էր փչում, իշխանություն ուներ իր վրա, գերում ու տանջում էր իրեն՝ ասես ինչ-որ բանի նախապատրաստելով: Եվ ինքը, որ աշխարհում ամեն ինչից շատ անկախությունն ու ազատությունն էր սիրում, նրանից ավելի մեծ գերություն էր պահանջում, առավել հնազանդեցում, պատիժ, նվաստացում: Սպասում, սպասում էր՝ կորցնելով ամոթի վերջին նշույլները, վառվում ու մոխրանում էր: Եվ եթե միայն ի՜նքը լիներ այդպիսին:

Բոլորը, որ գալիս էին այդ տուն, պտտվում էին նրա շուրջը, բոլորը կախված էին, ճշմարտությունն էին ասում կամ խաբում, խորամանկում կամ անկեղծ էին, ստախոս, ջղային ու սրտաճմլիկ, նրանց միջեւ անհասկանալի հարաբերություններ էին հաստատվում, յուրաքանչյուրն իր նախանձն ու իր խանդն ուներ, եւ ո՛չ փողը, ո՛չ ծագումը, ո՛չ հասարակական դիրքը, ո՛չ հայտնի անձի շրջապատում լինելու ժամանակամիջոցը ոչինչ չէին նշանակում. մի ուրիշ բան կար այստեղ: Բայց ի՞նչ՝ Վերա Կոնստանտինովնան չէր կարողանում հասկանալ, ու դրանից զայրույթն ավելի էր ուժեղանում: Ու սարսափելի միտքը, որ իրենց բոլորին խաբում են, բոլորին օգտագործում են ինչ-որ բանի համար,- բայց ինչի՞,- թափանցում էր նրա գիտակցության մեջ, եւ ուզում էր հեռանալ, բայց ուժ չուներ:

Իսկ Ուլյան հասու չէր այդ ամենին: Նկատում էր, որ երբեմն բնակարանում հայտնվում են գեղեցիկ կանայք, բայց տանտերը նրանց վերաբերվում էր հովանավորի անփությամբ, որը սահմանակցում էր անորսալի հեգնանքին: Ուլյան ոչինչ չգիտեր նրանց հարաբերությունների մասին ու չնայած շատ բամբասանքներ էր լսել, համոզված էր՝ նույնիսկ եթե ինչ-որ անպարկեշտ բան կար էլ, տանտերն այդ կանանցից ոչ մեկին չէր ստիպել սիրել իրեն: Ավելի շուտ՝ բոլորին չէ, որ վանում էր, ընդունելով ինչն իրեն

հարմար էր գտնում: Ե՛վ բարին, եւ՛ չարը, եւ՛ փրկարարը, եւ՛ կործանարարը: Նա անմիջապես զգում էր մարդկանց, որոնք փորձում են օգտագործել իրեն, բայց երբեք չէր վռնդում, չնայած մոտ էլ չէր թողնում, ձգտում էր իրար բերել տարբեր մարդկանց հետաքրքրություններն ու չվիրավորել ոչ մեկին:

Նրա շրջապատում մեծ մասը կանայք էին, բայց միայն նրանք չէին գալիս, պարզապես կանայք ավելի եռանդուն էին: Ասես լիցքավորվում էին նրա էներգիայով, ասես իրենց աստվածացրած մարդու շուրջը էլեկտրական դաշտ լիներ, եւ ով հայտնվում էր այդ դաշտում, սկսում էր ավելի արագ շարժվել եւ ավելի շատ խոսել:

Սկզբում այդ դաշտի կենտրոնում գտնվողն Ուլյային ծերունի էր թվում, բայց հետո զարմանքով իմացավ, որ ընդամենը քառասունվեց տարեկան է, մի քիչ մեծ իր հորից եւ Պավել Սատվեեւիչ Լեգկոբըտովից: Եվ եթե սնափառ էլ էր, ապա մի ուրիշ, անանձնական փառասիրությամբ՝ սանձել հպարտներին ու բարձրացնել հեզերին, սեր էր քարոզում, բայց ոչ մարգարեի էր նման, ոչ քարոզչի, այլ գյուղապետի, ցարական պալատի գրագետ կառավարչի, չնայած թագավորի, թագուհու, մեծ իշխանների ու գահաժառանգի անունների հիշատակումն անգամ անխոս արգելված էր Գորոխովոյում: Նրա դուստրերը ծանոթ էին ցարի երեխաների հետ, բայց նրանց մասին ոչինչ չէին պատմում:

Միայն մի անգամ, ասես կանխելով, Ուլյայի հարցը՝ Վարյան նկատեց.

- Նրանք շատ են սիրում հայրիկին: Նա բարի է, նրանց սովորեցնում է սիրել Աստծուն:

«Իսկ ինձ չի սովորեցնում, փոխարենը՝ ուզում է ես սովորեցնեմ»,- անչար, հպանցիկ մտածեց Ուլյան, բայց տանը կատարվող ամեն ինչին հետեւելուն, ականջ դնելուն ու քննելուն սովորած՝ մի անգամ լսեց տանտիրոջ ու Ակիլինայի խոսակցությունը:

- Մի քանի օր առաջ նորից այդ մուրացկան կինն էր եկել: Ուզեցի փող տամ՝ չվերցրեց:

- Իսկ ինչո՞ւ էր եկել,- հարցրեց Ակիլինան:

Տղամարդը կամացուկ, անհասկանալի պատասխանեց, եւ Ուլյան ամբողջովին լարվեց, որ լսի:

- ...կարծես թե հանգստացավ, բայց հետո, մեկ է, սկսեց մեղադրել, թե ինձ պատշաճ չեմ պահում: Ոչ մի բան դրանց սրտով չի: Սուրբ գիրքը ինչ է ասում,- նա բարձրացրեց ձայնը:- Բայց ո՞ւմ նմանեցնեմ այս ազգը, այն երեխաների պես է, որ փողոցներում նստած իրենց ընկերներին կանչում

են եւ ասում. Մենք փող փչեցինք ձեզ համար, եւ դուք պար չեկաք, մենք ողբացինք ձեզ համար, եւ դուք կոծ չարեցիք:

Ակիլինան կամացուկ առարկեց, բայց տղամարդը տրտմությամբ ընդհատեց նրան.

- Գիտե՛մ, գիտե՛մ: Գիտեմ, որ ինձ ուզում եք վանք դնեք: Աննուշկան էլ է նույնը ասում: Գլուխս տարել է՝ գնա որ գնա, մենաստան գնա, էնտեղ լավ է, էնտեղ Աստծուն են փառավորում: Իսկ էստեղ չարախոսում են քո մասին, էստեղ կպանեն քեզ: Ոչ մի վանք էլ չեմ գնա, կխժռեն ինձ էնտեղ սեւ-ասքեմները: Կթունավորեն, որովհետեւ ատում են ինձ: Իսկ ինչի՞ են ատում: Նրա համար, որ ես Աֆոնի միաբանների համար եմ բարեխոսել, երբ Անտոնի Վոլինսկին հարձակվել էր նրանց վրա: Իսկ իրենք բերանները ջուր էին առել: Դուր չի գալիս նրանց, որ խցկվում եմ ամեն տեղ: Բայց որ ինձ հանես, ամեն ինչ փուլ կգա: Ոչ մեկը չի համբերում: Իսկ մեզ մի քիչ համբերություն է պետք, եւ կգթա Տերը: Դու սո՛ւս, Ակիլի՛նա: Գիտեմ ումն ես եւ ինչ ես ուզում, բայց չեմ վռնդի: Տերը քեզ էս տուն է թողել, ուրեմն ապրիր, մենակ թե հիշիր՝ ինչ է լինում նրանց, ով երկու տիրոջ է ծառայում: Իսկ ինձ մի խանգարիր, ես իմ գործը կավարտեմ ու կգնամ էստեղից, ու ոչ ոք ինձ չի գտնի: Դո՞ւ ինչ ես անում էստեղ, ա՛յ ուլիկ:

Ուլյան ուզում էր հետ քաշվել, բայց ուշ էր:

- Ի՞նչ հետաքրքրասերն ես: Հը, ի՞նչ կասես:

- Ինչի՞ մասին,- աչքը վախով զայրացած Ակիլինային գցելով՝ հարցրեց աղջիկը:

- Ինչի մասին որ լսեցիր: Հը, գնա՞մ, թե՞ մնամ: Ոնց ասես, էդպես էլ կանեմ:

Տղամարդը նայում էր ծակող խորաթափանց հայացքով, եւ Ուլյան հանկարծ զգաց նույնը, ինչ զգացել էր պատերազմին նախորդած լուսնյակ գիշերը. Ասես կրկին իրենից էր կախված՝ ուր կգլորվի հսկայական աշխարհը: Եվ իր դիմաց կանգնած մարդն էլ դա գիտեր: Ասես վիճակ էր գցում՝ բառերը մետաղադրամի պես նետելով աղջկան՝ ո՞ր երեսին կընկնի:

- Ոչ մի տեղ էլ չգնաս,- ծվաց Ուլյան ու մտածեց, որ հիմա կգովեն իրեն, բայց մազակալած դեմքին նույնիսկ ժպիտ չհայտնվեց:

- Քոնն ես մտածում, ուլի՛կ,- տխուր ասաց տանտերը:- Քո՛նը: Բոլորն էլ էդպես են: Հայրդ էլի չի՞ գրում,- նա մոտեցավ աղջկան, ինչպես իրենց առաջին հանդիպման ժամանակ, բայց Ուլյան տագնապից բացի ոչինչ չզգաց:

- Չէ՛:
- Գիտեմ, որ չի գրում: Վայ թե շատ ես տխրում:
- Շա՛տ:
- Այ ես էլ եմ տխուր:

Աղջիկը զարմացած նայեց նրան. աներեւակայելի էր, որ այդ մարդը տագնապ, տրտմություն, վիատություն զգար:

- Աղոթո՞ւմ ես նրա համար:
- Աղոթում եմ:
- Գնանք միասին աղոթենք:
- Ձեզ հե՞տ:

Աղջկան երբեք միասին աղոթելու չէր կանչել: Ուլյան նույնիսկ նրա դուստրերի ընկերուհին չէր, այլ անվճար բոնոնան, ուսուցչուհին, կրկնուսույցը, բայց բնակարանում տիրող հասուն, աղոթական կյանքի հետ ոչ մի կապ չուներ:

Մտան սեւացած սրբապատկերներով ու կանթեղներով հեռավոր սենյակը, որտեղ Ուլյան երբեք չէր եղել, ու տղամարդը քարացավ սրբապատկերի առաջ՝ ձգված դեպի վեր եւ ասես հատակից կտրված, իսկ հետո սկսեց ծնրադրել: Ուլյան կրկնում էր նրա ետեւից, բայց տասներորդից համրանքը կորցրեց եւ արդեն մեքնայաբար էր խաչակնքում, ընկավ դողացող ծնկներին, ճակատը խփեց հատակին, վեր կացավ ու նորից ընկավ: Ճոճվում էր, սենյակը պտտվում էր շուրջը, պետերբուրգյան սովորական բնակարանի հատակն ասես մրրիկի մեջ հայտնված նավի տախտակամած լիներ, բայց տանտերը դա չէր նկատում: Տարօրինակ բան էր կատարվում նրա հետ՝ բոլորովին չէր հոգնել, հակառակը, շարժումներն ավելի արագ, կտրուկ, ուժեղ ու վստահ էին դառնում, եւ նիհար, ամուր մարմինն արագանում էր պտտվող անվաճաղերի պես: Ձեռքերը, ոտքերը, իրանը ձուլվում էին իրար, բազմապատկվում, շաղվում աղջկա աչքերում, ասես ինչ-որ հինդուսական աստվածություն լիներ կամ ուր որ է վերածվելու էր այդպիսի մի Շիվայի:

Ուլյան սարսափեց: Ուզում էր փախչել, բայց կամաց-կամաց ռիթմին ենթարկվելով՝ ինքն էլ սկսեց արագանալ՝ փորձելով համընկնել նրա շարժումներին: Արյունը խուլ խշշում էր քունքերում, քրտինքը լցվում էր աչքերը, ինչ-որ տեղից ուժեր հայտնվեցին, եւ ջերմեռանդ աղոթում էր՝ չմտածելով ոչնչի մասին, ասես լուծվելով այդ փակ տարածության մեջ եւ աներեւակայելի վայելք զգալով, ինչպիսին նախկինում երբեք չէր ապրել: Դա նման էր երազում զգացածին, երբ սուրում էր մերձիլմենյան հարթավայրով,

բայց զգացողությունն ավելի սուր էր, խոր, ու նա հասկանում էր, որ էլի մի քիչ՝ այդ մարդուց եկող հողմով բռնված մարմինը կպոկվի տեղից, պատուհանից ներս թռած թռչունի պես կխփվի պատերին, հատակին կամ առաստաղին ու կթպրտա: Իսկ աղոթքն անպայման կլսեն, եւ կօգնեն նրան, ում այդ օգնությունը հիմա հատկապես պետք է, նա չի զոհվի այնտեղ, հեռավոր պատերազմում, նա ողջ կմնա՝ աղերսով, թախանձանքով մահից խլված, որովհետեւ այս նոր, անծանոթ, խորհրդավոր մարդն աղոթքի մրրիկում իրեն վստահ տանում է փորձված ճանապարհով ու թույլ չի տալիս շեղվել:

- Դե, հերիք է, ուլի՛կ,- մարդը վեր կացավ ծնկած տեղից՝ ուժեղ, առույգ, մազերը ճակատին ծեփված:- Հիմա գնանք Ռոդէի մոտ:

- Ի՞նչ Ռոդէ:

- Քաղաքից դուրս ռեստորան է:

- Ի՞նչ եք ասում,- վախեցավ Ուլյան:- Ինձ չի կարելի:

- Ինձ հետ ամեն ինչ կարելի է:

Դրսում թանձրանում էր նոյեմբերի վաղ մթնշաղը, սառնամանիքին փոխարինել էր ուժեղ քամին, թվում էր՝ ձյուն է գալու, ու գեղեցիկ մոխրագույն մեքենան, կառքերը շրջանցելով, սլանում էր պետերբուրգյան լեփ-լեցուն փողոցներով: Անցորդները նախանձով, թե հանդիմանությամբ նայում էին նրանց ետեւից, մի մռայլ պարոն սպառնալի թափահարեց գլխիկավոր ձեռնափայտը, ու դժվար էր հասկանալ՝ ավտոմոբի՞լն էր զայրացրել, թե՞ միջի մարդիկ: Բայց որքան արագ էին գնում, անցնելով, այնքան Ուլյային պատում էր ուրախությունը, զգում էր արագությունը, տարբերում կողքով սուրացող փոքրիկ ծառերը, մարդկանց դեմքերը եւ այլեւս չէր վախենում, որ կտեսնեն իրեն, ոչնչից չէր վախենում: Քաղաքից դուրս հայտնվելուն պես ձյունը ողջ ուժով հարձակվեց նրանց վրա: Անսպասելի հարձակվեց, ամեն ինչ խառնվեց իրար՝ վերն ու վարը, երկիր ու երկինք, եւ Ուլյան մտածեց, որ տեղ չեն հասնի, կմոլորվեն, կկորչեն այդ ճերմակ ձնապտույտում, բայց այդ մի քանի րոպե թռիչքի համար արժեր եւ անդունդը ընկնել: Սակայն մեքենան նույն արագությամբ առաջ էր սլանում, ասես վարորդը ձնահոսքերի միջով տեսնելիս լիներ ճանապարհի հեռուն, նրանց ճանապարհ էին տալիս անցնող գումակները, սայլերը, կառքերը, սահնակներն ու հետիոտն ճամփորդները: Մեքենան դուրս եկավ խճուղուց, եւ մրրկող ձյան մեջ հայտնվեց սրածայր սեւ եղեւնիներով շրջանակված մեծ, գեղեցիկ փայտաշեն շենքը, որտեղ արդեն սպասում էին նրանց: Ուլյան այնպես հեշտ ու սովոր մտավ ներս, ինչպես իր տուն կմտներ:

Հետոն աղջիկը աղոտ էր հիշում: Արագ հարբեց շամպայնից, քիչ էր ուտում, բայց անհագ խմում էր, որովհետեւ ուզում էր խմել, անառիթ ծիծաղում ու մշուշի միջով նայում էր, թե մորեգույն վերնաշապիկով ուժեղ, տգեղ, ջղուտ, կռվազան գեղջուկն ինչպես է պարում ուրիշ տղամարդկանց ու կանանց շրջանում, ինչպես է երգում գնչուական երգչախումբը, մարդիկ ինչ-որ բան են գոռում, լալիս, հեկեկում, քրքջում... Ինքն էլ ուզեց ուրախանալ բոլորի հետ եւ խուժեց այդ շրջանի կենտրոնը, որտեղ կատաղի ծղրտոցով հնչում էր երաժշտությունը, ու լսվում էր ինչպես է պատուհանից այն կողմ համահունչ սուլում բուքը՝ ոչ միայն մինչեւ տանիք ծածկելով «Վիլլա Ռոդէն», այլեւ ողջ քաղաքը, երկիրն ու աշխարհը: Պայծառ լուսավորված տունը մի պահ մթնեց, մարդիկ աղմկեցին, բայց սպասավորներն անմիջապես մոմեր բերեցին, եւ ուրախությունն ավելի սուր ու սանձարձակ դարձավ:

Մթին, խորհրդավոր տարածության մեջ այնքան հարմարավետ ու հաճելի էր, որ Ուլյան իրեն կատարյալ անվտանգության մեջ էր զգում: Ո՛չ մադամ Միլլերը, ո՛չ դասարանական դաստիարակչուհին, ո՛չ խորթ մայրը՝ իր խանդով, երբեք այստեղ չեն հասնի. ինքը փախել է նրանցից, վագքով, ինչպես Ժամանակին Շելոմի զառիվեր ափով փախավ Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովից: Ուլյայի հետ հարգալից, ինչպես մեծի հետ, խոսում էին անծանոթ տղամարդիկ, եւ նա ուրախ-ուրախ պատասխանում էր, բոլորը շատ հաճելի ու բարեհամբույր էին, նույնիսկ ցորնագույն այտամորուսներով հաստլիկը, որ իր առաջին օրը, ճաշին եկել էր Գորոխովո, լավ, համակրելի մարդ թվաց: Նա հեռվից մատանիով թմբլիկ մատը թափ տվեց աղջկա վրա, եւ Ուլյան ծիծաղեց ու սպառնաց ի պատասխան: Գլուխը պտտվում էր, չէր հասկանում՝ ինչու եւ ինչպես հայտնվեց այդ փոքրիկ սենյակում, որտեղ մի քանի մոմ էր վառվում, ու գլուխն էր խփում տարօրինակ բուրմունքը խառնվելով խմիչքի հոտին:

Հաստլիկն անհետացավ, նրա փոխարեն հայտնվեց մի անծանոթ տարեց պարոն: Նրա փորձված, փաղաքուշ ձեռքերն այնպես հմուտ ու նրբանկատ էին մերկացնում աղջկան, որ նույնիսկ չնկատեց ինչպես ցած սահեց շորը, բայց գիտակցության պոչով հասկանում էր, որ իրեն անվայել է պահում, եւ այդ պահին հանկարծ հնչեց Լեգկոբըտովի բարձր ձայնը: Ծակեց ուղեղը բարակ ասեղի պես ու դուրս քաշեց թմրությունից, վառեց հիշողությունը, սթափեցրեց, եւ Ուլյան հուսահատ թպրտաց ու ճչաց, իսկ հետո դուրս պրծավ ու միջանցքներով փախավ սրահ:

Լույսերն անսպասելի վառվեցին՝ ի ցույց դնելով նրա ամոթը ներկանե-

րի առաջ, որոնց մեջ միայն իրեն այդտեղ բերողին ճանաչեց: Երբեք այդ մարդուն այդպես գազազած չէր տեսել: Ծատ հարբած էր, ծանր էր շնչում, ձեռքերը դողում էին, դեմքին քրտինք էր դուրս տվել, ասեղնագործ վերնաշապիկը պատռվել էր, սարսափելի գոռաց, բռնեց հաստլիկի օձիքը ու սկսեց խփել դեմքին, արյուն եկավ, հետո սենյակը միանգամից լցվեց ուրիշ մարդկանցով, սպասավորներ, բարապաններ, աղմուկ, հահոյանք, սպառնալիքներ, ուղիղ Ուլյայի դեմքին նայող լուսանկարչական սարքի ագահ, կուրացնող բռնկումներ, ջարդվող ափսեների զնգոց, ոստիկանների սուլիչներ, բայց նա այդ ամենն արդեն չէր տեսնում:

Երբ վերադառնում էին, ձյունը կտրվել էր, լույսը՝ բացվել, մեքենան շատ փափուկ էր գնում, բայց Ուլյային թվում էր՝ սլանում են դարուփոսերով, գլուխն անտանելի ցավում էր, սիրտը խառնում, եւ այդ մշուշի միջով՝ մորմոքվող ձայնը.

- Աչքաթող արեցի, աղջի՛կ: Աչքաթող արեցի: Ես եմ մեղավոր:

Նա կարգադրեց մեքենան կանգնեցնել եկեղեցու մոտ, եւ քիչ առաջվա սարսափելի, հարբած ու անզսպելի մոլեգնությամբ բռնված մարդը կրկին լարվեց աղեղի պես, երիցս խոնարհվեց մինչեւ գետին ու մտավ տաճար:

Ուլյան այդ օրը գիմնազիա չգնաց: Մինչեւ երեկո սիրտը խառնում էր, ու խորթ մայրը նրանից չէր հեռանում՝ թաս էր տալիս ու շոյում գլուխը: Մայրացուի ձեռքերը սառն էին, փափուկ, իսկ աչքերը այնպես քննախույզ, որ Ուլյան վատ զգաց: Զգում էր, որ ինչ-որ հարց է ուզում տալ, բայց չի համարձակվում, ու հասկացավ հատկապես ինչ է ուզում հարցնել, բայց ձեւացրեց, թե ոչինչ չի հասկանում... Իսկ Վերա Կոնստանտինովնան, նրա վարանումը յուրովի ընկալելով, հանկարծ լաց եղավ, եւ Ուլյան սեղմվեց նրան՝ շրթունքներին զգալով կնոջ աղի արցունքները, ու չնկատեց ինչպես քնեց:

Մաս IV

ՁԵՌՆԱԾՈՒՆ

1

- Դուք քաջաբար կռվեցիք, եւ գերմանական հրամանատարությունը խոստանում է ոչ միայն պահպանել ձեր կյանքը, այլեւ ամենայն պատիվ ու հարգանք ցուցաբերել ձեզ:

Գերմանացի գեներալը թարգմանչի միջոցով էր խոսում, եւ նրա սահուն բառերը թույնի պես էին լցվում կոնտուզիա ստացած Կոմիսարովի ուղեղը:

- Հիմա ձեզ կնստեցնեն վագոններն ու կուղարկեն թիկունք, որտեղ սուրճ ու բուտերբրոդներ կստանաք: Ցանկացողները կարող են նամակ գրել տուն ու հարազատներին հայտնել, որ անվտանգության մեջ են եւ իրենց կյանքին ոչինչ չի սպառնում: Թուղթ ու գրիչ չունեցողները կարող են ստանալ կրտսեր սպաներից:

Գերմանական սանիտարական վաշտը ձգված շղթայով շարժվեց առաջ՝ վիրավորներին հավաքելու: Անտառի կողմից հրետակոծության ձայն էր լսվում: Ռուսներն էին կրակում: Պերճախոս գեներալն անհետացավ, ու մեխանիկը մտածեց, թե ինչ երջանկություն կլիներ զոհվել այդ արկերից, բայց դղրդոցը գնալով նվազում էր, հեռանում, խլանում, ու բացատում, որտեղ նրանց շրջապատել էին, լռություն տիրեց: Կոմիսարովը որերորդ անգամ տնտղեց հագուստը. զենքը խլել էին, եւ նա չէր կարող կատարել թշնամուն ողջ գերի չընկնելու իր խոստումը: Անզորությունից, նվաստացումից, ամոթից լացը գալիս էր, բայց երբ նայեց շուրջը, թվաց իր զինվորներից ոչ մեկը այդ վիճակից չի ամաչում: Հակառակը՝ լարվածությունը թուլացել էր, եւ նրանք թեթեւություն ու վստահություն էին զգում իրենց գերի վերցրածների հանդեպ: Մեկը ծխախոտ վառեց, մյուսը նյարդային ծիծաղում էր: «Ա՛խ, տե՛ր Աստված, սա ինչ բան է: Ինչո՞ւ է լույս տալիս արեւը, ինչո՞ւ է այսքան պայծառ, ամո՛թ է... Ինչո՞ւ էր այդպես խոսում մեզ հետ... սուրճ, բուտերբրոդներ, ծխախոտ... ու նրանք հավատացին, հիմարնե՛ր... մութ ու անուղեղ տխմարնե՛ր, նախի՛ր...»:

Նա կիսաուշագնաց պառկել էր տաք մամուռին, չէր զգում ինչպես են մարմնի վրայով վեր ու վար անում անկուշտ անտառային մրջյունները եւ

նորից ու նորից վերապրում էր հենց նոր ավարտված մարտը, իր սարսափելի մենակությունը, երբ կողքին ոչ ոք չէր մնացել, իր հապաղումը, երբ կարող էր կրակել գլխին, բայց չկրակեց: Ի՞նչ էր դա՝ վա՞խ, հո՞ւյս, որ փախած զինվորները կվերադառնան, չեն լքի իրենց հրամանատարին: Այո՛, պետք էր կրակել, բայց ոչ գերմանացիների վրա, այլ՝ նրանց, որ կանգ առնեին, իսկ եթե կանգնեցնել չկարողանար՝ իր վրա, բայց սխալվեց ու գերի ընկավ: Հետո էլ՝ այդ վեհանձն գեներալը, որ չէր հասկանում ինչ նվաստացուցիչ են իր բառերը ռուս սպայի համար: Գերմանացին չէր ուզում վիրավորել Կոմիսարովին, բայց գերին դրանից ավելի էր վիրավորվում: «Այ դու ուրիշին էիր կշտամբում, իսկ հիմա ինքդ ես փռվել-պառկել եւ այնքա՛ն փոքրիկ ես: Այնքան փոքր, որ նույնիսկ քեզ գովելը սարսափելի չէ»,- հիշեց նա ու զգաց ջարդված շրթունքների արնահամը:

Մի կլոր, անբեղ դեմք կռացավ վրան:

- Ջուր չե՞ք ուզում, ձե՛րդ բարեձնություն:

Կոմիսարովը հետ մղեց օտար ձեռքն ու շրջվեց:

- Շատ վատ է մեր ենթասպան,- հետ քաշվելով՝ ասաց զինվորը, ու Կոմիսարովը սեղմեց ատամները, որ չգոռա:

Գրել իմացողները օգտվեցին գեներալի առաջարկից, չիմացողները ընկերներին խնդրեցին օգնել, ու հենց վերջացրին, փոս ընկած այտերով բարձրահասակ գերմանացին հավաքեց թերթիկներն ու դպրոցական ուսուցչի գործնականությամբ, գերիների ներկայությունից չքաշվելով, սկսեց արագ կարդալ նամակները:

«Հետախուզությունն է,- հասկացավ մեխանիկը:- Տեղեկություններ են քաղում: Ինչ պարզ է ամեն ինչ, ամոթալի պարզ: Հիմարնե՛ր»:

- Իսկ դուք ոչինչ չե՞ք ուզում փոխանցել ձեր հարազատներին, պարո՛ն ենթասպա: Սա ի՞նչ է: Գի՞րք: Ես շատ եմ սիրում ձեր գրականությունը: Դոստոեւսկի, Տոլստոյ, Տուրգենեւ, Չեխով,- գերմանացին գեղեցիկ զնգուն ձայնով տալիս էր գրողների անունները, ինչպես մատուցողը ռեստորանում ճաշատեսակներն է թվարկում:- Իսկ դուք ո՞ւմ եք նախընտրում: Տվեք՝ տեսնեմ:

Համարյա առանց առոգանության էր խոսում, ըստ երեւույթին երկար տարիներ ապրել էր Ռուսաստանում, գուցե եւ այնտեղ էր ծնվել:

- Այս գիրքը ձեզ ոչինչ չի ասի,- չար ասաց Վասիլի Խրիստոֆորովիչը՝ կրծքին սեղմելով Ռ-վի նվերը:

- Տվե՛ք, տվե՛ք:

Գերմանացին արագ անցավ տողերի վրայով, կարմրեց, հետո հան-

կարծ ծիծաղեց ու ձայն տվեց ընկերներին: Բարձրաձայն թարգմանում էր՝ հարուցելով լսողների ծիծաղն ու հայհոյանքը: Գիրքը ձեռքից ձեռք էր անցնում, գերմանացիները թքում էին վրան, օդ նետում, քացահարում, հետո տվեցին թարգմանչին, եւ նա հարգալից խոնարհումով վերադարձրեց ենթասպային:

- Կարգին ուրախացրիք: Չեմ համարձակվի ինձ պահել այս ավարը: Իսկապես ոչինչ չի ասի մեզ, իսկ ձեզ համար սփոփանք կլինի անազատության մեջ: Հիմա պետք է աղոթեք, որ ձեր պանծալի թագավորը հնարավորինս շուտ հանձնվի, եւ դուք արագ վերադառնաք տուն:

Վասիլի Խրիստոֆորովիչն առաջ նետվեց, որ խփի նրան, բայց գերմանացին բռնեց ռուսի ձեռքը.

- Հանգի՛ստ: Մինչ այս պիտի հերոսություն անեիք:

...Անձրեւ սկսվեց ու շարունակվեց քանի քայլում էին քանդված խճուղով: Գիշերեցին մի ոչ մեծ գյուղի ծայրին, խոնավ մարագում: Այնքան մարդ էին լցրել, որ շուռումուռ գալ չէին կարողանում: Նոր էին պառկել ու թաղվել ծանր քնի մեջ, երբ հրամայեցին դուրս գալ ու շարունակել ճանապարհը: Մի քանի ժամ խավարում կանգնեցին անձրեւի տակ, հետո քայլեցին առաջ ու մի քանի օր քայլում էին խնամված ձիերով հաղթանդամ կիրասիրների հսկողության տակ: Երրորդ օրը Կոմիսարովի ջերմությունը բարձրացավ, ու տենդի մշուշում տեսնում էր գերմանացիներն ինչպես են խլում գերիների սապոգները, հագուստը, ինչպես են հաց բաժանում, ինչպես են հրմշտվում ռուս զինվորները՝ վախենալով, որ բոլորին չի հասնի, ու կարգապահ գերմանացիները խզակոթերով ծեծում էին նրանց: Խոսում էին, որ բոլորին տանելու են Բեռլին ու որպես ռազմավար պտտեն քաղաքով:

Վասիլի Խրիստոֆորովիչը ավելի շուտ կհամաձայներ մեռնել, որ չտեսնի այդ ամենը, բայց ինչ-որ մեկին պետք էր, որ ապրի եւ նվաստացումներ կրի գերմանական պահակախմբից, նրան սիմուլյանտ կոչող բժիշկներից, ճամբարային վերակացուներից, բայց ամենից ավելի՝ իր զինվորներից, աչքի առաջ քայքայվող բանակից: Ուշադիր նայում էր մարդկանց ու ոչինչ չէր հասկանում: «Նրանք կարծում են, թե փրկվել են: Թե ամենասարսափելին ետեւում է: Նրանք հաղթանակ չեն ուզում: Իրենցից բացի, թքած ունեն ամեն ինչի վրա»:

Անընդհատ դրա մասին էր մտածում, նաեւ այն ժամանակ, երբ նրան բաժանեցին զինվորներից ու տեղավորեցին կրտսեր սպաների հետ, բայց այդտեղ էլ Վասիլի Խրիստոֆորովիչը սարսափով տեսնում էր, որ սպանե-

ը ոչնչով լավը չեն զինվորներից: Նրանցից շատերը բոլորովին չէին տխրել, որ գերի են ընկել: Գերությունը նրանց համար էլ փրկություն էր նշանակում, եւ պատրաստ էին կրել բոլոր դժվարությունները, որովհետեւ գիտեին՝ գերմանացիները թեկուզեւ խիստ են, բայց եթե պահպանեն նրանց սահմանած կանոնները, հնարավոր է ողջ մնան: Իսկ հետո Կարմիր խաչի միջոցով կուղարկեն տուն, մեկ էլ տեսար այդ ընթացքում պատերազմն էլ վերջացավ, ու ոչ մեկը չի հետաքրքրվի՝ ինչպես են գերի ընկել, ոչ մեկը չի պատժի փոքրոգության համար, չնայած նրանց կեսը կարող էր գերի չընկնել ու չհանձնել իր զինվորներին: «Գերի ընկած բոլոր սպաներին պետք է աստիճանազրկել մինչեւ շարքային ու վերադարձնել բանակ, թող արյունով սրբեն իրենց խայտառակությունը: Պետք է պատժել նրանց ընտանիքներին, պետք է այնպես անել, որ երեխաներն ամաչեն իրենց հայրերի համար: Եվ պատժվածների մեջ առաջինը կլինեմ ես: Բայց մինչ այդ ասեմ քեզ, տե՛ր թագավոր, չի կարելի բանակը ղեկավարել այնպես, ինչպես դու ես ղեկավարում: Չի կարելի այդքան մեղմ, այդքան վեհանձն լինել նրանց հետ, նրանք միայն ուժ, վախ ու խստություն են հասկանում»:

Վերջին ժամանակները շատ էր մտածում ցարի մասին, պատկերացնում էր նրան քարտեզների վրա խոնարհված, իր գեներալներին լսելիս, Ռուսաստանի համար ճակատագրական որոշումներ ընդունելիս: Վասիլի Խրիստոֆորովիչին թվում էր՝ եթե լարված, նպատակաուղղված մտածի, այդ մտքերը չեն ցրվի, չեն անէանա, կհասնեն նրան, ում ուղղված են: Չէ՞ որ եթե գոյություն ունի չար հոգեւոր գայլը, պետք է լինեն նաեւ բարի արարածներ, որոնք կարող են մարդուց մարդուն փոխանցել կարեւոր, նվիրական, օգտակար մտքերը, որ փորձառությունը հուշում էր մեխանիկին:

«Տե՛ր թագավոր, դու չպիտի վախենաս նույնիսկ անմեղ արյուն թափելուց, թող չվեհերի սիրտդ ոչ մի խնդրանքից ու բողոքից: Քեզ ոչ ոք չի մեղադրի նույնիսկ մի քանի հազար անմեղ տուժածի համար, բայց կանիծեն, եթե պարտվենք այս պատերազմում: Դու պետք է վճռական լինես, տիրական եւ իմաստուն, ականջ չդնես ոչ մեկի խորհրդին, չտրվես ոչ մի հորդորի ու նախազգուշացման եւ գնաս մինչեւ վերջ:

Վասիլի Խրիստոֆորովիչը ոչ մեկի հետ չէր կիսում իր մտքերը, ոչ մեկի հետ չէր մտերմանում, եւ նրան էլ ոչ ոք չէր անհանգստացնում, տարօրինակ մարդ էին համարում, գոռոզ, միզանտրոպ: Միակն էր, որ տնից նամակ չէր ստանում, որովհետեւ ինքն էլ չէր գրում, իրեն արգելել էր գրել տուն՝ որպես մեկը, որ գերի ընկնելով կորցրել է դրա բարոյական իրավունքը: Իրեն վարժեցրել էր մենության ու մենակության եւ վերահսկում էր

իր երազները, զգացմունքները, որպեսզի կնոջ ու դստեր կերպարի ստվերն անգամ չդիպչի իրեն, ու հարազատներին մտովի չպղծի այն վայրը, որտեղ նա գտնվում էր: Եվ տարօրինակ է, այդտեղ, անազատության մեջ նրան հաջողվում էր այն, ինչը չէր կարողացել ազատության մեջ՝ տիրապետել իր բանականությանը այնպես, որ մտագայլը մուտք չունենա փշալարից ներս: Վասիլի Խրիստոֆորովիչը զգում էր ինչպես է ներուստ մաքրվում, բայց դա միայն ուժգնացնում էր նրա տառապանքն ու արհամարհանքը իր եւ շրջապատող մարդկանց հանդեպ:

Բարաքն ապրում էր իր կյանքով. աղոթում էին, երգում, ներկայացումներ տալիս, առավոտները մարզանք էին անում, սոխ ու սխտոր ուտում, որ լնդախտ չսկսվի, քննարկում էին՝ ինչ է կատարվում Ռուսաստանում, ճամարտակում էին թագավորի ու թագուհու մասին, հանդուգն ու հաջողակ գեղջուկի մասին, որը հմայել էր թագուհուն, կարոտում էին, գինի ճարում ու հավաքույթներ կազմակերպում, շատ էին խոսում կանանց մասին, պոռնոգրաֆիական լուսանկարներ նայում, չնայած բոլորը գիտեին, որ դրանք գերմանացիներն են բերում ու դրանց հետ՝ նաեւ քարոզչական գրականություն: Ցերեկը բարաքում ծիծաղում էին, իսկ գիշերը, քնի մեջ լալիս ու կրճտացնում ատամները. ամեն ինչ խառնվել էր իրար՝ ռուսական Աստված ու ռուսական սատանան, ռուսական կամքն ու ռուսական հնազանդությունը, խռովարարությունն ու հեզությունը, եւ անհնար էր գծել այն սահմանը, որ մարդու սրտում բարին կզատեր չարից:

Մի անգամ փախուստ եղավ: Փախան երեք սպա, որոնց մասին Վասիլի Խրիստոֆորովիչն ամենից քիչը կմտածեր, թե ընդունակ են փախուստի, եւ սուր վիրավորվածություն զգաց՝ ինչո՞ւ մասնակից չեն արել, ինչո՞ւ չեն վստահել իրեն: Գերմանացիները բոլորին հարցաքննեցին: Կոմիսարովին՝ նույնպես, եւ նա հանդուգն, քննիչների հանդեպ ատելությունը չթաքցնելով՝ նետեց, որ ինքն էլ կփախչեր, եթե վիրավոր ոտքը չխանգարեր: Բայց որքան էլ պատիժ փնտրեց Վասիլի Խրիստոֆորովիչը, նրան ոչինչ չարեցին:

Մի շաբաթից փախստականերին բռնեցին, վերադարձրին ճամբար ու կարդացին դատավճիռը:

- Ռազմագերիների մասին կոնվենցիայի համաձայն՝ ձեզ փախուստի համար պատժելու իրավունք չունենք,- թարգմանչի միջոցով հայտարարեց ճամբարի պարետը,- բայց իրավունք ունենք պատժել գույքը փչացնելու համար:

- Ի՞նչ գույք,- մռայլ հարցրեց գերիներից մեկը:

- Պատռված հագուստն ու վնասված փշալարը:

Հայտնվեց բժիշկն ու բոլորի աչքի առաջ կտրեց փախստականների ջլերը:

Կոմիսարովը մի բանի մասին էր մտածում՝ ինքնասպան լինելն ամենահեշտն է, դրանից չէր վախենում, բայց մինչ այդ անելիք կար: Եթե կյանքդ անօգուտ ես ապրել, թող գոնե մահդ օգտակար լինի: Իսկ դրա համար պետք է կազդուրվել ու սպանել գերմանացիներին, հնարավորինս շատ սպանել: Միայն վրեժխնդրության միտքը կարող էր ապրեցնել: Սպանել նրանց, որ խոշտագում են մարդկանց, թունավորում գազերով, ռումբեր նետում սանիտարական գնացքների վրա, արհամարհում ուրիշներին, ռազմագերիների ճամբարը գազանանոց կոչում:

Պարզապես չէր մտածում դրա մասին: Գոռում էր, վիրավորում պահակախմբին, վերակացուներին, կռվում ու ազատություն տալիս մոլեգնությանը, որ նրան չարչարում էր նախապատերազմական կյանքում, բայց առաջվա պես մնում էր անպատիժ: Ինչո՞ւ: Չէր հասկանում, ու ոչ ոք չէր կարող հասկանալ: Հիմա արդեն Վասիլի Խրիստոֆորովիչից ոչ թե պարզապես խուսափում էին, այլ փախչում, վախենում, սադրիչ էին համարում, եւ նա պատրաստ էր հարձակվել գերմանացիներից ցանկացածի վրա ու բռնել կոկորդը, նա մահ էր փնտրում, բայց հետո հանդարտվեց, տարօրինակ ընդարմացման մեջ ընկավ: Զգում էր, որ իր համար այլեւս ամեն ինչ մեկ է՝ կապրի, թե ոչ, օգուտ կբերի հայրենիքին, թե կմեռնի անփառունակ եւ անհուշ, ինչպես անասունը սպանդանոցում:

Մի անգամ ճամբար այցելեց Կարմիր խաչի պատվիրակությունը, որի կազմում մի ռուս բուժքույր կար: Հերթով մոտենում էր վիրավորներին, թագուհու կողմից նվերներ հանձնում, ու հանկարծ Կոմիսարովին թվաց,- ո՛չ, այդպիսի բան չէր կարող լինել, բայց նրան թվաց,- որ դա Վերան է, ու զգաց, թե սարսափելի, անկամ, տաք ալիքն ինչպես բարձրացավ իր էության խորքերից, սրբեց-տարավ սառույցն ու ողողեց իրեն, եւ ինքը անզոր էր այդ ալիքի դեմ: Ռազմաճակատի ու գերության ամիսներին ներսում կուտակվածը պոռթկաց որպես ճիչ, հեկեկանք, հիստերիա, որից ցնցվեցին եւ՛ գերիները, եւ՛ պահնորդները, եւ՛ գթության քույրերը:

Այդ կինը Վերան չէր, այդ կինը բոլորովին նման չէր նրան, ու Կոմիսարովը չէր հասկանում՝ ինչպես կարող էր սխալվել: Փոխարենը՝ կինն ինչ-որ բան հասկացավ, մոտեցավ ու ձեռքը դրեց ճակատին:

- Մի՛ ամաչեք: Լա՛ց եղեք, լա՛ց եղեք, կթեթեւանաք: Լա՛ց եղեք: Բայց ձեր ջերմությունը բարձր է: Ձեզ անմիջապես պետք է հիվանդանոց ուղարկել,- քույրը ականջը հպեց նրա կրծքին ու զայրացած բարձրացրեց գլուխը:-

Որեւէ մեկը նրան լսե՞լ է: Խզզոց կա թոքերում: Ինչո՞ւ են այստեղ պահում: Ինչո՞ւ չեն բուժում,- դիմեց պահակախմբի ավագին:- Ի՞նչ իրավունքով եք անմարդկային վերաբերմունք թույլ տալիս գերիների հանդեպ: Գերիներին չեք կարողանում պահել՝ տվեք ինձ:

- Դա անկարելի է, մադա՛մ:

- Տվե՛ք: Մեկին, միայն մեկին տվեք: Սա իմ ամուսինն է, ամուսի՛նը,- ջղածիգ ճչաց կինը:- Ասացեք նրանց, որ իմ ամուսինն է:

- Գնանք, տիկի՛ն, գնանք,- հորդորեց շվեյցարացի բժիշկը,- մեկ է, նրան օգնել չեք կարող, ավելի վատ կլինի:

Առավոտյան Կոմիսարովն անկողնուց վեր չկացավ: Մեկ անգամ տեղի տալով՝ այլեւս չէր կարողանում դիմադրել ու սկսեց գլորվել՝ թաղվելով թուլության, արցունքների, իր հանդեպ խղճահարության մեջ: Վասիլի Խրիստոֆորովիչը համոզված էր, որ այս անգամ գերմանացիները չեն ների, կստիպեն վեր կենալ ու վրեժ կլուծեն ամեն ինչի համար, բայց նրանք հեռու կանգնած՝ վախով նայում էին գերուն, իսկ երեկոյան ուղարկեցին տիֆով հիվանդների բարաք: Սկզբում՝ միայն նրան, հետո՝ էլի մի քանի սպայի, հետո՝ էլի. ճամբարում համաճարակ էր սկսվել, ու պարզ էր, որ այլեւս բարաք չեն վերադառնա:

«Ծատ լավ է,- մտածում էր տենդի մեջ,- շուտ մեռնել ու ոչինչ չտեսնել, կալսիչ, շարքացան, փչացել է, խցանվել... կեղտ, աղբ, ցեխ... եւ ուրիշ ոչինչ... Աստղաշատ երկինք, աստղեր, մեռյալների հոգիներն են, երկիրը՝ ողջերին, իսկ երկինքը՝ մեռյալներին, զտիչ ցանց, քամիար... Չէ, ախպե՛ր, ոչ մի երկինք էլ չես տեսնի»...

Արհամարհանքով նայող ինչ-որ բեղավոր մարդ հայտնվեց նրա անէության մեջ: Հագին Վերա Կոնստանտինովնայի դեղին քաթանե շորն էր ու փոքր էր վրան, լկտի նայում էր Կոմիսարովին ու սարսափելի բառերով հայհոյում կնոջը: Վասիլի Խրիստոֆորովիչը ուզում էր քոթակել բռի արարածին, բայց ինչքան փորձում էր բռնել, մատների արանքում դատարկություն էր մնում: Նա գալարվում էր, գոռում, սպառնում, մինչեւ որ վազեցին-եկան ինչ-որ մարդիկ ու կաշեփոկերով կապեցին մահճակալին:

2

Իսիդորն այդ երազը տեսնում էր ամեն գիշեր: Նորից փախչում է տաժանակրությունից, ամեն խշշոցից ցնցվելով՝ գիշերում ոչ իջեւանատներում, ոչ հյուրանոցում, այլ ինչ-որ գոմերում ու խրձանոցներում, մի քանի

անգամ թվաց՝ ուր որ է կբռնի ոստիկանությունը: Նրա փախուստի մասին արդեն տարփողել են թերթերը, արդեն փնտրում են որպես առանձնապես վտանգավոր հանցագործի, փորձում են կռահել փախուստի երթուղին, խոսում են Չինաստանի եւ Իրանի մասին, իսկ ինքը համառորեն ձգտում է Ռուսաստան, չի վստահում ուղեկցողներին, թվում է իր թիկունքում անընդհատ իրենց խաղն են տանում ու ցանկացած պահի կարող են հանձնել իրեն: Նյարդայնանում է, վատ է քնում, ձեռքերը դողում են, եւ վերջապես մնում է վերջին ելքը՝ զգեստափոխվել Լիտեյնի պողոտայի ոչ հարուստ բնակարանում, կնոջ շոր հագնել եւ արդեն այնտեղից փախչել արտասահման, գալիս է տանտերը, այն կնոջ ամուսինը, որի շորը հագել է, վերցնում է մտրակը ու սկսում ծեծել նրան: Իսիդորը ցավից ու հաճույքից արթնանում եւ կանխավ ատում էր սպասվող երկար օրը, թախիծը, դատարկությունը, որը վաղն էլ կկրկնվի, եվ այդպես՝ մինչեւ վերջին շունչը:

Կարգալույծը երբեք չէր մտածել, որ այդպես կտառապի առանց Ռուսաստանի: Երբեք չէր կարծի, որ հյուսիսային երկիրը, ուր նրան տարել էին, եւ սկզբում դուր էր եկել իր կոկիկ, խնամված աղքատությամբ, կսկսի այդպես զայրացնել, ու կթախծի ցուրտ ծովի ափին փռված մաքուր փողոցներով ու հարյուրավոր տարիների հեռանկարով կառուցված քարապատ տներով փոքրիկ քաղաքում: Նրան թվում էր՝ այդ տարածության մեջ կյանք չկա: Անկյանք էին կրպակները, որոնց դռանը չէր խմբվում ժողովուրդն ու թրեւ չէին գալիս հարբեցողները, պանդոկները, որտեղ թունդ խմում էին հանգստյան օրերին, բայց կռիվ չէին անում, պաղ քամու առաջ բաց ռատուշայի հրապարակը: Երբեմն մտնում էր եկեղեցի, բայց այնտեղ էլ վախեցնող էին խստությունն ու ամայությունը: Դժվար թե ուսուցիչ դառնար այդ մարդկանց շրջանում: Այդ հպարտ, չոր կանայք չէին գա նրա մոտ, չէին բերի երեխաներին, աշակերտ ու մոնթ չէին դառնա այդ տղամարդիկ: Ոչ ոք նրան չէր պաշտպանի ոստիկանությունից կամ տեղական իշխանություններից, եթե հանկարծ որոշեր գժտվել նրանց հետ, այս օրինահարգ մարդկանցից ոչ մեկը չէր հասկանա ինչ է եռացող կաթսան, ու չէր նետվի դրա մեջ, ասես այդտեղ, այդ օտար, ցուրտ աշխարհում տարօրինակ կերպով կատարվել էր եպիսկոպոս Ֆեոֆիլի վաղեմի պատվիրանը՝ ոչ մեկին ոչինչ մի քարոզիր, ապաշխարիր եւ աղոթիր, աղոթիր ու ապաշխարիր եւ ուրիշ ոչինչ:

Փողը, որ տվել էին նրան այդտեղ բերած մարդիկ, շուտով վերջացավ: Նորից փող խնդրեց, մի քիչ տվեցին եւ ասացին, որ չեն տա, մինչեւ չավարտի խլիստի ու թագուհու մասին գիրքը: Նրանց ժլատությունն այնպես զայ-

րացրեց ու վիրավորեց, որ դրամներն ուզում էր շպրտել կոկիկ մորուքով պարոնի երեսին ու սպառնալ. «Կգնամ ու կհանձնվեմ»:

Սակայն չշպրտեց ու սպառնալիքն էլ չբարձրաձայնեց, բայց նաեւ չմոռացավ, ու երբ շատ տխուր էր լինում, այդ միտքը սփոփում էր նրան: Պատկերացնում էր ինչպես կկատարվի այդ ամենը, ու թերթերը կգրեն իր վերադարձի մասին: «Կարգալույծ քահանա Իսիդորն իր զղջումը բերեց Թագավորին ու մայր Եկեղեցուն»: Թող նույնիսկ բանտ դնեն, ուղարկեն կալանավաշտեր, բայց կհասցնի վերապրել փառքի այն ակնթարթը, առանց որի այլեւս չէր կարող, ինչպես անուղղելի թմրամոլն առանց մորֆիի: Բայց ամենածանր տառապանքն այն էր, որ կողքին կանայք չկային: Վավաշոտ, մտքում հայտնված պատկերից կամ հիշողությունից վայրկենապես բռնկվող Իսիդորը մարմնական անասելի տանջանքներ էր կրում, բայց պոռնիկների մոտ գնալ չէր կարող: Հարեւան նավահանգստային քաղաքում ծախու կանայք քիչ չէին, գիշերում էին ծովահայաց փողոցներում, եւ նա երբեմն գնում էր այնտեղ, բայց ամեն անգամ ինչ-որ բան հետ էր պահում: Ժլատությունը, ամոթը, գեշ հիվանդությամբ վարակվելու վախը չէ, որ նրան խանգարում էր փողով կին գնել, այլ մի անհասկանալի զգացում, որը չէր կարողանում բացատրել, բայց ավելի նման էր զզվանքին: Իսիդորը չէր կարող թույլ տալ, որ իր գեղեցիկ, մաքուր մարմինը դիպչի անմաքուր մարմնի, որ իր թանկարժեք սերմն ընկնի այնտեղ, ուր մեկ անգամ չէ, որ խառնվել է ուրիշ տղամարդկանց սերմը: Երբեմն նայում էր շորին, որը հագած փախել էր արտասահման, եւ ատելությամբ ու հեշտանքով մտածում կնոջ մասին, որին այդ շորը պատկանել էր, մի անգամ էլ կատաղությամբ բռնված՝ պատառոտեց շորը՝ պատկերացնելով, թե ինչպես կվարվեր նրա տիրուհու հետ... Տռփանքն ինչ-որ կերպ զսպելու համար շատ էր խմում ու նույնքան էլ ուտում էր, ու մի քանի ամսում չաղացավ, փքվեց: Ուտում ու խմում էր գիշերները, իսկ ցերեկը խամրած, անկենդան աչքերով նայում էր շուրջը: Չէր պատրաստվում սովորել տեղի անհեթեթ լեզուն եւ ավելի ու ավելի հաճախ էր մտածում, որ իզուր համաձայնեց փախչել, կապրեր իր վաշտերում, յուրայինների հետ: Կարելի էր կրկին հատել սահմանն ու վերադարձի փորձ անել, ոչ բռնվելուց էր վախենում, ոչ բանտից, մութ մարդկանց վրեժից էր վախենում:

Աշնանը Իսիդորը ստիպված աշխատանքի անցավ ձկնագործարանում, ու մի քանի շաբաթում այնպես ներծծվեց ձկնահոտով, որ ոչ մի կերպ չէր անցնում: Տեղացիներից ոչ մեկը մոտիկություն չէր անում նրա հետ: Մի քանի ռուս վտարանդիներ կային, իրենց հեռու էին պահում եւ մի անգամ

տուն հրավիրելուց հետո, այլեւս չկանչեցին: Ի՞նչ էր արել, ինչո՞վ դուր չէր եկել՝ չգիտեր, բայց տխրությունը չէր անցնում, չէր բթանում, ներսից լափում էր խոշոր մարմինը, եւ կարգալույծը որքան ավելի էր ճարպով ու մսով հագեցնում այդ մարմինը, ներսում բույն դրած երիզորդն այնքան անհագ էր դառնում: Բայց Իսիդորը ոչ թե մեծ քաղաքն էր կարոտում, որը դաժան վարվեց նրա հետ, ոչ Ցարիցինի վանքը, որտեղից նրան վռնդեցին, ու նույնիսկ ոչ կնոջ պագշոտ մարմիը,- պարզվեց՝ առանց այդ ամենի հնարավոր է ապրել, կամ փոխարինել ուրիշ բանով,- կարոտում էր չարքաճտին, որ նրան իր ցանցն էր գցել, իսկ հիմա թողել էր սատկի օտարության մեջ, կամ էլ նրան այդ երկիր չէին թողել, բռնել էին Իսիդորի փոխարեն, պատանդ պահել, գուցե եւ ինքը չէր ցանկացել գալ այստեղ: Եվ Իսիդորը ողջ սրությամբ զգում էր, որ ոչ թե Աստված է լքել իրեն, ինչի մասին նրան Ցարիցինի վանքում պատմում էր մի տխուր եւ իր տխրությամբ մեծամտացող փիլիսոփա, ու վանականը չէր հասկանում՝ ինչ է ասում եւ ինչու է տխուր, եւ ընդհանրապես ինչ է պետք կարճատես աչքերով ու կոկիկ մորուքով այդ մարդուն, Իսիդորը տարօրինակ, աներեւակայելի, անհասկանալի զգացողություն ուներ, որ անձնական չարքն է լքել իրեն: Բայց այդ զգացումը ոչ թե ազատություն ու խինդ էր բերում կարգալույծին, այլ այնպիսի սարսափ ու դատարկություն, ինչպիսին Իսիդորը պատկերացնել անգամ չէր կարող եւ խլացնելու միջոց էր փնտրում. ի՞նչ մտածի, ի՞նչ ասի, որ արդեն եթե ոչ փառքը, ոչ իշխանությունը, գոնե շարքային չարքաճուտը վերդառնա:

Եվ այդ ամենի պատճառը մի մարդ էր, որը պետք է սպանվեր, բայց ողջ էր մնացել: Ողջ էր մնացել, երբ փրկություն չուներ: «Ծլդո ապո՛ւշ, հիմարի՛ մեկը: Դաշո՛ւյն է վերցրել: Բզով պիտի խփեր: Էնպես շամփրել չալդոնին, որ դուրս քաշել չկարողանային, աղիքները փաթաթվեին վրան»,- տենդագին հայհոյում էր Ֆիոնիային ու մռայլ ծովին նայելով՝ իրար ետեւից բացում սառը, լպրծուն ծողածկների ու նավագաների փորերը:

Ծովը նրան թաղում էր խառնակ, մռայլ մտքերի մեջ, հիշում էր Դոնի տափաստանը, տապը, իր մենաստանը, գորշ Պետերբուրգը, Կամենևի կղզու մեծ տունը, ու սիրտը լցվում էր չարությամբ: Իսկ գուցե իրավացի՞ էր մայրը, որ թույլ չէր տալիս որդին մեկնի Պետերբուրգ՝ սովորելու: Կմնար իր խուտորում, կամուսնանար, երեխաներ կունենար, կդառնար սովորական քահանա: Ինչ ազա՛տ էր այն ժամանակ: Իսկ հիմա՞: Իրեն զգում էր նեղլիկ միջանցքում, որով նրան քշում էր ճակատագիրը, եւ այդ կենաց աղետը մի մեղավոր ուներ՝ նա, որ հիմա կառավարում էր Ռուսաստանը,

որ քնում էր կայսրուհու հետ ու գահաժառանգի հայրն էր: Եվ որքան առաջ էր գնում կյանքը, այնքան Իսիդորն ավելի էր հասկանում, որ կործանելով հոգին՝ կուզեր փոխարենը որեւէ բան ստանալ՝ հիմա՛, կենդանության՝ օրոք, բայց ոչինչ չտրվեց, եւ դա նրան վիրավորում էր անազնվությամբ, բայց նաեւ հույս տալիս, որ գուցե դեռ ամեն ինչ կշտկվի, չի ավարտվի այդպես հիմար ու անփառունակ:

Իսկ հետո եկավ ձմեռը, ու թվում էր կխելագարվի: Ծովափնյա քաղաքը զզվելի էր, շաբաթներ շարունակ արեւ չէին տեսնում: Ավելի վատ էր, քան մթնդած դեկտեմբերյան Պետերբուրգում, որտեղ գոնե կարճատեւ լույս էր նշմարվում: Նա նստել էր ցուրտ ու ամայի մթության մեջ ու մտածում էր՝ երեւի սա է դժոխքը:

Գիշերներն Իսիդորը փորձում էր գրել իր գիրքը, բայց ոչինչ չէր ստացվում: Նստում էր մաքուր թղթի առաջ, ու բոլոր մտքերը լքում էին նրան, մնում էր միայն ատելությունը, բայց պարզվեց՝ գրելու համար ատելությունը քիչ է: Հիշում էր ինչ հեշտ էր բառեր գտնում քարոզ կարդալիս, խոսում էր աստվածայինի մասին, այպանում խոռովարարներին, երեւան հանում մասոններին ու մերկացնում անհավատներին, ինչ սահուն էր ստացվում ամեն ինչ, բայց հիմա ինչ-որ մեկը կամ ինչ-որ բան խլել էր այդ ունակությունը, եւ Իսիդորը հիշում էր սիբիրցի գեղջուկի հայացքը: Աչքը կսրի վրադ, դու կնայես նրան...

Երբեմն թերթեր էին բերում Ռուսաստանից: Անհագ կարդում էր՝ հուսալով որեւէ բառ գտնել իր մասին, բայց նրա մասին ոչինչ չէին գրում: Նրան մոռացել էին, ասես ոչինչ էլ չէր եղել՝ ո՛չ սկանդալները, ո՛չ դատավարությունները, ո՛չ կեղտոտ հոդվածները, ո՛չ նրա փայլուն փախուստը արտասահման՝ քաթանե դեղին շորը հագին: Փոխարենը՝ չալդոնը չէր իջնում շրշացող էջերից: Արգելված էր խլիստին ազգանունով հիշատակել, բայց բոլորը հասկանում էին ում մասին է խոսքը, երբ նկարագրում էին նրա արկածները: Սկանդալը մոսկովյան «Ցար» ռեստորանում: Ավագերեց Ֆիլոնենկոյի ելույթը Պետական դումայում: Սինոդի նոր գլխավոր վերատեսուչ Սամարինը խոստացել է, որ վերջ կտա խառնակչությանը եկեղեցում: Ներքին գործերի նոր մինիստր Ծչերբատովը կքննի Տյումենից Պոկրովսկոյե լողացող «Տովարպեր» նավի վրա տեղի ունեցած տուրուդմփոցը, երբ չալդոնը հարբել ու սկսել էր այլանդակություններ անել: Զանգակածայն քահանա Վոստոկովը մոսկովյան ծերունազարդ միտրոպոլիտ Մակարիին գրում էր. «Ռուսաստանը անդունդի եզրին է: Չար անառակն արդեն փորել-վերջացրել է Ռուսիո գերեզմանը», եւ պատասխան պահանջում Մակարի-

ից: Սրբահայր Ֆոման բացատրություն էր պահանջում Սինոդի գլխավոր վերտեսուչից եւ սպառնում շուտափույթ պաշտոնանկությամբ ու դատարանով: Ռուսական հակահետախուզության նոր պետ գեներալ Բատյուշինը գերմանական հետք ու Ռուսաստանի ազգային շահերի դավաճանություն գտավ սկանդալային տաժանապարտի գործում: Ամեն ինչ շիկանում էր, պրկվում ու... ոչինչ չէր կատարվում: Խլիստի բոլոր թշնամիները հալածվում էին, հեռանում, բանտ նետվում, սսկվում, իսկ նա իրենն էր շարունակում՝ անպատիժ, լկտի, ուժեղ:

Ինչո՞ւ ոչ ոք չի կանգնեցնում նրան: Ինչո՞ւ ի մի չեն գալիս անարգված կանայք, նրանց ամուսինները, հայրերը, որդիները ու չեն խեղդում տականքին: Ինչո՞ւ ամեն ինչ Իսիդորը պիտի անի: Թե՞ այդ վիժվածքն ինչ-որ մեկին պետք է: Չէ՛, խնդիրը չալդոնը չի՝ մի անգամ հասկացավ այրող հստակությամբ: Խնդիրը նրան խրախուսողն է: Թույլ, կամազուրկ ցարը, կնոջ կրնկատակ գունատ գնդապետը, որ խլիստի կամոք դարձել է ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատար: Երկրին ուրիշն է պետք: Մեկը, որ ոչ մեկից ու երբեք չի վախեցել ու չի ենթարկվել: Մեկը, որ գիտի՝ երկրում թշնամիներ, դավաճաններ, չարագործներ կան, ու չի երկնչի սարսափի մատնել նրանց իր հավատարիմներով: Չի վախենա մահապատժից, արյունից, արցունքից՝ պատրաստ անցնելու այդ ամենի վրայով: Ցար, որը ոչ միայն պալատ չէր թողնի փնթի գեղջուկին, այլեւ կիրամայեր մտրակածեծ անել, պոկել ռունգերն ու քշել անժամկետ տաժանակրության: Եվ ողջ վարակը, դավաճանությունը, վախկոտությունը կխարկեր շիկացած երկաթով: Ահա թե ինչպիսի թագավոր է պետք Ռուսաստանին: Ահա թե ում օրոք կունենայինք ուրիշ եկեղեցի, եւ այդ ժամանակ Իսիդորը չէր հրաժարվի հոգեւոր աստիճանից, չէր թաղվի անառակության մեջ, այլ աներեր կպաշտպաներ հավատը, ցարին եւ Հայրենիքը: Ինքը Նիկոլայի մեղքով այն աստիճան ընկավ, որ սկսեց ապրել օտարի ողորմածությամբ: Մի՞թե մեծ թագավորը թույլ կտար այդպիսի նվաստացում: «Իսկ խլիստը,- մտածում էր նա՝ մռայլ կարդալով թերթերը,- հրեաների հետ է տալիս-առնում: Բանկիր Ռուբինշտեյն, բանկիր Մանուս, փաստաբան Սլիոզբերգ, ոսկերիչ Սիմանովիչ, բարոն Գինցբուրգ, ռաբբի Մաղէ, անձնական քարտուղար Արոն Սիմանովիչ: Հրեաներին է աջակցում, ազատում բանակից, հանում բանտերից, ու նրանք դրա համար շռայլ վճարում են: Ի՞նչ այդպես վճարեին: Խորամանկ, խորամանկ սողո՛ւն: Խելացի ոչնչությո՛ւն: «Ա՜խ, հա՛յր սուրբ, հա՛յր սուրբ,- Սարատովի եպիսկոպոսին հիշեց Իսիդորը,- ինչպե՛ս չտեսաք, ինչպե՛ս թույլ տվիք Ֆեոֆիլի հետ, որ այդ վարագին թողնեն

ցարի մոտ: Ախր ձեր գաղափարն էր: Երազում էիք, որ ուղղափառ տեր թագավորը մեկանա ժողովրդի հետ, խոնարհվի հոգեւոր ակունքներին ու ոգեշնչվի: Ահա եւ խոնարհվեց: Ահա եւ ոգեշնչվեց: Այնքան, որ շնորհազուրկ արեց բոլորիդ»:

Իսկ թերթերը շարունակում էին գրել: Ցանկասեր ճգնակյացի եւս մեկ զոհ... մինչեւ ե՞րբ է ռուս հասարակությունը... անմեղ գիմնազիստուհին... մարտական ռուս սպայի դուստրը... հարբեցրել ու լքել են... անառակություն... մոխրագույն ավտոմոբիլ... աղջնակը՝ Կոնոնոգվարդիական բուլվարից... «Վիլլա Ռոդէ...»:

Իսիդորին էր նայում վախեցած աչքերով կիսամերկ մի աղջիկ, որին լուսանկարել էին ինչ-որ ռեստորանում, ու երեւում էր, որ չի հասկանում ինչ է կատարվում իր հետ, դրա համար էլ նուրբ դեմքին ավելի շատ շփոթմունք կար, քան ամոթ: Դա ոչ թե կնոջ, այլ երեխայի անմեղ հայացք էր, որից ցանկացած մարդու սիրտ թրթռում է, բայց Իսիդորի մեջ սուր ատելություն ու տռփանք արթնացրեց: Այդ աչքերը, այդ կերպարը այնքան անտանելի էին, որ Իսիդորը կատաղած պատառոտեց թերթն ու տեսավ չարքաճտին: Նստել էր նավամատույցի ծայրին, որտեղ հենց նոր ճչում էին ճարպոտ ճայերը, եւ ցրտից ու մենակությունից կծկված՝ խղճահարությամբ ու տարակուսանքով նայում էր վտարանդուն, բայց Ճչետինկինը զգաց, որ իր ամբողջ ճնշվածությունն անհետացել է, ու սկսեց գրել՝ շեշտակի, արագ, ասես մեկը վարում էր ձեռքը:

3

- Եվ որտեղ էիք մինչեւ հիմա՞, մադմուազե՛լ: Թե՞ կարծում եք ձեզ ազատել են դասերից: Ինչի՞ պատվին՝ թույլ տվեք հետաքրքրվել:

Մադամ Միլլերի ձայնը հեգնոտ էր, բայց Ուլյան լարվածություն զգաց այդ հեգնանքի տակ: Չէր կասկածում, որ այս անգամ կհեռացվի գիմնազիայից, եւ անհասկանալի էր՝ է՞լ ինչ են ուզում իրենից եւ ինչո՞ւ են կանչել: Մի՞թե այս տիկինը զղջումի արցունքներ է սպասում, աղերսանք, խոստումներ, որ այլեւս նման բան չի կրկնվի: Բայց ինքը երբեք չի համաձայնի դրան: Հեռացնելո՞ւ են՝ թող հեռացնեն: Ոչ էլ սարսափելի է: Անբարեհույսի խարանով էլ կարելի է ապրել:

Տնօրինուհու սեղանին չարաբաստիկ թերթն էր՝ քաղաքամերձ ռեստորանի լուսանկարներով, բայց մադամ Միլլերը չէր շտապում անդրադառնալ թերթին:

- Մի մոռացեք, խնդրում եմ, մադմուազել Կոմիսարովա, որ շուտով քննություններ են:

«Գրողի տարած ճիզվիտ: Ի՞նչ քննություն: Դե՛, շուտ արա, խփի՛ր»: Ուլյան դողաց զայրույթից ու զգաց, որ աչքերը լցվում են արցունքով: Միայն լաց լինելն էր պակաս: Չէ՛, արցունք էլ չեք տեսնի:

- Կարծես թե մրսում եք, մադմուազե՛լ, դողում եք:

- Ո՛չ:

- Մե՛կ է, վառեմ բուխարին:

Տնօրինուհին սեղանից վերցրեց թերթը, զզվանքով ճմռթեց ու վառեց: Կեչու չոր փայտը բռնկվեց անմիջապես: Ճթճթաց կեղեւը, կրակը խաղաց, եւ ցարի դիմանկարով ընդարձակ առանձնասենյակը փոխակերպվեց, դարձավ հարմարավետ, հարազատ: Եվ նույնիսկ թագուհին, որից Ուլյան ավելի էր վախենում, քան թագավորից, նախկին կշտամբանքով չէր նայում նրան:

- Այ այսպես, լա՛վ է: Հիմա կտաքանա: Եվ մի բարկացեք ինձ վրա, խնդրում եմ, մեր նախորդ խոսակցության համար: Կարծում եք ինձ համար հե՞շտ է ապրել այս ազգանունով, երբ բոլորը կասկածում են թե գերմանական լրտես եմ: Մոռանում են ինչ արյուն է հոսում մեր թագուհու երակներում: Առայժմ մոռանում են...

Մադամ Միլլերը վեր կացավ ու սկսեց հետուառաջ անել առանձնասենյակում:

- Հիմա բոլորիս համար էլ դժվար է: Բայց միավորվելու եւ իրար օգնելու փոխարեն գժտվում ու ստորություններ ենք անում: Իսկ դա միակ բանն է, որ կարող է կործանել Ռուսաստանը: Եվ ահա, ինչ եմ ուզում ասել ձեզ, մադմուազել Կոմիսարովա, գնացեք դասասենյակ ու հանգիստ շարունակեք սովորել: Ուշադրություն մի դարձրեք ոչ մի բամբասանքի: Ամուր ու նեղողամիտ եղեք: Եվ խնդրում եմ՝ աշխատեք այլեւս առանց հարգելի պատճառի չբացակայել, հակառակ դեպքում ինձ համար շատ դժվար կլինի պաշտպանել ձեզ մանկավարժական խորհրդից ու հոգաբարձուների կոմիտեից, որոնք, չգիտես ինչու, միաձայն պնդում էին, որ պետք է հեռացնել ձեզ:

Նա ունելիով իրար բերեց վառվող փայտերը, եւ կրակն ավելի ուժեղ բորբոքվեց՝ ճթճթացնելով շիկացած ածուխները:

- Մադա՛մ...,- մրմնջաց Ուլյան:

- Ինձ չէ, նրան շնորհակալություն հայտնեք,- չշրջվելով՝ ասաց մադամ Միլլերը:

- Ո՞ւմ:

- Ձեզ հետ կատարվածի մեղավորին,- գրգռված ասաց տնօրինուհին:- Ստիպեցի իր տան բոլոր սրբապատկերների առաջ երդվել, որ ինչպես ձեզ քաշել է այդ պատմության մեջ, այնպես էլ պատասխան տա դրա համար:

- Գնացել էիք Գորո՞խովո,- ապշեց Ուլյան:

- Մի տեղից պետք է իմանայի ճշմարտությունը, չէ՞:

- Բայց ինչպե՞ս ներս թողեցին:

- Թող փորձեին չթողնել,- քմծիծաղեց տնօրինուհին:- Կարծեմ ճաշում էին: Հետո՞ ինչ: Կարգադրեցին սպասել: Կարծես ժամանակ ունեի սպասելու, մինչեւ այդ հիմարները կլպստեն նրա յուղոտ ձեռքերը, իսկ ինքը գինի կվայելի՝ հացի փշրանքներ որսալով սեփական մորուքից: Ծշպռում էի, ինչպես չարություն արած տղեկի, իսկ նա միայն կրկնում էր. «Էդպես թունդ մի հայհոյեք, տիրուհի՛, մի հայհոյեք...»: Անկարգություն արած սովորական գեղջուկ, ի՞նչ է, չե՞մ տեսել դրանց հորս տանը: Ամենազզվելի ցեղը այդ երեսառած ճարպիկ գեղջուկներն են: Գեղջուկը, որ ոչ թե հող է հերկում, այլ որպես հացկատակ ծառայում է տերերին: Իսկ սա էլ իր հացկատակներն ունի: Ով էլ լիներ, գլուխը կսկսեր պտտվել, մանավանդ, երբ շուրջդ, իրար առաջկտրուկ անելով՝ այդքան մարդ է պտտվում: Փող են խցկում գրպաններդ, Պետերբուրգ, լույսեր, ռեստորաններ, երգչուհիներ... Բայց ինձ ուրիշ բան զարմացրեց: Լա՛վ, ասենք ինքը գեղջուկ է: Բայց մյուսնե՛րը: Կրթված, քաղաքավարի կանայք են գալիս այդ տուն: Թողնում են իրենց հարազատներին, մասնագիտությունը, կոչումը, մոռանում պատիվ ու պատշաճություն: Ի՞նչ են գտնում նրա մեջ, բացատրեք խնդրեմ: Խելագարվե՞լ են, ինչ է: Համալսարանական ընկերուհուս տեսա այնտեղ, Նատաշա Բիրոնովնային: Սքանչելի բանաստեղծություններ էր գրում, պլատոնական սիրով սիրահարված էր թագավորին, հրաշալի, եռանդուն ամուսին ունի, դաստիարակված երեխաներ, ու հանկարծ հայտնվել է այդ որջում, եւ այն էլ՝ առաջին դերերում: Իսկ Տանյա Զոլոտովա՞ն: Խելացի, բարձրագույն կարգի բանասեր, թարգմանիչ, գիտությունների դոկտոր Պետերբուրգի համալսարանի գերմանագիտության ամբիոնում...

- Կներե՞ք:

- Պատրաստ էր ինձ սպանել, որ համարձակվել եմ գոռալ սրբահոր վրա: Ասում եմ. «Աղջիկնե՛ր, ի՞նչ սրբահայր: Ո՞ւմ եք դիմում այն անունով, որով Ամբրոսի Օպտինցուն էին կոչում: Այդ մարդը հոգեւոր ինքնակոչ է: Ի՞նչ է, չե՞ք տեսնում: Ո՞վ է: Որտեղի՞ց է հայտնվել: Ո՞ւմ օրհնությամբ: Ոչ մի ապաշխարություն չի անցել: Անդիպլոմ բժիշկ է, անուս, շառլատան: Թե՞

մոռացել եք Լաոդիկյան Ժողովի քսանվեցերորդ կանոնը՝ «Եպիսկոպոսից չձեռնադրվածը չի կարող երդվեցնել ոչ տաճարներում, ոչ էլ տներում»: Լա՛վ, եթե այդքան կրոնասեր եք, մի՞թե արժանավոր կղեր չկան Պետերբուրգում: Սրբահա՞յր եք ուզում, գնացեք վանքերը՝ Վալաամ, Պեչորա, Օպտին: Գավրիիլի մոտ գնացեք՝ Սեդմիեզերնի անապատ: Սովորական գյուղական եկեղեցի մտեք: Ի՞նչ եք գտել այս հեղձուկ բնակարանում: Ո՞ւմ եք խաբում: Ախր թագավորին է վարկաբեկում: Նրա պատճառով ինչ ասես չեն խոսում մեր թագուհու մասին: Ախր կկործանի նրանց, մեզ բոլորիս կկործանի, ինչպե՞ս չեք հասկանում: Եթե մի կաթիլ խելք, պատիվ, խիղճ ունենար, իր պատճառով ցարական ընտանիքի վրա թեկուզ թեթեւ ստվեր ընկնելուն պես,- կարեւոր չէ, ճիշտ է են խոսում, թե ոչ,- պարտավոր էր հեռանալ, այնպես չքվել, որ այլեւս ոչ ոք չլսեր նրա մասին»: Հարցրի՝ լա՞վ եք հիշում Սերգեյ Ալեքսանդրովիչ Նիլուսին: Սույն անձը մոտ էր թագավորին, ամուսնացած էր նորին մեծություն կայսրուհի Մարիա Ֆյոդորովնայի ֆրեյլինայի հետ: Պատրաստվում էր քահանայություն ընդունել ու դառնալ ցարական ընտանիքի խոստովանահայրը: Բայց ի՞նչ արեց, երբ թշնամիները չարը նյութեցին ու թերթերում սկսեցին հիշատակել նրա պատանեկան մեղքերը: Աշխարհաթող եղավ ու մտավ վանք: Ահա ընդօրինակման արժանի վարք: Իսկ ձեր այդ սիբիրյան կո՞ւռքը ինչ է անում: Այլանդակություններ է անում, ռեստորաններ գնում, բոլորին հարցազրույցներ տալիս, որջ է դարձրել իր բնակարանը: Գուցե հայր Իոան Կրոնշտադտցու փա՞ռքը նրան հանգիստ չի տալիս: Բայց որեւէ մեկը կհամարձակվի՞ անվայել խոսք ասել սուրբ հոր մասին: Իսկ սրա՞ն: Եվ հայր Իոանն էլ, հիշո՞ւմ եք, ինչ էր ասել սրա համար. «Ըստ քո ազգանվան կտրվի քեզ, զավա՛կս»: Խոսում էի ու կարծում՝ ուր որէ կհասկանան, ինքն էլ գլուխը կախ կանգնել ու արդարացման բառ չէր գտնում: Մտածում էի՝ երեւի խիղճը հսպառ չի կորցրել: Բայց այստեղ վեր կացավ մի փարիսեցի ու ողջ մարմնով ցնցվելով՝ սկսեց ճղճղալ, ու բոլորը սսկվեցին, ասես աքլորը թռած լիներ թառին. «Աստված կպատժի քեզ այդպիսի խոսքերի համար, Աստված կպատժի: Մի ամիս էլ չի անցնի, ու կպատժի»: Դրանց նույնիսկ Աստվածը մի տեսակ քինոտ է: Չար են այնտեղ բոլորը, չոր, մի խոսքով՝ գերմանացիներ,- զայրույթով ոտքը գետնին խփեց մադամ Միլլերը:

- Ովքե՞ր են գերմանացի,- չհասկացավ Ուլյան:

- Բոլորը, որ գնում են այնտեղ ու երկրպագում նրան: Բայց շատ խոսեցի: Չեմ պնդում, որ հեռանաք այդ տնից: Ձեր վերաբերմունքը այդ երկու գեղջուկ աղջիկների հանդեպ վերին աստիճանի վեհանձն է, ու ես չեմ

ամաչում, որ այսպիսի աշակերտուհի եմ դաստիարակել: Նույնիսկ հպարտանում եմ, այդպես էլ ասացի խորհրդում, որ հպարտանում եմ ձեզնով, բայց, մեկ է, պետք է աղոթեմ, որ Տերը հեռու պահի ձեզ այդ տնից, ինչպես աղոթում եմ, որ Տերը այդ մարդուն հեռու պահի թագավորական տնից: Իսկ հիմա գնացեք, ես առանց այն էլ շատ բան պատմեցի ձեզ:

Ուլյան դուրս եկավ: Ոչինչ չէր հասկանում, բայց անհարմար էր զգում այդ մոլեգին կնոջ առաջ, որին քաշել էր անհասկանալի պատմության մեջ, ինչպես խորթ մայրը իրեն՝ Ուլյային էր այդպիսի պատմության մեջ քաշել, իսկ նրան քաշել էր էլի ինչ-որ մեկը, սրան էլ՝ ինչ-որ մեկը, եւ Ուլյային սկսեց թվալ՝ որ նրանք բոլորն ախտահարված են, խարանված, դժբախտ ընտրյալներ, եւ ամաչում են այդ ընտրյալությունից, շտապում առանձնանալ ու չտեսնել իրար:

Բայց ավելի ծանր եղավ Գորոխովոյում:

- Փա՞ռք ես փնտրում,- Մատրյոնայի դեղին կատվային աչքերը նեղացան ու փայլեցին:

Ուլյան նայեց աշակերտուհուն ու գունատվեց: Ամենաանսպասելին այն էր, որ իրեն մեղադրում ու կշտամբում էին յուրայինները:

- Բայց ինքն էր հրավիրել ռեստորան:

- Հետո՞ ինչ, սեփական գլուխ պիտի ունենաս ուսերիդ: Ախր հիմար չես: Տեսնում ես ինչ հայր ունենք: Հիմա քո պատճառով ինչե՞ր կասեն նրա մասին:

- Բայց ե՞ս ինչ կապ ունեմ,- ճչաց Ուլյան եւ այս անգամ չկարողացավ զսպել արցունքները:

- Մեծ կապ: Եթե այս տուն ես ընկել, պիտի հետեւես քո ամեն քայլին: Սա քեզ համար նիքսեն անել չի: Աչքերդ էլ մի չռի վրաս ու մի զռա: Ի դեպ, նա կին ունի: Կարծում ես նրա համար հաճելի՞ է թերթում էս տեսակ բան կարդալը: Իսկ հայրիկը երբեք նրան չի դավաճանել: Հասկացա՞ր:

Ուլյան արցունքոտ աչքերը հառեց Վարյային, բայց նա էլ նայում էր տխուր ու կշտամբանքով: Դա պարզապես դստեր հոգածություն կամ խանդ չէր. գեղջկական լուռ խստության մեջ Ուլյան խորքային, հաստատուն, անդրդվելի մի բան զգաց, որին խփվելով փշրվում էին կյանքի մասին նրա նախկին բոլոր թեթեւ պատկերացումները: Եվ քույրերի հետ նրա հարաբերություններում ինչ-որ բան կոտրվեց: Եվ չնայած արտաքուստ հաշտվեցին, նախկինը վերադարձնելն արդեն անհնար էր:

...Մարտին մի աղջիկ էլ հայտնվեց Գորոխովոյում: Մի քանի տարով մեծ էր նրանցից, բարձրահասակ, խոշոր, գեղջկական լայն դեմքով, բայց ինչ-

որ մանկական, անպաշտպան բան կար նրա մեջ: Պատմեց, որ վաճառականի հարուստ ընտանիքից է, բայց իրեն չէին սիրում, ասես աղքատ ազգական լիներ: Հայրը արհամարհում էր պարապության ու ամուսնացած չլինելու համար, նրա համար, որ կանանց բժշկական ինստիտուտ ընդունվելով՝ թողել էր ուսումը դիարան կատարած առաջին իսկ այցից հետո, եւ այդ օրվանից ոչինչ չէր անում: Իսկ ինքը ոչինչ չէր էլ կարող անել: Մեռած ու մերկ մարմինների տեսքն ասես կաթվածահար էր արել նրան, ու դրա հետ՝ անասելի սրել կրոնական զգացումները: Նա սկսել էր վախենալ մահից, նրանից, որ օտար մարդիկ կսկսեն հետազոտել, իսկ հետո կտրտել իր մերկ, անօգնական, սառը մարմինը: Նաստյան սկսել էր շրջել վանքերով, բայց ոչ մի տեղ սփոփանք չէր գտել:

- Արդեն քնել էլ չէի կարողանում, բայց անդադար ու շատ ուտում էի ու սարսափելի չաղացա: Ե՛վ մայրիկն էր կշտամբում, եւ՛ քույրերս, իսկ ես հանգուցյալին հիշելուն պես բուկիին մի բերան էի անում:

Վարյան ու Մատրյոնան քրքջում էին, Ուլյան զսպում էր ժպիտը, բայց Նաստյան չէր նեղանում:

- Եվ ահա մի բարի կնոջից լսեցի սրբահոր մասին: Ու եկա նրա մոտ, ու չէին ուզում ներս թողեն, սկսեցին խուզարկել,- աղջիկը բորբոքվեց:- Նեղացնում էին, ասում էին ինչ-որ մեկը ուղարկել է, որ սպանեմ նրան: Ես լաց եղա, եւ այդ ժամանակ նա դուրս եկավ, խղճաց ինձ ու կարգադրեց տանել իր մոտ: Եվ այնպիսի երանություն գտա այստեղ: Սրբահայրը սուրբ է, սրբահայրն իր աղոթքներով Ռուսաստանն է պաշտպանում, վահանի պես, նրանից վանում ամենայն չարը: Քանի դեռ նա թագավորի հետ է, ոչինչ սարսափելի չի: Մեծ, բարի, խելացի սիրտ ունի: Միայն թե չեն գնահատում նրան, չեն հասկանում: Բոլորը չար են, նախանձ, իրենց խելքով են պարծենում, հարձակվում են նրա վրա, բայց արի ու հարցրու՝ ի՞նչ են ուզում: Ո՞ւմ են սիրում: Ի՞նչ ունեն հոգու մեջ: Իրե՞նք ինչպես են ապրում: Ո՞վ են, որ մեղադրեն: Եվ ի՜նչ ստեր են թափում սրբահոր վրա, ի՜նչ մեղքերի մեջ են մեղադրում: Ասում են՝ պանդոկներից դուրս չի գալիս, գինի է խմում, վատ կանանց հետ է լինում, ու բոլորը՝ սո՛ւտ, սո՛ւտ:

- Իսկ ի՞նչն է ճիշտ,- զգույշ հարցրեց Ուլյան ու նայեց քույրերին:

- Նմանակ ունի ինքը:

- Ի՞նչ:

- Իր նման մարդ: Ի՞նչը չես հասկանում:

- Եվ ի՞նչ:

- Եվ էն, որ սրբահայրը տաճարում Աստծուն է աղոթում, իսկ նմանակը

պանդոկում սատանային է ծառայում: Իսկ առավոտը ջիուդական թերթերը խայտառակ նկարներ ու զզվելի հոդվածներ են տպում:

Քույրերը մռայլվեցին, իսկ Ուլյան զգաց ինչպես է կարմրում:

- Սպասիր,- մազափունջը հետ գցելով՝ առարկեց նա:- Եթե հաստատ իմանայիր, որ ոչ մի նմանակ էլ չկա, եւ ինքն է ռեստորան գնում, գինի խմում ու կանանց համբուրում, իսկ հետո մտնում է եկեղեցի եւ աղոթում Աստծուն, կսկսեիր ավելի քի՞չ սիրել:

- Չէ՛:

- Ինչո՞ւ:

- Չգիտեմ,- Նաստյան տարակուսած նայեց նրան:- Բայց ավելի շատ կսիրեի: Կխղճայի նրան: Աստված մարդուն այնքան գայթակղություններ է ուղարկում:

- Ուրեմն ինչո՞ւ ես հորինում նմանակի մասին: Գուցե հենց նրա համար է գնում այդ վայրերը, որ մարդիկ ավելի շատ խղճան ու սիրե՞ն: Հենց այդպիսին սիրեն: Սրբին, մաքուրին ով ասես կսիրի, իսկ դու նրան սիրիր այնպիսին, ինչպիսին կա:

- Վե՛րջ տուր,- կամացուկ խնդրեց Վարյան:

- Ինչո՞ւ վերջ տամ: Ինչո՞ւ վերջ տամ: Ախր խենթություն է անում, հասկանո՞ւմ եք: պանդոկներում, կանանց հետ, հարբեցողների, կաշառակերների ու ստախոսների: Ախր ոչինչ չգիտեք նրա մասին:

Ուլյան սպասում էր, որ Վարյան կամ նորից Մատրյոնան կմիջամտեն, բայց նրանք լռում էին: Լուռ էր նաեւ Նաստյան: Հետո ասաց.

- Չեմ ուզում այդպիսի բան մտածել: Քեզ էլ խորհուրդ չեմ տա: Չար մտքեր են: Սատանայի՛ց: Քշի՛ր դրանց: Ու հիշիր նա ինչ է ասել՝ սուտը մեծ է, բայց ճշմարտությունն՝ ավելի:

Նաստյան սուրբ մարդու ասույթներով ալբոմ էր պահում եւ ողջ սրությամբ զգում, թե ով է պարզապես սիրում նրան, եւ ով է շահ փնտրում նրա կողքին, բայց հենց փորձում էին խոսել դրա մասին, ասույթների հեղինակն ընդհատում էր.

- Չհամարձակվես ինձ սրբահայր ասել: Սրբահայր չեմ ես:

- Իսկ ո՞վ եք:

- Ոտնակապ արած ուխտավոր: Ու չհամարձակվես ոչ մեկին դատել: Բոլոր մարդիկ Աստծո արարածներն են, բոլորն էլ պետք են ինչ-որ բանի համար:

- Ձեր մասին վատը խոսողնե՞րն էլ: Նրանք է՞լ, որ ուզում են ձեզ սպանեն:

- Նրանք էլ:

- Ջհուդներն է՞լ մարդիկ են:

- Նրանք բոլորիցս երեցն են, Աբրահամից, Իսահակից ու Հակոբից են նրանք: Մենք պետք է պատվենք նրանց:

- Հներին՝ գուցե, բայց այսօրվաններին՝ երբե՛ք: Ռուսաստանի բոլոր դժբախտությունները ջհուդներից են:

- Ռուսաստանի բոլոր դժբախտությունները նրանից են, որ ամեն ինչ հրեաների վրա են գցում, իսկ իրենք ոչինչ չեն ուզում անել,- հառաչեց զրուցակիցն ու ավելացրեց:- Մարդը մյուս մարդուն, ժողովուրդն ուրիշ ժողովրդի դատավոր լինել չի կարող: Միայն իրեն: Իսկ մյուսներին՝ միայն Աստված: Էդպես էլ գրի:

Բայց Նաստյան միայն գլուխն էր օրորում, եւ նայելով նրան՝ Ուլյան մտածում էր՝ լավ է ապրել այսպես, առանց կասկածի: Բայց, տարօրինակ կերպով, վաճառականի աղջկա՝ հայտնվելուց հետո Ուլյան վերջնականապես զգաց, որ այդ տանն ավելորդ է: Ոչ ոք նրան ուղիղ չէր ասում դրա մասին, հասկանալ չէր տալիս, որ այլեւս չգա, բայց երբ մտնում էր սենյակ, որտեղ Մատրյոնան, Վարյան ու Նաստյան զրուցում կամ զառ էին խաղում, նրանք անմիջապես լռում էին, ասես ամաչում կամ վախենում էին որեւէ սխալ անել նրա ներկայությամբ, բայց երբեք իրենց խաղի մեջ չէին ընդունում: Իսկ Ուլյան խաղացողներին նայելիս, զառերի խուլ թխկոցը լսելիս այդ ամենի անիրական լինելու զգացողություն էր ունենում, ուզում էր որեւէ բան հիշել, պատմել աղջիկներին, բայց ավելի էր քաշվում, քան նրանք իրենից: Որքան էլ ջանում էր պարզ ու մատչելի լինել, չէր կարողանում, ինչպես որ չէր կարողանում նաեւ ուսուցիչ լինել նրանց համար: Մեկ է, նրանք խոսում էին միայն իրենց հասկանալի լեզվով, իսկ ինքը ինչպես կար, այնպես էլ օտար էր մնում գյուղական աղջիկներին: Չէին վստահում նրան, բնազդով խուսափում, ինչ-որ վատ բան էին կասկածում, ու ոչ մի վարվելակերպ էլ չէր կարող սովորեցնել նրանց՝ ավելի ու ավելի քիչ լինելով Գորոխովոյում: Հոգու խորքում սպասում էր, որ կկանչեն իրեն, որ ոչ թե մյուսները, հենց նա կհարցնի.

- Ինչի՞ չի գալիս էն պեպենոտ օրիորդը:

- Ինչո՞ւ:

- Պեպեններով աղջիկը: Ի՞նչ է պատահել:

Բայց չէր հարցնում: Չէր մտածում աղջկա մասին: Մոռացել էր: Եվ Ուլյային թվում էր՝ այդ ամենը երազ է, գուցե իսկապես իր տեսած մարդը նմանակ էր: «Գուցե ես է՞լ եմ ինչ-որ մեկի նմանակը»: Կամ գուցե չէր ար-

դարացրել իր հետ կապված հույսերը: Կամ ստացել է, ինչ ուզում էր: Կամ էլ... Հիշում էր ինչպես էր ուժասպառ լինելու աստիճան աղոթում մութ սենյակում, ինչպես էր մոխրագույն ավտոմեքենայով սլանում քաղաքամերձ ռեստորան, ինչպես էր պտտվում գլուխը, ու հասկանում էր, որ հենց այդպիսի՝ սուր զգացումներով, անկումներով ու վերելքներով լեցուն կյանք է ուզում, որ միշտ մեկի ուժեղ ձեռքերը պահեն ու պաշտպանեն իրեն, տխրեն իր համար, կարոտեն, եւ ավելի էր ամփոփվում իր մեջ, որովհետեւ այդ ձեռքերը վանել կամ բացվել ու արձակել էին նրան:

4

Իսկ նա չէր հարցնում ոչ այն պատճառով, որ չէր մտածում աղջկա մասին, առավել եւս՝ հիասթափվել էր, եւ նույնիսկ ոչ այն պատճառով, որ անհարմար կամ մեղավոր էր զգում նրա առաջ, պարզապես շատերն էին հորդանում նրա շուրջը, եւ նա բոլորին չէր հերիքում: Քաղաքական գործիչ չէր, գործարար չէր, կրոնախեւ չէր, ժողովրդի բարեխոսը չէր թագավորի առաջ, ինչպես կարծում էին որոշ վսեմ անձինք, եւ ոչինչ չէր ուզում անձամբ իր համար, բայց եւ հոգեւոր ինքնակոչ չէր, ինչպես ինքնահավան մտածում էր Լիտեյնի պողոտայի գիմնազիայի չափազանց խելացի ու չափից դուրս վեհանձն տնօրինուհի Լյուբով Պետրովնա Միլլերը: Պարող էր, ինչպես հեքիաթի հյուրերը՝ տավիղների հնչումի ներքո, որ չէին կարողանում կանգ առնել: Այդ պարի մեջ միահյուսվել էր նրա ողջ կյանքը՝ իր պաղատանքներով, արցունքներով, երգերով ու սանձարձակ խրախճանքներով,: Նա մանկուց իր մեջ կրում էր ռուսական տարածությունը, ասես որպես գեղջկական ընտանիքի հինգերորդ՝ չմահացած երեխա ժառանգած լիներ ծննդաբերության ժամանակ կամ մանուկ հասակում մահացած եղբայրների եւ քույրերի ուժը, նրանցից շնորհ լիներ ստացած, եւ այդ ուժը ի սկզբանե այնքան մեծ էր, որ չգիտեր ինչպես վարվի նրա հետ: Վատնում էր մանկական խաղերում, կռիվների մեջ, հերկ ու հնձով, այդ ուժը չարչարում էր նրան, պայթեցնում ներսից, ելք փնտրում, եւ անքուն գիշերներին նա վազում ու փառաբանում էր Աստծուն, սիրո խոսքեր էր գոչում երկինքն ի վեր, եւ Աստված պատասխանում էր պատանուն աստղերին խնդուն առկայծումով, լուսնի խորհրդավոր ընթացքով՝ սեւ ու փառահեղ ամպերի միջով, առավոտյան մշուշից բարձրացող արեգակով, կույր անձրեւներով, զորեղ ձյուներով, ձնհալի ջրերով, Տուրի հեղեղումներով, ծիածանով, լռությամբ, տերեւաթափով, եւ նա՝ անգրագետ պատանին բոլոր իմաստունները-

րից ստույգ գիտեր, որ աշխարհում ամեն ինչ Աստծուց է, եւ սաղմոսներ էր երգում, եւ աղոթում ուժասպառության աստիճան, եւ լալիս էր, եւ ծիծաղում, եւ հեկեկում, եւ եթե որեւէ մեկը այդ պահին կարողանար տեսնել նրան, կմտածեր խելագարվել է: Իսկ նա երջանիկ էր, կյանքում ամեն ինչ անում էր աղոթքով, ու թվում էր նրան, որ իր արյունն իսկ հագեցած է Աստծո տարածությամբ ու սիրով, ինչպես թթվածնով: Ուժեղ, եռուն, պղպջացող արյուն, որ անդադրում մղում էր նրա ամուր սիրտը ու չէր զգում ժամանակի կրճատվելը ու միայն հավերժն էր ճանաչում: Ու պետքը չէր, որ գյուղում գիժ են համարում իրեն, գրգռում են, ծիծաղում, ծեծում: Միայն երբեմն թախիծն էր շատանում, որը խեղդում էր գինու մեջ, եւ հարբած ժամանակ մոլեգին ու անսանձելի էր, ինչպես եւ աղոթելիս: Իսկ հետո մեղա էր գալիս ու կրկին փառաբանում Աստծուն, ասես ճոճանակով երկինք թռչեր ու սլանար ցած:

Մի վիշտ ուներ միայն այդ ժամանակ, մի ամոթալի հիվանդություն, որի մասին ոչ մեկին չէր ասում. երբեմն գիշերը փոքրիկ երեխայի պես թրջում էր տակը: Փորձում էր պայքարել այդ հիվանդության դեմ, պառկելուց առաջ ջուր չէր խմում, արթուն էր մնում եւ աղոթում, բայց, մեկ է, լուսադեմին ննջում ուչէր հսկում մարմինը, թրջված արթնանում եւ անիծում իր խորհրդավոր կարթը, որ մեզը պահել չէր կարողանում: Միայն գյուղի ծայրին ապրող մի ոչ ծեր միայնակ կին գիտեր նրա դժբախտության մասին ու հենց ինքն էլ մի անգամ գտավ տղային, կանչեց իր մոտ, հապալասի չոր տերեւներին խառնած արեւքուրիկի, ուրցի ու հազարտերեւուկի թուրմ տվեց եւ ասաց, որ էլի գա: Երբ գարնանը հիվանդությունը սրվում էր, ու սովորական դեղամիջոցը չէր օգնում, կինը օղիով սոճու կեղեւ էր թրմում, բռնչենու արմտիք ու կեչու բողբոջներ: Նրան երբեմն թվում էր՝ կինը ոչ թե բուժում, այլ հակառակը՝ երկարածգում է իր հիվանդությունը, որովհետեւ կապվել է իր հետ ու սպասում է իր այցելություններին, բայց մի անգամ կինը նրան հեռվից բերած դափնու թուրմ տվեցու տխուր ասաց, որ հիվանդությունը մեկ ամսում կնահանջի եւ այլեւս երբեք չի վերադառնա:

Տղան ուզում էր վարձահատույց լինել, բայց կինը չթողեց:

- Շատ վիշտ կգա քեզնից,- ասաց, երբ ինքը վերջին անգամ եկել էր նրա մոտ:

Նա չգիտեր՝ ինչ վշտի մասին է խոսում կինը ու նաեւ հարցնել չէր կարող, որովհետեւ կինը շուտով լքեց իրենց գյուղը, բայց ժամանակի ընթացքում հասկացավ, որ մինչ իր մարմինը տայգայի խոտաբույսերի եւ անդրծովյան դափնու օգնությամբ պայքարում էր իր ամոթալի հիվանդության

դեմ, նրա խորհրդավոր կարթը ահռելի ուժ էր կուտակվել, եւ ինքը կարողանում է կառավարել այդ ուժը, ինչպես հազվագյուտ տղամարդիկ են կարողանում:

Հիվանդությունն անցավ, անցավ սրընթաց պատանեկությունը, եւ մի անգամ նա զգաց, լսեց, որ կոչված է ու քիչ ժամանակ ունի, եւ սիրտն ավելի արագ խփեց, որ հասցնի սահմանված գարկերը: Եվ չնայած ամուսնացած էր ու երեխաներ ուներ, լքեց գյուղն ու սկսեց շրջել երկրում, մինչեւ ամենահեռու անկյունները: Եվ ուրիշ դարձավ՝ կենտրոնացած, իմաստուն, տիրական: Արդեն չէր սովորում՝ սովորեցնում էր: Գիտեր ինչ սովորեցնի եւ ինչպես, ինչպես բուժի մարդկանց հիվանդությունները, ինչպես օգնի հոգով տկարներին, հուսալքվածներին ու վիատվածներին: Երբ տառապյալները գալիս էին նրա մոտ, սփոփանքի բառեր էր գտնում նրանց համար, անհավատներին հավատն էր վերադարձնում, աղոթում նրանց հետ, եւ նրա աղոթքը տեղ էր հասնում:

Շուտով նրա փառքը սկսեց առաջ ընկնել իրենից: Հարուստ ու աղքատ տներ էին կանչում, վանքեր, մենաստաններ, պատվում էին, կարեւոր մարդկանց ուղղված հանձնարարական նամակներ տալիս: Միայն հարազատ գյուղում չէին ընդունում. խլիստ էին կոչում, նրանից բողոքում քահանայապետին, հետաքննություններ սարքում, հարցուփորձ անում նախանձ մարդկանց, գրի առնում նրանց հորինվածքներն ու ցնդած կնիկների բամբասանքները, որ իբր խլիստի տանջածես է անում, որ ինչ-որ մեկին ուժով համբուրել ու կանանց հետ բաղնիք է գնացել, իսկ նա հիշում էր, որ ոչ մարգարե, ոչ էլ շահ կա սեփական հայրենիքում, վշտանում ու կրկին հեռանում էր տնից: Այդպես պտտվեց ողջ մերձավոր Սիբիրում, եղավ Վերխոտուրյեում, Վոլգայի ափին, Կոստանդնուպոլսում, Երուսաղեմում, Եգիպտոսում, հասավ Աֆոն, բայց միշտ վերադառնում էր տուն՝ կնոջ ու երեխաների մոտ, որ նորից հեռանա: Հեռավոր ճամփաներին նրա վրա էին հարձակվում չար մարդիկ, կողոպտում, ծեծում էին կիսամեռ անելու աստիճան, հետքով գնում էին գայլերը, վառվել էր, տենդել, մրրիկին սառել տափաստանում, բայց ոչինչ չէր կարող կանգնեցնել նրան:

Մի անգամ, երբ ուխտավորների հետ, մեծ առագաստանավակով լողում էր Սոլովկի, չար քամի հարձակվեց: Մի ակնթարթում լեռնացան կատաղի ալիքներն, ու մրրիկը պոկեց առագաստը: Ընկերները սկսեցին լաց լինել՝ մահն է եկել: Իսկ նա վախ չուներ: Մինչ այդ ծովում չէր եղել: Առաջին անգամ էր տեսնում ջրի ծանր ահռելիությունը, ու սիրտը ցնծում էր, ու որքան բարձր էր փրփրուն ալիքը, այնքան ավելի երախտապարտ էր Աստ-

ծուն նրա արարած աշխարհի համար: Ու կրկնում էր Դավթի սաղմոսները, ինչպես պատանության օրերին, ու լալիս էր ոչ թե վախից, այլ երջանկությունից: Եվ ուրախանում ու ծիծաղում էր, ու բոլորը մտածում էին՝ խելքը թռցրել է մարդը: Նավակում գտնվողները սկսեցին մեղքերը խոստովանել ու հրաժեշտ տալ կյանքին, ու հատկապես մեկն էր աղեկտուր կսկծում՝ մի գյուղագիր բանաստեղծ՝ հնածիսականներից, իսկ նա, ինքն էլ չիմանալով որտեղից ցամաքային մարդու մեջ հայտնված վստահությամբ ձայն տվեց նավավարին՝ «Ինձ տուր ղեկը: Առագաստը շեղ դիր»: Կանգնեց ղեկի մոտ, ու մի ժամ էլ չանցած ալիքների մեջ երեւաց ճերմակաքար վանքը:

Բանաստեղծն այն ժամանակ նրա ոտքերն ընկավ ու կանչում էր իր մոտ՝ Պետերբուրգ, իսկ ինքը նայեց նրա մեղսավոր աչքերին ու անտարբեր ասաց.

- Չեմ գա: Կդավաճանես դու ինձ, կուրանաս:

Բայց համենայնդեպս Պետերբուրգ պատրաստվում էր գնալ, Պետերբուրգից խուսափել չէր կարող, բայց մինչ այդ մեկնեց Սեդմիեզերնի մենաստան՝ վանահորից օրհնություն խնդրելու: Վանահայրը լռեց եւ օրհնություն չտվեց, բայց ինքը կռահեց նրա միտքը. «Կկորչես դու Պետերբուրգում, կփչանաս Պետերբուրգում, եւ Պետերբուրգն էլ քո պատճառով կփչանա ու կկորչի»: Եվ գոչեց հուսահատ.

- Իսկ Աստվա՞ծ: Իսկ Աստվա՞ծ:

- Աստված այնտեղ քիչ է,- պատասխանեց վանահայրը:- Ու քեզ չի հերիքի:

Բայց, մեկ է, գնաց, ասես մեկը ձեռքը բռնեց ու տարավ նրան: Մի անհշմար ու գորշ ուխտավոր, որին ծուռ նայում ու վռնդում էին դռնապանները, իսկ արդեն մեկ ամսից ընդունեցին ցարական պալատում, որտեղ էլ մի ամբողջ կյանք խրվեց-մնաց, այնպես, որ ամեն ինչ, որ եղել էր, հեռու էր թվում նրան, ասես ուրիշի հետ էր կատարվել, նրա, ում այնքան ատելություն, աստվածացում, ստորաքարշություն, չարություն ու անհագ հետաքրքրասիրություն բաժին չէր ընկել, որքան իրեն՝ այդ հպարտ մայրաքաղաքում: Այդպես էլ չսիրեց այդ քաղաքը: Ուզում էր, թե կարծում, որ ուզում է հեռանալ, երազում, թե կարծում, որ երազում է՝ դարձյալ, ինչպես անցած տարիներին, չմեկնել գնացքներով, այլ ոտքով կտրել հեռավոր ճանապարհներն ու մեծուղիները, գիշերել դեզերի մեջ՝ բաց երկնքի տակ, իջեւանատներում՝ ուխտավոր տղամարդկանց ու կանանց հետ, խոսել աստվածայինից, նայել աստղաշատ երկնքին, որն անընդհատ փոքրանում էր այդ քաղաքում: Զգում էր, որ քաղաքը քամում, գայթակղում, կլանում է

իրեն, եւ իրավացի էր խորատես վանահայրը՝ Աստված քիչ էր այդ քաղաքում, ու հասկանում էր, որ պետք է դուրս պրծնել, գնալ այնտեղ, ուր Աստված շատ է, փրկվել, ինչպես համոզում էր մի անհեթեթ, ծանրամարմին մարդ, ում հանդիպել էր Տոբոլսկի մեծուղում եւ ամբողջ գիշեր զրուցել մտագայլի մասին: Զգում էր նրա խոսքերի ճշմարտությունը, բայց դա միայն տեսանելի, մակերեսային մասն էր, բուն ճշմարտությունն ավելի խորն էր, ավելի դժվար, քանզի մի փոքրիկ արարած նրան պահում էր պալատում: Կայսրության ամենահզոր եւ ամենից անօգնական երեխան էր, երկրի ապագա տիրակալը, հիվանդ արյան անբուժելի հիվանդությամբ՝ հեմոֆիլիայով:

Նրան՝ հասուն մարդուն անծանոթ էր այդ հիվանդությունը, հազվագյուտ էր նրանց կողմերում, բայց երբ շատ տարիներ առաջ տեսավ մայրական հոգատար ձեռքով աղջկա շորից վերածեւած հագուստով երկամյա, գանգրահեր, արցունքոտ աչքերով տղային եւճանաչեց նրա տկարությունը, զգաց, որ կարող է օգնել: Իր արագ արյունը առեղծվածային կերպով արձագանքում էր արքայազնի հիվանդ արյանը, եւ որքան էլ հեռու լիներ նրանից, զուտ մտքով, բառով, աղոթքով, բարձրածայն անունը տալով, շշուկով բուժում էր երեխային: Այդ օգնությունը նրա կյանքի գլխավոր գործն էր, դրա համար էր ծնվել ու ողջ մնացել Սիբիրում, կտրել երկրի կեսը, տեսել անհամար մարդկանց, վանքեր, եկեղեցիներ, աղանդներ, աղոթատներ, ատելի, սիրելի, զրպարտված եղել, արդարացվել էր, հետապնդվել, բարձրացվել ու տապալվել, բերվել էր Կազան, հետո՝ Պետերբուրգ, փրկվել փլված քթով չար կնոջ դաշույնից: Միայն մի բանի համար էր այդ ամենը՝ կրակի պես պահպանել կյանքը երեխայի մարմնում, որը դժբախտություն էր ունեցել ժառանգելու օտարերկրյա տոհմի հինավուրց հիվանդությունը, որ կնոջից կնոջն է փոոխանցվում, բայց ախտահարում է տղամարդկանց:

Իսկ մնացած ամեն ինչը փրփուր էր՝ չար Դուման, ազնիվ, բայց բութ միապետականները, ամեն ինչ ապականող լիբերալները, աչքաբաց քահանայապետերը, վախկոտ գեներալները, մինիստրները, մեծ իշխանները, հայրենասերները, գրողները, դիվանագետները, հեղափոխականները, բոլորը, որ ատում էին նրան, նախանձում ու սպասում նրա մահվանը, քննում խլիստներին, էսեռներին, բեգուններին, մասոններին պատկանելը, մեծ փողեր էին առաջարկում, միայն թե հեռանար մայրաքաղաքից, փորձում էին նմանվել նրան կամ խորհուրդ էին աղերսում,- նրանց համար չպիտի ապրեր, այլ այդ տղայի, որից կախված էր կայսրության ապագան: Երբեմն

կարեւոր մարդիկ էին գալիս նրա մոտ ու պնդում՝ պետք է մեկնես ու հեռվից՝ քո տնից բուժես երեխային, բայց այդ կարեւոր մարդիկ իրենք էլ չէին հասկանում՝ ինչ են խոսում: Չգիտեին, չէին կարողանում ոչինչ, միայն խոսում էին, խորհուրդներ տալիս: Եվ ինչպե՞ս էին սիրում բոլորը խորհուրդներ տալ. Ռուսաստան չէր, ինչ-որ խորհուրդների երկիր էր: Տղայի հիվանդությանը մի քանի տարի էր մնացել. եթե ողջ մնա, եթե հիմա չմեռնի, հիվանդությունը կմեղմվի, եւ նա կկարողանա ամուսնանալ, երեխաներ ունենալ, որոնք չեն ժառանգի հեմոֆիլիան: Միայն պետք է համբերել, հատել այդ նեղ անցումը, դիմանալ այդ տարաժամ պատերազմին, որ նա ատում էր իր գեղջկական հոգով, բայց չկարողացավ հետ պահել թագավորին, որովհետեւ անհրաժեշտ պահին կողքին չէր: Չնայած, եթե կողքին էլ լիներ, հազիվ թե կարողանար որեւէ բան փոխել: Գեներալները պատերազմ, փառք, պարգեւներ, հաղթահանդեսներ էին ուզում. չէին կարողանում մոռանալ դեղնադեմներից կրած պարտությունը ու ծարավի էին վրեժի, մինիստրները երկրի առաջնություն էին պահանջում եվրոպական տերությունների շարքում, ժուռնալիստները սուր հոդվածներ էին ցանկանում, տիկնայք՝ բարեգործական համերգներ ու զինվորական զգեստներ, ու ոչ մեկը չէր մտածում ինչ գին է վճարվելու: Գեղջուկը շատ է, ու եթե սպանվեն էլ, ոչինչ՝ կնանիք նորերը կծնեն: Քամում էին մարդկանց, ինչպես ցորենը՝ անհատակ հորերից, իսկ նա զգում էր, որ հատակն արդեն մոտ է, որ վերջին են հասել ու պետք է կանգ առնել:

Այն ժամանակ Տյումենի հիվանդանոցից նամակ ուղարկեց թագավորին. «...մի թող, որ խելագարները հաղթեն ու կործանեն իրենց ու ժողովրդին»: Բայց հայրիկը չլսեց: Թույլ տվեց: Հայրիկը, ինչ էլ որ ասեն, հաճախ չէր լսում նրան: Տարօրինակ մարդ էր՝ փակ, զուսպ, շատ ավելի ոչ ռուս, քան նրա այլազգի կինը: Երբեք խորհուրդ չէր հարցնում նրանից ու միայն մի անգամ հետեւեց ասածին, տասներեք թվին, երբ հույները Աֆոնից վտարել էին ռուս վանականներին: Որպես հանցագործների, որպես տաժանապարտների՝ նրանց ռազմական նավերով հասցրել էին Ռուսաստան ու ցրել տարբեր մենաստաններով՝ զրկելով հաղորդությունից: Նա այդ ամենի մասին իմացավ իր համագյուղացուց, որի հետ ժամանակին ուխտ էր գնացել սուրբ վայրեր, եւ այդպես էլ չէին բաժանվի, եթե նա չմնար Աֆոնում: Հայրենակիցն աբեղա դարձավ, իսկ ինքը ոչ մի վանքում չէր կարողանում մնալ, չէր կարող փակի տակ նստել ու ապաշխարել, չէր կարող, չէր ուզում, բայց երբ միաբաններին փորձանք պատահեց, գնաց հայրիկի մոտ եւ ամեն ինչ պատմեց: Եվ այդ ժամանակ հայրիկը գլխավոր վերատեսու-

չին հրամայեց ներել հերձվածի մեջ մեղադրվողներին եւ ամեն ինչ լուծել սիրով:

Եվ այնքան զուսպ, այնքան ազնվաբարո, որ վերատեսուչը, եթե նույնիսկ ցանկանար, չէր համարձակվի մերժել: Եվ Սինոդն էլ, որքան էլ քահանայապետերը զայրանային ու չարախոսեին, ամեն ինչ կուլ տվեց: Այդպես էր. հայրիկին իր բացակայությամբ հայհոյում էին, չէին համաձայնում նրա հետ, բայց երբ հայտնվում էր, բոլորը սկսվում էին: Իսկ մայրիկի դեպքում հակառակն էր. օժտված էր թշնամիներ բազմացնելու, բարեկամներին թշնամի դարձնելու դժբախտ շնորհով, եւ նա հասկանում էր թագուհուն: Հասկանում էր այդ ծվատված նյարդերով, կրքոտ ու վեհանձն կանացի խառնվածքը եւ սփոփում էր, եւ մեղմում, տեսնում էր որքան ծանր է նրա համար՝ հե՞շտ է կնության գնալ հեռավոր, սրընթաց գետից այն կողմ ընկած չար գյուղը, որտեղ քեզ չեն սիրում: Եվ հպարտ բնույթով մայրիկն էլ ոչինչ չէր անում դուր գալու համար: Հակառակը՝ բոլորին իր դեմ էր լարում: Գժտվել էր սկեսրոջ, հարսների, տալերի, փեսաների հետ: Ուրիշ էր նրա հարազատ քույր Ելիզավետան. իրեն պահել գիտեր, կարողանում էր հմայել, մտերմացնել պետքական մարդկանց: Ելիզավետան թաքուն դուր էր գալիս նրան, ու դառն էր մտածել, որ այդպես տրամադրված է իր դեմ: Ընդհանրապես իր հարգած մարդկանցից շատերն էին նրան դեմ, ու սիրտը ցավում էր, որ ցարի հավատարիմները չեն կարողանում լեզու գտնել իրար հետ ու շան պես հաչում են իրար վրա:

Երբ նախորդ սեպտեմբերին պաշտոնաթող արեցին գլխավոր վերատեսուչ Սամարինին, ամբողջ Պետերբուրգը, ամբողջ Մոսկվան համոզված էին, որ ինքն է հայրիկի ականջին փսփսացել. «Հանի՛, կորցրո՛ւ Սամարինին, ինձ թշնամի է»: Բայց իրո՞ք այդպես էր: Հայրիկը Սամարինին հեռացրեց, որովհետեւ վերատեսուչը բանակը գլխավորելու հայրիկի կամքին հակառակ էր խոսել: Իսկ ինքը Սամարինի մասին ոչ մի վատ բառ չէր ասել, հակառակը, փորձում խաղաղությամբ լուծել վեճը, խոնարհաբար հանդիպում էր խնդրում, եւ ի պատասխան ի՞նչ: Արհամարհական, աղայական՝ ո՞վ ես դու, որ ես՝ գլխավոր վերատեսուչս, հնագույն ազնվականական տոհմի մոսկվացիս, հանդիպեմ քեզ՝ կեղտոտ խլիստի հետ: Տեսնել չեմ ուզում: Անձնական ի՞նչ վատություն էր արել Սամարինին: Լա՛վ, ասենք, հրաժարվեց, որովհետեւ պիտի ձեւ աներ յուրայինների առաջ, իսկ եթե որեւէ սովորական, սկանդալային փառքի պոչը հետեւից չքաշող գեղջուկ փորձեր խոսել Սամարինի հետ, մի՞թե կընդուներ: Չէր ընդունի, չէ՞: Գեղացու բեղի բանը չի: Պարոնանե՛ր են բոլորը, սովորել են գեղջուկին շե-

մից ներս չթողնել, դնչին հասցնել՝ ու կորի՛ էստեղից, անտաշ անասո՛ւն, չհամարձակվես խռովել կապույտ արյունը: Իսկ այդ արյունն ամբողջովին նեխած է, ավելի հիվանդ, քան տարաբախտ արքայազնի արյունը: Եվ գիտե՞ն դրանք, որ իրենց մեղքերի համար է հատուցում նա: Վերցնենք, թեկուզ, թագուհու նույն այդ քրոջը՝ Ելիզավետա Ֆյոդորովնային. ո՞վ էր նրա ամուսինը: Իսկ թագավորի քրոջ՝ իշխանուհի Օլգա Ալեքսանդրովնայի՞ ամուսինը: Իսկ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւի՞չն ով էր: Իսկ Ֆելիքս Յուսուպո՞վը, որ արդեն քանի տարի պտտվում է իր շուրջը: Իսկ Եկեղեցո՛ւմ ինչքան կան այդպիսիք: Ճգնավորություն անողների մեջ: Նրա մոտ նույնիսկ ահա քահանայապետեր էին գալիս՝ իրենց սաների հետ: Գյուղում այդպեսի մեղքի մասին անգամ լսած չկար, իսկ այստեղ, ուր թքում ես, սոդոմականի է կպնում: Երբեմն ապշեցնում էր, թե ինչքան այլանդակություն կա Պետերբուրգում, եւ որքան դեպի վեր, այնքան ավելի. կնանման տղամարդիկ, այրակերպ կանայք, մղվում էին դեպի մայրաքաղաք՝ այն վերածելով նոր Սոդոմ-Գոմորի: Սակայն բավական է փորձեր խոսել դրա մասին, մայրիկը, որ սովորաբար լսում էր նրան, մեծամիտ, անմատչելի տեսք էր ընդունում, եւ նա հետ էր քաշվում ու այլեւս չէր վերադառնում այդ խոսակցությանը: Բայց ինչպե՞ս էին ապրելու, եթե դրանց տոհմերի քառորդը սոդոմականներ են:

Նաեւ ուզում էր թե հայրիկին, թե մայրիկին ասել, որ չի կարելի այդպես վարվել ժողովրդի հետ, չի կարելի, որ հացը թանկ լինի ու հացի հերթեր ձգվեն, չի կարելի կատարել չարագործ Դումայի կամքը, չի կարելի չխղճալ մարդկանց: Բայց ո՞վ էր լսողը: Նրանից կամ վախենում էին, կամ քծնում, իրար գլխի էին թափվում նրա տանը, եւ անձնական գործերն էին դասավորում, իսկ ընդհանուրի մասին ոչ ոք չէր մտածում: Պատերազմը պետք էր արագ ավարտել, բայց դա հնարավոր էր միայն մի ավարտով՝ հաղթանակով: Ոչ մի դեպքում չի կարելի հաշտվել գերմանացիների հետ: Հաշտվել՝ նշանակում էր կորցնել Ռուսաստանը: Ու երբ նրան ճարպիկ մարդուկներ էին մոտենում, որոնք ահռելի փողեր էին սարքել պատերազմի վրա, երբ ակնարկում էին, որ ինքը կարող է օգտակար լինել նրանց ու փայ մտնել, վռնդում էր, թեկուզ եւ հասկանում էր, որ նրանցից են տարածվելու ամենազզվելի, նողկալի, վտանգավոր լուրերն ու բամբասանքները: Ոչ այն մասին, որ խմում է, կռիվներ սարքում քաղաքամերձ պանդոկներում ու մոլորեցնում կանանց,- դրան բոլորն արդեն սովորել էին ու չէին զարմանում,- ոչ՝ որ խլիստ էր, դատարկ բա՛ն է, եւ նույնիսկ նրա ու թագուհու մասին նողկանքին կարելի էր դիմանալ եւ ուշադրություն չդարձնել, ո՛չ, այդ մութ մար-

դուկները, իր շուրջը պարուրվող եւ երկիրը պատած դումայական, բանկիրային, շտաբային, լրագրողական այդ ամբողջ սրիկայախումբը ավելի սարսափելի լուր էր տարածում՝ դավաճանությո՛ւն:

Պատերազմի ժամանակ ինչը կարող է ավելի սարսափելի լինել, քան ամենավերեւներում առկա դավաճանության լուրը: Ինչը ավելի հաստատ կկործանի բանակն ու նրանից կխլի մոտալուտ հաղթանակը, այդքան տառապանքով եւ արյունով կերտված հաղթանակը: Ռուսաստանն ատողները շոշափել էին ամենաթույլ տեղը. պարզ ու բարեհոգի էր ռուս մարդը, եւ ի լրումն՝ վերջին ժամանակներս դյուրահավատ էր դարձել, թմրել հինգ թվից հետո վրան թափված ազատությունից, եւ ահա սողաց արդեն ողջ երկրով՝ սեպարատ հաշտությո՛ւն, գերմանամետ կուսակցությո՛ւն պալատում, գերմանացի թագուհին ու ինքը՝ գերմանական լրտեսնե՛ր: Եվ ռուս մարդիկ՝ հոգնած, տառապած, չհասկանալով, թե ինչո՞ւ է այդպես ծանր տեւում պատերազմը, չկարողանալով իրենց բացատրել՝ ինչո՞ւ են այդքան շատ սպանվածներն ու վիրավորները ռազմաճակատում եւ այդքան չարությունն ու անարդարությունը՝ թիկունքում, հավատացին, իրենց մեջ պահեցին այդ ստոր միտքը, կառչեցին նրանից, ամուր բռնեցին, թույլ տվեցին արմատ գցի իրենց ներսում, պարուրի իրենց, եւ իրենք էլ չհասկացան ինչպես դարձան նրա ստրուկը: Եվ ահա արդեն դավաճանության գայլային միտքը պտտվում է խրամատներում, հոսպիտալներում, թիկունքում, ռազմագերիների ճամբարներում, մայրաքաղաքներում ու գյուղաքաղաքներում, գյուղերում ու ստանիցաներում, չորացնում էր հոգիները, տապալում ուժեղներին ու փակում ազնիվների բերանը, ճզմում խիզախներին ու բարձրացնում ստորներին, փառաբանում վախկոտներին, իմաստազրկում զոհաբերությունները եւ մարդուց մարդուն փոխանցվելով՝ հրահրում՝ ավարտե՛լ պատերազմը, շո՛ւտ ավարտել, պայմանավորվել գերմանացու հետ, հանձնվել նրան, հանձնել զենքը, հողը, հացը, ինչ հնարավոր է, հանձնել, ինչին կարելի է, դավաճանել, ուրանալ ամեն ինչ ու գնալ ցանկացած տականքի, սրիկայի, խարդախի ետեւից, միայն թե ասի՝ վե՛րջ պատերազմին: Վերջ այսո՛ր իսկ: Եվ կգտնվի այդ հուդան, կհոչակի այդ անիծյալ խաղաղությունը, կտիրի անկամ երկրին, կխաբի նրան ու մուրացկան կդարձնի:

Ա՜խ, պետք չէր սկսել այդ պատերազմը, բայց ավելի սարսափելի կլինի առանց հաղթանակի ավարտելը: Այդ դեպքում ամեն ինչ փուլ կգա, այդ դեպքում վերջ ամեն ինչին, եւ այլեւս Ռուսաստան չի լինի: Եվ այդ ժամանակ մեղավորը կլինի այդ գզգզված, փնթի գեղջուկը՝ տյումենյան մեծու-

ղու հեռավոր գյուղից, մեկը միլիոնավոր ռուս գեղջուկներից, փորձառու ուխտավոր, աղոթարար ու կռվազան, ոտնագնաց քրիստոնյա, որ սեր ու հաշտություն էր քարոզում, մեղավոր կլինի, որովհետեւ նրա՝ անմեղի միջով կանցնի գայթակղությունը, նրան կանխամտածված իրենց գործիքը կդարձնեն, եւ նա ոչինչ չի կարողանա առարկել: Նա պատրաստ էր ծանակվելու, հաշտվել էր իր խայտառակության հետ եւ փառք ու արդարացում չէր փնտրում, նա մահապարտ էր դարձել այդ մթին, հեղձուկ քաղաքը մտնելուն պես, բայց դեռ հավատում էր՝ չի կործանվի իր հայրենիքը, ուժեղ է, ամուր, կանգ կառնի, կդիմանա, խելքի կգա:

Պատուհանից այն կողմ խտանում էր աղջամուղջը, ավելի հստակ էին լսվում Վիտեբսկի կայարանում կանգնած գնացքների շչակները, դռան ետեւից հասնում էր երկրպագուհիների, խնդրարկուհիների, խնդրարկուների ձայների խուլ աղմուկը, Ակիլինան ինչ-որ կտրուկ բան էր ասում նրանց, եւ այնքան սովորական էր այդ ամենը: Մի բաժակ էլ գինի խմեց ու մտածեց անձնական գործերի մասին՝ որդու, որին այնպիսի դժվարությամբ փրկեց պատերազմից, դուստրերի, հետո պեպենոտ դեմքով փխրուն աղջնակի, որը, հույս ուներ, վայելուչ վարվելակերպ կսովորեցնի դուստրերին, նրա ծիծաղելի տնօրինուհու մասին, որ եկել էր իրեն կշտամբելու եւ իր աշակերտուհուն պաշտպանելու ու հարձակվում էր թեւը կոտրած, անհեթեթ, նիհար թռչունի պես, եւ իր համար ոչինչ չարժեր այնպես անել, որ հաջորդ օրն իսկ այդ հպարտ կինը սողեսող գար այս բնակարան եւ նվաստացած՝ Ակլիլինայից աղերսեր իր կեղտոտ սպիտակեղենը: Նրա նմանների՞ն էր կոտրել, նրա նմանե՞րն էին սպասել իր ողորմածությանը, բայց ինչո՞ւ եւս մեկը: Առանց այն էլ աղջիկներից բան դուրս չեկավ, երեւի գյուղական արյունն ուժեղ էր քաղաքայինից: Ուժեղ էր նրա պատանությունից սկսած, բայց, մեկ է, ուժերը չէին հերիքում, լրիվ մաշվել էին:

Տնեցիների մասին մտքերի հետ ծանրացավ թախիծը, որից ազատվելու միայն մի հնար գիտեր՝ ռեստորան, լույսեր, երաժշտություն ու կատաղի պարեր մինչեւ առավոտ, շմոլքի աստիճան, մոռացության, կատարյալ ուժասպառության: Վերցրեց խոսափողը, նրան շատ էր դուր գալիս այդ սարքը, որի օգնությամբ կարող էր խոսել անհրաժեշտ մարդու հետ, ու ավտո կանչեց: Վարորդով ավտոն նրան էր տրամադրել ներքին գործերի նոր մինիստրը՝ մի պարարտ, վարդագույն այտերով դիլետանտ, որը շուտով խաղալիք դարձավ պահնորդական բաժանմունքի պրոֆեսիոնալ խուզարկուների ձեռքին: Հիմա նրանցից էր կախված իր ճակատագիրը. քանի դեռ պահպանում են, կապրի, հրաժարվեն՝ կգտնվի մեկը, որ կսպանի նրան:

Ո՛չ Իսիդորկայի ուղարկած դաշույնով խելապակասը, ո՛չ Յալթայի խելագար գեներալ-նահանգապետը՝ անուղղելի սեւհարյուրյակայիններից, որոնք ժամանակին պատվում էին իրեն, իսկ հիմա, կարճատեսության ու նախանձի պատճառով, ատում էին, ո՛չ տնաբույս ինչ-որ ավազակ, այլ սառնասիրտ անդրծովյան մարդասպանը, որ չի վրիպի ու գնդակը կմեխի ճակատին: Ծատ շատերն էին նրա մահն ուզում, չափից դուրս էր բարձրացել, իսկ արքայազնը, տերությունը, Ռուսաստանը չէր հետաքրքրում ոչ մեկին:

Եվ նույնիսկ թագավորը, որին այնքան սիրում էին, նույնիսկ թագավորը իր ընտանիքին ավելի էր կապված, քան երկրին: Դա հասկանալի էր, բայց սխալ էր: Դրա մասին չէր կարող ասել թագավորին, նույնիսկ ակնարկել չէր կարող, որովհետեւ գիտեր, զգում էր իր սահմանները, կարող էր միայն աղոթել ու հավատալ, որ ինչ-որ ձեւով դուրս կպրծնի, կփրկվի, եւ իր հետ կփրկվի Ռուսաստանը, կանցնի ծուղակների միջով, կկատարվի ռուսական հրաշքը, ինչպես բազում անգամներ է կատարվել, եւ կհաղթահարվի ամեն ինչ, կավարտվի անհաջողությունների չար շերտը, ուշքի կգան ռուս մարդիկ, կքշեն դեւին, Ռուսաստանն աղոթքով կազատեն նրա արդարները: Բայց երեւում է Աստված այլ էր մտածում, ու ժամանակը կրճատվում էր, ահարկու մոտենում էր սարսափելին, եւ նրան՝ ոչ իր կամքով այդ իրադարձությունների ամենակենտրոնում հայտնվածին, մնում էր միայն խմել ու պարել, թեկուզ եւ ոտքերին կապ էր գցած, պարել ու խմել, քանի դեռ նրա պատվերով հնչում էր երաժշտությունը, քանի դեռ նրան շրջապատում ու քծնանքով աչքերին էին նայում աստիճանավոր ու խնդրարկու մարդուկները, մինչեւ կգար ու փողոցի քաղցած աղջկա պես նրան կգրկեր իր ամենահավատարիմ ու քնքուշ ընկերուհին՝ մահը: Ա՛խ, ինչ արագ էր հեռանում, չքանում ժամանակը, ասես գիշատիչ մեկը ավելի ու ավելի անհագ խժռում էր այն ու չէր կարողանում հագենալ...

5

Իսկ աքսորյալ Յուլյային ժամանակն անվերջ, անիմաստ, ավելորդ էր թվում, ինչպես մանուկ օրերին: Կարծես մի ամբողջ ամիս էր անցել, բայց ընդամենը մի շաբաթ էր: Մեն-մենակ երկար դեգերում էր մեծ քաղաքում, եւ նրա հանդեպ զգացումները սկսեցին փոխվել: Հանկարծ հասկացավ, որ մինչ այդ չի ճանաչել Պետերբուրգը,- քաղաքի նոր անվանը այդպես էլ չէր հարմարվում,- քանի որ իր կյանքը սահմանափակվել էր տան ու գիմնա-

զիայի մոտակա մի քանի փողոցներով ու հրապարակներով, իսկ դրանց սահմաններից դուրս փռված հսկա տարածությունը, անհայտ էր նրան, եւ հիմա Ուլյայի ոտքով չափում էին բոլոր առափնյակներն ու կղզիները: Անհագ հետաքրքրությամբ նայում էր մարդկանց դեմքերին, եւ այդ ժամերին մի նոր զգացում էր արթնանում սրտում: Նրան դուր էր գալիս հետեւել երեխաներին ու ծերերին, ներս էր նայում օտար տների պատուհաններից, ուզում էր ամեն ինչ իմանալ, հասկանալ ու փորձել: Ո՞վ է բարձրակրունկ կոշիկներով այս կինը, որ արագ անցնում է Միլիոննայա փողոցով, ինչի՞ մասին են խոսում այս երկու պարոնները Իտալական փողոցում եւ ինչո՞ւ է լալիս այս աղջիկն Անգլիական առափնյակում: Վլադիմիրի տաճարի դիմաց նստող ծերուկն ընտանիք ունի՞, որտեղի՞ց եւ ինչո՞ւ են Նեւսկի պողոտա հասել տագնապած աչքերով այս երկու գեղջուկ կանայք: Այլեւս չէր ուզում փախչել մարդկանցից. նրանք հետաքրքիր էին դարձել աղջկա համար: Ուլյան ասես փնտրելիս լիներ ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին եւ աղոտ կռահում էր, որ այդ քաղաքում մի տեղ ապրող մորն է փնտրում: Անպայման պետք էր գտնել նրան, բայց մայրը չկար, ավելի ճիշտ՝ նայում էր աղջկա ետեւից, բայց իրեն ցույց չէր տալիս, հենց աղջիկը շրջվում էր, հասցնում էր թաքնվել, փոխարենը՝ մի անգամ Վիտեբսկի կայարանի մոտ հավաքված զինվորների խմբում մի ուրիշ ծանոթ դեմք տեսավ:

- Ալյո՞շա, դո՞ւ ես:

Նախօրդ օրը ցրտել էր ու ձյուն էր եկել, որը հիմա, նույնքան կտրուկ տաքանալուց հետո, թափվում էր տանիքներից ու հոսում մայթերով:

- Ալյո՛շա:

Նրանց էին նայում հրացանավոր մարդիկ, կոպիտ բառեր էին հասնում Ուլյային, բայց նա ոչինչ չէր լսում, չէր հասկանում, միայն տեսնում էր անփոփոխ կապույտ աչքերն ու աղջկական երկար թարթիչները:

- Ինչո՞ւ չէիր գրում:

- Ձեռքս վիրավոր էր: Մատներս էին վնասվել: Երկար բուժվում էի,- տղան կցկտուր էր խոսում, չուզելով, բայց Ուլյան չէր նկատում նրա շփոթմունքը:

- Կեցցես դու, Ալյո՛շենկա,- Ուլյան ագահաբար ներս էր քաշում ծխախոտի հոտը եւ ուզում էր ավելի ուժեղ սեղմվել, գրկել նրան, հարցուփորձ անել ամեն ինչի մասին: Իր բոլոր վիրավորանքները, բոլոր չարախոսությունները այդ պահին այնքան հիմար ու աղոտ էին թվում, որքան Շելոմի ավազին արված պատկերները:

- Ես ամբողջ ժամանակ քո մասին էի մտածում, աղոթում էի քեզ համար, սպասում:

Երբեք չէր մտածել նրա մասին, չէր սպասել ու չէր աղոթել, մոռացել էր տղային, բայց այդ բառերն ասելիս բոլորովին չէր ստում, քանի որ միայն այդ պահին էր հասկացել, որ մոռացումը սուտ էր, թվացյալ, իրականում մտածել էր, պարզապես չգիտեր, որ մտածում է, աղոթել էր՝ չիմանալով, ու սպասել էր նրան:

- Էլի ռազմաճակա՞տ, Ալյո՛շա:

Տղան միանգամից չպատասխանեց, փախցրեց հայացքը, արհամարհական թքեց:

- Մեր փայը պրծանք: Թող աղաները գնան:

- Ալյո՛շա,- ապշեց աղջիկը,- չի կարելի այդպես, հայրս կամավոր գնաց, անհետ կորել է...

- Գիտենք էդ անհետը: Գերության մեջ ապահով նստել է, քանի ուրիշները խրամատներում ոջիլ են կերակրում:

- Ալյո՛շա, ինչպե՞ս կարող ես...

- Քարոզ կարդալո՞ւ ես եկել:

Տղայի՝ ժամանակին հնազանդ ու մտերիմ կապույտ աչքերը սառն էին, խայթող ու կույր եւ ասես Ուլյայից վրեժ էին լուծում ինչ-որ մեկի համար:

- Ալյո՛շա, մենք քեզ ի՞նչ վատություն ենք արել:

- Շուտ գնայիր էստեղից, օրիո՛րդ,- մռլտաց տղան՝ շուրջը նայելով:- Մեկ էլ տեսար նեղացրին:

Թիկունքում հռհռացին, եւ Ուլյան սկսեց հասկանալ խոսքերը, որ զինվորները նետում էին իր ետեւից: Անքան անտանելի կոպիտ էր այդ ամենը, այնքան նվաստացուցիչ, վիրավորական ու չար, որ Ուլյան արագացրեց քայլը, հետո վազեց՝ կուլ տալով արցունքներն ու չտեսնելով ճանապարհը:

«Սա չի՛ եղել, ոչի՛նչ չի եղել,- կրկնում էր նա:- Ես ոչ մեկին չեմ հանդիպել, շփոթել եմ, ինձ պարզապես թվացել է: Քի՞չ իրար նման դեմքեր կան: Զինվորն էլ էր շփոթել: Դա Ալյոշան չէր, ուրիշ մարդ էր: Լրիվ ուրիշ: Նրա նմանակը...»:

Այդպես երկար, շատ երկար քայլեց՝ պտտվելով նրբանցքներով, կամուրջներով անցնելով ջրանցքները, չհասկանալով որտեղ է եւ ուր է գնում, ինչ-որ մարդիկ հրում էին նրան, զայրանում, օրորում գլուխները՝ հարբածի տեղ դնելով, ինչպես մի անգամ արդեն եղել էր, եւ կանգ առավ միայն Ամառային այգու ցանկապատի մոտ՝ համարյա թե խփվելով մի տիկնոջ, որին թեւանցուկ էր արել մի բարձրահասակ նիհավարուն մարդ:

Ուլյան տիկնոջն անմիջապես ճանաչեց: Նույնքան շքեղ էր հագնված, որքան այն ժամանակ, երբ եկել էր Գորոխովո, բայց հիմա նաեւ մի գեղեցիկ անձրեւանոց էր բռնել: Գոռոզ դեմքը փորձում էր թաքցնել շփոթվածությունը, իսկ պայուսակը, որից, ըստ երեւույթին, այդպես էլ չէր հանել այն ծանր առարկան, օրորվում էր քայլի տակտով: Տղամարդն այդ գեղեցկուհու կողքին այնպիսի տեսք ուներ, ասես հենց նոր էր փախել զորանոցից, թե բանտից կամ հոգեբուժական հիվանդանոցից, իսկ ավելի շուտ՝ տարուբերվում էր այդ երեք պետական հաստատությունների միջեւ: Նա էլ Ուլյային ծանոթ թվաց, բայց թե երբ ու որտեղ էր տեսել, այդպես էլ չհիշեց: Այդ տարօրինակ զույգի ետեւից ընթանում էր կառքը, ու կառապանը փողոցով մեկ հայհոյում էր զուտ կառապանային բառերով, որոնցից միակ տպագրելին «Փողը տուր» բառակապակցությունն էր:

- Տո՛ւր, ո՞ւմ եմ ասում,- գոռում էր կառապանը, ու թվում էր՝ էլի մի վայրկյան, ու մտրակը կիջնի նիհար պարոնի մեջքին:

Կառապանի դեմքն աննկարագրելի զայրույթ էր արտահայտում, կնոջ դեմքը՝ տառապանք եւ սարսափ, իսկ պարոնի դեմքին նույնքան աննկարագրելի ցնծություն կար: Տիկինը ժամանակ առ ժամանակ փորձում էր փող հանել, բայց պարոնը թույլ չէր տալիս:

- Սպասի՛ր, սպասի՛ր... Թող շարունակի: Բայց ինչ թույլի՛կ ես հայհոյում, Վա՛նկա,- ասաց նա՝ գրպանից մանրադրամ հանելով:- Սրանից ավել այսօր չես վաստակել: Ու հերիք է աչքերդ չռես տիկնոջ վրա: Ոչինչ էլ չի տալու: Գնացի՛ր:

Կառապանի աչքերը կլորացան, արյունը գլուխը տվեց, բայց տարօրինակ պարոնն արդեն մոռացել էր նրան: Տիկինն արագ-արագ ինչ-որ բան էր ասում, սկզբում՝ ցածրաձայն, հետո ձայնը բարձրացավ, դարձավ ճչիչ, համարյա ծղրտոց, եւ նա սկսեց պոկվել ուղեկցից: Տղամարդը բաց չէր թողնում: Ուլյային թվաց նրա ուժեղ ձեռքերը փաթաթվել են կնոջ վզին ու խեղդում են: Ակնթարթային տեսիլք էր, բայց Ուլյան սարսափեց: Իսկ ավելի սարսափելին այն էր, որ Այյոշայի պես՝ անձանոթի ձեռքի երկու մատները չկային: Ուլյան սառավ ու քարացավ: Եվ հակառակի պես փողոցն էլ քարացած ու սառած էր: Ոչ թաքնվելու տեղ կար, ոչ փախչելու. բոլոր շքադռները, դռները, պատուհանները, խլափեղկերն ու հարկերը փակ էին, ինչպես փոթորկի կամ կողոպուտի սպասելիս: Միայն պետերբուրգյան շոգ արեւն էր շիկացնում սալաքարերն ու տապակած ձողաձկան հոտը խփեց քթին: Ուլյան ուշացումով, դժվարությամբ մտածեց, որ ապրիլի խոնավ առավոտյան ոչ մի կերպ չէր կարող հուլիսյան ամայացնող տապ լինել,

բայց անմիջապես էլ մոռացավ դրա մասին: Կողքով մեծ արագությամբ սուրաց ու չքացավ ծանոթ մոխրագույն ավտոմոբիլը, որով գնացել էր Ռոդէի ռեստորան: Հիմա վարորդի կողքին բազմել էր փլված քթով մի կին, եւ մի քանի սեւ առնետ ցիրուցան փախան անիվների տակից: Ուլյային թվաց՝ խելքը թռցրել է ու սովոր կյանքից տեղափոխվել ուրիշ չափում:

Վերջապես կինը ազատեց ձեռքն ու փախավ կամրջի կողմը: Վազքով անցավ մեծ, դեղին, տանիքին աշտարակներ կրող տան պատին ծեփված աղջկա կողքով: Պայուսակը ցավոտ խփվեց Ուլյային, եւ նրան կրկին ապշեցրեց կնոջ ազդեցիկ, խիստ գեղեցկությունն ու աներկրային ամոթխածությունը:

- Սպասե՛ք:

Ուզում էր վազել կնոջ ետեւից, կանգնեցնել նրան, բայց մի ծանր ձեռք իջավ ուսին ու ցավոտ սեղմեց:

- Մի վախեցիր: Ոչինչ չի պատահի: Նրանցից չի, որ նետվում են Նեւան:

Անծանոթը մոտիկից ավելի սարսափելի էր. մազակալած, հիվանդոտ այտեր, խոշոր, ասես ջնջված քիթ, երկայնակի խոր կնճիռներ, խորդուբորդ ատամնաշարով բերան, խոր ընկած, ասես երբեք ժպիտ չիմացած աչքեր ու խոզանակի պես կոշտ մուգ մազեր:

- Դուք ո՞վ եք:

- Ընկերներս ինձ վայրի մուստանգ են ասում: Արվեստագետ եմ, եւ քաղցն ու ալկոհոլը իմ երկու մուսաներն են: բայց ավելի լավ է քո մասին խոսենք. դու պատահմամբ չես այստեղ հայտնվել, չէ՞:

- Ես...

- Դու մա՞րդ ես, թե՞ մանեկեն:

- Ի՞նչ:

- Տիկնիկ, նրանցից, որ ցուցադրում են Նեւսկիի ցուցափեղկերում: Ցերեկը ցուցափեղկում են կանգնում, իսկ գիշերները վախեցնում են փոքրիկ աղջիկներին: Օրիորդներից շատերն են նախանձում նրանց, նույնիսկ՝ շոգին մրսողները: Նրանք շատ հագուստ ունեն եւ ամեն անգամ՝ նորը: Նրանց նայում են հազարավոր մարդիկ: Նախանձով ու տենչանքով: Բարակ մարմին ունեն, գանգուր մազեր, խաբուսիկ բարի կապույտ աչքեր ու քմահաճ շուրթեր: Բոլոր կանայք կուզեին նրանց տեղը լինել: Իսկ ոմանք նաեւ հայտնվում են այդ տեղում:

- Ի՞նչ եք ուզում ինձնից:

- Նրանք ծախում են իրենց հոգին ու դառնում տիկնիկներ: Սկզբում դուր է գալիս այդպես կանգնելը, բայց հետո սկսում են անտանելի մարմաջ

զգալ: Դրանից դեմքերը դառնում են չար ու անհրապույր, իսկ գործակատարները գիշերները ցավոտ ծաղկում են նրանց: Եվ այդ ժամանակ նրանք պայմանավորվում են տիրոջ հետ ու նորից քայլել սովորում, փախչում են խանութներից եւ ապրում մեր մեջ: Իրենց փոխարինող են փնտրում եւ այնպես հմուտ են ձեւանում, որ միայն քչերն են կարողանում ճանաչել: Բայց հետո այդ խաղից հոգնում ու սխալներ են թույլ տալիս: Այ դու էլ ես սխալվել: Այլեւս ձեւանալու կարիք չունես: Բացահայտված ես: Վերադարձիր քո խանութը, կանգնիր ապակու ետեւում ու չհամարձակվես հեռանալ:

- Դուք խելագար եք:

- Կամ էլ, չէ, սպասի՛ր: Դու խանութից չես, դու...

- Թողե՛ք ինձ:

- Ես քեզ չեմ պահում,- ասաց մարդը, բայց երբ Ուլյան մի քանի վախվորած քայլ արեց, հասավ ետեւից:- Դու ինձ խելագար ես կոչում, իսկ ինքդ համարյա թռչում էիր, զառ խաղացող աղջի՛կ:

Ուլյան կտրուկ դարձավ նրա կողմը:

- Ձեզ ո՞վ է...

- Դու չկարողացար կտրվել գետնից, որովհետեւ անընդհատ ներքեւ էիր նայում ու վախենում: Երբեք չե՞ս մտածել տեղափոխվել այնտեղ, ուր սրանից հրաշք աշխարհ կա: Չէ՞ որ զգում ես նրա ձայնը, որսում ես, հոտոտում, շոշափում, լսում ես արծաթե զանգակների ձայնը, բայց կախում ես գլուխդ հիմար, ճարպակալած սագի նման: Ես գիտեմ, քեզ այդպես են ծեփել: Բայց ինչո՞ւ չես ուզում ավելի ուժեղ հրվել ու նայել վեր:

Տղամարդը ցածր կրծքային ձայնով էր խոսում, եւ Ուլյային թվաց՝ անընդհատ ականջ է դնում ինչ-որ բանի:

- Այդ դուք եք բացահայտված,- սառնասրտորեն առարկեց աղջիկը:- Ես հիշեցի ձեզ: Ճա՛տ վաղուց էր: Կոլոմյաժյան ձիարշավարանում ուզում էիք թռչել աերոպլանի պես, բայց չկարողացաք: Բոլորը ծիծաղում էին ձեզ վրա:

- Հետո՞ ինչ,- զայրացավ տղամարդը:- Հիմարները միշտ էլ ծիծաղում են խելոքների վրա: Իսկ դու իմ շնորհիվ հասկացար, որ ավելի հետաքրքիր բաներ կան, քան գետնի երեսին քայլելը, թեեւ դա էլ քեզ չփրկեց վատ դաստիարակությունից ու կասկածելի ծանոթություններից: Մնաս բարով, հիմար ընտանի թռչո՛ւն, ու չհամարձակվես ինձ փնտրել:

- Սպասե՛ք, մի՛ գնացեք, խնդրո՛ւմ եմ,- աղաչեց Ուլյան:- Չէ՞ որ ես այն ժամանակ խղճացի ձեզ:

- Շատ պետքս է ձեր խղճահարությունը,- մռլտաց մարդը:

- Բայց ձերն ինձ պետք է:

- Գիտե՞ս քեզ նման քանիսը կա: Այս բոլոր տներում սպասում են ինձ,- նա ձեռքի լայն շարժումով ցույց տվեց փողոցը, որը հանկարծ կենդանացավ՝ բացվեցին պատուհաններն ու խլափեղկերը, խանութների ցուցափեղկերը, անցորդներ հայտնվեցին, անբան թրեւոողներ, կառապաններ, վանականներ, գիմնազիստներ, յունկերներ, ուսանողներ:- Եթե ոչ նրանք, ապա նրանց երեխաներն ու թոռները կխոնարհվեն իմ առաջ: Ի՞նչ գործ ունեմ քմահաճ աղջնակի հետ, որն ինքն էլ չգիտի ինչ է ուզում:

Բազմադեմ ժողովուրդը հարցական նայում էր նրանց, եւ Ուլյան վախենալով, որ այդ բոլոր մարդիկ կգողանան, կյուրացնեն, մաս-մաս կտանեն իր սարսափելի զրուցակցին, բռնեց նրա նիհար, ուժեղ ձեռքը.

- Սպասե՛ք: Ես շատ վատ եմ զգում: Երբեք այսպես վատ չեմ զգացել: Առաջ երազում էի որեւէ տեղ փախչել, բայց հիմա տեսնում եմ, որ փախչելու տեղ չունեմ: Ամենուր նույնն է: Ես հոգնել եմ ու շատ եմ լացում: Չեմ հասկանում ինչո՞ւ պատանեկությունս համընկավ այս անիծյալ ժամանակին, ինչո՞ւ հայրս գնաց կռիվ եւ արդեն մի քանի ամիս նրանից ոչ մի լուր չկա: Խորթ մայրս ինչ-որ բան գիտի, բայց թաքցնում է: Բոլոր ընկերուհիներս լքել են ինձ՝ եւ՛ հները, եւ՛ նորերը: Մարդը, ում վստահում էի, սառել է իմ հանդեպ, նրա դուստրերն արհամարհում են ինձ: Տղան, որին սիրում էի, դաժան վիրավորեց: Ամենուր փնտրում ու չեմ կարողանում գտնել մորս: Երբեմն թվում է՝ ինչ-որ ուժեր պայմանավորվել են թունավորել կյանքս: Ասենք, ինքս էլ չեմ ուզում այսպես ապրել:

- Ուրեմն մի ապրիր,- կռվարար ասաց տղամարդը:- Ի՞նչ է, կարծում ես հուզեցի՞ր ինձ: Ինքդ ես մեղավոր:

- Ինչո՞վ:

- Դու կորցրիր այն ամենը, որ տրված էր քեզ,- անողոք ասաց տղամարդը:- Եթե քո շնորհից, քո հրաշքից թեկուզ մի փշուր հասած լիներ մեկ ուրիշին, մի՞թե այդպես կտնօրիներ:

- Ես ոչինչ չեմ կորցրել: Դա ճիշտ չէ,- ճչաց Ուլյան:- Ինձ ուզում էին սպանել: Ինձ վրա կրակեցին:

- Կրակե՞լ են: Քեզ վրա,- զրուցակիցը հետաքրքրությամբ նայեց աղջկան:

- Այո՛: Ու հրաշքով ողջ մնացի:

- Ո՞վ է կրակել քեզ վրա: Միայն չհամարձակվես հորինել: Մեկ է, կիմանամ:

- Մի որսորդ:
- Ինչո՞ւ:
- Չգիտեմ:
- Վատ հորինվածք է:
- Դուք ինձ չեք հավատում,- տխուր ասաց Ուլյան:- Ինչո՞ւ չեք հավատում:
- Իսկ ինչու պիտի հավատամ:
- Ահա, նայե՛ք:
- Սա ի՞նչ է:
- Գնդակը, որ հանել են իմ կրծքից:
- Տո՛ւր,- ագահ ասաց մարդը:- Ի՛նչ տարօրինակ է: Երբեք չէի մտածի, որ այսպիսի տեսք ունի: Արյունո՞տ էր:
- Այո՛:
- Երեւի շատ էր ցավում, հա՞:
- Հանելիս,- քիթը ֆսֆսացրեց Ուլյան:
- Իհարկե, հանելիս ավելի ցավոտ է, քան կրակելիս,- մարդը հանկարծ լրջացավ եւ նույնիսկ մռայլվեց, բայց հետո քրքջաց:- Իսկ ահա այն կարմիր քթով պարոնը զգեստափոխ ճապոնական կայսրն է: Բռնե՛ք դրան, բռնե՛ք: Ո՛ւռ՛ռ՛ւ:
- Սպին ցույց տա՞մ,- արցունքները մի կերպ զսպելով՝ զնգուն ձայնով հարցրեց Ուլյան:
- Կրծքի՞դ: Լավ միտք է, բայց դեռ մի քիչ ջահել ես, աղջի՛կ: Կուրծքդ պիտի մեծանա մինչեւ ինձ ցույց տալը:
- Ի՛նչ սրիկան եք,- Ուլյան ուզում էր խփել, բայց ուժ չուներ, եւ արցունքներն այտերին քսմսելով՝ դատարկված փողոցով քայլեց դեպի կամուրջը:

«Ջուրը կընկնեմ,- հանգիստ մտածում էր նա:- Այ հիմա կհասնեմ կամրջին ու կնետվեմ ցած: Եվ ամեն ինչ կվերջանա: Եվ այլեւս ոչինչ չի լինի, որովհետեւ ինձնից ոչինչ դուրս չեկավ: Եվ արդեն չի ստացվի: Այլանդակի մեկն եմ: Վերջնակա՛ն»:

Նա կանգնել էր Տրոիցկի կամրջի մեջտեղն ու նայում էր ջրին: Ափն այնքան հեռու էր, որ եթե նետվեր ցած, արդեն դուրս չէր լողա: «Մի անգամ քիչ էր մնում խեղդվեի: Ափսոս, որ չխեղդվեցի, որովհետեւ այդ օրվանից իմ կյանքում ոչ մի լավ բան չի եղել եւ արդեն չի լինի»:

Կանաչ ջուրը հոսում էր հեռուն ու սարսափելի չէր, եւ այնքան շատ էր, որ հմայեց ու սկսեց կանչել Յուլյային: Այդպիսի ջրի մեջ նրան ոչ ոք ու եր-

բեք չի գտնի, անհետ կլուծվի՝ չթողնելով, որ կատարեն հուղարկավորման տխուր ծեսը:

- Սպասիր,- մարդը հասավ նրա ետեւից ու բռնեց ձեռքը:- Ես, ճիշտ է, նավաստի եմ եղել, բայց վատ եմ լողում ու չեմ կարողանա քեզ հանել ջրից: Մարմինդ, մեկ է, կգտնեն, քեզ մի խաբիր: Բայց արագ չեն գտնի, ու սարսափելի տեսք կունենաս: Հիշում ես, չէ՞: Ջուրը քո տարերքը չի: Գնա՛նք:

Ուլյան մեքենայաբար ձեռքը նրան տվեց, ու քայլեցին դեպի պետրոգրադյան կողմը: Կամուրջն անվերջ էր թվում, եւ ուղիղ գլխներին կախված արեւը մոխրացնում էր երկու մարդկային կերպարանքները, որ այդ տապին նորից մենակ էին փողոցում:

- Խեղճ երեխա: Զզվելի բաներ ասացի, հա՞: Այդպես էր պետք: Պիտի համոզվեի, որ մերոնցից ես, ու սխալ չկա: Եթե իմանայի՛ր նրանք ինչպես են կարողանում քողարկվել, եւ մեզնից քանիսն են սխալվել ու կործանվել իզուր տեղը: Այո՛, դու անկասկած մերոնցից ես եւ ինչ-որ թյուրիմացության պատճառով ես հայտնվել այստեղ,- խուլ, անարտահայտիչ, բայց եւ ճռճռան խրատական ձայնով խոսում էր անծանոթը:- Դավադրությունը, որի մասին ասում էիր, իսկապես գոյություն ունի. դա մանեկենների ու սեւ առնետների դավադրությունն է օդային մարդկանց դեմ: Նրանք առաջին անգամ հարձակվում են մանուկ օրերին, իսկ երբեմն եւ ավելի վաղ, մոր արգանդում: Հետո նորից գալիս են երեխա ժամանակ: Եվ ողջ կյանքում հետապնդում են մեզ, քսի են տալիս ամբոխին, իսկ հետո ուսումնասիրում ու մեր մասին հերյուրանքներ են տարածում: Նրանք մեզ որսում են, ինչպես թիթեռների, պատրաստուկներ սարքում եւ ամբողջ հավաքածուներ կազմում: Մեզ ատում են, երբ թռչում ենք կամ լարագնաց ենք հրապարակում, ու երազում են, որ ընկնենք: Նրանք մեր խայտառակությունն են ուզում, իսկ ամենաչարերն ու նախանձները կրակում են մեզ վրա, որովհետեւ ուզում են մեզ նման լինել ու չեն կարողանում: Բայց իմացիր՝ ինչ էլ որ լինի քո կյանքում, ինչպես էլ քեզ վիրավորեն ու ստիպեն տառապել, պետք է հիշես՝ կա մի աշխարհ, որ սպասում է քեզ, եւ այդ աշխարհը սքանչելի է: Այդ աշխարհը կոճապղպեղ, մեխակ ու թեյ է բուրում, նրա տղամարդիկ վեհանձն ու խիզախ են, իսկ կանայք ասես երեխաներ լինեն՝ ձեռքով կարմրախայտ են բռնում զուլալ ջրերում ու լսում՝ ինչպես են զնգում քարերը: Ես քեզ այդ աշխարհից մի բան կնվիրեմ ի տրիտուր քո գնդակի:

Իսկ մնացյալը, որ կատարվեց դրանից հետո, ավելի ու ավելի էր երազ հիշեցնում Ուլյանային: Կամենոոստրովսկի պողոտայի ոսկերչական խանութ: Բարապան: Խանութում ոչ ոք չկա, բացի բարձրահասակ, բարալիկ,

հարթ սանրած մազերով մի օրիորդից ու տիրոջից՝ մի ուռած պարոնից, հանձին որի Ուլյան հանկարծ ճանաչեց Գորոխովոյի բնակարանի այցելուին, որն իր փողերը տվեց հենց նոր փախած կնոջը: Այդ համընկնումը բնավ չզարմացրեց նրան: Գիտեր, որ հենց այդպես էլ պիտի լիներ, եւ պատրաստվել էր ոչնչից չզարմանալ, ասես ընկել էր ժամացույցի նման մի զարմանալի մեխանիզմի մեջ, որտեղ մի անվակը կառչում է մյուսից, բայց ժամացույցը կենդանի էր, նրա մեջ, ձեռքերով, ոտքերով, ձայներով իրար բռնած՝ պտտվում էին մարդիկ:

Բոլորը շրջվեցին մտնողների կողմը, խանութպանը կծկվեց, ասես սպասում էր, որ հիմա կողոպուտ է լինելու, բայց Ուլյային առաջնորդողը, ոչ մեկին ուշադրություն չդարձնելով, աղջկան քաշեց թանկարժեք քարերի ցուցափեղկի մոտ:

- Քեզ երկնքի հետ կապված քար է հարկավոր: Ադամանդը հարմար չի, զմրուխտն այն չի, ագատը՝ ոչ, սուտակը լրիվ այլ է, տպազիոնը՝ ոչ, սաթը՝ առավել եւս,- քրթմնջում էր նա:- Այդ ամենը այնտեղից չէ: Մեզ պետք է... Հապա տվեք այն աստղակերպ շափյուղան:

Ուլյան համոզված էր, որ հիմա իրենց խայտառակ կերպով դուրս կշպրտեն, բայց վաճառասեղանի ետեւը կանգնած բարձրահասակ օրիորդը հլու-հնազանդ սկսեց հանել մուգ կապույտ քարերը:

- Այն չի, այն չի... Սա ընդհանրապես կեղծ է: Ինձ Քաշմիրից բերած քար է պետք: Այ սա ի՞նչ արժի:

Օրիորդը պատասխանում էր, բայց անձանոթն անփույթ առարկեց.

- Չէ՛, էժան է: Սա էլ բավականաչափ թանկ չի: Ի՞նչ է, թանկարժեք քարեր չունե՞ք: Եթե չունեք, հենց հիմա կգնանք Բիկովի խանութ:

Ինչ-որ տեղից, կողքից հայտնվեց գործակատարն ու նրանց համար թեյ ու մի քանի կտոր շաքար բերեց: Ուլյան ձեռք չտվեց հյուրասիրությանը, իսկ ուղեկիցը խմում էր անշտապ, կծովի, հետո, հագենալով, բաժակը գյուղավարի կողքի դրեց, բայց, միեւնույն ժամանակ, մեծամիտ ու անփույթ էր նայում, ասես թանկարժեք քարեր գնելը նրա համար սովորական բան էր: Եվ այդ ամբողջը տարօրինակ աճուրդ էր հիշեցնում, բայց՝ հակառակ: Խանութի ողջ կազմն արդեն շարվել էր նրանց առաջ, սակայն բոլորից ավելի ջանում էր խանութի տերը, ու քրտինքի կաթիլներ էին դուրս տվել ոչ միայն դեմքին, այլեւ նույնիսկ հագուստի վրա:

Վերջապես բերեցին այն քարը, որը բավարարեց գնորդին:

- Շատ թանկ քար է,- հարգալից ասաց խանութպանը:- Պահել էի մի

տիկնոջ համար...,- նա իջեցրեց ձանը, բայց վայրի մուստանգն ընդհատեց ու դարձավ Ուլյային.

- Քեզ դո՞ւր է գալիս:

Աղջիկը անորոշ գլխով արեց. միայն թե արագ հեռանան այդտեղից ու չտեսնեն մարդկանց, որոնք Աստված գիտի ինչեր են մտածում իրենց մասին, չնայած թափանցիկ, ծանր, ներսում խորհրդավոր ճառագայթներ պահող քարը ոչ թե պարզապես դուր էր եկել նրան, այլ մտածեց, որ կմեռնի, եթե իրեն չպատկանի:

- Ի՞նչ արժի այս խաղալիքը:

Խանութպանը թիվ ասաց, որից Ուլյան ցնցվեց, իսկ ուղեկիցը գոհունակ գլխով արեց, ինչից հետո կատարվեց ավելի աներեւակայելին: Վայրի մուստանգը սեւեռուն նայեց ուռած պարոնի աչքերին, շրթունքներն ինչ-որ բան շշնջացին, եւ գնորդից փողը վերցնելու փոխարեն խանութպանը բացեց դրամարկղը, հանեց թղթադրամները, իր հաշված գումարի մանրն ու ժպտալով աղջկան տվեց նրբագեղ փոքրիկ տուփը.

- Կրկին համեցեք, անուշի՛կ օրիորդ:

Ուլյան ամեն ինչ տեսնում էր: Վախեցավ եւ ուզում էր ասել, որ իրեն պետք չէ այդ խաբեությունը, բայց ասես լեզուն կապ էր ընկել: Խանութում գտնվողներն էլ լուռ էին ու ոչինչ չէին հասկանում, հետո ժպտացին եւ հարգալիր ու անվերջ խունարիվելով՝ ճանապարհեցին նրանց, միայն վաճառող կինն էր գունատվել վաճառասեղանի ետեւում, եւ հարթ սանրած մազերը գզգզվել ու մգացել էին:

Դրսում տապից բան չէր մնացել: Սուլում էր քամին: Ծակող ձյունը լապտերասյունից լապտերասյուն էր նետվում: Տուփը վառում էր ձեռքերը, եւ Ուլյան իրեն հանցագործ էր զգում ու սպասում ոստիկանի սուլիչին: Բայց ոչինչ չէր կատարվում քաղաքում, որտեղ մարդիկ սովորել էին ուշադրություն չդարձնել իրար, եւ ոչ մեկին հետաքրքիր չէր անճոռնի, խորդուբորդ ատամնաշարով պարոնի հետ թեւանցուկ քայլող գորշաչյա նիհար աղջնակը: Երկու աննշմար պարոններ կանգնել էին անկյունում եւ այնքան ջանադիր էին նայում հակառակ կողմը, որ Ուլյան կենտրոնացավ ու հանձին մեկի ճանաչեց Գորոխովոյի գործակալին:

- Ես չեմ կարող վերցնել քարը: Ես գողացած իր չեմ կրի: Վերադարձրեք այնտեղ, որտեղից վերցրիք,- կամացուկ ասաց նա եւ արագ ավելացրեց:- Ձեզ հետեւում են:

- Ինձ միշտ են հետեւում: Ու շափյուղան էլ գողացված չէ: Ստացվել է այն գալիքից, որ պատկանում է ինձ, բայց որը չեմ տեսնում: Եթե ուզում

ես, կարող ես դեն նետել, միայն թե մտքովդ չանցնի վաճառել որեւէ մեկին կամ տալ որեւէ ծառայության դիմաց:

Ասաց ու այնքան արագ անհետացավ, ասես քամին քշեց, եւ երկու գործակալները զարմացած պտտում էին գլուխներն ու նայում Ուլյային՝ հարցնելով՝ ի՞նչ արեցիր նրան: Եվ եթե չլիներ շղթայիկը, որից առաջ գնդակն էր կախված, իսկ հիմա՝ կուրծքը սառեցնող ծանր շափյուղան, կարելի էր մտածել, որ այդ տարօրինակ մարդուն Ուլյան երազում է տեսել: Բայց շափյուղան իրական էր՝ որպես անդրաշխարհի արտացոլք, որի մասին ասում էր թանկարժեք իրերի խելագար կողոպտիչը, եւ Ուլյան սկսեց այն կրել արճճի փոխարեն:

6

Մարդը, որին Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովը Սավելի Կրուդ էր անվանում, իր կյանքում այնքան անուն ու ազգանուն էր փոխել, որ մի օր էլ դադարեց հիշել, թե դրանցից որն էր իսկականը: Պաշտում էր անուններ հորինելը, եւ դրանք մեղեդային ու զնգուն էին ստացվում, ինչ ես այն ծլնգացող հազարավոր զանգակները, որոնց մասին պատմում էր անհնազանդ Ուլյա աղջնակին՝ նրան կշտամբելով թռիչքի թեւեր չունենալու համար: Նա երբեք չէր մտածել, որ երկար կապրի: Նրա կյանքը այնքան հաճախ էր կախված եղել ոչ թե պարզապես մազից, այլ ընդհանրապես անհասկանալի է՝ ինչից, որ ամեն նոր օրը որպես անսպասելի ու չվաստակած Աստծո պարգեւ էր զգում, չնայած հարաբերություններն Աստծո հետ ջենտլմենական էին: Արարիչն իր կյանքն ուներ, Կրուդը՝ իր, եւ Բարձրյալին մանր խնդրանքներով անհանգստացնելը, որոնք ծանձրալի քրիստոնյաները աղոթք են կոչում, նա անվայել գործ էր համարում: Ավելի քիչ կարող էր հավատալ, որ Արարչի համար կարեւոր են մարդկանց հիմար ծեսերը, ասենք՝ պահքերը, խոստովանություններն ու պատարագները, որոնցով ուրայան մանկության օրերին փոքրիկ Կրուդի գլուխը լցնում էին Աստծուն չհավատացող ու ստիպողաբար եկեղեցի գնացող անթռիչք մարդիկ:

Սավելին մեկ բարեհոգի էր նայում աշխարհին, մեկ չարացած, եւ այդ հայացքները նույնքան աննկատ ու արագ էին փոխարինում իրար, որքան նրա երկու կերպարները՝ լուսավոր ու սեւ: Շատ գեղեցիկ չէր, բայց հանդգնորեն գրավիչ ու սրտառուչ էր, հնաոճ, վեհանձն, հարգալիր, գեղեցիկ վարվելաձեւերով,- այդպես էր իրեն ի հայտ բերում Ավգուստ արքայի ժա-

ռանգի երակներում հոսող լեհական արյունը,- եւ ամենատարբեր տարիքի ու ազգի կանայք հաճույքով սիրահարվում, բայց եւ շուտով փախչում էին նրանից: Բայց, տարօրինակ է, նա այդտեղ էլ չէր ստում Ուլյային՝ նրանցից ոչ մեկը չէր զղջում այդ սիրո համար:

Կրուդը ընկերություն էր անում իր պես տարօրինակ, անկայուն մարդկանց հետ, շատ ու սարսափելի խմում էր՝ չիմանալով ինչի վրա ծախսի ուժերը, եւ վատնող էր, եւ ագահորեն փող էր սիրում, հրատարակիչների հոգին հանում էր պարզապես, բայց եւ կարող էր ողջ հոնորարը տալ փողոցային երաժշտին, որեւէ մուրացկանի կամ հարուստ խանութների ցուցափեղկերին նայող երեխայի:

Նրա պատմվածքները,- Կրուդն ուրիշ ոչինչ չէր գրում,- սարսափեցնում էին, այնքան սուր ու խոր էր թափանցում մարդկային ենթագիտակցության գաղտնիքների մեջ, ասես նրա համար ոչ մի արգելք գոյություն չուներ, եւ եթե միջնադարի իտալացիները համարում էին, որ Դանտեն եղել է դժոխքում, ապա Կրուդի մասին կարելի էր ասել, որ նա ճամփորդել է մարդու խորքը, անցել նրա մտքի ու սրտի բոլոր ոլորաններով: Մարդուց բացի ուրիշ ոչինչ չէր հետաքրքրում նրան: Կարող էր իմիջիայլոց հմտորեն նկարագրել բնությունը, նավը, պալատը կամ որեւէ իր, բայց այդ ամենը ավելին չէր, քան հայելի, որի մեջ արտացոլվում էին նրա հերոսների դեմքերն ու բարքերը:

Թեեւ պետք է ասել, որ գրական աշխարհում փոքրիշատե արժեք ունեցողներից ոչ մեկը կարեւորություն չէր տալիս Կրուդին, եւ պատկառելի հանդեսները նրա ստեղծագործությունները չէին տպում:

«Հա՛, նա է, որ Սահարայում խփել էր ֆրանսիացի օդաչուին ու յուրացրել նրա ձեռագրերը»:

Որտեղի՞ց էր հայտնվել Սահարան, ինչո՞ւ ֆրանսիացի օդաչու, ոչ թե, ասենք, անգլիացի նավապետ, ոչ ոք չգիտեր, բայց Սավելին պատվում էր բամբասանքերով, ինչպես իր սիրած առագաստանավերի հատակները՝ շերտ-շերտ խխունջներով, իսկ ինքը բարի, աննախանձ բաժակակիցների շնորհիվ անմիջապես տեղեկանում էր ամեն ինչի մասին: Սակայն նրանց դժգոհությունը հարուցելով՝ թքած ուներ այդ ամենի վրա:

«Ես տասներորդ շարքի առաջին գրողն եմ,- ինքն իրեն ասում էր Կրուդը,- իսկ նրանք՝ տասներորդը առաջին շարքում»:

Կրուդի շրջապատում ուրիշ գրողներ չկային. միակ կենվորն էր: Եթե որեւէ քննադատ փորձում էր գովել Կրուդին, այսպիսի բառերով սկսվող նամակ էր ուղարկում նրան. «Ողորմած պարո՛ն, դուք ապուշ եք ու ոչինչ

չեք հասկացել իմ պատմվածքից»: Երբ քննադատում էին, խուլիգաններ էր վարձում ու ջարդում էին նեղացնողի ապակիները կամ աղտեղություններով գիշերանոթը շրջում գլխին: Կամաց-կամաց նրան պարզապես սկսեցին չնկատել, բայց ինքը ուշադրություն չէր դարձնում դրան: «Իմ ընթերցողներն ապագայում են»,- ասում էր մեծամտորեն, իսկ ներկայում բացառություն էր անում միայն ճմռթված դեմքով ու այլաշխարհային միամտությամբ մի գաճաճի համար: Ըստ երեւույթին հենց այդ միամտությունն ու այլաշխարհությունն էլ գրավել էին Կրուդին, եւ նրանք երբեմն միասին խմում ու այնպես էին անկեղծանում, որ հետո երկար ժամանակ չէին կարողանում ուշքի գալ ու հաջորդ հանդիպմանն անհարմար էին զգում, ինչը կրկին խեղդում էին խմիչքի մեջ:

- Պարզապես բոլորը ձեզ անսահման նախանձում են, Կրո՛ւդ,- ասում էր կորացած մարդուկը:- Մերեժկովսկին, Գիպպիուսը, Բելին, Իվանովը, Բրյուսովը, այդ բոլոր կենդանի հանգուցյալները, իրենց իմաստուն երեւակայող այդ բոլոր գրական բուժակները հասկանում են, որ դուք կարողացել եք անել այն, ինչը իրենք միայն կարող են տեսաբանել: Ռուս գրականության մեջ դուք միակն եք, որ կարողանում եք բառերով արտահայտել գույնն ու երաժշտությունը: Նրանք դեռ մոտենում են դրան, հեծում են, ուղիներն են շոշափում, իրենց փնթի գործերն անվանում սիմֆոնիա, խանդավառ գիմնազիստուհիների պես վազում Սկրյաբինի ետեւից, իսկ դուք արդեն ամեն ինչ արել եք, ու ամեն ինչ ստացվել է: Այդ ավազակները տերուտնօրեն են գրականության մեջ, վերեւից են նայում ձեզ, խոժոռվում ձեր անունը լսելիս, ոչ մեկին թույլ չեն տալիս լավը գրել ձեր մասին եւ լուրջ ամսագրերին արգելում են հրապարակել ձեր պատմվածքները:

- Ինձ երկու անգամ տպել են «Ռուսսկայա սիլայում»:

- Մինչեւ որ գլխի ընկան ում հետ գործ ունեն:

- Իսկ ես թքած ունեմ նրանց վրա,- կրկնում էր Սավելին իր սիրած արտահայտություն ու բնավ չէր ստում:

Կրուդը արհամարհում էր աշխարհը, որտեղ ապրում էր: Մարդիկ, սակավ բացառություններով, նրան բութ, ագահ, ինքնահավան արարածներ էին թվում, բայց աշխարհում ամենից շատ չէր սիրում նրանց ընկերակցությունները՝ սկսած ընտանիքից, որտեղից տասներեք տարեկանում նրան դուրս էր շպրտել խորթ մայրը, իսկ հայրը չէր պաշտպանել որդուն, պարզապես փող էր տվել: Երկու չերվոնեցը, որ ժուժկալ մեկին կես տարի կհերիքեր, պատանի Կրուդը մեկ ամսում կերավ Օդեսայի ռեստորաններում, եւ այդ օրվանից, մերթ կուշտ, մերթ սոված, իր վերաբերմունքը չէր փոխել

կյանքի օրենքների հանդեպ: Ընտանիքից ու գիմնազիայից հետո եկավ բանակի, բանտի եւ այլ հանրային ինստիտուտների հերթը... Պետություններ, կուսակցություններ, դատարաններ, կառավարություններ, պառլամենտներ, դպրոցներ, գրական հանդեսներ, աղանդներ, կրոնափիլիսոփայական հավաքույթներ ու բալետի պարախմբեր. Կրուդն ատում էր այդ ամենը: Թատրոններն առանձնակի զայրույթ էին հարուցում: Երբ կնոջ հորդորներին տեղի տալով՝ մի քանի ներկայացման գնաց, ոչ թե պարզապես ծանձրանում կամ քնում էր, այլ կատաղության մեջ էր ընկնում, այնպիսի բուռն արտահայտություններով, որ ծառայողները խուլիգանին հանում էին դահլիճից: Կրուգը վիրավորվում ու կոպտում էր, բայց հերիք է նրան սպառնային ոստիկանությամբ, որ անմիջապես հանդարտվեր. բանտի մասին հիշողությունները ողջ կյանքի համար էին:

Որքան չէր սիրում ամբոխը, նույնքան էլ սիրում էր մենակներին եւ ամենուր փնտրում էր նրանց: Դա ոչ միայն նրա ցանկությունն էր, այլեւ ի վերուստ տրված առաջադրանք: Նա համոզված էր, որ իր ողջ, առօրեականության տեսանկյունից անհեթեթ, անճարակ, մսխվող կյանքը կոչված է նրան, որ գտնի իր նմաններին ու տանի նրանց իր հրաշալի, շողշողուն աշխարհը, քանզի միայն ինքը գիտի անցման ժամանակը, տեղը, միջոցն ու պայմանները:

Դա նրան հաճախ չէր հաջողվում: Ավելի ճիշտ, դեռ ոչ մի անգամ չէր հաջողվել: Երիտասարդ տարիներին Կրուդը փորձել էր փրկել Էսեռուհի Ալյա Ռասպուտինային ու չէր կարողացել, եւ Ալյան վաղուց պառկած էր անանուն գերեզմանում՝ կախաղան բարձրացվելով մեծ իշխաններից մեկի դեմ կատարած մահափորձի համար: Չնայած չէր կարող բացատրել՝ անձամբ իրեն ի՞նչ վատություն էր արել այդ իշխանը եւ ինչո՞ւ էր պետք սպանել նրան: Ավելի լավ չէ՞ր իրեն սիրող մարդու հետ հեռանար նոսր մազերով ու փոս ընկած անգույն աչքերով ջղագարներով բնակեցված այդ խելագար երկրից:

Ալյային հետեւում էր ամենատարբեր մարդկանց երկար շարքը, հիմնականում աղջիկներ ու կանայք, բայց նրանցից ոչ մեկը պատրաստ չէր հետեւել Կրուդին, ոչ ոք չէր հավատում, որ նրա հայտնագործած աշխարհն իրական է: Նրանք այդ աշխարհը Կրուդի երեւակայության խաղն էին համարում, հիանում նրանով, հաճոյախոս բառեր ասում Սավելիին նրա արտակարգ գրական տաղանդի մասին, իսկ նա գազազում էր շողոքորթությունից եւ մանկան հավատ պահանջում իր հորինածի իրական լինելու հանդեպ. «Ես ոչինչ չեմ հորինում, ամեն ինչ այնպես է, ինչպես գրել եմ»:

Նրան բարեկիրթ ժպտում էին, իսկ ետեւից՝ մատները տանում քունքին: Նա գիտեր դրա մասին, որովհետեւ կարողանում էր ծոծրակով տեսնել, բայց ոչ մեկին իր այդ ունակության մասին չէր պատմում: Կրուդն ամենից շատ սիրում էր փորձեր դնել մարդկանց վրա: Երբ պետք էր լինում իմանալ, թե ինչպես է հայհոյում կառապանը, կառք էր վարձում եւ փողը չտալով ու կառապանին կատաղության հասցնելով՝ լսում նրա հայհոյանքների հեղեղը: Եթե պետք էր իմանալ ինչպես է իրեն պահում մարդը, որին անսպասելի սկսում են խեղդել, կեսգիշերին վեր էր կենում ու բռնում բաժակակիցներից մեկնումեկի կոկորդը: Նրա ազդեցության ուժն այնպիսին էր, որ երեսուն քայլ առջեւից գնացող անցորդին կարող էր ստիպել, որ հետ շրջվի: Ընկերները նրան ասում էին, որ հիպնոսով ավելի շատ կվաստակի, քան պատմվածքներով, բայց Կրուդը դա անվայել գործ էր համարում իր համար, որին դիմում էր միայն ամենածայրահեղ դեպքերում, որպես արտիստիզմի դրսեւորում:

Նրա մեջ հոգեւոր առաջնորդ, օրինագետ ուսուցիչ հիշեցնող ինչ-որ բան կար, բայց ի տարբերություն Իսիդոր Ճչետինկինի, ոչ մի աշակերտ չուներ եւ որեւէ մեկի վրա իշխանության չէր ձգտում: Քանի որ մարդկանց հետ հարաբերությունները չէին ստացվում, երկար ժամանակ ոչ համապատասխան տեղ էր գտնում, ոչ արժանավայել զբաղմունք: Սակայն պտտվելով հեղափոխականների ու գրողների շրջանում՝ Կրուդը մասամբ հարմարվեց մարդկային համակեցության կանոններին: Հասկացավ, որ մարդկանց կարելի է կառավարել, ու հյուսեց իր հայտնագործած աշխարհի լեգենդը՝ թղթին տալով աննշմար բույրերը, հեռավոր հնչյուններն ու մեղեդային գույները, եւ թե՛ այդ պատմվածքները պատահմամբ կարդացածները, թե՛ նրանք, որ իրենց նեղություն էին տալիս մի քանի անգամ կարդալ ու թափանցել դրանց մեջ, հանկարծ տարօրինակ զգացում էին ունենում: Անհասկանալի էր՝ գի՞րք են կարդում. թե՞ նկար նայում, ինչո՞ւ են տառերը տեսնում ու երաժշտությունը լսում այնքան իրական, ասես մեկը ջութակ է նվագում, ինչից լալիս է սառը սիրտը, ջերմանում, հալվում ու սովորում էր դիմանալ կյանքի դժվարություններին: Բայց նրա գործերն այդպես կարդալու ունակ մարդիկ քիչ էին, եւ միայն ընտրյալներն էին պատրաստ վճարել Կրուդի հեքիաթների համար: Համենայնդեպս, ժամանակի ընթացքում Կրուդը սովորեց քիչումիչ փող աշխատել, ու քանի որ փողն անհրաժեշտ էր, իսկ ուրիշ եղանակով վաստակելը ծանծրալի ու անվայել գործ էր թվում, եզրակացրեց, որ ստեղծագործելը չարիքի փոքրագույնն է:

Երբեք ամռանը չէր գրում, երբեք հարբած չէր գրում, չէր ընդունում ոչ

մեկի խորհուրդները, նույնիսկ կնոջ, չնայած պաշտում էր նրան եւ համարում իր պահապան հրեշտակը, որ նրան փրկել էր բանտից, ու մտերմիկ պահերին իսպանական ոճով նրան Կոնսուելա էր անվանում, այսինքն՝ սփոփող, բայց նույնիսկ կինը չէր հասկանում, չէր ընդունում նրան եւ օրինակ էր բերում լավ, հանդարտաբարո վիպասաններին:

- Սավվա՛, իրատես եղիր: Ընտանեկան վեպեր գրիր ռուսական կյանքից: Մեծ մարդկանց կենսագրություններ: Նրանք մեծ պահանջարկ ունեն, եւ այդ գործերով կմտնես մեծ գրականություն: Իսկ այն, ինչ գրում ես, ոչ մեկին պետք չէ, բացի քեզնից ու քեզ նման մի բուռ խենթերից:

Ռուսական ընտանեկան կյանքից Կրուդի սիրտը առանց այն էլ խառնում էր, ուր մնաց այդ շիլան քսմսեր թղթերին: Իսկ մեծ մարդիկ նրա համար ընդհանրապես գոյություն չունեին: Չճանաչված Կրուդն արհամարհում ու ինքնակոչ էր համարում այդ բոլոր ցարերին, կայսրերին, հերոսներին, զորավարներին, այս կյանքում փառաբանված պոետներին, գրողներին, նկարիչներին ու երաժիշտներին: Բայց կնոջը ներում էր, չնայած ոչ մի հարցում չէր լսում նրան: Կինը վիրավորվում էր, սպառնում, որ կհեռանա, աղաչում էր, որ հիվանդանոց պառկի, ինչի համար փող էր խնդրել գրական ֆոնդը տնօրինող Ժորժ Ծուլյակից, բայց Կրուդը նայեց նրան լկտի քմծիծաղով ու ցինիկաբար ասաց՝ եթե Կրուդի կանանցից յուրաքանչյուրին փող տան, գրական ֆոնդը կսնանկանա:

Կինը լաց էր լինում, բայց չէր լքում Կրուդին: Երբ ընդհանրապես փող չմնաց, հուսահատ ու ամոթն անտեսելով, մի ծեր կնոջ խորհրդով գնաց Գորոխովայա փողոց, բայց այնտեղ նրան տրված փողն էլ չօգնեց. Կրուդը փախավ դոկտոր Կրուպինինի՝ անանուն հարբեցողների մասնավոր հիվանդանոցից, իսկ բուժման համար բանկ դրված կապիտալը առեղծվածային կերպով հետ առավ՝ հիպնոսելով «Լիոնյան կրեդիտ» բանկի աշխատակիցներին, ու երեք օրում մսխեց «Կապեռնայում» ռեստորանում՝ կերուխում սարքելով Սեննայա հրապարակի ու հարակից դոստոեւսկիական փողոցների մուրացկանների ու մարմնավաճառների համար: Հյուրերին անվերջանալի էր թվում այդ տոնը՝ օսլայած սփռոցներով, թանկարժեք գինիներով, ուստրեներով ու խոզապուխտով, առաջնակարգ երաժիշտներով ու ջահել պոռնկուհիներից ընտրված պարահանդեսի թագուհով, որին բոլորը հավատարմության երդում էին տալիս, ինչից զուգված-զարդարված նավահանգստային աղջկա աչքերը լցվել էին արցունքներով ու երազանքներով, բայց երբ փողը վերջացավ, Կրուդին կիսամեռ անելու աստիճան ծեծեցին, ընդ որում թագուհին ամենաշատն էր ջանում՝ սուր կրունկ-

ներով տրորելով նրան, եւ այդ օրվանից Կրուդը շրջանցում էր Սեննայան:

Բայց դա էլ հաղթահարեց, ինչպես որ մնացած ամեն ինչը: Իրականությունը նրան քիչ էր հետաքրքրում. սովորել էր պաշտպանվել դրանից: Կրուդը կառուցել էր իր մտահայեցական ապաստարանը, սիրով ու մանրամասն կահավորել, եւ կարող էր քառասուն անգամ արտագրել նույն էջը, բայց՝ ոչինչ սալիերիական, միայն մոցարտյանն էր նրա տողերում: Ու չնայած տխմար հասարակությունը առաջվա պես նախընտրում էր այլ գրողների, ոչինչ՝ ո՛չ չքավորության սպառնալիքները, ո՛չ փառքի ծարավը, չէին կարող ստիպել, որ նա դավաճանի իրեն: Կրուդը երբեք կախում չէր ունեցել հանգամանքներից ու երբեք դրանցով չէր ապրել. նա ատում էր այդ հանգամանքները, ու նրանք նույն կերպ էին պատասխանում: Կյանքի հետ այդ վեճը հյուծում ու ոգեւորում էր նրան, բայց տարեցտարի իրեն ավելի ու ավելի հոգնած ու դատարկված էր զգում: Ալկոհոլը ներքին հավասարակշռության վերականգնման միջոց էր, որը Կրուդը վարպետորեն էր օգտագործում ու փորձեր էր դնում՝ տարբեր բաժնեչափերով խառնելով թունդ ըմպելիքներն ու ապշեցնելով նույնիսկ Սանկտ-Պետերբուրգի շատ բան տեսած հարբեցողներին: Մի անգամ խեղկատակ կոմս Տոլստոյի հետ գրազով ամերիկյան յորշ խմեցին՝ շամպայնի, գարեջրի, լիմոնադի, օղու, աղացած պղպեղի, քացախի ու վալերյանի հիսուն կաթիլի խառնուրդ: Տոլստոյը մեռածի պես տապալվեց եւ արթնացավ միայն հաջորդ օրը՝ գլխացավով ու զկռտոցով, որ մի շաբաթ չէր անցնում, իսկ Կրուդը հաղթահերոսի պես նստել էր նրա հուլացած մարմնի կողքին ու մեծ ոգեւորությամբ մատիտով գրում էր «Դժոխք կորուսյալ» պատմվածքը:

...Ուլյայից բաժանվելով՝ Սավելին գնաց նավահանգիստ: Նա միայն առագաստանավեր էր սիրում եւ այն քաղաքները, որոնց նավահանգիստներ թույլատրված էր միայն առագաստանավերի մուտքը, բայց այդպիսի քաղաքների բացակայության պատճառով գնում էր սովորական նավահանգիստ, որտեղ բարձվում կամ բեռնաթափվում էին ծանծրալի, գորշ նավեր, քարածխի կեղտոտ կույտեր էին թափված, պատահական ընկերուհիներին գրկած նավաստիներ էին շրջում, աշխատանքի սպասելով՝ թրեւ էին գալիս բեռնակիրներն ու դոկերները, բոլորը ճանաչում էին իրար, երբեմն կռիվներ էին սկսվում եւ արագ մարում, ու քթի տակ ինչ-որ բան քրթմնջացող, հնաոճ լայնեզր գլխարկով մարդը ընդգծված օտար էր թվում այնտեղ: «Փարոսնե՛րը,- մրմնջում էր նա:- Ամեն ինչի թշնամին փարոսներն են: Դրանք պետք են մարդկանց, բայց փարոսներին խփվելով՝ ջախջախվում են թռչունները: Եթե միանգամից բոլոր փարոսները մարեն,

նավերը կխփվեն ժայռերին ու կջախջախվեն, փոխարենը՝ թռչունները ողջ կմնան: Մարդիկ ու թռչունները թշնամի են իրար, եւ նրանց հաշտեցնելն անհնար է: Բայց ո՞վ է ավելի կարեւոր»: Մարդիկ շրջվում, նայում էին նրան, հաչում էին շները, բայց Կրուդը ոչ մեկին ուշադրություն չէր դարձնում, հիշում էր իրեն հանդիպած աղջնակին, ու սիրտը թրթռում էր չծախսած հայրական քնքշությունից:

- Նա իմ ամենասքանչելի ստեղծագործությունը կլինի,- մի քանի ժամ անց ասում էր կնոջը, որ վաղուց լքել էր նրան, բայց ինքը այդպես էլ չէր կարողանում բաժանվել, եւ որտեղ էլ ապրեր, միշտ պատվավոր անկյունում սրբապատկերի փոխարեն կախում էր նրա նկարը:

Նրանք նստել էին «Վիեննայում», Մալայա Մորսկայայում: Կրուդը խանութից գնած շափյուղայի մանրով կոնյակ էր խմում թեյնիկից, իսկ կինը ցրված նայում էր անհեթեթ հաստլիկին, որ սրահի կենտրոնում կանգնած՝ գոռում էր. «Հե՛յ, դուք, դատարկ պիջակներ»: Հաստլիկը սկանդալ էր ուզում, բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում նրան: Ո՛չ Կուպրինը, ո՛չ Ավերչենկոն, ո՛չ Արցիբաշեւը, ո՛չ նույնիսկ Այոշա Տոլստոյը, որը սովորաբար ուշադրություն էր դարձնում բոլորին, իսկ եթե կողքով գեղեցիկ կին էր անցնում, չորեքթաթ կանգնում ու կծում էր նրա ոտքերը՝ փողոցի շուն պատկերելով: Բոլորը շարունակում էին հաճույքով ուտել ու խմել, իսկ մի քիչ այն կողմ քեֆ էր անում «Բիրժեւիե վեդոմոստների» ու «Ժուռնալ դյա վսեխի» խմբագրությունը: Կրուդը հեռակա ծանոթ էր բոլորին, բայց այդ մարդկանց հետ հարաբերությունների բարդ աստիճանակարգը հոգնեցնում էր նրան: Այդ մարդիկ այնպես էին հավատում այդ աստիճանակարգմանը, այնպես էին տարված իրենցով եւ այս աշխարհում իրենց դերով, այնպես էին շտապում խաղալ այդ դերը, որ նույնիսկ երկրաշարժը կամ ցունամին չէին կարող շեղել նրանց:

Երկրաշարժի պատկերն անսպասելիորեն գրավեց Կրուդին, պատկերացրեց Նեւսկի պողոտայի հսկայական ճեղքերը, Ծովակալության շենքի փլված ճակատը, ջրանցքները թափված քարակույտերը, Ֆիննական ծոցից եկող ցունամին, ափերից ելած Նեւան ու փողոցներով դեսուդեն փախչող, խելագարված, ողբացող մարդկանց:

- Որերո՞րդ:

- Ի՞նչ,- ուշքի եկավ նա:

- Որերո՞րդ ստեղծագործությունը,- գրգռված հարցրեց կինը:- Ասում ու անմիջապես մոռանում ես ասածդ, որովհետեւ մտքերիդ հետ ես:

- Իսկ, քո կարծիքով, ո՞ւմ հետ պիտի լինեմ,- հարցակվեց տղամարդը:- Առաջի՛նը: Նա կլինի իմ առաջին ստեղծագործությունը:

- Ժամանակին նույնը իմ մասին էիր ասում: Այդպիսի քանի՞ առաջին ունես, եւ ինչի՞դ է պետք այդ երեխան: Աշխարհում քի՞չ հիմարներ կան, որ երազելով երազում են, որ իրենց խաբես:

- Նա դժբախտ է: Ու ես նրանից գողացա, գնեցի այդ դժբախտությունը, որ իմ երջանկությունը դարձնեմ: Ահա՛, տե՛ս:

- Սա ի՞նչ է:

- Արճճի կտորը, որ նրա կրծքից հանել են, երբ փորձել է ինքնասպան լինել «Լիոնյան կրեդիտի» տանիքին: Այս գնդակը միշտ կախված էր նրա վզից, եւ աղջիկը չէր հասկանում, որ թունավորում է իր կյանքը: Իսկ ես գիտեմ ինչպես վարվել այս փոքրիկ մահվան հետ:

Նա երեքմատնյա ձեռքով սիրաբար վեր նետեց խոզակաղին հիշեցնող արճճե գնդակը, որը կրկին այլանդակված ձեռքի մեջ իջնելուց առաջ, վայրի մուստանգի ծանր հայացքի տակ անշարժացած՝ մի քանի վայրկյան կախվեց օդում:

- Ես վիպակ կգրեմ ու կավարտեմ այս գնդակի շնորհիվ,- ինքնագոհ ասաց Կրուդը:

- Ոնց եմ ձանձրացրել քո երեւակայություններից ու աճպարարությունից,- քրթմնջաց կինը:

- Քո նախաբազկի մեջ չե՞ս կրում այն թուլակազմ հրածիգի պարգեւած կոտորակը ու թույլ չես տալիս հանեմ: Եթե թույլ տայիր, քո մասին էլ կգրեի:

- Չեմ ուզում գրես իմ մասին,- կտրեց կինը, եւ նուրբ գորշ աչքերը ակնթարթորեն խիստ ու չոր դարձան, իսկ ձայնը կոշտացավ:- Ես քեզ արգելում եմ գրել իմ մասին:

- Դա արդեն հաստատ քո ցանկությամբ չի, հոգյա՛կս: Իսկ ո՞ւր էիր այս ամբողջ ժամանակ: Ո՞ւմ ես հիմա ծառայում եւ ումի՞ց ես փող վերցնում կանացի կարիքներիդ համար:

- Դա քեզ չի վերաբերվում:

- Դու շատ ես փոխվել:

- Դա էլ քեզ չի վերաբերվում:

Ռեստորանում հեղձուկ էր, ծխախոտի ծուխ էր կանգնած, վաղուց կեսգիշերն անց էր, բայց ժողովուրդը չէր ցրվում: Սավելին շատ էր խմում, եւ հայացքն ավելի ու ավելի ծանր ու քմահաճ էր դառնում:

- Անիծիր ինձ, որքան կուզես, դավաճանիր ինձ, փոխվիր ինքդ, մեկ է,

կմնամ քո կյանքի ամենավառ իրադարձությունը, եւ միայն իմ շնորհիվ կճանաչեն քեզ:

- Ամենավառ իրադարձությունը քո հարբեցողությունն է մնալու, նույնքան անտանելի, որքան քո փուչ երազանքներն ու խեղկատակությունը,- ջղայն ասաց կինը:- Եվ ես չեմ ուզում, որ ինձ ճանաչեն:

- Դա էլ քո ցանկությամբ չի:

- Վերջ տուր խմելուն, թե չէ հենց հիմա կգնամ:

- Արդեն գնացել ես,- տխուր ասաց Կրուդը:- Գնացել ես եւ ինձ հետ չես լինի, երբ գա իմ փառքը, մի քիչ, ընդամենը մի քիչ չես համբերի, եւ ամեն ինչ բաժին կընկնի ուրիշին:

- Ես նրան չեմ նախանձում:

- Ստում ես: Իսկ սա՞ ինչ խրտվիլակ է:

Ալիքավոր մորուքով եւ ուղիղ մազաբաժանով սանրած երկար, շիկավուն մազերով միջահասակ մի մարդ հայտնվեց դռների մեջ: Մորեգույն տոնական մետաքսե վերնաշապիկ էր հագին, վրայից՝ մահուդե անթեւնոց, սեւ թավշյա շալվարով ու լաքած սապոգներով էր: Խելացի չար աչքերը ընդգծվում էին մազակալած գունատ դեմքին:

- ...սպուտին... ուտին...,- շրշյուն անցավ բազմության միջով:

Եվ անմիջապես չքվեց հարբած հաստլիկը՝ իր դատարկ պիջակներով, մարեցին ձայները ժուռնալիստների սեղանի շուրջը, ու դրանից հետո սկսվեց այն երկրաշարժը, որ երեւակայությամբ կանչել էր Սավելի Կրուդը: Անհերեւակայելի աղմուկ բարձրացավ, բոլորն իրար անցան, վեր թռան, խմբվեցին եւ ագահ հայացքները գամեցին ներս մտածի վրա: Իսկ նա անցնում էր սրահով՝ ազատ, ուժեղ, ոչնչից չվախեցող, եւ նրան լկտի նայողները կախում էին գլուխը: Այցելուն ոտից գլուխ զննեց բոլորին, հետո ճանաչեց ու գլխով արեց Սավելիի հետ նստած կնոջը:

Կրուդը որսաց այդ հայացքն, ու աչքերը կրակվեցին: Օդը էլեկտրականացավ:

- Որտեղի՞ց գիտես նրան,- կտրուկ հարցրեց նա:

- Քեզ թվացել է:

- Նորից ստում ես:

- Ես նրան չեմ ճանաչում, երդվում եմ:

- Ինչպե՞ս ես համարձակվում բարեւել օրինավոր կնոջը, անպատկա՛ռ,- վեր թռչելով՝ գոռաց Կրուդը:

Մորեգույն վերնաշապիկով մարդը կանգ առավ ու սառը հետաքրքրությամբ նայեց Կրուդին: Ոչինչ չէր խոսում, պարզապես նայում էր, եւ այդ

հեգնոտ հայացքից Կրուդի կրծքի տակ սկսեց ուռչել կատաղությունը: Տանել չէր կարողանում, երբ իր դիմաց հոգով ավելի ուժեղն էր հայտնվում:

- Վայ թե ուզում ես կռիվ անես հետս, անո՛ւշ մարդ: Թե՞ մինչեւ հիմա քիչ ես ստացել,- հաշտ ասաց գեղջուկը:- Թե՞ նորից բանտն ես կարոտել:

- Խլի՛ստ:

Հարվածն ավելի շուտ հասավ, քան Կրուդը կհասցներ գոռալ, ու կողքից տեսավ ինչպես տապալվեց իր նիհար մարմինը, զնգոցով թափվեց սպասքը, ինչ-որ մեկը ճչաց, մեկը հռհռաց: Խնամված գեղջուկի թիկունքից դուրս պրծած ցորնագույն բակենբարդներով հաղթանդամ, կարմրադեմ ջահելը զզվանքով նայում էր գետնին ընկած Սավելիին ու աչքաչափ անում, թե էլ որտեղին խփի: Մուստանգի հոգին, որ մի պահ կախվել էր ռեստորանի վրա ու վերեւից դիտում էր արմավենիներով ու գազանների խրտվիլակներով զարդարված սրահը, առջեւում արյունոտ մի բան տեսածի պես սարսափեց ու նորից ներս սողաց բորբոքված, կակղած կոկորդով:

- Գրո՛ղը տանի,- արյուն թքելով եւ Ուլյայի գնդակը պահած բռունցքը ճոճելով՝ գոռաց Կրուդը:- Սպասի՛ր, կստանաս քո բաժինը, արճճով կխեղդվես, արյունով կլվացվես:

Գեղջուկը պպզեց նրա դիմաց ու փաղաքուշ ասաց.

- Առանց քեզ էլ գիտեմ, աղավնյա՛կս: Բոլորս էլ մեր հերթին որեւէ բանով խեղդվելու ու լվացվելու ենք: Իսկ դու ավելի լավ է քիչ խմես ու խելքահան անես մարդկանց:

- Քո գործը չի, ծաղրածո՛ւ:

- Ի՞նչ ես անում, հարազա՛տս, ի՞նչ ես անում, Սա՛վվոչկա,- նախկին ամուսնու ձեռքը բռնելով՝ մրմնջաց նախկին կինը:- Գնա՛նք այստեղից, գնա՛նք: Ուշադրություն մի դարձրեք մեզ, պարոնա՛յք: Պետք չէ ոստիկանություն կանչել: Չե՞ք տեսնում, որ ուշքը տեղը չի, հիվանդ է, արվեստագետ է, ձեռնածու...

7

- Ի՞նչ, ի՞նչ:

- Խաղախարդախ, ճարպիկ մարդ՝ արագաշարժ եւ ուժեղ մատներով: Այդ կինը հենց այդպիսին էլ համարում էր ինձ: Յոթ տարի ապրեց ինձ հետ ու ոչինչ չհասկացավ: Պատկերացնո՞ւմ ես՝ ապրել մարդու հետ ու չհասկանալ նրան: Կամ էլ վախենում էր հասկանալ: Միշտ էլ ինձ քիչ է հավատացել: Ի՞նչ ես նայում: Հա՛, մատներս: Երբ քո հիմիկվա տարիքին էի, տնից

փախա Օդեսա, օրերով սոված էի մնում, փող հավաքում, եւ մի անգամ մի օդեսացի ճարպակալած հարուստ հարյուր ռուբլի առաջարկեց, որի դիմաց երկու մատս պիտի գծին դնեի ու սպասեի տրամվային: Այնքան սոված էի, որ չհասցրեց խոսքը ավարտել: Բայց սրիկան վախեցավ ու փախավ ու ոչինչ էլ չտվեց: Եվ այդպես՝ իմ ողջ կյանքում. կտոր-կտոր տալիս եմ մարմինս, ու բոլորը փախչում են: Քանի՜սը փախան: Իսկ այդ կինը առաջինն էր, որ իսկապես խղճաց ինձ, որովհետեւ իրեն էլ դաժան վիրավորել էր մի սրիկա: Բայց այդ խղճահարությունը հանգում էր զուտ ինձ շրջոնքելու փորձերին: Երկու տարի անցկացրի աքսորում, Օլոնեցկի նահանգում, եւ դա իմ կյանքի ամենասարսափելի ժամանակն էր: Բանտից էլ վատ: Կարճ սպիտակ օրեր, քամի, ձյուն, ցուրտ, փխրվող սառույց ու թախիծ, անտանելի՜ թախիծ: Իսկ նա,- դեմքը ծամածռվեց,- համոզված էր, որ հրաշալի ենք ապրում, նրան դուր էր գալիս բաղնիքը, սառնամանիքը, արեւը, դուր էր գալիս, որ գնում եմ որսի, սատանան տանի այդ որսը, ու նեղանում էր, երբ փախչում էի իրենից կամ պատահմամբ դավաճանում: Իսկ ինձ ի՞նչ էր մնում: Բայց քո դեպքում ամեն ինչ այլ կլինի: Մենք կմեկնենք մի հեռավոր երկիր, որի մասին ինձնից բացի, ոչ ոք չգիտի: Փող կճարենք, տոմսեր կառնենք մինչեւ Բաքու եւ այնտեղից շոգենավով կհասնենք Պարսկաստան: Մեզ այնտեղ կդիմավորեն հավատարիմ մարդիկ: Լեռներով ու անապատով, աստղաշատ երկնքի ներքո կհասնենք Հնդկաստան, իսկ Հնդկաստանո՜ւմ... Հնդկաստանում կհասկանաս ինչ է կյանքը, ու բոլոր վիրավորանքները այնքան մանր կթվան: Ա՜խ, աղջի՜կ, աղջի՜կ, եթե միայն իմանայիր որքան երջանիկ կարող են լինել մարդիկ: Բայց ոչ այստեղ: Դու ժամանակին սխալվել ես: Պետք էր ոչ թե հյուսիս փախչել, այլ՝ հարավ:

Նրա աչքերը վառվում էին, եւ Ուլյան հանկարծ մտածեց, որ այդ ամենը ինչ-որ բան է հիշեցնում, մի հեռավոր եւ ասես իր հետ չկատարված բան, երբ մտմտում էր իր երեխայական փախուստը: Բայց, Աստվա՜ծ իմ, ինչ երիտասարդ է այս մարդը, իսկ դեմքն ասես ճմռթված ռուբլանոց լինի: Նա Ուլյայից մի քանի կյանք երիտասարդ էր, բայց շատ ավելին գիտեր, ու երբ նրա հետ էր լինում, շունչը բռնվում էր, եւ աղջիկը մոռանում էր աշխարհում ամեն ինչի մասին: Այդ մարդու հանդեպ նրա զգացումը կանացի բոլոր կերպերի խառնուրդն էր՝ դստեր, մոր, քրոջ ու կնոջ, չնայած իրենց հարաբերություններում մարմնական ոչինչ չէր զգում: Տղամարդը հնաոճ հոգատարությամբ բոլորից պահպանում էր նրան, իսկ աղջկան դուր էր գալիս լինել նրա կողքին ու հիանալ նրանով:

Որքան տրտում էր դառնում կյանքը, որքան չար՝ թերթերն ու մարդիկ,

որքան բացակա՝ խորթ մոր աչքերն ու անհույս՝ անհետ կորած հոր մասին մտքերը, այնքան, որ վանում էր դրանք, թեեւ գիտեր, որ զուտ իր համար է վանում, այնքան ծգում ու սփոփում էր այդ տարօրինակ մարդը, որ նրա կյանք էր խուժել՝ փոխարինելով այն ամենին, որ թողել էր Գորոխովոյում: Նա օգնում էր, որ աղջիկը ապրի, գողանում էր ավելորդ ժամանակը, փակում բոլոր ճեղքերը, եւ Ուլյան զգում էր, որ մեկ-երկու օր չտեսնելու դեպքում սկսում էր կարոտել նրան: Դա տարօրինակ կախվածություն էր, մորֆիի ազդեցության պես, ու չնայած Հնդկաստան մեկնելու օրը անընդհատ հետաձգվում էր, եւ Ուլյան շուտով հասկացավ, որ ոչ մի փախուստ էլ չի լինի, շարունակում էր այդ խաղը, Կրուդին նորանոր մասնրամասներ հարցնում նրա երկրի, քաղաքների, նեղուցների, կղզիների, արտասովոր անուններով բնիկների մասին, եւ Կրուդը երբեք չէր շփոթվում, պատասխանում էր այնքան վստահ ու մանրամասն, ասես աղջիկն ուսուցչուհի լիներ, իսկ ինքը՝ աշակերտ, եւ պատասխանի համար գերազանց էր նշանակելու:

Բայց խաղը երբեմն ծանծրացնում էր, եւ Ուլյան մեծավարի, դառնությամբ մտածում էր. «Տղամարդկանց հարցում բախտս աներեւակայելի չի բերում: Դատարկախոսներ, ոչնչություններ, ցցաչոր թփեր: Մի՞թե ուրիշ տղամարդիկ պարզապես չկան: Թե՞ ես այդ ուրիշներին հետաքրքիր չեմ: Եվ իմ կյանքում միշտ այսպե՞ս է լինելու»:

- Այդպես կլինի, մինչեւ լիովին չվստահես ինձ,- մի անգամ ասաց Կրուդը:- Մենք չենք կարողանա տեղից շարժվել, քանի թեկուզ մի կաթիլ կասկած կա քո մեջ: Դու դեռ պատրաստ չես, աղջի՛կ: Ասես սողում ես շրջանով, եւ ինչ-որ մեկը կապել է քեզ: Պոկվի՛ր, միայն դու կարող ես կտրել պարանը:

«Իսկ պե՞տք է կտրել: Իսկ դա թույլ չի՞ տա, որ իրենը կապի»,- մռայլ մտածեց Ուլյան, թեեւ որոշ ժամանակից ի վեր զգուշանում էր Սավելիի մասին մտածելուց: Նրա միակ ծգտումն այն էր, որ աղջիկը լսի իրեն ու ենթարկվի ամեն ինչում: Իսկ իր ողջ էությունը լեփ-լցրած անազատության այդ նոր ու տարօրինակ զգացումը Ուլյային ստիպում էր հիշել Պավել Մատվեեւիչին ու հլու-հնազանդ Ալյոշային: «Ո՛չ. պարզապես ուզում է շնիկ սարքել ինձնից, հետո էլ կստիպի վազել որսի ետեւից: Հաստա՛տ, վարժեցնող է: Հիմա կշոյի, հետո կհասցնի մտրակով, հետո էլի կփաղաքշի»:

Նա խեթ նայում էր տղամարդուն, ու սրտում թանձրանում էր զայրույթը, բայց դրա հետ մեկտեղ մեկը, որ վերջերս էր բնակություն հաստատել սրտում, հուշում էր՝ իսկ դու մի՛ դիմադրիր, ձեւացրու, թե ենթարկվում ես,

բայց ինքդ փորձիր քեզ ենթարկել նրան: Նա ուզում է օգտագործել քեզ, ինքդ փորձիր կառավարել նրան: Դա է աշխարհի հիմքը: Բայց Ուլյան հակառակվում էր սրտի ընկերուհուն՝ մարդիկ այդպես չպիտի ապրեն: Նա ասում է, որ մեր ժամանակի ողբերգությունը անհատապաշտությունն է, իսկ ինքը եսասեր է ավելի, քան բոլոր մարդիկ միասին վերցրած: Ուլյային այնպես էին դուր գալիս այդ վեճերը, որ երեւակայում էր, թե իրենք հիմա երկուսն են՝ մեկը հասուն, մյուսը՝ փոքրը: Անընդհատ վիճում են իրար հետ ու ոչ մի կերպ չեն կարողանում լեզու գտնել, իսկ ինքը մերթ մեկին է միանում, մերթ մյուսին՝ փոքրամասնություն դարձածի դեմ, բայց եւ անմիջապես սկսում է խղճալ պարտվածին եւ անցնում է նրա կողմը: «Երեւի խելագարվում եմ»,- մտածում էր Ուլյան, բայց այդ անվերջանալի զրույցներով օրերը հեշտ էր ապրել:

«Ըստ էության, դու ո՞վ ես նրա համար,- ասում էր իրեն խիստ, մեծական ձայնով, ինչպես կարող էր խոսել ավագ քույրը կամ, գուցե, հարազատ մայրը:- Աղջիկ, որի մասին նա Աստված գիտի ինչեր է հորինել, ավելին՝ փորձել է դրանում համոզել քեզ, իսկ երբ տեսել է, որ սխալվել է, անհարմար է զգացել ու հիմա պարզապես գլուխ է դնում քեզ հետ, առանց որեւէ պարտավորության: Կամ էլ ուրիշ զբաղմունք չունի»: «Բայց չէ՞ որ դա ճիշտ չի: Նրան հետաքրքիր է ինձ հետ: Ես աշխույժ եմ, անկանխատեսելի, ես ուրիշ եմ»:- «Այ կտեսնես, կձանձրանա ու կլքի քեզ, ինչպես մնացած բոլորը լքեցին»:- «Ըստ երեւույթին իմ ճակատագիրն է՝ լքվել մարդկանցից, որոնց կապվում եմ,- համաձայնում էր փոքրիկ Ուլյան:- Բոլորը նախ նետվում են վրաս, հետո՝ անհետանում: Դա միայն մի բան է նշանակում, որ ինչ-որ արատ ունեմ»:- «Կնոջ երջանկությունը գեղեցկությունը չի, բարությունը չի, նույնիսկ հավատարմությունը չի, կնոջ երջանկությունը տղամարդուն կողքին պահելու ունակությունն է,- լուրջ-լուրջ ասում էր հասուն Ուլյան:- Դու չես կարողանում: Դու հակառակ տաղանդն ունես: Դրա համար էլ այդ տիպը շուտով կլքի քեզ: Կօգտագործի, որեւէ պատմություն կհորինի, կխցկի անորակ թղթով տպվող որեւէ գույնզգույն ամսագիր, կստանա ու կխմի հոնորարը ու՝ ցտեսություն, Ո՛ւլեչկա: Եվ տիկին Միլլերը դա արդեն քեզ չի ների, որովհետեւ այդպիսի կորստից նրա գիմնազիան հաստատ ուշքի չի գա»:- «Փոխարենը ես կապիտալ կունենամ՝ հիշողություններ մնացած ողջ կյանքի համար, որ կպատմեմ երեխաներիս ու թոռներիս, եթե ունենամ: Իսկ մադամ Միլլերը այնքան հիմար չի, որ ինձ կշտամբի դրա համար»:

Այդպես էր մտորում Ուլյան՝ սովորելով Կրուդի ներկայությամբ միանգամից երկու կյանք ապրել, եւ նա խրախուսում էր աղջկան: Այդ մարդը հուզում, շփոթեցնում էր նրան, թյուրիմացության մեջ գցում, անընդհատ շեղում, եւ աղջիկը զգում էր ինչպես է հոգնում նրանից, բայց դա ճիշտ, լավ հոգնություն էր: Միակը, որ զարմացնում ու տհաճ հիշողություններ էր արթնացնում՝ կարդալու չէր տալիս իր գրքերից ոչ մեկը, ոչ մի տող:

- Պետք չէ, որ դու ինձ կարդաս:

- Բայց ինչո՞ւ,- բորբոքվում էր Ուլյան:- Ինձ ինչի՞ տեղ եք դրել: Թե՞ վախենում եք հիասթափվեմ:

Կրուդը գունատվում էր:

- Իսկ եթե չլսեմ ու կարդամ: Այդ դեպքում ի՞նչ: Կսպանե՞ք:

- Ավելի վատ: Կտանեմ այնտեղ, որտեղից եկել ես:

Եվ աղջիկն այլեւս երբեք չհարցրեց դրա մասին: Փոխարենը՝ նրան արդեն ոչինչ գաղտնի չէր մնում, եւ Կրուդը պատմում էր ճանապարհին հանդիպած մարդկանց մասին:

- Այն պառա՞վը: Անառականոցի տիրուհի է: Ժամանակին գեղեցիկ ու հիմար էր, հետո գեշացավ ու խելոքացավ: Բայց իր աղջիկներին լավ է վերաբերվում ու թույլ չի տալիս հաճախորդները նեղացնեն: Իսկ այն երիտասարդ կնոջը տեսնո՞ւմ ես: Այ թե ում մասին են ասում՝ դժբախտ ճակատագիր: Մոր մահվանից հետո խորթ հայրը ամուսնացավ նրա հետ՝ հավատացնելով, թե հանգուցյալ մայրիկը տեղափոխվել է աղջկա մեջ: Հետո աղջիկը հղիացավ, եւ նա հետաքրքրությունը կորցրեց: Խեղճը ծանր հիվանդ է, ու քիչ է մնացել ապրելու: Իսկ ահա այն մուրացկանը ժամանակին ուսեւոր մարդ էր, բանկում էր աշխատում, հետո վարակվեց գեշ հիվանդությամբ, ու կինը թողեց նրան: Անները սկսեց փող չտալ, աշխատանքից վռնդեցին, եւ ահա թե ամեն ինչ ինչով վերջացավ:

- Իսկ ճաքած դարչնագույն պենսնեով ու ժանգոտ աչքերով այն պարո՞նը: Կարծես ինչ-որ տեղ տեսել եմ:

Նրանք Կոնոնոգվարդեյսկի բուլվարով քայլում էին դեպի նավահանգիստ ու խաղում Կրուդի սկսած խաղը:

- Գիմնազիայի նախկին ուսուցիչ. հազվագյուտ ջղայն ու տհաճ տիպ է: Սովոր է նողկալի բաներ ասել բոլորին եւ մարդկանց այնպես է վարժեցրել դրան, որ նրան ամեն ինչ ներում են:

- Բոլորին ճանաչո՞ւմ եք:

- Նրանց, ովքեր արժանի են, որ ճանաչեմ:

Ձերմակագլուխ տղաները ձուկ էին բռնում, քամին քշում էր ջրի ծփան-

քը, եւ Ուլյան հանկարծ հիշեց Ծելոմը, ջրերի վրա ճոճվող նավակն ու որսորդական կանաչ բաճկոնով, հրացանն ուսին մարդուն: Տարօրինակ էր, բայց զգաց, որ դավաճանել է նրան, որ այս կոպտադեմ, ուժեղ, տիրական մարդը հափշտակել է իր հոգին, արճճե գնդակի հետ խլել նրանից, ում Ուլյան իրավամբ պատկանում էր այն օրվանից, երբ նրա ետեւից քայլում էր անտառում ու երազում թոցնել նրա հրացանը:

- Իսկ Լեգկոբըտովին գիտե՞ք:

- Հանդիպել ենք ջահել տարիներին, երբ երկուսս էլ հեղափոխություն էինք խաղում, բայց նա էժան պրծավ,- Սավելիի ձայնի մեջ ձանձրույթ լսվեց:- Հետո մի անգամ եկավ ինձ մոտ՝ Տոշնի կղզի, Դվինայի գետաբերանում: Ինչ-որ հիմար գնդիկ-բոքոնիկից էր խոսում, որի հետեւից իբր պետք է գնալ կյանքում, ու փնտրում էր իրենից փախած հարսնացուին: Իսկ հարսնացուն այդ ժամանակ արդեն իմ կինն էր, որին ուղարկել էի հոր մոտ, Պետերբուրգ: Շատ հետաքրքիր հայր ուներ. ազատ ամուսնության ջատագով էր, բայց երբ աղջիկը կապվեց կալանավորի հետ, պահանջեց, որ բաժանվի ինձնից: Ուզում էի, բայց չհասցրի Լեգկոբըտովին ասել, թե որտեղ կարող է գտնել նրան: Գնաց բադ որսալու, ու աղվեսը կծեց որսորդին: Խեղճը որոշել էր, որ աղվեսը կատաղած է ու այնպես էր վախեցել, որ սլացավ Արխանգելսկ՝ կատաղության դեմ պատվաստում անելու: Վերադարձին նավակը խփվել էր սառույցներին ու քիչ էր մնացել շրջվի: Օդի տվեցի, բայց նա հանկարծ սկսեց գոռալ, թե ուզում եմ իրեն սպանել: Պարզվում է՝ կատաղության դեմ պատվաստումն ու ալկոհոլը անհամատեղելի են: Ի՞նչ հիմարություն: Որքան ինձ հիշում եմ՝ միաժամանակ տառապում եմ երկուսով էլ, եւ դա ինձ բոլորովին չի խանգարում: Եթե ուզեի սպանել, պարզապես կսպանեի: Դեռ իր բթամիտ շների ու վախեցած ծտերի մասի՞ն է գրում: Արժի գրել միայն նրա մասին, ինչը աշխարհում չկա, քանզի աշխարհում չկան պոետներ, նկարիչներ, վիպասաններ: Լողորդներ կան, երկնիվեր սուզվողներ, երկնային մարգարիտ որոնողներ, որոնց երբեմն հաջողվում է երկնքից որեւէ արժեքավոր բան իջեցնել երկիր: Լեգկոբըտովը նրանց մեջ չէ:

- Դուք պարզապես նախանձում եք նրան,- Կրուդի արհամարհանքից տհաճորեն խոցված՝ ասաց Ուլյան:

- Նախանձո՞ւմ եմ: Ծիծաղելի է: Ոչ թե նա, ես եմ իրենից խլել հարսնացուին: Նա թեւազուրկ է, իսկ ես թռչում եմ: Ես նայել եմ մահվան աչքերին, իսկ նա կարող է պարծենալ միայն սպանված գազանների մորթիներով: Ես շրջել եմ ողջ աշխարհը, իսկ նա իր հիմար հյուսիսային անտառներից

ու մոծակախեղդ ճահիճներից բացի ոչինչ չի տեսել: Եվ հարյուր տարի անց էլ ոչ թե նրան կկարդան, այլ ինձ:

«Եվ ի՞նչ,- մտածեց Ուլյան:- Մի՞թե այդքան կարեւոր է ում կկարդան կամ չեն կարդա հարյուր տարի անց: Գուցե այն ժամանակ ընդհանրապես ոչինչ էլ չկարդան: Բայց հետաքրքիր է այս նույն պատմությունն ինչպես կպատմեր Պավել Մատվեեւիչը»: Ու սիրտը, կամքին հակառակ, նվաց անտառի կարոտից, այնպես, որ կուզեր աստղային շափյուղան կրկին փոխարինել արճճե գնդակով ու հայտնվել Ծելոմի ջրերի վրայով սահող նավակում, բայց Ուլյան վախեցավ իր խուսափուկ, անհնազանդ մտքերից եւ ավելի վախեցավ նրանից, որ խանդոտ ու խորաթափանց Կրուդը երրորդ աչքով կկարդա դրանք կամ արդեն կարդացել է, որովհետեւ մռայլվեց, դարձավ ինքնամփոփ, չէր պատասխանում աղջկա հարցերին ու չէր պատմում հանդիպած անցորդների մասին, եւ այդպես լուռ քայլում էին առափնյակով՝ պարմանի աղջիկն ու ամուր մարմնով եւ ծերունական, հոգնատանջ դեմքով տղամարդը:

«Ի՜նչ տառապանք է,- մտածում էր Ուլյան:- Որքան դժբախտ պիտի եղած լինի այն տիկինը՝ նրա կինը: Ապրել այսպիսի մարդու հե՜տ: Այսօր շատրվան է՝ բերանը փակել չի լինում, իսկ վաղը՝ ինչքան էլ գոռաս՝ ոչ մի արձագանք: Բայց տարօրինակ է, արդեն երկրորդ անգամն եմ հանդիպում այդ կնոջը: Ու ստացվում է, որ մրցակիցն եմ: Ա՜խ, ոնց կուզեի ընկերանալ նրա հետ: Հաստատ շատ անկեղծ ու լավ կին է, չնայած գրականությունից ոչինչ չի հասկանում: Բայց մի՞թե դա պարտադիր է: Պարզապես տղամարդկանց հարցում բախտը չի բերել, ինչպես հորս բախտը չի բերել կանանց հարցում: Մարդիկ ընդհանրապես ձախողակ արարածներ են, եւ որքան լավն է մարդը, այնքան բախտը չի բերում: Օրինակ, իմ բախտը ընդհանրապես չի բերում: Բացի այդ, սարսափելի ժամանակ եմ ծնվել: Ծնողներս շտապել են: Ինչ լա՜վ կլիներ ծնվեի մի հարյուր տարի անց: Կամ էլ քնեի, օրինակ, որ այս ամենը չտեսնեի, թաքնվեի քնի մեջ, հետո արթնանայի: Ախ, ինչպիսի՜ կյանք կլինի այն ժամանակ: Ինչպիսի՜ կյանք»:

Նա չնկատեց, որ սկսել է բարձրաձայն խոսել, ու լսեց Կրուդի դժգոհ փնթփնթոցը.

- Ավելի մեծ զզվանք կլինի, քան հիմա: Եթե ափսոսելու բան կա, այն է, որ հարյուր տարի առաջ չենք ծնվել: Ասենք, այն ժամանակ էլ նողկալի էր:

- Ճիշտ չէ: Ապագայում մարդիկ ուրիշ կլինեն:

- Բնական է, որ ուրիշ կլինեն: Տեսնում ես, չէ՞, ինչ է կատարվում կանանց հետ,- մռայլ ասաց Կրուդը:

- Իսկ ի՞նչ է կատարվում:

- Սկսել են այլ կերպ հագնվել: Առաջ օրինավոր կինը երբեք իրեն թույլ չէր տա կոճերը չծածկող շոր հագնել: Իսկ հիմա նայիր հազիվ ծնկներին հասնող այդ թեթեւսոլիկ փեշերին:

- Մի՞թե այդքան կարեւոր է՝ կնոջ ծնկները բաց են, թե՝ ոչ:

- Կանանց հագնվելուց է կախված, թե իրենց ինչպես կպահեն տղամարդիկ: Կանացի շվայտությունն ավելի սարսափելի է, քան հեղափոխությունը, պատերազմն ու տեռորը միասին վերցրած, ավելի ճիշտ՝ ծնում է դրանք: Եվ եթե կանայք մի օր սկսեն ծնկից վեր շոր հագնել, մարդկությունը կգազանան կամ էլ կկակղի ու երեք սերնդից հետո կդադարի գոյություն ունենալ:

- Ծնկից վե՞ր: Բայց դա անհնար է,- ծիծաղեց Ուլյան ու հոգոց հանեց:- Դուք, ըստ երեւույթին, խիստ բարոյական մարդ եք:

- Ե՞ս,- բարկացավ Կրուդը:- Ես գաղափար չունեմ ինչպես է գրվում «բարոյականություն» բառը:

- Պատկերացնում եմ գիմնազիայի ինչ ուսուցիչ կամ նույնիսկ տնօրեն կլինեիք: Ափսոս, որ խորթ մայրս դա չի հասկանում ու բարկանում է վրաս, որ ժամանակս ձեզ հետ եմ անցկացնում: Փոխարենը՝ այլեւս չի խանդում,- հառաչեց նա, եւ աչքերը լցվեցին արցունքներով:

- Ո՞ւմ հանդեպ է խանդում,- լարվեց տղամարդը:

- Հեչ, մի մարդու: Դուք նրան, փառք Աստծու, չեք ճանաչում,- խուսափողական պատասխանեց Ուլյան ու համենայնդեպս ստեց:- Նա վաղուց այստեղ չի: Բայց հիմա ի՞նչ անեմ: Մինչեւ կրունկներս շոր հագնեմ ու երազեմ, թե ինձ ո՞վ կտանի այն հեռավոր երկիրը, ուր դուք այդպես էլ չտարաք:

Վերջին բառերը կարծես թե չասաց, միայն մտածեց, բայց Կրուդը, մեկ է, բարկացավ:

- Երազանքից վնասակար, անիմաստ ու վտանգավոր բան չկա: Հրաշքը քո ձեռքով պիտի պատրաստես, ինչպես որ ճոնը գդակ է կարում, իսկ կոշկակարը՝ կոշիկ: Ամեն ինչ աչքի առաջ է, բայց մարդիկ տրորում-անցնում են, կռանալու ու վերցնելու փոխարեն:

- Ո՞ւր է:

Կրուդը թոթվեց ուսերն ու գետնից մի գնդասեղ վերցրեց:

- Ինչ էլ արժե՛ք է:

- Անուղեղ սագ ես դառնում: Ի՞նչ գիտես: Մեկ էլ տեսար կոտրեցիր այս գնդասեղը, ու նվիրական երազանքդ կատարվեց:

- Կատակո՞ւմ եք: Այդ դուք կարող եք կոտրել, դրա պես... ի՞նչ էր... ձեռնածուի պես... Եվ ինչո՞ւ կոտրել:

...Կրուդը երբեմն անհետանում էր, ու երբ կրկին հանդիպում էին Պրյաժկայի կամրջի վրա, հիվանդ, հոգնած տեսք էր ունենում, հարցերին չէր պատասխանում, բայց Ուլյան կանացի հոտառությամբ զգում էր, որ խումհարի մեջ է, ու հոգում մի անծանոթ, հասուն զայրույթ էր բարձրանում, բայց զսպում էր իրեն մինչեւ որ մի անգամ, ձմռան սկզբին, մի բքաշունչ օր Գատչինայում հյուրընկալվեցին մի մեծ գրողի՝ Կրուդի ընկերոջը: Տանտերը նրանց հրավիրեց ճաշելու եւ ուրախ-ուրախ նայում էր Ուլյային, մեկ աչքով անում, մեկ կշտամբանքով օրորում գլուխը: Լիքը-լիքը դեմք ուներ, փոքրիկ ու խորամանկ ասիական աչքեր, եւ Ուլյան չէր կարողանում հասկանալ՝ ինչն է այդ մարդու մեջ ավելի շատ՝ խորմանկությո՞ւնը, թե՞ բարեհոգությունը, բայց, մեկ է, դուր էր գալիս աղջկան, որը հաճույքով լսում էր նրա պատմությունները Սուլամիթ թագուհու մասին՝ չնկատելով, թե իր զնգուն ծիծաղը ինչպես է ցավեցնում ժամ առ ժամ մռայլվող Սավելիին: Իսկ գուցե եւ նկատում ու դիտմամբ գրգռում էր նրան: Բայց իսկապես շատ ուրախ էր, ու դուր էր գալիս եւ՛ այդ տունը, եւ՛ գեղեցիկ, հոգատար տանտիրուհին, եւ՛ նրանց ութամյա դուստրը, եւ՛ փոքրիկ ծաղրածուն, եւ նա հանկարծ մտածեց՝ իսկ ինչո՞ւ Կրուդը՝ այդ վայրի մուստանգը, չի կարող նույնքան ուրախ, տնական ու սրտաբաց լինել: Նույնպես կին ունենալ, երեխա դաստիարակել, հյուրեր ընդունել տանը: Ինչո՞ւ է թափառում ձեղնահարկերով, որոնք իբր ամաչում է ցույց տալ Ուլյային եւ այդ պատճառով երբեք իր մոտ չի հրավիրում: Ինչո՞ւ է շարունակ նեղացած, գրգռված, մելամաղձոտ, բողոքում է գրական թշնամիներից, նախանձողներից, քննադատներից, որոնք այնպես չեն գնահատում իրեն, ինչ իրականում կա, եւ ինքը չէ՞ արդյոք դրա մեղավորը:

Ուլյան չէր համարձակվում հարցնել դրա մասին, բայց հիմա, այդ բարեհոգի, փոքր-ին ինքնահավան, ճանաչման հասած, երջանիկ մարդուն տեսնելուց հետո, հարցը սկսեց որդի պես կրծել ներսը, եւ Ուլյան որոշեց, որ անպայման հարմար պահ կգտնի ու կտա այդ հարցը, նույնիսկ եթե Սավելին բարկանա էլ: Որովհետեւ եթե ոչինչ չանես, ոչինչ չի կատարվի: Իսկ այսպես Կրուդի համար հնարավորություն կհայտնվի, նա կմտածի իր ճակատագրի մասին, ու ճակատագիրը կփոխվի: Ուլյան այնպես ոգեւորվեց այդ գաղափարով, ինչպես ժամանակին երկու գյուղական աղջիկներին լավ վարվելակերպ սովորեցնելու խնդրով էր ոգեւորվել: Բայց հիմա ամեն ինչ շատ ավելի արագ ավարտվեց, քան նախորդ անգամ: Կրո՞ւդն էր սովո-

ռականի պես հասցրել ամե ինչ կարդալ նրա դեմքին, թե բավականաչափ չէր խմել, բայց նա ու գրողը գժտվեցին: Ուլյան նույնիսկ չհասցրեց հասկանալ ինչ կատարվեց: Հիշում էր միայն, որ տանտերն անշտապ ինչ-որ բան էր պատմում, ու Կրուդը հանկարծ ընդհատեց.

- Ալեքսե՛յ Իվանիչ, դու գոնե մի անգամ մոտիկից իսկական տաժանակիր տեսած կա՞ս: Իսկ ես տեսել եմ:

Ալեքսեյ Իվանիչը մռայլվեց, չէր սիրում, որ հակաճառում էին, մանավանդ ուրիշների ներկայությամբ, մանավանդ երբ այդ ուրիշները երիտասարդ կանայք կամ աղջիկներ էին:

- Տեսել եմ, պատժաչափի կեսին:

- Ո՞ւմ:

- Հենց քեզ էլ տեսել եմ:

Փոքրիկ ծաղրածուն ծիծաղեց, Ուլյան ակամա ժպտաց, իսկ Սավելին միանգամից այնպես տհաճ ու կոպիտ դարձավ, ինչպես Տրոիցկի կամրջի հանդիպման ժամանակ:

- Դու լավ գրող ես, Ալեքսե՛յ Իվանիչ, շատ լավ, բայց դեռ շատ ունես Բունինին հասնելու համար,- թունոտ ասաց Կրուդը, եւ Ուլյան ապշեց նրա զրուցակցի դեմքի փոփոխությունից. բարի, հյուրընկալ տանտերը ակնթարթորեն դարձավ վիրավորված, չար մարդ, եւ նրա ողջ բարեհոգությունը փոխարինվեց գրգռվածությամբ, ինչպիսին նույնիսկ Կրուդը չէր լինում:

- Քո Բունինը ինքնահավան, փքված սագ է, որ միայն իրեն է լսում ու հիանում իրենով. ա՛խ, ինչ տաղանդավոր եմ, ա՛խ, ինչ բառեր եմ կարողանում գտնել: Իսկ իմ պատկերավորությունից կարդացողի աչքերը շաղվում են: Պարզություն չունի, իսկ առանց պարզության հանճար էլ չկա:

- Իսկ ինձ դուր եկավ Օլյա Մեշերսկայայի մասին գրածը,- կրակին յուղ լցրեց Ուլյան ու մտովի կնիքսեն արեց. անասելի ուրախ էր:

Հանկարծ ամեն ինչ հասկացել էր: Նրանք՝ այդ բոլոր ստեղծագործողները, երեխաներ են, սիրում են, որ իրենց գովեն ու գլուխները շոյեն, նեղանում են, երբ նախատում են, սկսում են թնկթնկալ, եթե լռում ու չեն նկատում, ուզում են առաջինը լինել, լավագույնը, անընդհատ քաղցրեղեն են խնդրում, բայց դրա հետ մեկտեղ կեղծում են, որովհետեւ ամաչում են իրենց երեխայությունից եւ փորձում են անխոցելի, հպարտ ու անկախ թվալ: Նրանք իրար հետ չափվում են փառքով, դրանից էլ խոցվող են, իսկ ինքը, փառք Աստծու, հեռու է նրանց ապրումներից, բայց զգում էր ինչքան հետաքրքիր է նրանց հետ: Եվ նույնքան ուրախ էր իտալացի Ռոսսոլիմոյի համար, երկուսին էլ գրգռում էր, ասես հասկանալ տալով, որ այդ ամենը

ընդամենը չարաճճիություն է, այսօր կռվեցին, վաղը կհաշտվեն: Բայց ամեն ինչ այլանդակ կերպով ավարտվեց:

Կրուդը, վիրավորված նրանից, որ Ռոսսոլիմոն իր թիկունքում ծաղրություններ է անում, գոռաց.

- Իսկ դու կորի էստեղից, գրողի տարած մակարոնակե՛ր: Մի խցկվիր, երբ ռուս գրողները կյանքից են խոսում:

Ծաղրածուն ակրոբատիկ ճարպկությամբ վեր թռավ, ու մինչեւ որեւէ մեկը կհասկանար ինչ է ուզում անել, դուրս պրծավ սենյակից:

- Այդ դեպքում դու էլ կորիր,- Սավելիին ասաց տանտերը:

- Խնդրեմ,- ուսերը թոթվեց Կրուդը, բայց շեմին կանգ առավ:- Միայն թե գինի դիր հետս:

- Ոչինչ էլ չես ստանա:

- Այդ դեպքում կնստեմ ու ոչ մի տեղ չեմ գնա:

Ուլյան զգույշ դիպավ Կրուդի ուսին.

- Գնանք, խնդրում եմ:

- Դու էիր մնացել ինձ ասես ինչ անեմ:- Սավելիի աչքերը լեցուն էին կատաղությամբ, եւ Ուլյան հասկացավ, թե ինչու էր իրենց ամենաառաջին հանդիպմանը ինքն իրեն վայրի մուստանգ անվանել:

Սենյակ մտավ տանտիրուհին, ձեռքին զմռսած, փոշոտ մի շիշ:

- Վերցրու քո մաղերան ու այս տան ճանապարհը մոռացիր,- մռլտաց Ալեքսեյ Իվանովիչը:- Իսկ դու, աղջի՛կ, մնա: Գործ չունես այս հարբեցողի հետ: Թո՛ղ նրան: Ինչի՞դ է պետք: Մեկ է, նրան ոչնչով չես օգնի: Ամբողջ կյանքում դժբախտությունների ետեւից է գնալու ու հավասարը չի ունենալու այդ որսի մեջ: Իսկ ես ու դու որսորդներ չենք, ավելի լավ է տորթով թեյ խմենք:

Ուլյան տորթ ուզում էր, բայց այնքան ցավոտ էր Սավելիի նվաստացումը, որ արցունքների միջից ճչաց.

- Իսկ դո՛ւք, դո՛ւք... ինչպես չեք ամաչում: Հետո՞ ինչ, որ նշանավոր եք, հարուստ, հետո՞ ինչ, որ բոլորը կարդում են ձեզ եւ՛ ճանաչում են, եւ՛ հրավիրում, եւ՛ գրում են ձեր մասին, բայց ինչո՞ւ այդպես վարվեցիք նրա հետ: Նա բոլորիցդ հազարապատիկ լավն է, մաքուր, բարձր: Եվ նրան կկարդան հարյուր տարի անց, կտեսնե՛ք, նրան, ոչ թե ձեզ:

Ու վազեց դուրս, որտեղ, վաղ մթնշաղում թանկարժեք գինու շիշն էր քամում իր բարեկամը: Առաջին անգամ էր նրան հարբած տեսնում: Բայց դա ինչ-որ տարօրինակ հարբածություն էր: Ուլյան քիչ հարբած տղամարդկանց չէր տեսել Գորբունկիում, հիշում էր նրանց խայտառակ պարերն ու

կռիվները, բայց որ քիչ առաջ սթափ, թեկուզեւ բորբոքված մարդը մի ակնթարթում վերածվի անզգա արձանի՝ խորդուբորդ բերանին թառած ապուշ ժպիտով, այդպիսի բան առաջին անգամ էր տեսնում ու չգիտեր ինչ անի: Մութ փողոցում, անշարժ ցանկապատին հենված՝ կանգնել էր Կրուդի կողքին ու չէր լալիս, որովհետեւ լաց լինելն ավելի սարսափելի էր: Կրուդը անասելի գունատ էր, քրտինքի խոշոր կաթիլներ էին դուրս տվել ճակատին ու հոսում էին դեմքով: Քունքերի մանուշակագույն երակները այնքան ուժեղ էին տրոփում, որ թվում էր հիմա արյունը դուրս կհորդի:

Գետնահողմ սկսվեց, խտանում էր կարճ օրվա մթնշաղը, Սավելին չէր շարժվում, եւ Ուլյան վախեցավ, որ կսառչի: Երկուսն էլ կառքի փող չունեին: Վերադառնալ ու փող խնդրել իր վերջին խոսքերից վիրավորված Ալեքսեյ Իվանովիչից՝ անհնար էր: Ուլյան նայեց շուրջը եւ կարծես կյանքում առաջին անգամ իսկապես խնդրեց. «Տե՛ր Աստված, օգնիր»: Ձչալուց չէր ամաչում ու սկսեց աղերսել. «Օգնի՛ր: Ի՞նչ դժվար է քեզ համար: Խղճա նրան, եթե ինձ չես ուզում խղճալ: Այնպես արա, որ այս ձյունը հալվի, ու մենք հայտնվենք նրա երկրում: Ես դրա համար ամեն ինչ կանեմ, չնայած չգիտեմ քեզ ինչ դուր կգա: Նույնիսկ համաձայն եմ սառչել այստեղ, եթե այդպես է պետք: Օգնի՛ր մեզ, խնդրո՛ւմ եմ, խնդրո՛ւմ եմ, օգնի՛ր»: Բայց երկինքը խուլ էր, եւ ամպերի ու ձյան վարագույրի ետեւից ոչ ոք չէր ուզում նայել կամակոր, ցրտից ու վախից դողացող աղջկան ու նրա անզգայացած ընկերոջը: Ուլյան մի քար վերցրեց ու շպրտեց երկինք: Քարը մի քիչ բարձրացավ ու ընկավ ցանկապատի դիմաց կանգնած փայտ բարձած փոքրիկ սահնակի վրա: Ուլյան թափեց փայտն ու սահնակին պառկեցրեց մուստանգի երկար մարմինը: Հետո փորձեց հրել այդ անճոռնի կառույցը: Սահնակը տեղից չէր շարժվում: Եվ այդ ժամանակ Ուլյան ձիու պես լծվեց ու քաշեց սահնակը:

Ձյունը քիչ էր, ու սահնակը դժվար էր շարժվում: Կրուդի ոտքերը կախվել ու կառչում էին հողից: Ինչ-որ կին էր ընդառաջ գալիս:

- Մարդո՞ւդ ես քաշում: Թե՞ հորդ,- կարեկցանքով հարցրեց նա:

Կրուդը շուտով սթափվեց, բայց առաջվա պես ոչ մարմնին էր տիրապետում, ոչ լեզվին: Մեղավոր նայում էր Ուլյային, իսկ նա սահնակը քաշում էր դեպի կայարան եւ այնտեղ էլ դեռ երկար սպասեց, մինչեւ նա ուշքի գա, եւ հանկարծ զգաց, թե ինչպես է ներսում մի նոր, հասուն զգացում արթնանում տղամարդկանց հարբեցողության դեմ, բայց այստեղ էլ հիշեց իր դաժան խումհարաթողությունը «Վիլլա Ռոդէից» հետո, ու խղճաց Կրուդին: «Կամ կսկսեմ խմել նրա հետ, կամ իսկապես կհեռանամ: Այդպես էլ կասեմ»:

Բայց Սավելին կանխեց նրան.

- Խոսք եմ տալիս, որ բերանս կաթիլ չեմ առնի, մինչեւ թույլ չտաս: Բայց դու այդպես էլ չհասկացար ինձ: Ինչպես որ դրանք բոլորը չեն հասկանում: Ես նրանց համար խեղկատակ եմ, կապիկ՝ Բոռնեո կղզուց, շատ ավելի վատը, քան այդ իտալացի ծաղրածուն: Ա՛խ, ինչ գռեհիկ, սրիկա ու տականք են դրանք՝ հրատարակչությունների ու թերթերի այդ բոլոր մարդուկները, այդ բոլոր պրոֆեսորներն ու պրիվատ-դոցենտները: Նրանք ճարպակալում են, իսկ մենք հարբեցող ենք դառնում: Նրանց՝ խաղուպար, մեզ՝ ցավ ու արցունք: Ու դու էլ ոչնչով լավը չես: Դու իմ մեջ ուրիշ մարդու տեսար ու երեւակայեցիր, թե հենց այդ եմ, իսկ իսկական ինձ չճանաչեցիր: Ինձ ոչ ոք չի ճանաչում: Դու մի քիչ ավելի մոտեցար ու նայեցիր, ինչպես ջրհորի մեջ, բայց, մեկ է, համարյա ոչինչ չտեսար, որովհետեւ աչքերդ կուրացել են առօրյայից: Փոխարենը՝ ես քեզ ճանաչեցի: Քո կյանքում ավելորդ ու չհերիքող բաներ կան, եւ դա խանգարում է քեզ: Բայց ես այնպես կանեմ, որ կյանքդ փոխվի: Ես քեզ ուրիշ անուն կպարգեւեմ: Իսկ հետո կհանդիպես նրան, ով կսիրի քեզ: Աղքատ մարդ կլինի, շատ ջանասեր, շատ բարի, եւ հայրդ կփորձի նրան բարձրանալու հնարավորություն տալ, բայց դու կանցնես այդ սիրո կողքով:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ անփույթ ես մարդկանց հանդեպ, սահում ես կյանքի վրայով ու մտածում միայն քո մասին: Դու փուչ ես, աղջի՛կ: Դու նույնիսկ թեւազուրկ չես, ո՛չ: Դու այնքան փուչ ես, որ հանդիպող ամեն ոք քեզ լցնում է իր պարունակությամբ ու մտածում, թե բռնեց քեզ: Բայց դա նույնն է, թե բռնես լուսնի լույսը: Սքանչելի, բայց անօգուտ:

Նա տհաճ ծիծաղեց, իսկ Ուլյան հիշեց ինչպես էր նրան պաշտպանում Ալեքսեյ Իվանովիչից, ինչպես էր քաշում սահնակը, ու նեղացավ, բայց ավելի ուշ հասկացավ, որ նրա ասածի մեջ մի խոր, մինչեւ վերջ չհասկացված ճշմարտություն կա, ու վիրավորվածությունն ավելի խորացավ:

8

«Ես վատն եմ, տգեղ, եսասեր, փուչ, իսկ ինչպիսին լինեի: Մեղավո՞ր եմ, որ ինձ այսպիսին են դաստիարակել: Կամ ընդհանրապես չեն դաստիարակել: Մայրիկս լքեց ինձ, երբ երեք տարեկան էի: Խորթ մայրս վախենում էր դիպչել ինձ, ասես գորտի դիպչեր: Իսկ եթե աղջկան երեխա ժամանակ չգուրգուրես, այդպիսի աղջկանից ի՞նչ կստացվի,- խղճահարությամբ, թե

անողոք մտածեց իր մասին:- Չէ՛, ես իմ դստրիկին ուրիշ կերպ կմեծացնեմ: Պաչիկ կանեմ, կլողացնեմ, մազերը կսանրեմ, սպիտակ շորիկներ կհագցնեմ: Իսկ երբ մեծանա, կպատմեմ, թե ինչպես չի կարելի ապրել: Ա՜խ, ե՞րբ ես գալու, փոքրի՛կս: Ինչ տխուր է առանց քեզ»: Բնակարանը դատարկ էր, համր, ու միայն լսվում էր՝ պատուհանից այն կողմ ինչպես է աղմկում քամին ու ծովածոցից ջուրը մղում դեպի չսառած Նեւան: Տարվա ամենածանր ժամանակն էր՝ գարունն ու տաքերը դեռ հեռու էին, օրերը՝ անլույս, եւ նույնիսկ Սավելին էր տխրել, ու առաջվանից քիչ էին հանդիպում, հանդիպելիս էլ կամ լռում էր, կամ էլ մութ, սարսափելի բաներ պատմում:

- Մի մարդ կա, ինձ շատ է անհանգստացնում,- մի անգամ չուզելով ասաց նա:

- Ո՞վ:

- Դու, փառք Աստծո, չես ճանաչում: Մերոնցից է եղել, մեր լավագույններից, բայց հետո վատ բան կատարվեց: Լավ չէր հաշվել իր ուժերը, շատ վեր բարձրացավ ու չհասկացավ, ինչպես իրեն սկսեցին օգտագործել մութ մարդուկները: Պատկերացրու, որ այդպես էլ է լինում, կամային, խելացի, կարեկցանքի ընդունակ ու պերճախոսությամբ օժտված մարդը գործիք է դառնում օտարի ձեռքին: Սարսափելի չէ, երբ մեծը իրեն է ենթարկում փոքրին, սարսափելի է, երբ մարդկային կրճոնքը գերի է վերցնում հսկային: Եվ ինչքան հզոր է հսկան, այնքան վտանգավոր է: Ես շատ եմ մտածել նրա մասին, իսկ վերջերս անընդհատ եմ մտածում, ուրիշ ոչինչ չեմ կարողանում անել, նրա պատճառով ոչ մի տող չեմ գրում,- դժգոհ ասաց Կրուդը:- Ողբերգական կերպար է, նրա վրա չի կարելի ծիծաղել ու հեքիաթներ հորինել նրա մասին: Բայց լռել էլ չի կարելի: Լուրջ է, կարեւոր, բարդ: Նրան բազմիցս փորձել են կանգեցնել, բայց ոչ մեկը չի կարողացել ու չի կարողանա: Փորձել են սպանել, թունավորել, հրել անդունդը. ապարդյո՛ւն: Դուրս էր պրծնում, փրկվում այնտեղ, որտեղ դա անհնար էր թվում: Կախարդված է: Բայց եթե երկար ապրի, այս քաղաքը կհայտնվի սովի, մահվան ու սեւ առնետների իշխանության տակ:

Ուլյան թոթվեց ուսերն ու մոռացավ այդ տարօրինակ խոսակցության մասին, դրան վերաբերվեց որպես ոչնչից իր մռայլ պատմությունները հյուսելու Կրուդի սովորությանը, բայց մի անգամ Սավելին հանդիպման վայր չեկավ: Հաջորդ օրն էլ չեկավ, երրորդ օրն էլ, եւ աղջիկը հասկացավ, որ լքել է իրեն: «Ես նրան ծանծրացրել եմ: Պարզապես օգտագործում էր: Ես խաղալիք էի նրա համար: Տիկնիկ, որին կարելի է զուգել սեփական ճաշակով: Թե՞ նորից սկսել է խմել: Չի դիմացել: Չնայած խոսք էր տվել, որ չի

խմի: Ու հիմա ամաչում է: Բայց եթե խնդրեր, եթե նույնիսկ ակնարկեր, թույլ կտայի: Կամ համենայնդեպս մեկնե՞լ է: Մենակ մեկնել է իր շողշողուն աշխարհը, եւ ինձ չի տարել, որովհետեւ ես հիմար սագ եմ, որովհետեւ կասկածեցի, չհավատացի, չդիմացա փորձությանը...»:

Այս միտքը հայտնվեց մի անլուսին գիշեր: Ուլյան չէր հասկանում՝ քնա՞ծ է, թե՞ արթուն, բայց սարսափած վեր թռավ ու մոտեցավ պատուհանին: Ոչինչ չէր երեւում, հետո երկինքը սկսեց առկայծել, շատ թույլ, անհաստատ, աստիճանաբար ուժգնանալով: Ցանկացավ բացել պատուհանը, դուրս թռչել ու փախչել: Բայց ի տարբերություն գյուղի, ներքեւում հող չէր, միայն ենթադրվում էր ամայի, կոշտ առափնյակը: Սենյակում ինչ-որ մեկը կար: Ուլյան ճանաչեց երեխա ժամանակ իրեն այցելող գիշերային արարածին, բայց հիմա չէր վախենում, ավելի շուտ՝ հետաքրքիր էր: Ինչ-որ լույս թարթեց, եւ նա հասկացավ, որ իր քարն է լույս տալիս ու կանչում. «Պոկվի՛ր գետնից, հավատա՛...»:

- Այո՛, պոկվիր, հավատա,- բարձր ասաց Ուլյան,- որ հետո ավելի ցավոտ շմփաս գետնին, իսկ նայի ինչպես ես ընկնում ու ճչում: Չեմ զարմանա, եթե իմանամ, որ այս ամբողջ ընթացքում թաքուն հետեւել է, թե ինձ ինչպես կպահեմ: Ահա այսպես:

Նա վզից պոկեց քարով շղթայիկը, դրեց սեղանին, քաղցր հորանջեց, ծգվեց ու անմիջապես քնեց: Նույնիսկ չքնեց, այլ գլորվեց քնի մեջ, ինչպես փոսն են ընկնում:

Ուլյան արթնացավ ցրտից: Գիշերաշապիկով նստել էր հատակին, ուսերը դողում էին, իսկ անկյունից նրան էին նայում երկու վառվող կետեր: Ուլյան ուզում էր ճչալ, բայց չկարողացավ: Ծտապ պետք էր արթանանալ: Վերցնել շափյուղան ու դուրս պրծնել, ազատվել հիվանդ երազի պղտոր խյուսից: Բայց չէր կարողանում, թպրտում էր, թաղվում, ու սեղանին ոչ մի շափյուղա էլ չկար: Ինչ-որ մեկը հափշտակել էր քարը... Երկու կարմիր աչքերը մոտեցան, եւ Ուլյան մի խոշոր առնետ տեսավ: Բերանում առկայծում էր շափյուղան: Զզվանքն ու սարսափը պատեցին Ուլյային, իսկ առնետը չէր փախչում: Մանրիկ սուր ատամները գարշելի դողում էին, էլի մի վայրկյան, եւ առնետը կուլ կտա քարն ու կփախչի: Ուլյան պարզեց ձեռքն ու զզվանքը հաղթահարելով՝ նրա բերանից խլեց Կրուդի ընծան.

- Ես ամեն ինչ հասկացա: Այլեւս երբեք վզիցս չեմ հանի քարը: Միայն ասա՝ որտե՞ղ է:

- Նեւսկի բանտում:

- Այս քարի պատճառո՞վ:

- Ո՛չ:
- Իսկ ինչի՞:
- Ոչ թե ինչի, այլ ում:

Ուլյան օրորեց գլուխն ու ընկավ նոր երազի մեջ: Թույլ լուսավորում էր դեկտեմբերի ժլատ արեւը: Նեւայից ուժեղ քամի էր փչում, չարացած ջուրը բարձրացել էր համարյա մինչեւ գրանիտի շրթունքը, ու նրա դիմաց ոչ մի առնետ էլ չկար. արդեն տեսած սուր դիմագծերով, առնետանման կինն էր:

Ծատ էր փոխվել այն օրվանից, երբ Ուլյան նրան վերջին անգամ տեսել էր Լեբյաժյի ջրանցքի ափին: Դեմքն այլեւս տառապանք չէր արտահայտում, ինքը գիրացել էր, կոկիկ ու հանդարտ, գոհունակ անձնավորության տպավորություն էր թողնում: Կողքին, վարժեցված շան պես կանգնած էր ուղիղ մազաբաժանով ու թեթեւակի ցցված ականջներով մի առաքինի տղամարդ ու քաղաքավարի հետաքրքրությամբ նայում էր Ուլյային:

- Նա կեղծ անձնագրով էր ապրում: Եվ եթե հանգիստ նստեր, ոչ ոք ուշադրություն չէր դարձնի: բայց բացահայտեց իրեն:

- Ի՞նչ է արել,- խռպոտ հարցրեց աղջիկը:

- Ցարսկոյե սելոյի կառամատույցում հարձակվել է մի մարդու վրա, որի հետ լավ է շշուկով խոսել, իսկ ավելի լավ է ընդհանրապես չխոսել:

- Սպանե՞լ է,- ձայնը դողաց:

- Նա այդպիսի բանի ընդունակ չէ,- խայթեց կինը:- Նա ընդհանրապես ոչնչի ընդունակ չէ: Նրա միակ զենքը սուր լեզուն է:

- Դո՛ւք եք մատնել նրան,- ճչաց Ուլյան:- Հոգնել եք նրանից ու մատնել:

- Ուրիշների հիմարությունները մի կրկնիր: Եթե ուզեի մատնել, ավելի շուտ կանեի: Երեւի հենց այդպես էլ պետք էր: Ավելի քիչ կնստեր: Ի՞նչ ես աչքերդ չռել վրաս: Եթե իմանայիր ինչ կոյանցքերից եմ դուրս քաշել նրան եւ ինչ վիրավորանքներ լսել ի պատասխան:

- Ստում եք: Նա պայծառ, մաքուր մարդ է:

- Նա՞,- քրքջաց տիկինն ու աչքերում արցունքներ շողացին, որոնք Ուլյան չնկատեց:- Կյանքումս ավելի մեծ սրիկա ու կեղծավոր չեմ տեսել: Եվ հավատա, ես տարբեր մարդկանց եմ ճանաչել: Նա ըմբոշխնում է իր դժբախտություններն ու շռայլ կիսում բոլորի հետ: Հատկապես քեզ նման պեպենոտ հիմարիկների: Բայց այլեւս չեմ ուզում քեզ հետ: Դու ինձ հետաքրքիր չես: Առաջ էիր հետաքրքիր, բայց հիմա՝ ոչ: Իսկ նրան, ահա, կարծես շատ ես հետաքրքրում: Ուզում է մի վերջին ագամ օգտագործել քեզ: Խնդրել է գտնեմ եւ ասեմ, թե ինչպես ավելի լավ կլինի կազմակերպել փախուստը: Հայրդ Նեւայի բանտի պետն է, չէ՞, կամ դրա պես մի բան: Ո՛չ: Տա-

որինակ է, նա սովորաբար նման հարցերում չի սխալվում: Իսկ բանտը նրա մոլուցքն է: Ամեն անգամ բանտ ընկնելով՝ երազում է փախչել: Մի անգամ մեկ օրում երկու անգամ փախավ: Առաջինը՝ պարետին խոստացել էր վերադառնալ, իսկ երկրորդ անգամ, որովհետեւ իրեն խոստացել էր, որ կփախչի... Իսկ քեզ կասեմ՝ եթե քո մայրը լինեի, կարգելեի նույնիսկ մոտենալ գրողներին:

«Մանեկե՛ն,- հասկացավ Ուլյան: - Ահա թե ով է մանեկենը: Արհեստական հոգով ու մետաքսյա մաշկով: Դեմքի առողջ գույն, թարմ շունչ, հրաշալի գործող ստամոքս, ու սիրտը արյունը մղում է հավերժական շարժիչի պես: Բայց, Աստվա՛ծ իմ, այս տիկնիկին սիրել են երկու ոչ ամենասովորական մարդիկ: Տառապել են, իրենց մեղավոր զգացել, համարյա պաշտել են նրան: Մեկը մինչ օրս նրան է երազում, մյուսը հետը ման է տալիս նկարը: Նրան են ծոնում իրենց վեպերը, փնտրում են, կարոտում, իսկ նա ինչ-որ հիմարիկ է գտել, ինչ-որ դմբո եւ ուզածին պես խաղացնում է:

Ասես հաստատելով վերջին ենթադրությունը՝ վայելչատես պարոնը հիմարագույն կերպով ժպտաց եւ անգլերեն ինչ-որ բան ծվաց, բայց, թե ինչ՝ Ուլյան չհասկացավ:

«Հետն էլ՝ ռուս չի, թո՛ւ»:

- Եվ վերջին խորհուրդս քեզ,- տիկինը դարձավ Ուլյային:- Հենց իմացար դիմացինդ գրող է, վազիր, հիմարի՛կ, ինչքան ուժ ունես՝ փախիր...

Եվ Ուլյան վազեց: Նետվեց Գորոխովայա: Նրա հեռանալուց հետո այնտեղ ամեն ինչ փոխվել էր: Ուրիշ մարդիկ, ուրիշ դեմքեր: Նկջում էր պահնորդական բաժանմունքը, որ վաղուց արդեն ոչ մեկին չէր պահպանում: Սանդղահարթակում արյան ու փողի հոտ էր գալիս: Ուլյան դա զգաց շքամուտք մտնելուն պես: Նրան բնակարան չթողեցին:

- Վաղուց այստեղ չես եղել: Ի՞նչ ես ուզում,- չար աչքերով կրակեց Ակիլինան:

- Ձեզ չի վերաբերվում:

- Ուրեմն գնա էստեղից:

- Մտքովս էլ չի անցնում:

- Գնա՛, ո՞ւմ եմ ասում:

Ակիլինայի ետեւում հայտնվեց մի ոչ բարձրահասակ արծաթամորուս մարդ: Սեւեռուն զննեց Ուլյային՝ աչքերով այնպես թափանցելով ներսը, ինչպես նույնիսկ Սավելին չէր կարողանում տեսնել նրան, եւ գոհունակություն առկայծեց աչքերում, իսկ Ուլյան հանկարծ անտանելի ամոթ զգաց:

- Նե՛րս թող,- Ակիլինային ասաց շեղաչքը:

Ուլյան նստել էր հյուրասենյակում, ինչպես մի քանի ամիս առաջ: Աֆրիկյան ջրխմոց հիշեցնող ոչինչ այլեւս չկար: Մի քանի պճնված ջահելներ զրուցում էին բանկային վարկերի ու ռազմական կապալների մասին: Երբ իջավ աշնանավերջի վաղ մթնշաղը, ներս մտան տոնահանդերձ Վարվառան ու Մատրյոնան: Մատրյոնան թեւանցուկ էր արել մի երիտասարդ բարձրահասակ սպայի: Ետեւից ծանր-ծանր գալիս էր Անաստասիան, որն այդ ընթացքում ավելի էր չաղացել:

- Փեսացուս է,- հպարտությամբ բարբառեց Մատրյոնան: Ծամերը կտրել ու սանրվածք էր արել, ինչից նրա մեջ եղած լավը, գեղջկականը չքացել էր:

Սպան թափանցիկ չռված աչքերով կողքանց նայեց Ուլյային: Հապաղեց մի քիչ ու ներկայացավ.

- Պորուչիկ Գլեբ Սոլովյով:

Ուլյան օտար մարդու ներկայությամբ խոսք չբացեց կարեւորի մասին, ու սկսվեց մի տարօրինակ, անկապ զրույց, որը չգիտեին ինչպես ավարտեն: Մատրյոնան վայելում էր հարսնացուի դերը, Վարյան հիացած նայում էր քրոջն ու նրա փեսացուին, միայն Նաստյան էր շրջվել ու լռում էր:

- Մատրյո՛շ, Վա՛րյա, շտապ պետք է տեսնեմ ձեր հայրիկին:

- Ինչի՞ համար,- լարվեց Մատրյոնան, ու գեղեցիկ աչքերը զգուշավոր պսպղացին:- Ի՞նչ գործ ունես նրա հետ:

- Կարեւոր:

- Քո կարեւորը կարող ես մեզ էլ ասել: Իսկ հայրիկը հոգսեր ունի: Դարդը դու չես:

- Իմ բարեկամն է փորձանքի մեջ ընկել:

- Ի՞նչ փորձանք:

- Բանտարկել են:

- Ինչի՞ համար,- դժգոհ հարցրեց սպան:

- Փեսացո՞ւդ է,- աչքերը կկոցեց Մատրյոնան:

- Չէ, պարզապես ընկեր: Օգնեցեք նրան:

- Աղջիկները պարզապես ընկերներ չեն ունենում:

- Իհարկե, կօգնենք,- միջամտեց Վարյան, բայց սպան ընդհատեց.

- Դա փող արժի:

- Հիմա մոտս փող չկա:

Սպան նայեց սառը աչքերով.

- Ուրեմն գնա այստեղից, եթե չկա:

Ուլյան շրջվեց ու վզից հանեց շղթայիկով շափյուղան: Սենյակի կիսախավարում քարն ավելի ուժեղ շողաց, քան երազում:

- Կե՞ղծ է: Չէ, կարծես իսկական է,- քրթմնջաց փեսացուն՝ ատամին տալով քարը:- Վերցնենք, հա՞, Մատրյո՛շա: Լա՛վ, հայրիկին կասեմ ընդունի քեզ: Նստիր այստեղ Նաստյայի հետ: Որ սկսի մղկտալ ու վերջին ժամանակներով վախեցնել, ականջ չդնես նրա դատարկաբանությանը:

Բնակարանի տերը հարբած էր: Կռացել ու ծերացել էր մի քանի ամսում, ասես տարիներ էին անցել, ուռած աչքերը առանց որեւէ արտահայտության նայում էին Ուլյային: «Հը՞, նմանա՞կն է»՝ դարձավ Նաստյային, բայց աղջիկը միայն կախեց գլուխը: Իսկ բնակարանի տերը վերջապես ճանաչեց Ուլյային, ու նախկին քնքշության պես մի բան լսվեց նրա խուլ, երերուն ձայնի մեջ:

- Բա՞ն է պատահել, ուլի՛կ:

Ուլյան կակազելով, արագ-արագ, բառերն ու արցունքները կուլ տալով՝ սկսեց պատմել, բացատրել, խնդրել, ու թվում էր նա հիմա կգրի իր երկտողը՝ «սիրալի թանգագին օգնի», եւ ինքը կշտապի բանտապետի մոտ, որը բաց կթողնի ոչ միայն Սավելիին, այլեւ բոլոր անարդար դատապարտվածներին ու յուրաքանչյուրին նոր տուն կնվիրի, բայց նա, ում դիմել էր, օրորեց գլուխը.

- Հա՛, հիշում եմ: Ջղայն պարոն էր: Հարձակվեց վրաս ու ասեղ էր թափ տալիս քթիս տակ: Անմահ Կաշչեյի նման: Մենամարտի էր կանչում:

- Ձե՞զ:

- Քեզ, ասում է, կարելի է միայն ազնիվ մենամարտում սպանել: Առաջարկում էր, որ զենք ընտրեմ: Խավարի ասպետ էր կոչում: Մարդագազան: Ասում եմ՝ վերջացրո՛ւ, ա՛յ պարոն, ի՞նչ մենամարտ գեղջուկի հետ:

- Նա խելագար է, երեւակայող, գրող, ռոմանտիկ: Բաց թողեք նրան, խնդրում եմ: Նրան բանտ չի կարելի:

- Իսկ ո՞ւմ է կարելի: Չէ՛, ես վաղուց եմ նրան ներել: Բոլորին եմ ներել, բոլորին, որ ատում են ինձ, հարյուր տարի գլխանց եմ մեղքերին թողություն տվել: Բայց էստեղ իշխանություն չունեմ, Ո՛ւլյուշկա: Ես չեմ որոշում՝ ում ու ինչի համար նստացնեն: Գուցե մենակ մայրիկը օգնի: Բայց նրան չեմ խնդրի:

- Ինչո՞ւ:

- Դատարկ բան է, բա՛նտ: Մեկ է, ուր որ է բոլորին բանտերից կթողեն, հետո նորերին լիքը կհավաքեն: Ո՞ր մեկի համար խնդրես: Հը, փեսաս դուրը դեկա՞վ:

Ուլյան անորոշ թոթվեց ուսերը:

- Սրիկայի մեկն է, բայց էստեղ էլ իշխանություն չունեմ: Ոտը դեմ է արել, սիրում եմ որ սիրում եմ: Առաջ լիներ, «սիրել» ցույց կտայի դրան: Պետք չէր աղջիկներին բերել էստեղ: Մութ տեղ է դառել, վատ տեղ: Դպիր Ֆոմկան էլ՝ մի ուրիշ փորձանք: Կպչում ու կպչում է, պոկ չի գալիս: Ցխուր եմ, հարազա՛տս: Զզվել եմ ամեն ինչից: Ծուտով կգնամ: Վերջերս մի սրբահայր գիտե՞ս ինչ է ասել իմ մասին:

- Ի՞նչ:

- Սպանել է պետք, ասել է, սարդի պես, քառասուն մեղք կքավեք:

- Բայց ինչպե՞ս կարող էր սրբահայրն այդպիսի բան ասել,- հառաչեց Նաստյան ու լաց եղավ:

- Ուրեմն կարող էր: Ինքը գիտի: Հեռուն է տեսնում էդ սրբահայրը,- ինչ-որ բան հիշեց նա:- Ուրեմն կսպանեն, եթե օրհնությունը կա: Էնպես որ, թող քո պայծառափայլ ասպետը չտխրի: Էնպես կսպանեն, որ էդ երազողը չի էլ երազել: Մեղավոր մարմինը հողով, ջրով, կրակով ու օդով կանցկացնեն, ու հետք չի մնա նրանից: Մենակ թե ավելի լավ է ինձ էդ անքիթ կնիկը սպաներ, քո իրեք մատնանի ձեռնածուն, ավելի լավ է անիծյալ Իսիդորկան, քան պարոնները... Վատ է, երբ որ Ռուսիայում պարոններն են գեղջուկ սպանում, էն էլ անհավատներին օգնության կանչելով... Իսկ դու լաց մի լինի,- Նաստյային դարձավ նա:- Քեզ կտանեմ հետս: Միասին ողորմություն կհավաքենք:

- Ախր, ի՞նչ մեղքեր ունեք դուք:

- Գնա՛, Ուլյա՛նա, գնա՛, մի լսի մեզ ու ոչ մի բանից մի վախեցի: Արի մի բան ասեմ:

Նա կռացավ աղջկա վրա, մի քանի բառ շշնջաց, հետո ձեռքը տարավ գրպանն ու նրան տվեց շափյուղան:

- Ա՛ռ, հետ վերցրու քո քարը: Բարի քար է: Պիտի որ թանկ լինի:

- Թանկ է:

- Դե, գնա, Աստված քեզ հետ: Մեկ-մեկ էլ հիշի ինձ ու չհավատաս իմ մասին լսածներիդ:

Ուլյան աստիճաններով վազեց ներքեւ ու իջնելիս քիչ էր մնում բախվեր դիմաքողով մի տիկնոջ, ու միայն փողոց դուրս գալով՝ հասկացավ, թե ով էր, եւ աղետի կանխազգացումը պատեց Ուլյային: Վազել հե՛տ, զգուշացնե՛լ նրան, ումից հենց նոր բաժանվել էր, բայց ոտքերը չէին ենթարկվում, ասես նորից կաթվածահար էին եղել... Եվ նա այդպես էլ մնաց աղջկա հիշողության մեջ՝ մոլորված, հոգնած, հալածված ծերունի, որ մինչեւ վերջ

հավատարիմ մնաց իր թագավորին ու թագուհուն, երբ բոլորը դավաճանել էին: Եվ երբ որոշ ժամանակ անց անգեն, զգուշությունը մոռացած, իրեն չարչարողներին վստահած ծերունուն մահացու խոշտանգեց, ապա ամենահուսալի եւ անազնիվ կերպով գնդակահարեց ուղիղ մազաբաժանով ու թեթեւակի ցցված աչքերով բարետես անգլիացի ջենտլմենը,- ինչի մասին, ի դեպ, ոչ ոք չիմացավ, բայց փոխարենը՝ բոլորը սկսեցին հորինել եւ իրար լեգենդներ պատմել արիստոկրատների դավադրության ու սոդոմականների վրեժի, ցիանական կալիումով կարկանդակների ու հառնող, արնաթաթախ մեռյալի մասին,- Ուլյան չցնցվեց: Չուրախացավ ու չցնծաց, ինչպես շուրջբոլորը՝ փողոցներում, կայարաններում, Աստծո տաճարներում, ազնվականների ակումբներում ու սպայական ժողովներում՝ շամպայն պահանջելով ու հնչեցնելով «Աստված, պահպանիր թագավորին» օրհներգը: Բայց եւ չկսկծաց հոգով, ինչպես կսկծում ու նրա ետեւից Նեւայի սեւ ջրի տակ անցավ վաճառականի դուստր Անաստասիան:

Ուլյային այդ մահը օրինաչափ, անխուսափելի էր թվում, որը ծերունին կանխագուշակել էր, որին ընդառաջ էր գնում եւ ընդունեց նույն հանգստությամբ, որով մեռնում էին գեղջուկներն ու զինվորները: Միայն մարտին, երբ թերթում կարդաց, որ մարմինը հանել են հողից, վառել ու մոխիրը քամուն տվել, դա՛ռը, դա՛ռը լաց եղավ նրա համար:

9

Բայց դա արդեն լրիվ ուրիշ ժամանակ էր: Եվ արցունքներն արագ չորացան ու ցավն էլ անցավ: Հեղափոխության ամսին Ուլյան դարձավ տասնութ տարեկան, եւ չնայած վատ էր սնվում ու քիչ էր քնում, բնությունն իրենն անում էր. գիմնազիական զգեստը նեղում էր, միայն մարմինը չէր դուրս թռչում, այլեւ հոգին, եւ ոչինչ չէր կարող խանգարել աճին: Հեղափոխությունը նրան կրակ էր թվում, օրենքներից դուրս, դեգերող գիսաստղ, որի պոչի մեջ հեշտ ու ցնծագին կարելի է վառվել: Հեղափոխությունը ճշգրիտ համընկավ Ուլյայի երիտասարդությանը՝ իր հետ բերելով քամի, ազատություն ու թեթեւություն: Այդ քամին քշում էր նրա հոգին, Ուլյան գնում էր բոլոր հանրահավաքներին ու ցույցերին, որոնք անասելի դուր էին գալիս նրան. դուր էր գալիս բարձրահասակ, կռունկի նման Կերենսկին, հեղափոխական ճառերը, բազմահազարանոց երթերը, դրոշները, կարգախոսները, դիմանկարներն ու մարդկանց եղբայրացումը: Սիրում էր նայել ոգեւորված, ծփացող ու ապշեցուցիչ հնազանդ մարդկային ծովին, որը կառավարում էր ինչ-որ

մեկի հրաշագործ պայծառ կամքը: Ամբոխի գվվոցը երաժշտության պես էր հնչում ականջներում, եւ անհարմար էր հիշել, թե այդ հրապարակում ինչպես էր ուզում մեռնել հանուն ցարի, թեկուզեւ ինքը միակը չէր, եւ այն նույն մարդիկ, որ ժամանակին պատրաստ էին հոգի տալ թագավորի համար, հիմա կարմիր ժապավեններ կպցրած ցնծում ու շնորհավորում էին իրար, որ արյունարբու միապետն այլեւս չկա, ու նրա հետ միասին չքվել է այն դավաճանական մութ ուժը, որ քամում էր Ռուսաստանն ու թույլ չէր տալիս հաղթի պատերազմում: Եթե այն ժամանակ բոլորը խաբված ու կուրացած էին նախկին իշխանության կողմից, ապա հիմա սկսել էին տեսնել, ազատագրվել էին, եւ հաղթանակը շատ մոտ էր թվում: Հառնած Ռուսաստանի ազատ քաղաքացիներին մի փոքրիկ քայլ էր բաժանում հաղթանակից, տոնախմբության համար ամեն ինչ պատրաստ էր՝ սեղանները գցած, պատերը՝ զարդարված, հյուրերը՝ կանչված, ու նվագախմբերը՝ հրավիրված, միայն տանտերն էր ուշանում, իսկ այդ ընթացքում խանութներում չգիտես որտեղից նորից հաց հայտնվեց, ժողովուրդը հերթ էր կանգնում թերթերի ու թղթե ծաղիկների համար, որ զինվորները կպցնում էին կրծքին:

Վիճում էին Ռուսաստանի ապագա կառուցվածքի շուրջ, եւ Ուլյան, իհարկե, հանրապետության կողմն էր: Սիրեց «ընկեր» բառը, որով սպաները դիմում էին կառապաններին, իսկ օրիորդները՝ գործակատարներին, «Մարսելյոզ» ու «Ինտերնացիոնալ» էր երգում ուսանողների ու կուրսիստկաների հետ, մասնակցում հեղափոխական զոհերի հուղարկավորությանը Մարսի դաշտում, ծաղիկներ էր գցում առաջնորդների մեքենաների մեջ, իսկ երբ մի անգամ փողոցում տեսավ ինչ-որ տեղ շտապող Մատրյոնային ու Վարյային, անցավ հակառակ մայթը: Ուլյան չէր կարող ասել իրեն, թե ինչու այդպես վարվեց, սակայն բնազդով զգում էր, որ այդ հանդիպումը տհաճ, ավելորդ եւ անիմաստ կլիներ թե իր, թե նախկին աշակերտուհիների համար: Քույրերը մնացել էին նախորդ կյանքում, իսկ ինքը քնությունը հանձնել ու տեղափոխվել էր հաջորդ կյանք, եւ մի անգամ միայն Ուլյային շփոթության մատնեց ոչ ծեր, բայց շատ վատ հագնված մի մուրացկան կին, որը հայհոյում էր զինվորներին, թե մոռացել են եւ՛ երկրային, եւ՛ երկնային թագավորին: Ինտելիգենտներին մուրացկանուհին չէր հայհոյում,- ի՞նչ պահանջես նրանցից,- հայհոյում էր հասարակ մարդկանց, եւ Ուլյայի սիրտը ճմլվեց զինվորների թեւքերից ու փեշերից կառչվող այդ խելագար կնոջը տեսնելով: Կնոջ հայացքը հանդիպեց Ուլյայի աչքերին, եւ աչքերը լայնացան, մթնեցին, ուզում էր ինչ-որ բան ասել, բայց հաջորդ պահին ամբոխը բաժանեց նրանց:

- Պիտիրիմկային են տանում, միտրոպոլիտին:

Նեւսկի պողոտայով, մոխրագույն բաց մեքենայով, հրացանավոր ու քմծիծաղող նավաստիներով շրջապատված, անցնում էր մի վշտահար մարդ՝ երկար ճերմակ մորուքով, սպիտակ վեղարով ու փարաջայի կրծքին կախած շքանշաններով: Ուլյան հանձին նրա ճանաչեց Գորոխովայա եկած մարդուն: Միտրոպոլիտն աչքերը չէր բարձրացնում եւ նման էր ճահճուտն ընկած ու շնաճանճերից կծոտված որմզդեղնի: Ամբոխը գոռում, գոչում ու թքում էր:

- Գրիշկայի պո՛չ: Ամո՛թ:Կորչի՛:

Բոլորից բարձր գոռում էր կրծքին կարմիր ժապավեն կրող մի մոնթ, եւ ծերունին նրա հայացքին հանդիպելով՝ ավելի կախեց գլուխը, իսկ շրթունքները դողում ու ցնցվում էին:

Ուլյան մի քանի օր ամբոխի մեջ փնտրեց մուրացկան կնոջը, բայց այդպես էլ ոչ մի տեղ չգտավ, փոխարենը՝ մի անգամ հանրահավաքին տեսավ մադամ Միլլերին:

Առաջին պահ վախեցավ. հեղափոխությունը՝ հեղափոխություն, բայց գիմնազիայում կարգերը ոչ ոք չէր փոխել ու գիմնազիստուհիներին հանրային հավաքներին մասնակցելու իրավունք չէր տվել, բայց տնօրինուհու դեմքն այնքան տխուր էր, որ աշակերտական վախն անցավ, եւ Ուլյան ինքը մոտեցավ նրան:

- Ինչ անժամանակ եղավ այս ամենը, մադմուազե՛լ,- աղջկա թիկունքում ինչ-որ տեղ նայելով՝ մրմնջաց մադամ Միլլերը:- Մի քիչ մեծ լինեիք կամ, հակառակը, ավելի փոքր: Իսկ այսպես՝ ուղիղ գազանի երախն եք մտնում:

- Ես պատահմամբ եմ այստեղ, այս կողմերով էի անցնում,- համենայնդեպս արդարացավ Ուլյան:

- Եվ ոչնչով արդեն ձեզ չես կանգնեցնի: Ոչնչո՛վ: Մինչեւ ձեր գլուխը չջարդեք: Ինչ արագ փոխվեցիք,- գլուխն օրորեց տնօրինուհին ու լրիվ անգույն ձայնով ավելացրեց:- Իսկ ես շուտով մեկնում եմ:

- Ո՞ւր:

- Չգիտեմ: Հեռու: Հնարավոր է՝ Ավստրալիա:

- Իսկ գիմնազիա՞ն: Չէ՞ որ ասում էիք՝ ձեր ողջ կյանքի իմաստն է:

- Ասում էի: Շատ բան էի ասում,- դառնությամբ գլուխն օրորեց մադամ Միլլերը:- Բայց շուտով այստեղ ոչ մի գիմնազիա չի լինի: Եվ ձեզ, մադմուազե՛լ, կթվա, թե այն ամենը, որ ձեզ սովորեցրել են, այլեւս ավելորդ է ու ձեզ պետք չի գա: Բայց այդպես չէ: Ինչ էլ որ պատահի, ոչինչ չմոռանաք, եւ ապրե՛ք, ապրե՛ք, իսկ ինձ ներեցեք խրատաբանության համար:

- Նա էլ նույնն էր ասում,- հանկարծ ասաց Ուլյան:- Որ ապրեմ ու չվախենամ կյանքից:

- Ո՞վ:

- Նա: Որ սպանեցին,- Ուլյան կախեց գլուխն ու կամացուկ ավելացրեց:- Ում մոտ այն ժամանակ իմ պատճառով գնացել էիք:

Մադամ Միլլերի դեմքը ջղաձգվեց:

- Դրան ավելի շուտ պիտի սպանեին,- խռպոտ ճչաց տնօրինուհին:- Սպանել, իսկ սպանողներին երեսանց պատժել ու գաղտնի ազատել՝ պարգեւատրելով: Ասում էի, չէ՞, ասում էի՝ այս ամենը նրա պատճառով է, նրա՛: Այս խելագարությունը, այս անեծքը, ստորությունը, տականքությունը. Նա բացեց այս ամենի ճանապարհը:

- Ինչո՞ւ եք այդպես ասում: Դուք բոլորովին չեք ճանաչում նրան,- հանդիմանությամբ ասաց Ուլյան:

- Ես նրա գործերով եմ դատում:

- Նա ոչ մի վատ բան չէր ուզում: Նա...

- Ի՞նչ տարբերություն՝ ինչ էր ուզում,- կտրեց մադամ Միլլերը:- Տե՛ր Աստված, սա ի՛նչ փորձանք է: Ողջ էր՝ վատ էր, մեռավ՝ ավելի վատացավ: Եվ թագավորն ու թագուհին երեխաների հետ զնդանում են նրա պատճառով: Նրա մեղքերն են քավում: Եվ ամբողջ արյունը, որ այստեղ կթափվի, նրա վրա է: Ու վախենամ, որ ձեզ էլ աղտոտի, մադմուազե՛լ,- ավելացրեց նա ու հետ քաշվելով Ուլյայից, ճանապարհը չտեսնելով, կույրի պես խփվելով անցորդներին՝ քայլեց փողոցով:

Իսկ Ուլյան այդպես էլ մնաց կանգնած՝ ափսոսանքով ու տխրությամբ, բայց առանց կշտամբանքի նայելով տնօրինուհու ետեւից: Չէր հասկանում նրա տագնապներն ու վախերը: Լիտեյնի պողոտայի գիմնազիայի վերջին դասարանի աշակերտուհին ոչ թե պարզապես հավատում էր, այլեւ ստույգ գիտեր, քննական առարկաների պես, որ բոլոր զոհերն արդեն տրված ու մեղքերը քավված են, եւ շուտով Ռուսաստանում ամեն ինչ լավ կլինի, կվերադառնա հայրն, ու կսկսվի նոր կյանք: Նորացած, մաքրված ամենայն կեղծից, զառամից, պայմանականից ու անզորից: Եվ կրկին կլինեն Ծելոմն ու Վիսոկիե Գորբունկին, կրկին կլինի սրընթաց վազքը խոտհարքերով, բայց հիմա արդեն հաստատ առանց Ալյոշայի: Ալյոշան դառը կորուստների ցուցակում էր այլեւս, ինչպես մարդիկ կորչում են փոթորկի կամ երկրաշարժի ժամանակ, բայց ողջ մնացածներն ավելի մոտ ու հարազատ են դառնում իրար:

Իր մյուս ընկերոջ մասին Ուլյան ոչինչ չգիտեր, բայց առաջվա պես չէր

տխրում նրա բացակայությունից: Նա ասես ազատել էր աղջկան կամ էլ,- ճիշտ էր նրա գործնական կին-ընկերուհին,- վերցրել էր, ինչ կարելի էր վերցնել, բայց Ուլյան իրեն վիրավորված, կողոպտված, պարպված չէր զգում:

Մի անգամ թերթում կարդաց, որ հեղափոխության շնորհիվ ցարական բանտից ազատված նշանավոր վիպասան Սավելի Կրուգը Արկտիկայի հետազոտող Ռուդոլֆ Կազակեւիչի հետ հապճեպ «Ազատություն» վերանվանված «Արքայազն Ալեքսեյ» նավով գիտարշավի է մեկնել Հյուսիսային բեւեռ: Ավելի մեծ հակադրություն, քան հարավցի Կրուդն ու Հյուսիսային բեւեռը, անհնար էր պատկերացնել: Բայց թերթը տպել էր չսափրված, նավապետական շքագլխարկով Սավելիի լուսանկարն ու կարճ խոսքը.

«Ես ընդմիշտ մեկնում եմ դեպի անհայտություն, որպեսզի չտեսնեմ հաստատապես լինելին: Բարի մնացեք բոլորդ, որ այդպես էլ չլսեցիք ինձ»:

Ուլյան այդ բառերը կարդաց որպես թաքուն կշտամբանք կամ փախուստի վերջին հրավեր, բայց ոչ մի լեռնային, հեռավոր երկիր մեկնել չէր պատրաստվում: Այնքան աներեւակայելի ու նոր բաներ էին կատարվում, որ Ուլյան մոռացավ իր երազկոտ ընկերոջ մասին, եւ միայն երբեմն ինչ-որ դող էր պատում նրան, ու թվում էր՝ հեռվից լսում է Կրուդի զանգակների ձայնը, եւ այդ ժամանակ թեթեւ տխրությամբ նայում էր երկինք ու քարանում, իսկ հոգում ափսոսանք էր արթնանում, բայց արագ էլ անցնում էր: Գարնանը մի քանի անգամ էլ թերթերում կարճ թղթակցություններ կարդաց, որ «Ազատությունը» լողում է դեպի Ֆրանց-Իոսիֆի երկիր կղզին, ու նախատեսված է, որ աշնանը կվերադառնա Մուրմանսկ, իսկ հետո նավի մասին հրապարակումները դադարեցին:

Ուլյան հիմա ավելի հաճախ Լեգկոբըտովին էր տեսնում: Հեղափոխությունից քիչ առաջ Պավել Մատվեեւիչը բնակություն էր հաստատել Պետրոգրադում՝ Վասիլեյան կղզում: Աշխատում էր մի մեծ լիբերալ թերթի խմբագրությունում, պենսնե էր կրում ու գրում թանկարժեք գրիչով, բուժել էր ատամներն ու այլեւս չէր խոսում ո՛չ որսորդության, ո՛չ շների, ո՛չ կորցրած կանանց կամ էլ աղանդավորների մասին, փոխարենը՝ հաճույքով դատողություններ էր անում Ժամանակավոր կառավարության մինիստրների, հողային ռեֆորմի շուրջ ու պնդում, որ գյուղերում ամենաակտիվ տարրը քրեականներն են:

- Գորբունկիում քիչ էր մնում սպանեին հայր Էրոսին: Խեղճը այդպես էլ հետ չսովորեց իր աղոթքներում թագավորին ու ողջ օգոստափառ ընտա-

նիքը հիշատակելուց: Պետք է ասեր «ի փառս բարեշնորհ Ժամանակավոր կառավարության», բայց այդ տեղին հասնելով՝ լռվում էր ու շարունակում հին ձեւով՝ «ի փառս բարեշնորհ թագավոր կայսեր»: Իսկ շուրջը ժողովուրդը հավաքվում ու ստուգողական մաղթանք էր պահանջում: Մի օր կմորթեն ոչխարի պես: Ու ոչ մեկը չի հիշի՝ պատերազմից առաջոնց երաշտից փրկեց գյուղը: Իսկ իշխան Լյուպայի կալվածքում գեղջուկները փետրահան արեցին սիրամարգին ու բաց թողեցին՝ տկլոր ման գալու: Սարսափելի, վայրագ, մութ ժողովուրդ: Բայց ուրիշ ինչպիսի՞ն պիտի լիներ, եթե ինտելիգենցիան առաջինը վախեցավ ու փախավ: Եթե գեներալները դավաճանեցին ցարին: Մեր հովվապետերն էլ: Ահա, պատասխանեք ինձ, հավատացյալ ռուս կի՛ն, դուստր ուղղափառ եկեղեցու,- տրտում Վերա Կոնստանտինովնային դարձավ նա:- Մեր իշխանական տերտերներից կամ պետերից գոնե մեկը պաշտպան կանգնե՞ց թագավորին: Մի բարի խոսք ասա՞ց: Գնահատե՞ց նրա սխրանքը: Նրա կամավոր ու մեծ զոհողությունը: Չէ՛, մեկը համենայնդեպս միջամտեց: Եվ գիտե՞ք՝ ով: Սարատովի եպիսկոպոսը, որին ցարը տասներեք թվին հրամայել էր աքսորել Ժիրովեցկի մենաստան: Միայն նրա մեջ արթնացավ խիղճն ու խիզախությունը: Իսկ մնացածը կամ լռում են, կամ ցույց են անում: Ձեր Ֆոմկան էլ է հանրահավաքներում ուղղափառ հեղափոխություն պահանջում, եկեղեցու բարեփոխում, վայ թե աչքը պատրիարքական գահին է: Մի՞թե ողջ եկեղեցին արժանապատվությունը մոռացավ մի անմեղ սպանված աղմկարար գեղջուկի պատճառով, որի մասին ոչ ոք կարգին չգիտի էլ՝ ինչ է եղել իրականում եւ ինչով է մեղավոր: Հենց իրենք էին բարձրացրել նրան, իրենք էին ցարի մոտ տարել, իսկ հիմա, փոխանակ ամաչեն, մեղա գան ու թողություն խնդրեն, աղոթեն նրա հոգու համար, առաջինն են քար նետում նրա վրա, ասես իրենք անմեղ են: Բոլորը ամոթը կորցրել են:

Վերա Կոնստանտինովնան կտրվում էր իր կարուձեւից, կարճատես անվրդով հայացքը հառում Պավել Մատվեեւիչին ու ոչինչ չէր պատասխանում: Բայց Լեգկոբըտովը պատասխանի չէր էլ սպասում: Խոսում էր ու ոչինչ չէր լսում: Թվում էր՝ հեղափոխության համար եւ՛ ուրախ է, եւ՛ ոգեւորված է, եւ՛ շփոթված, եւ Ուլյային էլ երկվությամբ ու տարօրինակ էր նայում՝ բարեկամաբար ու վավաշոտ միաժամանակ: Մորուքն ու մազերը խուզած, ջահելացած, քաղաքային պայմաններում մի տեսակ նոր ու անսովոր՝ գալիս էր Լիտեյնի, թունդ տաք թեյ խմում՝ կոնֆետներով, որ հենց ինքն էլ բերում էր, ու պատմում նորությունները: Նորություններն այնքան շատ էին, որ Պավել Մատվեեւիչը մի կերպ էր հաղթահարում:

Նրա տված անուններից Ուլյայի գլուխը պտտվում էր, ու մտածում էր, թե ինչ աներեւակայելի բախտ է, որ ապրում է հեղափոխության ժամանակներում: Այն ամենը, որ կուտակվել, խտացել էր ռուսական օդում նախորդ տարիներին ու տասնամյակներին, այն ամենը, որ ճնշում, տանջում էր նեխածությամբ ու հեղձուկով, չլուծված հարցերով, արգելքներով, վիրավորանքներով, կյանքի անհնարինությամբ, վերջապես պայթեցրել էր պատնեշներն ու, կենդանի, ազատագրված, շողշողուն, աղմկոտ հորդել էր փողոց՝ ճանապարհին սրբելով անիմաստը, մանրը, պատահականը: Այդ ամիսները հատուցումն էին նրա ողջ տխրության, շփոթմունքի, վիատության, հուսահատության: Ուլյան երջանիկ ժպիտով դրա մասին ասում էր Պավել Մատվեեւիչին, որը հաճույքով համաձայնում ու հիանում էր նրանով, եւ միայն Վերա Կոնստանտինովնան էր խուսափում շելոմյան վաղեմի զբոսանքների իր ուղեկցից, որը չէր էլ ուզում զրուցել նրա հետ: Լեգկոբըտովի ողջ ուշադրությունը հիմա նախատեսված էր ուրիշի համար: Ամրակազմ, պատկառելի տղամարդը Ուլյային հրավիրում էր սինեմա, կարկանդակ հյուրասիրում եւ ուղեկցում տուն, ասես արդեն նրա փեսացուն լիներ: Եվ Ուլյան չէր հասկանում՝ ինչ անի:

Եթե չլիներ հեղափոխությունը, երբեք չէր համարձակվի Նեւայի պողոտայով թեւանցուկ քայլել տղամարդու հետ, որը քիչ է հոր տարիքին էր, նաեւ մտերիմ էր հոր հետ, կին ու երեխաներ ուներ, ինքն էլ ժամանակին սիրահարված էր նրա խորթ որդուն: Բայց հիմա ամեն ինչ կարելի էր: Ուլյան իրեն ավելի մեծ, հասուն ու իմաստնացած էր զգում, ավելի խուլ ու կտրուկ էր հնչում ձայնը, խորհրդավոր էին առկայծում աչքերը, եւ սեփական ծիծաղն էլ սուր ու օտար էր թվում: Չգիտեր՝ Լեգկոբըտովն իրեն դո՞ւր է գալիս, թե ոչ, բայց դուր էր գալիս, որ ինքը դուր է գալիս նրան, որ կարող է հետաքրքիր լինել այդ խելացի, շատ բան տեսած, խոր, հարուստ կյանքով ապրող մարդու համար: Լեգկոբըտովը նրան անիրականալի ոչինչ չէր խոստանում, ընդհանրապես ոչինչ չէր խոստանում, երբեմն հեգնոտ ու նույնիսկ կոպիտ էր լինում, ծաղրում էր աղջկա խոսքի սխալները, թերիմացությունը, պարզամտությունը, մանկական հետաքրքրասիրությունը, բայց այդ անտառային մարդու մեջ մի բան կար, որ ձգում էր աղջկան ու ստիպում էր ներել բոլոր վիրավորանքները:

Ուլյան նույնիսկ հագնվում էր այնպես, որ ոչ թե երեկվա գիմնազիստուհու, այլ երիտասարդ տիկնոջ տեսք ունենա: Երկար կանգնում էր հայելու առաջ՝ մեկ այսպես, մեկ այնպես հավաքելով մազերը, հետո արձակում ու ամուր հանգույց էր անում, նեղսրտում էր պեպեններից, չնայած հիմա

դրանք դեմքին առավել ջերմություն ու նրբություն էին տալիս, փորձում էր ունեցած մի քանի շորը, երազում նորերի մասին ու մտածում՝ չակնարկի՞ Լեգկոբընտովին, որ օգնի թարմացնել զգեստապահարանը, կամ էլ ոսկե ժամացույց նվիրի իր անվանակոչության օրը, բայց սրտի խորքից տարօրինակ կերպով դուրս լողացին կին-մանեկենների մասին Կրուդի բառերը:

«Մի՞թե ես էլ եմ այդպիսին դարձել»:

Երբեմն Ուլյայի մտքով անցնում էր Պավել Մատվեեւիչին պատմել եւ՛ Կրուդի մասին, եւ՛ որսորդի սիրեցյալի, բայց ինչ-որ բան խանգարում էր, ասես հիմա ավելորդ լիներ այդ ամենը, եւ Ուլյան զգում էր, որ ինչ-որ տարօրինակ վեպի բոլոր թելերը հավաքվել են իր ձեռքում, եւ իրենից է կախված՝ ուր կգնա այդ վեպը: Բայց այդ կինն այնտեղ այլեւս հարկավոր չէր: «Ինչպես էր ասո՞ւմ՝ «Արձակ դաշտերի աչքերը սուր են, մթին անտառի ականջն՝ ավելի, մեռած երազանքը թույն է դառնում... Ահա, ուրեմն, ոչ մեկի երազանքները պետք չէ թունավորել...»:

Պավել Մատվեեւիչին պատմեց միայն Գորոխովայա փողոցի մասին:

- Ուրեմն ծանո՞թ էիր նրա հետ,- գոչեց Լեգկոբընտովը:- Իսկապե՞ս: Ա՜խ, եթե ինձ էլ ծանոթացնեիր: Ափսո՛ս... Որքան կուզեի հանդիպել նրան, հարցնել, իմանալ... չհասցրի...

- Չեմ կարծում, որ ցանկանար հանդիպել ձեզ հետ:

- Ռ-վի հետ ցանկացել էր,- ասաց Լեգկոբընտովը, եւ ատամները կրճտացին:

Եվ Ուլյան հիշեց, թե ինչպես էր մի անգամ Գրոխովայա եկել ժամանակին Նեւսկի պողոտայում հանդիպած շեկ մորուքով անբարետես մարդը, անընդհատ ծխում էր, երկար դատողություններ անում, համոզում, բորբոքվում, բարկանում, վիճում եւ ի պատասխան իր առարկությունների լսեց. «Ով գիտի Աստված ինչպես է տնօրինում մեզ եւ ինչի համար է ստեղծել: Այ դու աշակերտ ունեիր, վռնդեցիր, քեն ես քշում վրան: Ինքն էլ քո վրա: Իրար ներել չեք կարողանում: Ու կարող է պատահի, որ նա հետո հոգա քո մասին ու գերեզմանդ պահպանի»:

- Գերեզմանդ պահպանի՛,- երանությամբ կրկնում էր Պավել Մատվեեւիչը՝ դա որպես հանձնարարություն ընդունելով:- Եվ ուրիշ ոչի՞նչ:

- Ոչի՛նչ:

10

Ամռանը Վերա Կոնստանտինովնան Իլյա Իլյիչ ռուսական անունով մի ֆիննից էժան գնով ամառանոց վարձեց Տոկսովում: Տեղավորվեցին կեռ դանակ հիշեցնող ոչմեծ լճի հենց ափին: Տագնապալի ժամանակներ էին, բայց Ուլյան ոչինչ չէր նկատում: Գլուխը պտտվում էր լճից եկող խոնավությունից, մշուշներից ու թռչունների դայլայլից, ուզում էր լացել պատանության անուշ արցունքներով, երբեք այդպես լի ու խոր չէր ապրել՝ անակնկալ սիրո ու հրաշքի կանխազգացումով: Տեղը չէր կարողանում նստել, չէր կարողանում կարդալ, անվերջ մղվում էր ինչ-որ տեղ գնալու, երգելու, վազելու, մեկ էլ հանկարծ վրա էր հասնում երանելի թմրությունը, ներհայեցումը, մտախոհությունը. նրա պարմանի էության մեջ աղջնակը կռվում էր աղջկա հետ՝ մերթ հաղթելով, մերթ պարտվելով: Իսկ Վերա Կոնստանտինովնան, հակառակը, շփոթմունքի մեջ էր. Ցարսկոյե սելոյի հոսպիտալի փակվելուց հետո, երբ ցարական ընտանիքը կալանքի տակ առան, իսկ կաղոտն Աննուշկային փակեցին Նեւայի ամրոցում, սովոր կյանքը փուլ եկավ, եւ նա չգիտեր՝ այսուհետ ինչ անի, ինչպես ապրի: Ծերացած, տգեղացած՝ զգում էր, որ հավատն առ Աստված, որով ապրել ու փրկվել էր այդ բոլոր տարիներին, հեռանում է հոգուց, ինչպես ճաքած անոթից:

Քանի դեռ Գորոխովայա փողոցի աստվածավախ կանանց շրջանում էր, կրոնասեր էր, իսկ երբ նրանց բոլորին ցաքուցրիվ արին, հավատն էլ ցիրուցան եղավ, եւ սրտում կրկին բույն դրեցին նախկին թախիծը, վհատությունն ու հուսահատությունը: Նույնիսկ ավելի, քան առաջ, եւ ճնշում էին նրան, ասես չար ոգիները վրեժ էին լուծում այն ամիսների եւ տարիների համար, երբ նա իրենց չէր պատկանել: Սրբահոր սարսափելի, աղմկահարույց մահն էլ էր կասկած սերմանել հոգում. իսկ գուցե իսկապե՞ս արդարակյաց չէր այդ մարդը: Գուցե ճի՞շտ էին նրա արկածների, նողկանքի եւ անառակության մասին թերթերում ու էժանագին գրքույկներում գրող մարդիկ: Նաեւ անամոթ Աննուշկայի՝ նրա սիրեցյալի մասին: Իսկ գուցե ինքը աչքաթող է արել ինչ-որ բան, չի իմացել կամ չի զգացել: Կամ ավելի վատ՝ զգացել է, բայց հմայված, դյութված՝ չի հասկացել ինչ է զգում: Իրենն էր մեղքը, բայց վերադարձավ ու խփեց խորթ աղջկան, որ կորցրել է գլուխն ու ապրում է ինքնամոռացության մեջ: Իսկ եթե իսկապես այդ մարդը սարսափելի հիպնոսող էր, որն իրեն էր ենթարկել հիմար թագավորին ու անառակ թագուհուն: Մութ ուժերի առաքյալ, բոլշեւիկյան գործակալ, մասոն, գերմանական լրտես: Եվ հենց իր հետ էլ ի՞նչ էր կատարվում

Գորոխովայա փողոցում: Ո՞ւմ էր երկրպագում եւ ո՞ւմ էր ծառայում: Ո՞վ էր օրհնություն տալիս իրեն: Չէ՞ որ եթե հիմա ցանկացած գյուղական տերտերի պատմի կախարդի աչքերով մթին գեղջուկի մոտ իր ապաշխարության, մտքերի, ցանկությունների, վախերի մասին, տերտերը կնախատի, կստիպի մեղա գալ, մի տարով կզրկի հաղորդությունից ու ապաշխարություն կպարտադրի, եւ իրավացի կլինի:

Երեւի իսկապես պետք էր գնալ ու թողություն խնդրել, ու հենց այդպես էլ կաներ, եթե իրեն այն աստիճան դատարկված չզգար, որ ոչինչ չի ուզում: Միայն հոսպիտալում ծառայելու ժամանակը, երբ բուժքրոջ իր պարտականություններից բացի ուրիշ ոչնչի մասին չէր մտածում, Վերա Կոնստանտինովնան հիշում էր որպես ամենաերջանիկը կյանքում: Իսկ այն, ինչ տեսնում էր հիմա, սարսափեցնում էր նրան եւ ընտրություն, փնտրտուք ու պատասխան պահանջում՝ ինչպե՞ս ապրել, դեպի ո՞ւր, ինչի՞ համար, ո՞ւմ հետ:

Ամուսինը վաղուց եկած պիտի լիներ կռվից, բայց չէր գալիս ու չէր գրում: Վերա Կոնստանտինովնան արդեն չգիտեր էլ՝ ամուսին ունի, թե ոչ: Կար ժամանակ, որ շատ սուր էր զգում նրա բացակայությունը, տառապում էր, աղոթում նրա համար ու սպասում՝ պատկերացնելով՝ ինչ լավ կապրեն, երբ նա վերադառնա, բայց հիմա մեխանիկի կերպարը ջնջվել էր հիշողությունից, անհետացել զգացողություններից, եւ տարօրինակ էր մտածել, որ ժամանակին ինքը ամուսնացած կին է եղել, տանջվել է, զայրացել, բորբոքվել, ամուսնական անկողին կիսել, պահպանել հավատարմությունն ու հուսացել, որ նա կվերադառնա: Այդ ամենը ինչ-որ ուրիշ մեկի, իր հետ չի եղել, եղել է նախորդ կյանքում կամ ընդհանրապես չի եղել, բայց մի անգամ Տոկսովի ամառանոց եկավ մի անծանոթ, կարճահասակ, կոկիկ մորուքով քաղաքավարի պարոն, փող տվեց ու հակիրճ ասաց, որ Վասիլի Խրիստոֆորովիչը ողջ եւ առողջ է, բայց դեռ չի կարող գալ տուն, եւ, ընդհանրապես, երբեք չի կարողանա, եւ կինը, եթե ուզում է, կարող է կյանքը դասավորել ըստ իր հայեցողության՝ ամուսնանալ կամ մեկնել Պետրոգրադից: Եթե արտասահման է ուզում, ապա՝ արագ, որովհետեւ հետո կարող է չստացվել:

Վերա Կոնստանտինովնայի լացը գալիս էր, բայց զսպեց իրեն:

- Լա՞վ է,- կամացուկ հարցրեց նա:

Հյուրը կարճ մորուքը քաշքշելով ուշադիր նայեց նրան.

- Չի կարող լավ լինել: Ի՞նչ է, չգիտե՞ք:

- Կարո՞ղ եմ տեսնել նրան:

- Ո՛չ:

- Իսկ Յուլյա՞ն: Ի՞նչ անեմ նրա աղջկան,- ճչաց կինը:

- Դրա մասին ոչինչ չի ասել:

Երեկոները, երբ խորթ աղջիկը պառկում էր քնելու, Վերա Կոնստանտինովնան պասյանս էր բացում ու նայում՝ ինչ խորհուրդ կտան խաղաթղթերը: Գյուղով վտանգավոր մարդիկ էին անցնում, հարեւան գյուղում վառել էին կալվածատիրոջ դաստակերտը, հովեկներին առայժմ ձեռք չէին տալիս, բայց որոշ ժամանակից ի վեր Վերա Կոնստանտինովնան խուսափում էր նայել գեղջուկների ու գեղջկուհիների աչքերին, փոխարենը՝ թիկունքին զգում էր նրան անթարթ, ծանր հայացքները: Նախկին տարիներին հեշտ էր քնում, բայց հիմա ինչ-որ բան էր փոխվել գիտակցության մեջ: Վեր էր կենում լուսաբացից քիչ առաջ ու նայում ինչպես է լույսով լցվում առավոտը, ականջ դնում արթնացած թռչունների դայլայլին: Ինչ-որ բան չէր թողնում քնել, ասես պետք է արթուն մնար կյանքի այդ մնացած ժամերին, եւ քունը իրեն վախեցած գազանիկի պես էր պահում, մոտենում էր, բայց հերիք է Վերա Կոնստանտինովնան շարժվեր կամ որեւէ բան մտածեր, փախչում էր, թաքնվում, եւ նա ստիպված երկար պառկում էր, որ նորից մոտենա: «Երեւի շուտով մեռնեմ,- անտարբեր մտածում էր Վերա Կոնստանտինովնան:- Այ այսպիսի մի լուսաբացի: Անբուժելի հիվանդություն է բույն դրել իմ մեջ, զգում եմ: Մազերս հո հենց այնպես չեն թափվում: Բայց լավ է, որ կմեռնեմ: Վաղուց մեռնելու ժամանակն է»:

Այդպես փորձում էր իրեն ներշնչել, պատրաստում, համոզում էր, հիշում էր մանկությունը, ասես մի սարսափելի բան էր կատարվել նրա հետ, մեկը կերել էր նրա կյանքը, ու դեռ երեսունհինգը չբոլորած՝ ծեր կին էր, որ ապրում էր շատ վաղուց, ու պառավի պես էլ ավելի շատ ժամանակ անցկացնում մեռածների, ոչ թե ողջերի հետ:

Գյուղից ոչ հեռու ֆիննական գերեզմանոց կար: Վերա Կոնստանտինովնան սիրում էր գնալ այնտեղ: Երկար նայում էր անծանոթ մարդկանց կոկիկ շիրիմներին, կարդում խաչերի գրերը, մտածում այդտեղ պառկածների ճակատագրի մասին՝ երջանի՞կ են եղել իրենց կյանքում, թե՝ ոչ, ուրախությա՞մբ, թե դառնությամբ են հեռացել եւ ի՞նչ սփոփանք են ստացել այն կյանքում: Պարպված սիրտը լցվում էր կարեկցանքով, ու մտածում էր, որ շուտով ինքն էլ կամփոփվի բարձրուղեշ սոճիների տակ, նոսր խոտով այդ հողում, ու որեւէ կին կսկսի գալ այդտեղ, եւ նրա համար էլ նույնքան սփոփիչ ու անուշ կլինի, ինչպես հիմա Վերա Կոնստանտինովնայի համար:

«Ինչ լավ է, որ երեխաներ չունեմ: Ինձ կպահեին այստեղ, իսկ այսպես

լրիվ ազատ եմ զգում: Բայց ինչ իմաստուն է կարգավորված այս ամենը: Լաց էի լինում, գնում էի բժշկի, ինչ-որ վանականների մոտ, աղոթում, որ Աստված երեխա պարգեւի, իսկ հիմա ուրախանում եմ, որ մենակ եմ, ու ոչ ոք չի խանգարում մտածել մահվան մասին»: Հանկարծ մտածեց, որ այդ անծանոթ, հեռու, վաղուց մեռած մարդկանց ավելի ուժգին է սիրում, քան ներկաներին, եւ նրանք ավելի հետաքրքիր են, քան հարազատները: Վերա Կոնստանտինովնային գերեզմանոցն ավելի էր ձգում, քան մարդկանց բազմությունը, աղմուկը, երաժշտությունը, շողշողացող լույսերը, հսկա քաղաքը, որը ժամանակին այնպես գրավիչ էր թվում, իսկ հիմա այնտեղից աղոտ լուրեր էին գալիս սկիզբ առած ջարդերի, անկարգությունների, թափվող արյան ու մի խումբ սրիկաների՝ հեղափոխությանը դավաճանելու մասին: Եվ եթե Վերա Կոնստանտինովնան անտարբեր ու խուլ էր այդ լուրերի հանդեպ, ապա խորթ դուստրը բորբոքվում ու սրտմտում էր:

Հուլիսի վերջին Ուլյան «Նարոդնայա վոլյայում» կարդաց Լեգկոբըտովի ցասկոտ հոդվածը: Պավել Սատվեեւիչը այդ ամիսների ընթացքում դիտորդից վերածվել էր ժողովրդական տրիբունի: Ապշեցուցիչ էր: Մարդը, որին կարծես որսից, շներից, սագերից, բադերից ու հրացանից բացի ոչինչ չէր հետաքրքրում, վստահ ու կրքոտ գրում էր Ռուսաստանին սպառնացող բոլշեւիզմի մասին: Ուլյան լավ չէր հասկանում հատկապես ինչի էր կոչում եւ ինչ էր ուզում նա, բայց որքան աշունը մոտենում էր, այնքան սիրտը տագնապում էր, եւ ավելի հաճախ էր հնչում սարսափելի «բոլշեւիկներ» բառը:

Բոլշեւիկները կազմալուծել են բանակը, բոլշեւիկները հեղափոխության թշնամիներն են, բոլշեւիկները դավաճաններ ու լրտեսներ են, բոլշեւիզմը սարսափ է ու քաոս, ռուսական կյանքի մութ դարձերեսը, ռասպուտինականություն ու խլիստականություն: Եթե որեւէ գյուղում գեղջուկներն առավոտյան գնում են եկեղեցի, իսկ այնտեղից՝ կալվածատերերի տները վառելու, բոլշեւիզմ է, եթե կողոպտում ու սպանում են, բոլշեւիզմ է, եթե ահաբեկում ու ստում են, բոլշեւիզմ է:

- Նրանք բացարձակ անսկզբունք են: Գոռում են, թե ատում են կրոնը, բայց մոլեռանդություն ու անհանդուրժողականություն են դավանում: Նպատակին հասնելու համար օգտագործում են բոլորին ու յուրաքանչյուրին, այդ թվում՝ իրենց ամենաոխերիմ թշնամիներին: Ահա, խնդրեմ, օրինակը: Պատերազմից անմիջապես առաջ բանտից փախուստ կազմակերպեցին եւ արտասահման տեղափոխեցին ոմն աղանդավոր Իսիդոր Ճչետինկինի: Իսկ հիմա այդ պարոնը վերադարձել է Ռուսաստան ու հարցազ-

րույցներ է տալիս՝ սոխակի պես գեղգեղալով, թե ինչ տառապանքներ է կրել անիծյալ ցարական ռեժիմի օրոք, եւ գովազդում է իր անամոթ ու այլանդակ գրքույկը, որտեղ գրում է, թե թագուհին անհավատարիմ էր ամուսնուն ու գեղջուկից տղա է վաստակել: Թվում է՝ բոլշեւիկներն ի՞նչ ընդհանուր բան կարող էին ունենալ այդ ավազակի, նախկին սեւհարյուրյակայինի ու ջարդարարի հետ, որին կախաղանն է կարոտում: Հիմա կասեմ՝ ինչ: Կամքի եւ ստորության ապշեցուցիչ խառնուրդ: Դրանք ընդունակ են այն ամենին, ինչը որդիական զգացում ունեցող սովորական մարդու համար բացարձակ անընդունելի է՝ քամահրանքով նայել իրենց ծնողների մահվանն ու հայրենի հողի ամայանալուն,- ասում էր Լեգկոբըտովը, ու բարձր ձայնը դողում էր, խզվում, իսկ հետո նույն բառերը սփռվում էին հոդվածներում, որոնք ոմանք հայհոյում, մյուսները՝ գովում էին, բայց այնքան շատ հրաշալի բառեր ասվեցին ու գրվեցին, որ դրանց գինն ընկավ, ինչպես բերքառատ տարվա խնձորի գինը. կուշտուկուռ կերան ու վրան նայել չէին ուզում:

Ուլյան ոչ մի բոլշեւիկի չէր ճանաչում, բայց կանխավ ատում էր այդ մարդկանց, եւ նրա ողջ անձնական ատելությունն ուղղված էր հեղափոխության, ուստի եւ իր երջանկության թշնամիների դեմ: Պավել Մատվեեւիչը զարմանքով ու ոգեւորությամբ հետեւում էր իր պարմանի ընկերուհու քաղաքական աճին:

- Իսկապե՞ս կյանքդ կտայիր նրա համար, որ սպանեիր Լենինին կամ Տրոցկուն:

- Կտայի:

- Իսկ ջահելությունդ չե՞ս ափսոսում:

- Բոլորովին,- աղջկա մազերը ցրիվ էին եկել ուսերին, պեպենների վառոդային կետիկներով շրջանակված աչքերը փայլում էին, ու Լեգկոբըտովը կրկին հիշեց ինչպես էր երեք տարի առաջ նեղացած, փքված նստել Ծելոմի ջրերի վրայով սահող նավակում, ու մի տեսակ կանացի ու լավիկն էր դարձել այդ ժամանակից, այնքա՜ն մոտ եւ ավելի անմատչելի:

- Ուլի՛կ, ուլի՛կ, ինչ կլինի քեզ հետ,- մրմնջում էր Պավել Մատվեեւիչը, ու տարօրինակ քնքշություն էր հնչում խոսքի մեջ, այն քնքշությունը, որ առաջ միայն իր շների բաժինն էր:

Ուլյան իրեն կավ էր զգում նրա թեթեւ, բայց վստահ ձեռքերում, միայն մուգ կապույտ շափյուղան էր խանգարում, որը լիալուսնին առկայծում էր շորի միջով: Լեգկոբըտովը երբեք չէր հարցնում քարի մասին, բայց կասկածոտ նայում եւ խոժոռ, խանդոտ, գիշատիչ հայացքով խեթում էր Ուլյա-

յին: Աղջկա աչքերը սովորականից ուժեղ էին փայլում, եւ Պավել Մատվեեւիչը խորհրդավոր ու տխուր խոսում էր ինչ-որ կանաչ դռան մասին, որ մի օր կբացվի, ու հետաքրքրվում էր, թե ինչու Ուլյան օրագիր կամ ալբոմ չի պահում մյուս օրիորդների պես:

- Որովհետեւ ես մյուս օրիորդների պես չեմ:

- Հաճա՞խ ես մտածում տղամարդկանց մասին:

Իմիջիայլոց հարցրեց, կատակով, հին ծանոթի իրավունքով, բայց Ուլյան զգաց, որ այդ հարցի ետեւում ավելի մեծ բան է թաքնված, քան հետաքրքրասիրությունը, եւ վիրավորվելու, գոռոզ տեսք ընդունելու, լացելու կամ կատակի տալու փոխարեն, ինչպես հուշում էր կանացի բնազդը, ձեւացրեց, թե հարցը չհասկացավ, ու խորհրդավոր փակեց աչքերը: Եվ Պավել Մատվեեւիչը մռայլվեց, լարվեց, ասես նորից տեսավ այն ուլիկին, որ անտառում հետեւում էր իրեն ու մի անգամ շա՛տ, շա՛տ մոտեցավ:

Բայց տարօրինակ է. թեեւ Ուլյան զգում էր ինչպես է եռում նրա արյունը, եւ ինքն էլ հուզվում էր այդ եռքից, Լեգկոբընտովը ոչ մի անգամ չբռնեց նրա ձեռքը, չփորձեց համբուրել, եւ նույնիսկ երբ գնում էին նրա բնակարանը՝ վարձու շենքի վերջին հարկում, ու տանտերը վառում էր հնամաշ վառարանը, եւ նրանք պառկում էին թախտին ու նայում դռնակի ու փայտերի արանքում մոլեգնող կրակին, նրանց միջեւ ոչինչ չէր լինում:

Պավել Մատվեեւիչն իրեն այնպես էր պահում, ասես ոչ թե ամուսնացած տղամարդ էր, այլ անփորձ դեռահաս, այն պատանին, որի մասին ժամանակին պատմում էր պատշգամբում, եւ Ուլյան չգիտեր ինչպես վարվել, որ չկրկներ իրենց հայտնի կնոջ ճակատագիրը: Կստահ չէր, որ ուզում է նրա համբույրներն ու հպումները, բայց ահավոր հետաքրքրությունը չարչարում էր նրան: Եկել էր ժամանակը, երբ նա այլեւս չէր հետեւում ուրիշի հասուն կյանքին, ինքն էր հայտնվել այդ կյանքում, բայց չգիտեր ինչպես ճիշտ տնօրինել երիտասարդությունը, եւ ափսոս կլիներ, եթե այն իզուր անցներ ու լիովին չօգտագործվեր: Բայց ինչպե՞ս դրդել Լեգկոբընտովին, ինչո՞վ հրապուրել նրան՝ Ուլյան նույնպես չգիտեր, իսկ երբ նրան էր հառում տարակուսանքով ու ապշեցուցիչ քնքշությամբ լեցուն աչքերը, որ հարցնում էին. «Ղե, ի՞նչ է կատարվում քեզ հետ, ինչո՞ւ ես հապաղում: Չէ՞ որ ես չեմ կարող առաջինը...», որսորդը լռում էր, փախցնում էր հայացքը, եւ Ուլյայի հուզումն այնպես անտանելի էր դառնում, որ ուզում էր զայրացնել նրան, խանդ հարուցել, չպատասխանել նրա հարցերին կամ նետվել փողոց ու վազե՛լ, վազե՛լ, որպեսզի նա նորից բարձրացներ հրացանն ու կրակեր ետեւից:

...Աշնանը, երբ քաղցը սկսեց նեղել, Պավել Մատվեեւիչն օգնեց, որ Ուլյան ծառայության անցնի պարենային մինիստրությունում: Աղջիկն այնտեղ շատ քիչ էր վաստակում, ու հակառակ անվանմանը՝ որեւէ պարեն չէին տալիս: Վերա Կոնստանտինովնան ամեն օր վեր էր կենում ժամը հինգին ու վաղորդայնի աղջամուղջում գնում հացի խանութի մոտ հերթ բռնելու: Հերթում մարդիկ խուլ դժգոհում էին՝ հիշելով իշխանությունների փետրվարյան խոստումները, բայց ոչ մեկը նոր խռովության ուժ չուներ: Ծերացած, շալով փաթաթված, շրթունքների ընդմիշտ կախված անկյուններով Վերա Կոնստանտինովնան նայում էր բուլկիների, բոքոնների, քաղցրաբլիթների հրաշալի նկարներին, որ պատերին էին մնացել նախահեղափոխական ժամանակներից, եւ ուրախանում, երբ հաջողվում էր խոզի ճարպ ճարել եւ հնահոտը խեղդելու համար խառնելով սոխի ու սխտորի հետ, պատրաստել խորթ դստեր համար: Մեքենայաբար էր կատարում այդ բոլոր գործողությունները, որ մի քանի տարի առաջ հագիվ թե անցնեին նրա սիրունիկ գլխով, եւ ապրում էր անցյալում՝ սարսափելով եւ՛ ներկայից, եւ՛ ապագայից: Գեղեցիկ, չար խորթ մորից վերածվել էր ինչ-որ անսեռ, անկամ, անզավակ հեռու մորքուրի, ում մեջ վաղուց սպառվել է կանացի ամեն ինչ, ու չունի մեկը, ում համար կհոգա, ուրեմն գոնե զարմուհուն ծառայի, որ կյանքը լրիվ անիմաստ ու դատարկ չդառնա, բայց նրա հոգածությունը աղջկան կերակրելուց այն կողմ չէր անցնում: Այդպես էր մտածում խորթ մոր մասին անդադրում, զուտ իրենով տարված Ուլյան, բայց մի անգամ սովորականից շուտ ծառայությունից տուն գալով՝ միջանցքում տեսավ Լոգկոբըտովի կղբենու օձիքով վերարկուն:

Արյունը գլուխը տվեց: Ուզում էր խուժել սենյակ, բայց ինչ-որ ուժ թուլացրել էր ոտքերը, եւ Ուլյան քարացավ դռան մոտ: Ըստ երեւույթին՝ այդ զույգի խոսակցություններին ականջ դնելը սովորություն էր դարձել նրա համար: «Իսկ եթե իսկապես առաջին անգամ չեն հանդիպում»: Ուլյայի մտքով անգամ չէր անցնում, որ կարող է այդ աստիճան խանդոտ լինել:

- Ինչ արագ վերջացավ ամեն ինչ,- առույգ ձայնով ասում էր Պավել Մատվեեւիչը:- Բոլորը երազանքներ ունեին, սպասումներ, ու հեղափոխությունն ասես գարնանային լույսի զավակ լիներ: Բայց ահա ծերացավ, իր դառը հունձքն է ժողովում, ու բոլորը նորից անհաշտության մեջ են: Նորից պատերազմ ու մահապատիժ: Կանանց գումարտակներ, Կոռնիլով, Սավինկով ու Կերենսկի, որ հիվանդ շան պես կորցրել է հոտառությունը: Գյուղացիք ասում են, թե հիմա լավ է նրա համար, ով գործ չունի հողի հետ, զինվորները՝ պատերազմի, վաճառականները՝ առեւտրի, ես էլ իմը կա-

սեմ՝ ցանկացած իրականության: Ողջ Ռուսաստանը նմանվել է այն հաշ-մանդամներին, որ սպասում են սուրբ ավազանի լցվելուն՝ անպաշտպան, թույլ, անզեն:

- Իսկ ձեր հրացա՞նը:

- Գյուղում եմ թողել, Պելագեյայի մոտ: Իմ ունեցածը հիմա պետական ծանր երեքգծանի հրացանն է, որից չգիտեմ էլ ինչպես են կրակում: Գիշե-րը հետուառաջ եմ անում տան մոտ, պահպանում ավազակներից ու մտա-ծում, որ ժամանակին ճիշտ այդպես պատից պատ էի քայլում իմ բան-տախցում ու երազում հեղափոխության մասին: Եվ ահա եկավ, եւ իմ կյան-քում ոչինչ չի փոխվել: Իսկ եթե փոխվել է, ապա միայն դեպի վատը:

- Կարելի է մտածել, որ մեղավորը հեղափոխությունն է,- գրգռված ասաց Վերա Կոնստանտինովնան:

- Հեղափոխությունը մարդկանց պոկեց սովոր վայրերից ու քշեց Աստ-ված գիտի ուր:

- Ձեզ ոչ ոք չի քշել: Կմնայիք ձեր անտառներում: Ինչո՞ւ չեք վերադառ-նում գյուղ: Դուք չէի՞ք ասում, որ քանի դեռ Պելագեյայի հետ եք, չեք կոր-չի, իսկ եթե թողնեք նրան, կկործանվեք:

- Բայց ես չեմ հարցնում, չէ՞, ինչու թողեցիք ձեր ամուսնուն,- առարկեց Պավել Մատվեեւիչը,- եւ ինչո՞ւ նա մինչ օրս չի վերադարձել ձեզ մոտ: Իսկ Պոլյայի համար մի անհանգստացեք: Նա չի կորչի: Բոլորս կկորչենք՝ դուք, ես, ձեր ամուսինը, բայց ոչ նա: Ցղան գարնանը վերադարձել է: Ճատերի պես դասալքել էր բանակից: Հիմա բոլորով հող են բաժանում գյուղում, վախենում են, թե կխաբեն, չնայած, մեկ է, խաբվելու են: Գեղջուկին կոր-սան հողով, ինչպես որդով ձուկ են բռնում: Իսկ իմ Պելագեյա՞ն: Որդուն դի-մավորեց իսկական սպարտացու պես՝ պահանջեց, որ հետ դառնա, նորից գնա կռիվ: Այդպես էլ ասաց՝ կարեւոր չի ով է էնտեղ, ցար է, ցար չի, գնա՛, Այյո՛շա, պաշտպանի ռուսական հողը, որ գերմանացին էստեղ չհասնի:

- Իսկ Պետրոգրադում սպասում են գերմանացիներին,- մռայլ ասաց Վերա Կոնստանտինովնան:- Այն նույն մարդիկ, որ երեք տարի առաջ գեր-մանական դեսպանատունն էին ջարդուփշուր անում, երազում են գերմա-նացիների մասին որպես փրկարարների: Այ կգան գերմանացիներն ու կարգուկանոն կհաստատեն: Իսկ ես, եթե համարձակվեն մտնել այստեղ, կսկսեմ սպանել նրանց:

- Ինչի՞ համար:

- Նրանք տեղ չունեն այս քաղաքում:

- Բայց ամեն դեպքում ապշեցուցիչ նման եք նրան,- մրմնջաց Լեգկոբը-տովը:

- Ո՞ւմ:

- Ուլյանային:

Լռեցին, ու միայն լսվում էր ինչպես են շրշոցով խաղասեղանին իջնում խաղաթղթերը, թե՞ ինչ-որ մեկի շորն էր սահում ցած, եւ Ուլյայի սիրտը այնպես խփեց, որ թվում էր զարկերը դռնից ներս են թափանցում, եւ էլի մի վայրկյան՝ ինքն էլ ներս կխուժեր, բայց բոլոր կողմնակի ձայները խլացնելով՝ սառն ու անտարբեր խոսեց Վերա Կոնստանտինովնան.

- Պա՛վել Մատվեեւիչ, ձեզ չի՞ թվում, որ անպատշաճ է գալ մեր տուն այն ամենից հետո, ինչ եղել է:

- Իսկ ինչ-որ բա՞ն է եղել:

- Չի՞ եղել:

- Եղել է, չի եղել: Ու նաեւ՝ ի՞նչ պատշաճություն մեր ժամանակներում:

- Դաստիարակված մարդկանց համար պատշաճությունը ժամանակներից կախված չեն:

- Ուրեմն ես անդաստիարակ եմ: Ուլյանայի համա՞ր եք ասում:

- Նաեւ նրա:

- Ուլյուշկան ինձ համար զարմուհու պես է: Ինչ էլ որ լինի, մեկ է, նա մնալու է իմ դժբախտ ընկերոջ դուստրը:

- Այ հենց այդ պատճառով էլ, իմ ու նրա դժբախտությունը չխորացնելու համար, խնդրում եմ հանգիստ թողնել նրա աղջկան: Ուլյան արդեն երեխա չէ, բայց դեռ շատ երիտասարդ է, եւ դուք ամեն դեպքում չեք ամուսնանա նրա հետ:

- Իսկ դուք ուզում էիք, որ ամուսնանայի՞:

- Աստծուց վախեցեք, դուք կին ունեք, երկու երեխա ու խորթ որդի:

- Ես ու կինս պսակված չենք, իսկ երեխաներին պետք եմ այնքանով, որ փող եմ տալիս: Ու հենց փող չլինի...

- Իսկ անփող ինչպե՞ս եք պատրաստվում ամուսնանալ:

- Այնպես եք հարցնում, կարծես իրոք որոշել եք մարդու տալ ձեր խորթ աղջկան:

- Այո՛, որոշել եմ,- չոր պատասխանեց Վերա Կոնստանտինովնան:- Դա միակն ու վերջինն է, որ պետք է անեմ նրա համար: Փառք Աստծու, իմ աղջիկը չի, որովհետեւ այս երկրում երեխա ունենալն անպատասխանատվություն է: Բայց, մեկ է, պատասխանատու եմ նրա համար, քանի դեռ ապրում է իմ տանը:

- Եվ ո՞ւմ հետ եք, թույլ տվեք հարցնել, պատրաստվում ամուսնացնել նրան: Կոմսի՞: Բանկիրի՞: Թե՞ պրոլետարի:

- Լավ մարդու հետ, որը կսիրեր ու պատասխանատու կլիներ նրա համար: Ուլյան արժանի է երջանկության, որովհետեւ խելացի, բարեկիրթ ու վերին աստիճանի պարկեշտ աղջիկ է: Էլ չեմ ասում, թե որքան գեղեցիկ է: Եվ երջանիկ կլինի նա, ում հարսնացուն ու կինը կլինի: Միակ բանը, որ կցանկանայի նրա համար՝ ամուսինը տաներ արտասահման, եւ որքան կարելի է արագ:

- Հա՛, իհարկե,- քրթմնջաց Լոգկոբըտովը:- Ծուտով Ռուսաստանից կսկսեն դուրս բերել ամենաթանկարժեքը: Եվ դուք առաջինը չեք:

- Ցավում եմ, որ մոլորեցնում եք աղջկան: Եվ նա առաջինը չէ: Եվ դուք էլ առաջին մոլորեցնողը չեք:

- Այն խենթի մասի՞ն եք ասում: Այո՛, դա շատ վտանգավոր էր,- խոժոռվեց Լեգկոբըտովն ու մատներով թմբկահարեց սեղանը:- Բարեբախտաբար նա այլեւս չի սպառնում:

- Փոխարենը՝ հիմա դուք եք վտանգավոր:

- Ես չէ, իմ արհեստն է վտանգավոր,- առարկեց Պավել Մատվեեւիչը:- Ինչ անես, եթե այն ծգում է Ուլյանային: Չէ՞ որ դա էլ յուրատեսակ տաղանդ է, եւ գուցե ավելի թանկ ու հազվագյուտ, քան նկարչի տաղանդը:

- Ի՞նչ օգուտ այդ տաղանդից,- դառնությամբ ասաց Վերա Կոնստանտինովնան:

- Մե՛ծ օգուտ,- գոչեց Լեգկոբըտովը:- Եվ նույնպիսի մեղք է թաղել այդ տաղանդը, որքան որ մյուսները: Գրողի կյանքում մի անորսալի հասկացություն կա՝ մուսա: Պարտադիր չէ, որ դա այն կինը լինի, ում հետ ամուսնացած է կամ պատկանում է նրան, բայց առանց նրա կյանքն անհնար է:

- Եվ միշտ նույն ավարտն է ունենում,- չար ասաց Վերա Կոնստանտինովնան ու սկսեց խառնել խաղաթղթերը:

- Միայն՝ եթե մուսան ինքը ցանկանա,- ծիծաղեց Լեգկոբըտովը:- Այ դուք չուզեցիք:

- Ե՞ս ինչ կապ ունեմ: Դուք արդեն մի մուսա ունեք, որին հավերժական հավատարմության երդում եք տվել: Պատրաստ էիք կյանքը տալ, միայն տեսնեիք նրան:

- Որտեղի՞ց է ձեզ...

- Մենք ասես նույն սնկանոցից լինեն,- մտախոհ ասաց Վերա Կոնստանտինովնան,- կապված ու թունավորված նույն մտքերով: Զգացել եմ: Ե՛վ դուք, եւ՛ ես, եւ՛ ամուսինս: Եվ Ցուլյան: Մեր շուրջը տարածությունը հա-

գեցած է մեր մտքերով, ու երբեմն մթնշաղին որոշ պահերի ու տեղերում դրանք տեսանելի են դառնում: Օրինակ, գերեզմանոցում: Այդ մտքերը ծաղկափոշու նման են: Մեկ-մեկ էլ փոքրիկ ճանճերի ու թիթեռնիկների: Չե՞ք նկատել:

- Ես գերեզմանոցում...

- Այո՛, այո՛, գիտեմ: Վախենում եք գերեզմանոցներից: Իզո՛ւր: Գերեզմանոց պետք է գնալ, մանավանդ եթե ուզում եք երկար ապրել: Ես հենց դրա համար էլ դադարեցի, որ չեմ ուզում: Ինչո՞ւ այդպես գունատվեցիք: Վա՞տ եք զգում: Ի՞նչ եք շշնջում, չեմ լսում: Պետք է պատուհանը բացել կամ դուռը: Բայց լրիվ ուրիշ բան եմ ուզում ասել: Այ դուք այնպես էիք սիրում այն կնոջը, այնպես էիք տառապում, այնպես էիք բողոքում ձեր մենակությունից, որ նույնիսկ իմ հարգանքը հարուցեց: Սկզբում՝ բարկություն, քմծիծաղ, իսկ հետո՝ ո՛չ, սկսեցի գնահատել ձեզ:

- Կարծես թե չեմ նկատել:

- Որովհետեւ անուշադիր եք մարդկանց հանդեպ: Սեփական «ես»-ից բացի ձեզ ուրիշ ոչինչ չի հետաքրքրում: Դա պետք է որ նույնպես պրոֆեսիոնալ հատկություն լինի: Մի՛ նեղացեք, ամեն դեպքում ուզում էի սփոփել, կարեկցում էի ձեզ, հպարտանում էի ձեզնով՝ ձեր նվիրվածությամբ, տոկունությամբ, նրանով, որ ահա այսպիսի մարդ կա այսօրվա գրողների ու բանաստեղծների մեջ: Միա՛կը: Իսկ հիմա ի՞նչ, ուրանո՞ւմ եք: Որոշել եք փոխե՞լ: Ավելի ջահե՞լ մուսա եք գտել: Որ օգտագործեք ու նորից դե՞ն նետեք: Որոշել եք բոլորի նմա՞ն դառնալ:

- Ի՞նչ եք հարձակվում վիրավոր թռչունի պես,- ջղային ճչաց Պավել Մատվեեւիչը:- Նորից ուզում եք վիրավորե՞լ:

- Այդ դուք եք ինձ վիրավորում:

- Ինչո՞վ:

- Նրանով, որ ավիրում եք առաքինի ուխտավորի, հավատարիմ սիրահարի, ասպետի, որսորդի, լեյտենանտի կերպարը...

Վերա Կոնստանտինովնան հանկարծ շառագունեց, այնպես ընկավ երազանքի գիրկը, որ կրկին դարձավ կանացի, թարմ ու սքանչելի, ինչպես վերջին նախապատերազմական ամռանը, եւ զգալով այդ փոփոխությունը՝ կախեց գլուխը, ինչից ավելի անուշիկ էր թվում: Պավել Մատվեեւիչը նույնպես զգաց դա ու ցնցվեց:

- Ո՛չ, դուք համենայնդեպս շատ եք ափսոսում, որ մեր հարաբերություններն այդպես ստացվեցին,- կամացուկ ասաց Լեգկոբընտովը:- Կամ էլ չս-

տացվեցին: Ե՛վ ձեզ եք տանջում, եւ՛ ուրիշներին հանգիստ չեք տալիս: Բայց կարծես դեռ ուշ չէ, հա՞: Կամ էլ...

Ուլյայի սիրտը նորից ուժեղ խփեց, այնպես, որ կրծքի կոկիկ կարը ուռավ, ու կարմրեց արյան բարակ թելը: Չտեսավ Վերա Կոնստանտինովնան ինչպես զայրույթով բարձրացրեց ձեռքը, որ մի քիչ մնաց օդում՝ եւ անզոր ընկավ ցած: Եվ կինը ակնթարթորեն կրկին ծերացավ: Պավել Մատվեեւիչը տեղից չշարժվեց: Մի տանջող, ամայի, հավերժության պես երկար րոպե անցավ:

- Կամ էլ՝ ոչ,- վերջապես խոսեց Լեգկոբընտովը, եւ անհասկանալի էր՝ ինչն էր ավելի շատ ձայնի մեջ՝ թեթեւացման, թե ափսոսանքի հոգոցը:- Դե ինչ, ո՛չ, ուրեմն ո՛չ: Բայց անկեղծ կլինեմ ձեզ հետ: Չգիտես ինչու՝ ուրիշ ոչ մեկը անկեղծանալու այդպիսի ցանկություն չի հարուցում, չնայած ինձ դուր չի գալիս ինչպես եք խուժում իմ կյանք:

- Կարելի է կարծել՝ ինձ է դուր գալիս ինչպես դուք ներխուժեցիք:

- Ձեզ իրո՞ք դեռ հետաքրքրում է այն տիկինը:

- Այո՛: Ինձ թվում է... ասես քույրս լինի... Ես քույր չեմ ունեցել, ու եթե ունենայի...

- Ինչ տարօրինակ հետաքրքրություն է ցանկացածի հանդեպ, բայց ոչ սեփական անձի: Ախր այդպես ամբողջ կյանքը կողքով կանցնի: Բայց նա, այն մյուսը այլեւս չկա եւ արդեն երբեք չի լինի: Բայց ես մեղավոր չեմ: Ես չեմ դավաճանել նրան, ինքն է ինձ դավաճանել:

- Եթե մուսան դավաճանում է արարողին, չի՞ նշանակում, որ նա, ում մոտ գնացել է, ավելի տաղանդավոր է,- դաժան ասաց Վերա Կոնստանտինովնան:

- Իսկապե՞ս կարծում եք, որ այդ աճպարարի թիթեղյա շինվածքները, գույնզգույն առագաստներով խաղալիք նավերն ու հարբած երաժիշտների խավաթղթե ջութակները իմ ճշմարիտ գործերից ավելի կգնահատվեն,- քմծիծաղեց Պավել Մատվեեւիչը:- Միայն եթե մարդիկ վերջնականապես կորցնեն կյանքի համը: Բայց նա երկուսիս էլ դավաճանել է:

- Ինչպե՞ս:

- Մեկնել է Վիլնա ու պոռնկություն է անում:

- Ինչո՞ւ,- ապշեց Վերա Կոնստանտինովնան:

- Որպեսզի գուշակի այլոց մահը,- չոր ասաց Պավել Մատվեեւիչը:- Չեմ բացառում, որ դա վաղ թե ուշ բոլոր մուսաների ճակատագիրն է: Ահա այդպիսի փոխակերպություն: Եվ եթե ասեք, որ դրա մեղավորը ես եմ, չեմ

առարկի, բայց հիմա ամենաքիչը կուզեի այդ կնոջը հանդիպել: Իսկ ինչ վերաբերում է ձեր սիրեցյալ խորթ դստերը...

- Այո՞:

- Ինձ դուր է գալիս Ուլյան, շատ է դուր գալիս: Ճիշտ է, նրա մեջ ոչ առանձնակի խելք եմ տեսնում, ոչ վեհանձնություն, ոչ դաստիարակվածություն, պահվածքն էլ այն չէ, ի տարբերություն ձեզ, բոլորովին ճաշակ չունի, գլխում աստված գիտի ինչ է կատարվում, բայց դրա հետ մեկտեղ իրոք սքանչելի է, վայրի, նրա մեջ շատ կյանք ու հոգի կա, եւ, չեմ թաքցնի, գրավում է ինձ, անասելի ձգում է, բայց...

- Ի՞նչ:

- Ես չեմ կարող դիպչել նրան:

- Եվ փառք Աստծո: Միայն դա էր պակաս: Բայց ինչո՞ւ:

- Որովհետեւ կույս է: Այդպես չէ՞:

- Իմ կարծիքով, սիրելիս, ձեզ լրիվ բաց եք թողել: Որտեղի՞ց իմանամ նման բաները,- կտրուկ պատասխանեց Վերա Կոնստանտինովնան:

- Այո՛, իհարկե: Նա չի կարող վստահել ձեզ: Ու ոչ մեկին չի կարող վստահել: Խեղճ աղջիկը չգիտի ինչ անի: Նրա տարիքի աղջկա համար դա ամենավտանգավորն է: Իսկ ես գիտեմ ինչ անեմ նրա հետ: Կներեք, բայց նորից իմ մասին եմ խոսելու: Բնույթս է այդպիսին, արդեն չես փոխի: Տարօրինակ է,- մտախոհ ասաց Լեգկոբընտովը:- Արդեն քառասունհինգ տարեկան եմ: Կյանքիս մեծ մասը ապրված է: Առավել եւս այսօրվա Ռուսաստանում, որտեղ ոչ ոք չգիտի իր հետ ինչ կլինի վաղը, ու որտեղից ելք անձամբ ես չունեմ: Չեմ կարող բողոքել իմ բախտից, ուզածիս չափ որս եմ արել, տեսել մարդկանց, ուժգին սեր ու կիրք ապրել, հասել եմ ճանաչման, մահվանից հետո ժառանգներիս զարմացնելու շատ բան ունեմ, եւ եթե վաղը այլեւս չլինեմ... Ես դրանից չեմ վախենում: Առանց այն էլ բավականաչափ ու լավ եմ ապրել: Բայց իմ կյանքում երբեք կույս չի եղել ու երեւի արդեն չլինի: Ահեղ Դատաստանին աղջիկներն իմ մասին կասեն՝ «Նա փրկում էր մեր պատիվը»: Անարատությունը զսպում է ինձ, չնայած մեկ ուրիշին գուցե եւ ոգեւորեր: Բայց ես ուրիշ չեմ: Ժամանակ կանցնի, չգիտեմ՝ ինչքան, եւ ողջ կլինեմ, թե ոչ, բայց Ուլյան...

- Աստվա՜ծ իմ, Աստվա՜ծ իմ, ինչ սարսափելի բաներ եք ասում,- ճչաց Վերա Կոնստանտինովնան:- Ուլյա՛: Ուլենկա՛:

Այնպես ճչաց, ասես կռահել էր, գիտեր, որ աղջիկը լսում է իրենց, եւ Ուլյան նույն ճարպկությամբ ու արագությամբ հետ թռավ դռնից, որով պարմանի օրերին մագլցում էր շելոմյան բլուրներն ու սուրում անտառա-

յին ճամփաներով, եւ կարմրած դեմքին խաղում էր սարսափի, վիրավորանքի, ամոթի ու հրճվանքի արտահայտությունը:

11

Ենթասպա Կոմիսարովը Պետրոգրադ վերադարձավ տասնյոթ թվի ամռանը: Թե ինչպես էր ողջ մնացել՝ չգիտեր: Երեւի որովհետեւ չէր ուզում ողջ մնալ: Կողքին գտնվողներն ուզում էին: Ու զոհվեցին: Իսկ ինքը չմեռավ, նույնիսկ երբ պետք է մեռներ: Վասիլիյ Խրիստոֆորովիչը տիֆի զառանցանքում երբեմն հիշում էր իր գերության նախորդ օրվա խոսակցությունը Լեգկոբրոտվի հետ, ու նրան պատում էր զղջման զգացումը: Նույնիսկ թվում էր, եթե այդքան զնգուն բառեր չթափեր նախկին ընկերոջ գլխին, եթե չկարդար պետրոգրադյան փիլիսոփայի խանդավառ գրքույկը մեծ պատերազմի մասին, իր հետ ոչ մի վատ բան չէր լինի. պարզապես կզոհվեր, պառկած կմնար Վիլնայի մոտ, որեւէ անանուն գերեզմանում՝ իր ընկերների հետ, ու չէր տեսնի այն ամենը, որ կատարվեց իր երկրի հետ, եւ դա լավագույնը կլիներ, լավագույն վիճակը: Կմեռներ՝ վստահ նրա հզորությանը, ուժին, հաղթանակին, կմեռներ, երբ իսկապես պիտի մեռնի ռուս մարդը, բայց դրա փոխարեն ստիպված էր ապրել այն մարդկանց ողորմածությամբ, որոնց ատում էր:

Բարոյական նվաստացումը չէր կարող համեմատվել ֆիզիկական տառապանքների հետ, բայց երեւի հենց դա էլ փրկում ու ուժ էր տալիս նրան: Եթե նրան այդ ողորմության մասին ասեին պատերազմի սկզբին, միայն դառը կծիծաղեր, բայց պատերազմը, ապա եւ գերությունը փոխել էին նրա բնույթը: Նախ հանեցին ամենավերը, հետո ողջ թափով շպրտեցին ցած, բզկտեցին հոգին, տրորեցին, ջարդեցին ու նորից հավաքեցին, այնպես, որ հիմա նրա ամեն ինչը ուրիշ էր: Օրգանիզմի բոլոր բջիջները նորացել էին, ինչ կարեւոր էր նախկինում, հիմա անկարեւոր էր դարձել, իսկ անկարեւորը՝ կարեւոր: Այլեւս չէր սիրում մեքենաները, շոգեքարշերը, թնդանոթներն ու հրացանները. այն ամենը, որ մահ է բերում, փոխարենը՝ խենթի պես սկսել էր սիրել ամենայն կենդանին: Եվ երբ նրան՝ տիֆով վարակվածների բարաքում միակ հրաշքով ողջ մնացածին ու առողջացածին, բաց թողեցին ճամբարից եւ ուղարկեցին տիրոյյան տներից մեկում աշխատելու, Կոմիսարովը ոչ միայն ընդունեց այդ օգնությունը, այլեւ ջերմ երախտագիտություն զգաց փրկիչների հանդեպ: Գերմանացիների դեմ կռվելիս, հետո՝ գերության մեջ տառապելով, տեսնելով ինչպես են մահա-

նում իր ընկերները, իմանալով, որ ցանկացած պահի ինքն էլ կարող է հետեւել նրանց, Վասիլի Խրիստոֆորովիչը չէր դադարում խոր ու կենտրոնացած մտորել կյանքի ընթացքի մասին, եւ այդ մտքերը անսպասելի բերեցին նրան, որ Ռուսաստանի պատերազմը Գերմանիայի դեմ պարզապես սխալ չէր, այլ հանցագործություն, երկու երկրների բախում, որոնք պատմականորեն պիտի դաշնակիցներ լինեին, ոչ թե թշնամիներ: Իսկ թշնամացրին նրանք, որ ավելի ջանադիր ու հմուտ էին պետական խարդավանքներում: Հիշում էր անգլիացի սպաներին, որոնց տեսել էր ռազմագերիների ճամբարում՝ ինքնավստահ, լկտի՝ իրենց ընդգծված ազնվազարմությամբ, հիշում էր ինչ-որ մեկի կատակը, որ Անգլիան Գերմանիայի հետ կպատերազմի մինչեւ վերջին ռուս զինվորը, հիշում էր ֆրանսիացի օդաչուին, որի մասին բոլորն ասում էին, թե նշանավոր դեմք է, եւ նույնիսկ գերմանացիները հարգանքով էին վերաբերվում նրան, լրիվ այլ կերպ, քան ռուս գերիներին, ու Կոմիսարովի սիրտը դառնությամբ էր լցվում: Միայն հիմա էր հասկանում, որ իր երկիրը, իր ժողովուրդը, ինքը, իր բոլոր վեհ ձգտումներն ու ինքնազոհաբերման պատրաստակամությունը Ռուսաստանին չէին պետք, այլ օգտագործվեցին օտար, սառը կղզիաբնակների ու նրանց հաշվենկատ դաշնակիցների կողմից, որոնք իրենց գործերին էին հետամուտ մայրցամաքում: Իրոք որ պարզամտությունը գողությունից վատ է՝ մտածում էր նա եւ ատում այդ պարզամտությունը:

Դրա մասին հատկապես շատ էր մտածում Կատարինա անունով մի կնոջ տնտեսության մեջ ծառայելիս: Կինը կապվել էր նրան, Ալպերում խաղաղ էր, գեղեցիկ, եղնիկները մոտենում էին տանը, եւ հանգիստ կարելի էր որսալ, բայց մեխանիկը սարսափով էր հիշում այն տարիները, երբ մեղք էր գործում կենդանի արարած սպանելով: Հիմա զզվանք էր զգում ցանկացած բռնության հանդեպ, կարեւոր չէ ում դեմ՝ մարդու, գազանի, թռչունի, միս չէր ուտում ու նմանվել էր ճգնավորի, ինչը սկզբում վշտացնում էր գեղեցիկ, թմբլիկ Կատարինային, որն իր ծրագրերն ուներ ալպիական գերու վերաբերյալ: Կոմիսարովը նրա կանացի ցանկությանը վերաբերվում էր որպես հերթական աշխատանքի, որ պետք է կատարվի, ու կատարում էր, առանց որեւէ հեշտանքի ու քնքշության, բայց ֆրաուն այնքան գոհ էր իր անխոնջ ռուս մշակից, որ մի անգամ առաջարկեց ընդմիշտ մնալ իր մոտ, ամուսնանալ իր հետ եւ կիսել սեփականությունը տնօրինելու բոլոր դժվարությունները: Լալիս էր, խնդրում էր չմեկնել, բայց հենց դա հնարավոր դարձավ, Կոմիսարովը շրջանցիկ ճանապարհով հասավ հայրենիք: Ինչո՞ւ՝ ինքն էլ չգիտեր: Երեւի նույն պատճառով, որը վերադարձնում էր սաղ-

մոնի վտառները կամ չվող թռչուններին. միայն նրանք էին Ռուսաստանում պահպանել հայրենիքի զգացումը:

Բայց Վասիլի Խրիստոֆորովիչը տուն չմտավ, ոչ էլ տնեցիներին լուր տվեց, որ վերադարձել է: Եվ պատճառն այն չէր, որ դեռ ռազմաճակատում, կուսակցության կողմից Գորոխովոյում ներդրված գործակալի հայտնածով իմացել էր, որ կինն ու աղջիկը լինում են այդ կեղտոտ, անառակ գեղջուկի, հարբեցողի ու խլիստի մոտ: Վասիլի Խրիստոֆորովիչը հիմա հենց այդպես էր վերաբերվում վաղեմի ծանոթին. չափազանց շատ բան էր տեսել ու լսել թե պատերազմում, թե գերության մեջ: Տարօրինակ բան էր կատարվել նրա հայացքների ու համոզմունքների հետ, ասես նրան շրջել ու հանել էին իր դեմ: Եվ երբ նրա ներկայությամբ հայհոյում ու չար ծիծաղում էին թագավորի կամ թագուհու վրա, երբ եւ՛ զինվորները, եւ՛ սպաները իրար էին փոխանցում շքանշանակիր ռուսական կայսեր եւ չալդոնի հետ գրկախառնված կայսրուհու ծաղրանկարները, երբ մեխանիկը թերթերում կարդում էր ռուսական թագուհու ու նրա ֆավորիտի շուրջը խմբավորված գերմանամետ պալատական կուսակցության մասին, ներսում ոչինչ չէր թրթռում ում, չէր զայրանում, չէր ցավում առաջվա պես: Նրան թվում էր՝ ընդհանուր ոչինչ չկա նախկինում ճանաչած այդ մարդու եւ այդ ծաղրանկարների միջեւ, ասես այդ տարիների ընթացքում փոխակերպություն էր եղել Պետերբուրգում, եւ բոլոր մարդիկ ուրիշ էին դարձել:

Սիբիրցի գեղջուկի խայտառակ սպանությունն ու սպանողների ամոթալի անպատժելիությունը, ցարի փետրվարյան հրաժարումը գահից եւ այն թեթեւությունն ու անկամությունը, որով երկիրը նետվեց խառնակության մեջ, վերջնականապես կոտրեցին Վասիլի Խրիստոֆորովիչի կամքն ու ապշեցրին իրենց ստորությամբ: Եթե թագավորը մնար գահին, եթե չդավաճաներ իր ժողովրդին, Կոմիսարովը կգնար ծառայելու նրան, բայց հիմա չէր կարողանում հասկանալ՝ ի՞նչը, ի՞նչ ուժեր, ի՞նչ հանգամանքներ ու պատճառներ կարող էին ռուսաց կայսերը ստիպել հրաժարվել իշխանությունից, ասես դա մինիստրական պաշտոն լիներ: Թագավորն ինչպե՞ս կարող էր կամավոր վար դնել իշխանության բեռը, որից կարող էր ազատել միայն Աստված, եւ ոչ ավելի վաղ, քան նրա հոգին իր մոտ կանչելը: Եվ ի՞նչ կապ ունեն այստեղ գեներալները, ի՞նչ կապ ունեն ռազմաճակատների գլխավոր հրամանատարները, Դումայի պատգամավորները: Մի՞թե նրանք կարող են համեմատվել ցարի հետ:

Դա նույնիսկ ավելի վատ էր, քան թուլամորթությունը, եւ ինքնասպանություն էր հիշեցնում, եւ այն ամենը, որ կատարվեց դրանից հետո, միայն

փոքրոգի հրաժարման անխուսափելի հետեւանքն էր: Այդպես էր մտածում Վասիլի Խրիստոֆորովիչը, բայց երբ պատկերացնում էր իշխանությունը, դիրքը կորցրած թագավորին, երբ հիշում էր նրա դեմքը, նրա վեհանձնությունն ու սակավապետությունը, խղճահարությունն ու մեղքի զգացումը զսպում էին նրա զայրույթը: Այո՛, գիտեմ, ամեն ինչ գիտեմ,- վիճում էր՝ ինքն էլ չգիտեր ում հետ,- թույլ տիրակալ էր, անհմուտ, չափից դուրս լավ ու չափազանց բարեզարմ, բայց տեսեք ի՞նչ ոչնչություններ էին շրջապատում նրան՝ Դումայում, կառավարությունում, բանակում, Ռոմանովների ողջ տոհմում: Միայն նա է, ի տարբերություն բոլորի, իր մեղքերի համար հատուցում կյանքով, իսկ մյուսների ուշքը ճարպակալելն է: Ինչ նողկալի՛ է դարձել մարդկային տեսակը Ռուսիայում: Բայց ամենագլխավորը ցարն ու նրա բոյարները չէին, այլ ժողովուրդը եւ նրա արած հեղափոխությունը՝ պատահական, անսպասելի, հիստերիկ: Դա բնավ այն վիթխարի, տիեզերական աղետը չէր, որի մասին պատերազմի նախօրեին, մի ամառային տոթ օր ինքը պատմում էր չգիտես ուր անհետացած Քեռի Թոմ անունով փոքրիկ մարդուկին: Դա մարմնի թագավորության այն վերափոխումը չէր ոգու թագավորության, որը երազում էին խելացի մարդիկ եւ խանդավառ տրակտատներ, պոեմներ ու սիմֆոնիաներ գրում, դա կեղտոտ, թարախ ու մեզ գարշահոտող, արեւածաղկի չրթած սերմով, վախկոտությամբ, ստորությամբ ու եսասիրությամբ կեղեւակալած հրեշ էր... Կոմիսարովը երազում էր ուրիշ, հայրենասիրական հեղափոխության մասին եւ այդպիսի ստորություն չէր սպասում սեփական ժողովրդից: Մեխանիկն իրեն նույնիսկ հիասթափված չէր զգում, այլ անձամբ խորապես վիրավորված: Ռուսաստանում կատարվողն ընկալում էր որպես նվաստացում, անպատվություն, որից սրբվել երկիրը կարող էր միայն արյունով ու հրով: Եվ այն, որ այդ անպատվությանը խառն են իր հարազատ մարդիկ, ավելի էր դառնացնում Վասիլի Խրիստոֆորովիչին՝ անիմաստ դարձնելով ողջ նախկին կյանքն ու իր կամավոր զոհողությունները: Եվ չնայած Պետրոգրադ վերադարձած մարդու առաջին մղումն էր՝ նետվել տուն, միջամտել դեպքերի ընթացքին, ծեծել կնոջը, ինչպես ժամանակին Ուլյայի վերքի համար ծեծեց, հենց այդ համընկնումն ու կրկնությունն էլ կանգնեցրին նրան: Հետ պահեցին մերձավորներին օգնելու փորձից:

Կոմիսարովը հաստատ գիտեր, որ պատերազմում ու գերության մեջ ողջ մնալուց հետո իր կյանքը իրեն չի պատկանում: Պատկանում է կուսակցությանը, հեղափոխությանը, Քեռի Թոմին կամ այն կեղտոտ, չարացած մարդկանց, որոնք հրաժարվել էին կռվել ու լքել էին խրամատները,

հեղեղել էին մայրաքաղաքը եւ աշնանային մի խավար գիշեր ուխտադրուժ հեղաշրջում արել այնտեղ, ու երբեք անձնականն իր համար կարեւոր չի դառնա հանրայինից, եւ իրենը՝ ուրիշինից թանկ չի լինի: Կոմիսարովն իրեն իրավունք չէր վերապահում հենց այնպես հեռանալ հեղափոխությունից: Ժամանակին հեղափոխությանն այդքան փող եւ ուժեր տալով՝ բոլորովին չէր ակնկալում տոկոսներով վերադարձնել իր կապիտալը, այլ, հակառակը, պարտականություն էր համարում վճարել պարտքերն ու քավել ռուս ժողովրդի կատարած հանցագործությանը մասնակցելու իր մեղքը:

«Մենք ու միայն մենք ենք մեղավոր տեղի ունեցած համար,- կեղտոտ, տառապած քաղաքին նայելով՝ մտածում էր նա:- Մենթ թույլ տվեցինք ավերել հազարամյա թագավորությունը, մենք պարտվեցինք պատերազմում, որն իրավունք չունեինք տանուլ տալ: Մենք պատմության մեջ հավետ կմնանք որպես անփառունակ, անպատիվ սերունդ, որ ձգտում, մղվում էր ինչ-որ բանի, որ երազում էր, բայց կորցրեց ամեն ինչ եւ անիծվելու է սերունդների կողմից»:

Վասիլի Խրիստոֆորովիչը արտաքնապես էլ շատ էր փոխվել. դիմագծերը սրվել էին, մուգ աչքերը՝ խունացել, համառ կզակը մղվում էր առաջ: Իր տարիքից շատ մեծ էր երեւում՝ համարյա ծերունի, չնայած ընդամենը քառասունյոթ տարեկան էր: Հիմա քիչ էր մտածում ապագայի մասին. պետք էր զբաղվել ներկայով: Ռազմահեղափոխական կոմիտեում սկզբում չէին պատկերացնում ինչ գործ գտնեն նրա համար, բայց հետո առաջարկեցին պարետի օգնականի քաջածանոթ պաշտոնը, բայց ոչ մեծ իշխանի պալատում, այլ Նեւայի հին ամրոցում, որը երկար տարիներ որպես բանտ էր ծառայել նախկին պետությանը ու հիմա նույն նպատակով օգտագործվում էր նոր իշխանությունների կողմից:

Հեղափոխությունից հետո բանտը լեփ-լեցուն էր, եւ ով ասես նստած չէր այնտեղ՝ ցարական ու Ժամանակավոր կառավարության մինիստրներ,- ընդ որում սրանք նստացրել էին առաջիններին, հետո իրենք էլ էին նստել,- գեներալներ, պահնորդներ, խուզարկուներ, Սահմանադիր Ժողովի անդամներ, համալսարանական պրոֆեսորներ, աստվածաբաններ, սպեկուլյանտներ, բորսայի ծառայողներ, սեւհարյուրյակային ու լիբերալ ժուռնալիստներ, տերտերներ, պոռնիկներ, վանականներ, բանկիրներ, խուլիգաններ: Նրանք միամիտ բողոքներ էին գրում պարետին ու իրենց վիճակի բարելավում պահանջում: Բայց պարետն այդ մանրամասների մեջ չէր մտնում՝ տնօրինում էր քաղաքական հարցերը, իսկ Վասիլի Խրիստոֆորովիչը զբաղվում էր կալանավորների գործերով: Իսկապես կարիքավոր-

ներին տեղափոխում էր ավելի լուսավոր ու չոր խցեր կամ ուղարկում բանտային լազարեթ: Մարդկանց հոսքն այնքան մեծ էր, որ մեխանիկը կորցրել էր հաշիվը, եւ միայն մի կին մնաց հիշողության մեջ:

Դժբախտ, ուռուցվորած հաշմանդամ էր, նախկին ֆրեյլինա: Զինվորները հայհոյում էին նրան, թքում երեսին ու սպառնում, որ կբռնաբարեն: Հագուստն այնպես էր քրքրվել, որ մերկությունը երեւում էր քրջերի տակից, բայց կինը դրան ուշադրություն չէր դարձնում, ասես ամոթն անծանոթ կամ վաղուց լքած լիներ նրան: Երբեմն ինչ-որ բան էր ասում գեղեցիկ մեղեդային ձայնով: Կոմիսարովը չէր կարողանում նայել նրա խոշոր, կովի աչքերին, պահակախմբից պաշտպանել չէր պատրաստվում, որովհետեւ հենց այդ կինն էր նրա ընտանեկան դժբախտության մեղավորներից մեկը, բայց մի անգամ ֆրեյլինայի խուց մտան գիտուն մարդիկ ու զննության ենթարկեցին նրան: Պարզվեց, որ ֆրեյլինան կույս է: Դա հաստատեց ողջ Պետերբուրգին հայտնի դոկտոր Մալուխինը, եւ ակնթարթորեն ամրոցում տարածված լուրն այնպես ապշեցրեց բոլորին, որ կնոջը հանգիստ թողեցին, իսկ հետո ընդհանրապես ազատ արձակեցին:

Բայց որքան ժամանակն առաջ էր գնում, այնքան ավելի շատ մարդ էր բերվում ամրոց, այնքան քիչ տեղ էր մնում խցերում, եւ չար ու անգութ էր դառնում պահակախումբը: Նավաստիներն ու զինվորները բանտն իրենց տիրույթն էին համարում եւ ինչ ուզում անում էին: Մեխանիկին պետ չէին համարում ու ենթարկվում էին միայն պարետին, որը, ինչպես Վասիլի Խրիստոֆորովիչը շուտով համոզվեց, սրիկայի մեկն էր: Կոմիսարովը ոչ մի թշնամու, ցարական աստիճանավորի, լրտեսի, դավաճանի այդպես մոլեգին չէր ատել, այնպես, որ թվում էր, հնար լիներ կխեղդեր սեփական ձեռքերով: Խոշորամարմին, ֆիզիկապես անմաքուր, անընդհատ խորխող այդ մարդը կաշառք էր վերցնում կալանավորների հարազատներից, կանանց տանում իր առանձնասենյակ, ինչպես ինքն էր ասում՝ «խոստովանության», իսկ իրենից հետո հանձնում նավաստիներին. դա հեղափոխական խրախուսման միջոց էր: Այդ անասունի վրա բողոքելն անիմաստ էր. ռազմահեղափոխական կոմիտեում բոլորն առանց այդ էլ ամեն ինչ գիտեին:

- Դա նույնպես բուրժուազիայի վրա ներազդելու միջոց է, ընկե՛ր Մալգինով,- նոր, կուսակցական ազգանունով Կոմիսարովին դիմեց թոքախտավոր առաջնորդներից մեկը:- Այդ տիկիններին ոչինչ էլ չի լինի: Իսկ պարետին պետք է հասկանաք ու խորապես ցավակցեք: Ցարական ռեժիմից խիստ տուժած ու կրոնական նախապաշարմունքների պատճառով մարք-

սիզմը չյուրացրած մութ մարդ է: Դուք հիմա միայն փաստեր հավաքեք, կգա ժամանակը, ամեն ինչ կհիշեցնենք նրան, ու եթե պետք է՝ կգնդակահարենք: Գլխավորը՝ նկատի ունեցեք հեղափոխական զանգվածների տրամադրությունները:

Վասիլի Խրիստոֆորովիչը զզվանքից ցնցվեց, բայց որպես կարգապահ մարդ չվիճարկեց տրված ցուցումները: Նա կոչված էր կարգ հաստատելու այդ սարսափելի, արյունոտ քաոսում: Հեռանալ, ձեռքերը լվանալն ամենահեշտն էր, բայց եւ ամենափոքրոգին: Շատերին էր ճանաչում, որոնք այդ պահին մտածում էին իրենց պատվի, հոգու փրկության մասին, բայց հոգին փրկողը ոչինչ ձեռք չէր բերում, ավելի ազնիվ էր սեփական ներկայությամբ մեղմել անխուսափելի դաժանությունն ու թուլացնել չարի ուժը: Եվ Վասիլի Խրիստոֆորովիչը ձգտում էր այնպես անել, որ խցերում տաք ու չոր լինի, կալանավորները ժամանակին ու լիարժեք սնունդ ստանան, բուժօգնություն ու ծանրոցներ՝ դրսից: Նա իր բծախնդրությամբ ու համբերատար աշխատանքով ավելի էր զայրացնում պարետին, քան պարետը՝ նրան, բայց երբ պարետը ճիշտ բանվորագյուղացիական ծագումով ու ինտելիգենտական նրբություններից զերծ ուրիշ օգնական պահանջեց, հեղկոմի թոքախտավոր ընկերները խոսեցին հեղափոխական արդարադատության ու կարգապահության մասին, խոստացան ժամանակի ընթացքում, երբ հեղափոխությունը լրիվ թափ առնի, կատարել նրա արդարացի պահանջը ու անուղղելի իդեալիստին նստեցնել ստորգետնյա խցերից մեկում, իսկ առայժմ խորհուրդ տվեցին մեխանիկի վերաբերյալ փաստեր հավաքել:

Կոմիսարովը այդ դիվական հավասարակշռության մասին չէր կռահում, բայց նրան ավելի ու ավելի հաճախ էր թվում, որ հեղափոխությունը ոչ թե մարդիկ են վարում, այլ ինչ-որ ուժ, մի չար կամք, որին փորձում էր դիմակայել, բայց Նեւայի ամրոցում ուժերն օրեցօր լքում էին նրան:

Ո՛չ ռազմաճակատում, ո՛չ գերության մեջ Կոմիսարովի համար այնքան ծանր չէր եղել, որքան այդ պատերի ներսում: Յուրաքանչյուր գնդակահարված իր հետ տանում էր նրա մարմնի մի մասնիկը, ու չնայած այդ ամենի մեջ որեւէ անձնական մեղավորություն չուներ, Վասիլի Խրիստոֆորովիչը զգում էր, որ մարմինը ֆիզիկապես ամայանում է, կորցնում կապը հողի հետ, ողջ-ողջ ցամաքում, ու չէր զարմանա, եթե մի օր պիտերյան սեւ քամին բռներ իրեն ու քշեր փողոցներով, ինչպես աղբն ու թերթերի կտորտանքն էր քշում: Մեխանիկը ամրոցի տարածքից դուրս չէր գալիս ու կամաց-կամաց դառնում էր ստվեր, ուրվական՝ վախեցնելով պահակախմ-

բին, երբ անշշուկ հայտնվում էր զինվորների թիկունքում եւ երկար ու անշարժ կանգնում՝ հայացքը մի կետի:

Երբեք ոչ մեկին չէր պատժում, գնդակահարության հրամաններ չէր տալիս, պատժախուց չէր ուղարկում, բայց կալանավորները նրանից նույնիսկ ավելի էին վախենում, քան պարետից, ու «գերմանացի» մականունն էին կպցրել:

- Գերմանացին է գալիս, գերմանացին կիմանա, գերմանացին կտեսնի,- շրշում էր բանտի բոլոր հարկերում: Բայց ինչո՞ւ գերմանացի, ի՞նչ գերմանացի, ինչի՞ համար գերմանացի:

12

Նրան վաղուց չէր հետաքրքրում, թե ինչ է կատարվում աշխարհում, հոգսերի ողջ շրջանակը սահմանափակվում էր բանտով, ասես ինքն էլ կալանավոր էր դարձել՝ դատապարտված երկարաժամկետ, նույնիսկ ցմահից ավելի բանտարկության, դարձել էր ամրոցի ոգին, տնական ոգի, չնայած ժամանակին նախատեսում էր մի ուրիշ հավերժական պաշտոն, որին հիմա հազիվ թե համապատասխաներ: Վասիլի Խրիստոֆորովիչը միայն Չեխով էր կարդում եւ զգացված, երախտագիտությամբ ու սրտի թրթիռով մտածում, թե այդ մարդն ինչպես է կարողացել ամեն ինչ հասկանալ ու կանխատեսել, թափանցել ռուսական ենթագիտակցության մեջ, կարդալ ու հասկանալ: Հենց չեխովյան Ռուսաստանում պիտի կատարվեր այն, ինչ կատարվեց: Անկամ, թուլացած, կասկածամտությամբ ու փոքրոգությամբ կերված երկիրը կռացավ առաջին իսկ հարվածից, չդիմացավ այդ, ըստ էության, ոչ ծանր փորձությանը: Բայց դա կարծես արդեն Չեխովը չէր գրել, այլ նա, ում կերպարով հիանում էր Կոմիսարովը պատերազմի ժամանակ, եւ ում խանդավառ գիրքը գերմանական ճամբարում գերի ենթասպաները ծխախոտ փաթաթելու համար կտոր-կտոր արեցին ընծայագրի հետ միասին, որը մինչ այդ անհասկանալի էր Վասիլի Խրիստոֆորովիչին. «Ո՛ւս մարդիկ, իմ պատվիրանը ձեզ. Հայտնություն չկարդաք»: Բայց որտե՞ղ էր հիմա այդ սրատես ստեղծագործողը: Ո՞ր խորխորատներում էր անհետացել, նստած չէ՞ր այդ ամրոցի խցերից մեկում կամ մեկ այլ բանտում, եւ ինչ է արժեցել Ռուսաստանն այդպես սիրող ու փառաբանող այդ մարդուն անփառունակ թաղել նրան՝ գրելով իր սեփական Հայտնությունը: Իսկ գուցե ուրիշ ոչինչ չէ՞ր սիրում իրենից ու իր խստաշունչ դարից բացի: Չնայած, դա հիմա կարեւոր չէր: Ռուսատանում ապրող բոլոր մարդիկ, բա-

ցարձակ բոլորը, ցարից մինչեւ ամենավերջին ընչազուրկը, խելացիներն ու հիմարները, բարիներն ու չարերը, ազնիվներն ու ստորները, բոլորը արժանի էին այս ամրոցում բանտարկվելուն եւ հեղձուկից, խոնավությունից ու անազատությունից տառապելուն, եւ Կոմիսարովը նրանց մեջ առաջինն էր:

Երեկոները իջնում էր Նեւայի ափ, որտեղից լավ երեւում էին դիմացի մռայլ, գրանիտե առափնյակն ու լքված ցարական պալատը: Այդ րոպեներին մի տարօրինակ, համարյա միստիկական զգացողություն էր պատում ամրոցի պարետի օգնականին, բայց ոչ թե մերձակա, նախապատերազմյան, այլ հեռավոր անցյալի, այն ժամանակների, երբ նոր-նոր էր կառուցվում այդ քաղաքը: Նախկինում, ապագայով տարված, երբեք չէր մտածել այդ վաղնջական ժամանակների մասին, բայց հիմա պատկերացնում էր հարյուր հազարավոր գեղջուկներին, որ ցարական կամքով քշվել-բերվել էի Նեւայի մեռյալ ափերն ու ավելի վատ էին ապրում, քան ռուս զինվորները գերմանական գերության մեջ:

- Սիրում եմ քեզ, Պյոտրի կերտվածք... ատո՛ւմ եմ,- շշնջացին նրա չոր շրթունքները,- ատում եմ ամեն ինչը, ամեն շենքը, ամեն քարն եմ ատում, այս բոլոր կամուրջները, պալատները, աշտարակածողերը, նավերը: Ի՞նչ են անում այստեղ, ինչո՞ւ:

Ինչքա՜ն մարդկային ոսկոր է փռված այս գրանիտե առափնյակների, տաճարների, պալատների տակ, որքա՜ն գանգեր են թաղված, որքա՜ն արյուն է թափվել այս ճահճոտ հողի մեջ ու գարնանը ողողում է այս քաղաքը:

- Եվ ուզում էիք, որ այդ ամենը անհետեւա՞նք անցներ, հույս ունեիք, որ դուրս կպրծնեք, կարծում էիք անցյալը չի՞ հասնի ձեր ետեւից: Ատո՛ւմ եմ,- մի անգամ էլ նետեց ահարկու կատաղությամբ,- ատում եմ այս քաղաքը, այս երկիրը՝ իր պատմությամբ, իր բոլոր ցարերով, հերոսներով, գեղջուկներով: Ստացավ այն, ինչին արժանի էր, եւ ես էլ կստանամ նրա հետ միասին:

Ասաց ու սարսափեց, ասես ինքը չէր անիծում իր հայրենիքը, հայրենիքն էր անիծել ու հրաժարվել իրենից: Ուզում ես մաքուր լինել, ալպիական, ուրեմն գնա այստեղից: «Նրանք մեռան, եւ ի՞նչ են ուզում՝ վրե՞ժ են ուզում իրենց մահվան համար, թե՞ բարգավաճում: Ներե՞լ են մեզ մեր նախնիները: Կմեղադրե՞ն ժառանգները: Բայց ի՞նչ իրավունք ունեն դրանք բոլորը... Ներկան կառավարում են ապագայից. ի՜նչ հիմարություն: Մի՞թե այնտեղ, այդ ապագայում որեւէ մեկին պետք է, որ անցնենք այս ամոթի միջով, կամ էլ ապագան ուրիշին է պատկանում, ու մենք նվաճվա՞ծ

ենք: Ինչ-որ հոներ, սկյութներ, բյուր ու բյուրեր զավթել են մեզ ու կառավարում են, եւ Պետերբուրգն էլ արդեն սեւացել է օտար շեղաչ հայացքներից: Եվ Պետերբուրգն արդեն Պետերբուրգ չէ: Ու նույնիսկ Պետրոգրադ չէ: Եվ Ռուսաստանն էլ Ռուսաստան չէ՞»:

Միտքը մաղվում էր, ցուրտ քամին ավելի ու ավելի ուժեղ էր փչում: Գերմանացի՞ն, գերմանացի՞ն է գալիս... Իսկ եթե իսկապես ինքը գերմանացի է դարձել: Օտա՞ր: Եվ չի հասկանում Ռուսաստանը, դադարել է հասկանալ, ինչի համար ինքն էր շատ վաղուց մեղադրում մի կիսամոռացված մարդու: Եվ մտքերը նորից ճնշում էին, ու նորից ոչինչ չէր կարողանում անել, ոչինչ չէր կարողանում հակադրել նրանց: Եվ չար գայլը սուրում էր ուղեղով: Ոչ մենակ, բազում մտագայլեր, որ կտոր-կտոր խլխլում էին ուղեղը: Թեթեւ որս եղավ նրանց համար եւ ասես փտած ատամ լիներ:

- Պիտի մեռնեի,- Նեւայի քամուն դառնալով՝ խղճալի ասաց Կոմիսարովը:- Ինչո՞ւ չմեռա: Չէ՞ որ նրան սպանեցին: Արիստոկրատնե՞ր, կապույտ արյո՛ւն, միապետականնե՞ր... չխորշեցին, ձեռքերը լվացան նրա արյան մեջ, ամենամեծ իշխանուհին, թագուհու քույրն էր օրհնել նրանց. ուրեմն ինչո՞ւ ինձ թողեցին այստեղ: Ինչո՞ւ չի ասում, որ ինձ էլ արագ վերցնեն: Ես այստեղ այլեւս անելիք չունեմ: Չգիտեմ ինչ է սպասում ինձ, բայց այստեղ՝ ոչինչ: Փուչ եմ հերվա բզեզի պես, որից միայն պատյանն է մնացել: Իսկ ինչքա՛ն ուժ կար դեռ բոլորովին վերջերս...

Երբեմն ուզում էր տուն գնալ, գոնե հպանցիկ տեսնել դստերը, բայց արգելում էր իրեն, որպեսզի անարժան ոչինչ, ոչ մի հայացք չդիպչի նրան, չվիրավորի, եւ նա հեռանա իրենից: Ընդմի՛շտ հեռանա: Մի անգամ նրան մի քանի լուսանկար ցույց տվեցին պատերազմական ժամանակի մի բուլվարային թերթից: Լուսանկարներից մեկում Ուլյան էր՝ կիսամերկ, հարբած, քաղաքամերձ ռեստորանում: Ինչո՞ւ ցույց տվեցին, ի՞նչ էին ուզում իրենից՝ չհասկացավ, բայց կատաղի ատելության հորդում զգաց: Եվ երբ կատաղությունը նահանջեց, թվաց ինչ-որ մարդիկ փորձում են իրեն, ստուգում ամրությունը եւ պատրաստում ինչ-որ բանի, ինչպես ժամանակին ահաբեկչության էին պատրաստում էսեռները, եւ նույն հարցը, որ տանջում էր երիտասարդ տարիներին՝ կկարողանա՞ր կյանքը տալ, ուրիշինը խլելու համար, բումերանգի պես վերադառնում էր նրան, բայց վերադառնում էր հենց այն պատճառով, որ Կոմիսարովը հիմա հասկանում էր՝ իրեն պետք չի իր կյանքը, ուրեմն եւ զոհել չի կարող, որովհետեւ դա զոհաբերություն չի կոչվի, այլ ուրիշ մի բան: Նրա կյանքը արժեզրկվել էր ճիշտ այնպես, ինչպես արժեզրկվել էին շատ ու շատ բաներ: Եվ դա էր հեղափոխու-

թյան էությունը. այն ոչ թե պարզապես շրջոնքում էր մարդկանց, արժանապատվության, պատվի, խղճի, սեփականության նրա իրավունքը, այլեւ փոխակերպում էր իմաստները, նետում կեղտոտ, փրփրուն կաթսան ու եփում մինչեւ զրկվեն բովանդակությունից:

Եվ նախկին դստերն էլ կարող էր օգնել միայն նրանով, որ հեռու մնար, ինչպես մայրն էր հեռու մնում նրանից: Միայն հիմա սկսեց հասկանալ նախկին կնոջը, չափազանց լավ հասկանալ, թե ինչու հեռացավ եւ այլեւս չուզեց տեսնել ո՛չ իրեն, ո՛չ Ուլյային: Ըստ էության հիմա ինքը նույնն էր անում:

...Մի անգամ, ձմեռվա կեսին Վասիլի Խրիստոֆորովիչը հենց նոր ձերբակալվածների ցուցակում տեսավ հին ընկերոջ՝ Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովի անունը: Այդ բոլոր տարիներին ոչ մի անգամ նրան չէր հիշել, ու երեւի հենց այդ պատճառով էլ գրողի ձերբակալության մասին տեղեկությունը մեխանիկին հասնեց կիսանիրհի վիճակից: Լեգկոբըտովը բռնվել էր էսեռական «Վոլյա նարոդա» թերթի այլ աշխատակիցների հետ, եւ որոշել էին ինտելիգենցիային վախեցնելու համար պատանդ պահել նրանց ու հարկ եղած դեպքում գնդակահարել:

Կոմիսարովը գիտեր, որ հեղափոխական անհրաժեշտությունը բոլշեւիկների համար գերակշռում է մնացած բոլոր պատկերացումներին: Բայց Պավել Մատվեեւի՞չը: Լեգկոբըտո՞վը: Հեղափոխությանը սպառնացող որսո՞րդ: Ո՞ւմ կարող էր խանգարել: Ինչ զառանցանք ու տարօրինակ դեժավյու, որը ստիպեց հիշել հեռավոր զրույցը Քեռի Թոմի հետ, Պոլցիի կայարանում, տասնչորս թվի ամռանը: Նորից ո՞ւմ է պետք եկել այդ ամենը եւ ինչո՞ւ:

«Եթե Քեռի Թոմը չլիներ, այն ժամանակ նրան կսպանեի,- անտարբեր մտածեց նա:- Բայց հիմա կնախընտրեի, որ չհայտնվեր իմ կյանքում: Թող մնան նրա գրքերը, իսկ դրանք գրողը անհետանա»:

Այդպես համոզում էր իրեն ոչնչի չմիջամտել, բայց կառչուն, ուղեղը ծակող միտքը, որ Պավել Մատվեեւիչը, այդ մեծ, եսասեր երեխան, որ ատում է մարդաշատն ու հեղձուկը, տառապում կլաուստաֆոբիայից եւ սովոր էր լայնարձակության ու ազատության, նստած է լեփ-լեցուն գարշահոտ խցում, որտեղից երբեք զբոսանքի չեն հանում, տանջվում է գլուխը պատերին տալու ու ջախջախելու ցանկությունից, իսկ գուցե եւ ի վերջո չդիմանա ու ջախջախի,- այդ նույնիսկ ոչ թե միտքը, այլ ֆիզիկական զգացողությունը հանգիստ չէր տալիս նրան: Բոլորի համար էլ բանտում դժվար է, բայց բա՜նտ դնել շելոմյան որսորդին, նույնիսկ եթե ինչ-որ զանցանք է կատարել...

Կոմիսարովը կարգադրեց բերել Լեգկոբըտովի հոդվածներեւ ու որքան խորանում էր դրանց մեջ, այնքան մռայլվում էր: Գրողը տանի՛: Ինչո՞ւ է այդ մարդը խցկվում մի տեղ, որից ոչինչ չի հասկանում: Սա ի՞նչ պարզամտություն է: Հոդվածները անհեթեթ, հիմար ու մակերեսային էին, նույնն է, թե ինքը՝ Օբուխովյան գործարանի նախկին մեխանիկը, այդ դատարկ պիջակը, Նեւայի ամրոցի պարետի թուլակամ օգնականը հանկարծ որոշեր ֆելիետոն գրել ֆրանսիական գեղանկարչության, ցախաքլորի որսի կամ որսաշների վարժեցման մասին: Ի՞նչ էր հասկանում այդ կենսախինդ եսասերը հեղափոխութունից. «Հեղափոխության սկզբում այնպես էր, որ իշխանության ձգտող ամեն ոք, տիրելով նրան, ավելի պարկեշտ էր դառնում, ասես կույսի մոտենար: Հիմա իշխանությունը բռնաբարված է եւ նրան առանց քաշվելու շ...ում են զինվորներն ու բոլոր պատգամավորները»:

Ինչի՞ մասին է խոսում: Ո՞ւմ մասին: Ու հույս ունի, որ սա ներվելո՞ւ է իրեն: Չէ, ավելի հեշտ կլիներ ներել այն հուլիսյան գիշերը... Կոմիսարովն ուզում էր իր մոտ կանչել կալանավորին ու չկարողացավ: Կյանքում առաջին անգամ նահանջեց: Ի՞նչ էր ասելու: Որ քարաթափի դիմաց կանգնածին քարե հեղեղը քշում-տանո՞ւմ է: Կնստեր իր Գորբունկիում, չէր թողնի հավատարիմ կնոջն ու ողջ կմնար:

Բայցեւայնպես Լեգկոբըտովին ստորգետնյա խցում թողնել Վասիլի Խրիստոֆորովիչին թույլ չէր տալիս նույնիսկ ոչ խիղճն ու այն օրերի հիշողությունը, երբ ընկերներ էին, այլ ինչ-որ անորսալի, նույնիսկ իրեն մինչեւ վերջ անհասկանալի մի բան, որը նրան արգելում էր դառնալ հանցագործության մասնակից, որի մեջ արդեն մի անգամ փորձել էին քաշել: Մեխանիկը փորձեց ընկերոջը տեղափոխել ուրիշ խուց, բայց երբ սովորաբար կալանավորների կենցաղին չմիջամտող պարետը լսեց կալանավորի ազգանունը, դեմքը հաճույքից աղավաղվեց:

- Դրան՝ պատժախուց, եւ ոչ մի տեսակցություն ու հանձնուք:

- Բայց ինչո՞ւ,- բորբոքվեց Կոմիսարովը:- Սա ի՞նչ ինքնիրավչություն է: նա ժուռնալիստ է, գրող եւ նշանավոր գրող:

- Ամսի քսանհինգից հետո նշանավոր գրողներ չկան: Գետնախո՛ւց, առնետների մո՛տ: Հաց ու ջուր չտա՛լ: Թող երկու-երեք օր չորուցամաք նստի, հետո ես կզբաղվեմ նրանով:

Նա նայում էր Կոմիսարովին՝ սարսափելի, կոպիտ, անտարիք, ձկնահոտ ձեռքերով մարդ, եւ Վասիլի Խրիստոֆորովիչը կրկին զգաց, որ ուժերը լքում են իրեն, ու չի կարողանում դիմակայել խավար, եռացող, վրեժխնդիր տարերքին, որ ֆիզիկապես կոտրում էր նրան:

13

Այդ օրը առաջին անգամ դուրս եկավ ամրոցից ու ոտքով անցավ գետի մյուս ափը: Քաղաքը ավելի սարսափելի էր դարձել, քան մի քանի ամիս առաջ էր: Միլիոնևայա փողոցում զինված բանվորների հսկողությամբ սառույց էին ջարդում մաշված մուշտակներով մի խումբ նախկին պարոններ, անցորդներից ոմանք ծիծաղում էին նրանց վրա ու զազրախոսում, մյուսները կախում էին գլուխներն ու շտապում արագ անցնել: Կոմիսարովը ամոթ զգաց, բայց հետո մտածեց, թե որքան երջանիկ են այդ մարդիկ, որ սառույց են ջարդում, ոչ թե նստած են բանտում: Իսկ բանտում նստածները կարծեցյալ գերազանցության զգացումով էին մտածում սպանվածների մասին: Նրանք էլ իրենց հերթին երջանիկ էին բոլորից, քանի որ իրենց արդեն ոչինչ հնարավոր չէր անել: Տրամվայի գծերով մի շուն էր քայլում: Ընդառաջ եկող վագոնը նախազգուշական զնգզնգում էր, բայց տանջահար կենդանին անշեղ քայլում ու քայլում էր առաջ, մինչեւ որ անհետացավ ծղրտոցով արգելակող անիվների տակ:

Վասիլի Խրիտոֆորովիչի ուշադրությունը գրավեց Նեւայի կողմից հայտնված ամբոխը. մի քանի տասնյակ գջլոտներ, դիակապուտներ, դասալիքներ, հարբեցողներ ու փողոցային կանայք ցրիվ անցնում էին փողոցով: Առջեւից հանդիսավոր քայլում էր մի քաղցած աչքերով շիկամազ տղամարդ եւ հաց ու կարագ խնդրում: Պարագլխի ձեռքին կապույտ դրոշը փողփողում էր սառցասառն քամուց:

- Երկնագույն դրո՛շ, երկնագույն դրո՛շ,- խռպոտ գոչում էր առաջնորդը:- Եկեք ինձ մոտ, խուլիգաննե՛ր, եկեք ինձ մոտ: Հավաքվեք, խուլիգաննե՛ր, երկնային դրոշի տակ: Մեզ ոչ ցարական դրոշն է պետք, ոչ պրոլետարական: Մեզ երկնագույն դրոշն է հարկավոր, աստվածայինը: Մենք այդ դրոշի տակ կհավաքենք ցրիվ եկած մարդուն ու փշուր-փշուր թագավորությանը հարություն կտանք: Խուլիգաննե՛ր, խուլիգաննե՛ր, ինչ աստվածայի՛ն եք դուք:

Անցորդները հայացքով ուղեկցում էին տարօրինակ երթը, ոմանք միանում էին, եւ շիկամազ մարդու ետեւից գնացողների մեջ, ում պատվիրանը Վասիլի Խրիստոֆորովիչը խախտել էր, մեխանիկը տեսավ կնոջը: Վերա Կոնստանտինովնան ամենավերջում էր: Վատ էր հագնված, օորորվում էր քաղցից ու թուլությունից, բայց դեմքն այնպես պայծառացած ու ոգեշունչ էր, պատրաստ անձնազոհության, որ նայելով այդ փոքրիկ մարդկության ետեւից, վաղուց արդեն ոչնչի մասին չերազող մեխանիկը ցանկացավ ձուլ-

վել այդ տարօրինակ ամբոխին, ենթարկվել նրա մարգարեի քաղցրանուշ ձայնին, կանգնել երկնային դրոշի տակ, լուծվել նրա ճաճանչներում, ամեն ինչ ներել՝ ոչինչ չմոռանալով, ու այլեւս երբեք չվերադառնալ հին Նեւայի ամրոց: Բայց երթը շրջվեց անկյունադարձին ու անհետացավ:

Կոմիսարովը վատ զգաց, շունչը կտրվում էր, ամեն ինչ լողաց աչքերի առաջ, իսկ երբ ուշքի եկավ, շրջակա պատկերը փոխվել էր, եւ քաղաքային բնանկարը փոխարինվել էր զուսպ կահավորությամբ:

- Դուք պետք է կանգնեցնեք նրան,- Վասիլի Խրիստոֆորովիչը լսեց վաղածանոթ մարդուն ուղղված իր ձայնը:

Նեւայի կտրուկ ոլորանի՝ նախկին պալատի երրորդ հարկի առանձնասենյակում նստել էր կարմիր, բորբոքված աչքերով Քեռի Թոմը: Շատ էր ծերացել, մորուք էր թողել ու նմանվել հեքիաթի թզուկի: Երեւում էր, որ քիչ է քնում եւ ուժերը վերականգնում է սուրճով, թե մորֆիով: Վասիլի Խրիստոֆորովիչը կարծում էր սեղանին կտեսնի շախմատի տախտակը՝ խաղաքարերով, բայց շախմատ չկար, միայն մաշված կազմով մի հնատիպ գիրք ու մի քանի թերթ: Սեղանի գլխին կախված անլուսամփոփ լամպը ճոճվում էր օդի շարժումից ու թարթում՝ լողացող ստվերներ գցելով դեղին ներկած հարթ պատերին:

- Դուք դեռ ո՞ղջ եք,- կիսահեգնոտ-կիսակարեկից հարցրեց կոմպոզիտորը:

- Ո՛չ,- գլուխն օրորեց մեխանիկը:- Վաղուց կերել են:

- Ինչո՞ւ եք եկել այստեղ: Ձեզ որեւէ մեկը կանչե՞լ է:

- Ո՛չ:

- Այստեղ առանց հրավերի չեն գալիս: Ձեզ ինչպե՞ս են ներս թողել:

- Չգիտեմ: Ըստ երեւույթին չեն նկատել:

- Ուզում եք տե՞ղ խնդրել կառավարությունում:

- Ո՛չ:

- Ուզում եք որեւէ բա՞ն փոխանցել ձեր կնոջը: Աղջկա՞ն:

- Ո՛չ:

- Իսկ գուցե ուզում եք սպանե՞լ ինձ:

- Ժամանակին ուզում էի,- մարած ձայնով ասաց Կոմիսարովը,- բայց հիմա մեկ է՝ կաք դուք, թե ոչ:

- Այդ դեպքում՝ ի՞նչ:

- Եկել եմ Լեգկոբըտովի համար խնդրելու:

- Կներեք, ո՞ւմ համար:

- Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովի:

- Ո՞վ է: Ախ, հա՛, ձեր ընկեր ժուռնալիստը: Միջին ունակությունների տեր գրող, կասկածամիտ եսասեր, որ դուրս է պրծնում ցանկացած աղետից: Կարծեմ խնդրել էի փոխանցեք նրան՝ մոտ անտառներին, հեռու...

- Բաց թողեք նրան,- խնդրեց Կոմիսարովը՝ ինքն էլ ամաչելով, որ խնդրանքի մեջ ինչ-որ անձնական բան հնչեց, որից վաղուց հրաժարվել էր նույնիսկ ամենահարազատ մարդկանց վերաբերմամբ:

- Նա զգուշացվել էր: Եվ ոչ մեկ անգամ:

- Նա անվնաս, անպատասխանատու շատախոս է:

- Որը քիչ էր մնում սպաներ ձեր աղջկան ու համարյա գայթակղել էր ձեր կնոջը:

- Բաց թողեք,- ավելի ցածր կրկնեց Կոմիսարովը:

- Իսկ ինչո՞ւ թողնենք: Այ հիմա կստուգենք՝ իրավացի՞ էիք դուք, թե՞ ոչ, երբ պնդում էիք նրա կենսունակության մասին:

- Նրան սխալմամբ են բռնել, եւ դուք, եթե ոչ վեհանձնություն, գոնե ողջամտություն պիտի դրսեւորեք, որ կարծում եմ ունեք:

- Եկել եք այստեղ, որ ինձ վիրավորե՞ք,- զարմացավ Քեռի Թոմը:- Նորից ուզում եք բաժակը դեմքի՞ս շփել: Թե՞ խփել: Ո՞չ: Ուրեմն ինչո՞ւ եք խնդրում:

- Չեմ խնդրում: Դիմում եմ ձեր բանականությանը: Ձեր ինչի՞ն է պետք Լեգկոբըտովը: Ավելի մեծ թշնամիներ չունե՞ք՝ լուրջ, իսկական, համառ, վտանգավոր: Ախր հետո զղջալու եք, որ այդքան փոքրիկ սպանեցիք: Տանջելու է ձեզ ողջ կյանքում: Չի կարելի, որ դրանից սկսեք ձեր պատմությունը:

Քեռի Թոմը ճոճվեց աթոռի հետ ու ձախ աչքը շլեց Կոմիսարովի վրա.

- Դուք այդպես էլ այդ մարդուն չհասկացաք, Վասիլի Խրիստոֆորովիչ: Ինչքան ժամանակ է կողքին եք ու կողքով եք անցել: Չնայած՝ ոչ միայն դուք: Ոչ մեկը չճանաչեց: Այդ ես ու դուք ենք փոքրիկ: Իսկ նա՝ ոչ: Պարզապես լավ է քողարկվում: Որսորդ, հրաձիգ, նշանառու, վտանգավոր ու նենգ թշնամի, որ մատնագիր է ուղարկում մեզ վրա:

- Ի՞նչ մատնագիր, ո՞ւմ կարող է ուղարկել: Հիվանդ եք, եթե այդպես եք մտածում:

Սեղանի գլխին կախված լամպը թարթեց ու շիկացավ, մինչեւ որ ընդմիշտ կմարեր:

- Մատնագիր՝ ապագային: Հենց նա էլ այն ուղարկված լրտեսն է,- տխուր ասաց Քեռի Թոմը:- Եվ մենք դա շատ ուշ հասկացանք:

Նա մոտեցավ պատուհանին ու սկսեց նայել աղջամուղջում մարմրող

ձնածածկ քաղաքին, որն այդ ժամին անկենդան էր թվում:

- Կանցնեն շատ տարիներ, ո՛չ ես կլինեմ, ո՛չ դուք, այդ բանտում նստածներից ու նրանց հսկողներից ոչ մեկը չի լինի, եւ Պավել Մատվեեւիչ Լեգկոբըտովի ճակատագրով կչափեն մեզ ու մեր ժամանակը: Նրա կյանքո՛վ: Ինչպես չափ ու կշռի չափանմուշով: Եվ գիտե՞ք ինչու: Ոչ այն պատճառով, որ առանձնակի տաղանդավոր է: Ո՛չ, նրա շրջապատում շատ ավելի շնորհալի մարդիկ կան: Ոչ այն պատճառով, որ աշխատասեր է, խելացի, խոր: Այդտեղ էլ գերազանցողներ կան: Եվ նույնիսկ նրա գրքերը կապ չունեն, որքան էլ լավը լինեն: Լավ գրքեր շատ կան, կատարյալ կյանքերն են քիչ: Իսկ նրա կյանքը կատարյալ է, չնայած ինքը դեռ չի հասկանում:

- Ուրեմն ինչո՞ւ եք ուզում կտրել այդ կյանքը:

- Խոստովանեմ, Վասի՛լի Խրիստոֆորովիչ, ոչ մեկին ավելի մեծ հաճույքով չէի ուղարկի այն աշխարհ, ինչպես ձեր ընկերոջը: Բայց դժբախտաբար չենք կարող: Լեգկոբըտովը միակն է, որ կարող է գտնել ելքը, որը նույնիսկ մենք չգիտենք: Պատկերացրեք, ավելի ճիշտ՝ հիշեք հսկայական չոր անտառը, որտեղ հանկարծ հրդեհ է սկսվում. խելագարված կենդանիներ, սողուններ, թռչուններ, մարդիկ, բոլորը դեսուդեն են նետվում, շփոթված են, չգիտեն ճանապարհը: Կրակը եւ վերն է, եւ ներքեւում, ծուխ, քամի, ամեն ինչ ճարճատում է, փլվում: Կարեւոր չէ՝ ով է վառել անտառը, ինչ մտադրությամբ, հաշվարկով, նպատակով, կամ էլ ինքն իրեն է վառվել: Կարեւորը, որ վառվում է: Ու վառվում են բոլորը, ծխախեղդ լինում, կրակին գումարվում է թունավոր գազը, ժանտահոտը, ճառագայթումը...

- Կներե՞ք:

- Եվ կա աներեւակայելի ներըմբռնումով մեկը, որ գիտի ճանապարհը: Նա կարող է այդ ճանապարհով դուրս բերել բոլորին, բայց չի պատրաստվում դուրս բերել, նա եսասեր է ու փրկում է միայն իրեն, բայց նրա կերպով ապրողը կգնա նրա հետքով ու կփրկվի: Մի՞թե մեզ պետք չէ այդպիսի մարդը, եւ պարտավոր չենք պահպանել նրան, եթե նույնիսկ ատում է մեզ:

- Այդ դեպքում ինչո՞ւ եք կործանում:

- Կործանո՞ւմ ենք: Մենք տանջում ենք նրան: Մենք սովորեցնում ենք նրան: Վարժեցնում ենք, ինչպես ինքն է վարժեցնում իր շներին: Առանց այդ վարժեցման նա ոչինչ է: Չափազանց երկար է ապրել անտառներում, չափազանց հեռու է եղել ճառագայթումից:

- Եվ դրա համա՞ր է բանտը:

- Նաեւ բանտը:

- Բայց արդեն բավականաչափ նստել է:

- Դեռ ոչ:
- Ուրիշ բանտ տեղափոխեք:
- Իսկ սա ինչո՞վ է վատ:
- Ախր կսպանի՛ նրան,- տենդագին շշնջաց Կոմիսարովն ու վախեցած նայեց շուրջը:- Նա թքած ունի՝ ապագայից, անցյալից, թե ներկայից է իր մոտ ընկած մարդը, ինչ շնորհներ ու հարաբերություններ ունի ժամանակի հետ, կամ ինչ արժեք կունենա ապագայում: Ոչ թե պարզապես կսպանի, տանջամահ կանի նրան, կհորինի ամենավայրագ մահապատիժը, որ կարելի է պատկերացնել: Դուք հրեշի հետ եք կապվել, գրոսմայստե՛ր: Սկզբում նրան կսպանի, հետո՝ ինձ, հետո էլ՝ ձեզ: Կամ գուցե հենց ձեզնից էլ սկսի:
- Վերջ տվեք,- դառնությամբ ասաց Քեռի Թոմը,- նա բռնաբարում ու սպանում է մեր հրամանով եւ նրանց, ում հրամայում ենք, եւ կբռնաբարի ու կսպանի ճիշտ այնքան, որքան թույլ կտանք: Այդ անասունը պետք է մեզ, որովհետեւ նրա համեմատությամբ մենք արնախում չենք թվում: Էլի մի քիչ, եւ բոլորը, որ այսօր դժգոհ են, որ վնգստում ու ֆշշացնում են մեզ վրա, սողալով կգան մեզ մոտ ու կսկսեն աղերսել, որ զսպենք այդ հրեշին, որովհետեւ մեզնից բացի ոչ ոք դա չի կարող անել: Նրանք ոչ թե պարզապես կընդունեն, այլեւ կօրհնեն մեր իշխանությունը ու կսկսեն ծառայել նրան ոչ թե վախից, այլ խղճի մտոք: Բայց նրանք չափից դուրս են անկարգացել այս վերջին տարիներին, ու պետք է մի լավ թափ տալ, որ սարսափն անցնի նրանց ու երեխաների արյան մեջ:
- Ինչ-որ տեղ կարդացել եմ դրա մասին:
- Ինչի՞ մասին:
- Երեխաների վրա ընկնող արյան մեղքի:
- Խնդրե՛մ, նորից,- Քեռի Թոմը տրորեց քունքերը:- Սա արդեն անբուժելի է: Մենք ընդամենը կատարում ենք ձեր ծրագիրը:
- Ի՞մ:
- Իսկ ո՞ւմ: Դուք չէի՞ք երազում, որ Ռուսաստանը մեկուսանա աշխարհից: Դո՞ւք չէիք պնդում, որ Ռուսաստանը ինքնաբավ է ու ոչ մեկի կարիքը չունի: Դո՞ւք չէիք ասում, որ աշխարհը թշնամի է նրան: Դո՞ւք չէիք խոսում երկրում համընդհանուր արդարություն հաստատելու մասին: Ահա եւ ամեն ինչ կատարվում է ըստ ձեր ասածի: Ռուսաստանը հեռանում է աշխարհից. ինչո՞ւ վախեցաք, երբ կատարվում են ձեր երազանքները: Սա ի՞նչ անհետեւողականություն ու վախկոտություն է: Եվ մի՞թե ձեզ համար տեղ չեք գտնում այդ նոր Ռուսաստանում: Դո՛ւք՝ ձեր զգացումներով, ձեր տաղան-

դով, խելքով, ձեր ունակություններով, ճշմարտության եւ արդարության ձեր տենչանքով:

- Ձեզ Ռուսաստանը չի պետք, դուք աշխարահակալություն եք ուզում,- խոպոտ ճչաց Կոմիսարովն, ու բիբերը լայնացան:- Ռուսաստանը, որի համար ես կռվում էի եւ իմ զինվորները թունավոր գազ էին կուլ տալիս, դուք Բրեստում հանձնեցիք գերմանացուն: Դուք ծախեցիք բոլոր գերեզմանները, բոլոր ռուսական ոսկորները, մեր ողջ արյունը ծախեցիք, որ փրկեք ձեր կաշին ու հարստանաք: Իսկ երբ այստեղ ամեն ինչ փուլ գա, առաջինը կփախչեք արտասահման, որտեղ բանկերում, ձեր հաշիվներին ռուսական փողերն են: Ուզում եք գնդակահարե՞լ ինձ՝ ասածիս համար, գնդակահարե՛ք, բա՛նտ դրեք, փտացրե՛ք, բայց ես կասեմ, ինչ մտածում եմ ձեր մասին:

- Դե, բավակա՛ն է, վե՛րջ տվեք հիստերիային,- ձեռքը սեղանին խփեց Քեռի Թոմը:- Մե՞նք ենք հանձնել: Մենք ոչինչ չենք հանձնել: Հանձնել են նրանք, որ նստած են այդ ամրոցում: Իսկ մենք փորձում ենք փրկել նրանց կործանածը: Այո՛, դաժանությամբ, այո՛, արյունով, յուրովի հաշվենկատ, բայց եթե այլ կերպ հնարավոր չէ՞... Գիտե՞ք ինչն է ամենասարսափելին ռուս մարդու մեջ: Անհաստատությո՛ւնը: Տեսեք՝ հենց դուք ինչպես եք դեսուդեն ընկնում: Մեկ՝ միապետական եք, մեկ՝ հեղափոխական: Մեկ՝ կողմ եք պատերազմին, մեկ՝ դեմ: Մեկ՝ գեղջուկի հետ եք, մեկ՝ անիծում եք նրան: Մեկ՝ օտարման գոտի եք պահանջում, հրեաների պես, մեկ՝ բոլոր հրեաները ձեր թշնամին են: Այդ ինչ թարշամություն է նստած ձեր մեջ: Լա՛վ, գոնե միայն դուք այդպիսին լինեիք: Դուք բոլորդ, ռուսներդ, ինչպես ճնճղուկները դատարկ տակառում, պատեպատ եք խփվում հանուն ձեր Ռուսաստանի: Եթե այդ անհաստատության վերջը չտանք, փերթ-փերթ կավիրեք ողջ երկիրը ու մեղքը կգցեք օտարի վրա: Թե՞ ձեր պարետը լեհ է, կամ ֆրանսիացի: Թե՞ սպաներին շան լակոտների պես ծովում խեղդող նավաստիներին Անգլիայից են ներմուծել:

- Այդ դուք եք փչացրել նրանց: Դուք եք պատերազմը սկսվելուն պես կրակի նման մեր ուղեղները գցել պարտության ստոր միտքը: Դուք եք սպանել հավատը, մոխրացրել ամոթը, կաթվածահար արել ռուսական կամքը, հեղափոխությունը նախ մարդկանց մտքերում եք արել, հենակետ սարքել իմ այս ձեռքերով, որ կտրելը քիչ է, որպեսզի ափ իջնեք, իսկ հիմա հնձում եք, ինչ ցանել եք, հավաքում եք, ինչ շաղ եք տվել:

- Վերջ տվեք անհեթեթություններին: Ախր դուք իրականում ինտելիգենտ չեք: Ի՞նչ հենակետ: Ի՞նչ ձեր ափ: Վերջապես լսեք ու մի ընդհատեք

ինձ,- Քեռի Թոմը վեր կացավ եւ սկսեց հետուառաջ անել սենյակում:- Մեզ սպասում է մի ուրիշ, սրանից ավելի սարսափելի պատերազմ, որը ստիպված ենք կանխել, որպեսզի ամեն ինչ չկորցնենք: Մենք թշնամուն տվեցինք ռուսաց հողի մի մասը, ոսկոր նետեցինք նրան, բայց կանցնի ժամանակ, եւ այդ մասը կվերադառնա մյուսների մոտ: Իսկ մենք պետք է պատրաստ լինենք նոր պատերազմի, որ հրեշավոր է լինելու եւ այնքան զոհ կտանի, որ այսօրվա զոհերը չնչին կթվան ու կմոռացվեն: Հայրերը չուզեցին կռվել, նրանց փոխարեն երեխաները արյուն կթափեն: Այդպիսին է պատմության տրամաբանությունը: Եվ մենք արդեն հիմա պետք է սկսենք պատրաստվել այդ պատերազմին, որ նորից տանուլ չտանք: Դրա մեջ է այսօր կատարվողի իմաստը: Միայն դրա եւ ուրիշ ոչնչի: Ինչ ուներ Ռուսաստանը վերջին տարիներին, փլուզվել է: Ամեն ինչ՝ միապետությունը, եկեղեցին, բանակը, Դուման, ֆինանսները, արդյունաբերությունը, գրականությունը, ամե՛ն ինչ,-բղավեց Քեռի Թոմը:- Միայն հողն է մնացել: Եվ եթե ուզում ենք պահպանել այդ հողը, պետք է վերափոխենք: Մեզ պետք է ուրիշ ժողովրդով Ռուսաստան, որը այլ կերպ կազմակերպված, համախմբված, դաստիարակված կլինի: Ժողովրդով, որը չի համարձակվի ապստամբել իր իշխանության դեմ, երբ այդ իշխանությունը պատերազմում է: Եվ իշխանությամբ, որը չի համարձակվի խույս տալ պատերազմից: Եվ ոչ մի համաշխարհային հեղափոխություն էլ չկա ու չի լինելու: Հեղափոխությունը հեքիաթ է հիմարների ու խելապակաս ռոմանտիկների համար: Իսկ ամենից առաջ կկախենք բոլոր հեղափոխականներին, բոլոր հակառակվողներին, որ չխանգարեն մեզ:

- Ո՞ւմ՝ մեզ:

- Մեզ,- անորոշ ասաց Քեռի Թոմը:

- Ես գիտեմ՝ ում: Դուք գայլեր եք, մտագայլեր, որ փորձում են գառան մորթի հագնել ու նոր փորձանք են պատրաստում իմ հայրենիքի գլխին:

- Չէ՛ մի,- զզվանքով ասաց Քեռի Թոմը:- Հեքիաթ եք հորինել ձեզ համար: Եթե ուզում եք իմանալ՝ այդ գայլը նստած է յուրաքանչյուրիս մեջ: Եվ արդեն վաղուց ներսից ուտում է մեզ ու փսխում մարդու նեխած մսից: Եվ մի վախեցեք Ռուսաստանի համար: Ձեր Ռուսաստանին ոչինչ էլ չի պատահի: Սիրտ կթափի, կհանգստանա եւ ավելի աշխույժ կվազի առաջ: Իսկ ավելորդ արյուն թողնելը միայն օգտակար կլինի նրան: Հողը կպարարտացնի, որ բերրի լինի ու ավելի շատ ծնի:

Սեղանի գլխին կախված լամպը վերջին անգամ բռնկվեց ու մարեց:

- Ի՞նչ եք ուզում Ռուսաստանից,- խղճալի մրմնջաց Վասիլի Խրիստո-

ֆորովիչը, ու ձայնը կորավ ակնակույր խավարում, ու չէր հասկանում՝ ում հետ եւ ինչու է խոսում:- Ի՞նչ է, ուրիշ երկիր չկա՞:

- Ուրեմն՝ չկա: Կանցնի ժամանակ, չգիտեմ՝ ինչքան, չգիտեմ՝ ինչու, չգիտեմ՝ ինչի համար, ոչինչ չգիտեմ, բայց գիտեմ, որ հենց այս հողը կդառնա փրկության տապան, եւ մենք ուղարկված ենք այն պահպանելու ու վարելու համար:

- Ո՞ւր,- գոչեց մեխնիկը:- Գողգոթա՞:

- Վասի՛լի Խրիստոֆորովիչ, մենք ձեր մեջ միշտ ավելին ենք տեսել, քան պարզապես մեր ընկերոջը: Մենք երախտապարտ ենք եղել ձեզ, խնայել ու ներել, ինչ ուրիշին չէինք ների: Խոստովանում եմ, որ միշտ հիացել եմ ձեզնով՝ ձեր ջահել եռանդով, ուժով, վեհանձնությամբ, օգտակար լինելու ցանկությամբ: Մենք այնքա՛ն ջանք ենք դրել Սվենցյանիում ձեր կյանքը պահպանելու համար: Եվ եթե իմանայիք մեզ ինչ է արժեցել համոզել գերմանական հրամանատարությանը, որ ուշադրություն չդարձնեն ձեր խենթություններին ու հանդուրժեն բոլոր անիմաստ խուլիգանական արարքները ռազմագերիների ճամբարում:

- Ես ձեզ չէի խնդրել:

- Բայց հիմա ի՞նչ է կատարվում ձեզ հետ: Այս ի՛նչ եք դառել: Ինչո՞ւ եք հանկարծ ընկել վիատության ու մետաֆիզիկայի գիրկը: Ես ձեզ չեմ դատում, աղավնյա՛կս, չեմ մեղադրում, տխրում եմ: Չի կարելի այդքան բեռի տակ մտնել, իսկ շատ եք վերցրել: Ծատ տպավորվող եք, այստեղից էլ՝ ձեր բոլոր դժբախտությունները: Լավ կլիներ բուժվեիք: Ես կկարգադրեմ, որ ձեզ առողջարան ուղարկեն, իսկ հիմա ավտոմեքենա կկանչեմ: Պետք չէ, որ ոտքով շրջեք քաղաքում ու վշտանաք: Հենց վաղը առավոտ էլ մեկնեք: Իսկ մինչ այդ վերդարձեք ամրոց, լա՞վ: Միայն թե հիմարություններ չանեք:

Կոմիսարովը հարցական նայեց նրան:

- Չփորձեք ձեր ընկերոջ համար փախուստ կազմակերպել: Նեւայի ամրոցից դեռ ոչ ոք ու երբեք չի փախել: Չփչացնեք ոչ ձեր, ոչ էլ այդ հաստատության հեղինակությունը: Եվ ընդհանրապես, այս բոպեից ոչնչի մի խառնվեք: Ինչ էլ որ լինի եւ ում էլ վերաբերվի: Թող ամեն ինչ գնա, ինչպես գնում է:

Անձայն բացվեց մի աննկատելի դռնակ, ու ներս մտավ ճերմակ գլխաշորով մի բարձրահասակ կին: Ձեռքի մոմակալը դրեց սեղանին, հետո խոնարհվեց Քեռի Թոմին ու ձեռքերը խաչեց կրծքին:

- Ի՞նչ ես ուզում, Ակիլի՛նա:

Ուշադրություն չդարձնելով մեխանիկին՝ կինը ասաց.

- Ձեր օրհնությունը, սո՛ւրբ հայր:
- Սուրբ հա՞յր,- տարակուսած հարցրեց Կոմիսարովը:
- Սրբահայր Ֆոմա,- շտկվեց կինն ու ճերմակության աստիճանի բաց-գույն աչքերով սառը նայեց Վասիլի Խրիստոֆորովիչին:
- Քեռի Թոմ, Ֆոմա: Դե, իհարկե, նույն անունն է,- ուսերը թոթվեց կոմ-պոզիտորը:- Ի՞նչն է ձեզ այդպես զարմացնում:

14

Վասիլի Խրիստոֆորովիչը դարակից վերցրեց Լեգկոբըտովի առաջին գիրքն ու սկսեց կարդալ ժամանակին համարյա անգիր արած, սփոփանք բերող տողերը չվախեցած թռչունների եզերքի մասին, բայց միտքը շեղ-վում էր: «Մեկնե՛լ, մեկնե՛լ այստեղից, փախչել հենց հիմա ու վերադառնալ Կատարինայի մոտ, Տիրոլ: Որպես այգեպան, ձիապան, խոհանոցի ծառա-յող, սիրեկան, ամուսին: Չե՛մ ուզում սրանց հետ, չե՛մ ապրի այստեղ: Վայ-րագ են սրանք, դաժան, գազանից էլ վատ, փոխակերպուկներ են, ազեֆ-ներ: Այստեղ հնարավոր չէ ոչնչի դիպչել ու փոխել որեւէ բան: Ոչի՛նչ: Սա այն երկիրը չէ... Այստեղ ոչ թե ապրել, միայն կարելի է մեռնել»:

Դռան թակոցը շեղեց նրան:

- Ընկե՛ր Մալգինով, մի օրիորդ է ուզում ձեզ տեսնել:
- Ի՞նչ օրիորդ,- դժգոհ հարցրեց Վասիլի Խրիստոֆորովիչը:
- Ընկեր Շչետինկինի մոտ էր եկել, բայց նա հիմա հանգստանում է,- պատասխանեց զինվորն ու վատ քմծիծաղեց:
- Ի՞նչ է ուզում:
- Ասում է բանտարկյալ Լեգկոբըտովի հարսնացուն է ու տեսակցություն է խնդրում:
- Լեգկոբըտովն ամուսնացած է,- մեքենայաբար ասաց Վասիլի Խրիս-տոֆորովիչը, ու սիրտը սեղմվեց:- Իսկ պարետը նրա հետ տեսակցություն-ներն արգելել է:
- Գիտեմ,- մռայլ ասաց զինվորը, ու երկար թարթիչները դողացին:- Ու-րեմն ի՞նչ փոխանցեմ այդ օրիորդին:

Զինվորի դեմքը ծանոթ թվաց, բայց այնքան դեմքեր էր տեսել այդ տա-րիներին, որ չէր ուզում չարչարել հիշողությունը... Հիշողությունն ապրում էր իր կյանքով եւ ինքն էր որոշում՝ ում հիշի եւ ում մոռանա: Բայց Վասիլի Խրիստոֆորովիչը հանկարծ հիշեց ինչպես էին շատ վաղուց Լեգկոբըոտ-վի հետ անցնում ծաղկած մարգագետնով, ու Պավել Մատվեեւիչը սկսեց

պատմել եղջերվածագի մասին, որ անտառում, Ծելոմի գետաբերանից ոչ հեռու մոտեցել էր նրան: «Այնքան մոտ էր: Փոքրիկ, նրբագեղ, հետաքրքրասեր, կարող էի մեկնել ձեռքս ու բռնել: Բայց չբռնեցի: Ինչո՞ւ չբռնեցի»:

«Օրիորդին պետք է ասել, որ գնա այստեղից: Գործ չունի այստեղ»,- ծույլ-ծույլ մտածեց Վասիլի Խրիստոֆորովիչն ու զինվորին չնայելով՝ մոլտաց.

- Թող սպասի, մինչեւ պարետն արթանանա:

...Ուլյան կանգնել էր բարձր շենքի տանիքին ու երկինք էր նայում: Անհասկանալի էր՝ ինչու եւ ինչպես էր գիշերով հայտնվել այդտեղ, բայց արդեն իջնել չէր կարող: Ոտքերը ծալվում էին, իսկ չարչրկված, ծեծված, պղծված ու զարմանալի թեթեւ, համարյա անկշիռ մարմինը ոչ ցավում էր, ոչ արնահոսում: Օրորվում էր քամուց ու տանիքի թեքվածքին մնում միայն մակերեւույթի հետ շփման ոչ մեծ ուժով: Երկինքը շատ մոտ էր՝ աստղերի խաղով ու հեռավոր հրացոլքերի անդրադարձումով, իսկ ավելի հեռվում, այդ երկնքից այն կողմ շողշողուն աշխարհն էր, ուր նրան օդային հավերժահարս դառնալու էր կանչում արկտիկական սառույցներում սառչող Սավելի Կրուդը, որի քարն այս անգամ չփրկեց: Արդեն պարետից հետո շափյուղան խլեցին զինվորները: Կարծես այն թավ թարթիչներովն էր:

Ուլյան ճոճվում էր անդունդի եզրին՝ սպասելով, թե քամու պոռթկումը երբ կհրի եւ իրեն ընդմիշտ կպոկի արյունոտ, կեղտոտ երկրից: Այլեւս չէր ուզում պատկանել նրան: Չէր ուզում ոչ մեկի մուսան, սիրելին կամ կինը լինել: Ուզում էր հեռանալ՝ անուն ու տոհմ չթողնելով, ինչպես միայնակ զառ խաղացող աղջիկն իր փոքրիկ գերեզմանում: Ուլյան նայեց ներքեւ ու տեսավ ահռելի գազանին, որ խորքերից իրեն էր նայում: Գազանը մեծանում էր, խոշորանում, փքվում, եւ արդեն մեծ էր երախում բռնած քաղաքից, արդեն իր տակ էր առել ողջ աշխարհն ու իրենով ծածկել երկնքի կեսը, եւ Ուլյան հասկացավ, որ չի փրկվի, կընկնի ուղիղ բաց երախը: Նորից զգաց սարսափելի ձեռքերը, որոնց հպումը վախեցնում են երեխա ժամանակ, իսկ հիմա հրում էին այդ անդունդը, եւ վախենում էր շրջվել ու տեսնել այդ հարթ ափերի տիրոջը: «Ահա եւ վերջ, ահա եւ վերջ,- շշնջում էր Ուլյան,- ահա եւ ամեն ինչ վերջացավ»: Բարձրացրեց գլուխն ու երկնքում տեսավ կեսգիշերային հրացոլքերից ծնվող խաչը: Սկզբում՝ աղոտ, հազիվ էր երեւում աստղերի մեջ, հետո ուրվագծերը քիչ-քիչ հստակվեցին, խաչը կանգնեց քաղաքի վրա՝ ասես ինչ-որ մեկի լվացած սեւ երկնքում: Գայլը ոռնաց, բացեց երախը, եւ աղջիկը մնաց մենակ:

Ժամանակը կանգ առավ, ապա բացվեց՝ իր տեսած աշխարհի արարման խորքերից մինչեւ նրա վերջը, եւ Ուլյան հասկացավ, որ շատ ավելի մոտ է եզրին, բայց երբ մի քիչ էր մնացել, որ մնացած մի քիչը տեսնի, երբ քաղաքի գլխին կախված հսկա ճոճանակը դադարեցրեց վազքը, նրան մոտեցավ կեղտակուր վարդագույն թիկնոցով մուրացկան կինն ու բռնեց ձեռքը.

- Գնա՛նք այստեղից, աղջի՛կս, գնա՛նք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաս I
ՈՐՍՈՐԴԸ 5

Մաս II
ԱՆՁՐԵՎ ՏՈՒՐ, ՏԵ՛Ր 84

Մաս III
ՍՎԵՆՑՅԱՆԻԻ ՃԵՂՔՈՒՄԸ 166

Մաս IV
ՁԵՌՆԱԾՈՒՆ 262

Ալեքսեյ ՎԱՌԼԱՄՈՎ

ՄՏԱԳԱՅԼԸ

վեպ

Թարգմանությունը ռուսերենից՝
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Ստեփանակերտ 2021

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա.Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 24 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Ջուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015

Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուդդայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
նախագծերի» - 2017
Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Ընչաղեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Ուեյսին Սյուրն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկու-
թյունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018
Աղի ձայնը (20-րդ դարի հետուբսունական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 7) - 2019
Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020

Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի մասին. իրական պատմություն) - 2020
Կոնֆուցիոս. «Զրույցներ» - 2020
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 8) - 2021
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 9) - 2021
Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» - 2021
Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսդոտիր. «Սեր, նյարդերի քայքայում. ոչ մի պար ձուկ-քարի վրա» - 2021

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

www.vogi-nairi.am
Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +374 97252323, +374 94259161